
ՕՍՄԱՆՅԱՆ
ԷԼԻՖ ՇԱՖԱՔ
ԱԱՄՈՒՎ

թվայնացրել է 1915.info կայքը

Խստակ
մաքուր ֆիլֆեր

Երևան
«Անտարես»

թվայնացրել է 1915.info կայքը

Elif Şafak
İskender

Թուրքերենից թարգմանեց
ԱՐՓԻ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

Խմբագիր՝
ԼԵՌՆԻԿ ԴԱԼԼԱՔՅԱՆ

Շաֆաք Էլիֆ
Պատիվ: Վեպ/Էլիֆ Շաֆաք.– Թարգմ.՝ Արփի Աթաբեկյան:– Եր.: Անտարես, 2020.– 512 էջ:

Էլիֆ Շաֆաքի այս գիրքը, միահյուսելով Արևելքի և Արևմուտքի մոտիվները, պատմում է մարդկանց մասին, ովքեր դարձել են իրենց ավանդույթների և բարոյական ըմբռնումների պատանդը: Պատմությունն ընթանում է միանգամից մի քանի ժամանակային շերտերում, որոնք աստիճանաբար տանում են մի կետի, ավելի ճիշտ՝ գրքի հիմնական իրադարձությանը՝ սպանություն հանուն ընտանիքի պատվի:

1978-ի նոյեմբերի 14-ին ամբողջ ընտանիքի կյանքը փոխվում է կործանարար մի արարքի պատճառով: Գործողություն, որն արդարացում չունի: Որը խաչ է քաշում ներկայի վրա, փոխարենը բացում է անցյալի փակ մնացած ծալքերը՝ սարսռեցնելով բոլորին... Սա պատում է ընտանիքի մի քանի սերունդների մասին՝ Թուրքիայում և Անգլիայում բնակվող: Հին ավանդույթների համաձայն ապրող ընտանիք, որի համար պատիվն ամենակարևորն է: Սա պատմությունն է երկվորյակ քույրերի, պատմությունը մոր և որդու, դժբախտ սիրո, ցավի ու զղջման...

ISBN 978-9939-76-567-9

Copyright © 2011 by Elif Shafak
© Անտարես, 2020

թվայնացրել է 1915.info կայքը

Հանկարծ հասկանում է՝ մենակ է...
թե ինքը, թե մայրը՝ թիկունքին կանգնած:

Ջ. Մ. Կուտզե
«Պատկերներ գավառական կյանքից»

թվայնացրել է 1915.info կայքը

թվայնացրել է 1915.info կայքը



Թվայնացրել է 1915.info կայքը

թվայնացրել է 1915.info կայքը

Սկզբում...

Մայրս երկու անգամ է մահացել: Երդվել էի՝ թույլ չեմ տա, որ նրա պատմությունը մոռացվի, բայց քաջություն կամ թե ոգևորություն չունեի: Մինչև օրս: Երևի երբեք գրող չդառնամ, դե, հայտնի վիպասան չեմ դառնա հաստատ: Բայց արդեն այդ մասին չեմ մտածում, հոգ չէ: Որոշակի տարիքից հետո մարդ հաշտվում է իր կարողությունների ու սխալների հետ: Ես էլ սովորեցի ինձ ընդունել այնպիսին, ինչպիսին կամ: Բայց պետք է պատմեմ մորս մասին, թեկուզ մի հոգու պիտի պատմեմ: Պետք է այս պատմությունը ուղարկեի աշխարհի մյուս կողմը՝ հեռու մի տեղ, ուր ազատ կթափառեր: Գոնե այդչափ ազատություն եմ պարտական այն մարդուն, ով ինձ լույս աշխարհ է բերել: Եվ այս տարի պետք է նրա մասին ամեն ինչ գրի առնեմ: Մինչև Իսքենդերը բանտից կազատվի: Մի քանի ժամից մի թաս սպիտակաձավարով հալվա եմ պատրաստելու, դնելու եմ լվացարանի կողքին, որ հովանա, անուշադրության մատնելով ամուսնուս անհանգիստ հայացքը՝ համբուրելու եմ նրան: Հետո զույգ աղջիկներիս հետ (յոթ տարեկան են, չորս որպե տարբերությամբ են ծնվել) տնից դուրս եմ գալու՝ նրանցից մեկին ընկերուհու ծննդյան տոնին տանելու

թվայնացրել է 1915.info կայքը

համար: Ճանապարհին երևի կռիվ կանեն, բայց այս անգամ չեմ զայրանա նրանց վրա: Կհարցնեն՝ ծաղրածու լինելո՞ւ է ծնունդին: Կամ էլ՝ աճպարար: Հարրի Հուդինիի պես՝ ասելու եմ ես: Դա՞ ինչ է, կասեն նրանք: Հուդինի ասաց, դմբո՛՝ կասի մյուսը: Ո՞վ է դա, մայրի՛կ:

Այդ անմեղ հարցը լսելուց սիրտս կծակի: Մեղվի խայթոցի նման ցավ: Հազիվ տեսանելի հետք, բայց նրա տակ՝ այրվող վերք: Առաջվա պես նորից հասկանալու եմ՝ աղջիկներս մեր ընտանեկան անցյալի մասին ոչինչ չգիտեն: Չգիտեն, որովհետև չեմ պատմել նրանց: Մի օր անպայման պատմելու եմ. երբ պատրաստ լինեն: Երբ ես պատրաստ լինեմ:

Երբ հասնենք այն տունը, ուր ծննդյան տոնն է, մայրիկների հետ մի քիչ կխոսեմ երևի: Տանտերերին կասեմ, որ աղջիկներիցս մեկը պիստակից ալերգիա ունի, բայց կասեմ՝ քանի որ զույգերին իրարից տարբերելը դժվար է, դրա համար էլ պետք է երկուսին էլ ուշադիր լինել և թույլ չտալ պիստակով որևէ բան, անգամ տորթ ուտել: Իհարկե, անարդար է: Անարդար է մյուս աղջկաս հանդեպ, որը ալերգիա չունի, բայց քույրերի ու եղբայրների միջև նման անարդարություններ շատ են լինում:

Հետո նորից մեքենա կնստեմ. ամուսնուս հետ համատեղ օգտագործած «Օստին Մոնտեգոն» եմ նստելու: Լոնդոնից Շրուսբերի ճանապարհորդությունը գրեթե երեք ու կես ժամ է տևում: Ճանապարհին գուցե կարճ դադար առնեմ: Անընդհատ ռադիո կլսեմ: Սիրում եմ երաժշտություն. օգնում է անհանգստություններից շեղվել: Մեկ էլ՝ ուրվականներից:

Նախկինում պահեր էին լինում, երբ ուզում էի նրան ձեռքերովս սպանել: Ատրճանակով, թույնով կամ որ ավելի լավ է՝ գրպանի դանակով, որ արդարությունը հաղթի: Մտքումս մանրամասն պլաններ էի կազմել:

թվայնացրել է 1915.info կայքը

Երբեմն մտածում էի ներել՝ լրիվ ու անկեղծորեն: Ի վերջո, մինչև օրս ո՛չ կարողացա սպանել Իսքենդերին, ո՛չ էլ ներել:

* * *

Երբ հասնեմ Շրուսբերի, մեքենան կանգառի դիմաց եմ թողնելու ու քայլելու եմ դեպի բանտի անխնամ շենքը: Հինգ րոպեի հեռավորություն: Հետո պողոտայում այս ու այն կողմ քայլելով կամ էլ գլխավոր մուտքի դիմացի պատին հենված՝ նրան եմ սպասելու: Չգիտեմ՝ ինչքան է տևելու: Չգիտեմ էլ՝ ինչ է անելու, երբ ինձ տեսնի: Մի տարուց ավելի չենք հանդիպել: Նախկինում կանոնավոր հանդիպում էի եղբորս, բայց երբ ազատվելու ժամանակը մոտեցավ, դադարեցի այցելել:

Կարճ կամ երկար սպասումից հետո ծանր երկաթե դուռը դանդաղ կբացվի: Տասնչորս տարի անց բանտից ազատվելու էր Իսքենդերը: Հայացքը ամպերին է հառելու. հետ է սովորել գլխավերևում անծայրածիր երկինք տեսնելուց: Պատկերացնում եմ՝ մութ անձավից փախած կենդանու պես լույսին նայելիս աչքերն է կկոցելու: Այդ ընթացքում ես կանգնած հաշվելու եմ մինչև տասը կամ հարյուրը, կամ երեք հազարը: Ձեռք չենք սեղմում: Չոր բարև ենք ասելու ու գլուխներս մի թեթև օրորելու ենք: Իրար հետ դեպի կանգառ ենք քայլելու: Մեքենա նստելիս զարմանալու եմ՝ որքան ատլետիկ է: Դե, իհարկե, դեռ երիտասարդ է:

Ես եմ մեքենան վարելու, Իսքենդերն էլ կողքիս է նստելու: Բայց եթե ուզի ծխել, ոչինչ չեմ ասի, ինչքան էլ որ ատում եմ ծխախոտի հոտը ու թույլ չեմ տալիս, որ խեղճ ամուսինս կողքիս ծխի: Ժամում վաթսուն կմ վարելով՝ կանաչ արահետների ու բաց դաշտերի միջով ենք անցնելու: Անգլիայի դաշտերն ենք կտրել-անցնելու:

թվայնացրել է 1915.info կայքը

Ինձնից, աղջիկներիցս է հարցնելու: Ասելու եմ՝ լավ են, արագ են մեծանում: Ժպտալու է, գլուխն օրորելու, կարծես թե գիտի՝ երեխա մեծացնելն ինչ է նշանակում: Իսկ ես նրան ոչ մի հարց չեմ տա:

Մեքենայում ժամանակ անցկացնելու համար մի ձայնապնակ կլինի: ԱԲԲԱ-ի դասականներից. մայրս եփելիս կամ մաքրություն անելիս էր երգում այդ երգերը: *Take a Chance on Me, Mamma Mia, Dancing Queen, The Name of the Game*... Որովհետև վստահ եմ՝ մայրս մեզ տեսնելու է: Աշխարհի մի անկյունից, մի բաց պատուհանից: Երբ մայրերը մահանում են, ուղիղ դրախտ չեն գնում: Աշխարհի երեսին մի քիչ մնում, Աստծուց իրենց երեխաներին նայելու համար հատուկ թույլտվություն են խնդրում, ինչ էլ որ եղած լինի անցողիկ կյանքում իրենց ու իրենց երեխաների միջև: Երբ հասնենք Լոնդոն՝ Բարնսբերի հրապարակ, կայանատեղի եմ փնտրելու: Անձրև է գալու՝ փոքրիկ, բյուրեղյա կաթիլներ: Ի վերջո, մի տեղ խցկելու եմ մեքենան: Պետք է մի լավ մանևրեմ, որ հաջողվի: Վատ վարորդ չեմ, բայց երբ գործը հասնում է կայանելուն, ձեռքիցս բան չի գալիս: Տեսնես կասի՞՝ իսկը կին վարորդ ես, կծաղրի՞ ինձ: Նախկինում կաներ, գիտեմ:

Միասին դեպի տուն կքայլենք, փողոցը լուռ ու հանգիստ կձգվի մեր առաջ ու մեր թիկունքում: Գոնե մի վայրկյան ճանապարհը մեզ անցյալի կյանքն ու Լավենդեր փողոցն է հիշեցնելու, հասկանալու ենք՝ ամեն ինչ ինչքան տարբեր է, և եթե անգամ չկարողանանք դեպքերը մոռացության տալ, զարմանալու ենք՝ ինչքան արագ է անցնում ժամանակը:

Երբ տուն գանք, կոշիկները հանելու ենք. Իսքենդերին ամուսնուս դարչնագույն հողաթափերն եմ տալու, իսկ ես փումփուլիկներով, բաց մանուշակագույն հողաթափերն եմ հագնելու: Մի պահ կանգ ենք առնելու, լռելու ենք:

թվայնացրել է 1915.info կայքը

Ասելու եմ, որ աղջիկներիցս մեկն է դրանք ինձ նվիրել, որ սիրտը հովանա: Այդ ժամանակ հասկանալու է, որ նմանությունն ընդամենը պատահականություն է: Դրանք մորս հին հողաթափերը չեն:

Մինչ ես կլցնեմ թեյը, Իսքենդերն աչքի պոչով կտեսնի՝ մուգ եմ սարքել, շատ շաքարով, իհարկե, եթե բանտում սովորությունները չեն փոխվել: Հետո հալվան եմ հանելու: Բյուրեղապակե բաժակներն ու ափսեները ձեռքնելիս, երկու քաղաքավարի անծանոթի նման պատուհանի առաջ նստած՝ նայելու ենք՝ ինչպես է անձրևը թափվում ետնաբակի բեգոնյաների վրա: Գովելու է իմ խոհարարական հմտությունները, ասելու է՝ ինչքան է կարոտել հալվան, բայց երբ փորձեմ մի քիչ էլ դնել ափսեի մեջ, քաղաքավարի հրաժարվելու է: Ասելու եմ, որ մայրիկի բաղադրատոմսն եմ օգտագործել, բայց էլի չեմ կարողացել նրա պես լավ պատրաստել:

Հանկարծ կլռի: Կնայենք իրար աչքերի մեջ. օդի մեջ ծանր, սառը լռություն կկանգնի: Թույլտվություն կխնդրի, կասի, որ հոգնած է, և եթե հնարավոր է՝ կուզի հանգստանալ: Նրան իր սենյակը ցույց կտամ: Հետո դանդաղ կփակեմ դուռը եղբորս, անցյալի, անցածի վրա, բայց դրանով ոչինչ չի անցնի:

Նրան այնտեղ կթողնեմ: Իմ տան մի սենյակում: Ո՛չ հեռու է, ո՛չ մոտիկ: Չորս պատի մեջ, սրտիս մի տուփում կմնա. Իսքենդերը, ում միշտ կսիրեմ ու միշտ կատեմ:

Նա իմ եղբայրն է:

Նա մարդասպան է:

3 հոկտեմբերի, 1992
Լոնդոն

ԺԱՄԱՆՈՒՄ

Փեմբե

1 դեկտեմբերի, 1946

Երբ մի գյուղում Փեմբեն լույս աշխարհ եկավ, Նազեն այնքան էր տխրել, որ չնայած քսան ժամ տևած ցավերին ու արյունով ծածկված սավաններին՝ ուզեց վեր կենալ ու գնալ: Այդ քամոտ օրը ծննդկանի սենյակում գտնվող բոլորն այդպես էին անում:

Եթե անգամ ուզեր գլուխն առնել ու փախչել, ոչ մի տեղ չէր հասնի Նազեն: Սենյակի կանանց ու բակում սպասող ամուսնուն զարմացնելով՝ վրա հասած ցավի ալիքից նորից ընկավ անկողնու վրա: Երեք րոպե անց երկրորդ երեխայի գլուխը երևաց: Թավ մազերով, կասկարմիր մաշկով, թաց ու ճմռթված: Էլի աղջիկ էր. ավելի փոքր-մոքր:

Այս անգամ Նազեն չփորձեց փախչել: Կարծես ուշաթափվեց, գլուխը թաղեց բարձի մեջ, փորձելով լսել քամու ձայնը՝ նայեց պատուհանին: Ասես եթե ուշադիր լսեր՝ երկնքից եկող պատասխանը կկարողանար լսել: Ինչ էլ որ լիներ պատճառը, պետք է որ հստակ պատասխան լիներ: Ինչո՞ւ էր Աստված նրանց զույգ աղջիկներ նվիրել, երբ արդեն վեց աղջիկ ունեին ու ոչ մի տղա:

Եվ նոր մայրը լռեց: Պոկված ճյուղի, հանգած մոմի պես: Երդվեց՝ մինչև Աստված իր Նազե ծառային չասի՝ ինչու է այդպես վարվել, չի խոսելու: Անգամ քնելիս էին

թվայնացրել է 1915.info կայքը

շուրթերը փակ: Ուղիղ քառասուն օր, քառասուն գիշեր ոչինչ չասաց: Ո՛չ յուղով սիսեռ պատրաստելիս, ո՛չ վեց աղջիկներին տաշտի մեջ մեկ առ մեկ լողացնելիս, ո՛չ կանաչիով պանիր պատրաստելիս, ո՛չ էլ երբ ամուսինը հարցրեց ինչ դնել աղջիկների անունը: Ճգնաժամ էր ապրում. լուռ էր գերեզմանատան նման, ուր հանգրվան էին գտնելու բոլոր հանգուցյալները, և մի օր՝ ինքը:

Նրանք ապրում էին հեռավոր, փոքր ու խուլ քրդական գյուղում, որտեղ էլեկտրականություն, բժիշկ, դպրոց չկար: Դրսի աշխարհի լուրերն անգամ չէին կարող նրանց գրկող մենակության պատյանը պատռել: Ո՛չ Երկրորդ համաշխարհային պատերազմը, ո՛չ ատոմային ռումբը, ո՛չ Ֆրանկոն Իսպանիայից... Գյուղացիներն այս ամենից տեղյակ չէին: Վստահ էին՝ Աֆաքում՝ Եփրատի ափերից այն կողմ, տարօրինակ բաներ էին տեղի ունենում: Կարծում էին՝ առանց այդ էլ, աշխարհի բանից հասկանում էին, այդ հողերից այն կողմ ոչինչ չէին ուզում տեսնել: Հնուց ի վեր եկող ու մինչև անսահմանություն ձգվող ամեն ինչ նրանց աչքի առաջ էր, այժմ ու այդտեղ: Մարդուն մնում էր միայն ծառի կամ ժայռի պես պինդ կանգնել: Իհարկե եթե մարդ անցյալը կորցրած դերվիշ, խելակորույս հիմար կամ սիրածին կորցրած խենթ չէ:

Դերվիշները խելառ են, ու իրենց սիրածից բացի՝ ոչ ոք իրենց աչքին չի երևում աշխարհում. ամեն ինչ այնպես է, ինչպես պետք է լինի՝ ո՛չ ավելի, ո՛չ պակաս: Ամեն ինչ իր տեղում է: Գյուղում թե մի ձայն հնչեր, բոլորը կլսեին: Գաղտնիք ունենալը հարուստներին է հատուկ, Մալա Չար Բայան (Չորս քամիների տունը) անունով այդ գյուղում ոչ ոք ունևոր չէր: Կորամեջք ու տխուր դեմքերով գյուղի երեք ծերերը, ամբողջ օրը սրճարանում նստած, կյանքի չափ նուրբ, սրտի պես թափանցիկ բաժակներով թեյ էին խմում, փորձում էին Աստծու կամքի ու

քաղաքագետների խարդախությունների մասին միտք անել: Երբ Նազեի լռության երդումը երկար տևեց, որոշեցին նրան այցելել:

– Լավ բան չես անում, ասեմ իմանաս: Եկել ենք քեզ համոզելու,– ասաց առաջին ծերունին:

Այնքան նիհար էր, որ մի թեթև քամուց կընկներ:

– Ի՞նչ հույսով ես սպասում, որ Աստված, որը միայն մարգարեների ու սրբերի հետ է խոսել, քեզ հետ պիտի խոսի,– խոսեց երկրորդ ծերունին՝ վերջին մի քանի ատամի արանքից:– Մեկ է կին ես, կնոջից ի՞նչ մարգարե...

Երրորդ ծերունին, ծառի ճյուղերի նման չոր մատները ցնցելով, ասաց.

– Դու խոսելու ես, Աստված լսելու է: Եթե ուզեր, որ այլ կերպ լիներ, քեզ ոչ թե մարդ, այլ ձուկ կստեղծեր:

Նազեն, գլխաշորի եզրով արցունքները սրբելով, լսեց նրան: Մի պահ իրեն գետում ձուկ պատկերացրեց՝ արևի տակ փայլող լողակներով, կլոր-կլոր պուտիկներով, մեծ, մոխրագույն կարմրախայտ: Որտեղի՞ց իմանար՝ իր երեխաներն ու թոռներն էլ են տարբեր ձկների հետ կապվելու, և ստորջրյա աշխարհի հանդեպ սերը անցնելու էր սերնդեսերունդ:

– Խոսի՛ր,– ասաց տարեցներից մեկը:– Լռելը քո բնությանը դեմ է: Բնությանը դեմ գնացողը, Աստծուն է հակառակվում:

Նազեն ոչինչ չասաց: Հենց հարգարժան հյուրերը գնացին, վեր կացավ ու մոտեցավ զույգերի օրորոցին: Վառարանի կրակը սենյակին ոսկեգույն ճառագայթներ, երեխաների մաշկին փափուկ, գրեթե հրեշտակային փայլ էր տալիս: Սիրտը փափկեց: Իրեն մոտեցած, ըստ հասակի շարված վեց աղջիկներին նայելով՝ ցածրաձայն ասաց.

– Երեխաներին անուններ եմ գտել:

թվայնացրել է 1915.info կայքը

– Ասա՛, մայրի՛կ,– բղավեցին աղջիկները՝ ուրախացած մոր ձայնը նորից լսելուն:

Նազեն կոկորդը մաքրեց ու խռպոտ ձայնով ասաց.

– Սրանը Բեխթ, մյուսինը՝ Բեսե:

– Բեխթ ու Բեսե,– կրկնեցին աղջիկները միասին:

– Հենց էդպես:

Նազեն դանդաղ սեղմեց շուրթերը, կարծես անունները կծու համ էին թողել բերանում: Քրդերեն՝ Բեխթ ու Բեսե, թուրքերեն՝ Քադեր ու Եթեր[1], իսկ իմաստը աշխարհի բոլոր լեզուներում նույնն է:

Չնայած արդեն հաշտվել էր ճակատագրի հետ ու հոգնել էր աղջիկներ լույս աշխարհ բերելուց, նորից հղիացավ: Աստծուն ասաց, որ որդի, անպայման որդի պետք է ունենա: Հասկանում էր՝ դա իր վերջին հղիությունն է, որովհետև արդեն քառասունմեկ տարեկան էր, ու տարիներն անցնում էին:

Այդ երեկո, երբ հայրը տուն եկավ, աղջիկները վազեցին նրա մոտ՝ լուրը ավետելու.

– Հայրի՛կ, մաման խոսեց:

– Հայրի՛կ, մաման երեխաների անուններն է որոշել:

Ուրախացավ, որ կինը նորից սկսել է խոսել, բայց երբ իմացավ զույգերին տված անունները, Բերզոն գույնը գցեց: Գլուխն օրորելով՝ երկար ու ծանր լռեց:

– Քեդեր ու Եթեր,– մռթմռթաց նա:– Դու երեխեքին հո անուն չես դրել. նրանց ճակատագիրն ես որոշել:

Նազեն գլուխը կախեց. նայում էր բրդե գուլպայից դուրս եկած մատին:

– Տխրությանդ անունները նրանց ես տվել: Աստծուն զայրացնելու ես, հա,– շարունակեց Բերզոն:– Ի՞նչ կարիք կա:

---

[1] Բախտ ու Բավական:

թվայնացրել է 1915.info կայքը

Անուններ ասաց՝ Փեմբե ու Ջեմիլե, թեյի մեջ հալվող շաքարի կտորների պես փափուկ ու քաղցր, մեղմ անուններ:

Չնայած Բերզոյի որոշումը վերջնական էր, Նազեն իր ընտրած անուններից չհրաժարվեց: Այդպես էին տպավորվել իր հիշողության մեջ. ծառի ճյուղերից կախված երկու օդապարուկի նման փաթաթվել էին տոհմածառից: Այդպիսով, զույգը երկու անունով հայտնի դարձավ: Փեմբե Քադեր ու Ջեմիլե Եթեր: Այն ժամանակ ո՞վ գիտեր, որ նրանցից մեկի մասին մի օր գրելու են աշխարհի բոլոր թերթերը:

թվայնացրել է 1915.info կայքը

Իսքենդեր

5 մարտի, 1970, Սրամբուլ

Մի գարնանային օր, երբ փորձեց փախչել այն մարդուց, ում երբեք չէր տեսել, բայց շատ էր լսել, Իսքենդերը դեռ յոթ տարեկան չկար: Այդ մարդը իր պատկերացումներից տարբերվում էր, բայց մեկ է՝ սարսափելի էր: Հաստ շրջանակով ակնոցը քթին, շուրթերի արանքում հանգած ծխախոտն ու սև պայուսակն ուսին, որի մեջ, ասում են սուր գործիքներն ու իր զոհերից հավաքած մաշկի կտորներն է պահում:

Նրան տեսնելն ու սարսափից ծնկները դողացնելը մեկ եղավ: Օշարակը թափվեց ու կարմիր հետքեր թողեց սպիտակ վերնաշապիկին ձյան վրա թափված արյան հետքերի պես: Հետքերը սկզբում ձեռքով, հետո թիկնոցի ծայրով փորձեց մաքրել: Բայց զուր էր ջանքը. հագուստը փրկել չէր լինի:

Միևնույն է, երկար, արծաթագույն թիկնոցով, փայլուն քարերով զարդարված գլխարկով ու փայլփլուն գավազանով արքայազնի նման էր: Կեսօրին, իր հողերին նայող իշխանի պես, նստել էր բարձր աթոռին. իր տարիքի համեմատ կարճահասակ էր, ոտքերը գետնին չէին հասնում: Ձախ կողմում նրանից մեծ, բարձրահասակ, բայց նմանատիպ հագուստով չորս տղա էին կանգնած: Մարտիկների պես ոտքից գլուխ միմյանց նայեցին,

թվայնացրել է 1915.info կայքը

և Իսքենդերը որոշեց՝ ոչ մեկի հագուստն իր հագուստի պես գեղեցիկ չէ:

Մյուս արքայազները, բերանները կոնֆետ լցրած, կոպիտ կատակներ էին անում, իսկ Իսքենդերը, ոտքերն օրորելով, սպասում էր: Չէր հասկանում՝ եթե գիտեն՝ գլխներին ինչ է գալու, ինչպե՞ս են կարողանում անտարբեր լինել: Անհանգիստ նայեց շուրջը: Այնքան վստահ էր, որ սենյակում գտնվող մարդկանցից ոչ մեկը, անգամ մայրն իրեն չի փրկի: Հատկապես մայրը:

Առավոտյան արտասվելով ասում էր՝ հպարտ է, որ որդին իսկական տղամարդ է: Իսքենդերը չէր հասկանում՝ եթե մարմնիցդ մի կտոր են կտրում, ինչպե՞ս ես տղամարդ դառնում: Անհասկանալի առեղծված էր:

Քչանալով շատանում, պակասելով մեծանում են: Մի բան էլ կար, որ չէր հասկանում. եթե պարզ է՝ ցավոտ է լինելու, ինչու՞ են բոլորն ասում, որ չարտասվի: Մինչդեռ մայրը կարող էր ուզածի պես արտասվել, բայց պարզ էր, որ նրան ոչինչ չի եղել:

Աչքի պոչով սև պայուսակավոր թլփատողին նայող Իսքենդերը նրա ձախ այտից մինչև ծնոտը ձգվող սպին նկատեց: Գուցե այն տղաներից մեկն էր արել, ում թլփատում էր: Գուցե մի պահ՝ վիրահատության պահին, իրեն բռնող ձեռքերից մեկից փրկվել, դանակը խլել ու նրա աջ այտը ճանկռել էր: Նախ իրեն էր փրկել, հետո՝ մյուս տղաներին: Բոլորով հաղթական կոչերով դեպի դուռն էին վազել ու կորել: Բայց երազը երկար չտևեց:

Երբ աչքերը բացեց, սենյակը նույնն էր, մի կույր հաֆեզ[1] Ղուրան էր կարդում, մի կին թեյ ու նուշի պաշտետ էր հյուրասիրում, հյուրերը ցածրաձայն զրուցում էին, ու սարսափելի պահն աստիճանաբար մոտենում էր:

---

[1] Ղուրանը անգիր իմացող մարդ:

թվայնացրել է 1915.info կայքը

Իսքենդերը դանդաղ իջավ աթոռից: Երբ ոտքերը դիպան գորգին, շունչը պահեց. սպասեց, որ ինչ-որ մեկը դուրս է գալու, ասելու է՝ ո՞ւր ես գնում: Բայց տեսավ՝ ոչ ոք չի կանգնեցնում, մատների ծայրերին կանգնելով՝ մոտեցավ անկյունում տեղադրված երկու հոգանոց անկողնուն. մետաղյա գլխամասում աչքուլունքներ էին, նախշազարդ բարձերով, կապույտ ատլասե ծածկոցով էր զարդարված: Իսքենդերի ամենասիրած գույնն էր կապույտը:

Երեխաների գույնն էր, երկնքի գույնը: Գետերի ու լճերի գույնը: Եվ օվկիանոսների, որոնք դեռ չէր տեսել...

Ամեն քայլից քաջալերվելով՝ հետևի դռնից դուրս եկավ: Այգի դուրս գալուն պես աղեղից դուրս պրծած նետի պես ցատկեց, սկսեց վազել: Ջրհորի շուրջը վազելիս քայլերն արագացրեց. իջավ ցած, հարևան տների մոտով սուրալով՝ վազեց դեպի բլուրը: Հագուստը կեղտոտվել էր, բայց իր համար մեկ էր: Արդեն ոչինչ կարևոր չէր: Մտադիր չէր վերադառնալ: Սև պարկով մարդը, խնդրեմ, թող գնա, ուրիշ տղաների թլփատի:

Մոր՝ Փեմբեի ձեռքերի մասին փորձեց մտածել. դարչնագույն, ալիքավոր մազերի, դրանք սանրելու, կավի ամանների մեջ մածուն մերելու, խմորից կենդանու պատկերներ սարքելու մասին: Կաղնուն հասնելուց բացի՝ ոչինչ չէր մտածում:

Չորս կողմը տարածվող արմատներով, ամպերին հասնող ճյուղերով ծեր ծառ էր: Սկսեց շնչակտուր մագլցել. արագ էր ու վճռական: Անգամ եթե քրտնած ձեռքերի պատճառով երկու անգամ սահեց, իրեն հավաքեց ու կարողացավ պահել հավասարակշռությունը: Նախկինում երբեք այդքան բարձր չէր մագլցել: Տխրեց, որ ոչ ոք չկար, որ իր հաջողությունը տեսներ: Այդ բարձրությունից երկինքն այնքան մոտ էր երևում, որ կարող

թվայնացրել է 1915.info կայքը

էր ձեռքով դիպչել: Ամպի ծածկոցի տակ իրենից գոհ ու հպարտ նստեց, մինչև սկսեց մտածել՝ ինչպես է ցած իջնելու:

* * *

Մի ժամ հետո ծառի ճյուղին մի թռչուն թառեց: Աչքերի շուրջ դեղնավուն շրջաններով ու թևերին սուտակի պես փայլուն կարմիր պուտերով նրբիկ թռչուն էր: Եթե թռչունը մի քիչ էլ մոտենար, Իսքենդերը կարող էր բռնել, կարող էր լսել նրա սրտի բաբախը իր մաշկի վրա: Կարող էր ափերի մեջ առնել, սիրել, պաշտպանել: Կամ կարող էր անզգույշ շարժումով վիզը կոտրել: Այդ մտքից հանկարծ խորապես զղջաց: Այդպիսի մեղքերի համար դժոխքում մեծ կաթսաներով ջուր են եռացնում:

Աչքերը լցվեցին: Կարծում էր՝ մայրն անմիջապես նկատել է իր բացակայությունը, թաղի բնակիչներին իր հետևից է ուղարկել, բայց ոչ ոք չէր գալիս: Այդտեղ մահանալու էր: Կամ ցրտից, կամ սովից: Բոլորը կամ հիվանդությունից են մեռնում, կամ պատահարներից, իսկ ինքը՝ երևի վախկոտությունից: Ամաչում էր դրանից:

Ով գիտի, գուցե սխալ տեղերում են փնտրել, հետո մտածել են, որ կորել է: Գուցե մտածել են՝ գայլերն են կերել: Վայրի գազանների ճանկն է ընկել ու մահացել սարսափելի մահով: Տեսնես մայրը շա՞տ կտխրեր, թե՞ թաքուն կուրախանար, որ մի բերան պակասեց տնից:

Իսքենդերը կամաց-կամաց սովածանում էր: Բայց ամենակարևորն այն էր, որ ուզում էր զուգարան գնալ: Հասկանալով, որ էլ չի կարող պահել՝ տաբատն իջեցրեց ու գլխին այդքան խնդիր բերած պուպուլիկը բռնեց: Նոր էր սկսել միզել, երբ ներքևից մեկը բղավեց.

– Այնտեղ է: Վերևում: Գտա:

թվայնացրել է 1915.info կայքը

Մի երկու վայրկյանում մի մարդ երևաց, հետո մյուսը, հանկարծ՝ տասը հոգի: Ծառի մոտ շարվելով՝ նրան նայեցին: Իսքենդերն ի՞նչ կարող էր անել. նախ հետաքրքրասեր հայացքների ներքո շարունակեց միզել: Ի վերջո, ճարմանդը փակեց, մտածեց՝ դիտողներից օգնություն խնդրել ներքև իջնելու համար, բայց նկատեց սև պարկով մարդուն:

Այդ պահին մի տարօրինակ բան կատարվեց, որ հետագա տարիներին նորից ու նորից հիշեցնելու էր իր մասին, բայց մինչև այդ օրը դրա մասին չէր իմացել: Իսքենդերը պաղեց: Ճանապարհին մեքենայի լույսերից ապշած եղնիկի նման ո՛չ կարողացավ շարժվել, ո՛չ շնչել: Մարմնի մասերը թուլացել էին, լեզուն թմրել էր, ստամոքսի փոխարեն կարծես մի մեծ քար լիներ: Մարդիկ աղաչում էին, որ իջնի, բայց նա չէր լսում: Ծառի ճյուղ էր դարձել: Կաղնուց սարքած տղա: Ներքևինները մտածեցին՝ ուզում է մեռած ձևանալ, որ ուշադրություն գրավի, բայց որոշ ժամանակ անց հասկացան՝ երեխան իսկապես վատ է զգում, փորձեցին նրան փրկել:

Հարևաններից մեկը փորձեց ծառը մագլցել, բայց չէր կարող հասնել Իսքենդերի թառած ճյուղին: Մյուսն էլ փորձեց, բայց նա էլ՝ զուր: Այդ ընթացքում մյուսները սկսեցին ծածկոց բերել, որ երեխան ցատկի, կամ էլ պարաններ բերել, որոնց իմաստը ոչ ոք չէր կարողանում հասկանալ: Ոչինչ չօգնեց: Աստիճանները շատ կարճ էին, պարանները՝ բարակ, երեխան՝ անօգնական:

Հենց այդ պահին ծանոթ ձայն լսեց:

– Ի՞նչ գործ ունի այնտեղ:

Փեմբեն էր բղավում: Մի քանի հարևան կանանց հետ ծառն էր մագլցում:

– Տղադ չի կարողանում իջնել,– բացատրեցին հարևանները:

թվայնացրել է 1915.info կայքը

– Ի՞նչ եք խոսում, ինչո՞ւ չպիտի կարողանա,– ասաց Փեմբեն:

Հոնքերը կիտեց, բղավեց երեխայի՝ ծառից լուցկու չոփերի պես կախված ոտքերին.

– Իսքենդե՛ր, քեզ եմ ասում, հենց հիմա արի՛ այստեղ:

Այդ պահին Իսքենդերը զգաց՝ ինչպես է արև տեսած հալվող ձյան պես մարմինը թուլանում:

– Ցա՛ծ իջիր, ասում եմ քեզ: Հորդ խայտառակ արեցիր: Քեզնից բացի՝ բոլորը թլփատվել են: Մենակ դու ես վախկոտի նման...

Բայց ինչքան էլ փորձեր, չէր կարողանում իջնել Իսքենդերը: Փոխարենը ժպտաց: Եթե իրավիճակը լուրջ չընդուներ, գուցե փորձանքից ավելի հեշտ ազատվեր: Բայց չստացվեց: Երբ Փեմբեն տեսավ, որ ժպտում է, համբերության բաժակը լցվեց:

– Քո ինչն եմ ասել, ա՛յ երես առած բիձ: Եթե հենց հիմա չիջնես, ոտքերդ կկոտրեմ: Երևի չես ուզում տղամարդ դառնալ:

Իսքենդերը մի քիչ էլ մտածեց.

– Ո՛չ, չեմ ուզում:

– Բայց եթե երեխա մնաս, մեքենա չես ունենա:

Իսքենդերն ուսերը թոթվեց: Ինչ պիտի աներ, քայլելով կգնար կամ ավտոբուս կնստեր:

– Տուն էլ չես ունենա:

Էլի բանի տեղ չդրեց: Տունն ինչին էր պետք: Կարող էր նաև վրանում ապրել: Հիպիների կամ գնչուների նման:

– Տե՛ս, չես կարողանա ամուսնանալ: Ոչ մեկ քո կինը չի դառնա:

Այդ պահին ապշեց Իսքենդերը: Ուզում էր գեղեցիկ կին ունենալ: Մոր նման, բայց որ իրեն չկշտամբեր, չնախատեր, չպատժեր: Շրթունքները կծեց: Երկար սպասումից հետո, որը թվում էր՝ երբեք չէր ավարտվելու,

թվայնացրել է 1915.info կայքը

կարողացավ նայել մոր դեմքին: Փեմբեի հայացքը բաղեղի ճյուղերի պես էր՝ հանգիստ, բայց համառորեն որդուն դեպի իրեն ձգող մուգ կանաչ աչքեր:

– Լավ,– ասաց Փեմբեն՝ խոր հոգոց հանելով:– Դու հաղթեցիր: Թլփատում-մլփատում չկա քեզ: Դե՛, արի: Ոչ ոք քեզ չի դիպչի, չմտածես:

– Մայրի՛կ, խոսք:

– Խոսք, փաշա՛ս: Խոսք, սուլթա՛նս:

Փափուկ, ջերմ ձայնը վստահություն էր ներշնչում: Ինչքան խոսում էր, այնքան ավելի էր վստահում նրան Իսքենդերը: Կարողացավ շարժել ոտքերի մատները: Հետո կարողացավ մի քանի ճյուղ ներքև իջնել, ծառին հենած աստիճանի ամենավերևի հարթակին իրեն սպասող մարդուն հասնել: Ի վերջո, երբ կարողացավ ողջառողջ իջնել գետնին, արտասվելով վազեց մոր մոտ:

– Որդի՛ս,– ասաց Փեմբեն՝ կարծես ուզելով, որ բոլորն իմանան:

Այնքան ամուր էր փաթաթվել Իսքենդերին, որ երեխան կարողանում էր լսել նրա սրտի բաբախը:

– Մալա մին[1], քաջ որդիս:

Իսքենդերը նորից կարողացավ հանգիստ շունչ քաշել. արդեն ոտքը գետնին էր դրել, մոր սիրուց երջանկությունը կրկնապատկվեց: Բայց զգում էր՝ այդ գրկախառնության մեջ ինչ-որ բան այն չէր, կարծես շունչը կտրվեր:

Մոր շունչը, մարմինը գրկող ձեռքերը դագաղի նման էին:

Փեմբեն կարծես կարդացել էր Իսքենդերի մտքերը. որդու ուսերից բռնեց ու նայեց աչքերի մեջ: Հանկարծակի ապտակ հասցրեց նրան.

[1] Քրդերեն նշանակում է՝ տունս. օգտագործում են նաև տղա երեխաների մասին խոսելիս:

թվայնացրել է 1915.info կայքը

– Ի՛նձ նայիր, էլ երբեք հորդ ամոթով չթողնես:

Հետո սև պարկով մարդուն նայեց ու ասաց.

– Ա՛ռ, եղբա՛յր, սրան:

Իսքենդերի դեմքը կավճի պես սպիտակեց: Ոչ թե վախ, այլ զարմանք ապրեց: Մայրը բոլորի աչքի առաջ իրեն խաբել էր: Բացի այդ՝ ապտակել էր: Մինչդեռ մինչ այդ նրան մատով չէր դիպել: Չէր կարող պատկերացնել, որ նման բան կպատահի: Փորձեց խոսել, բայց չկարողացավ. բառերը ապակու կտորների նման շարվեցին կոկորդին:

Երեկոյան ժամերին բոլորը հպարտությամբ պատմելու էին՝ որքան քաջ էր Իսքենդերը թլփատման սեղանին: Ասելու էին, որ արցունք չի թափել, իսկական տղամարդու նման է պահել իրեն: Բայց տարիներ անց խոստովանելու էր՝ քաջության հետ ոչ մի կապ չուներ դա: Թլփատման ժամանակ սառն ու անհաղորդ էր միայն մի պատճառով՝ մայրը նրան ինչպես և ինչու էր խաբել: Իսքենդերը չէր կարողացել մարսել այդ դավաճանությունը: Սիրել ու դավաճանել: Երբեք չէր մտածել, որ կարող է խաբել մեկին, ում կյանքից առավել է սիրում: Մինչև այդ օրը չգիտեր՝ կարող ես մեկին ողջ սրտով սիրել ու նորից ուզել նրան վնասել: Դա իր կյանքի առաջին դասն էր այն մասին, որ սերը բարդ բան է:

թվայնացրել է 1915.info կայքը

Յունուս

10 հոկտեմբերի, 1977
Լոնդոն

Յունուսը Թոփրաք ընտանիքի միակ երեխան էր, որը Անգլիայում էր ծնվել: Կատարյալ անգլերեն էր խոսում, սահմանափակ՝ թուրքերեն, քրդերեն չէր խոսում: Գանգրացող ծայրերով շագանակագույն մազերով, պեպենոտ այտերով ու մեծ ականջներով այնքան լավ տեսք ուներ, որ նրան տեսնելիս մարդ չէր կարող չժպտալ: Գլուխը մարմնի համեմատ անհամաչափ էր, տարիքի համեմատ մի քիչ մեծ էր: Փեմբեն ասում էր՝ շատ մտածելուց է: Աչքերի գույնը հոգեվիճակի ու հագուստի գույներից կախված փոխվում էր, փիրուզի ու ջրիմուռի գույների միջև էր տատանվում: Հովնան Մարգարեի[1] անունն էին դրել: Այն մարգարեի, ով ճշմարտությունը պիտի հաղորդեր մարդկանց, որոնք պատրաստ չէին այն լսել: Դրանից հետո խուճապի էր մատնվել, փախել էր, հայտնվել կետի ստամոքսում, զղջացել էր այնտեղ, երեք մութ օր ու գիշեր էր անցկացրել:

Յոթ տարեկան Յունուսը շատ էր սիրում այդ պատմությունը, փորձում էր կետի ստամոքսը պատկերացնել: Մարգարեի պես Յունուսն էլ դժվարություն հանդիպելուն պես փախչում էր: Դասերից ձանձրանալուն

[1] Հովնան Մարգարեի անունը թուրքերենում Յունուս է արտասանվում:

թվայնացրել է 1915.info կայքը

պես, դպրոցից, ընտանիքից ձանձրանալիս՝ տնից էր փախչում: Պատրաստ էր բարդ իրավիճակներից դուրս թռչել: Չնայած մոր բոլոր ջանքերին՝ ժամանակի մեծ մասը փողոցում էր անցկացնում, դրա համար հյուսիսային Լոնդոնի կարճ ճանապարհները, թաքուն վայրերը քառասունամյա տաքսու վարորդներից ավելի լավ գիտեր:

Փեմբեն միշտ ասում էր՝ չի հասկանում, թե իր երեք երեխաներն ինչպես են իրարից այդքան տարբեր ստացվել: Յունուսն իսկապես տարբեր էր: Փակ էր, ուշադիր, խաղաղ: Փիլիսոփա էր ու երազող: Լուռ անձավում ապրելու չափ ինքնամփոփ: Համեստ էր, կարող էր երջանկությունը պարզ բաներում, գեղեցկությունը՝ անձրևի մի կաթիլի մեջ գտնել: Իսքենդերն ու Էսման անընդհատ ուրիշներին էին խանդում, պայքարում էին ամեն ինչի դեմ, մինչդեռ Յունուսը ոչ մեկի հետ խնդիր չուներ: Տարբեր պատճառներով ընտանիքի բոլոր անդամներն իրենց օտար էին զգում, բայց Յունուսը հաշտ էր աշխարհի հետ: Իր մեջ ներքաշվելիս այնքան ինքնագոհ էր, որ ուրիշ բանի կարիք չէր զգում: Դե, եթե ստիպված լիներ, ձկան ստամոքսում էլ կկարողանար ապրել՝ առանց բողոքի, առանց խնդիրների:

Փեմբեն ասում է՝ մոր փորում շատ չի մնացել, կաթը չի հերիքել, դրանից է: Երեք երեխաներից միայն Յունուսն էր ժամանակից շուտ ծնվել, կրծքի կաթ չէր ուզել, արհեստական կեր էին տվել:

– Ի՞նչ օգուտ որ,– կեսկատակ ասում էր նա:– Մեզնից կտրվեց երեխան:

Իսքենդերն ուզում էր աշխարհը կառավարել, Էսման՝ փոխել, իսկ Յունուսի միակ ցանկությունը աշխարհը հասկանալն էր: Այդքան բան:

թվայնացրել է 1915.info կայքը

* * *

1978 թվականի աշնանը, երբ մտան այն փուլը, որն իրենց կյանքը տակնուվրա էր անելու, առաջինը Յունուսը հասկացավ՝ Փեմբեի հետ մի բան այն չէ: Մտածկոտ էր, մտազբաղ էր մայրը: Մի քանի անգամ մոռացել էր Յունուսին ճաշի համար դրամ թողնել: Բացի դրանից՝ նրան ավելի քիչ էր կերակրում, նախկինի պես ուտելիք չէր խցկում բերանը: Յունուսի կասկածները հենց դրանից սկսվեցին: Փեմբեն երբեք չէր մոռանում նրան կերակրել: Անգամ Մեծ Դատաստանի օրվա առավոտյան, ինչ էլ լիներ, Յունուսին լիքը ստամոքսով կուղարկեր դրախտ:

Յունուսն իր համար չէր անհանգստանում. նա միշտ ուրիշների մասին էր մտածում: Հետո էլ փող վաստակելու ձևը գտել էր: Այն էլ՝ մի քանի անգամ ավելի: Դպրոցից մի քանի փողոց այն կողմ մի տուն կար: Վիկտորյական դարաշրջանից մնացած, կիսավեր, լքված շենքը, ըստ հարևանների, ուրվականների տուն էր: Ցից տանիք, շրջանաձև վերանդա ու եռանկյունի շրջանակով պատուհաններ ուներ: Յունուսն այդ թաղամասում անցկացրած անթիվ-անհամար ուսումնասիրության զբոսանքներից մեկի ժամանակ էր գտել շենքը: Մի խումբ ռադիկալ երիտասարդներ բռնազավթել էին շենքն ու այնտեղ հաստատվել: Պանկեր, անարխիստներ, նիհիլիստներ, բնապահպաններ, պացիֆիստներ, հասարակությունից դուրս մնացածներ կամ նրանք, ովքեր հասարակությունից դուրս էին դնում իրենց... Գույնզգույն խումբ էին՝ հատկապես սև ու կարմիր գույներով: Ոչ ոք չգիտեր՝ Յունուսը նրանց հետ ինչպես էր ծանոթացել, բայց պարզ է՝ կարճ ժամանակում օկուպանտներին իրեն սիրել էր տվել: Երբ այնքան հոգնած, տանջված կամ ծխած էին լինում, որ չէին կարողանում շարժվել, նրան խանութ էին ուղարկում՝ հաց, պանիր, կաթ, ապխտած միս, շոկոլադ,

թվայնացրել է 1915.info կայքը

ծխախոտ, ծխախոտի թուղթ գնելու... Յունուսը սովորել էր՝ այդ ամենն էժան գնով որտեղից բերել:

Երբեմն նրան հեծանիվով ուղարկում էին տասը րոպե հեռավորության վրա խրճիթանման տանն ապրող դժգոհ դեմքով մարդուց գնումներ անելու: Չնայած այդ մարդը նրան ոչինչ չէր հարցնում, անգամ զեղչեր էր անում, Յունուսին այդ պարտականությունը դուր չէր գալիս: Տհաճ մթնոլորտ, նեխած ու հիվանդագին հոտ կար այնտեղ: Իրականում օկուպանտների տնից էլ էր հոտ գալիս: Բայց այնտեղ բոլորի ու ամեն ինչի վրա թառած ծանր հոտից անդին ուրիշ շերտեր կային՝ ծաղիկների ու եթերային յուղերի, գարնան բողբոջների, հույսի հոտ:

Օկուպացված տանը մնալու ամբողջ ընթացքում Յունուսը երբեք իրեն տրված առաջադրանքներից չէր հրաժարվել: Դա միայն մի պատճառ ուներ՝ Սե՛ր:

* * *

Տանը ոլորաձև, մինչև երեք հարկ բարձրացող փայտե աստիճան կար: Այնքան բարձր էր աստիճանն ու այնքան փտած, որ իջնելիս կամ բարձրանալիս անդադար ճռճռում էր: Օկուպանտներն առաջին երկու հարկի պատերը քանդել, բաց տարածություններ էին ստեղծել: Հին հունական քաղաք-պետությունների հայրենակիցների պես այնտեղ հավաքվում, քննարկում, քվեարկում ու կոմունայի հետ կապված որոշումներ էին կայացնում:

Տան կահույքի մեծ մասը Ագորայում էին տեղավորել. երկրորդ ձեռքի հնաոճ հատուկենտ լամպեր, բազկաթոռներ, աթոռներ, լաքաներով ու ծխախոտի այրվածքներով ծածկված բազմոցներ: Հատակին՝ խամրած կարմիր արևելյան գորգ: Ոչ ոք չգիտեր՝ որտեղից էր

թվայնացրել է 1915.info կայքը

հայտնվել: Չնայած բավական հին էր, դեռ գեղեցիկ էր ու հավանաբար տան ամենաթանկարժեք իրն էր: Ամենուր իրար վրա շարած գրքեր, ամսագրեր ու ֆենզիններիի[1] կույտեր էին: Սուրճի կեղտոտ բաժակներ, գինու գավաթներ, չորացած թխվածքաբլիթներ, շրթհարմոններ, տուփեր, ինչ-որ մեկի այգուց բերած փուչիկներ ու փչացած ձայնարկիչ, որը ոչ ոք չէր փորձում վերանորոգել: Այդ տանը անձնական սեփականություն չկար: Ամեն ինչը պատկանում էր բոլորին: Տանն ապրողների թիվն ամեն օր փոխվում էր: Յունուսը դեռ երկրորդ հանդիպման ժամանակ նոր դեմքերի հանդիպելիս հասկացավ դա:

– Սա տուն չէ, նավ է,– ասաց օկուպանտներից մեկը հաշիշից ծռմռված ժպիտով:– Անհայտի առաջ առագաստները լայն բացած՝ գնում ենք: Ճանապարհին որոշ ճանապարհորդներ իջնում են, մյուսները՝ նստում:

Խոսողի մազերը նարնջագույն էին ներկված, ցից-ցից կանգնած էին: Հեռվից նայելիս այնպիսի տպավորություն էր, ասես կրակի կտորներ լինեին:

– Այո՛, ճիշտ Նոյի տապանի պես,– ասաց նշաձև աչքերով, սև մազերով գեղեցիկ կինը: Հետո Յունուսին նայելով՝ ներկայացավ.– Բարև, իմ անունը...

Բայց Յունուսն անունը չլսեց: Ո՛չ այդ պահին, ո՛չ էլ հետո: Այդ պահին նրա շրթունքի օղին, հոնքերի օղերին ու թևերը, ուսերը, կուրծքը ծածկած դաջվածքներին նայելով էր զբաղված: Տղայի զարմանքը նկատած աղջիկը նրան իր մոտ կանչեց, նամականիշների հավաքածուն հյուրին ցույց տվող արվեստագետի ոգևորությամբ իր դաջվածքները ցույց տվեց: Ձախ թևին այծեղջյուր էր՝ իր հորոսկոպի նշանը: Որպեսզի

[1] Անգլերեն fan և magazine բառերի միավորումից ստեղծված արտահայտություն: Մի ֆենոմենի սիրահարների հրատարակած, սիրողական ու ոչ պաշտոնական հրատարակություն:

թվայնացրել է 1915.info կայքը

այծեղջյուրն այնտեղ մենակ չլիներ, կողքին բերանից կրակ թռցնող վիշապ էր դաջել տվել: Ծոծրակից սկսած դեպի երկու ուսը տարածվող սպիտակ ու մուգ կանաչ նունուֆարի արմատները մեջքով ցած էին իջնում: Աջ թևին բորդո վարդ էր, տակը երկու բառ՝ *Rara avis*.

– Դա ի՞նչ է նշանակում,– հարցրեց Յունուսը:

– Յուրահատուկ թռչուն է նշանակում:

Յունուսը հիացած ցնցեց գլուխը:

– Իսկ մյո՞ւսը:

Աղջկա բազկի վերևի գրվածն էր ցույց տալիս՝ *Տոբիկո*:

– Ահ, դա՞: Երկար պատմություն է,– ասաց աղջիկը՝ ուսերը ցնցելով:

– Էսման ասում է՝ երկար պատմություն չկա,– ասաց Յունուսը:–Կան պատմություններ, որ ուզում ենք պատմել, կան պատմություններ, որ չենք ուզում:

– Էսման ո՞վ է: Ընկերուհի՞դ:

Յունուսը կարմրեց:

– Ո՛չ, քույրս է,– ասաց նա:– Մի օր գրող է դառնալու: Վեպեր է գրելու, որտեղ հերոսները չեն սիրահարվում, որովհետև սերը հիմարների համար է:

Աղջիկը բարձր ծիծաղեց: Հետո սկսեց դաջվածքի պատմությունը պատմել: Ասաց, որ մի ժամանակ բազկին Տոբի էր գրված՝ ընկերոջ անունն էր:

Երաժիշտ էր, միշտ հարբում էր, վեճեր սարքում: Բայց դե, աղջիկը սիրում էր նրան: Մի օր ասաց՝ հղի է: Բայց սուտ էր ասում: Ուզում էր հասկանալ՝ նա ով է, որովհետև տղամարդիկ այդ լուրը լսելուն պես իրենց կորցնում են, երկու հակասական կերպով արձագանքում: Կամ ուրախ ընդունում են, կամ հրաժարվում: Անհնար է հասկանալ՝ ով ինչպես կարձագանքի: Ամենաքաղաքավարի տղամարդը կարող է կոպտանալ,

թվայնացրել է 1915.info կայքը

ամենաանպատասխանատուն էլ կարող է հասուն դառնալ:

– Եթե ուզում ես հասկանալ՝ ով է տղամարդը, պետք է հանկարծակի ասես՝ հղի ես: Ինքնության ամենավստահելի թեստը:

– Իսկ Տոբին ի՞նչ արեց,– հարցրեց Յունուսը:

– Այ, էլ մի ասա: Խենթացավ: Իրեն կորցրեց:

Տոբին անմիջապես հարցրել էր՝ իր երեխան է, թե ոչ: Ամեն դեպքում հետաքրքրված չէր: Այդ պահին աղջիկը հասկացել էր՝ այդ մարդն իր համար չէ: Աքացի էր տվել, դուրս հանել: Դաջվածքը մաքրելը հեշտ բան չէ. սպի է մնում: Սպիների հետ խնդիր չուներ. սպիները կյանքի անբաժան մասն էին, բայց չէր պատրաստվում նման անպիտան մեկի հետքը կրել. գնաց դաջվածք անողի մոտ ու Տոբին Տոբիկո դարձրեց:

– Վայ, իսկ ի՞նչ է նշանակում:

– Ճապոնական ուտելիք է,– բացատրեց աղջիկը:– Թռչող ձկան ձվեր:

– Թռչող ձկան ձվեր,– կախարդվածի պես շշնջաց Յունուսը:

Դրանից ավելի անհավանական, ավելի դյութիչ բան չէր լսել: Յոթ տարեկան Յունուսի աչքերի առաջ տասնյակ թռչող ձկներ ջրից դուրս թռան ու սլացան դեպի մայր մտնող արևը: Աղջկան իր սրտում Տոբիկո անվանեց: Յունուսը, որը կրում է կետի ստամոքսից ողջ դուրս եկած մարգարեի անունը, սիրահարվել էր:

Այդ օրվանից հաճախ էր օկուպանտների տանը ապաստան գտնում: Նրանք էլ նրան ընդունեցին, անգամ երբ ոչ մի գործ չէին կարող տալ, թույլ էին տալիս, որ մնա: Տոբիկոյի կողքին էր նստում, նրա բերանից դուրս եկած ամեն բառին ականջ դնում, բայց նրանց թեմաներից ոչինչ չէր հասկանում: *Սխալ մտածելակերպ, արտադրության*

թվայնացրել է 1915.info կայքը

միջոցներ, չքավոր պրոլետարիատ, մշակութային հեգեմոնիա, մետաֆետիշիզմ, փոքր բուրժուազիա... Իմացավ, որ եթե համակարգից դուրս մնաս, կհասկանաս՝ ներսում անհնար է խելքին մոտ փոփոխություն անել: Բայց եթե մարդ դառնա համակարգի մի մասը, նշանակում է՝ հոգին ծախել է: *Ասա տեսնեմ՝ ինչպե՞ս կարող ես մի բանի ներսում լինել, բայց դրսում մնալ*: Յունուսը երկար մտածեց այդ հարցի մասին, բայց ինչքան էլ որ փորձեր, պատասխան չկարողացավ գտնել: Նրան զարմացնող մյուս թեման էլ այն էր, որ օկուպանտները հաճախակի «ալիքներից» էին խոսում:

– Հոգիս ալիքվել է,– ասում էին:– Ֆըշ-ֆըշ:

– Օ՛հ, ինչ լավ եմ: Սենյակը ալիք-ալիք է:

Գիշերները երազում Յունուսը տեսնում էր՝ ինչպես է ճայերով ծածկված երկինքը միավորվում կապկապույտ, ալիքավոր ծովի հետ: Օկուպանտները ծիծաղելով, բղավելով, ջրահարսերի պես ուրախ իրար վրա ջուր էին լցնում: Տոբիկոն էլ էր այնտեղ, նստում էր ափին, սև մազերը քամուց ծածանում, ձեռքով էր անում: Յունուսը քամին զգում էր դեմքին, ընկղմվում էր կապույտի մեջ, դանդաղ ու թեթև լողում էր: Առավոտյան թաց անկողնում էր արթնանում. նորից տակն էր արել:

* * *

Օկուպանտների տանը, սուտի ապուրներից ու աղացած մսով լոբուց բացի, ուրիշ բան չէին պատրաստում: Ընթրիքի փոխարեն՝ թխվածքաբլիթ, շոկոլադ, խնձոր, բանան, նաև սուպերմարկետից գնած, ժամկետանց ալյուրից ուտելիքներ էին պատրաստում:

Եթե Տոբիկոն լավ տրամադրություն էր ունենում, ձեռքի տակ եղածով թխվածք էր պատրաստում: Հազար ու մի բաղադրատոմս էր հնարում. կիտրոնով ու բազուկով

թվայնացրել է 1915.info կայքը

հորինված թխվածք, սուրճով ու նարնջով խառը-մառը թխվածք: Թխած ամեն բանին էլ անպայման լիքը հաշիշ էր ավելացնում:

Քաղաքապետարանը երկար ժամանակ է՝ փորձում էր օկուպանտներին տնից վտարել: Այդպիսով, կարող էին տունը վերանորոգել ու խոշոր գումարով վաճառել: Օկուպանտների ու քաղաքապետարանի աշխատողների միջև ձգվող սառը պատերազմ էր դա: Վերջերս քաղաքապետարանը նրանց էլեկտրականությունն էր անջատել: Արդեն տան բոլոր հարկերում մոմեր ու գազի լամպեր կային, իսկ պատերին՝ սարսափեցնող ստվերներ: Զուգարանը հաճախակի էր խցանվում: Ջուրը քիչ էր: Յունուսը չէր հասկանում՝ ինչու է Տոբիկոն դեռ այդտեղ ապրում: Երանի մեծ լիներ: Եթե մասնագիտություն ու տուն ունենար, Տոբիկոյին անմիջապես կառաջարկեր իր մոտ տեղափոխվել: Բայց Տոբիկոն երևի կուզեր խմբի գլխավոր Կապիտանին էլ բերել: Եվ քանի որ գլխավորը բազմության կարիք ունի, Կապիտանն իր ամբողջ թիմին կհրավիրեր: Այդպիսով, բոլորը Յունուսի տուն կլցվեին, մի քանի շաբաթից այդ տունն էլ օկուպանտների տան նման կլիներ:

Երիտասարդը, որին բոլորը «Կապիտան» էին անվանում, մոխրագույն աչքերով, ծխախոտից դեղնած ատամներով, անհասկանալի գույնի մազերը կարճ կտրած, ձողի պես նիհար, համալսարանի ուսանող էր: Սովորություն ուներ ամեն ինչ առանց մտածելու ասել: Լավ հռետոր էր: Ինչքան խոսում, այնքան ոգևորվում, գերում էր լսողներին: Կապիտանն առաջինն էր, որ Յունուսին ասաց՝ մուզզի[1]: Տղան այդ բառը նախկինում չէր լսել, ու լսելիս էլ դուրը չեկավ:

[1] Մուզզի բառը խոսակցական անգլերենում մուսուլմաններին դիմելու ձև է: Վիրավորական արտահայտություն չէ, բայց կարող է նաև այդ նպատակով օգտագործվել:

թվայնացրել է 1915.info կայքը

– Բանի տեղ մի՛ դիր,– ասաց Տոբիկոն Յունուսին:– Կապիտանը ռասիստ չէ: Ըստ էության՝ հակաֆաշիստը չի կարող ռասիստ լինել, չէ՞:

Հարցից ոչինչ չհասկացած Յունուսն աչքերը կկոցեց:

– Ուզում եմ ասել, որ Կապիտանը սիրում է մարդկանց խմբերի դասել: Այդպես է անում, որ հասկանա՝ ինչը ինչին է պատկանում: Գլուխն այդպես է աշխատում:

– Էսման էլ է բառեր սիրում,– ասաց Յունուսը, չնայած գիտեր, որ անտեղի բան է ասում:

Տոբիկոն գլուխը տարուբերեց:

– Կապիտանը բառեր չի սիրում, բառերի հետ սեր է անում:

Տոբիկոն երևի երեխայի դեմքին խանդ ու հուսահատություն տեսավ, դրա համար մի վայրկյանում նրան բռնեց, մոտեցրեց իրեն ու ճակատը համբուրեց:

– Ա՜հ, երանի տասը տարով մեծ լինեիր:

– Կլինեմ,– ասաց Յունուսը՝ կարմրելով մինչև ականջները:– Տասը տարի անց:

– Մինչ այդ ես կծերանամ: Սալորի չրի նման կնճիռներով կծածկվեմ,– ասաց Տոբիկոն:

– Ես էլ արագ կմեծանամ,– արագ ասաց Յունուսը:

– Վստահ եմ՝ այդպես կլինի,– ասաց Տոբիկոն՝ հանկարծ լրջանալով:– Դեռ հիմիկվանից իմ ճանաչած ամենամեծ երեխան ես:

Հետո նորից համբուրեց նրան, այս անգամ շուրթերը, թեթև ու թաց:

Յունուսին թվաց՝ անձրևի հետ է համբուրվել: Սիրտը թրթռաց:

– Երբեք չփոխվես, լա՞վ,– շշնջաց Տոբիկոն:– Թույլ չտաս, որ ագահ, մատերիալիստ, կապիտալիստ համակարգը քեզ կուլ տա:

թվայնացրել է 1915.info կայքը

– Լա...ավ:

– Խոստացի՛ր: Չէ՛, սպասի՛ր: Քեզ համար թանկ մի բանի վրա երդվի՛ր:

– Ղուրանը կլինի՞,– ամաչելով ասաց Յունուսը:

– Հըմմ, կլինի: Լավ:

Մայրը Յունուսի վզից արծաթե վզնոցով փոքրիկ Ղուրան էր կախում: Յունուսը հանեց այն: Այդպիսով, յոթ տարեկան տղան անմիջապես տեղում, Ղուրանի վրա ձեռքը դնելով, երդվեց, որ մատերիալիստ, կապիտալիստ համակարգին թույլ չի տա իրեն մոտենալ: Միակ խնդիրն այն էր, որ գաղափար չուներ՝ դա ինչ է նշանակում:

թվայնացրել է 1915.info կայքը

Ջեմիլե

12 հոկտեմբերի, 1977
Եփրատի ափին մի գյուղ

Տարիներ կային, որոնց շատ է կարոտում Ջեմիլեն: Երկվորյակ քույրը, հայելու մեջ իր արտացոլանքը, սրտի կեսը, ամենասիրելի մարդը գնացել էր: Փեմբեն արդեն ուրիշ երկնքի տակ էր քնում, երբեմն նամակներ ու կարմիր, երկհարկանի ավտոբուսներով կամ ժամացույցի աշտարակներով փոստային քարտեր էր ուղարկում: Երբ այցելում էր (եթե այցելում էր), հագուստներից ուրիշ հոտ էր գալիս, փափուկ էր լինում:

Ջեմիլեն զարմանում էր, երբ ամեն անգամ քրոջ ճամպրուկները բացելիս օտար բույրեր էին տարածվում շուրջբոլորը: Փեմբեն պանդուխտ էր դարձել՝ մտածելով, որ շուտով վերջնականապես վերադառնալու է, ու ամեն ինչ այնպես է լինելու, ինչպես թողել էր: Բայց ո՛չ վայրերն էին նույնը մնացել, ո՛չ էլ գնացողն էր վերադարձել:

Փեմբեն Անգլիայի կյանքի մասին նամակներ էր ուղարկում քրոջը: Երեխաներն էլ էին երբեմն մի քանի տող գրում: Ամենաշատը՝ Յունուսը: Ջեմիլեն այդ նամակները մահճակալի տակ՝ թեյի թիթեղյա տուփի մեջ էր թաքցնում, թաքուն գանձարանի նման: Կուզեր ավելի հաճախ գրել, բայց պատմելու շատ բան չկար, կամ էլ ինքն էր այդպես կարծում: Լոնդոն ուղարկած նամակներից որոշները տեղ էին հասնում, բայց նույնքանն էլ տեղ չէին հասնում:

թվայնացրել է 1915.info կայքը

Մի ամիս առաջ Զեմիլեն Յունուսին հարցրել էր՝ արդյոք տեսե՞լ է թագուհուն, եթե տեսել է՝ ինչպիսի՞ տեսք ունի: Նա էլ պատասխանել էր.

«Թագուհին Պալատում է ապրում: Պալատն այնքա՜ն մեծ է, որ ներսում կորչում է: Բայց գտնում ու գահին են նստեցնում: Ամեն օր տարբեր հագուստ է հագնում ու ծիծաղելի Գլխարգ դնում: Գլխարգը ու հագուստը պետք է նույնը լինի: Ձեռքերը փաթուկ ու սպիտակ են, որովհետև ձեռնոց է հագնում ու կրեմ քսում: Ամաններ չի լվանում: Դպրոցում եմ նկարը տեսել: Լաֆ կին է երևում»:

Զեմիլեն զարմանում էր՝ ինչպես է, որ Թոփրաք ընտանիքն այդքան երկար ժամանակ կղզում էր ապրում, բայց թագուհուն միայն ամսագրերում ու թերթերում են տեսել: Երբեմն մտածում էր՝ արդյոք քույրը թաղամասից ընդհանրապես դուրս գալի՞ս է, թե՞ ոչ: Եթե միշտ չորս պատի մեջ է ապրում, այդքան հեռու երկիր գնալու իմաստը ո՞րն է: Ինչո՞ւ մարդիկ չէին կարող իրենց ծննդավայրում ապրել ու մահանալ: Զեմիլեի համար մեծ քաղաքները խեղդուկ էին, պողոտաներն ու բազմությունը քարի պես ծանրանում էին սրտին, շունչը կտրվում էր: Սովորաբար նամակների վերջում Փեմբեն նույն հարցն էր տալիս. *«Զայրացա՞ծ ես ինձ վրա: Ներե՞լ ես ինձ»*: Մինչդեռ ինքն էլ գիտեր պատասխանը:

Զեմիլեն ոչ մեկի վրա զայրացած չէր: Ի վերջո, ամեն մարդ իր ճակատագրին է հետևում: Բայց Զեմիլեն հասկանում էր՝ այդ հարցը պետք է ժամանակ առ ժամանակ տրվի՝ պարբերաբար վիրակապվող վերքի նման:

Նրան Աղջիկ Տատմեր էին ասում: Ասում էին՝ Զեմիլեն այս խեղճուկրակ աշխարհի վերջին հարյուր տարում տեսած ամենատաղանդավոր տատմերն է: Անգամ նրա ներկայությունն էր հեշտ ծննդաբերության նշան

թվայնացրել է 1915.info կայքը

համարվում, բավական էր, որ Ազրայիլը հեռու մնա: Հղի կանայք խաղաղվում էին, երբ նա գործի գլուխ էր անցնում: Ամուսիններն էլ գիտունիկի պես գլուխներն օրորելով ասում էին.

– Աղջիկ Տատմերն է այստեղ: Ամեն ինչ լավ կլինի, Աստված տա: Աստծուն ապավինենք,– ասում էին նրանք:

Այդ բառերը լսելիս Ջեմիլեն վախենում էր, անհանգստանում էր, որ չի կարողանա նրանց սպասումներն արդարացնել: Գիտեր, որ իր մասնագիտության տերն է: Բայց վերելքներին անկումներն են հաջորդում: Մի օր կգա՝ ծերությունից, հիվանդությունից կամ պարզապես անբախտությունից չի կարողանա շարունակել աշխատանքը: Ամեն տատմոր պես նա էլ չէր սիրում, երբ իր անունն ու Ալլահի անունը մի նախադասության մեջ են նշում: Ամեն անգամ, երբ լսում էր՝ ինչպես են գյուղացիներն առանց մտածելու խոսում, ինքն իրեն շշնջում էր՝ մեղա՛, մեղա՛: Եթե ոչ մեկ էլ չլսեր, միայն Ալլահը լսեր, հերիք է: Ջեմիլեն հավատացյալ կին էր: Ստիպված էր իր կյանքի միակ աղբյուր ու պահապան Աստծուն պատմել, որ Նրա հետ չի մրցում:

Հասկանում էր՝ իր հաջողությունը մազից է կախված: Ինչքան էլ որ փորձառու ու գիտակ լինես, կարող է այնպիսի ծնունդ լինել, որ ձեռուոտ ընկնես, կյանքիդ փորձը մի րոպեում մոռանաս: Երբեմն, եթե անգամ շատ փորձես, ինչ-որ բան սխալ կգնա, այն էլ ինչպես սխալ: Առանց պատճառի, հենց այնպես: Երբեմն էլ ժամանակին չէր հասնում, գալիս-տեսնում էր՝ մայրն ինքն է ծննդաբերել, անգամ պորտալարն են բութ դանակով կտրել, մազով կապել: Ջեմիլեի համար դրանք Ալլահի նշաններն էին՝ իրեն հիշեցնում էին, որ կյանքն անցողիկ է:

Բայց միևնույն է՝ հեռավոր գյուղերից, ամայի շրջաններին էին գալիս իր հետևից: Անգամ եթե իրենց

թվայնացրել է 1915.info կայքը

տանը մոտ ուրիշ տատմեր լիներ, միևնույն է, Ջեմիլեին էին ուզում: Այդ կողմերում նրան շատ էին սիրում: Իր անունով տասնյակ աղջիկներ կային՝ Ջեմիլե Եթեր:

– Քո անունն ենք դրել, Աստված քո կեսի չափ մաքրամաքուր դարձնի, մեզ հերիք է,– աղոթում էին հայրերը:

Ջեմիլեն հասկանում էր՝ ինչ էին նշանակում այդ խոսքերը, առանց որևէ բան ասելու լսում էր: Իհարկե, հայրերն ուզում էին, որ աղջիկները նամուսով ու բարոյական լինեին, բայց ուզում էին, որ ինքն էլ ժամանակին ամուսնանար, երեխա ունենար: Աղջիկների անունները գուցեև Տատմեր Աղջկա պատվին էին, բայց ուրիշ ճակատագիր էին ուզում նրաց համար:

Ձեռագործ շալն ուսերին, հին լաքաներով լամպը ձեռքին՝ պատուհանին մոտենալով՝ աչքերը կկոցեց ու նայեց մթությանը: Խառնիճաղանջ փշերից ու խորդուբորդ ճանապարհներից հոգնած էր հովիտը. գիշերվա ծածկոցի տակ գալարված՝ մերկ ու չոր քնած էր: Ջեմիլեն այդ բարդ աշխարհը նմանեցնում էր ներսում ոսկե սիրտ թաքցնող խստադեմ մարդու: Պարտավոր չէր այդքան հեռավոր, այդքան խիստ վայրում մենակ ապրել: Ինքն էլ կարող էր գնալ: Եթե ուզեր: Սակայն ուրիշ հողում ամեն ինչ նորից սկսելու համար ո՛չ բավականաչափ հնարավորություն, ո՛չ էլ օգնող մտերիմներ կային: Երեսունմեկ տարեկան էր, տարիքն անցել էր, տանն էր մնացել: Ընտանիք կազմելու համար արդեն ուշ էր: *Չոր արգանդը փուչ սեխի նման է: Դրսից ինչքան էլ որ սիրուն լինի, մեջը փուչ է*,– ասում էին գյուղացիներն իր պես կանանց մասին:

Եթե նույնիսկ այդպես լիներ՝ իրեն առնող մեկը կարող է լիներ՝ կնոջը կորցրած կամ հաշմանդամ մեկին կարող էր բաժին ընկնել: Տարբերակ էր նաև ինչ-որ մեկի երկրորդ կամ երրորդ, կամ չորրորդ կինը դառնալը:

թվայնացրել է 1915.info կայքը

Նման դեպքերում, իհարկե, միայն առաջին կինն էր օրինական կարգավիճակում: Միայն նա կարող էր գնալ հիվանդանոց, դատարան կամ մաքսատուն ու պնդել, որ ամուսնացած կին է ու մայրական իրավունքներ ունի: Բայց այս կողմերում, եթե կինը վարակիչ հիվանդություններից չի մահանում, նեղը չի ընկնում կամ խելքը հացի հետ չի ուտում, նման տեղեր չի էլ գնա: Այդ դեպքում ի՞նչ տարբերություն՝ առաջի՞ն կինն ես, թե՞ չորրորդը:

Տունը, եթե կարելի էր այդ խուցը տուն անվանել, գտնվում էր Մալա Չար Բայան գյուղից դուրս, թառած էր հովտին, ուր ինքն ու յոթ քույրերն էին աշխարհ եկել: Չորից ներքև նայելիս հեռվում, քար կտրած դևերի պես, արևի տակ սուտակի նման փայլող, կլոր-կլոր ժայռեր էին երևում: Այդ ժայռերի մասին տարբեր առասպելներ էին պտտվում, ամեն առասպելին էլ դժբախտ սիրո պատմություն էր հետևում: Քրիստոնյաները, մուսուլմանները, զրադաշտականներն ու եզդիները հարյուրամյակներ շարունակ այդտեղ կողք կողքի են ապրել, սիրել են իրար, կռվել ու հետո կողք կողքի մահացել: Բայց նրանց երեխաները վաղուց էին գնացել հեռու երկրներ: Մի բուռ գյուղացի էին մնացել, մեկ էլ Ջեմիլեն:

Երբ օրերից մի օր կենսալից գյուղը լքեցին, այդ տարածքների վրա տխրություն նստեց: Օդում պտտվող, ամեն գտած ճաքից ներս մտնող տխրության ամպ էր կախվել գլխներին: Գուցե դրանից էր, որ լքված թաղերի բնակիչներն իրենց ապրած տեղերին նմանվեցին՝ տխուր ու փակ: Սակայն դա այն պատկերն է, որ տեսանելի է. երկրագնդի պես՝ մարդկանց ներսն ու դուրսը հազվադեպ է նույնը լինում: Այդ բարակ շերտի տակ գյուղի մարդը սիրառատ է: Հենց վստահում է մարդուն, սիրտը բացում է նրա առաջ: Շերտ-շերտ հագուստների, իրեն փակցրած խիստ բարքերի ներքո ուրիշ Ջեմիլե

թվայնացրել է 1915.info կայքը

կար՝ արծաթաժպիտ, զրնգուն, երիտասարդ, գեղեցիկ ու ուրախ կին էր: Բայց վաղուց արդեն դրսում այդպիսին չէր. փայտ կտրող, դաշտը վարող, ջուր կրող, քսուքներ պատրաստողը ուրիշ մարդ էր: Երբեմն հոգեկան առողջության մասին էր մտածում: Այդքան մենակությունը երևի իր գործն արել էր, սկսել էր կրծել ուղեղը:

Երբ հեռավոր սարերից քամի էր փչում, իր հետ վայրի ծաղիկների, նոր բուսնած խոտի ու բողբոջների բույրերն էր բերում: Բայց երբեմն լինում էր, որ մարդու մաշկի մեջ ներծծվող մսի ծանր հոտ էր բերում: Տարածաշրջանում մաքսանենգներ ու ավազակներ կային՝ քարանձավից քարանձավ, ժայռից ժայռ, ոչ մի տեղ մի օրից ավելի չէին մնում: Անլուսին գիշերներում, մթան մեջ աստղերի պես փայլող ճամբարի կրակներն էր կարողանում տեսնել Ջեմիլեն: Ուտելիքի ու շրջապատի փոփոխությանը զուգահեռ՝ օդում պտտվող բույրերն էլ էին փոխվում:

Գայլեր էլ կային: Ջեմիլեն միշտ լսում էր նրանց ձայնը՝ ցերեկը, իրիկնամուտին, կեսգիշերին: Խռխռացնում էին, սուր ձայնով ու միմյանց հետևելով՝ ոռնում էին: Մեկումեջ լինում էր, որ հասնում էին Ջեմիլեի դռանը, խորամանկ մոտենում էին, մենակության հոտ էին առնում: Հետո լրջանում ու փակում էին բերանները. կարծես նա իրենց համար համեղ չէր. թողնում-գնում էին: Ջեմիլեն չէր վախենում կենդանիներից: Գայլերի հետ թշնամանք չկար: Ինչ վերաբերում է ավազակներին՝ նրանց ավելի շատ արժեքավոր իրերն էին հետաքրքրում: Նրան չէին նեղացնի: Ջեմիլեն հովտից չէր վախենում: Հետո էլ հավատում էր՝ վտանգը միշտ գալիս է ամենանապասելի տեղից:

Մի այրվող ծղոտից նորից բոցավառված կրակը նոր կյանք ստացավ: Ջեմիլեի դեմքը լուսավորվեց, բայց տան մնացած մասը թաղված էր ստվերների մեջ: Կարծում էր՝

թվայնացրել է 1915.info կայքը

գյուղացիներն իրեն չեն սիրում, բայց հարգում են: Իրեն թույլ էին տալիս այնպիսի տեղեր գնալ, ուր ոչ մի ուրիշ կին ոտք չէր կարողանում դնել: Ձի, էշ, ջորի էր նստում, երբեմն սայլով էր գնում: Շատ ժամանակ ծանոթների, երբեմն էլ անծանոթների հետ էր ճամփա ընկնում:

– Թող անմիջապես գա մեր քույրը:

Մի անծանոթ տղամարդ կեսգիշերին կթակեր դուռն ու կաղաչեր.

– Կինս ծննդաբերում է: Լավ չէ վիճակը: Պետք է արագացնենք:

Գուցե ստում էր: Գուցե ուրիշ նպատակներ ուներ: Ջեմիլեն նրա հետ կեսգիշերին ճամփա ընկնելիս գիտեր՝ մարդը կարող էր նրան բռնաբարել, անգամ սպանել: Բայց պետք է վստահեր: Ոչ թե նրան, այլ Նրան:

Բացի դրանից՝ այդ կողմերում չգրված օրենքներ կային, որ խելքը գլխին ոչ ոք չէր համարձակվի խախտել: Տատմերը՝ երեխաներին լույս աշխարհ բերողը, ավելին էր, քան պարզապես կին: Անտեսանելի ու տեսանելի աշխարհների միջև կամրջի պես էր, երկու կողմերում էլ իր տեղն ուներ, կիսով չափ սուրբ, կիսով չափ անիծված մարդ էր:

Մի ծղոտ էլ կերակրեց վառարանի կրակին: Պղնձե ջազվեն տեղադրեց կրակին: Ջուր, շաքար ու սուրճ: Երեքից էլ քիչ էր մնացել: Բայց ընտանիքները նրան միշտ նվերներ էին տալիս՝ հեննա, թխվածքաբլիթ, շաֆրան, կանաչ պիստակ, գետնանուշ, թութուն: Ջեմիլեն գիտեր՝ եթե սկսեր գումար վերցնել իր աշխատանքի դիմաց, մի անգամ կվճարեին, թեման կփակվեր: Բայց երբ մարդկային աշխատանքի դիմաց մանր-մունր բաներ էին տալիս, վճարումը մինչև կյանքի վերջ տևում էր:

Եթե տանն ես մնացել, մի բան էլ՝ ոչ կանացի գործեր ես ձեռնարկել, ուրեմն մեջքիդ անտեսանելի զրահ ես

թվայնացրել է 1915.info կայքը

առել: Մարդիկ քեզնից հեռու են մնալու, գուցե անգամ խղճան քեզ, բայց էլի հարգանքով կմոտենան:

Պետք է և՛ զգուշանալ այն կնոջից, ում ձեռքին տղամարդու ձեռք չի դիպել, և՛ հարգել նրան:

Սուրճը դանդաղ խառնեց: Ասում էին՝ սուրճը սիրո նման է, ինչքան համբերություն ու ուշադրություն դարձնես, այնքան լավ կստացվի: Ջեմիլեն շատ բան չգիտեր այդ մասին: Միայն մի անգամ էր սիրահարվել: Լեզուն այրվել էր, սիրտը՝ կոտրվել. դրանից հետո սիրտը ոչ մեկի առաջ չէր բացել:

Առանց աչքը բարձրացող փրփուրից կտրելու՝ շրջակայքի հեռու ու մոտիկ ձայներին ականջ դրեց: Հովիտը, ուր հոգիներն էին շրջում, կենդանի էր: Բրնձի հատիկից պարզ, աչքին անտեսանելի լինելու չափ փոքր, բայց նույնքան ուժեղ ու վտանգավոր արարածներ կային: Թռչունները պատուհաններին էին զարկում, միջատները, ջրի երեսին թռչկոտելով, շրջում էին դույլերի վրա: Ջեմիլեն հավատում էր՝ ամեն ինչ իր լեզուն ունի: Երկինքը դղրդացնող փոթորիկը, առավոտյան ցողը, շաքարի տարայի վրա շրջող միջատները... Երբեմն մտածում էր՝ հասկանում է նրանց լեզուն: Կամ էլ խելքն էր թռցնում:

Տատմոր մասնագիտությունից ավելի սիրելի ոչինչ չուներ: Դա իր կյանքի իմաստն էր, միակ հարստությունը: Հաստաշերտ ցողը, այրող արևը կամ էլ մետրերով նստած ձյունն անտեսելով՝ գիշեր-ցերեկ ամեն պահի պատրաստ էր, որ դուռը թակելու են: Ոչ ոք չգիտեր, բայց հոգու խորքում նա վաղուց էր ամուսնացել: Իր ճակատագրի հետ էր ամուսնացել Ջեմիլեն: Հասել էր իր մուրազին:

* * *

Դրսում արձագանքեցին գիշերվա ձայները: Ջեմիլեն սուրճը կրակից վերցրեց, կոտրված պոչով կերամիկական

թվայնացրել է 1915.info կայքը

բաժակի մեջ լցրեց: Փոքր կումերով խմեց: Մարմանդ կրակն իրեն նմանեցրեց: Նա էլ ոչ ոքի իրեն մոտ չէր թողնում. թույլ էր տալիս, որ ցանկությունները, երիտասարդությունն այրվեն, մոխիր դառնան:

Հեռվից թռչնի ձայն եկավ՝ բու էր: Ավերակների պահապանը: Նորից ձայն հանեց, այս անգամ ավելի վստահ: Ջեմիլեն աչքերն ամուր փակած՝ խորասուզվել էր մտքերի մեջ: Հիշում էր մանկությունը, որը, չնայած դժվարություններին, երջանիկ մանկություն էր: Իհարկե, երբեմն իրենց մենակ էին զգում. ութ երեխա ունեցող ընտանիքում մարդ կարող էր իրեն զարմանալիորեն մենակ զգալ: Այդ ժամանակ զույգ քույրերից մեկը մայր էր դառնում, մյուսը՝ երեխա: Չնայած երեք որպեով մեծ էր, բայց Փեմբեն միշտ ուզում էր երեխա լինել: Իսկ Ջեմիլեն մոր դերն էր տանում: Փորձում էր նրան հանգստացնել, պաշտպանել: Իր երեխային օրորոցային էր երգում, կատակով կաթ էր խմեցնում: Այժմ, երբ հիշում էր այդ խաղերը, զարմանում էր Ջեմիլեն՝ որքան լուրջ էին:

Հիշեց՝ ինչպես էր հայրը՝ Բերզոն, մի անգամ իրենց տարել մի գյուղաքաղաք, ու այնտեղ տեսել էին Ցանկությունների աղբյուրը: Կանայք, որոնք երեխա չէին ունենում, հարսների լեզուն կտրել ցանկացող սկեսուրները, հարուստ ամուսին գտնելու երազանքներ ունեցող կույսերն էին գնում այնտեղ, մանրադրամ էին նետում ջրի մեջ: Երբ շուրջը ոչ ոք չէր եղել, Փեմբեն փեշերը բարձրացրել, մտել էր ավազանն ու փողերը հավաքել: Հետո բոլորը միասին ոգևորված բացականչելով վազել էին մոտակայքի կրպակ, շոկոլադ ու շաքարաքլորներ էին գնել:

Ջեմիլեին այդ արկածը դուր էր եկել, բայց իրեն մեղավոր էր զգում: Գողություն էր իրենց արածը: Մարդկանց

թվայնացրել է 1915.info կայքը

ցանկությունները գողանալը նրանց դրամապանակները գողանալուց էլ վատ էր:

– Մի՛ մտածիր,– ասել էր Փեմբեն, երբ Ջեմիլեն կիսվել էր իր մտածմունքներով:– Նրանք արդեն փողերը ծախսել էին, դե, մենք էլ հավաքեցինք. ի՞նչ կա որ:

– Այո՛, բայց այդ դրամների հետ իրենց աղոթքներն էին կապել: Եթե մեկը քո ցանկությունը գողանա, չե՞ս նեղանա: Ես կնեղանամ, վալլահի:

Փեմբեն ժպտացել էր:

– Դե, տեսնենք՝ ինչ ցանկություն ունես:

Ջեմիլեն ապշել էր՝ հասկանալով, որ նեղն է ընկել: Ուզում էր մի օր ամուսնանալ՝ հարսի զգեստ ու քաղաքի հարսանիքների սպիտակ կրեմով տորթից էր ուզում, բայց դա այդքան էլ կարևոր չէր: Երեխա էր ուզում ունենալ, բայց իսկապես այդպիսի ցանկությո՞ւն ուներ, թե՞ բոլորը դա էին անում, դրա համար: Մեկ էլ՝ եթե մի գյուղական տուն ու հող լիներ, շատ լավ կլիներ, բայց դա ոչ այնքան ցանկություն էր, որքան սիրելի գործ: Մտածելիս Ջեմիլեն ուրախացավ, որ ցանկությունների աղբյուր ոչ թե որպես խնդրող, այլ որպես գող է եկել. եթե մեկը ցանկություն պահելու համար իրեն դրամ տար, միտքը ոչինչ չէր գա:

Տեսնելով, որ վարանում է՝ Փեմբեն դեմքը ծամածռեց:

– Ես նավաստի եմ դառնալու ու աշխարհով ման գամ: Ամեն օր մի նոր նավահանգստում եմ արթնանալու:

Ջեմիլեի սիրտը կծկվեց. երբեք իրեն այդքան մենակ չէր զգացել: Չնայած որ իրար նման էին, կենսական մեծ տարբերություն կար նրանց միջև՝ երազելը: Փեմբեին հետաքրքիր էր Եփրատ գետից այն կողմ ընկած աշխարհը: Նրան չէր հետաքրքրում՝ ով ինչ է մտածում իր մասին. միայն իր սրտին էր հետևելու: Ջեմիլեի սիրտը

թվայնացրել է 1915.info կայքը

վախ ընկավ, որ մի օր իր ու երկվորյակ քրոջ ճանապարհները կբաժանվեն:

Հայրը՝ Բերզոն, ասում էր, որ երկվորյակ լինելը և՛ հաջողություն էր, և՛ անեծք: Հաջողություն էր, որովհետև միշտ կարող էին իրար վրա հույս դնել: Բայց միաժամանակ անեծք էր, որովհետև եթե նրանցից մեկին դժբախտություն պատահեր, միասին էին տառապելու, տխրությունը շերտ-շերտ բացվելու էր:

«Եթե այդպես լիներ,– մտածում էր Ջեմիլեն,– արդյոք ի՞նչն ավելի շատ կտխրեցներ մեզ՝ Փեմբեի ցանկությունները՞ը, թե՞ իմ ցանկությունների բացակայությունը»:

Երեքշաբթի էր: Երեկվա պես հիշում եմ: Մինչ այդ օրը կյանքումս երբեք չէի կակազել: Նոյեմբերի 14, 1978 թվական: Այդ օրը որոշեցի դանակ ձեռք բերել: Մեր երեխեքի հետ ճաշարանում էինք: Կապույտ պլաստմասսայե սկուտեղներ, տաք պյուրեով ու մսով ճաշ, մուրաբայով քաղցրավենիք, ջրի մեկուսաղյա տարաներ, ամենօրյա շատախոսություն: Կատակներ անելով մարդկանց հետ «high five» անելիս հանկարծ սկսեցի կակազել: Այնքան հանկարծակի էր, որ բոլորը կարծեցին՝ կատակում եմ: Հաջորդ օրվա ֆուտբոլային խաղն էինք քննարկում: «Զելսի»-«Դինամո» (Մոսկվա): Ընկերական խաղ էր, բայց արժեր նայել: Արշադը մի օր «Նոթինգհեմ Ֆորեսթի» պաշտպանությունում խաղալու մասին երազող, կարճահասակ, գիրուկ պակիստանցի էր, ասում էր՝ նոր «Դոք Մարթենսի» բոթասների վրա գրազ գանք՝ մերոնք «խզարելու» են, բայց ուշադրություն չդարձրինք: Արդեն սովորել էինք նրա դատարկ խոսակցություններին: Արշադը

թվայնացրել է 1915.info կայքը

Ամբողջ դասի ընթացքում սարսափում էի, թե ուսուցիչը հարց կտա: Ահա այդ ժամանակ չէի ազատվի ծաղրից: Լավ է, որ հարց չտվեց: Հենց դասը վերջացավ, պայուսակս առա ու դեպի դուռը գնացի: Որոշել էի դասերը բաց թողնել, առաջին անգամ շուտ գնալ տուն:

* * *

Երբ տուն հասա ու զանգը տվեցի, երեք անց կես էր: Մինչ սպասում էի՝ դուռը բացեն, զանգի վրայի անվանը նայեցի.

Ադեմ Թոփրաք

Քույրս՝ Էման էր գրել իր գեղեցիկ ձեռագրով: Չէր ուզում, բայց գրել էր: «Մենք էլ ենք այստեղ ապրում, չէ՞,– փնթփնթացել էր նա:– Ինչո՞ւ ենք միայն հորս անունը գրում»:

Էման փոքր-մոքր աղջիկ էր, բայց միշտ մեծ-մեծ խոսում էր ազատության, հավասար հնարավորությունների, սոցիալական արդարության, կանանց իրավունքների մասին... Ընկերներս կարծում էին՝ կամ խենթ, է կամ էլ թաքնված կոմունիստ: Եթե Էմային մնար, այսպես կգրեր.

Թոփրաք ընտանիք

Կամ էլ՝

Ադեմ, Փեմբե, Իսքենդեր, Էմա,
Յունուս ու Ոսկե ձկնիկ

Իսկ ինձ համար մեկ էր: Եթե ինձ հարցնեին, անվան տեղը դատարկ կթողնեի: Այդպես ավելի ճիշտ կլիներ: Կնշանակեր՝ այստեղ ոչ ոք չի ապրում: Մենք այդ բնակարանում չէինք ապրում, մեզ համար դա ժամանակավոր կացարան էր: Տուն ասվածը նման էր միաստղանի հյուրանոցի. աշխատողների փոխարեն սպիտակեղենը

թվայնացրել է 1915.info կայքը

նեղացավ, որ իրեն լուրջ չեն ընդունում: Փայլող աչքերով նայեց ինձ ու իմ առաջ դրված սկուտեղը ցույց տվեց.

– Հեյ, Ալեքս, էդ քաղցրավենիքը դե՛սը տուր:

Գլուխս օրորեցի:

– Կ... կյան... քում... Խնդ... տի՛ր... կ...կ... տամ:

Ապշած նայեց դեմքիս: Մյուսներն էլ էին նայում: Կարծես կյանքում առաջին անգամ էին տեսնում ինձ: Հեկտո բարձր դասարանցիներից մեկի մասին խոսեցին: Այնքան վատ էր կակազում խեղճը, որ ոչ ոք հեկտը չէր խոսում: Կարծեցին՝ նրան եմ նմանակում, ծիծաղեցին: Ես էլ ծիծաղեցի, բայց հոգուս խորքում խուճապն ուժգնանում էր: Սկուտեղը Արշադի կողմը հրելով՝ գլխով նշան տվեցի՝ կարող է ուտել: Ախորժակս փակվել էր:

Ընդմիջումից հետո, երբ դասասենյակ վերադարձա, անտրամադիր էի: Ինչպե՞ս էի հանկարծ սկսել կակազել: Մեր ընտանիքում կակազող չկար: Նման բաները չպե՞տք է ժառանգական լինեին: Երևի ժամանակավոր խնդիր էր: Լեզուս որոշ ժամանակով փաթ էր ընկել: Գուցե արագ անցներ: Ուզում էի համոզվել: Ժամացույցը գրպանս գցեցի ու ժամը հարցնելու պատրվակով անկյունում կանգնած աղջիկներին մոտեցա: Բայց երբ փորձեցի խոսել, բերանիցս միայն խռխռոց դուրս եկավ: Աղջիկները ծիծաղեցին: Հիմարնե՛ր: Երևի մտածեցին՝ նրանցից մեկին եմ սիրահարվել: Հետո դարձա, դեմքս՝ կաս-կարմիր: Զգում էի՝ Քեյթն ինձնից աչքը չի կտրում: Հենց պատմության դասը սկսվեց, ինձ թղթի վրա մի բան գրեց. «Մեգգի, Քրիսթին, Հիլարի: Եթե տղա լինի՝ Թոմ»:

Թուղթը ճմռթեցի ու գրպանս դրեցի: Նույն պահին մեկն էլ ուղարկեց. «Ի՞նչ է եղել քեզ»:

Ուսերս թոթվեցի՝ բան էլ չէ: Գուցե հասկացել էր, բայց կարծես թե չէր համոզվել: Ես էլ նրան նամակ գրեցի. «Հեկտո կպատմեմ: Մի՛ երկարացրու»:

թվայնացրել է 1915.info կայքը

մայրս էր լվանում, և նախաճաշը ամեն օր նույնն էր՝ սպիտակ պանիր, սև ձիթապտուղ, ապակե բաժակնե-րով թեյ:

Արշադն ապագայում մի օր կարող էր առաջին լիգա-յում խաղալ: Կարող էր գրպանները դրամով, մեքենան պիսպակներով լցնել ու մեր նմաններին ցանկացած պահի արհամարհել: Եթե օպար ես, օպար էլ կմնաս, այլ ելք չկար: Մտածել, որ անգլիացիները կարող են մեզ իրենցից մեկը համարել, քամուն հակառակ միզե-լու պես մի բան էր: Ոմանք սիրուց, խաղաղությու-նից, եղբայրությունից էին սիրում խոսել: Բայց հեպո կյանքի, այդ սիրո, խաղաղության ու եղբայրության վրա խաչ էին քաշում: Արշադն այդ բաներից չէր հաս-կանում, բայց ես հասկանում էի: Հասկացել էի՝ Լոնդոնի սխալ ափին բնակվող, կիսով չափ թուրք, կիսով չափ քուրդ Թոփրաք ընտանիքն այս քաղաքում հիմնավոր չէր հաստատվել:

Նորից զանգը տվեցի: Ձայն չէր գալիս: Ո՞ր գրողի ծոցում էր մայրս: Չէր կարող վարսավիրանոց գնացած լինել: Մի քանի օր առաջ էր դուրս եկել աշխատանքից: Հոս գնալուց ի վեր այս ընտանիքի գլխավորը ես եմ ու դեմ էի, որ մայրս աշխատեր:

Լաց եղավ, բայց բան չասաց: Գիտեր՝ պատճառներ ունեի: Բոլորը բամբասում էին: Անգամ նրանք, ովքեր չէին հավատում, ասում էին՝ անկրակ ծուխ չի լինում: Ես էլ մոտս ասացի, որ տանը նստի:

Դպրոցում ոչ ոք այդ մասին չգիտեր: Պետք էլ չէր, որ իմանային: Դպրոցը դպրոց էր, տունը՝ տուն: Քեյթն էլ ոչինչ չգիտեր: Սիրածը սիրած էր, ընտանիքը՝ ընտանիք: Պետք չէր ամեն ինչ խառնել: Ջրի ու յուղի նման:

Մտածեցի՝ երևի մայրս խանութ է գնացել: Բանալիս հանեցի, մտցրի կողպեքի մեջ, որ բացեմ, բայց չբացվեց:

թվայնացրել է 1915.info կայքը

Դուռը ներսից կողպած էր: Հանկարծ միջանցքից ոտնաձայներ լսեցի:

– Ո՞վ է:

– Ե... ե...ս... եմ, մա...մ:

– Իսքենդե՛ր, դո՞ւ ես:

Ձայնի մեջ խուճապ էր լսվում: Արագ-արագ փսփսոց լսեցի: Մորս ձայնը չէր: Սիրտս սկսեց արագ զարկել, զգացի՝ շունչս կտրվում է: Ո՛չ կարողանում էի առաջ գնալ, ո՛չ հետ: Հիմարի պես կանգնած՝ բանալու հետ էի խաղում: Մի րոպե, գուցե ավելի կարճ տևեց այդ պահը, հետո դուռը բացվեց:

Մայրս, դռան մոտ կանգնած, կարծես հետևում մի բան էր թաքցնում: Շուրթերը ձգվել էին, կարծես թե ուզում էր ժպտալ, բայց կանաչ աչքերում տարօրինակ փայլ կար: Նկատեցի՝ մազերի հյուսքը քանդվել է, բլուզի վերևի կոճակն էլ սխալ էր կոճկել:

– Իսքենդե՛ր, տղա՛ս,– ասաց նա:– Շուտ ես եկել:

Չպատասխանեցի:

– Լա՞վ ես,– ասաց մայրս:– Գունատ ես, սուլթա՛ն:

– Ինձ այդպես մի՛ դիմիր,– ուզում էի բղավել ես:– Ինձ էլ ոչինչ չասես:

Դրա փոխարեն լռեցի, կոշիկներս հանեցի ու ներս մտա. անցնելիս քիչ էր մնում հրեի նրան:

Միանգամից սենյակ գնացի ու դուռը հետևիցս զարկեցի, դռան հետևում աթոռ դրեցի, որ ոչ մեկ չմտնի: Ընկա անկողնու վրա ու վերմակը գլխիս քաշեցի. կենտրոնացա շնչառության վրա, ինչպես բռնցքամարտի դասերին էին սովորեցնում: Շնչի՛ր: Շնչի՛ր: Շնչի՛ր: Արտաշնչի՛ր...

Դրսից ինչ-որ ձայներ էին գալիս. հատակի ճռճռոց, քամու ֆսսոց ու կաթկթող անձրև: Այդ խառնաշփոթի մեջ լսեցի՝ ինչպես բացվեց փողոցի դուռն, ու ինչպես ինչ-որ մեկը առնետի պես անձայն դուրս եկավ:

թվայնացրել է 1915.info կայքը

Մայրս առաջ ինչքան էր սիրում ինձ՝ իր առաջին երեխային, առաջին կողային, roniya çavê min[1]: Այժմ ամեն ինչ փոխվել էր, փչացել: Աչքերս լցվեցին: Ինձ ապրակեցի, որ չարտասվեմ: Հօգնեց: Նորից ապրակեցի, ավելի ուժեղ:

Միջանցքի ոտնաձայներին ականջ դրեցի՝ սրտի զարկերի պես թեթև ու կանոնավոր: Մայրս կանգնեց դռան առաջ, բայց չհամարձակվեց թակել: Զգում էի նրա շարժումները, հպվում էի մեղավորությանը, նրա ամոթի հոտն էի առնում:

Ասկված գիտի՝ որքան ժամանակ փորձեցինք լսել միմյանց շնչառությունն ու միմյանց մտքերը:

Հեստո գնաց. խոսելու բան չուներ, պարտավոր չէր ինձ բացատրություն տալ, կարծես թե իմ կարծիքն ու զայրույթը կարևոր չէին: Հենց այդ ժամանակ հասկացա՝ Թարըք հորեղբորս՝ մորս մասին ասած սարսափելի խոսքերը ճիշտ էին: Այդ պահին մտածեցի դանակ գնելու մասին: Փայտե պոչով, կոճակով բացվող դանակներից: Իհարկե արգելված է: Ոչ ոք չէր ուզի ինձ նման մեկին դանակ վաճառել ու անդարդ գլուխը դարդի տակ դնել: Բայց ես գիտեմ՝ որտեղից գտնեմ ուզածս: Գիտեմ այդ գործի մարդուն:

Ոչ ոքի չէի ուզում վնասել: Միայն վախեցնելու էի կամ մորս, կամ էլ այդ հիմարին, որին հանդիպում էր:

Իսքենդեր Թոփրաք
Շրուսբերիի բանտ, 1990

---

[1] Քրդերեն՝ աչքերիս լույսը:

թվայնացրել է 1915.info կայքը

Ադեմ

1954, Սպամբուկ

Ադեմը դժբախտ մարդ էր: Գուցե դա էր պատճառը, որ Փեմբեն զայրանում էր նրա վրա. նրա հետ մի քիչ շփվելիս ակնհայտ էր դառնում տխրությունը: Հաճախ էր մանկությունից խոսում, նույն հուշերն անընդհատ կրկնում, պատմում էր: Նրա համար անցյալը նման էր ընդեղենի. չնայած գիտենք՝ վնասակար է, բայց չենք կարողանում դադարել ուտելուց: Հանկարծակի, գուցե առանց նկատելու սկսում էր նորից անցյալից խոսել:

Փեմբեն երբեք հետ չէր նայում: Հավատում էր՝ կամ ժամանակը, կամ էլ աղոթքներն ամեն ինչ իր տեղն էին գցելու. առանց հանձնվելու, առանց հուսահատության, ամբողջ ուժով կառչում էր կյանքից: Վստահ էր՝ ամեն պատահած բան իմաստ ուներ: Ապագան նրա համար խոստումների աշխարհ էր: Չնայած դեռ չէր տեսել՝ վստահ էր՝ փայլուն ու գեղեցիկ էր լինելու: Վաղը հավերժական հնարավորությունների աշխարհ էր: Փեմբեի՝ ապագային այդքան նվիրվածությունը կարելի էր միայն մի բառով բացատրել՝ հավատ, առանց տեսնելու հավատալու կարողություն:

Իսկ Ադեմի համար անցյալը տաճար էր: Վստահելի, ամուր, անփոփոխ ու ամենակարևորը՝ մնայուն: Ամեն ինչի էությունը սկիզբն էր: Այդպես նրան ամեն ինչ կայուն ու մնայուն էր թվում: Նորից ու նորից երեկը

թվայնացրել է 1915.info կայքը

այցելելու պատճառը, կարիքից զատ, պարտականության զգացումն էր, մեծ կամքի առաջ գլուխ խոնարհելու պես մի բան: Ի տարբերություն կնոջ՝ ապագայի հանդեպ հավատի, Ադեմն անցյալին էր դավանում:

Նրանց միջև եղած ամենամեծ տարբերությունն էր դա ու մինչև վերջ էլ այդպես մնաց:

* * *

Ի տարբերություն ընկերների՝ փոքր ժամանակ երկու հայր ուներ Ադեմ Թոփրաքը՝ Սթափ հայր ու Հարբած հայր: Նույն մարմնի մեջ ապրող այդ երկու մարդիկ միմյանցից սար ու ձորի պես տարբեր էին: Տարբերությունն այնքան ակնհայտ էր, որ Ադեմը կասկածում էր՝ հայրը երեկոյան ոչ թե ալկոհոլ, այլ թունավոր հեղուկ է խմում: Գուցե այդ հեղուկը գորտին արքայազն կամ էլ վիշապին վհուկ էր դարձնում, բայց իր սիրելի մարդուն օտարական էր դարձնում:

Փոքրամարմին, շատախոս Հայրը (Սթափը) սիրում էր երեք որդիների (Թարըք, Հալիլ ու Ադեմ) հետ ժամանակ անցկացնել. ամեն անգամ նրանցից մեկին իր հետ տեղ էր տանում՝ նայած թե ով էր հաղթում սիրո ու ուշադրության լոտոյում: Օրվա հաջողակը հոր հետ Իսթիքլալ պողոտայում զբոսնելու էր գնում, երբեմն նրա աշխատավայր էին գնում. Թաքսիմի մոտ մի տեղ ավտոմեխանիկ էր աշխատում հայրը:

Բարդ անուններով մեծ մեքենաներ կային այնտեղ. «Շևրոլե Բել Էյր», «Բյուիք Ռոդմասթեր», «Կադիլակ Ֆլիթվուդ» կամ էլ նոր «Մերսեդես Բենց»: Կաշվե նստարաններ, չժանգոտող պողպատից անվահեծեր ու պսպղացող գույներ: Այդ մոդելներից ոչ մեկից չէր կարող ձեռք բերել. դրանց տերերը հիմնականում քաղաքագետներ էին, բիզնեսմեններ, խաղատների տերեր կամ

թվայնացրել է 1915.info կայքը

ֆուտբոլիստներ: Պատերին վարպետների ու հայտնի հաճախորդների՝ նրանց մեքենաների հետ նկարներն էին կախված: Որոշ մեքենաներ վարորդներն էին բերում, ու նրանց իրական տերերը երբեք չէին գալիս, դրա համար նկարների մարդկանցից ոմանք վարորդներն էին. թեկուզ մի պահ շեֆ լինելու հաճույքից ժպտում էին տեսախցիկին:

Ադեմը երբեմն հոր հետ գնում էր թաղամասի սրճարան. երեկոյան սալեփ[1], լորենու կամ սև թեյ խմելով՝ նայում էր՝ ինչպես էին տարբեր տարիքի տղամարդիկ նարդի կամ շաշկի խաղում: Քաղաքականությունը ամենատարածված թեմաներից էր: Քաղաքականությունը, ֆուտբոլն ու երրորդ էջի նորությունները: Ընտրությունները մոտենում էին, ու սրճարանը տաք քննարկումների վայր էր դառնում: Վարչապետ Մենդերեսը պնդում էր, որ դեմոկրատական կուսակցությունը ընտրություններում գերակշռող ձայներ է հավաքելու: Այդ օրերին ոչ ոք չէր կարող ենթադրել՝ երկու անգամ է ընտրվելու և, ի վերջո, հեղաշրջման մասնակիցների կողմից կախաղան բարձրացվելու:

Այդպիսի սովորական կեսօրից հետո Ադեմը հորն էր (Սթափ) կրկնօրինակում՝ շաքարի կտորը բերանը գցելով՝ ծպպացնում, թեյի բաժակը բռնելիս ճկույթը օդ էր բարձրացնում: Այնքան էին ծխում, որ տուն վերադառնալիս մազերից մոխրամանի հոտ էր գալիս: Մայրը՝ Այշեն, Ադեմին անմիջապես բաղնիք էր տանում: Բայց նա չէր ուզում: Երբ մազերից ծխախոտի հոտ էր գալիս, իրեն մեծ էր զգում: Տղամարդու նման: Երբ մի օր հորն ասաց այդ մասին, նա ծիծաղելով պատասխանեց.

---

[1] Խոլորձի պալարներից պատրաստվող փոշի, որից տաք ըմպելիք են պատրաստում:

թվայնացրել է 1915.info կայքը

– Տղա երեխային տղամարդ դարձնող երկու բան կա աշխարհում, մի՛ մոռացիր: Առաջինը կնոջ սերն է: Երկրորդը՝ ուրիշ տղամարդու ատելությունը:

Հայրը (Սթափ) ասում էր, որ միայն առաջինն իմացողները փափուկ, հնազանդ են լինում, միայն երկրորդն իմացողները կոփվում, քար են դառնում, իսկ տղամարդ դառնալու համար պետք է երկուսն էլ իմանաս: Հետո հարցնում էր.

– Գիտե՞ս՝ թուրն ինչպես են սարքում:

Մինչ Ադեմը պատասխան էր փնտրում, հայրը շարունակում էր.

– Ողպատի վրա ջուր են լցնում, իհարկե:

Թրերին ուշադիր նայելիս վրայի գույների խաղը երևում է: Ապշեցուցիչ է՝ ինչպես է ջուրն այդքան պինդ ու ամուր նյութի վրա հետք թողնում: Բայց տաղանդավոր վարպետները գիտեն՝ մետաղը պնդացնելու համար պետք է նախ կրակի վրա տաքացնել, հետո ջրի մեջ մտցնել:

– Տղամարդիկ էլ են այդպես: Պետք է նրանց սիրով տաքացնել, ատելությամբ ամրացնել,– ասում էր հայրը:

Ադեմը մտահոգ էր՝ նման ուժգին զգացողություն երբեք չէր ունեցել, բայց մտահոգություններով ոչ մեկի հետ չէր կիսվում: Նույն տարում առաջին անգամ ասթմայով էր հիվանդացել. մինչև կյանքի վերջ էլ չէր ազատվելու այդ հիվանդությունից:

Երբեմն Հայրը (Սթափ) մոտակայքի սպանդանոցից մնացորդներ էր բերում՝ մսի կտորներ, ոսկորներ ու փորոտիք: Այդպիսի դեպքերում շեֆի բեռնատարն էր վերցնում, ընտանիքին պիկնիկի էր տանում: Ադեմն ու երկու եղբայրները հետևում էին նստում, միմյանց հետ գռազ գալիս՝ ով քանի երշիկ կամ կոտլետ կուտի: Կնոջ հետ դիմացը նստած Հայրը կատակներ էր անում,

թվայնացրել է 1915.info կայքը

հատկապես երբ լավ տրամադրություն էր ունենում, ապակին կիսով չափ բացում, ուրախ երգեր էր երգում: Բոլոր երգերը տխուր էին, բայց այնքան ուրախ էր երգում, որ ոչ ոք չէր նկատում: Նեղուցի դիմացի կողմով ընթանալիս մեքենան լի էր ամաններով, բաժակներով ու ծածկոցներով, իսկ սրտները՝ թեթև ու ուրախ: Տխուր էին, որ պիկնիկի մոտակայքում գերեզմանատուն կար, բայց ինչ արած:

Վաղուց քաղաքների քաղաք Ստամբուլի ամենագեղեցիկ տեսարանով ու կանաչ վայրերում մեռյալներն էին ննջում:

Երբ հասան, երեխաները վազելով գնացին ստվերոտ տեղ փնտրելու: Նստելուց առաջ մայրը մահացածների հոգու հանգստության համար աղոթեց, նրանցից թույլտվություն խնդրեց՝ իրենց տարածքում հյուրընկալվելու: Հանգուցյալներն ամեն անգամ դրական էին պատասխանում: Այշեն մի քանի վայրկյան սպասելուց հետո գլուխը շնորհակալական օրորում էր ու բոլորին գորգիկներ էր տալիս, որ նստեն: Հետո կրակ էին վառում, սկսում էին ուտելիք պատրաստել: Այդ ընթացքում տղաները շուրջը ցատկոտում էին, բլուրներից ցած էին վազում, մրջյունների բներն էին քանդում, մորեխների հետևից էին վազում, բռնոցի էին խաղում: Խորոված մսի հոտը տարածվում էր, հայրը ծափ տալով նրանց կանչում էր ու իր համար ռաքլի առաջին բաժակն էր լցնում:

Երբեմն դանդաղ էր խմում, հետո արագացնում էր տեմպերը: Իսկ երբեմն էլ հենց սկզբից արագ էր խմում, կրկնակի չափ խմելու փոխարեն միանգամից երեք բաժակ էր կոնծում: Բայց ինչ էլ լիներ՝ ամեն պիկնիկից հետո հարբում էր:

Հենց շշի տակը տեսնում էր, ակնհայտ նշաններ էր սկսում ցույց տալ: Հոնքերը կիտում էր, սկսում էր

թվայնացրել է 1915.info կայքը

հայհոյել. երեխաներին երկու րոպեն մեկ այնպիսի անիմաստ բաների համար էր կշտամբում, որ ոչ ոք պատճառները չէր հիշում: Ամեն ինչից նյարդայնանում էր. ուտելիքը աղի էր, հացը՝ հին, սառույցը բավականաչափ սառը չէր: Նյարդերը հանգստացնելու համար երկրորդ շիշն էր բացում: Երբ արևը սկսում էր մայր մտնել, ճայերը սկսում էին բղավել գլխավերևում: Ժամանակը դանդաղում էր, անիսոնի ուժեղ հոտ էր գալիս, կախվում էր օդում: Հայրը խմիչքին ջուր էր ավելացնում. թափանցիկ հեղուկը, մտքերի պես պղտորվելով, մոխրագույն էր դառնում: Որոշ ժամանակ անց մի կերպ ոտքի էր կանգնում, չար հայացքով ու լկտի տոնով դեպի գերեզմանատունը նայելով՝ բաժակը բարձրացնում:

– Տո՛, ա՛յ մեռածներ, դուք եք, է, բախտավորը,– օրորվելով ասում էր Հայրը:– Ո՛չ տան վարձ ունեք, ո՛չ լցնելու բենզին, ո՛չ ընտանիք, որ պահեք: Գլուխ արդուկող կին էլ չկա: Կշտամբող շեֆ էլ չունեք: Վայ, մենակ իմանաք՝ ինչ բախտավոր եք:

Գերեզմանները լսում էին, մեղմ քամին չորացած տերևներն աջ ու ձախ էր ցրում: Վերադարձի ճանապարհին Հայրը պնդում էր, որ տղաները դիմացը նստեն՝ իրենց հետ: Երեխաները որքան էլ որ ուշադիր լինեին՝ չխոսեին, փորձեին շունչը պահել, մի բան սխալ էր գնում, անպայման մի բան Հորը հունից հանում էր: Ճանապարհի փոսերը, մի ցուցատախտակ, մեքենայի առաջն ընկած փողոցի շուն, վերջին պահին միացած լուսակրի կարմիր լույս, ռադիոյի լուրերը: Խրուշչով կոչեցյալը չգիտեր՝ ինչ էր անում, վոդկայից ուղեղը փափկել է: Անկապ խմիչք է վոդկան, ռաքըի կողքին՝ ոչ մի բան: Նասըրը արաբներից շատ բան էր սպասում. նույն լեզվով են խոսում, բայց իրար չեն հասկանում: Իրանի շահը ինչո՞ւ չի բաժանվում

թվայնացրել է 1915.info կայքը

երկրորդ կնոջից, որն ակնհայտորեն նրան թագաժառանգ չի կարողանալու պարգևել:

– Տե՛ս, տե՛ս: Ինչ է դառել աշխարհը: Ամեն ինչ իրար է խառնվել:

Հայրը (Հարբած) աղբ հավաքողներին, քաղաքապետին, պատգամավորներին, հին, նոր, աջ, ձախ, բոլոր քաղաքագետներին հայհոյում էր: Հետո մի քանի րոպե շարունակ զայրույթն ուղղում էր դրսի աշխարհին, ընտանիքին բան չէր ասում: Մեքենայում մեկն անպայման իրեն զայրացնող բան էր անում:

Երեխաներից մեկը շարժվում էր, զկռտում, գազ հանում կամ քրքջում կամ որ ավելի վատ էր, կինը՝ Այշեն, փորձում էր խնդրել, որ դանդաղ քշի: Միայն մի կայծը բավական էր:

– Ի՞նչ է կատարվում ձեզ հետ, է՛յ,– ասում էր Հայրը:– Չե՞մ կարող մի քիչ հանգստանալ: Հը՞: Ուզում եք, որ պայթե՞մ: Դա՞ է ձեր ուզածը, հա՞:

Ոչ ոք չէր պատասխանում: Տղաները նայում էին ձեռքներին, նիհար ծնկներին կամ բաց պատուհանից ներս մտած, հիմա էլ դուրս գալու փորձեր անող սև ճանճին:

Հայրը ձայնը բարձրացնում էր:

– Է՛յ, դուք, ամբողջ օրն աշխատում եմ: Ամեն Աստծու օր: Էշի պես: Ինչի՞ համար: Ձեզ կերակրելու համար: Ես էս ընտանիքի է՞շն եմ:

Եթե մեկն ասեր՝ ո՛չ, իհարկե ոչ, մեկ է ուշադրություն չէր դարձնի:

– Դուք վամպիր եք, արյունս եք ծծում:

Ձեռքերը ղեկից բարձրացնելով՝ դեպի նրանց ուղղելով՝ ցույց էր տալիս գունատ ձեռքերը:

– Էլ արյուն չի մնացել երակներումս, որ ձեզ տամ:

– Խնդրում եմ, ղեկը բռնի՛ր,– շշնջում էր կինը:

թվայնացրել է 1915.info կայքը

Դրանից ավելի էր զայրանում Հայրը:

– Փակի՛ր գրողի տարած բերանդ, կի՛ն: Դու էիր մնացել պակաս՝ ինձ ասես՝ ինչպես վարեմ:

Ադեմը տխրում էր հոր համար: Մեղքի զգացումից տանջվում էր:

– Էլի մի բան արեցինք,– մտածում էր նա:– Այդքան էլ զգուշացրեց խեղճ մարդը, բայց նորից զայրացրինք:

Ինչքան էր ուզում հորը սիրաշահել, ձեռքը համբուրել, խոստանալ՝ էլ «արյունը չեն ծծի»:

– Ես քեզ ասո՞ւմ եմ՝ լոբին ոնց եփես: Կամ էլ սիսեռը: Իհարկե չեմ ասում, որովհետև իմ գործը չի: Մեքենա քշելը քո խելքի բանը չի: Դու ի՞նչ ես հասկանում մեքենայից, շարժիչից, հը՞: Հը՞, է՛յ:

Մի անգամ հայրն այնքան միանգամից արգելակեց, որ մեքենան սառույցի վրա չմշկասահորդի պես պտույտ տվեց: Վերջին ուժերը հավաքելով՝ աջ թեքվեց ու մտավ ծաղկանոց: Բախտները բերեց, որ մի քանի մետր այն կողմ գտնվող փոսը չընկան: Ադեմը անսովոր հանգստությամբ բացեց աչքերը: Պատահարներից հետո դեպքի վայրի վրա իջնող այդ կատարյալ լռությունը: Նկատեց քամու ձայնն ու օդում երևացող լույսի ճառագայթները: Եղբայրը՝ Թարըքը, բռնել էր ձեռքը, չնայած որ դեմքն էր հարվածել: Արնահոսող շրթունքով Հայրը դուրս եկավ: Պտտվեց մեքենայի շուրջն ու կնոջ դուռը բացեց:

– Դո՛ւրս արի:

– Մի՛ արա, խնդրում եմ,– ասաց գույնը գցած Այշեն:

– Ասացի՝ դո՛ւրս արի:

Ձեռքից բռնելով՝ դուրս հանեց կնոջն ու տարավ շարժիչի մոտ:

– Եթե այդքան լավ ես հասկանում, սարքի՛ր տեսնենք:

Մոր դեմքի մկանները չէին շարժվում: Հայրը կնոջ գլուխն առել ու մոտեցրել էր շարժիչին:

թվայնացրել է 1915.info կայքը

– Ի՞նչ է: Չե՞ս կարողանում սարքել:

Մայրն ինչ-որ բան քրթմնջաց, բայց այնքան խեղդված ձայնով, որ ո՛չ Ադեմը, ո՛չ եղբայրները չկարողացան հասկանալ՝ ինչ է ասում: Բայց հայրը լսել էր.

– Ուրեմն բերանդ փակի՛ր, էլ չփորձես ինձ ասել՝ ինչպես վարեմ:

Տղաներից երկուսն ու հայրը միասին մեքենան հրելով դուրս բերեցին ծաղկանոցից: Թարըքը, կոտրված թևը բռնած, առանց մի բառ ասելու նրանց էր նայում: Մայրն էլ արտասվելով սպասում էր ճամփեզրին: Ամեն անգամ նույն բանն էր լինում: Ամեն անգամ պիկնիկը մեծ հույսերով էր սկսվում, արցունքներով ավարտվում:

Երբ գիշեր էր գալիս, Ադեմն իրեն հիշեցնում էր՝ բղավող ու գոռգոռացող մարդը մյուս հայրն էր. ղեկին/պատերին/սեղաններին/դռներին/խոհանոցի պահարաններին բռունցքով հարվածող, դրանով չբավարարվելու դեպքում իրենց փայտով/լարով/գոտիով ծեծող ու մի անգամ, կնոջ որովայնին ոտքով հարվածելով, նրան աստիճաններից ցած նետած մարդը մյուս հայրն էր:

Հեշտ էր, երբ հիշում էր, որ երկու տարբեր հայր ուներ: Եթե ցավը կամ վախը չէր անցնում, հաջորդ առավոտյան կարողանում էր շարունակել սիրել երկուսից մեկին (Սթափին):

թվայնացրել է 1915.info կայքը

Փեմբե

12 մարտի, 1954
Եփրատի ափին մի գյուղ

Փեմբեն սիրում էր շներին, մանկուց: Սիրում էր նրանց հավատարմությունը, կկոցած աչքերն ու մարդամոտությունը: Շատերն էին ասում՝ շները լավ չեն հասկանում, բայց նա հավատում էր՝ ճիշտ չէ: Ասում էր՝ նրանք ամեն ինչ հասկանում են, ամեն ինչ ներում են:

Փոքր ժամանակ Փեմբեն մի հովվաշան էր սիրում Մալա Չար Բայան գյուղում: Կախ ականջներով, երկար քթով, հաստ, սև-սպիտակ ու դարչնագույն մորթով: Սիրում էր վազել թիթեռների հետևից, ճյուղերի հետևից, որ մարդիկ էին գցում. ուտում էր այն, ինչ տալիս էին: Այդպիսի սիրալիր կենդանի էր: Քիթմիր էին ասում նրան, երբեմն էլ Քութո կամ Դոդո: Անունն էլ աչքերի փայլի պես անընդհատ փոխվում էր:

Մի օր դիվահարի նման սկսեց տարօրինակ շարժումներ անել կենդանին: Երբ Փեմբեն փորձեց փորիկը շոյել, հարձակվեց ու ձեռքը կծեց: Կենդանու բնավորության հանկարծակի փոփոխությունն անհանգստացնում էր բոլորին: Վերջին շրջանում այդ կողմերում կատաղության դեպքեր էին եղել, դրա համար գյուղի երեք տարեցները պնդեցին՝ պետք է հեքիմի տանել: Բայց մոտակայքում բժիշկ չկար:

թվայնացրել է 1915.info կայքը

Այդպիսով, Փեմբեն ու Բերզոն նախ մինիբուս, հետո ավտոբուս նստեցին ու հասան մեծ քաղաք՝ Ուրֆա: Առանց Ջեմիլեի մի օր անցկացնելու միտքը նրան սարսռեցնում էր, բայց ուրախ էր, որ հոր հետ տեղ էր գնալու:

Բերզոն թիկնեղ, խոշորամարմին, հաստաբեղ մարդ էր. դիմագծերը սուր էին, քունքերի մազերը սպիտակած էին, ձեռքերին կոշտուկներ կային: Փոս ընկած դարչնագույն աչքերը մեղմ հայացք ունեին ու չհաշված նյարդային պահերը՝ հանգիստ մարդ էր: Միակ խնդիրն այն էր, որ տղա էր ուզում ունենալ, որ իր ազգանունը շարունակեր: Չնայած սակավախոս էր ու հազվադեպ էր ծիծաղում, երեխաներին ավելի լավ էր հասկանում, քան կինը: Դրա համար էլ աղջիկները մի բուռ կտի համար ղունղունող ճուտիկների պես մրցում էին հոր սիրուն արժանանալու համար:

Քաղաք գնալն ուրախացնող ու ոգևորող էր, իսկ հիվանդանոցում սպասելը՝ սարսափելի:

Բժշկի դռան մոտ նստած քսան հիվանդ կար: Փեմբեն հաշվել գիտեր, որովհետև ի տարբերություն գյուղի մյուս ութ տարեկան աղջիկների՝ ինքն ու Ջեմիլեն ոտքով քառասուն րոպե քայլում ու մյուս գյուղի միհարկանի դպրոցն էին գնում: Դասարանի մեջտեղում վառարան էր դրված, որ ավելի շատ ծուխ էր անում, քան տաքացնում: Փոքրերը վառարանի մի կողմում, մեծերը մյուս կողմում էին հավաքվում: Երբ վարագույրը հազվադեպ բացում էին, օդը թեփի պես ծանր էր լինում:

Դպրոց գնալուց առաջ Փեմբեն կարծում էր՝ աշխարհում բոլորը քրդերեն են խոսում: Բայց արդեն գիտեր՝ այդպես չէ: Ոմանք քրդերեն ընդհանրապես չգիտեն: Օրինակ՝ ուսուցիչները: Պակասող մազերը կողքյ սանրող տխուր մարդու աչքերում տեսնում էր Ստամբուլում

թվայնացրել է 1915.info կայքը

թողած կյանքի հանդեպ կարոտը, այդքան հեռու տեղում աշխատելու զայրույթը:

Երբ աշակերտներն ասածները չէին հասկանում, կամ էլ ինքը չէր հասկանում աշակերտների քրդերեն կատակները, նյարդայնանում էր: Մի ժամանակ կանոններ էր մշակել: Ով մի քրդերեն բառ ասեր, գրատախտակի կողքին, մեջքը դասարանին դարձրած, պետք է մի ոտքի վրա կանգներ: Աշակերտների մեծ մասն այնտեղ միայն մի քանի րոպե էին կանգնում, խոստանում էին, որ էլ նման սխալ չեն անի ու ներում էին ստանում: Բայց պատահում էր, որ երբեմն աշակերտին մոռանում էր այնտեղ, ու ամբողջ դասը կանգնած էր անցկացնում: Զույգ քույրերն այդ պատիժը տարբեր կերպ էին ընկալում: Զեմիլեն ներամփոփ էր դառնում, հրաժարվում էր որևէ լեզվով խոսելուց, իսկ Փեմբեն ամեն ինչ անում էր թուրքերեն սովորելու համար, որովհետև դա ուսուցչի լեզուն էր, և ուզում էր այդպիսով շահել նրա սիրտը:

Իսկ Նազեն, որ կարծում էր՝ ինչ էլ լինի՝ շատ չանցած՝ մեկ առ մեկ ամուսնանալու են, չէր հասկանում՝ այդքան բառ ու թիվ սովորելու համար ինչու էին տանջվում: Բայց ամուսինը որոշել էր՝ բոլոր աղջիկները պետք է սովորեն:

– Ամեն օր այդքան ճամփա են կտրում: Կոշիկները մաշվել են,– ասում էր Նազեն:– Ինչի՞ համար:

– Որ Սահմանադրությունը կարողանան կարդալ:

– Սահմանադրությունն ի՞նչ է որ:

– Օրենքն է, անգրագե՛տ կին: Մեծ գիրքն է: Կան բաներ, որ կարելի է, բաներ, որ չի կարելի: Եթե տարբերությունը չիմացար, ուրեմն վերջդ եկել է:

Նազեն դեռ չէր համոզվել: Շուրթերը սեղմեց.

– Էդ ինչպե՞ս է օգնելու, որ ամուսին գտնեն:

– Որ թե մի օր ամուսինները նրանց հետ վատ վարվեն, սուս չմնան:

թվայնացրել է 1915.info կայքը

Երեխաներին առնեն ու գնան:

– Ո՞ւր են գնալու:

Բերզոն զարմանում էր հարցերից. դրա մասին չէր մտածել:

– Դե, հոր տուն կգան:

– Հըմմ, ուրեմն դրա համար են ամեն օր այդքան ճամփա կտրում, գլուխները չգիտես ինչ լցնում, հա՞: Որ մնան այն տանը, որտեղ ծնվել են, հը՞:

– Վե՛ր կաց, ինձ թե՛յ բեր:

– Աստծված ոնց կամենա,– մռթմռթաց Նազեն խոհանոց գնալիս:– Աղջիկներիցս ոչ մեկը ամուսնուն չի լքելու: Եթե լքի, էնքան կծեծեմ, որ... Մեռած լինեմ, թե ողջ... Ուրվական էլ լինեմ, հետ կգամ, վալլահի:

Ոչ ոք չգիտեր, որ հենց այնպես նետված սպառնալիքներն իրականություն էին դառնալու: Մահանալուց տարիներ անց անգամ Նազեն աղջիկներին այցի էր գալու: Համառ կին էր: Ոչինչ չէր մոռանում: Ու ի տարբերություն շների՝ երբեք չէր ներում:

Հիվանդանոցում սպասելիս միջանցքում հավաքված հիվանդներին նայեց Փեմբեն լայն բացված երեխայական աչքերով: Ոմանք ծխախոտ էին ծխում, ոմանք տնից բերած հաց էին կրծում, ոմանք էլ վերքերն էին տնտղում կամ ցավից բղավում էին: Ամեն ինչի վրա ծանր հոտ էր կանգնել՝ քրտինքի, ախտահանիչների ու հազի դեմ հեղուկի խառնուրդի հոտը:

Փեմբեն նայում էր հիվանդներին ու այն բժշկին, որը հիացրել էր իրեն: Այդքան հիվանդին բուժող մարդը պետք է որ արտասովոր մեկը լիներ: Երևի մարգարե է: Կամ էլ գուշակ: Կախարդական մատներով մոգ:

Երբ հերթը նրանց հասավ, հետաքրքրությանն արդեն չափ ու սահման չկար: Անհամբեր հետևեց դեպի հիվանդասենյակ ուղղվող հորը: Ներսում ամեն ինչ

թվայնացրել է 1915.info կայքը

սպիտակ էր: Բայց աղբյուրում լվացվող սպիտակեղենի վրա ջրից առաջացած փրփուրի պես ճերմակ չէր: Ձմեռային գիշերը տեղացող ձյան կամ կանաչիին ու վայրի սխտորին խառնած լոռ պանրի նման էլ չէր: Նախկինում երբեք նման սպիտակ չէր տեսել՝ բացարձակ ու արհեստական: Այնքան սառը գույն էր, որ Փեմբեն վախեցել էր: Աթոռները, պատերը, հիվանդասենյակը, անգամ բաժակներն էին նույն գույնի: Փեմբեն չգիտեր, որ սպիտակը կարող էր այդքան հեռու, այդքան մութ լինել:

Իսկ ամենաշատը զարմացել էր, որ բժիշկը կին էր, բայց մորից, մորաքույրներից, հարևաններից տարբերվող կին: Փեմբեի իմացած կանացի որակներից չուներ: Երկար շապիկի տակ մինչև ծնկները հասնող դարչնագույն շրջազգեստ էր հագել, բրդյա գուլպաներ ու կաշվե երկարաճիտ կոշիկներ: Ուղղանկյուն ակնոցով գիտուն, խիստ բուի էր նման: Ի՜նչ տարբեր էր առավոտից մինչև երեկո դաշտում աշխատելուց, արևի տակ աչքերը կկոցելուց կնճիռներ ձեռք բերած ու որդի ունենալու համար ապրող ու շնչող կանացից: Ակնհայտ էր՝ սովորել է, որ իր ամեն բառը բոլորը լսում են: Անգամ Բերզոն գլխարկը հանել, խեղճ կանգնել էր նրա առաջ:

Բժշկուհին հորն ու աղջկան անտարբեր նայեց: Կարծես նրանց գոյությունն իրեն հոգնեցնում, անգամ տխրեցնում էր: Ակնհայտ էր՝ երկար օրվա վերջում ոչ ոքի հետ չի ուզում գործ ունենալ: Հարցերը միայն բուժքույրն էր տալիս. բժշկուհին նրանց հետ չխոսեց: Ինչպիսի՞ շուն էր: Բերանից փրփո՞ւր էր դուրս գալիս: Ձուր տեսնելիս իրեն տարօրինա՞կ էր պահում: Գյուղում ուրիշի կծե՞լ էր: Հետո նրան հսկողության տա՞կ էին առել: Բուժքույրն այնքան արագ էր խոսում, ասես ժամ էին պահել, ու ժամանակը լրանում էր:

թվայնացրել է 1915.info կայքը

Փեմբեն ուրախացավ, որ մայրն իրենց հետ չէ: Նազեն թուրքերեն չգիտեր, չէր հասկանա՝ ինչ են խոսում, սխալ բաներ կհասկանար, կանհանգստանար:

Մինչ բժիշկը դեղ էր նշանակում, դեղատոմս գրում, բուժքույրը երեխային որովայնից ներարկում արեց: Փեմբեն ճչաց: Երբ դուրս եկան միջանցք, դեռ բարձր ձայնով արտասվում էր: Մարդկանց հետաքրքրասեր հայացքները միայն ցավն էին կրկնապատկում: Հենց այդ ժամանակ Բերզոն ասաց՝ եթե իրեն հանգիստ պահի, կինոթատրոն կգնան: Փեմբեի ձայնը միանգամից կտրվեց, աչքերը սպասումով փայլեցին:

«Կինոթատրոն» բառը փայլուն թղթերի մեջ փաթաթած քաղցրավենիքի նման էր. չգիտեր՝ ներսում ինչ է, բայց գիտեր՝ քաղցր բան է:

* * *

Քաղաքում երկու կինոթատրոն կար: Մեծը ավելի շատ քաղաք եկած քաղաքական գործիչներն էին այցելում, քան տեղի արվեստագետները: Ընտրություններից առաջ տղամարդկանցից կազմված բազմություններ էին հավաքվում, ոգևորված քննարկումներ էին անում, խոստումները, ելույթներն ու պրոպագանդան մեղվի բզզոցի պես տարածվում էին օդում:

Մյուս կինոթատրոնն ավելի համեստ էր, բայց մյուսի չափ հայտնի էր: Թատրոնի տերը նախընտրում էր արկածները, ոչ թե քաղաքական ելույթները. ծխախոտի, թեյի ու այլ իրերի հետ ֆիլմեր բերելու համար էլ էր մաքսանենգներին վճարում, տարբեր ժանրերի հազարավոր ֆիլմեր էր ցուցադրում թատրոնում: Ուրֆացիները նրա շնորհիվ Ջոն Վեյնի կովբոյների մասին ֆիլմերը, «Ալամո ամրոցի տղամարդը», «Հուլիոս Կեսարը», «Ոսկու տենդը» ֆիլմերը

թվայնացրել է 1915.info կայքը

ու մանր-մունր, բեղավոր, ծիծաղելի մարդկանց էր կարողացել տեսնել:

Այդ օրը Փեմբեն սև-սպիտակ թուրքական ֆիլմը սկզբից մինչև վերջ բերանը բաց նայել էր: Հերոսուհին նուրբ, աղքատ աղջիկ էր, սիրահարվել էր հարուստ ու երես առած տղայի: Տղան սկզբում նրան չէր հավանում, բայց հետո փոխվեց:

Դա սիրո կախարդանքն էր: Տղայի ծնողներն ու մնացած բոլորը երիտասարդ սիրահարներին վատ էին վերաբերվում, նրանց բաժանելու համար դավեր էին նյութում, բայց նրանք հանդիպում էին գետի ափին՝ ուռենու տակ:

Փեմբեն սիրահարվել էր կինոթատրոնին՝ զարդանախշ մուտքին, շքեղ վարագույրներին, ծալվող աթոռներին, շուրջը պատած մթությանը: Անհամբեր սպասում էր՝ երբ է այդ հրաշք երկրի մասին Ջեմիլեին պատմելու: Վերադառնալիս ավտոբուսի մեջ անընդհատ կրկնում էր ֆիլմի երգը.

Անունդ շուրթերիս,
Սերդ՝ առեղծված,
Թե ուրիշին նայես,
Օրս կդառնա գիշեր:

Փեմբեն պարում էր, իսկ մյուս ուղևորները, տեմպը պահելով, ծափ էին տալիս: Ի վերջո, երբ երեխան լռեց, Բերզոն ծիծաղեց ու հպարտ ասաց.

– Ապրի՛ իմ տաղանդավոր աղջիկը:

Փեմբեն դեմքը թաղեց հոր լայն կրծքի մեջ ու բեղերի վարդայուղի հոտը շնչեց: Նա դեռ չգիտեր, բայց դրանք իր կյանքի ամենաերջանիկ պահերից էին: Բայց երբ վերադարձան տուն, Ջեմիլեն ահավոր վիճակում էր՝

թվայնացրել է 1915.info կայքը

աչքերը ուռած, դեմքը կաս-կարմիր: Ամբողջ օրը նստել էր պատուհանի առաջ, շուրթերը կրծելով՝ նրան էր սպասել: Հանկարծ անսպասելիորեն սկսել էր բղավել: Քույրերը հանգստացնելու համար ամեն ինչ արել էին, բայց չէին կարողացել օգնել:

– Ժամը քանիսի՞ն է սկսել արտասվել Ջեմիլեն,– հարցրեց Փեմբեն:

Նազեն մտածեց ու ասաց.

– Երևի կեսօրից հետո էր: Ինչի՞ ես հարցնում:

– Բան էլ չէ:

Փեմբեն ստացել էր հարցի պատասխանը: Հասկացել էր՝ երկվորյակ քույրը, չնայած կիլոմետրերի հեռավորությանը, իր սրսկման պահին էր արտասվել: Ասում էին՝ զույգերը երկու տարբեր մարմիններում ապրող մի հոգի են: Բայց նրանց մտերմությունն ավելին էր: Նրանք մի մարմին, մի հոգի էին: Փեմբեն ու Ջեմիլեն, Քադերն ու Եթերը: Երբ մեկն աչքը փակում էր, մյուսը չէր տեսնում: Մեկը վիրավորվում էր, մյուսն՝ արնահոսում: Եվ ամեն անգամ, երբ մեկը վատ երազ էր տեսնում, մյուսի սիրտն արագ բաբախում էր:

* * *

Նույն երեկո Փեմբեն Ջեմիլեին ֆիլմից սովորած պարային շարժումները ցույց տվեց: Հերթով հերոսուհու ու հերոսի դերերն էր խաղում, սիրահար զույգի պես գրկում, համբուրում, ինքն իր շուրջը պտտվելով՝ ծիծաղում էր:

– Էս ի՞նչ աղմուկ է,– ձայն էր տալիս Նազեն:

Սկուտեղի վրայի բրինձը մաքրելով էր զբաղված:

Փեմբեն խոր հոգոց հանեց:

– Բան չէ, պարում էինք:

– Պարս ո՞րն է,– ասաց Նազեն:– Հո փչացա՞ծ չեք դառնալու գլխներիս:

թվայնացրել է 1915.info կայքը

Փեմբեն չգիտեր՝ դա ինչ է նշանակում, բայց չէր համարձակվում հարցնել: Վիրավորանքի ու զայրույթի նման մի բան զգաց՝ ինչո՞ւ մորը դուր չի գալիս իր երգը, ինչպես ավտոբուսի մարդկանց: Ինչի՞ց է, որ օտարները մտերիմ մարդկանցից ավելի հանդուրժող են լինում: Դեռ այդ մասին էր մտածում, երբ լսեց՝ Ջեմիլեն, մեղքն իր վրա վերցնելով,մռթմռթում էր.

– Կներես, մայրի՛կ: Էլ չենք անի:

Փեմբեն խաբված զգաց, զույգ քրոջը խեթ նայեց:

– Ձեր համար եմ ասում,– ասաց Նազեն:– Ծիծաղի վերջը լաց չդառնա:

– Ինչի՞ որ: Եթե հիմա ծիծաղենք, հետո էլի ծիծաղենք, չի՞ լինի,– միանգամից հարցրեց Փեմբեն:

Այս անգամ հոնքերը կիտելու հերթը Ջեմիլեինն էր: Քրոջ քաջությունից և՛ ապշել էր, և՛ վախեցել: Շունչը պահել էր՝ վախեցած, թե գլխներին ինչ է գալու: Ամեն անգամ, երբ աղջիկները չափն անցնում էին, Նազեն նրանց գրտնակով ծեծում էր: Մեջքերին, հետույքներին, ոտքերին էր հարվածում փայտով, բայց երբեք դեմքերին չէր հարվածում. աղջկա օժիտն իր դեմքն էր:

Բայց այդ երեկո Նազեն ոչ ոքի չպատժեց: Մտածկոտ նայեց հեռուները. կարծես ուզում էր ուրիշ տեղ լինել: Նորից խոսելիս ձայնը հանգիստ էր.

– Նամուսը կնոջ վահանն է: Եթե վահանը կորցնեք, գրոշի արժեք էլ չեք ունենա, հիշե՛ք: Սա դաժան աշխարհ է: Արցունքներիդ չեն էլ նայի:

Փեմբեն պատկերացրեց՝ ինչպես է մետաղադրամը օդ գցում ու բռնում ափի մեջ: Մետաղադրամը միայն երկու կողմ ունի՝ մտածում էր նա: Հաղթելու ու պարտվելու միջև գիծը որքան բարակ էր:

Այն վայրում, ուր Փեմբե Քադերն ու Ջեմիլե Եթերն էին ծնվել, «պատիվը» միայն մի բառ չէր: Այն միաժամանակ

թվայնացրել է 1915.info կայքը

հատուկ անուն էր: Մարդ կարող էր երեխային Պատիվ անվանել, իհարկե, եթե տղա էր: Պատիվն ու արժանապատվությունը տղամարդկանց էին հատուկ: Տարեցներին, միջին տարիքի տղամարդկանց, երիտասարդներին, անգամ տղաներին, ում շուրթերին կաթը դեռ չէր չորացել: Բոլորը պատիվ ունեին: Իսկ կանայք՝ ոչ: Նրանց ուրիշ բառ էր բաժին ընկնում՝ նամուս:

– Կինը բարակ, սպիտակ վուշից է հյուսված,– շարունակեց Նազեն:– Իսկ տղամարդու կտորը հաստ է ու մուգ գույնի: Աստված այդպես է ստեղծել՝ մեկին մյուսի հետ է կապել: Մահկանացուները չեն հասկանում՝ ինչու է այդպես արել, դրա համար պետք չէ հարցեր տալ: Սպիտակի վրա ամենափոքր կետն էլ կերևա, իսկ սևի վրա կեղտ չի երևում: Այդպես է՝ կանանց ճակատի հետքը երևում է, պատյանից դուրս եկած լոբու հատիկի պես առանձնանում է մյուսներից: Այսինքն՝ երբ կույսը տրվում է տղամարդուն, անգամ իր սիրելի տղամարդուն, ամեն ինչ կորցնում է, բայց տղամարդուն բան չի լինում:

Այդ ամենը լսելիս Փեմբեն բժշկի սենյակի բացարձակ սպիտակը հիշեց: Այնտեղ զգացած անհանգստությունը վերադարձավ, բայց ավելի ուժեղ: Ուզում էր հարցնել՝ իսկ մյո՞ւս գույները: Արծաթագույնը, նարնջագույնը, մանուշակագույնը... Իսկ մյո՞ւս կտորները: Գործվածքը, ասեղնագործ կտորը, մետաքսը, թավիշը... Ինչո՞ւ ենք միայն սև ու սպիտակի բաժանում աշխարհը, երբ այդքան տարբեր է ստեղծել Աստված: Նազեի ու Փեմբեի միջև լարվածությունը երբեք չէր դադարել:

Ով իմանար՝ Նազեից լսած ու իր համար այդքան ատելի, չոր, խիստ ճառերը Անգլիայում Փեմբեն բառ առ բառ իր դստեր գլխին էր կարդալու...

թվայնացրել է 1915.info կայքը

Ադեմ

5 նոյեմբերի, 1977
Լոնդոն

Պատրաստվում էր հաստոցից վերցրած վարսակով թխվածքաբլիթները տեղադրել տուփի մեջ, երբ հանկարծ մի բան հիշեց Ադեմը՝ մոր դեմքը չէր հիշում: Զգալով, որ ոտքից գլուխ ցնցվում է՝ կանգ առավ. դրա պատճառով թխվածքաբլիթի հաջորդ խմբաքանակը բաց թողեց: Մի քանի մետր այն կողմ կանգնած Բիլալը նկատեց սխալն ու լուռ ուղղեց այն: Եթե Ադեմը նկատեր դա, գոնե գլխով շնորհակալություն կհայտներ, բայց դեռ փորձում էր հիշել մոր դեմքը: Մտքում աղոտ մի կնոջ կերպար էր երևում՝ կարծես մառախուղի վարագույրի հետևում: Նիհար, բարձրահասակ կին էր, մարմարի պես ճերմակ դեմք ուներ, բաց գույնի աչքերը միաժամանակ հանգիստ ու տագնապալի էին: Վանդակավոր պատուհանից ընկնող լույսի շողերը գլխավերևում էին ընկնում, դեմքի կեսը մնում էր ստվերում: Մազերը պողպատագույն ու շագանակագույն էին՝ աշնան տերևների գույնի: Բայց աստիճանաբար մգանալով՝ ածխագույն դարձան: Շուրթերը հաստ էին ու կլոր:

Գուցե ոչ: Վստահ չէր: Գուցե եզակի ժպտացող բարակ շուրթեր ուներ: Ամեն վայրկյան պատկերը փոխվում էր: Մոր դեմքը կարծես մեղրամոմից լիներ:

թվայնացրել է 1915.info կայքը

Կամ գուցե իրեն լույս աշխարհ բերած այդ կնոջ դեմքի մոռացված հիշողությունը միախառնվել էր իր կնոջ պատկերին: Այս պահին տեսած երկար, ալիքավոր մազերը Փեմբեինն էին, ոչ թե մորը՝ Այշեինը: Կինը դարձել էր իր կյանքի անքակտելի մա՞սը, զբաղեցնում էր իր բոլոր հուշե՞րը: Ծանրությունը մի ոտքից մյուսին տեղափոխելով՝ աչքերը փակեց:

Հետո ուրիշ բան հիշեց. մոր հետ ջրամբարին նայող զմրուխտե կանաչ մի հովտում էին: Յոթ կամ ութ տարեկան կլիներ Ադեմը: Տաք քամին խառնում էր մոր մազերը: Երկինքը ձգվում էր թանձր կապույտով, իսկ հեռվի սարերին կարծես ոսկե, պղնձե ու արծաթե դրամներ լցրած լինեին: Ներքևում ալիքվող ջրին նայելիս գլուխը պտտվեց: Ուրիշ ժամանակ մայրը կզգուշացներ, որ եզրին չմոտենա, բայց այդ օրը ոչինչ չէր ասում:

«Եզերքին սատանան է սպասում, շատ մոտեցողներին ներքև է քաշում»:

Դրանից էին բոլորն ընկնում. պատշգամբի ճաղերից կախվող երեխաներին, պատուհանները մաքրելու համար պատուհանագոգին բարձրացած տանտիկիններին կամ տանիքներին քայլող ծխնելույզ մաքրողներին՝ բոլորին սատանան էր թևերից քաշում ու անդունդը ձգում: Միայն կատուներին ոչինչ չէր պատահում. ինը կյանք ունեին, կարող էին ութ անգամ մեռնել:

Ձեռք ձեռքի տված՝ ներքև քայլեցին ու հասան ջրամբարի երկայնքով ձգվող հսկայական պատերին: Մայրը՝ Այշեն, կանգնել էր ջրի գլխին, լուռ հետևում էր: Մոռացել էր սատանայի մասին: Իսկ եթե այդ կողմերում՝ թփերում էր թաքնվել ու իրենց ցած նետելու համար հարմար առիթի՞ էր սպասում: Հանկարծակի Ադեմը ձեռքն ազատեց, հետ նայեց, որ ստուգի՝ ոչ ոք չկա հետևում: Երբ գլուխը նորից շրջեց, մայրը չկար:

թվայնացրել է 1915.info կայքը

* * *

Երբ Ադեմն աչքերը բացեց, Բիլալն անհանգիստ նրան էր նայում:

– Ի՞նչ է պատահել, եղբա՛յր,– հարցրեց Բիլալը սարքավորումների աղմուկի միջից:– Մի տասը խմբաքանակ բաց թողեցիր, է:

– Բան չէ,– աջ ձեռքով թփթփացրեց սրտին:– Լավ եմ:

Դեռ անհանգիստ էր, բայց սիրալիր ժպտաց Բիլալը: Գլուխն օրորելով վերադարձավ իր գործին: Ադեմն էլ նույնն արեց: Օրվա մնացած ժամերին հաջողացրեց թխվածքաբլիթի ոչ մի խմբաքանակ բաց չթողնել: Բայց նրան ճանաչողը կարող էր ասել՝ ինչ-որ բանից մտազբաղ է: Իրենից անկախ, իր ուժերից վեր, հոգու խորքում փոթորկի պես չարագուշակ, տանջող անհանգստություն էր պտտվում:

Իրականում գիտեր՝ ինչ էր եղել: Ադեմը անկյունում կծկված կենդանու պես վախենում էր: Կարծես թույն էր հոսում երակներով, այնքան ծանրացած էր զգում: Որ կողմ էլ նայեր՝ կարծես հետևից որսորդներ ընկած լինեին: Թղթախաղում տարված գումարից ոչ մի տեղ չէր կարող փախչել՝ միակ ճանապարհը Անգլիայից հեռանալն էր: Բայց ինչպե՞ս կարող էր գնալ, երբ իր ձեռքին նայող կին ու երեխաներ ուներ: Իսկ եթե ուզեր ընտանիքին էլ հետը տանել, պետք է գումար գտներ: Մեծ գումար: Չգիտեր ինչ անել: Չինացիներն էլ էին նկատել: Դրա համար չէին գալիս ու չէին ստուգում ամեն օր: Գիտեին՝ եթե մի անգամ մուծումը բաց թողնի, կկարողանան նրան գտնել:

Բայց Ադեմն ուրիշ պատճառ էլ ուներ, որ իրեն թույլ չէր տալիս հեռանալ՝ Ռոքսանան:

թվայնացրել է 1915.info կայքը

* * *

Մոտ երկուսուկես ամիս առաջ Ադեմը տարօրինակ զգացողությամբ արթնացավ: Նշաններ կային. նշանները նրան երբեք չէին խաբել: Ափերը քոր էին գալիս, սիրտը սովորականից ավելի արագ էր զարկում, ձախ աչքը թրթռում էր. երկնքից եկող կոդավորված նշանների նման թրթռոցներ: Կեսօրից հետո բոլորը նրա, իսկ նա բոլորի հետ սիրալիր էր: Արևոտ, գեղեցիկ օր էր, ու Թեմզայի վրա երկնքի արտացոլանքը լի էր խոստումներով:

Երբ մթնեց, նորից գնաց խաղատուն: Շուտով հիմնովին հրաժարվելու էր այդ հիվանդությունից: Վատ սովորությունից ազատվելու, առողջ ծառի հիվանդ ճյուղը կտրելու էր, նետեր: Այդ հիվանդությունն իսպառ վերանալու էր կյանքից: Բայց հիմա չէ: Դեռ պատրաստ չէր: «Մի երկու անգամ խաղալուց բան չէր լինի,– ասաց նա ինքն իրեն:– Այսօր նշաններն իմ օգտին են»:

Խաղատունն Արևելյան Լոնդոնում էր, մի հին աղյուսե տան նկուղային հարկում: Բայց ներսում լրիվ ուրիշ աշխարհ էր: Հինգ սենյակ կար: Ոմանք բիլիարդ էին խաղում, ոմանք՝ «Բլեք Ջեք» զառ, պոկեր էին խաղում սեղանների շուրջ: Հավաքված մարդկանցով էր լի: Ծխից ոչինչ չէր երևում: Նրանց համար, ովքեր չէին ուզում շատ ջանք թափել, միջանցքում սարքեր էին տեղադրված: Ամենակարևոր խաղերը հետևի սենյակում էին խաղում: Ամուր փակված դռան հետևում մռթմռթոցներ, ժամանակ առ ժամանակ լսվող ոգևորված բացականչություններ ու անդադար պտտվող ռուլետկայի տկտկոցն էր լսվում:

Սա տղամարդկանց վայր էր: Մի քանի սեթևեթ կանայք կային, բայց նրանք տեր ունեին, այսինքն՝ նրանց չէր կարելի դիպչել: Բոլորի համար կանոններ կային, որոնց պետք էր ենթարկվել: Պակիստանցիները,

թվայնացրել է 1915.info կայքը

ինդոնեզիացիները, բանգլադեշցիները, կարիբցիները, իրանցիները, թուրքերը, հույները, իտալացիները... Բոլորն անգլերեն էին խոսում, բայց երբ գործը հասնում էր հայհոյելուն, բողոքելուն կամ աղոթելուն, բոլորը մայրենի լեզվին էին անցնում: Այդպիսի վայրերին որջ էին ասում: Տերերը՝ մի չինացի ընտանիք, սերնդեսերունդ Վիետնամում էին ապրել, բայց պատերազմից հետո երկիրը լքել էին: Ադեմը նրանց հետ միշտ իրեն անհարմար էր զգում: Ո՛չ չինացիների ու իտալացիների պես միմյանց էին օգնում, ո՛չ էլ իռլանդացիների պես իմպուլսիվ էին, բայց միշտ ինչ-որ բան անհանգստություն էր առաջացնում: Եղանակի տեսության նման էին՝ ամեն պահ կարող էին փոխվել:

Այդ երեկո Ադեմը մի քիչ «Բլեք Ջեք» խաղաց, մի քանի անգամ էլ զառ նետելուց հետո ռուլետկա փորձեց: Նախ սևի վրա խաղադրույք արեց: Սկզբում բախտը բերում էր: Հետո ճակատագիրը խաղ խաղաց. բախտը չբերեց, բայց մեծ գումար չէր կորցրածը: Կարմիրին դարձավ ու ամեն անգամ հաղթած համարը հաջորդ խաղադրույքում օգտագործելով՝ երեք անգամ իրար հետևից հաղթեց: Այն կախարդող պահերից էր, երբ ռուլետկան պետք է ոչ միայն աչքով տեսնես, այլև զգաս: Եթե նույն կերպ իրար հետևից հարյուր անգամ խաղաս, հաղթելու հավանականությունը մեծ կլինի: Ադեմն ինքնամոռաց խաղաց, ասես կյանքի վերջին խաղն էր:

Սենյակի տղամարդիկ թփթփացնում էին մեջքին, լուռ քաջալերում էին նրան: Անծանոթ մարդկանցից այդպիսի հարգանքի արժանանալն աննկարագրելի զգացողություն էր: Ակնհայտ էր՝ նրա հանդեպ հիացմունք ու նախանձ էին զգում: Դա հենց այն էր, ինչ ուզում էր: Դեղի նման: Դրսում գուցե ոչինչ էր, բայց այդ պահին այդտեղ թագավոր էր: Մի քիչ էլ խաղաց ու նորից

թվայնացրել է 1915.info կայքը

հաղթեց: Սեղանի շուրջ հավաքված բազմությունը կրկնապատկվել էր: Տաննհինգ րոպե անց դեռ բոլորով նայում էին՝ ինչպես է անիվը պտտվում. դեռ հաղթում էր: Դիլերը դադար խնդրեց:

Ադեմը մաքուր օդ շնչելու համար փողոց դուրս եկավ: Գործարանի ծանոթներից մեկը՝ խոշորամարմին մարոկկացին, մենակ նստել էր մայթին, ծխում էր ու խմում:

– Ինչ էլ հաջողակն ես, է,– ասաց մարոկկացին:

– Բախտս էսօր բերել է:

– Կարող է, Աստված փորձում է քեզ,– հետո Ադեմին նայեց ու ասաց.– ասում են, չէ՞, սև ձի նստողի վիզը կկոտրվի:

– Ի՞նչ ես ուզում ասել:

– Եսիմ: Բայց լավ է հնչում:

Ծիծաղեցին, ծիծաղը տարածվեց գիշերվա մեջ:

– Լավ, ուրեմն սա՛ էլ լսիր,– ասաց Ադեմը:– Եթե ուզում ես թքել, գոնե քամուն հակառակ մի՛ կանգնիր:

– Ճիշտ է: Եթե աշխարհի ծայրն էլ փախչես, հետույքդ հո հետդ է գալու:

– Լավություն արա՛, ջո՛ւրը գցիր:

– Լավ է ասված,– մարոկկացին պատրաստվում էր բաժակը բարձրացնել, երբ տեսավ՝ ընկերոջ ձեռքը դատարկ է:

– Ես չեմ խմում,– ասաց Ադեմը:

Սառը ծիծաղեց.

– Վա՛յ, վա՛յ: Տե՛ս, է: Մինչև կոկորդը խաղատանն է խրված, բայց հենց գործը հասնում է խմիչքին՝ կներե՛ք, մուսուլման եմ:

Ադեմը գունատվեց: Կախվածություն չուներ: Ուզած ժամանակ կարող էր թողնել թղթախաղը: Իսկ չխմելու պատճառի մասին հազվադեպ էր խոսում, այն էլ օտարների հետ: Բայց այդ երեկո բացառություն արեց:

թվայնացրել է 1915.info կայքը

– Հայրս շատ էր խմում,– կամաց ասաց նա:

– Կներես: Հետո ի՞նչ եղավ,– հարցրեց մարդկացին՝ հանկարծ լրջանալով:

– Հո՞րս: Նրան բան չեղավ, եղածը մեզ հետ եղավ:

Ադեմը նոր էր իջել նկուղ, երբ հոսանքն անջատվեց: Դա երրորդ անգամն էր նույն շաբաթվա մեջ: Ցերեկներն ամպերից մոխրագույն էր դառնում Լոնդոնը, իսկ գիշերները հոսանքի անջատումներից՝ սև: «Թաղամասի մոմավաճառի խանութում գործերը լավ են երևի»,– մտածեց նա: Մոմը հացի ու կաթի չափ անհրաժեշտ էր դարձել. մեծածախ վաճառքով զբաղվողներին հաստատ լավ գումար էր բերում:

Ադեմը կիսամութ միջանցքում մի կերպ խարխափելով հասավ հետևի սենյակ: Սեղանի վրա՝ մի գազի լամպ, շուրջը տխուր դեմքով երեք չինացի էին նստած. դեմքի արտահայտություններից անհնար էր ինչ-որ բան հասկանալ: Ադեմը նրանց տեսնելուն պես հասկացավ՝ գնալու ժամանակն է: Պետք է բավարարվեր հաղթածով: Վերցրեց բաճկոնը: Դիլերին թեյավճար տվեց, պատրաստվում էր դուրս գալ, երբ կանգ առավ: Հետագայում ամեն անգամ այդ պահը հիշելիս գնացքների՝ արտակարգ իրավիճակներում արգելակելու պես զգացողություն էր ունենալու: Երբեք նման փորձ չէր ունեցել, բայց գիտեր՝ երբ արգելակները քաշում են, գնացքը հանկարծակի կանգ է առնում: Այդ երեկո իր մեջքին էլ նման արգելակ կար, ու կարծես մեկը կառչել էր նրանից: Որովհետև մի երիտասարդ կին, ստվերների աշխարհից դուրս գալով, մտավ սենյակ: Լամպի թույլ լույսի տակ խորհրդավոր փայլեր տարածող շեկ մազերը տարել էր փոքր ու նուրբ ականջների հետևը: Կաշվե կարճ շրջազգեստ, վզից կապած սպիտակ, մետաքսե բլուզ ու սրածայր բարձրակրունկներ էր հագել: Դժգոհությունը

թվայնացրել է 1915.info կայքը

կարդացվում էր համաչափ դեմքի ամեն սանտիմետրին: Ակնհայտ էր՝ միտքն այլ տեղ էր: Չինացիներից մեկի կողքին նստելով՝ ականջին ինչ-որ բան շշնջաց: Կիսով չափ ժպտալով՝ շոյեց կնոջ ոտքը: Այդ պահին Ադեմի ներսում ինչ-որ բան տակնուվրա եղավ:

– Ահ, դեռ այստեղ ես: Մի հատ էլ խաղա՞նք, ընկե՛ր:

Նույն մարդն էր հարցնում. գլուխը բարձր, առանց որևէ մեկին նայելու էր խոսում: Ադեմն էլ, սենյակի մարդիկ էլ հասկացել էին՝ հարցն ում էր ուղղված: Ադեմը բոլորի հայացքն իր վրա էր զգում, բայց կնոջ հայացքն էր նրան ծակում. մի զույգ կապույտ շափյուղայի նման էին: Կյանքում երբեք այդքան մեծ, այդքան փայլուն ու այդքան կապույտ աչքեր չէր տեսել: Եթե կինը տեսներ, կվախենար, կասեր՝ վատ աչք ունի: Ըստ Փեմբեի՝ նման աչքեր ունեցողների հայացքին արժանանալուց հետո պետք է անմիջապես տուն վազել ու մի պտղունց աղ այրել: Ադեմի դեմքն այրվում էր: Զգում էր՝ թղթախաղի ամենամեծ սխալներից մեկն էր անում՝ ինչ-որ մեկի խոսքերին էր խաբվում: Բայց նկատելը մի բան էր, արտահայտելը՝ ուրիշ բան: Գլուխը թեթևակի թեքելով՝ պատասխանեց.

– Լավ, կխաղամ:

Մի անգամ էլ փորձեց, բայց այս անգամ ուրիշ էր: Սենյակի էներգիան փոխվել էր: Ռուլետկայի անիվն ու ինքն արդեն տարբեր էին իրարից, իրենց միջև եղած համաչափությունն էր վերացել: Բայց տեղից չշարժվեց: Առանց տեղից շարժվելու՝ նայում էր գնդակի պտույտներին հետևող կապույտ աչքերով աղջկան:

Երբ լույսը նորից միացավ, շարունակեց՝ մտածելով, որ դա լավ նշան է: Նորից հաղթեց: Խաղադրույքները շատ էին բարձրացել: Վտանգավոր էր: Խենթություն էր: Չինացիները փորձում էին ցույց տալ, թե իրենց համար

թվայնացրել է 1915.info կայքը

մեկ է, բայց ակնհայտորեն լարված էին: Ադեմը տեսավ բազմության միջից իրեն նայող մարդկացուն. հոնքերը անհանգիստ կիտել էր: Հեռվից գլուխն օրորում էր հերի՛ք է, կա՛նգ առ:

Բայց Ադեմը չհանձնվեց: Կինը սեղանի մյուս կողմից հայացքը հառել, նրան էր նայում. բալի պես շուրթերը հաստ էին ու գրավիչ: Ադեմը, չնայած որ շարունակում էր հաղթել, զգում էր՝ կարող է գրավել սիրտը, գուցե հազարից մեկ շանս ունի, բայց կարելի էր փորձել: Մի քանի վայրկյան հետո լսեց՝ ինչպես մեկը ձայն տվեց այդ փերուն, և այդպես իմացավ նրա անունը՝ Ռոքսանա:

Բոլոր խաղանիշերը դրեց չորս թվի վրա: Գնդակն ու անիվը հակառակ ուղղություններով գնացին, իրեն տարբեր ուղղություններով քշած կյանքի քամիների պես՝ մեկը՝ ընտանիք, մյուսը՝ ազատություն:

Դիտորդները շունչը պահեցին: Գնդակը անցքերից մեկի մեջ ընկավ, հետո նորից դուրս ցատկեց: Անիվը մի անգամ էլ պտտվեց: Ռոքսանայի դեմքը կես-զարմանքով, կես-հիացմունքով լուսավորվեց: Ադեմը նորից էր հաղթել:

Հենց այդ ժամանակ չինացիներից մեկը մռթմռթալով ասաց.

– Տանը սպասող չունե՞ս, ա՛յ ընկեր: Ընտանիքդ հիմա կանհանգստանա: Ուշ է:

«Ընտանիք» բառը սպառնալիքին էր խառնվել, Ադեմին ռուլետկայի սեղանից, սենյակից ու Ռոքսանայից բաժանող հաստ վարագույր էր ստեղծել:

Վեր կացավ, տուփի մեջ լցրած խաղանիշերը փողի վերածեց: Ճանապարհի կեսը ծանոթներից մեկի մեքենայով գնաց, մնացած տարածքն էլ ոտքով անցավ:

Հյուսիսային Լոնդոնի փողոցներում աղբակույտեր էին, նեխած մնացորդներն աջուձախ էին ցրվել: Բոլորը

թվայնացրել է 1915.info կայքը

գործադուլ էին հայտարարել՝ հրշեջները, հանքափորները, հացթուխները, առողջապահության աշխատակիցները, ու հիմա էլ՝ աղբահավաքները: Արդեն ոչ ոք չէր ուզում շարունակել խաղը՝ բացի թղթամոլներից ու կյանքը որպես թղթախաղ տեսնողներից:

Երբ հասավ Լավանդեր փողոց, առավոտյան ժամը չորսն էր: Բազմոցին նստեց ու ծխախոտ վառեց: Ծխախոտը մատների արանքում դարձավ մոխիր. փողի տաք կապոցը կողքին էր: Ուղիղ տասնվեց հազար չորս հարյուր սթեռլինգ: Բոլորը խոր քնած էին, դրա համար հաղթանակը չէր կարողացել ընտանիքի հետ կիսել: Պետք է սպասեր: Կիսամութ ճաշասենյակում աչքերը բաց պառկելիս հանկարծ անտանելի մենակություն զգաց: Կնոջ, երկու որդիների ու դստեր, անգամ ոսկե ձկան շնչառությունն էր լսում: Խորհրդավոր խաղաղության ծածկի տակ էին բոլորը միասին:

Առաջին անգամ Ադեմը բանակի տարիներին էր նկատել՝ երբ երեք կամ ավելի մարդիկ փոքր վայրում են քնում, ի վերջո նրանց շնչառությունը համաչափ է դառնում: Գուցե Աստված մեզ հուշում է՝ եթե դադարենք կռվել, ի վերջո կկարողանանք ներդաշնակ ապրել:

Նախկինում երբեք այդ մասին չէր մտածել, բայց միտքը դուր եկավ նրան: Բայց անգամ եթե ինչ-որ տեղ ներդաշնակություն կար, ինքը դրա մի մասը չէր: Այո՛, նա էլ բոլորի նման մեկն էր, ուրիշներից ո՛չ ավելի լավն էր, ո՛չ վատը, բայց իր սիրելի մարդկանց միշտ հիասթափեցնում էր: Ով գիտի՝ գուցե երեխաների համար ավելի լավ կլիներ, եթե նրանցից հեռու մնար: Իրեն նրանց ոտքերին փաթաթված կապիչ էր պատկերացնում:

Քունը չէր տանում. լուսաբացին տնից դուրս եկավ: Գիտեր՝ անմտություն է, բայց ամբողջ գումարը հետը վերցրեց: Հյուսիսային Լոնդոնը լիքն էր

թվայնացրել է 1915.info կայքը

գրպանահատներով ու գողերով, որ այդքան մեծ գումարի համար պատրաստ էին ողերը կոտրել: Երբ փողոցում անծանոթ մեկն էր անցնում, քայլերն արագացնում էր, ինքնապաշտպանական դիրք էր ընդունում, ձեռքերն ու ոտքերը սառչում էին: Վերջապես երբ հասավ թխվածքաբլիթների գործարան, իրեն թագավորի պես ընդունեցին:

Բոլորն արդեն գիտեին: Կեսօրին Թարրոքը եկավ շնորհավորելու ու մի խնդրանքով:

– Դե, հարսիկիդ գիտես,– ասաց Թարրոքը՝ ձայնն իջեցնելով անձնական թեմաներին համապատասխան շշնջոցի:– Վաղուց է՝ նոր խոհանոցի կահույքի համար կյանքս ուտում:

Թարրոքը անգլիական խոհանոցների մասին տեսություն ուներ: Ըստ նրա՝ Անգլիայում խոհանոցները դիտավորյալ էին այդքան փոքր ու դեպրեսիվ սարքում, որ բոլորը դուրս գան, շքեղ ռեստորաններում ուտեն: Ռեստորանի տերերից կաշառք վերցրած ճարտարապետների, քաղաքապետարանի աշխատակիցների, պատգամավորների ու անգամ արհմիութենականների մատն էր խառը այդ գործում: Երբ Թարրոքը սկսում էր այդ թեմայից խոսել, նրան լռեցնելն անհնար էր:

Ադեմը ժպտաց, չնայած որ հասկանում էր՝ եղբոր նպատակը նրանից հնարավորինս շատ փող վերցնելն էր, հետո դրա միայն մի մասը խոհանոցի համար օգտագործելը, մնացածն էլ՝ բանկ ներդնելը: Թարրոքը ժլատ էր, շատ էր սիրում փող կուտակել: Երիտասարդ տարիքում երկու եղբայրներին առատաձեռնորեն օգնում էր, դրա համար դժվար էր հավատալ՝ դա նույն մարդն է:

Երբ հայրը մահացավ, Թարրոքը Ադեմին ու Հալիլին խնամելու համար շատ էր աշխատել: Բայց տարիների

թվայնացրել է 1915.info կայքը

հետ ժլատացել էր, թերթերի զեղչերի կտրոններ էր հավաքում, անգամ ատամի մածուկի վերջին կաթիլը օգտագործելու համար մածուկի տուփի տակն էր կտրում, տաքացուցիչն էր անջատում, մի թեյը մի քանի անգամ էր եռացնում: Ամեն ինչ սկսել էր երկրորդ ձեռքից գնել, ընտանիքին արգելել էր իրեն առանց հարցնելու ինչ-որ բան գնել: Հարցնելիս էլ միշտ նույնն էր պատասխանում՝ ի՞նչ կարիք կա ծախս անելու:

– Դե, ի՞նչ ես ասում: Մի քիչ պարտք կտա՞ս:

Ադեմը հասկանում էր՝ ճիշտ ժամանակն է եղբորը իր երախտագիտությունը հայտնելու: Բայց միտքն ուրիշ տեղ էր: Թարըքի ու իր միջև հինգ տարվա տարբերություն կար:

«Մեր մանկության հետ կապված ավելի շատ բաներ է հիշում երևի»,- խոր հոգոց հանելով՝ մտածեց նա.

– Եղբա՛յր, մայրիկի մասին մտածո՞ւմ ես:

Հարցն այնքան անսպասելի էր Թարըքի համար, որ չիմացավ ինչ պատասխանել: Հոնքերի արանքի կնճիռը ձգվեց դեպի ճակատը, դեպի մաշկային հիվանդությունից մնացած սպիտակ հետքերը: Երբ կարողացավ խոսել, ձայնը խեղդված էր ու խիստ.

– Ինչո՞ւ ես հարցնում:

– Մեր մանկությունը չեմ կարողանում հիշել: Խելքս կթռցնեմ:

Ուրիշ ժամանակ Ադեմը քաջություն չէր ունենա այդպես խոսելու: Բայց հիմա, քանի որ եղբայրը եկել էր, բան էր խնդրում, ուզում էր օգտվել առիթից: Կարծում էր՝ արժանի է գումարի դիմաց մի քանի անմեղ հուշ լսել:

– Մեր մայրն անբարոյի մեկն էր,– ասաց Թարըքը:– Միակ բանն է, որ պետք է հիշես:

Լավ, բայց՝ ապրո՞ւմ է, թե՞ ոչ, ուրիշ երեխաներ ունեցե՞լ է, թե՞ ոչ, մեզ կարոտո՞ւմ է, թե՞ ոչ: Քեզ չի՞ հետաքրքրում:

թվայնացրել է 1915.info կայքը

Ադեմի լեզվի ծայրին էր հարցը: Բայց դրա փոխարեն թավ ձայնով ասաց.

– Այս երեկո կգամ ձեզ մոտ, փողը կթողնեմ: Հարսիկիս ասա՝ կունենա իր ուզած խոհանոցը:

Բայց մտածում էր՝ երեկոյան նորից խաղալու կգնա, ու եթե հաղթի, գումարը կկրկնապատկվի: Այդ ժամանակ ոչ միայն Թարըքին, այլև ուրիշներին էլ կարող էր գումար տալ. այն էլ՝ անվերադարձ:

Այդ ազնիվ նպատակով գործի անցած Ադեմը վերադարձավ Արևելյան Լոնդոնում գտնվող նկուղ: Այնտեղ նորից կապուտաչյա Ռոքսանային տեսավ:

Նորից նայեց՝ ինչպես է գնդակը պտտվում անիվի շուրջ: Նորից մեծ գումար դրեց: Ու կորցրեց: Ամեն ինչ:

Վերջապես եկավ: Հարրի Հուդինիի պասպառը: Ձեռնաշղթաներին ու ոտնաշղթաներին մարտահրավեր նետող մարդը: Իհարկե՝ նաև բանտերին: Հին նկարներից մեկն էր: Սև-սպիտակ ու մոխրագույն: Հուդինին երիտասարդ տարիքում լայն ճակատով ու արտահայտիչ աչքերով, բարձրահասակ երիտասարդ էր: Սմոքինգի թևերը բարձրացրած՝ դասակների վեց ձեռնաշղթաներն էր ցույց տալիս: Կարծես երազից էր արթնանում:

Պատից եմ կախում: Տեսնելուն պես Փախածը ժպտում է: Բանտակցիս անունը Պատրիկ է, բայց նրան ոչ ոք այդպես չի դիմում, անգամ ինքը: Ամեն անգամ, երբ ինչ-որ բան է գրավում ուշադրությունը, ասում է՝ վայ, ինչ փախածն է: Դրա համար էլ կեղծանունը Փախած էր:

Փախածն ինձնից փոքր էր, մի քիչ էլ կարճ: Գունատ, գագաթից ճաղատացող, մուգ դարչնագույն աչքեր, հասպ

թվայնացրել է 1915.info կայքը

թարթիչներ ուներ: Դապապարկյալները, քանի փարեկան էլ որ լինեն, իրենց մայրերի համար միշտ անմեղ էին: Դե, վատ շրջապատ են ընկել: Իհարկե, հիմնականում դա անմտություն է: Բայց Փախածի համար այդպես էր: Երբ անմեղ երիտասարդ էր, սխալ մարդկանց հետ էր շփվել: Վատն այն է, որ նրանք փախել-փրկվել էին, իսկ Փախածը տասը տարով դատապարտվել էր: Այդպես է լինում: Սպորներին ոչինչ չի պատահում: Միայն սպոր ձևացողներն են բռնվում: Չեմ ասում՝ մեզ նմաններն ավելի լավն են: Երբեմն սպոր ձևանալը սպոր լինելուց ավելի վատ է:

Դրա մասին Փախածին չեմ ասել, բայց աչքերը Յունուսի աչքերի նման են: Երևի ամենաշատը եղբորս եմ կարոտում: Նրա համար չկարողացա լավ եղբայր լինել: Այնքան զբաղված էի սխալ բաների դեմ պայքարելով, որ այն ժամանակ, երբ ամենաշատն իմ կարիքն ուներ, նրա կողքին չեղա:

Յունուսը հիմա մեծ մարդ է: Տաղանդավոր երաժիշտ է: Այդպես են ասում: Տասներկու տարվա մեջ միայն երկու անգամ է եկել ինձ տեսնելու: Էման երբեմն գալիս է այցելության, չնայած վերջերս նա էլ շատ չի գալիս: Եկած ժամանակ ասում է՝ ինչքան է կարոտել, ինչքան է խղճում ինձ ու ինչքան է ատում, հետո գնում է:

Իսկ Յունուսը չի գալիս: Ինչպես միշտ, մի կողմ է քաշվում: Էմայի ամենասուր խոսքերն անգամ փոքր եղբորս բացակայության չափ չեն ցավեցնում: Երանի կարողանա ինձ ներել: Երանի հալվի սառույցը: Չեմ սպասում, որ սիրելու է ինձ: Դա սին երազանք կլիներ: Ուզում եմ՝ ինձ ների հանուն իրեն: Զայրույթը վնասակար է. մարդ քաղցկեղով կհիվանդանա: Ինձ նմանները սովոր են, բայց Յունուսն ավելի լավին է արժանի:

– Ո՞վ է այդ մարդը,– հարցնում է Փախածը՝ պատը ցույց տալով:

թվայնացրել է 1915.info կայքը

– Աճպարար Հուդինին: Հրաշալի մարդ էր: Աճպարարների աճպարարը:

– Լավ է:

– Բա, մի քանի համարների գաղտնիքը դեռ չի հայտնագործվել:

– Մարդկանց կարողանո՞ւմ է վերացնել:

– Տո փղերին էլ է կարողանում վերացնել:

– Վայ, է, ինչ փախածն է:

Կեսօրը Հուդինիից խոսելով անցկացրինք, գլուխներս պատմություններով լցրեցինք. Փախածինը միաժամանակ նաև թմրանյութերով էր լցված:

Ես չեմ սիրում: Մեկ-մեկ ծխում եմ, բայց էդքան բան: Հաբեր, կոկաին, հերոին չեմ անում: Երբեք չեմ փորձել, չեմ էլ փորձի: Այդ ճամփով գնալու մտադրություն չունեմ: Ամեն անգամ, որ Փախածին ասում եմ՝ թո՛ղ էդ աղբը, բութ մատը բերանն է դնում ու ծծելով ասում.

– Ահ, մա՛մ, շնորհակալ եմ, որ մտածում ես իմ մասին:

– Սո՛ւս:

Հարաճճի երեխայի նման ժպտում է: Բայց չեմ պնդում: Գիտեր՝ միակն է, ով կարող է այդպես խոսել ինձ հետ, դրա համար էլ գիտեր համբերությանս սահմանները: Երեկոյան սպուգումից կարճ ժամանակ առաջ հսկիչ Մարտինը եկավ մի կարճահասակ մարդու հետ, որին առաջին անգամ էինք տեսնում: Կզակին փոսիկ կար, իսկ մազերն այնքան սև էին, որ կարծեցի՝ ներկած են:

– Սպա Էնդրյուն այսօր է սկսել աշխատել: Բանտախցերով ենք անցնում:

Մարտինը շուտով թոշակի էր անցնելու: Պարզ է՝ ուզում էր վստահ լինել, որ հարգում ենք նրան փոխարինելու եկած այդ երիտասարդին: Ճնշող լռություն տիրեց՝ կարծես չգիտեինք ինչ ասել: Հանկարծ Մարտինը պասպառը տեսավ:

թվայնացրել է 1915.info կայքը

– Ո՞ւմ խելքին է փչել,– մռթմռթաց նա: Առանց մեր պապասխանին սպասելու՝ նայեց ինձ:– Ալեքս, քո միտքն է, չէ՞:

Բայց այդ պասպառը նախկինում տեսել էր: Առանց նրա հասպասման չէի կարող գնել: Բայց հիմա իրեն այնպես էր պահում, կարծես առաջին անգամ էր տեսնում: Ուզում էր նորեկին ցույց տալ՝ չնայած որ թոշակի է անցնում, դեռ աչքից ոչ մի բան բաց չի թողնում: Այսքան տարի է՝ բանտախցերի պատերին տարբեր նկարներ է տեսել՝ կանանց, ընտանիքների, կրոնական խորհրդանիշների, կինոասպղերի, ֆուտբոլիստների, «Ֆլեյբոյի» աղջիկների, բայց Հուդինիին առաջին անգամ էր տեսնում:

– Խելքդ թռցնո՞ւմ ես,– ծիծաղելով ասաց Մարտինը:

– Երևի,– ասացի ես:

Սպա Էնդրյուն մոտեցավ ու հետք փնտրող որսաշան պես օդը հոտոտեց.– Կամ որոշել է փախչել: Հուդինիի մասնագիտական ոլորտը ձեռնաշղթաներից ազատվելն էր:

Նրա խոսքն ինձ դուր չեկավ: Ճակատիս երակը թեթևակի սեղմվեց.

– Ինչո՞ւ պետք է փախչեմ,– ասացի ես:

– Իսկապես, ինչո՞ւ,– ասաց Մարտինը խիստ հայացքով: Հետո, նոր աշխատակցին նայելով, ասաց.– Մեր Ալեքսը 78-ից այստեղ է: Երկու տարի է մնացել ազատվելուն:

– Մի տարի, տասը ամիս,– ուղղեցի ես:

– Այո՛:

Ինչպես միշտ, Մարտինի դեմքին երկու հակասող արտահայտություն տեսա՝ զզվանքի ու հարգանքի խառնուրդ: Առաջինը՝ կյանքում ամենասարսափելի մեղքը գործած ու Աստծո տված շանսը կորցրած մարդու հանդեպ ունեցած քամահրանքը: Եկածս օրվանից այդպես էր

թվայնացրել է 1915.info կայքը

ու չէր անցել: Իսկ հարգանքը շատ հեգո ու լրիվ անսպասելի կերպով եկավ: Իմ ու Մարկինի պատմությունները նման էին իրար:

Բայց Էնդրյուի ձեռքերը քոր էին գալիս.

– Գիտեմ քո գործը,– սառը ձայնով ասաց նա:– Թերթում եմ կարդացել: Մտածում էի՝ մարդ ինչպես կարող է սեփական մոր հետ այդպես վարվել:

Երևի տարեկից կլինեինք: Բայց դա միակ բանը չէր՝ նույն խմորից էինք: Դեռահասության տարիներին նույն սրճարաններում ենք ժամանակ անցկացրել, գուցե նույն աղջիկների հետ ենք համբուրվել: Կարծես կոտրված հայելու նայեի: Եթե ուրիշ ճանապարհով գնայի, ես էլ կարող էի Էնդրյու դառնալ: Եվ նա կարող էր ինձ պես դատապարտյալ լինել, եթե վերջին պահին ճիշտ որոշում չկայացներ:

– Տասնչորս տարի, հա՞: Ափսոս,– ասաց նա:

Մարկինը լարված հազաց: Մարդուն չես կարող իր հանցագործության մասին հենց այնպես հիշեցնել՝ կարծես դեսից-դենից խոսես: Նման բաներն ասվում են, միայն երբ դանակը ոսկորին է հասնում: Հակառակ դեպքում ոչ ոք ոչ ոքի երեկվա օրը չի հիշեցնում: Բանտարկյալն առանց այդ էլ անցյալին է դատապարտված:

– Ալեքսը վերջին մի քանի տարում լուրջ փոփոխություններ է գրանցել,– միջամտեց Մարկինը ուղեվարի նման:– Դժվար փուլերով է անցել, բայց հիմա լավանում է:

Սիրելի՛ Մարկին, ինչպիսի բարյացակամություն: Ճիշտ է, բախտս բերել է: Բայց նա էլ, Փախածն էլ, մորս ուրվականն էլ շատ լավ գիտեին, ես դեռ նույն տեղում եմ՝ դժոխքում:

Այդտեղ սարսափելի համբավ ունեի: Դեռ ունեմ: Չէին կարողանում հասկանալ՝ ինձ ինչը որ պահին կարող է

թվայնացրել է 1915.info կայքը

ափերից հանել: Շատ ժամանակ ես էլ չէի հասկանում: Երբ հավասարակշռությունս կորցնում էի, ագրեսիվ էի դառնում: Զախ բռունցքս աղյուսի նման պինդ էր: Մնում-մնում՝ պայթում էի: Այդպիսի նոպաներ միայն կոկաինից կախվածություն ունեցողների հետ էր պատահում: Երբ թմրանյութ էին ուզում ու չէին գտնում, խելքները թռցնում էին: Բայց ես կախվածություն էլ չունեի: Երևի դա ինձ ավելի սարսափելի էր դարձնում: Այդպիսին էր իմ սթափ հոգեվիճակը: Ինձ վնասում էր: Գլխիս: Միջի եղածները դուրս չէին գալիս:

Ափերիս մեջ ծխախոտ էի հանգցնում: Մաշկս ուռած աչքերի պես փքվում էր: Ոտքերս էի կտրտում: Ոտքերին շատ միս կա՝ ազդրեր, ծնկներ, սրունքներ: Ընտրությունը մեծ է: Բանտում ածելին ոսկու գին ունի, բայց գտնելն անհնար չէ:

– Ժամանակի ընթացքում կծանոթանաք,– ասաց Մարտինը:

– Վստահ եմ,– ասաց սպա Էնդրյուն խորամանկ հայացքով:

Փախածն անհանգիստ հետևեց լարվածությանը: Հասկանում էր՝ ինչ է կատարվում: Նախկինում էլ էր նման բաներ տեսել: Երբեմն հսկիչը մեկին չի հավանում, ու վերջ: Եթե սկիզբը վատ է լինում, հարաբերությունն էլ երբեք չի ուղղվի:

Մարտինն իրավիճակը շտկելու համար նոր քայլ արեց.

– Ալեքսը բռնցքամարտիկ է: Մեր սպորտսմենն է: Դպրոցում մեդալ է շահել:

Ինձ պաշտպանելու համար էր ասում, ինչը և՛ խղճահարություն էր առաջացնում, և՛ ծիծաղ, բայց ոչ ոք չժպտաց: Մարտինին ուզում էի շնորհակալություն հայտնել ինձ պաշտպանելու համար, բայց աչքս երիտասարդ աշխատակցից չկտրեցի, թե չէ սխալ թույլ կտայի:

թվայնացրել է 1915.info կայքը

Պեկոք է հասկանար՝ ինձ հետ այդքան էլ հեշտ չէ: Ամենամեծ վախկոտությունս սրանից տարիներ առաջ էի արել: Թլփատման արարողությունից փախել, ծառն էի բարձրացել: Երեխա էի: Բան չստացվեց: Այդ օրվանից հետո երբեք չեմ փախել: Միշտ առերեսվել եմ: Իմ վախերի, թշնամուս, ամբողջ աշխարհի հետ: Սխալներ եմ գործել: Այն էլ ինչպիսի լուրջ սխալներ:

Բայց չեմ փախել: Դրա համար էլ չնահանջեցի, աչքերս չթարթեցի. երևի նույն գրողի տարած պատճառով աչքերս հառեցի ուղիղ սպա Էնդրյուի աչքերին:

Հետո գնացին:

* * *

Կեսգիշերին քնից վեր թռա: Սկզբում կարծեցի՝ մայրս է եկել այցելության: Ինչքան էլ փորձեցի, չզգացի նրա ներկայությունը: Ո՛չ խշխշոց, ո՛չ փայլ չկար: Միայն խռխռացնող, փռող, ապամները կրճտացնող, հոգիների հետ կռվող Փախածին էի լսում: Անկողնում ուղիղ նստելով՝ նայեցի շուրջս, որ հասկանամ՝ ինչից եմ արթնացել: Հետո տեսա:

Հատակին մի թուղթ կար: Մեկը ճաղերից ներս էր գցել: Միջանցքից ընկնող թույլ դեղին լույսի տակ թուղթը վերցրի ու հասկացա՝ ինչ էր: Թերթից մի կտոր էր, 1978 թվականից:

THE TIMES – 1 դեկտեմբերի, 1978

Երիտասարդը հանուն «նամուսի» սպանել է մորը

«Երեկ Հյուսիսային Լոնդոնում տեղի է ունեցել սպանություն հանուն պատվի. թուրք-քրդական արմատներով 15 տարեկան երեխան դանակահարելով սպանել է մորը: Իսքենդեր Թոփրաքը Փեմբե Թոփրաքին դանակահարել է Հաքնիում՝ Լավենդեր փողոցի իրենց տան

թվայնացրել է 1915.info կայքը

առաջ: Ըստ վարկածներից մեկի՝ 32 տարեկան երեք երեխայի 32-ամյա մայրն արտաամուսնական կապի մեջ է եղել: Ըստ հարևանների՝ Ադեմ և Փեմբե Թոփրաքները դեռ ամուսնացած էին, բայց առանձին էին ապրում, իսկ ընտանիքին պահելու պատասխանատվությունը Փեմբե Թոփրաքի ուսերին էր: Մի ականատեսի պատմածի համաձայն՝ եթե հայրը չկա, մոր պատիվը պահելու գործը մեծ որդուն է բաժին հասնում, դա էլ Իսքենդերն էր:

Ոստիկանությունն այժմ փորձում է պարզել՝ հետախուզման մեջ գտնվող Իսքենդեր Թոփրաքը միայնա՞կ է գործել, թե՞ ընտանիքի անդամների կողմից որպես գործիք է օգտագործվել: Սքոթլանդ Յարդի քննիչի՝ «Թայմսի» լրագրողին տված տեղեկությունների համաձայն՝ սա Անգլիայում ու Եվրոպայում տեղի ունեցած ո՛չ առաջին, ո՛չ էլ վերջին դեպքն է: Լրագրողը տեղեկացրել է, որ այս պահին պատվախնդրության հողի վրա կատարված 150 սպանության դեպք է հետաքննվում: Ցավոք սրտի, իրական թվերը կարող են ավելի մեծ լինել, որովհետև ոչ բոլոր դեպքերն են փոխանցվում ոստիկանությանը:

Ընտանիքների անդամները չեն ուզում իրենց տեղեկությունները փոխանցել պետական մարմիններին: Ոստիկանության համար կարևոր տեղեկությունները կոծկողները հիմնականում զոհերի ամենամտերիմներն են լինում:

Լրագրողն ավելացրեց՝ քանի դեռ որոշ հասարակություններում ընտանիքի պատիվն ավելի կարևոր է անհատների երջանկությունից ու բարօրությունից, նման դեպքերը ժամանակակից հասարակության մեջ քաղցկեղի պես տարածում են գտնելու»:

Ձեռքերս դողում են: Ծխախոտ եմ ուզում: Կամ խմիչք: Շատ ուժեղ, մաքուր ալկոհոլ: Հայրս չգիտեր, բայց ես

թվայնացրել է 1915.info կայքը

ընկերներիս հետ երբեմն գինի էի խմում: Բայց երբեք վիսկի չէինք խմում: Դա լրիվ ուրիշ կինոյից էր: Առաջին անգամ այս հարկի տակ եմ վիսկի փորձել: Եթե ձևերն իմանաս, ամեն ինչ կգտնես բանտում:

Թերթի կտորը ծալում եմ, հետո նորից ծալում: Մի ուղղանկյուն, հետո՝ քառանկյուն, հետո՝ եռանկյուն... Անկյունները միացնելով՝ բաժանում եմ եռանկյունների: Թղթե նավակ է դառնում: Դնում եմ հատակին: Ոչ ջուր կա, որ լողա, ոչ էլ քամի, որ առագաստները բացի: Կարծես բետոնից լինի սարքած: Ոչ մի տեղ չի գնում: Ճիշտ կրծքիս թառած ցավի պես:

Իսքենդեր Թոփրաք
Շրուսբերիի բանտ, 1990

թվայնացրել է 1915.info կայքը

Ռոքսանա

6 դեկտեմբերի, 1977
Լոնդոն

Բեմի հետևում կուլիսներ կային: Չնայած դրան ոչ ոք կուլիս չէր ասում բացի Ռոքսանայից: Ծխախոտի, դիմափոշու, օծանելիքի ու քրտինքի հոտով ցուրտ ու նեղլիկ հանդերձարան էր. միայն ինքն էր այն արտիստների համար բեմ բարձրանալուց առաջ հանգստանալու տարածք համարում: Դա չէր նշանակում, թե ինքը արտիստ է: Երբ հարցնում էին, այլ բառեր էր օգտագործում իր մասնագիտությունը նկարագրելու համար՝ դերասանուհի, պարուհի, զվարճանքի ոլորտի աշխատող, անգամ էկզոտիկ պարուհի, բայց ոչ երբեք՝ արտիստ: Իր համար յուրահատուկ ու հարգալից այդ բառը չէր համարձակվում օգտագործել: Քանի որ Ռոքսանան այս աշխարհում անցկացրած իր քսանչորս տարիների ընթացքում իրեն ո՛չ յուրահատուկ, ո՛չ էլ հարգանքի արժանի չէր համարել:

Գրեթե կեսգիշեր էր: Տասնհինգ րոպե անց բեմ բարձրանալու ժամն էր: Բեմական զգեստը ուղղեց ու կրծքավանդակին ոսկեգույն փայլ լցրեց: Առաջին արարում սամբա էր պարելու: Շքեղ մանուշակագույն փետուրներով զարդարված թագ, ուլունքներով ու փայլերով զարդարված բիկինի, արծաթագույն շորտ, տակից էլ՝ փոքր տանգա ներքնազգեստ, որը շոուի վերջում պետք է

թվայնացրել է 1915.info կայքը

երևար: Չնայած շքեղ հագուստին՝ միայն շրթներկ էր քսել: Կոստյումի ու դեմքի գունատությունն այնքան էր աչքի զարնում, որ կարծես պատրաստվում էր հարմար պահի ջինսե տաբատ ու լայն սվիտեր հագնել, առանց որևէ մեկի աչքին զարնելու՝ հետևի դռնից դուրս գալ ու գնալ:

Բայց Ռոքսանան երբեք շոուի չէր մասնակցել: Տարվա տասներկու ամիսը շաբաթվա մեջ չորս գիշեր այդտեղ էր: Ինչպես միշտ, բացեց շպարի տուփը, բամբակներն ու տարբեր չափերի վրձիններն ուղղեց: Տուփը հին էր, ով գիտի՝ քանի կին էր օգտագործել: Քսուքները հարմարեցված էին ամեն տեսակի մաշկի համար՝ յուղոտից մինչև չոր, երիտասարդից մինչև ծեր: Բարի տնօրենը խոստացել էր նոր հավաքածու գնել՝ շուկայի վերջին մոդելի թարթիչներ, գունային բազմազան ընտրությամբ ստվերաներկեր, բայց ձայն չէր հանում: Սպունգներն արդեն սունկի գույն էին ստացել, կարմրաներկը կպել էր վրձիններին ու չորացել, պնդացել էր: Վերջացող ստվերաներկերի պնակները փոս ընկած աչքերի նման էին: Ռոքսանայի սիրած գույներից ո՛չ փիրուզագույնն էր մնացել, ո՛չ արծաթագույնը, ո՛չ ոսկեգույնը: Նա էլ ստիպված մանուշակագույնն ու վարդագույնն օգտագործեց: Նորից:

Չէր սիրում դեմքն այդքան ներկել: Սկզբում մի անգամ առանց շպարի դուրս եկավ բեմ: Բայց ուժեղ լույսի տակ ուրվականի էր նմանվել ու մի լավ նկատողություն ստացել տնօրենից: Մարդը հասկացել էր՝ եթե այդպես լինի, հաճախորդներ չեն ունենա:

– Գումարի դիմաց պահանջելը այցելուների բնական պահանջն է:

Այդ որջում մի տարուց ավելի անցկացնելուց հետո Ռոքսանան էլ էր հասկացել՝ ոչ ոք չի ուզում սամբայի

թվայնացրել է 1915.info կայքը

ինչյունների ներքո կոտրատվող գունատ ուրվական տեսնել: Արտահայտիչ այտոսկրերին կարմրաներկ քսելիս ինքն իրեն աչքով արեց հայելու մեջ: Միևնույն է, ինքն էր իր լավագույն ընկերը: Ինքն իրեն այնպես էր հասկանում, ինչպես ոչ ոք՝ ցանկությունները, զղջումները, անհանգստությունները: Երբեմն մայր, երբեմն ճամփակից էր դառնում, ինքն իրեն սփոփում էր:

Շուրթերը վարդագույն, փայլուն շրթներկով ներկեց, վրայից մի շերտ փայլ քսեց: Վերջում կուրծքը վեր հրեց, այնպես, որ ժանեկավոր կրծկալի մեջ մեծ ու լիքը երևան: Անգլիայում ոչ ոք «կուրծք» չէր ասում: Դրա փոխարեն մեկը մյուսից ծիծաղելի անուններ էին օգտագործում՝ գնդակներ, ծիծիկներ, զույգեր, բոմբեր, սեխեր, պնդուկներ, դոշեր, պատշգամբ: Ռոքսանան աշխատասեր աշակերտի պես երբեմն հայելու առաջ կրկնում էր այդ բառերը:

Մի անգամ պահպանողականների կուսակցության պատգամավորի համար էր պարել, որը, ասում էին, մորթիների արգելված վաճառքով է զբաղվում: Տարեց պարոնը նրան ասել էր՝ թասերդ թա՛փ տուր տեսնեմ, սիրո՛ւնս:

Ռոքսանային մի քանի վայրկյան պետք եղավ հասկանալու՝ ինչ նկատի ունի: Մի կողմից չէր հասկանում՝ ինչու են անգլիացիները սեռականությունից այդքան անուղղակի խոսում, մյուս կողմից էլ հասկանում էր: Հետո էլ ինքն իրեն ասում էր ես էի մնացել պակաս՝ ինչ-որ բան ասեմ այդ մասին: Ի վերջո, Ռոքսանան (կամ ինչպես ասում էին՝ Ռոքսին, Ռոքսանը կամ էլ Ռոքսելանը) նրա իսկական անունը չէր: Երբ տասնվեց տարեկան էր, ինքն էր իրեն այդ անունը տվել:

– Գրավիչ պարուհու համար կատարյալ անուն է,– մռթմռթաց նա ինքն իրեն:

թվայնացրել է 1915.info կայքը

Տարիների ընթացքում նրա անգլերենը շատ էր լավացել, բայց համառ խոսվածքը դեռ չէր լքում նրան: Երբեմն «ռ»-երը շատ կոշտ էր արտաբերում, «ու»-երը երկարացնում էր, «դաբլյուի» փոխարեն «վ» էր ասում, չնայած որ գիտեր տարբերությունը: Եթե չէր կարողանում դրանից ազատվել, ավելի լավ էր՝ այն իր այցեքարտը դարձներ: Խոսում էր այնպես, ինչպես ռուսները կխոսեին անգլերեն: Միևնույն է, մարդկանց հետ ծանոթանալիս բոլորին ասում էր՝ ռուս է:

Բայց բուլղարուհի էր: Սակայն Անգլիայում, անգամ Լոնդոնում, ուր մարդիկ տարատեսակ լեզուներով ու խոսվածքներով էին խոսում, Բուլղարիայի մասին ոչինչ չգիտեին: Այն բալկանյան փոքրիկ երկրներից մեկն էր... Անգլիացիները Բալկաններով հետաքրքրված էին ոչ այնքան որպես աշխարհագրական տարածք, որքան որպես կոնցեպտ: Բալկանները նրանց համար հազար ու մի կտորից բաղկացած, անսովոր ու խորհրդավոր անուններով գլուխկոտրուկ էր: Անգլիացիները, հատկապես նրանք, ովքեր մերկապարի ակումբներ էին հաճախում, ռումինացիներին հունգարացիների, հարավսլավացիներին ալբանացիների հետ էին խառնում, իսկ Մոնտենեգրոյի աշխարհագրական դիրքի մասին անգամ գաղափար չունեին:

Եթե ասեր, որ բուլղարուհի է, գիտեր՝ միայն քաղաքավարի ժպտալու էին, ու թեման փակվելու էր: Մինչդեռ երբ ասում էր՝ Ռուսաստանում է ծնվել-մեծացել, հարցերի տարափ էր տեղում: Դոկտոր Ժիվագոյի երկրից լինելը հետաքրքիր էր, գրավիչ ու ռոմանտիկ: Մարդիկ առաջինը մեծ փաթիլներով թափվող ձյան, վոդկայի, խավիարի, սեքսուալ ԿԳԲ-ի լրտեսների ու սառած լճերի վրա չմուշկներով սահող բարձրահասակ ու գրավիչ մոսկվացիներին էին պատկերացնում:

թվայնացրել է 1915.info կայքը

Որոշ մարդիկ իրենք էին իրենց ստեղծում: Ռոքսանան էլ էր այդպես: Մի անուն, պատկանելություն, անցյալ, ապագա ու երևակայական կյանքի պատմություն էր հյուսել իր համար: Նրա իրականությունը հին օրերում կանանց կրած երկար շրջազգեստների շերտերում չէր թաքնված: Նա կազմված էր իր ստերից ու հնարանքներից: Ինքը Բուլղարիայի մի փոքրիկ գյուղաքաղաքից եկած աղջիկ էր, որը պնդում էր, թե ռուս է, ու Լոնդոնի մի բարում բրազիլական սամբա պարող մերկապարուհի էր:

Եթե Ռոքսանային այդպես տեսներ, ով գիտի՝ ինչքան կբարկանար հայրը: Տատկոն[1] միշտ ասում էր՝ ոչ ոքի իր պես չի սիրել: Ռոքսանան կարծում էր՝ դա լավ բան էր, բայց չէր ուզում, որ իրեն այդպես սիրեին:

Մայրը մեղմ, սիրալիր կին էր. լեզուների հանդեպ սերը իրեն փոխանցած ֆրանսերենի ուսուցչուհի էր: Ռոքսանան տասնհինգ տարեկան էր, երբ մայրը ավտովթարի ենթարկվեց ու ազդրի ձախողված վիրահատությունից հետո հաշմանդամ դարձավ:

Տատկոն մեղադրում էր բժիշկներին, հիվանդանոցին, կոմունիստական կուսակցությանը: Ռոքսանայի քույրն ամուսնացած էր և ընտանիք ուներ, իսկ եղբայրը նոր էր նշանվել: Մորը նայելը, նրան ամեն օր լողացնելը, հագցնելն ու կերակրելը Ռոքսանայի (այն ժամանակ՝ Ելենայի) ուսերին էր մնացել: Նա էլ սիրով էր անում գործերը: Նրա համար դժվար չէր ո՛չ տան գործերն անելը, ո՛չ էլ կնոջ վերքերին քսուք քսելը: Երբեմն նրա համար ֆրանսերեն գրքեր էր կարդում: Մայրը դեմքի նույն արտահայտությամբ էր լսում վեպերը՝ ուրախ լինեին, թե տխուր:

[1] Բուլղարերեն՝ հայրիկ:

թվայնացրել է 1915.info կայքը

Տատկոն միշտ էլ խմում էր, մի տարբերությամբ, որ վթարից հետո սկսեց տանն էլ խմել: Ռոքսանան սեղան էր գցում, միասին ճաշում էին: Տատկոն աղջկան խնդրում էր, որ մոր աթոռին նստի, նրա գիշերանոցը հագնի, նրա օծանելիքն օգտագործի, նրան փոխարինի, բոլոր առումներով: Ռոքսանան վստահ չէր՝ մայրը հասկանում է կատարվողը, թե ոչ:

Գիշերները մեզի, դեղի ու մենակության հոտով առանձին սենյակում, գլխին կանգնած սրբերի տխուր հայացքների ներքո անքուն պառկած լսո՞ւմ էր իրենց ձայները: Երբ Տատկոն հարբած գալիս, Ռոքսանայի դռանը նախ կամաց, հետո աստիճանաբար ավելի ուժեղ հարվածում, ասում էր՝ պետք է նրա հետ խոսի, չի կարող մինչև առավոտ սպասել, աղաչում էր, որ բացի գրողի տարած դուռը, հայհոյում, անիծում էր, երբ դուռը չէր բացվում, անհասկանալի բաներ էր խոսում, ի վերջո հոգնում-գնում կամ հենց դռան մոտ էլ քնում էր:

Հաջորդ օրը հայրն իր սովորական կյանքով էր ապրում, կարծես թե ոչինչ չէր հիշում: Հետո շաբաթներ շարունակ ամեն ինչ լավ էր լինում, նորից քաղաքավարի և ուրախ Տատկոն էր դառնում. Ռոքսանան կասկածում էր՝ գուցե սխալ էր հասկացել: Մինչև որ նորից գիշերը ուշ ժամին դռան հակառակ կողմում Տատկոյի շնչառությունը, դռան թակոցը, բռունցքների հարվածներն էր լսում: Այդ երկու տարվա ընթացքում Ռոքսանան հաճախ էր փակվում սենյակում, նորից ու նորից նույն վեպերը կարդում: Գրքերն էին օգնում նրան:

Տասնյոթ տարեկանը լրանալուց կարճ ժամանակ անց էլ չդիմացավ ու փախավ տնից: Ոչ միայն հորից և տունը գրաված մահից ու նեխահոտից էր փախչում, այլև դեպրեսիայից, առօրյայից ու արտասովոր կյանք վարելու սահմանափակումներից: Բոլորն ասում էին՝

թվայնացրել է 1915.info կայքը

մեծ երազանքներ ունեցող աղջիկների քիթը գետնին է քսվում:

Նույնիսկ եթե այդպես լիներ, եթե սայթաքեր ու ընկներ, ու երազանքները թիթեռի կյանքից էլ կարճ տևեին, մեկ է, արժի մագլցել: Մի գարնանային օր Ռոքսանան մոր ջրի բաժակը լցնելուց ու մազերը սանրելուց հետո ամաչելով ասաց, որ գնալու է: Վախենում էր, որ մայրն արտասվելու է, ասելու է՝ մի՛ գնա, չէր իմանում՝ ինչպես էր ասելու՝ ո՛չ: Մինչդեռ հակառակ իր սպասումներին՝ հիվանդ կնոջ դեմքը փայլեց: Կարծես ժպիտը մոռացած մարդու պես շարժեց դողացող շուրթերը ու ժպտալով ասաց.

– Գնա՛, Ելենա՛, Աստված ճամփադ բաց պահի, չեդո մոյո[1]:

Սոֆիան մեծ ու խճճված քաղաք էր, բայց ո՛չ նրա մեծությունը, ո՛չ էլ շքեղությունը Ռոքսանային չէին վախեցնում: Առաջին ամիսները տարբեր մարդկանց մոտ անցկացրեց. հեռու բարեկամի, ընկերոջ ընկերոջ: Բազմաթիվ աշխատանքների համար դիմեց, մերժվեց: 1971 թվականին երիտասարդ ու աշխատունակ մարդիկ շատ էին: Մոր ու հոր կյանքից ավելի բարեկեցիկ կյանքի հույսով քաղաք եկած գյուղի երեխաներ էին մեծ մասը: Չեխոսլովակիայում երեք տարի առաջ տեղի ունեցած Պրահայի գարունը ամբողջ Բալկանների պես Բուլղարիայում էլ էր հույսի շորշոփներ արթնացրել: Ի հակադարձություն դրա՝ ԲԿԿ[2]-ն մեծացրել էր հասարակության վրա ճնշումը: Կուսակցությունը երդվել էր ապահովել ժողովրդի մաքսիմալ միասնականությունն ու կայունությունը:

Այս խոսքը նշանակում էր հավատարմություն Սովետմիությանը և անհանդուրժողականություն ընդդիմության

[1] Բուլղարերեն՝ երեխաս, զավակս:
[2] Բուլղարիայի կոմունիստական կուսակցություն:

թվայնացրել է 1915.info կայքը

հանդեպ, ինչն էլ իր հերթին նշանակում էր, որ աշխատանքի հնարավորությունները սահմանափակվելու էին:

Ամիսներ անց ծանոթներից մեկը նրան հարգարժան փիլիսոփայի, հայտնի ինտելեկտուալ մեկի մասին պատմեց: Նա նոր գրքի վրա էր աշխատում ու օգնական էր փնտրում: Բավականաչափ աշխատավարձի, ուտելիքի ու մնալու տեղի մասին էր խոսքը:

Հաջորդ օրը Ռոքսանան գնաց նշված հասցեում՝ Գեորգի Դիմիտրով պողոտայում գտնվող արևոտ բնակարանը: Տան պատերի գրապահարանները հատակից մինչև առաստաղ էին ձգվում, բոլոր դարակները լեփ-լեցուն էին գրքերով ու հանրագիտարաններով:

Սենյակներում ու միջանցքներում, ամեն սեղանի ու բազմոցի վրա և անգամ խոհանոցում գրքեր, ամսագրեր ու թղթապանակներ էին՝ փլված աշտարակների պես ցաքուցրիվ: Ի տարբերություն թափթփվածությանն ու օդում կախված ծխախոտի հոտին՝ տունը հրապուրիչ էր: Ռոքսանան ոգևորված ներկայացավ: Փիլիսոփան լայն դեմք ու լայն ճակատ ուներ. ճերմակած մազերը առյուծի բաշ էին հիշեցնում: Անհնար էր գուշակել տարիքը: Ռոքսանան ինքնավստահ խոսեց սովորելու հանդեպ ունեցած սիրուց ու թե ինչքան է գրքեր սիրում: Ինքն էլ չգիտեր, որ կարող է այդքան ինքնավստահ լինել:

Երբ վերջացրեց, մարդն ասաց.

– Շատ լավ է, ապրե՛ս: Հիմա կարո՞ղ եք բարձրացնել ձեր շրջազգեստը, խնդրեմ:

Ռոքսնաան ծիծաղեց: Այնքան հանգիստ էր ասել, կարծես սեղանից աղ էր ուզում: Երևի կատակ էր անում: Ո՛չ հանդգնություն էր լսվում ձայնի մեջ, ո՛չ էլ հայացքի մեջ՝ լկտիություն: Ի տարբերություն Տատկոյի լկտի ու ձեռնոց նետող պահվածքի՝ այդ մարդը ջենթլմեն էր, քաղաքավարի ու կիրթ:

թվայնացրել է 1915.info կայքը

– Ցավոք սրտի, ամբողջ օրս չեմ կարող այս հանդիպմանը տրամադրել, օրիո՛րդ: Եթե բարեհաճեք ու շրջազգեստը բարձրացնեք, երկուսս էլ ժամանակ կշահենք:

Ռոքսանան հիպնոսացածի պես արեց՝ ինչ ասում էր. շրջազգեստը բարձրացրեց մինչև ծնկները:

– Մի քիչ էլ վեր, խնդրում եմ:

Ռոքսանան կարմրելով մինչև գոտկատեղ բարձրացրեց, երկար ոտքերը ցույց տվեց:

– Հիմա կշրջվե՞ք, խնդրեմ:

Դա ավելի ստորացուցիչ էր, բայց նորից հնազանդվեց: Ընդամենը մի քանի վայրկյան էր, բայց նրան մի հավերժություն թվաց: Մարդը ո՛չ տեղից վեր կացավ, ո՛չ էլ նրան ձեռք տվեց:

– Լավ, վաղը առավոտյան սպասում եմ,– ասաց փիլիսոփան:– Ժամը ուղիղ իննին: Ճամպրուկո՛վ եկեք: Աշխատանքի եք ընդունվել:

* * *

Առաջին գիշերն իրար հետ անցկացնելուց հետո, երբ հասկացավ՝ Ռոքսանան կույս է, փիլիսոփան զարմացավ: Ե՛վ զարմացավ, և՛ զայրացավ:

– Ինչո՞ւ չասացիր,– ասաց նա առանց նրա դեմքին նայելու:– Ես չեմ սիրում կույսերին: Պահանջկոտ, կամակոր ու երեսառած են լինում: Կարծում են՝ քեզ մի մեծ նվեր են արել ու երախտագիտություն են ակնկալում:

Ռոքսանան ուզում էր մի բան ասել, բայց չարեց:

– Հնուց ի վեր կանայք, իրենց մարմիններն օգտագործելով, խաբում են տղամարդկանց,– ասաց փիլիսոփան:– Սկզբում կուսությունն են օգտագործում, հետո հղիությունը, երբ երեխաները ծնվում են, նրանց

թվայնացրել է 1915.info կայքը

են օգտագործում ամուսնուն թակարդը գցելու համար: Բայց ես այդ խաղերին չեմ խաբվի, իմացա՛ծ լինես: Ես երեկվա երեխան չեմ:

Հաջորդ օրը սառն էր ու իրեն հեռու էր պահում: Ամբողջ օրը լուռ աշխատեցին: Նա, մի անկյունում նստած, նյարդային ինչ-որ բաներ էր գրում, իսկ Ռոքսանան մյուս կողմում այդ նշումներն էր մաքրագրում: Կեսօրից հետո նրան մի բաժակ թեյ ու մի քիչ թխվածքաբլիթ բերեց, բայց նա դրանց ձեռք չտվեց: Երրորդ օրը ուրիշ էր. կարծես մի անգամ էլ էր մտածել ու նախկինի պես մեղմ ու քաղաքավարի էր դարձել:

Հաջորդ տասը ամիսները Ռոքսանան Գեորգի Դիմիտրով պողոտայի՝ գրամեքենայի ու ծխախոտի, թանաքի ու սեքսի հոտով բնակարանում ապրեց փիլիսոփայի հետ: Կարծես ոչ թե նրա վարձած օգնականը լիներ, այլ տանտիկինը՝ տունը հուշանվերներով էր զարդարել: Հորը նամակ էր գրել, ասել, որ չանհանգստանա, որ լավ է ու շուտով մոր համար գումար է ուղարկելու: Հասցեն գրել էր, որ պատասխան նամակ ուղարկի: Բայց հորից պատասխան չեկավ: Անգամ այն բանից հետո, երբ ամեն ամիս աշխատավարձի կեսը նրան էր ուղարկում:

Փիլիսոփան հոռետես էր, բայց տանել չէր կարողանում, երբ ուրիշները, հատկապես կանայք մելանխոլիկ էին լինում: Ուզում էր Ռոքսանային միշտ ուրախ տեսնել: Ամեն անգամ, երբ աղջիկը մի քիչ մտածում, բողոքում կամ արտասվում էր, անմիջապես դեմքը մթնում էր: Հասկանում էր՝ երբ Ռոքսանան ձևացնում էր, թե ուրախ է, դժգոհ դեմք էր ընդունում: Ռոքսանայի համար ամենադժվարը միշտ ուրախ լինելն էր: Ո՛չ ծանրաբեռնվածությունը, ո՛չ բնակարանում փակված լինելը, ո՛չ անտանելի մենակությունը այդ

թվայնացրել է 1915.info կայքը

պարտավորված երջանկության չափ չէին հոգնեցնում իրեն:

Անմիջապես նկատեց, որ փիլիսոփան հետաքրքրությունը կորցրել էր, որովհետև անգամ չէր էլ փորձում թաքցնել: Հիասթափությունը աչքերում կարդացվում էր: Ռոքսանայից ձանձրացել էր, ուրիշ օգնական, ավելի հումորով ու ավելի սիրուն ոտքերով մեկին էր ուզում: Այդ ամենն ասվել ու հասկացվել էր առանց բառերի: Ռոքսանան ճամպրուկն ու հուշանվերները վերցրեց ու հեռացավ:

Անցավ մի տարի: Լավ-վատ՝ կյանքը թողեց հետևում, ճիշտ այնպես, ինչպես մորն ու իր տունն էր լքել:

Հաջորդ տարին դժվար էր: Դեռ բնից չցատկած՝ ընկել էր: Այդ ժամանակ մի անգլիացի գործարարի հետ ծանոթացավ, որը քաղաքում կարճ այցելության ժամանակ ուղեկցորդուհու էր փնտրում և իրեն տեսնելուն պես հավանել էր: Այդ շրջանում Բուլղարիայի կառավարությունը կարգավորում էր հարաբերությունները Արևմուտքի հետ, այդ պատճառով օտարերկրյա ներդնողները հաճախ էին այցելում քաղաք:

Ռոքսանան առաջինը ուշադրություն դարձրեց այն բանին, որ գործարարը խիստ մաքրասեր էր: Անգամ ջրի պակասի դեպքում էր ժամերով լողանում, ճամպրուկում պահած հասմիկի ու երիցուկի օճառով էր լվացվում: Ռոքսանային ասել էր, որ անշարժ գույքի ու շինարարության բիզնեսով է զբաղվում, բայց Ռոքսանան նրան երբեք աշխատելիս չէր տեսել ու կասկածում էր կառավարության հետ ունեցած գաղտնի կապերից: Ռոքսանային առաջինը նա էր անգլերեն բառեր սովորեցրել. դրանցից ոչ մեկը չէր կարող գրքերից սովորել:

Ռոքսանային սեքսուալ կրթություն էր տվել, սովորեցրել ինչն ինչպես ուզել: Սիրում էր, երբ անկողնում

թվայնացրել է 1915.info կայքը

իր հետ կոպիտ էին վարվում: Երբ Ռոքսանան նրա գնած մետաքսե շարֆով կապում էր բիզնեսմենի ձեռքերը, ասում էր՝ չարաճճի՛ տղա, թքում էր դեմքին: Նա էլ դժբախտ զոհի պես հոնգուր-հոնգուր արտասվում էր:

Երբեմն խաղի կանոնները փոխվում էին, ստորացվելու հերթը Ռոքսանային էր հասնում: Նա էր չարաճճի աղջիկ դառնում ու ապտակ ստանում:

Նույն մարդը Ռոքսանային սովորեցրել էր նաև ինքնավստահ լինել: Ասում էր՝ ամոթ է ուրիշների առաջ ինքդ քեզ գովելը, բայց երբ մենակ ես լինում՝ ինքդ քեզ հետ, իմացի՛ր արժեքդ ու թույլ մի՛ տուր, որ քեզ վիրավորեն:

Միասին գնացին Անգլիա: Ռոքսանայի անձնագիրը, ճանապարհորդության հետ կապված բոլոր փաստաթղթերը գործարարն էր կազմակերպել: Բեյքեր փողոցում մի փոքր բնակարան վարձեց նրա համար՝ կնոջից ու երեխաներից հեռու: Տան հատակը ճռճռում էր, խողովակներից աղմուկ էր գալիս, առաստաղը բորբոսնել էր, պահարանները ցեցոտել էին: Ռոքսանան ճաշ էր պատրաստում. եթե երեկոյան ընթրելու չէր գալիս, շատ էր տանջվում: Գուցե դա սեր չէր, բայց կյանքում առաջին անգամ էր սիրուն այդքան մոտ գտնվում:

1975 թվականի սեպտեմբերյան մի օր «Հիլթոն» հյուրանոցում մի ֆրանսիացի ներդնողի հետ հանդիպում ուներ: Ուզում էր, որ Ռոքսանան իր հետ գնա: Խցանումների պատճառով ուշացան հանդիպումից: Եթե հանդիպմանը տասը րոպե շուտ հասնեին, կհայտնվեին հյուրանոցի լոբբի բարում, ուր ԻՀԲ[1]-ն պայթուցիկ էր տեղադրել՝ դառնալով երկու անձի մահվան ու վաթսունից ավելի հոգու վիրավորման պատճառ:

[1] Իռլանդիայի հանրապետական բանակ, ահաբեկչական կազմակերպություն:

թվայնացրել է 1915.info կայքը

Այդ դեպքից հետո գործարարը փոխվեց: Կարծես պայթուցիկն ուղեղում էր պայթել ու սովորությունները լրիվ մոռացության տվել: Հասկացել էր՝ ինչ կարող էր կորցնել, ու ցանկացել էր վերադառնալ կնոջ մոտ, ընտանիքի հետ ավելի շատ ժամանակ անցկացնել: Հենց այդ ժամանակ Ռոքսանան էլ էր սկսել սառչել: Սոֆիայում նա իր համար էկզոտիկ ու տպավորիչ էր: Նույն կինը Լոնդոնում կոպիտ, անգամ պարզունակ էր թվում, բայց քաղաքավարությունը թույլ չէր տալիս նրան անկեղծ ասել այդ մասին: Ռոքսանան նրա գործը թեթևացրեց. մի փոքր գրություն թողեց երիցուկի օճառի վրա.

«Հոգի՛ս: Գուցե սա իմ վերջին երեկոն,
Վերջին երեկոն լինի:
Սերս մնաց անբացահայտ»:

Գործարարը չգիտեր, բայց այդ տողերը Սիրանոյի հայտնի հերոսի՝ իր սիրելի Ռոքսանային հղած հրաժեշտի խոսքերն էին: Տարիներ անց կնոջ հետ դիտած սիրողական թատերախաղի ժամանակ այդ խոսքերը լսելիս ցնցվելու էր ու միայն այդ ժամանակ էր հասկանալու:

* * *

Վերջնական շպարով Ռոքսանան հետնաբեմում՝ խամրած բալագույն վարագույրների հետևում, կազմ ու պատրաստ սպասում էր: Աչքի պոչով նայեց ու տեսավ՝ դահլիճը լիքն էր: Այդ գիշեր էլ էր լեփ-լեցուն: Մշտական այցելուներից բացի՝ նորերն էլ կային՝ ամուրիներ, ամուրիների խնջույքին մասնակցողներ, ամուսնալուծվողներ ու տարեց ամուսիններ: Տարբեր ազգությունների տղամարդիկ: Երիտասարդ ու տարեց, հիմնականում միջին տարիքի:

թվայնացրել է 1915.info կայքը

Այդ պահին նրան տեսավ: Բարում նստած՝ դանդաղ կումերով սոդա էր խմում: Մուգ գույնի մազերով, սակավախոս էր, ու դեմքին հավերժական հուսահատություն էր տպված: Հայացքը կարկատած բաճկոնի նման էր կրում, որը պետք էր դեն նետել: Ռոքսանան նրան առաջին անգամ չինացի տերերից մեկի հրավերով այցելած ընդհատակյա փոքր խաղատանն էր տեսել: Անունն էլ այնտեղ էր իմացել՝ Ադեմ:

Ռոքսանան տեսել էր՝ ինչպես էր նա մեծ գումար շահել: Ուրիշ մեկը սրտի ուզածի պես աջ ու ձախ կաներ այդ գումարը: Բայց նա հաջորդ օրը վերադարձել էր, ավելի մեծ խաղադրույք էր արել ու տարվել էր: Ռոքսանան ինչ-որ տեղ նրան այդ հիմարության համար էր քամահրում: Մյուս կողմից էլ հիացած էր, որ նա կարող է ռիսկի դիմել:

Վերջին հինգ շաբաթում Ռոքսանայի ոչ մի ելույթ բաց չէր թողնում, ամեն անգամ ելույթից հետո նրան վիսկի էր հյուրասիրում, բայց ինքը չէր խմում: Ռոքսանայից կարճահասակ էր: Այնքան էլ բարետես չէր: Քաղաքավարի էր, Ռոքսանային նրա անցյալի մասին հարցեր էր տալիս: Նա էլ ճշմարտությունը պատմելու փոխարեն պատմություններ էր հնարում: Խոսում էր Մոսկվայի արկածներից, սահնակներից, պարահանդեսներից, ընտանիքի դեմ ուրիշների դաված նյութերից: Պատմածները կարծես ոչ թե կոմունիստական երկրից էին, այլ փերիների հեքիաթներից, բայց նրա համար կարծես միևնույն էր: Միակ բանը, որը բերանից թռցրեց՝ հոր սերն էր խմիչքի հանդեպ:

– Իսկապե՞ս,– ասել էր Ադեմը:– Ուրեմն քո հայրն էլ է իմ հոր նման: Իմ հայրը լյարդի հիվանդությունից մահացավ, ի վերջո:

Այդ պահին Ռոքսանան ստամոքսում ինչ-որ բան զգաց՝ կարծես ինչ-որ արգելքի էր դեմ առել: Զղջումը

թվայնացրել է 1915.info կայքը

ցավի պես տարածվել էր մարմնով մեկ: Պարզ էր՝ այդ մարդը տխուր պատմություն ուներ: Չէր ուզում իմանալ: Ոչ մեկի ճակատագիրն իրեն հետաքրքիր չէր: Միայն ուզում էր ստեր հորինել ու այդ ստերով մխիթարվել:

Կարող էր այդ մարդու հետ սառը վարվել, ասել, որ էլ չգա: Դա կարող էր կոտրել նրա սիրտը, բայց իր ու ընտանիքի համար ավելի լավ կլիներ: Գուցե կվերադառնար կնոջ մոտ, բայց այդպես չէր կարծում Ռոքսանան: Երբ նրա նման տղամարդիկ մի անգամ սկսում են այդպիսի տեղեր գնալ, իրենց երազած ապաստանը այնտեղ են գտնում ու իրենց տուն չեն վերադառնում, մինչև որ գլխներին փորձանք է գալիս:

Հույս ուներ, որ տղամարդն այնքան գումար ունի, որ կկարողանա նրա հետ շարունակել խոսել: Բայց Ռոքսանային այդ պահին շահագրգռողը Ադեմից գումար կորզելը չէր: Նրա աչքերում նա թագուհի էր: Նախկինում երբեք նման բան չէր եղել: Նախկինում իր կյանքը ձանձրալի ու խեղդուկ էր համարում՝ նույն գիրքը անընդհատ կարդալու պես: Ուզում էր նոր արկածներ ունենալ և դրանք մեծ գնով էր կարողացել ձեռք բերել: Տղամարդիկ էին նրան միշտ փնտրել, ցանկացել ու օգտագործել: Բայց երբեք ոչ մեկի աչքում թագուհի չի եղել:

Այնտեղ կանգնած՝ շուտով իրեն նայող բազմությանը զննելիս հասկանում էր՝ եթե ինքը դեռ Ելենան լիներ, Ադեմին հենց իր բարօրության համար բաց կթողներ, նրան այդ որջից հեռու կմղեր: Բայց Ռոքսանայի պես համբավ ունեցող կինը ճիշտ հակառակը կաներ՝ Ադեմին ավելի պինդ կպահեր:

Վարագույրը քաշելիս ինքն իրեն մռթմռթաց.

– Չարաճճի՛ աղջիկ:

թվայնացրել է 1915.info կայքը

ԱՅՐԵԼ ԿԱՄՈՒՐՋՆԵՐԸ

Փեմբե

Նոյեմբեր, 1963
Սպամբուկ

Փեմբեն սնահավատ կին էր: Ընտանիքը դա ընդունում էր որպես նրա կյանքի բազմաթիվ տարօրինակություններից մեկը: Տարիների ընթացքում, աստիճանաբար ստեղծված բնավորության գիծ չէր: Հանկարծակի էր ի հայտ եկել, կարելի է ասել՝ մի գիշերում: Այն գիշեր, երբ Իսքենդերն էր ծնվել:

Երբ Փեմբեն մայրացավ, տասնյոթ տարեկան էր՝ երիտասարդ, գեղեցիկ ու մտածկոտ: Կիսամութ սենյակում կանգնած՝ օրորոցին էր նայում: Դեռ չէր հավատում, որ փոքր քթին մանուշակագույն բծով, կնճռոտ, փափլիկ ձեռքերով, թափանցիկ մաշկով երեխան իրենն է: Տղա էր ունեցել, տղա, որին ունենալու համար մայրը՝ Նազեն, ամբողջ կյանքում երազել էր, կշտամբել ու աղոթել:

Փեմբե Քադերից ու Ջեմիլե Եթերից հետո Նազեն նորից էր հղիացել: Ասում էր՝ այս անգամ պետք է տղա լինի, այլ ճար չկա: Աստված ինձ պարտք է: Գիտեր՝ մեղք է այդպես խոսելը, բայց ասում էր՝ Նրանից միայն մի բան ունի ստանալու: Հավատում էր՝ Աստծու հետ պայման են կապել: Անպայման պետք է այդքան աղջիկ ունենալու դիմաց մի փոխհատուցում ստանար: Այնքան էր վստահ,

թվայնացրել է 1915.info կայքը

որ հղիության ընթացքում տղայի համար գուլպաներ, ժակետներ, ծածկոցներ, ժիլետներ էր գործում:

Ոչ ոքի չէր, լսում՝ անգամ տատմորը, որ իրեն զննել ու ասել էր՝ երեխայի դիրքը ճիշտ չէ, ավելի լավ կլինի՝ քաղաք գնան: Եթե անմիջապես ճամփա ընկնեին, կարող էին ժամանակին հիվանդանոց հասնել:

– Չէ մի...– ընդդիմացել էր Նազեն:

Ամեն բան Նրա ձեռքերում էր: Նազեն քառասունինը տարեկան էր ու հրաշք-երեխա էր ունենալու: Նախորդ երեխաների պես նրան էլ էր սեփական տանը, իր անկողնում ունենալու, միայն թե այս անգամ տղա էր ծնվելու:

Երեխան թարս էր նստած, բացի այդ էլ խոշոր էր: Ժամեր անցան: Ոչ ոք ժամերը չէր հաշվում. հավատում էին, որ դա վատ նշան է: Աստված էր միակ ժամապահը: Երկնային ժամանակը հավերժական էր: Մահկանացուների համար անտանելի երկար էր այդ ժամանակը, իսկ Նրա համար՝ մի ակնթարթ: Դրա համար ծննդաբերության ժամանակ առեղծվածների դռները՝ հայելիներն ու ժամացույցները, թավշյա կտորով էին ծածկում:

– Էլ ուժ չունի, չի կարող հրել,– ասաց կանանցից մեկը:

Նազեն այնքան արյուն էր կորցրել, որ դեմքը ճմեռվա գույն էր ստացել, մեկընդմերթ էլ ուշագնաց էր լինում:

– Ուրեմն մենք քաշենք,– ասաց տատմերը՝ ճակատի քրտինքի կաթիլները սրբելով:

Ձեռքը մտցրեց, թաց ու սղլիկ երեխայի թպրտոցը զգաց մատների ծայրին: Հանգելու պատրաստ մոմի վերջին դողը հիշեցնող թեթև սրտխփոց կար: Մեղմ, բայց վստահ շարժումով փորձեց երեխային պտտեցնել արգանդի մեջ: Մի անգամ: Երկու անգամ: Երրորդ անգամ՝ ավելի արագ: Երեխան ժամացույցի ուղղությամբ շարժվեց, բայց դա բավական չէր: Գլխով սեղմում

թվայնացրել է 1915.info կայքը

էր պորտալարին, ու թթվածնի աստիճանը վտանգավոր կերպով պակասում էր:

Պետք էր ընտրություն կատարել: Տատմերը զգում էր՝ մոր կամ երեխայի կյանքի միջև է ընտրելու: Երկուսին էլ փրկելու ճանապարհ չկար: Խիղճը անլուսին գիշերվա պես լուռ էր ու մութ: Հանկարծ որոշում կայացրեց: Կնոջն էր ընտրելու:

Այդ պահին աչքերը պինդ փակած, մահվան հետ պար բռնած Նազեն գլուխը բարձրացրեց ու բղավեց.

– Տե՛ս հաա:

Այնքան ուժեղ բղավեց, որ կարծես մարդկային ձայն չլիներ: Անկողնում պառկած կինը վայրի կենդանու էր վերածվել՝ սոված ու վայրի, պատրաստ ճամփան կտրածին հոշոտելու: Կանաչ անտառում էր վազում, ուր արևը տերևների վրա ոսկեգույն արտացոլանք էր թողնում. երբեք այդքան ազատ չէր եղել: Լսողները կասկածում էին, թե Նազեն խելագարվել է: Միայն խենթերը կարող էին այդպես բղավել:

– Կտրի՛ր ինձ, փչացա՛ծ: Հանի՛ր երեխայիս,– հրամայեց Նազեն:– Տղաս է գալիս: Քո ինչն եմ ասել, դավաճա՛ն, նախա՛նձ կնիկ: Մկրատը վերցրո՛ւ: Փորս երկու կե՛ս արա, հանի՛ր տղայիս:

Տատմոր ձեռքը դողաց. եթե ուզեր էլ՝ չէր կարող թաքցնել վախը: Ամենուր արյուն էր: Ջայրույթն ու ջղայնությունը քսվել էր գորգերին, սավաններին, պատերին: Սենյակի օդը ծանրացել էր, մահացու էր դարձել:

Նազեին չհաջողվեց փրկել: Իսկ երեխան, որի սեռը հենց սկզբից սխալ էր գուշակել, էլ չդիմացավ: Նազեի իններորդ երեխան, որը խլեց նրա կյանքը ու հետո էլ լուռ մահացավ օրորոցում, աղջիկ էր:

Դրա համար 1963 թվականի նոյեմբերին ծննդատանը մինչև լուսաբաց անթարթ աչքերով պառկած

թվայնացրել է 1915.info կայքը

Փեմբեն և՛ երջանիկ էր, և՛ անհանգիստ: Դեռ տասնյոթ տարեկան էր ու արդեն տղա ուներ: Անդադար մտածում էր՝ ինչպես է մայրը երկնքից նախանձով իրենց նայում: «Ութ ծննդաբերություն, չորս վիժում, մի մահացած երեխա, ու ոչ մեկը տղա չէր... Իսկ իմ այս խենթ ու խելառ աղջկան արդեն առողջ տղա ես տվել: Ինչո՞ւ, Աստված»:

Նազեի բղավոցն արձագանքեց Փեմբեի ականջների մեջ, զայրույթի գունդ դարձավ ու պտույտ տվեց կրծքին, ծանրացավ ստամոքսին: Փորձում էր հանգստացնել ինքն իրեն, բայց նոր բաների մասին էր անհանգստանում: Մտածմունքը, հոլի պես պտտվելով, գլխի մեջ շրջաններ էր գծում: Հանկարծ հասկացավ, որ հանգուցյալ մոր աչքից չի փախչի: Արդեն նրա հայացքն էր ամենուր փնտրում: Նազեին սկսել էր տեսնել ծեծիչի մեջ գցած ընկույզներում, որոնք սարքում էր ավելի շատ կաթ ունենալու համար, ամեն անգամ լողանալուց առաջ մազերին քսած նշայուղի ու օջախին եռացող թանապուրի մեջ:

Երբ աղոթում էր՝ «Էյ, Աստվա՛ծ, խնդրում եմ, թող մայրս դրախտում խաղաղ փակի աչքերը, որդիս ողջ-առողջ մեծանա», կարծես ոչ թե երեխայի էր քնեցնում, այլ ինքն իրեն էր օրորում Փեմբեն:

* * *

Փեմբեն Իսքենդերի ծնվելու գիշերը վատ երազ էր տեսել, ինչպես մի քանի անգամ հղիության ընթացքում: Բայց այս անգամ այնքան իրական էր, որ թվում էր՝ երբեք չի կարողանա այդ մղձավանջից դուրս գալ, որ բանտարկված է մնալու երազների աշխարհում:

Երազում մեջքի վրա պառկած էր նախշագործ գորգի վրա, աչքերը մեծ-մեծ բացել էր, փորը տռզած էր: Վերևում՝ երկնքում, մի քանի ամպ էր երևում: Տաք էր,

թվայնացրել է 1915.info կայքը

շատ տաք: Հետո հասկացավ, որ գորգը կամ էլ անկողինը ջրի վրա են, մարմնի տակով վարար գետ է անցնում: Ինքն իրեն հարցնում է՝ ինչից է, որ չեմ խորտակվում: Երկինքը երկու կես եղավ, և պատասխանի փոխարեն երկու ձեռք ձգվեց դեպի իրեն: Աստծո ձեռքե՞րն էին: Թե՞ մահացած մոր: Չհասկացավ: Ձեռքերը որովայնը երկու կես արեցին:

Ցավ չէր զգում, բայց սարսափած էր: Հետո ձեռքերը երեխային դուրս հանեցին: Մուգ գլաքարի գույնի աչքերով թմբլիկ տղա էր:

Փեմբեն դեռ չէր հասցրել անգամ դիպչել, երբ ձեռքերը երեխային ջուրը նետեցին: Մովսես մարգարեի պես՝ երեխան զամբյուղի մեջ, գետի հոսանքին հետևող մի տախտակի վրա գնաց:

Փեմբեն միայն մի հոգու պատմեց իր երազը: Համբերատար լսող Ջեմիլեն կամ իսկապես հավատում էր, կամ էլ երկվորյակ քրոջը մոր ուրվականից էր ուզում փրկել.

– Քեզ ջին է կպել:

– Ջի՞ն:

– Իհարկե: Նրանք շատ են սիրում բազկաթոռին, բազմոցներին քնել: Երևի մեկի վրա ես նստել: Նա էլ քեզ կպել է:

– Իսկապե՞ս:

– Մի՛ անհանգստացիր, մի բան կմտածենք,– ինքնավստահ ասաց Ջեմիլեն:

Այդպես Փեմբեն սկսեց անել այն, ինչ երկվորյակ քույրն էր ասում: Այլևս փողոցի շներին հաց չէր թողնում ու նրանց հետևից չէր նայում, ձախ ուսի վրայից՝ մի բուռ աղ, աջ ուսի վրայից մի բուռ շաքարավազ նետեց, նոր հնձած արտերում քայլեց, անցավ սարդոստայնների տակով, տան ամեն անցքից ներս աղոթած վարդաջուր լցրեց ու քառասուն օր շարունակ թալիսման կախեց:

թվայնացրել է 1915.info կայքը

Զեմիլեն կարծում էր՝ այդ ամենով կարող էր Փեմբեին իրենց հանգուցյալ մոր ուրվականից փրկել: Մինչդեռ դրա փոխարեն Փեմբեն բացեց սնահավատության դուռը:

Այդ ընթացքում Իսքենդերը մեծանում էր: Մաշկը գետերի քարերի գույնի, մազերը մուգ, ալիքավոր ու փայլուն էին, կարծես աստղափոշի էին լցրել: Քթի ծննդանշանը վաղուց անցել էր, խորամանկ աչքեր ուներ, ժպտերես էր, բոլորին գրավում էր: Որքան որդին գեղեցկանում էր, այնքան Փեմբեի մտածմունքներն ավելանում էին՝ երկրաշարժեր, սողանքներ, ջրհեղեղներ, անտառային հրդեհներ, վարակիչ հիվանդություններ, Նազեի ուրվականի զայրույթը կամ էլ ջիների վրեժխնդրությունը: Աշխարհը միշտ էր անվստահելի վայր եղել, բայց Փեմբեն ամեն ինչից ու բոլորից սկսել էր վախենալ: Այնքան անհանգիստ էր, որ հրաժարվել էր որդուն անուն տալ: Իր կարծիքով՝ այդպես նրան Ազրայիլից էր պաշտպանում: Եթե երեխան անուն չունենա, Ազրայիլը չի իմանա՝ ում մոտ է գալիս, ու անհասցե նամակի պես ճամփան կկորցնի: Այդպիսով, երեխան աշխարհում առաջին տարին առանց անունի անցկացրեց: Երկրորդ, երրորդ և չորրորդ տարիներն էլ: Նրան ձայն տալու համար ասում էին՝ Երեխա՛, Հե՛յ, փոքրի՛կ կամ էլ Պստի՛կ:

Ադեմն ինչո՞ւ չէր միջամտում: Ինչո՞ւ ուրիշ տղամարդկանց պես իրավիճակը հսկողության տակ չէր առնում, իր ժառանգին անուն չէր տալիս: Նրան ինչ-որ բան հետ էր պահում: Զղջում, ճնշվածություն, պասիվություն, որ կարող էր միայն սխալ կնոջ հետ ամուսնացած տղամարդը զգալ:

Երբ վերջապես երեխան հինգ տարեկան դարձավ, Ադեմը ձայն հանեց: Տղան շուտով դպրոց էր գնալու, և եթե մինչ այդ անուն չդնեին, մյուս երեխաները ծիծաղելի

թվայնացրել է 1915.info կայքը

կեղծանուն կտային խեղճ երեխային: Փեմբեն չէր ուզում, բայց ընդունեց միայն մի պայմանով: Երեխային գյուղ է տանելու՝ երկվորյակ քրոջ և ընտանիքի աղոթքներն ու բարեմաղթանքները ստանալու: Ամենակարևորը՝ խորհուրդ էր հարցնելու գյուղում՝ արդեն Արարատի չափ ծեր, բայց դեռ ժողովրդին կրթող երեք ծերունիներից:

* * *

– Ճիշտ ես արել, որ մեզ մոտ ես եկել,– ասաց առաջին ծերունին:

Այնքան թույլ էր, որ եթե մի տեղ դուռը փակեին, քամուց կարող էր ցնցվել խեղճը:

– Մերօրյա մայրերի պես ինքնագլուխ անուն չես դրել նրան,– ասաց երկրորդ ծերունին, ում բերանում միայն մի ատամ էր մնացել:

Այդ ընթացքում երրորդ ծերունին էր սկսել խոսել, բայց ձայնն այնքան ցածր էր, որ ոչ ոք չէր հասկանում՝ ինչ է ասում:

Գյուղի ծերունիները մի որոշման էին հանգել՝ երեխային պետք է անուն տա նա, ով ընտանիքի անցյալի մասին ոչինչ չգիտի, Նազեի ուրվականից էլ գաղափար չունի: Փեմբեն համաձայնեց այդ առաջարկին: Մալա Չար Բայան գյուղից մի քանի կիլոմետր հեռու մի գետ կար: Ձմեռները բարակ էր գալիս, բայց գարնանը վարարում էր: Գյուղացիները դիմացի ափն անցնելու համար էլեկտրալարերով կապած ինքնաշեն նավակ էին նստում: Վտանգավոր ճամփորդություն էր. ամեն տարի մի քանի հոգի ջուրն էր ընկնում: Շատերը փրկվում էին, բայց խեղդվողներ էլ էին եղել: Որոշեցին, որ Փեմբեն այնտեղ սպասի ու դիմացի ափն անցնող առաջին մարդուն հարցնի: Այդ ընթացքում գյուղի ծերերը թփերի հետևում կսպասեին, ու եթե պետք լիներ, կմիջամտեին:

թվայնացրել է 1915.info կայքը

Փեմբեն ու որդին սկսեցին սպասել: Սրունքները ծածկող կարմիր զգեստ էր հագել Փեմբեն: Իսկ երեխան կոստյում էր հագել ու փոքրիկ արձանիկի նմանվել: Ժամանակն անցնում էր: Փեմբեն երեխային զբաղեցնելու համար պատմություններ էր պատմում: Նրանցից մեկը ամբողջ կյանքի ընթացքում տպավորվելու էր երեխայի հիշողության մեջ:

– Խոջա Նասրեդդինը, երբ փոքր էր, իր մոր աչքի լույսն էր,– ասաց Փեմբեն:

– Աչքի մե՞ջ էր լույսը:

– Դա արտահայտություն է, ի՛մ սուլթան: Նշանակում է՝ մայրը նրան շատ էր սիրում: Քաղաքից դուրս մի գեղեցիկ տանն էին ապրում:

– Իսկ հայրը որտե՞ղ էր:

– Պատերազմ էր գնացել: Դե՛, լսի՛ր: Մի օր մայրը պետք է շուկա գնար: Որդուն ասաց. «Դու պետք է մնաս տանը ու դուռը հսկես: Եթե մեկը փորձի ներս մտնել, ինչքան կարող ես բարձր գոռա: Գողը կվախենա, կփախչի: Ես էլ մինչև կեսօր հետ կգամ»: Նասրեդդինն այդպես էլ անում է, ոչ մի վայրկյան աչքը դռնից չի կտրում:

– Բա չիշիկը չի՞ գալիս:

– Տանը միզաման կար:

– Չի՞ սովածանում:

– Մայրը ուտելիք է թողնում: Ու սպիտակաձավարով հալվա,– ասաց Փեմբեն, որովհետև լավ գիտեր որդու ախորժակը:– Հանկարծ դռան մոտ ձայն է լսում: Նասրեդդինի հորեղբայրն էր: Որդուն հարցնում է՝ ուր է մայրը ու ասում. «Գնա՛, մորդ ասա՛՝ մեզ համար սեղան գցի: Ընտանիքով կճաշենք»:

– Բայց չի կարող, դուռն է հսկում:

– Նասրեդդինը շփոթվում է: Մայրը ասել է դուռը հսկել, բայց հիմա հորեղբայրն ասում է՝ գնա՛, մորդ

թվայնացրել է 1915.info կայքը

կանչի՛ր: Նասրեդդինը չի ուզում երկուսին էլ հակառակվել, դուռը տեղից պոկում, դնում է մեջքին ու գնում մորը փնտրելու:

Հենց պատմությունն ավարտվեց, ձայն լսեցին: Մեկը գետը անցել, դեպի իրենց էր քայլում: Ի տարբերություն Փեմբեի ու գյուղի տարեցների սպասումների՝ բանիմաց տղամարդու փոխարեն մի կին էր: Արծվաքիթ էր, կնճռոտ այտոսկրերի տակ փոս ընկած այտեր, թափված ատամներ ու քամու հետ եկող-գնացող խելք ուներ: Փեմբեն արագ ասաց, որ որդուն անուն է պետք, ու հետո կնոջից օգնություն խնդրեց: Նա ընդհանրապես զարմացած չէր երևում: Հենվեց ձեռնափայտին ու սկսեց մտածել, կարծես նման պահանջ ստանալը աշխարհի ամենասովորական գործն է:

– Մայրի՛կ, ո՞վ է այս կինը:

– Շըշշ, սուլթա՛նս: Այս սիրուն մորաքույրը քեզ անուն է տալու:

– Բայց շատ տգեղ է:

Խոսքն անուշադրության մատնած կինը, մոտենալով երեխային, ուշադիր զննեց.

– Ուրեմն դեռ անուն չես ստացել, հա՞:

Տղան դեմքը ծամածռեց ու չպատասխանեց:

– Շատ ծարավ եմ,– ասաց ծեր կինն ու քիչ այն կողմ հոսող գետից առաջացած լճակը ցույց տվեց:– Կգնա՞ս ինձ մի բաժակ ջուր բերես:

– Բայց բաժակ չունեմ:

– Ափերո՛վ բեր:

Դժգոհ տղան նախ աչքի պոչով ծեր կնոջը, հետո մորը, հետո նորից կնոջը նայեց:

– Ո՛չ,– ի վերջո ասաց նա սառը ձայնով:– Ինչո՞ւ ինքդ չես գնում խմես: Ես քո ծառան չեմ:

Տղայի խոսքերը ապտակի նման էին կնոջ համար:

թվայնացրել է 1915.info կայքը

– Ծառայել չի սիրում, չէ՞: Միայն ուզում է, որ իրեն ծառայեն,– խռպոտ ձայնով ասաց նա:

Այդ պահին Փեմբեն արդեն կասկած չուներ՝ սխալ մարդու են ընտրել:

– Մի՛ անհանգստացեք, ես ջուր կբերեմ,– քաղցր ձայնով ասաց նա՝ իրավիճակը շտկելու համար:

Ծեր կինը Փեմբեի բերած ջուրը չխմեց, բայց կարդաց ջուրը: Ի վերջո, երբ գլուխը բարձրացրեց, դեմքն այլայլված էր, աչքերում խենթ փայլ էր երևում: Կարծես կարևոր գաղտնիք, այնպիսի բան էր ասելու, որ ոչ ոք չպետք է իմանար:

– Լսի՛ր, աղջի՛կս, այս տղաղ երկար ժամանակ է երեխա մնալու ու միայն կյանքի կեսին է մեծանալու: Ուշ է հասունանալու:

Այդ խոսքերից սարսափած Փեմբեն ուզեց միանգամից ականջները փակել:

– Երեխաներ կան՝ Եփրատի նման են՝ արագ, հոսուն: Ծնողները չեն կարողանում կառավարել: Վախենամ՝ տղաղ սիրտդ կոտրի:

Կանխագուշակությունը աղեղից բաց թողած նետի պես խրվեց իրենց մեջտեղում: Փեմբեն այդպիսի կանխագուշակություն չէր սպասում, բայց չէր ուզում հիասթափությունը ցույց տալ:

– Ես գուշակություն չէի ուզում, անուն էի ուզում քեզնից,– լարված ասաց նա:

– Երկու անուն կա, ասեմ իմանաս: Մեկը՝ Սելիմ: Մի ժամանակ այդպիսի սուլթան է եղել՝ հա՛մ բանաստեղծ, հա՛մ երգահան: Թե ուզես, տղաղ մեղմ բնավորությամբ, գթառատ, բարեխիղճ լինի, այդ անո՛ւնը տուր:

– Լավ, բա մյո՞ւսը,– Փեմբեն շունչը պահել էր:

Տղան էլ էր արդեն հետաքրքրվել խոսակցությամբ:

թվայնացրել է 1915.info կայքը

– Երկրորդը առյուծի պես պատերազմող, բոլոր պատերազմներում հաղթող, թշնամիների ահ ու սարսափ, մեկը մյուսի հետևից երկրներ գրաված, թագի հետևից թագ նվաճած, Արևելքն ու Արևմուտքը միացրած, միշտ ավելին ուզող հայտնի հրամանատարի ու արքայի անունն է: Եթե ուզում ես՝ տղադ նրա պես բանակների առաջնորդ դառնա, այդ անո՛ւնը տուր:

– Դա ավելի լավ է,– ուրախ ասաց Փեմբեն:

– Լավ, այդ դեպքում իմ գործը վերջացավ: Դե, մնա՛ք բարով:

Ձեռնափայտին հենվելով՝ անսպասելի ճարպկությամբ քայլեց: Մի երկու վայրկյան տևեց, որ Փեմբեն հասկանար՝ պետք էր հասնել նրա հետևից:

– Հե՛յ, սպասի՛ր: Բայց չասացիր, է՞:

– Ի՞նչ չասացի:

Տարեց կինը շրջվեց ու զարմացած նայեց Փեմբեի դեմքին. կարծես մոռացել էր՝ ով է նա:

– Անունը: Չասացիր՝ ինչ անուն դնեմ:

– Հա,– ասաց կինը:– Ասքանդե՛ր:

– Ասքանդեր... Ասքանդեր...– ուրախ կրկնեց Փեմբեն:

Երբ Ստամբուլ վերադարձան, երեխային գրանցեցին: Չնայած հինգ տարի ուշացել էին, շատ խնդրեցին, մի քիչ էլ կաշառք տվեցին ու կարողացան գրանցել: Երբ սկսեց դպրոց գնալ, դասամատյանում գրեցին անունը՝ Իսքենդեր Թոփրաք:

Ահա այդպես Փեմբեի առաջին երեխան, աչքի լույսը քրդերեն՝ Ասքանդեր, թուրքերեն՝ Իսքենդեր, Լոնդոն տեղափոխվելիս էլ դասընկերների համար Ալեքս դարձավ. տարիներ անց բանտակիցների ու հսկիչների համար նորից Ալեքս անունով էր հայտնի դառնալու:

թվայնացրել է 1915.info կայքը

Յունուս

23 դեկտեմբերի, 1977
Լոնդոն

Տոբիկոյի ծննդյան օրն էր: Թոփրաք ընտանիքի փլուզումից մի քանի ամիս առաջ յոթ տարեկան Յունուսը օկուպանտների տանը սիրո տվայտանքների մեջ էր:

Տոբիկոն քսան տարեկան էր:

– Տիպիկ Այծեղջյուր եմ,– լսեց Յունուսը, բայց չգիտեր՝ դա լավ է, թե վատ: Ինքը Առյուծ էր, բայց դա էլ ոչինչ չէր նշանակում: Կարևորն այն էր, որ սիրած աղջկա ու իր միջև տարիքային տարբերությունն աճել էր. հիմա նրան հասնելու հավանականությունն ավելի փոքր էր:

Դրա համար տխրեց, նստեց մի անկյունում ու սկսեց պլաստմասսայե ամանից փոփքորն ուտել: Աչքի պոչով նայում էր՝ ինչպես են օկուպանտները Տոբիկոյին նվեր տալիս՝ արծաթե փիրսինգներ, գնդասեղներ, ձեռագործ թևնոցներ, դակած գոտի, պատռված ցանցավոր գուլպաներ, մի զույգ զինվորական լայնաճիտ կոշիկ, գունավոր ու հակասական ուղերձներով կրծքանշաններ՝ «Գինովցած եմ», «Քվեարկում եմ Սիրո համար», «Միակ իրականությունը Ատելությունն է», «Խաղաղություն», «Քննադատի՛ր իշխանություններին», «Փչացած եմ», «Մի՛ պայքարիր հանուն հարուստների, պայքարի՛ր նրանց

թվայնացրել է 1915.info կայքը

դեմ», «Ասա *ոչ* բռնությանը», «Ոչնչացրո՛ւ սիստեմը», «Անմեղ մարիխուանա», «Կապիտալիզմ + թմրանյութ = ուղեղի լվացում» գրություններով:

Բացի դրանից՝ «Միջազգային օկուպատների» խորհրդանիշով վերմակ, Փաթթի Սմիթի մերկ ու տխուր նկարով պաստառ, գրքեր (Սթիվեն Քինգի «Գուշակը», Բուկովսկու «Սովորական խենթության պատմությունները»), ոստիկանի գլխարկ (սրճարանում գլխարկը մի րոպե սեղանին թողած ու մտասուզված ոստիկանից էր թռցրել), «Ծուլության իրավունք» կարգախոսով պաստառ և «The Damned» խմբի նկարով սև ծաղիկ:

Յունուսը բազմությունից հեռու էր կանգնել, որովհետև ուզում էր ամենավերջում նվեր տալ Տոբիկոյին: Դա երկու պատճառ ուներ: Առաջինը՝ նրա հետ գոնե մի քանի րոպեով կարող էր մենակ մնալ: Երկրորդ՝ վստահ չէր, որ Տոբիկոն իր գնածը կհավանի, հատկապես երբ տեսավ՝ մյուսներն ինչեր են նվիրել:

Քիչ անց Կապիտանը՝ Յունուսի՝ կյանքում տեսած ամենակիպ ջինսից տաբատը հագին, ամենաքիչը երկու չափ փոքր կաշվե բաճկոնով ու մոտոցիկլիստի երկարաճիտ կոշիկներով ներս մտավ: Տոբիկոյին նվեր չէր բերել: Փոխարենը աղջկան իր կողմը քաշեց ու ասաց.

– Իմը հետո, սիրո՛ւնս:

Տոբիկոյի այտերը կարմրեցին, ու չարաճճի ժպտաց: Յունուսի սիրտը կծկվեց: Նա էլ մի պահ մտածեց նույնն անել: Նեղ դպրոցական տաբատ էր հագել ու մոր գործած կապույտ սվիտերը: Վեր կկենա, դանդաղ ու վճռորոշ քայլերով կմոտենա Տոբիկոյին, խոր ու խորհրդավոր ձայնով կասի.

– Իմը հետո, սիրո՛ւնս:

թվայնացրել է 1915.info կայքը

Տեսնես Տոբիկոն ի՞նչ կաներ: Իրեն էլ կժպտա՞ր: Յունուսն այդպես չէր կարծում: Լարված ու հոգնած աչքերը փակեց:

Փեմբեն միշտ խրատում էր.

– Ամա՛ն, տղա՛ս, աղջիկներին ուշադի՛ր եղիր: Նրանք տղաների պես պարզ չեն: Տիկնիկի պես կխաղացնեն մարդուն, ալիմալլա՛հ:

Ինչքան շատ էր մտածում, այնքան վիատվում էր Յունուսը:

– Հե՛յ, փոքրի՛կ, քաշե՞ս:

Երբ Յունուսն աչքերը բացեց, երկար ռասթա մազերով մի երիտասարդ էր եկել պառկել նրա ոտքերի տակ: Եթե մայրն այդ մազերը տեսներ, ինչքան կզարմանար: Լավ, բայց գլուխն ինչպե՞ս են լվանում՝ հաստատ կհարցներ նա ու սարսափած կասեր՝ լողանում են, չէ՞:

Երիտասարդը աչքերը հառել էր առաստաղին՝ մի անտեսանելի կետի, նոր փաթաթած մարիխուանայով ծխախոտը Յունուսին էր տալիս: Ձեռքին դաջվածք կար՝ «Հարուստները պատերազմում են, ինչ լինում է, աղքատներին է լինում»:

– Ի՞նձ ես ասում,– քաղաքավարի հարցրեց Յունուսը:

Պատասխանելու փոխարեն, երիտասարդը ինչ-որ բան մռթմռթաց.

– Այս երգը ձեզ դպրոցում սովորեցրե՞լ են...

Կարծես մոռացել էր՝ ինչ պետք է ասեր, ու նախադասությունը կիսատ թողնելով՝ հորանջեց:

Յունուսը հայացքը հառեց երիտասարդի ձեռքի ծխախոտին: Նախկինում ինչ-որ մեկի գարեջրից մի կում կամ ծխախոտից մի ծուխ քաշել էր, բայց թմրանյութից միշտ հեռու էր մնացել: Դա քննարկման ենթակա թեմա էր օկուպանտների խմբում: Սև հովազի կողմնակիցները, ռադիկալ ֆեմինիստները, մարքսիստներն ու տրոցկիստները

թվայնացրել է 1915.info կայքը

խիստ դեմ էին թմրանյութին, հիպիները սիրում էին որոշ թմրանյութեր, օրինակ՝ մարիխուանա, փանքերը, նիհիլիստներն ու սիտուացիոնիստները հաբեր ու քիմիական նյութեր էին գերադասում: Բայց Յունուսը մինչ այդ օրը թմրանյութ չէր օգտագործել, ու պատճառը այդ անհասկանալի խառնաշփոթը չէր: Մոր զայրույթից էր վախենում: Բայց դե մի ֆըռթից բան չէր լինի: Ծխախոտը վերցրեց, խոր շնչեց, աչքերն արցունքով լցվեցին ու այնպես սկսեց հազալ, որ կարծեց՝ թոքերը կպայթեն: Երկրորդ ու երրորդ փորձն ավելի հեշտ էր, բայց հազը չանցավ:

– Դեռ երեկ մորս գրկում, մեր ծաղկավոր պարտեզի...– սկսեց երգել ռասթա մազերով երիտասարդը՝ վերջապես հիշելով:

Յունուսը ծիծաղելով մի անգամ էլ ծխեց:

– Իսկ հիմա բոլորս հարբած ենք, թոքերումս՝ լիքը ծուխ:

Յունուսը շարունակեց ծխել ու ծիծաղել: Երկուսով այնքան աղմուկ արեցին, որ ի վերջո Տոբիկոյի ու մյուսների ուշադրությունը գրավեցին: Կշտամբող դեմքի արտահայտությամբ Տոբիկոն իրենց նայեց:

– Մի՛ արա,– ասաց նա՝ Յունուսի ձեռքից ծխախոտը վերցնելով ու բերանը դնելով:– Քեզ չի սազում: Ինչո՞ւ ես փորձում բոլորի նման լինել: Դու ուրիշ ես: Դա է քո առանձնահատկությունը:

Տոբիկոյի քաղցր հայացքից ու անհանգիստ ձայնից Յունուսի կոկորդում ինչ-որ բան խրվեց: Վերջապես կարողացավ խոսել.

– Գիտե՞ս, քեզ համար նվեր եմ բերել:

– Իսկապե՞ս,– զարմացած ձևացավ Տոբիկոն:– Ի՞նչ ես բերել:

Յունուսը ոտքի կանգնեց. հրամանի սպասող զինվորի պես կզակը բարձրացրեց, ուսերը հետ տարավ ու

թվայնացրել է 1915.info կայքը

Տոբիկոյին մի փաթեթ տվեց. ոսկեգույն տուփ, ոսկեգույն փաթեթ ու ոսկեգույն ժապավեն:

Տուփի մեջ ապակյա ձյան գնդակ էր: Շքեղ տան առաջ միմյանց փաթաթված մի զույգ՝ արքայադուստրն ու իրեշը: Ներքևում գրված էր՝ «Գեղեցկուհին ու Հրեշը»: Յունուսը սկզբում որոշել էր համբուրվող հարսի ու փեսայի պատկերներով գնդակ գնել, բայց որքան գիտեր՝ Տոբիկոն դեմ էր ամուսնություններին: Դրա համար մյուս գնդակն էր գերադասել, չնայած որ ավելի թանկ էր:

– Հիանալի ընտրություն է: Մայրիկի համա՞ր է:

– Ո՛չ, ընկերուհուս,– հպարտ ասել էր նա:

Յունուսը պատճառ ուներ այդ գնդակը ընտրելու: Նրա համար Տոբիկոն արքայադուստր էր, իսկ ինքն իրեն մի քիչ հրեշի էր նմանեցնում: Հեքիաթի «թերի» հերոսը:

– Ծ՛նունդդ շնորհավոր,– ասաց Յունուսը:

Այդ անմեղ նվերը Տոբիկոյին հանկարծակիի բերեց: Գնդակը թռչնի ձագի պես պահել էր ափերի մեջ. դեմքից կարելի էր կարդալ՝ ինչ գոհ է:

– Օ՛հ, սիրելի՛ս, ինչ լավն է:

Յունուսի աչքերը շողացին: Մի օր անպայման ամուսնանալու էր այդ աղջկա հետ:

Երեկոյան իրենց սիրած խմբերի երգերը լսեցին ու հսկայական՝ բաներով, շոկոլադով, հաշիշով ծննդյան տորթ կերան: Տորթի վրա մոմեր չկային, բայց խանութից թռցրած կերամիկական ու պողպատե լապտերները տոնական տեսք էին տալիս դրան:

Յունուսը մի քանի կում ավել էր գարեջուր խմել ու բավական շատ տորթ էր կերել: Սիրտը խառնում էր, գլուխը՝ պտտվում: Պատին հենված, առաստաղին նայելով՝ մի կերպ իրեն զսպում էր, որ չործկար:

Այնտեղ՝ դողացող լույսի տակ, իրեն անծանոթ մի պատկեր տեսավ: Թիկնեղ, մեծ քթով, սպիտակած

թվայնացրել է 1915.info կայքը

մորուքով ու կարծես երբեք չսանրած մազերով մի ծեր մարդու նկար էր: Այդ օրը Տոբիկոյի ծնունդն էր, դրա համար կարծեց, թե մարդը նրա հետ ինչ-որ կապ ունի:

– Պապի՞կդ է,– հարցրեց Տոբիկոյին՝ նկարը ցույց տալով:

Ռասթա մազերով երիտասարդը հարցը լսեց, ու մյուսներին դառնալով, ծիծաղելով ձայն տվեց.

– Հե՛յ, ժողովո՛ւրդ, Կարլ Մարքսին պապիկ է կարծել:

Դրան ծիծաղի ալիք հետևեց:

– Նա բոլորի պապն է,– ուրախ ասաց նա:

– Մեր բոլորի պապն է,– ասաց մյուսը:

– Ու մեր պապն է փոխելու աշխարհը,– ասաց Կապիտանը:

Յունուսը, հասկանալով, որ հիմարություն է ասել, մինչև ականջները կարմրեց, բայց հետ քայլ չարեց: Պետք է հակահարված տար Կապիտանին: Դրա համար անմիջապես հարցրեց.

– Մի քիչ ծեր չի՞ աշխարհը փոխելու համար:

– Ծեր չի, իմաստուն է,– ինչեց պատասխանը:

– Բայց գեր է,– պնդեց Յունուսը:

Ծիծաղի նոր ալիք սկսվեց, բայց Կապիտանը լրջացավ:

– Այդ մարդը քո կողմից է եղել: Քեզ նմանների իրավունքների համար է պայքարել:

– Թո՛ւրք է եղել,– հարցրեց Յունուսն ակամայից:

Օկուպանտներն այնքան ծիծաղեցին, որ նրանցից մեկն ընկավ բազկաթոռից: Արցունքները սրբեցին, նորից ականջ դրեցին խոսակցությանը:

– Քեզ նմաններ ասելով՝ նկատի ունեմ ունեցվածք, սեփականություն չունեցողներին,– բացատրեց Կապիտանը:

– Դա ի՞նչ է նշանակում:

թվայնացրել է 1915.info կայքը

– Այդպես են կոչում այն մարդկանց, ում իրավունքները խախտում են ունևորները, որպեսզի ավելի շատ ունեցվածք ձեռք բերեն:

Յունուսը ոչինչ չասող հայացքով նայեց:

– Բնության մեջ ոչ ոք մարդու չափ մեծամիտ, ագահ ու եսասեր չի կարող լինել,– ասաց Կապիտանը՝ ձայնը բարձրացնելով:– Ուրիշ ոչ մի արարած մյուսին շահագործելով չի հարստանում: Կապիտալիստական սիստեմը հիմնված է ունևորների՝ աղքատներին շահագործելու վրա: Դուք, ես, մեր փոքր ընկերն ու նրա ընտանիքը, բոլորս ժողովուրդ ենք: Ազնիվ մարդիկ ենք: Չարքաշ աշխատավոր ենք:

– Մայրս միշտ մաքրություն է անում,– ասաց Յունուսը:

Նորից ծիծաղեցին, բայց այս անգամ այլ էր ծիծաղը: Կարծես ավելի սիրալիր, մի քիչ էլ ձանձրացած: Տոբիկոն քունքերը մերսեց, կարծես գլխացավ էր սկսվում:

Բայց իր իրավացիության մեջ վստահ Կապիտանը չէր նկատել լսարանի հոգեկան փոփոխությունը:

– Բա՛ց աչքերդ, տղա՛ս: Ինչ-որ մեկը գրպանները լցնելու համար քո հոր նմաններին անընդհատ շահագործում է:

Այդ խոսքից վիրավորված Յունուսը ոտքի կանգնեց.

– Հորս ոչ ոք չի շահագործում, ոչ մեկ չարքաշ չէ: Երբ մայրս հիվանդացել էր, հարևանները մեզ համար ապուր էին բերել:

Միայն հպարտությունից չէր այդպես խոսում: Ի սրտե հավատում էր իր ասածներին: Ընտանիքին երբեք աղքատ չէր համարել: Ճիշտ է, մայրը երբեմն գանգատվում էր, որ չի կարողանում ընտանեկան բյուջեն վերահսկել կամ դժվարանում էր նոր բան գնելիս: Բայց տանը երբեք չէր լսել, որ ինչ-որ մեկն իրեն կարիքավոր, աղքատ կամ էլ ստորին խավ համարեր:

թվայնացրել է 1915.info կայքը

Այդ անգամ ոչ ոք չծիծաղեց: Դրսում ավելի էր մթնել: Մոտակայքում, ձյան գնդակի միջի կերպարների պես մենակության ու լռության մեջ փաթաթված, խոհանոցի պատուհանից նայելով, անհանգստացած, որդուն էր սպասում Փեմբեն:

– Օպպա, կներես, փոքրի՛կ, չէի ուզում քեզ զայրացնել,– ասաց Կապիտանը:– Դեռ փոքր ես այդպիսի բաները հասկանալու համար:

Այդ խոսքերը Յունուսին խորապես վիրավորող ամեն ինչի ամփոփումն էին՝ տարիքի, Տոբիկոյի անհասանելիության, սիրո անհնարինության: Նստեց աթոռին, շատ էր ընկճվել:

– Բանի տեղ մի՛ դիր, փոքրի՛կ,– շշնջաց Տոբիկոն նրա ականջին ու ավելացրեց.– Ուշ է, պետք է տուն գնաս:

Հենց այդ պահին, հասկանալով՝ ժամը քանիսին է, Յունուսը խուճապի մատնվեց:

– Վա՛յ, մայրս հիմա անհանգստացած կլինի, կզայրանա:

Բայց ոտքի կանգնելն ու սրտխառնոց զգալը մեկ եղավ:

– Բարի գիշեր, Զո՛նա:

– Լա՛վ մնա, եղբա՛յր:

– Կհանդիպենք, փոքրի՛կ: Էլի կգաս:

Ոչ թե աջ ձեռքը դրեց սրտին, ինչպես հայրն ու հորեղբայրն էին սովորեցրել, այլ օկուպանտների պես ցուցամատով ու միջնապատով V նշանով ցտեսություն ասաց նրանց:

Առաջին քայլն անելուն պես սենյակը սկսեց արագ պտտվել: Հանկարծակի ու բոլորի աչքի առաջ երեխան ործկաց, այն էլ՝ ոչ թե հատակին կամ մի անկյունում, այլ ուղիղ իր սիրած աղջկա վրա:

– Ո՛չ,– ասաց նա աչքերը փակելուց առաջ:

թվայնացրել է 1915.info կայքը

Տոբիկոն էլ չէր սիրի իրեն:

Այդ օրը օկուպանտները Յունուսին իրենց մեջքին տարան մինչև նրա տուն:

Լավենդեր փողոց հասնելուն պես զանգը տվեցին ու փախան: Երբ Փեմբեն դուռը բացեց, իր ամենափոքր երեխային տեսավ. սարսափելի հարբած ու հուսահատ սիրահարված՝ մուշ-մուշ քնել էր դռան առաջ:

թվայնացրել է 1915.info կայքը

Զեմիլե

22 դեկտեմբերի, 1977

Գիշերվա լռության մեջ կրակի կողքին նստած ննջում էր Զեմիլեն: Վիզը ծռվել էր: Ձախ ձեռքը աթոռից կախվել էր, իսկ աջ ձեռքով մի նամակ էր պինդ բռնել: Մի քանի անգամ կարդալուց հետո քնով էր անցել:

Անհանգիստ էր քունը, մղձավանջներով լի: Այտոսկրերը կարմրել էին, դեմքին քրտինքի բարակ շերտ էր շողում: Երազում և՛ ծանոթ, և՛ գոյություն չունեցող քաղաքում էր: Մի տեղ հավաքված խոժոռադեմ մարդիկ կային, ոգևորված վիճում էին: Ականջ դրեց ու հասկացավ՝ իր մասին էին խոսում. վախեցած հետ քաշվեց:

Բայց մեկը՝ Ադեմի նման մի մարդ, իրեն նկատեց ու մատնեց մյուսներին: Ընկան իր հետևից: Ամբողջ ուժով վազելով՝ գալարուն փոքր փողոցներով ու մութ հրապարակներով անցավ Զեմիլեն, բայց արագ հոգնեց, բետոնե քարակտորների պես ոտքերը ծանրացան:

Մի քիչ հետո արթնանալու էր: Հենց նրան հետևեցին մինչև փակուղի, ամբողջ ուժը հավաքելու էր ու շնչակտուր դուրս թռչեր երազից: Սակայն այդ պահին դեռ այնտեղ էր՝ մղձավանջի քաղաքում: Այդ ընթացքում տնակի օդը ծանր էր ու խեղդող: Վառարանի վերջին փայտը ճտճտալով վառվեց, կախարդական փայտիկից տարածվող փոշու նման ոսկե կայծեր տարածվեցին շուրջը: Դրսում՝ հովտում, մի թռչուն

թվայնացրել է 1915.info կայքը

ծլվլաց: Ոտնաձայներ լսվեցին՝ հեռու ու ցածրաձայն: Զեմիլեն չլսեց: Առայժմ:

Դեռ կյանքը փրկելու համար վազում էր երազում: Այդ պահին երեսունմեկ տարեկանից ավելի մեծ էր երևում: Տախտակի վրա փորագրված գաղտնի այբուբեն հիշեցնող գծեր, կնճիռներ կային վզին: Տարիներ էին անցել, ինչ իրեն երիտասարդ չէր զգացել:

Հանկարծ արթնացավ: Աթոռի փորագրությունների հետքը տպվել էր այտին: Ձախ ուսին այնքան սուր ցավ էր զգում, որ չհամարձակվեց շարժվել: Մարմնի լարված անդամները մի ձեռքով շոյելիս մյուս ձեռքով դեռ բռնում էր նամակը: Մի պահ նայեց թղթին՝ կարծես մոռացել էր նրա մասին: Բայց ի տարբերություն երազի՝ նամակն իրական էր: Շուրջը պատած սարերի պես հաստատուն ու անխուսափելի էր: Մի անգամ էլ կարդաց.

«Քո՛յրս, ջա՛նս, սիրելի՛ս, Զեմիլե՛

Այն օրից, ինչ ոտք եմ դրել այս կղզին, մեկ ծովին եմ կարոտ մնացել, մեկ էլ քեզ: Ալլահը գիտի՝ քանի անգամ եմ աղոթել, որ քեզ տեսնեմ: Ամենաշատն էլ այսօր եմ ուզում, հիմա: Եթե այստեղ լինեիր, գլուխս կդնեի ծնկներիդ: Կասեի՝ մրսում եմ, վատ եմ: Դու էլ կփաթաթվեիր ինձ: Կբռնեիր...

Ադեմն արդեն ամուսին չէ: Շաբաթներ է լինում՝ տուն չի գալիս: Ուրիշ կին է գտել: Երեխաները չգիտեն: Ամեն ինչ ներս եմ գցում: Իզուր: Սրտումս այնքան խոսք կա կուտակված:

Նրան չեմ մեղադրում: Ես եմ մեղավոր: Քո փոխարեն Ադեմի հետ ամուսնանալը մեծ սխալ էր: Ինձ երբեք չի սիրել այնպես, ինչպես քեզ: Նա էլ է մեղք:

Շատ է զղջացել, միայն թե իմանաս: Բայց քաջություն չունի: Երբեմն խղճում եմ նրան, ինձ, քեզ... բոլորիս: Երանի

թվայնացրել է 1915.info կայքը

նորից կարողանայինք երեխա լինել ես ու դու: Ցանկությունների աղբյուրից փող հավաքեինք: Եթե մեր հիմիկվա իմացածներն այն ժամանակ իմանայինք, ամեն բան այլ կլիներ, չէ՞: Ադեմը միշտ անցյալից է խոսում: Այսօր գիտե՞ն՝ ինձ ինչ ասաց. «Երանի կախարդական ջնջոց ունենայի, ջնջեի»:

Շշարունակեց, բայց գիտեմ՝ մեր մասին էր ասում: Պեկք է երբեք չամուսնանայի նրա հետ: Չնայած ոչինչ չէի կարող անել, բայց չփորձեցի էլ կանխել: Եթե ասեմ՝ փորձել եմ, սուտ կլինի: Այնքան էի ուզում գյուղից դուրս գալ, որ միանգամից ընդունեցի: Ուրիշ աշխարհներ գնալու միակ հնարավորությունս էր: Զայրացա՞ծ ես ինձ վրա, քո՛յրս: Նեղացրել եմ քեզ: Հեդիյեի մասին մտածո՞ւմ ես: Երեկ նրա հոգու համար հալվա պատրաստեցի: Այստեղ հարևաններին տվեցի: Մեր սովորությունները չգիտեն, զարմացել էին: Հասացի՝ ինչի համար է: Այն ժամանակ չարեցինք, ափսոս: Որ հիշում եմ, սիրտս կծկվում է: Դո՞ւ էլ ես երբեմն այդպես զգում:

Քեզ միշտ սիրող քույր՝ Փեմբե»:

Ջեմիլեն, ձեռքի կոշտուկները շփելով, ոտքի կանգնեց: Պատուհանին մոտեցավ, հոնքերը կիտելով՝ նայեց գիշերվան: Նրան թվաց՝ ձայն լսեց, բայց երբ ականջ դրեց, հասկացավ՝ սխալվել էր: Խոր հոգոց հանելով՝ վերադարձավ, թեյնիկը դրեց կրակին ու սկսեց թեյ պատրաստել:

* * *

– Երկնքում ինչքան աստղ կա այսօր,– ասաց Ջեմիլեն:

1962 թվականին սարսափելի ցուրտ մի գիշեր էր:

Ադեմը դեմքը նրա դեմքին էր մոտեցրել, աչքերով վազում էր դեմքի վրայով ու ասում էր. «Կան սերեր, որ փայլուն աստղերի են նման: Իսկ կան սերեր, որ

թվայնացրել է 1915.info կայքը

Հարդագողի ճանապարհն են հիշեցնում՝ շուրջը խամրած շողեր թողնելով»:

– Իսկ մեր սե՞րը,– հարցրեց Ջեմիլեն:– Մեր սերն է՞լ է աստղ:

Ադեմն այդ հարցից վախեցել էր: Ինքը մտածում էր՝ ինչպես է Ջեմիլեին սեր խոստովանելու, բայց նա արդեն ասել էր: Իրենից քաջ էր, խիզախ:

Ադեմի համար ամեն ինչ շատ արագ էր զարգանում, շփոթեցնում էր: Բայց ժամանակ չկար կանգ առնելու, սպասելու, որ ժամանակն իրենց հասնի: Ժամանակ չկար ձեռք բռնելու, գաղտնի համբուրվելու, միմյանց ճանաչելու:

– Մեր սերը մեծ, երկպոչանի աստղ է: Իմացա՞ր՝ որն է:

Ջեմիլեն գլուխը օրորեց. չգիտեր:

– Գիսաստղ է,– ծիծաղելով ասաց Ադեմը:

Ջեմիլեն պատից մանգաղը վերցրեց ու մազերից մի փունջ կտրեց:

– Ի՞նձ,– զարմացած ասել էր Ադեմը:

– Իմ մասին կհիշես: Երբեք չբաժանվես նրանից:

Դեմքին անսահման սեր ու նվիրվածություն էր տեսնում Ադեմը ու մի այլ բան, որ նախկինում ոչ մեկի մոտ չէր տեսել՝ հիացմունք:

– Բաժանվելու կարիք չկա, որովհետև դու միշտ ինձ հետ ես լինելու,– ասաց Ադեմը:

Բայց մազափունջը դրեց գրպանը, կարծես ինքն էլ իր ասածներին չէր հավատում:

Տարիներ անց Ջեմիլեն գիսաստղերի մասին ավելի շատ բան էր իմանալու: Հասկանալու էր, որ իսկապես պոչավոր աստղի նման, խախտված խոստումներից ու չիրականացված երազանքներից կազմված փորձանքը քարշ տալով, մինչև բախման պահն անհավատալի արագությամբ էին գնացել:

թվայնացրել է 1915.info կայքը

* * *

Զեմիլեն թեյնիկը կրակից վերցրեց, բաժակի մեջ թեյ լցրեց: Առաջին կումն անելուց առաջ բերանի մեջ մի շաքար գցեց, մտածելով կերավ: Հետո ուժեղ բռնեց գրիչը. շատ գրելու սովորություն չունեցող մարդկանց հատուկ շարժում: Ի տարբերություն կես թուրքերեն, կես քրդերենով գրող քրոջը՝ միայն քրդերեն էր գրում.

«Սիրելի՛ Փեմբե

Հոգի՛ս, ջա՛նս, կե՛սս, հավե՛րժ կարոտս:

Երբեք չեմ նեղանա քեզնից: Մեր կյանքը միայն ու միայն Ալլահի ձեռքում է: Բայց այս օրերին ներսումս անհանգստությամբ եմ արթնանում: Ինչ-որ բան է կատարվում, բայց ի՞նչ: Արդեն չեմ կարողանում իմ անկողնում պառկել: Աթոռին նստած եմ քնում: Էլի չեմ կարողանում քնել: Վատ երազներ եմ տեսնում: Իհարկե կանցնի: Պետք չի անհանգստանալ»:

Զեմիլեն գրիչը դրեց. ձեռքը լարվել էր, հոնքերը կիտել էր: Լսեց՝ ինչ-որ մեկը մոտենում էր՝ հավանաբար երեք կամ չորս հոգի: Ծանր, երկարաճիտ կոշիկների տակ կոտրվող ճյուղերի ճռթճռթոցը և հովտից ցած գլորվող գլաքարերի ձայներն էր լսում: Գուցե զինվորներ էին: Գուցե ավազակներ: Ամեն ինչ կարող էր լինել:

Զեմիլեն նայեց դռանը: Կողպած էր: Պատուհանների՝ որդ կերած փայտե փեղկերն էլ էին փակ: Գլխանոցով ծածկվեց ու հրացանը պատից վերցրեց: Ուրիշ բան չէր կարող անել:

Ուզում էր նամակն ավարտել: Պետք է իր վատ նախազգացում Փեմբեին պատմեր ու նրան զգուշացներ՝ ամուսնության հարցում ուշադիր լինել ու չսխալվել: Չնայած ե՞րբ էր Փեմբեն զգուշավոր եղել կյանքում:

թվայնացրել է 1915.info կայքը

Երկվորյակ քույրը միշտ անհավանական հարցեր էր տալիս: Ոչ թե՝ ծառի արմատներն ինչո՞ւ են անձրևաջուր խմում, և դրա նման հարցեր, այլ հողի տակ եղածն էր անգամ հարցաքննում: Այդ նիհար աղջիկը մեծացել էր, բայց չէր փոխվել: Ջեմիլեն անհանգիստ էր, որ քրոջ դեմքը բաց գրքի նման է: Ամենափոքր ուրախությունից մինչև ամենաաննշան տխրությունը՝ բոլոր զգացմունքներն արտացոլվում էին Փեմբեի դեմքին: Անգամ ամենապարզ զգացմունքները չէր կարողանում թաքցնել, ինչպե՞ս էր ամուսնության հետ կապված խնդիրները բոլորից թաքցնելու:

Ոտնաձայներն աստիճանաբար մոտեցան: Դուռը կամաց թակեցին, ամաչկոտ, բայց համառորեն: Ջեմիլեն խոր շունչ քաշեց, արագ աղոթեց ու դուռը բացեց: Երեք մարդ էին կանգնած դռան շեմին: Ակնհայտ էր, որ մաքսանենգներ էին: Սառույցի կտորները կպել էին բեղերին, ջահերի պես կախվել քունքերից:

Մեկը առաջ եկավ: Թիկնեղ, խոշորամարմին մարդ էր, փոս ընկած աչքեր ու մի ոսկի ատամ ուներ: Ջեմիլեն նախկինում տեսել էր նրան. նրանց ղեկավարն էր:

– Կինս,– կարճ ասաց մարդը:– Կգա՞ս մեզ հետ:

– Ե՞րբ են սկսվել ցավերը:

– Երկու ժամ կամ ավելի:

Ջեմիլեն գլուխն օրորեց, վերարկուն ու հրացանը վերցրեց ու գնաց նրանց հետևից:

Գիշերվա ուշ ժամին Ջեմիլեն արդեն մի տանն էր, որի դռան վրա փամփուշտից անցքեր, կտուրին թիթեղյա տարաներ կային: Դեմքը ծածկված էր արյունով ու քրտինքով, ձեռքին կյանքում տեսած ամենատարօրինակ երեխան էր՝ մեկուկես երեխա: Աղջիկ երեխայի կրծքին ու որովայնին կպած մի տղա երեխա էր: Մոր արգանդում իրենց ճամփորդությունը որպես զույգ էին

թվայնացրել է 1915.info կայքը

սկսել, բայց մեկը շարունակել էր մեծանալ, իսկ մյուսը ճամփի կեսին կանգնել, աշխարհից վախեցել ու մտափոխվել էր: Թերզարգացած երեխան կպել էր քրոջը:

– Պետք է քաղաք գնաք,– ասաց Ջեմիլեն:– Պետք է վիրահատեն:

Մաքսանենգը աչքերը փախցրեց: Որոշ ժամանակ անց հարցրեց.

– Սա նշա՞ն է:

– Հազվադեպ են էսպիսի ծնունդները, բայց լինում է: Զույգեր կան՝ իրարից չեն կարողանում բաժանվել:

– Հինգոտանի այծ կար, դժբախտություն էր բերում: Դրա նման է, չէ՞,– հարցրեց նա՝ կարծես չլսելով Ջեմիլեի ասածները:

– Քո երեխան է: Ի՞նչ է նշանակում դժբախտություն: Պիտի սիրես, որ մեծանա,– ասաց Ջեմիլեն՝ դժվարանալով այդ խստակյաց շրջանների տղամարդուն մխիթարելու ճանապարհ գտնել:

Երբ լուսաբացին հոգնած վերադարձավ տուն, վերջապես ավարտին հասցրեց նամակը.

«Դժվար ծննդաբերությունից եմ գալիս: Զույգ էին: Մեկը՝ մահացած, մյուսը՝ ողջ: Եթե այսպեղ լինեիր, կհարցնեիր՝ Ասպված ինչպե՞ս է նման բաներ թույլ տալիս: Անարդար է: Բայց ես այդպես չեմ մտածում: Լիովին ու անվերապահորեն հավատում եմ: Ուզում եմ մարդկանց օգնել, մնացածն իմ ձեռքերում չէ:

Զա՛նս, քո՛ւրս, անցյալը չենք կարող ջնջել: Ո՛չ քեզ վրա եմ զայրացած, ո՛չ Ադեմի: Երբեք էլ չեմ եղել: Կարո՞ղ ես քամին կանգնեցնել: Կարո՞ղ ես ասել՝ թող ձյունը սպիտակ չլինի: Ասում ենք՝ բնության դեմ անզոր ենք, բայց, չգիտես ինչու չենք ընդունում, որ ճակատագիրը չենք կարող փոխել:

թվայնացրել է 1915.info կայքը

Մինչդեռ դա նույն բանն է: Եթե Ասպված մեզ պարբեր ճանապարհներով է ուղարկել, ուրեմն մի պատճառ կա: Քո կյանքն այդպես է, իմը՝ այսպես: Ես ընդունել եմ: Ինձ միայն քո ամուսնությունն է անհանգստացնում: Իսկ եթե ընդանիքդ պահելու փորձեր անե՞ս: Հանուն քո երեխաների, քո օջախի: Մեկ էլ Հեդիյեի մասին էիր գրել: Ինչ պարզորինակ է, ես էլ եմ վերջերս նրա մասին մտածում:

Քեզ միշտ սիրող քույրդ՝ Ջեմիլե»:

Փախածը ձախ ոտից էր վեր կացել: Այս կրուրի տակ մեկ վատ օրեր կան, մեկ էլ՝ ոչ այնքան վատ օրեր: Կան նաև տրամվայի տակ ընկած օրեր: Հնայած անվանը՝ վերջինն այնքան էլ վատը չի: Տրամվայի տակ ընկած օրերը նման են սարսափելի հոգնածությունից քունը փախցրած օրերին: Այդ օրերին բույսի նման ես դառնում, ոչինչ չես կարողանում անել, չես զգում, չես կարողանում մտածել: Փայտի նման անկյանք: Եթե տրամադրությունդ լավ չէ, մեկ է, ոչինչ բանի տեղ չես դնի: Ոչ այնքան վատ օրերն էլ կարելի է մի կերպ անցկացնել: Բայց ամենասարսափելին վատ օրերն են՝ մարդու մարմինը, հոգին ցավեցնող:

Օրացույցը կիսատ գլուխգործոց է: Եթե, ինչպես ասում են, ժամանակը թռչում է, բայց թռիչքի արագությունը միշտ նույնը չէ: Երանի շաբաթվա ամեն օրը առանձին գնահատման ճանապարհ լինի: Օրինակ՝ ոչ այսքան վատ օրը սպիտակով ներկել ու մի բալ տալ: Տրամվայի տակ ընկած օրերը՝ կարմիր ու երկու բալ: Իսկ վատ օրը՝ սև ու երեք բալ:

Ըստ այդ հաշվարկի՝ իրար հետևից երեսուն վատ օր անցկացրած մարդը ոչ այնքան վատ օրերով լի ամիս

թվայնացրել է 1915.info կայքը

անցկացրած մարդը, մյուսների հետ համեմատած, երեք անգամ ավելի դանդաղ է ապրում: Այդպիսի մարդիկ մի տարվա մեջ երեք տարով են ծերանում: Ինչ վերաբերում է ինձ, ինչ եկել եմ այստեղ, այնքան վատ օր եմ ունեցել, որ օրացույցի թերթերը սևով են ներկվել: Մորս աչքի սուրմայի պես սեփ-սև:

Փախածի կինն ուզում է բաժանվել: Փախածն էլ, ես էլ, այս աղբանոցում բոլորն էլ գիտեին՝ այդ օրը գալու էր, բայց միևնույն է՝ զարմացանք: Մեզ մոտ դա սովորական դեպք է համարվում: Բանտ ընկած տղամարդու կինը բաժանվում է, սիրելին էլ՝ լքում: Բայց որպեսզի Փախածի ինքնասիրությունը չվիրավորենք, բոլորս զարմացած ձևացանք: Երբ ընկերոջդ կինը նրան լքում է, չես կարող ձեռքը բռնել ու ասել. «Էհ, գիտեի՝ ի վերջո այդպես էլ լինելու էր»: Դրանից իրեն հիմար կզգա: Բայց եթե՝ «Լա՛վ է, չեմ հավատում, ե՞րբ է եղել», ու նման բաներ ասես, ընկերոջդ խնդիրը կիսած կլինես: Առանց նրան ճնշելու:

Կարմրամազ, ծեփի պես սպիտակամաշկ, պեպեններով ծածկված թևերով, նիհարիկ կին էր: Դեմքին անսահման համբերատարություն էր կարդացվում: Կեղծ, իհարկե: Ոչ ոքի համբերությունը հավերժ չէր: Փախածի համար միշտ մրգով կարկանդակ էր բերում, բայց հսկիչները հազվադեպ էին թույլ տալիս ներս տանել: Միևնույն է, նա շարունակում էր թխել:

Այսօր ինքն էր եկել ու ասել Փախածին: Պետք է նրան արժանին մատուցել: Կարող էր միայն լուր ուղարկել, որոշ կանայք այդքանն էլ չեն անում: Բայց նա վեր կացավ ու եկավ և ծխախոտից խեղդված ձայնով ու ածխահամ խոսքերով բացատրեց իրավիճակը: Խոստովանել էր՝ ծանոթացել է մեկի հետ: Ասել էր, որ երեխաները՝ հատկապես հինգ տարեկան տղան, հոր կարիք ունի: «Բայց երեխաները քեզ միշտ այցելելու են, դու ես նրանց հայրը:

թվայնացրել է 1915.info կայքը

Դա ոչինչ չի կարող փոխել»: Հեկո Փախածին վերջին անգամ համբուրել, վերջին մրգով կարկանդակն էր թողել ու գնացել: Բո՛ւմ:

Երբեմն մտածում եմ՝ ինչպիսի բան է կին ունենալը: Թուլություններդ, խեղճություններդ քեզնից ավելի լավ իմացող, բայց քեզ սիրող կին՝ այնպիսին, ինչպիսին կաս: Տանջվում եմ՝ հասկանալով, որ չգիտեմ՝ դա ինչ է: Բայց ոչ ոքի չեմ ասում այդ մասին:

Որդուս անունը Թոմ է: Ինձ երբեք չի տեսել, ես էլ՝ նրան: Չեմ փխրում, որ այսօր ուրիշ մարդու է հայրիկ ասում: Ես ահավոր հայր կլինեի: Ահավոր հայրը մարդու կոկորդում խրված փշի նման է: Ո՛չ կարող ես դուրս թքել, ո՛չ էլ՝ կուլ տալ ու մարսել: Անգամ եթե ինչ-որ կերպ ազատվես, միշտ ինչ-որ հետք կմնա, դրսից նայողների համար անտեսանելի, բայց դու միշտ սպիի պես զգալու ես: Եթե պետք է ահավոր հայր լինես, ավելի լավ է՝ չլինես:

Մի անգամ մորս հարցրի՝ ինչու է ամուսնացել հորս հետ: Ուզում էի հասկանալ՝ իրար սիրում են, թե ոչ:

– Ես չեմ ընտրել նրան,– ասաց նա:

– Դե, ուրեմն նա է քեզ ընտրել,– համառեցի ես:

Նայեց դեմքիս: Պատուհանից ընկնող լույսից աչքերը փայլում էին բաց կանաչ գույնով: Բիբերի շուրջը սաթե ու ոսկեգույն բծեր էին երևում: Մտածում էի՝ ինչ սիրուն է, ինչ երիտասարդ: Մարդ իր մոր գեղեցկությունը շատ չի նկատում: Բայց ես այդ օրը դա պարզ ու հստակ տեսա: Ինձ վատ զգացի:

– Այն ժամանակ աշխարհն ուրիշ էր,– ասաց նա:– Հիմիկվա այս կյանքի հետ կապ չուներ: Դուք՝ երիտասարդներդ, այնքան հաջողակ եք: Գինը չգիտեք:

Դա իմ ուզած պատասխանը չէր: Մարդ ուզում է, որ մայրն ու հայրն իրար շատ սիրեն: Գոնե սկզբում: Բայց մերոնց մոտ էդպիսի բաներ չկային: Ո՛չ մեքենա

թվայնացրել է 1915.info կայքը

թաշկինակների վրա ասեղնագործած անունների գլխապառեր, ոչ սրտխփոց, ոչ շշուկով խոսքումներ: Մայրս ու հայրս անցյալում սիրո նշույլ անգամ չեն ունեցել: Էման գիտեր: Հասկանում էր՝ ոչ մեկս սիրո պտուղ չենք: Ասում էր՝ մեր գոյությունը միայն պարտականության, հանձնվելու և անտարբերության հետևանք է: Այդ պատճառով էի ես անհնազանդ, նա՝ ապստամբող, Յունուսը՝ զգացմունքային: Էմայի հետ միշտ խոսում, կիսվում էինք:

– Բերաններդ չի փակվում,– ասում էր մայրս:– Դրսում անձրևը չի դադարում, ներսում՝ ձեր շատախոսությունները:

Էմային այնպիսի բաներ եմ պատմել, որ կյանքում ոչ ոքի չեմ ասել, ոչ ընկերներիս, ոչ Քեյթին: Ոչ միայն ես, ընտանիքում բոլորն էին կիսվում նրա հետ: Հավատում էինք, որ մեզ լուրջ է ընդունելու, ու անկեղծանում էինք:

Քրոջս էի պատմում, որովհետև ինձ հասկանում էր: Բառերի հետ լավ հարաբերություն ուներ: Միայն նա էր այնքան մերոնքական, որ ամեն ինչ հասկանար, ու նաև այնքան օտար էր, որ կարողանար այդ ամենից դուրս դնել իրեն: Նա ընտանիքի սև ագռավն էր: Դա ինձ դուր էր գալիս մինչև 1978 թվականի աշունը: Հետո ամեն ինչ խառնվեց իրար, ու էլ երբեք չկարողացա խոսել Էմայի հետ:

* * *

Փախածը կեսօրից հետո ժամանակը մահացու լռության մեջ անցկացրեց: Դեմքի գույնը երեք օրվա ճաշի նման էր: Այցելուների սրահում իրեն պինդ էր պահել: Կնոջն ասել էր՝ նրան լավ է հասկանում, նրան կյանքում հաջողություն էր մաղթել: Նո պրոբլեմո: Շնորհակալություն էր հայտնել այդքան տարի սիրալիր ու առատաձեռն լինելու համար: Հետո հսկիչին նշան էր արել, որ

թվայնացրել է 1915.info կայքը

հանդիպումն ավարտված է, կնոջը՝ ճանապարհել դեպի դուռը: Բաժանվելիս անգամ կապակել էր, թե մրգով կարկանդակները կկարոտի:

Այժմ, մեջքը պատին հենած, նստած է: Բերանն ամուր փակած, աչքերը հառած մի կետի:

Վերջապես հասկացավ. կարծում էր՝ կինն իրեն թիկունքից հարվածող անբարոյականի մեկն է: Մարդկային բնույթն է այդպիսին՝ ամենաշատը ատում ենք նրանց, ում ամենից շատ ենք սիրել:

– Գրողը նրան տանի,– ասում էր Փախածը:

– Բանի տեղ մի՛ դիր, կանցնի:

– Գրող կլինի, թե կանցնի:

Ուրիշ մեթոդ փորձեցի.

– Դո՞ւ չէիր ասում՝ դրսում այնքան դժբախտ մարդ կա: Ամեն մարդ մի դարդ ունի:

Փախածն ինձ բանի տեղ չի դնում:

– Վստահ եմ՝ քնում է դրա հետ,– ասում էր նա,– գիտե՞ս, այդ հիմարից երեխա էլ կունենա:

– Ի՞նչ գիտես:

– Գիտեմ,– բղավեց նա:

Նյարդայնացած ոտքի կանգնեց ու սկսեց այս ու այն կողմ քայլել: Աչքն ընկավ Հուդինիի պաստառին: Մի պահ կարծեցի՝ պատառ-պատառ է անելու: Բայց չարեց: Դրա փոխարեն տխուր նայեց: Հանկարծ ցատկեց ու ամբողջ ուժով բռունցքներով սկսեց պատին հարվածել:

Ձայնը բարձր էր, թավ ու սրտխառնոց առաջացնող: Հանկարծակի անցյալից մի պահ հիշեցի: Ես ու հայրս: Փողոցում էինք, մի ակումբի դիմաց կռվում էինք: Ռունգերը բացվում-փակվում էին, աչքերը՝ զայրույթից փայլում, կամ էլ ինձ էր այդպես թվում: Խենթացել էի, գլխով մտա պատի մեջ: Նորից ու նորից հարվածեցի: Մարդիկ վազելով հասան. ակումբի հսկիչին երբեք չեմ մոռանա:

թվայնացրել է 1915.info կայքը

Հեպո պայթյունի ձայնից սթափվում եմ: Փորձում եմ միջամտել, բայց Փախածն այնքան ուժեղ է հրում, որ ընկնում եմ մեջքի վրա: Մինչև թևերը կբռնեի ու կհանգստացնեի, մի քանի անգամ էլ է խփում պատին:

– Հերիք է, հսկիչներին գլխիդ ես հավաքելու: Լսո՞ւմ ես:

Բռունցքները՝ արյան մեջ, շնչակտուր: Գլուխը ափերի մեջ բռնած՝ սպասում եմ՝ երբ է հանգստանալու:

– Բանի տեղ մի՛ դիր,– ասում եմ ես:

– Դու ի՞նչ ես հասկանում:

– Հասկանում եմ:

– Մի բանից պետք է վրեժ լուծեմ,– ասում է նա:

– Ուրեմն քեզ համար տանձիկ գտնենք:

Փախածը ձայն չի հանում: Գիտեմ՝ մտքով ինչ է անցնում: Տանձիկը բանի պետք չի գա: Անկյանք, սառած, անլեզու: Ուզում էր բռունցքի տակ միս զգալ, ոսկորների ճտճտոցը: Եթե բանտում չլիներ, այդ գիշեր մի բար կգնար, ճիու պես կիմեր ու սարսափելի կռվի մեջ կընկներ: Նիհար բան է. երևի մի լավ ծեծ կուտեր: Բայց ոչինչ, հաջորդ օրը կատակելու լավ թեմա կլիներ: Հենարան կլիներ:

Գլուխը հետ հրելով՝ աչքերի մեջ նայեցի.

– Ի՞նձ խփիր:

– Ի՞նչ,– զարմացած հարցրեց նա խզված ձայնով:

– Շըշշ, մի՛ բղավիր...– ասում եմ ես:– Ես բռնցքամարտիկ եմ: Մոռացե՞լ ես:

Նայում էի՝ ինչպես էր զարմանքը դանդաղ հալվում:

– Գժվե՞լ ես,– ասում էր նա ու ծիծաղում, բայց երկուսս էլ գիտեինք՝ դա նշանակում է՝ այո՛:

Հանկարծ խենթանում եմ: Շապիկս հանում, դեն եմ նետում: Խոր շունչ եմ քաշում, արտաշնչում: Շնչի՛ր, արտաշնչի՛ր, շնչի՛ր, արտաշնչի՛ր...

Ուսերը՝ հավասար, փորս՝ ներս գցած, ձեռքերս՝ բռունցք արած, մկաններս՝ սեղմած: Պետք է տարածություն լինի:

թվայնացրել է 1915.info կայքը

Թշնամու ու քո միջև, բռունցքի ու ներքին օրգաններիդ, անհապի ու հասարակության, երեկվա ու այսօրվա, հուշերի ու խղճի միջև... Այս կյանքում արած կամ զգացած ամեն ինչի միջև պետք է փարածություն լինի:

Տարածությունը քեզ պաշտպանում է: Ուժեղ հարվածս սպանալուց խուսափելու գաղտնիքը փարածությունը ճիշտ պահպանելն է:

Այդ ընթացքում Փախածը, ինչպես միշտ, երբ մի բան չէր հասկանում, մի հոնքը բարձրացրած՝ ինձ էր նայում:

– Հը՛, ի՞նչ ես սպասում, այ վախկոտ,– սադրում էի նրան:

Առաջին հարվածը մի քիչ անհավասարակշիռ է ստացվում՝ անկյունագծով: Երևի ավելի շատ ինքն իրեն ցավեցրեց: Երկար ու չարախինդ սուլում եմ:

– Ի՞նչ,– լարված հարցնում է Փախածը:

– Ոչինչ,– ասում եմ ես՝ լկտիաբար ծիծաղելով:

Փախածն ատում է, երբ մարդիկ չար ժպտում են: Իրենից անկախ՝ զայրանում է: Իրականում այդ որջում ոչ ոք ժպիտ չի սիրում:

Որովայնիս մկանները ճիգ են: Բայց հաջորդ հարվածն ավելի ուժեղ էր, քան սպասում էի: Զգում եմ՝ ինչպես խրվեց կրծքավանդակիս տակ ու դուրս եկավ: Իր ուժի վրա զարմացած Փախածը շրջվեց ու նայեց ինձ:

Ուրիշ բան եմ հիշում: Հիշում եմ՝ ինչպես մայրս ինձ Ստամբուլում տարավ բաղնիք: Պետք է որ վեց տարեկան լինեի: Գոլորշի, տաք, չորս կողմս մերկ կանանց մարմիններ, կախ ընկած կրծքերով մի տատիկ: Սարսափած դուրս էի վազել: Մայրս ինձ բռնել ու ուժեղ թափ էր տվել.

– Ո՞ւր:

– Չեմ սիրում այս տեղը: Տուն գնանք:

– Այ վախվորածի մեկը, ես քեզ իզո՞ւր եմ սուլթան ասում: Ուզում ես փոխարենը ղզի՞կ ասենք:

թվայնացրել է 1915.info կայքը

Տարածություն: Մորս հիշողության ու իմ միջև պեպք է կարածություն դնեմ: Թե չէ կխելագարվեմ: Նորից եմ ժպտում:

– Դե՛, ղզիկի մեկը:

Փախածի հաջորդ հարվածներն ավելի ուժեղ ու համառ էին: Ամրակազմ չէր, բայց նրբիկ էլ չէր: Որսորդական շան նման էր՝ նիհար, նրբակազմ, մի գրամ յուղ չկար մարմնում, բայց համառ էր ու անողոք:

Որոշ ժամանակ այդպես շարունակում ենք: Մի պահ իրեն հավաքում, ծնոտիս է հասցնում, բայց հիմնականում նույն կետին էր հարվածում: Այդ մկանի տակ մի տեղ գալարված քնող կույրաղիքս էր՝ անիմաստ օրգան: Ոչ մի բանի պետք չէ, բայց Հուդինիին սպանեց:

Իրար հետևից հարվածում էր Փախածը: Մի քանի րոպե անց միջանցքի ծայրի դռները բացվեցին, լույսերը վառվեցին: Ակնհայտորեն կռվից զոհ, քթի տակ ծիծաղող մարդիկ կային կողքի խցում: Հսկիչները վազելով գալիս են: Կարծելով, որ կռվում ենք՝ ներս են մտնում: Փախածը, թևը գցում է վզովս, որ ցույց տա՝ ամեն ինչ լավ է: Մենք ընկերներ ենք՝ ասում է նա: Հպարտ ժպտում է: Մինչդեռ սխալ էր: Ժպտալը: Ասացի, չէ՞ այստեղ ոչ ոք ժպիտ չի սիրում:

Մենք դեռ չէինք հասկացել՝ ինչ է կատարվում, բայց բղավոցներ, հայհոյանքներ, սպառնալիքներ էին հնչում: Հսկիչները մեզ հրում էին: Ուժի ցուցադրություն: Փախածն ու ես գիշերը խոհանոցում բռնված միջատների պես խեղճանում ենք:

– Ասում ենք՝ սխալ եք հասկացել: Չէինք կռվում,– բարձր ձայնով բղավում էր Փախածը:

– Ուրեմն ի՞նչ էիք անում,– հարցրին նրանք:– Պարո՞ւմ էիք: Բռունցք բռունցքի՞:

Մի պահ շփոթված Փախածը հարցական աչքերով ինձ է նայում՝ Իսկապես, ի՞նչ էինք անում:

թվայնացրել է 1915.info կայքը

Հաջորդ առավոտյան սպա Էնդրյուն է այցելում՝ ամբարտավանությունը փոքրիկ շան պես թևի տակ դրած: Գործին հարմարվել էր, բայց ինձ՝ ոչ: Երեկ գիշերվա հետ կապված զեկույցները կարդացել էր ու որոշել՝ հենց այնպես կռվի չեն բռնվում, հատուկ թմրանյութ են օգտագործել: «Պահած բան» փնտրելու պատրվակով իր մարդկանց հրամայում է խուզը տակնուվրա անել՝ գրքեր, ծածկոցներ, Փախածի երեխաների նկարները, իմ տետրը, անգամ ներքնակներն է բացել տալիս:

Փախածը չժպտալու համար այտերը ներսից կծում է: Երկուսս էլ նույն բանն ենք մտածում: Զարմանալիորեն մաքուր է խուզը: Եթե մի քանի օր առաջ փնտրտուքների եկած լինեին, մի քանի պլան կգտնեին: Բայց այսօր բան չէր մնացել: Անհանգստանալու կարիք չկար:

Սպա Էնդրյուն պատրաստվում էր գնալ, բայց հանկարծ կանգ առավ: Ձեռքին ինչ-որ բան կար:

– Սա ի՞նչ է:

Բացիկ էր: Լունապարկ, կարուսել: Նկարում ոչ ոք չկար, միայն փայտե ձիեր, հետևում՝ լույսեր ու քամու հետ հեռացող կարմիր փուչիկ:

– Չեմ լսում ձեզ,– ասաց Էնդրյուն:

Ո՛չ Փախածն էր պատասխանում, ո՛չ ես: Այդ պահին սպա Էնդրյուն քարտը շրջում է ու ձայնը կնոջ ձայնի նմանեցնելով՝ սկսում է կարդալ:

«Սիրելի՛ եղբայր,

Թե՞ քեզ այլևս այդպես չդիմեմ: Բայց ի՞նչ ասեմ՝ Ասքանդե՞ր, Իսքենդե՞ր, Ալե՞քս, Սուլթա՞ն, Մարդասպա՞ն: Ի՞նչ տարբերություն:

Հիշո՞ւմ ես, երբ նոր էինք Լոնդոն եկել, մայրս մեզ կարուսել տարավ: Հրաշք բան էր, չէ՞: Յունուսը դեռ չէր

թվայնացրել է 1915.info կայքը

ծնվել, հայրս էլ՝ չգիտեմ որտեղ էր: Միայն երեքով էինք՝ դու, ես ու մայրս:

Քեզ երբեք չեմ ների: Ուզում ես՝ բանտերում փտիր, ուզում ես՝ դժոխքում այրվի՛ր, ո՛չ թագուհին, ո՛չ Ասպված քեզ այնպիսի պատիժ չեն կարող տալ, որ աչքումս անմեղ դառնաս:

Իմացած լինես՝ դատարանում քեզ չեմ աջակցելու: Ինչ ուզում է ասի Թարըք հորեղբայրը, քո դեմ եմ վկայություն տալու: Այսօրվանից սկսած՝ երկու հոգու սուգն եմ պահում՝ մորս ու եղբորս...

Էսմա»:

– Վայ, խիստ կին է քույրդ,– ասում է սպա Էնդրյուն՝ ձեռքը սրտին դնելով, կարծես թե ցավում էր:– Գովելի է՝ ձեր ազգուպակում գոնե մեկը ճիշտը սխալից տարբերում է:

Ոչ ոքի չէր նայում խոսելիս, բայց խոսքն ավարտելուն պես աչքերը աչքերիս է հառում: Երբ ձգվում եմ քարտը վերցնելու համար, հանկարծ օդ է բարձրացնում. խաղ է խաղում ինձ հետ:

– Հո՛պ, սպասի՛ր տեսնեմ,– ասում է նա ու սեղմում շուրթերը:– Նախ պատասխանի՛ր՝ որպես ի՞նչ էիր ուզում, որ Փախածը քեզ հարվածի:

Լռությանս դիմաց ուսերը թոթվում է ու սկսում է ուսումնասիրել եղունգները:

– Լավ, ես գնամ,– ասաց նա ի վերջո:– Այս կարևոր քարտն էլ տանում եմ հետս: Երբ որոշես ճիշտը պատմել, արի՛, ինձ տե՛ս, Ալե՛քս, եղնուբրինձդ էլ կվերցնես:

Կարիք չկար այդ քարտը վերցնել՝ իմանալու համար, թե ինչ էր գրված: Ամեն բառն անգիր գիտեի, ամեն վանկը: Ամեն «երբեք»-ը, ամեն սպորակեպը, ամեն «մայրս»:

Հենց սպա Էնդրյուն գնում է, նստում եմ հատակին: Կոկորդս սեղմվում է, աչքերս լցվում են: Փորձում եմ

թվայնացրել է 1915.info կայքը

հանգիստ մնալ, միտքս կառավարել, բայց չեմ կարողանում: Բայց նորից նույն բանն է սկսվում: Ինձ ապտակում եմ: Չի ազդում: Նորից եմ ապտակում: Այսօր ահավոր օր է լինելու: Պարզ է, պարզից էլ պարզ:

Իսքենդեր Թոփրաք
Շրուսբերիի բանտ, 1991

թվայնացրել է 1915.info կայքը

Էսմա

1967-1970, Սպամբուլ

Հյուսիսային Լոնդոնում՝ Լավենդեր փողոցում էր նրանց տունը: Հակառակ փողոցի անվանը՝ շուրջը ոչ մի նարդոս չէր աճում, ինչից Փեմբեն խորապես հիասթափված էր: Երբեք հույսը չկտրեց, որ մի օր մի տեղ կապուտակ ծովի պես նարդոսի պարտեզ կտեսնի:

Չնայած այդ տարիների բոլոր դժվարություններին՝ Էսման սիրում էր իրենց թաղամասը: Աֆրոամերիկացիների վարսավիրանոցները, ջամայկացիների ռեստորանը, հրեա հացթուխները, ալժիրցի մրգավաճառը, որ տարօրինակ անուն ուներ ու ամեն անգամ իրեն մի բան էր հյուրասիրում, կողքի շենքում բնակվող ու ամեն օր փորձ անելիս պատուհանները բաց պահող աղքատ երաժիշտները, շուկայում հինգ ֆունտով դիմանկարներ անողը, որը մի անգամ իրեն անվճար նկարել էր: Ամեն տեսակի, ամեն տիպի մարդ: Հաքնին Էսմայի դրախտն էր: Նրա համար մեծ երջանկություն էր ձեռքին՝ գրքեր, գլխում՝ պատմվածքներ, հայտնի գրող դառնալու մասին երազելով՝ փողոցներում քայլելը: Մայրը երբեք չհասկացավ իր սերը այդ վայրի հանդեպ:

Այդ տնից առաջ Ստամբուլում մի բնակարանում էին ապրում: Իսքենդերի ու Էսմայի մանկության առաջին տարիներն այդ տանն էին անցել, բայց այդ տունն արդեն այլ աշխարհից էր: 1970 թվականի մայիսին՝ Յունուսի

թվայնացրել է 1915.info կայքը

ծնվելուց կարճ ժամանակ առաջ, մինչև Անգլիա տեղափոխվելն այնտեղ էին ապրել:

Նոր երկիր տեղափոխվողների մեծ մասի պես Փեմբեն էլ ընտրողական հիշողություն ուներ: Անցյալից միշտ լավ բաներ էր հիշում: Նրա համար հայրենիքը միշտ կատարյալ էր, եթե նույնիսկ ոչ իրական կյանքում, գոնե երազանքներում մի ապաստան էր, մի Շանգրի Լա:

Մինչդեռ Էսմայի հիշողությունները Ստամբուլի մասին խառն էին: Լավն էլ կար, վատն էլ: Գուցե ծնողների ու երեխաների հիշողությունները դատապարտված էին տարբեր լինելու: Երբեմն Էսման հիշում էր նկուղային հարկի այն հին տունը՝ երկնագույն բազկաթոռները, սեղանների ժանեկագործ ծածկոցները, բաղնիքի պատերն ու առաստաղին հավաքված բորբոսը, ցածր, նեղլիկ պատուհանները... Հիշողության մեջ մեխված կիսամութ բնակարանում միշտ խշխշացող ռադիոյից անդադար նվագ էր լսվում, իսկ օդում թույլ նեխահոտ էր կախված: Առավոտյան կամ կեսօրի ժամը ոչինչ չէր փոխում, միշտ աղջամուղջ էր:

Այդ նկուղային հարկում Էսման գրկի երեխա էր, հետո երկու, չորս, հինգ տարեկան դարձավ... ու հանկարծ՝ տունը էլ չկար: Հյուրասենյակի գորգի վրա ծալապատիկ նստում, բերանը բաց նայում էր առաստաղին մոտ փոքր պատուհաններին: Դրսում աջ ու ձախ անող ոտքերի խենթ երթևեկություն էր: Աշխատանքի գնացող, առևտրից վերադարձող կամ զբոսնող անցորդներ: Կոշիկների մեծ մասը սև, դարչնագույն կամ մոխրագույն էին: Երբեմն երեխաների կոշիկներ, փայլուն, երկարաճիտ կոշիկներ կամ կաշվե սանդալներ էլ էին լինում:

Անցորդների ոտքերին նայելով՝ փորձում էր նրանց կյանքը կռահել: Իրենց ամենասիրելի խաղը երեք հոգով էին խաղում՝ Էսման, Իսքենդերն ու Փեմբեն: Օրինակ՝

թվայնացրել է 1915.info կայքը

կրունկներով կտկտացնող, ճարպիկ ու արագ քայլող, կոկիկ կապիչներով, փայլուն, մի զույգ կարճաճիտ կոշիկ տեսան: «Երևի նշանածի հետ հանդիպման է գնում»,- ասում էր Փեմբեն ու մի պատմություն հնարում: Իսքենդերն էլ էր լավ խաղում այդ խաղը: Երբ մաշված, կեղտոտ մոկասիններ էր տեսնում, ասում էր. «Կոշիկների տերը ամիսներ շարունակ գործազուրկ է եղել, հիմա գնում է բանկ կտրելու»: Իսկ Էսման ոչ մի կերպ չէր կարողանում հավասարվել նրանց: Նրա համար դժվար էր պատկերացնել, որ այդ ոտքերին կապված մարմիններ կան:

Նկուղային հարկ լույս չէր ընկնում, բայց լիքը անձրևաջրեր էին սողոսկում: Երբ տարափ էր լինում, տան խողովակներն ու զուգարանը ջրով էին լցվում, վերջին սենյակը գարշահոտ ու պղտոր լճով էր ծածկվում: Էսման այդտեղ հասկացավ՝ ամեն բան չի, որ լողում է: Փայտյա մոխրամանները, խառնիչները, նկարի շրջանակներն ու զամբյուղներն այնքան էլ վատ լողորդ չէին: Վառարանի սկուտեղները, տախտակները, գրտնակն ու թեյնիկն անհույս էին: Մինչ սեղանի վրայի ապակյա ծաղկամանը խորտակվում էր, միջի պլաստմասսայե ծաղիկները լողում էին: Մեկ էլ, իհարկե մեջքի քորիչը... Ուզում էր, որ դա էլ խորտակվեր, բայց չէր ստացվում...

Ստամբուլ... Էսման քաղաքի հուշը սրտում էր պահում: Բթացած ցավի պես: Անունը դնում էր լեզվին, կոնֆետի պես երկար ծծում էր: Լոնդոնը քաղցրավենիք էր, բայց կարամելով՝ ծանր, սուր համով ու ավանդական: Մինչդեռ Ստամբուլը բալով, մատուտակով, ատամին կպնող քաղցրավենիք էր, հակասական համերի համադրություն, գույնզգույն խառնուրդ, ուր թթուն քաղցր էր, քաղցրը՝ թթու:

Փեմբեն սկսեց աշխատել այն բանից հետո, երբ Ադեմը երկու ամսվա աշխատավարձը խաղատանը տանուլ

թվայնացրել է 1915.info կայքը

տվեց: Հանկարծ առանց գումարի էին մնացել: Փեմբեն սկսեց հարուստների տները գնալ այն ժամերին, երբ Իսքենդերը փողոցում էր խաղում: Նրանց երեխաներին նայելու, ճաշ եփելու, սենյակները մաքրելու, զուգարաններ սրբելու, հագուստները արդուկելու ու երբեմն էլ նրանց խնդիրներին ականջալուր լինելու համար: Էմային երբեմն իր հետ էր վերցնում, երբեմն թողնում էր հարևանի մոտ:

Երեկոները Փեմբեն վիլլաների մասին էր պատմում, կարծես հեքիաթ պատմեր: Ասում էր՝ ամեն երեխա իր սենյակն ուներ, ժամանակակից ամուսիններն իրենց կանանց խմելու են հրավիրում: Մի անգամ տեսել էր՝ ինչպես է ամուսնացած զույգը ձայնապնակը միացնում ու միասին պարում: Իր համար ոչ թե պարն էր անսովոր, այլ գեղեցիկ գորգի վրա կոշիկներով կանգնելը: Նորից համոզվել էր՝ հարուստները տարօրինակ են: Թե չէ մարդ ինչու պետք է խմիչքի մեջ կանաչ ձիթապտուղ գցի, դեղին պանիրը քառակուսիներով կտրի, ատամփորիչով ուտի կամ էլ կոշիկներով կանգնի գորգին:

Այդ ժամանակ լրիվ դրույքով աշխատանք գտավ Փեմբեն: Գործատուները ծանոթ մարդիկ էին: Կինը սիրված կինոաստղ էր ու նոր էր աղջիկ երեխա ունեցել: Ամուսինը գործի բերումով շատ էր ճանապարհորդում: Փեմբեի պարտականությունը տանը, երեխային ու կյանքի փոփոխություններին հարմարվող կինոաստղին խնամելն էր: Գազիկներ ունեցող երեխայի հետ դժվար էր, շատ էր արտասվում: Բայց կինոաստղը երբեմն երեխայից ավելի շատ էր արտասվում: Փեմբեն նրա անկողնու շուրջը սատապի սերմեր էր ցանել նրան ջիններից պաշտպանելու համար: Հետո, երբ արդեն մութն ընկնում էր, տնից դուրս էր գալիս, մի ավտոբուս ու հետո մինիբուս նստելով՝ վերադառնում էր նկուղի տունը:

թվայնացրել է 1915.info կայքը

Մի քանի անգամ հենց պատրաստվում էր դուրս գալ, կինոաստղի ամուսինն էր տուն եկել: Էման չէր հավանել՝ ինչպես է նա նայում մորը: Նկատել էր, որ փողոցում ուրիշ տղամարդիկ էլ են մորը նույն կերպ նայում՝ շինարարները, սրճարանում պարապ նստածները միշտ ոտքերին, կոնքերին էին նայում: Անգամ երբ ձմռանը հաստ հագուստ էր հագնում, այնպես էին նայում, ասես կարող էին հագուստի շերտերի տակը տեսնել:

Մի ամիս անցավ: Պետք է վաղը մյուս օրը աշխատավարձը տային, բայց ոչինչ չէին ասում: Կինոաստղը հենց այդ ժամանակ էր սկսել քնահաբեր օգտագործել՝ կամ քնկոտ էր լինում, կամ քնած: Փեմբեն չէր կարողանում թեման բացելու քաջություն հավաքել, իսկ երբ պատրաստվում էր խոսել, կինը նորից քնի գիրկն էր ընկնում:

Մի օր Էման, գորգին նստած, խաղում էր, երբ զգաց՝ տանտիրուհին շուրջն է պտտվում: Եթե երկրպագուները նրան այդպես տեսնեին, երևի մեծ հիասթափություն ապրեին, բայց երեխային այդ թափթփված ու տխուր կինը դուր էր գալիս: Բայց երբ ուզում էր նրա հետ խոսել, երես չէր տալիս:

– Բարև՛, փոքրիկ աղջի՛կ, ի՞նչ ես խաղում:

– Թխվածք եմ պատրաստում,– ասաց Էման՝ ցույց տալով պլաստմասսայե ամանները:

– Մմմ, ինչ լավն են: Կարո՞ղ եմ մի հատ վերցնել:

– Չեմ տա:

– Վայ, ինչո՞ւ:

– Որովհետև դու չես վճարի: Մորս էլ չես վճարել:

Կնոջ ժպիտը սառեց դեմքին, հետո լրիվ անհետացավ:

– Բայց կարծում էի՝ ամուսինս լուծել է այդ հարցը...– ասաց նա աստիճանաբար նվաղած ձայնով:– Աստվա՛ծ

թվայնացրել է 1915.info կայքը

իմ, կներես, սիրելի՛ս: Անմիջապես կզբաղվեմ դրանով, խոստանում եմ:

Բայց հաջորդ օրը կարծես մոռացել էր այդ խոսակցությունը: Սարսափելի գիշեր էր անցկացրել: Անընդհատ արտասվում էր: Փեմբեն կնոջ հանդեպ խղճահարություն, իսկ իր հանդեպ զայրույթ էր զգում: Եթե իմանար այդպես է, գոնե աշխատավարձի կեսը ամսվա սկզբին կուզեր: Բայց ժամանակ չկար. երեխան սկսեց լացել: Փեմբեն նրան կերակրեց, տակաշորը փոխեց ու քնեցրեց:

Դրանից հետոն Փեմբեն երազի պես էր հիշում: Խոհանոցում աշխատում էր, երբ ծոծրակին մեկի շնչառությունը զգաց ու սարսռաց: Հետո մեկը բռնեց կոնքերից: Խուճապահար բղավեց, շրջվեց ու կնոջ ամուսնուն տեսնելով՝ զարմացավ: Թթու հոտ էր տարածվում նրանից՝ սափրվելու լոսյոնի ու վիսկիի: Աչքերը կարմրած էին:

– Շը՛շշ,– ասաց նա՝ մատը շուրթերին դնելով:– Բոլորը քնած են: Մեզ չեն տեսնի: Բոլորը քնած են: Կարող ենք մենք էլ քնել: Փող կտամ, սիրուն բաներ կառնեմ քեզ: Կոշիկներ, պայուսակներ, հագուստներ, ոսկե ականջողեր... Դու լավ կին ես: Կամ սուրբ ես, կամ իմաստուն: Խղճա՛ ինձ: Կինս ոչինչ չի իմանա: Ամուսինդ էլ չի իմանա: Ես վատ մարդ չեմ: Ամեն տղամարդու նման ես էլ պահանջներ ունեմ: Կինս արդեն կին չէ: Երեխա ունենալուց ի վեր շատ է փոխվել, անընդհատ լալիս է: Չեմ կարողանում դիմանալ: Ամբողջ քաղաքը քնած է: Մեզ չեն տեսնի:

Փեմբեն նրան դեպի պատը հրեց: Այնքան հարբած էր, որ չկարողացավ դիմադրել: Ձեռքերը երկու կողմ կախվեցին, մարմինն այնպես թուլացավ, կարծես փուչ լիներ, կարծես ոչ թե միս ու ոսկորից էր, այլ կտորե խաղալիք: Երբ Փեմբեն մի շնչում հասավ հյուրասենյակ, Էսմային

թվայնացրել է 1915.info կայքը

սեղանի տակ գտավ: Մի ձեռքով նրան քաշեց, մյուս ձեռքով պայուսակը վերցրեց ու սկսեց միջանցքով քայլել, երբ հիշեց, որ տուն գնալու գումար չունի:

Մարդը օրորվում էր դռան մոտ: Աչքերը Փեմբեին էր հառել:

– Պարո՛ն...– ասաց Փեմբեն: -Գումարս չեք տվել:

– Գումա՞ր ես ուզում,– հարցրեց նա: Զարմացած էր երևում:

– Աշխատավարձս...

– Հա՛մ ինձ աղբի պես ես վերաբերվում, հա՛մ էլ փող ես ուզում: Ի՞նչ փչացածն ես, բայց,– ընդհատեց նա:

Մայր ու աղջիկ տնից վազելով փախան: Ավտոբուս նստելով՝ իրենց կանգառում իջան, որոշեցին ճանապարհի մնացած մասը քայլելով գնալ: Բայց Փեմբեն այնքան տխուր էր, որ ուշադրություն չէր դարձնում՝ ուր են գնում: Կամաց-կամաց մայրուղիներից հեռանալով՝ գալարաձև փողոցներ մտան. ամեն քայլի հետ կողմնորոշումը թուլանում էր: Մութն ընկնում էր: Հայտնվեցին ծովափին՝ մի հատվածում, ուր նախկինում երբեք ոտք չէին դրել: Ափի երկայնքով հսկայական ժայռեր էին ձգվում, որոնց անդադար զարկվում էին ալիքները: Այնտեղ նստեցին, շունչ քաշեցին, նայեցին գեղեցիկ քաղաքին:

Էման գետնին խեցիներ տեսավ: Վեր կացավ ու սկսեց ուրախ հավաքել: Երբ տեսավ՝ երկու տղամարդ են մորը մոտենում, դեռ ծովափին խաղում էր: Նրանք, արևածաղիկն ուտելով, կեղևները գետնին էին գցում, Հենզելի ու Գրետելի պես իրենց հետևից հետքեր էին թողնում:

– Քուրի՛կ, ի՞նչ է եղել, տխուր ես երևում,– ասաց նրանցից մեկը:– Քո նման քաղցրիկ կինը ի՞նչ գործ ունի այստեղ այս ժամին:

թվայնացրել է 1915.info կայքը

– Երևի օգնության կարիք ունի,– ասաց մյուսը:

Փեմբեն չպատասխանեց, քիթը քաշելով՝ պայուսակի մեջ թաշկինակ փնտրեց: Մի քանի մազակալ, տան բանալիները, կոմունալների թղթերը, երեխաների նկարն ու հայելի կար պայուսակի մեջ, բայց թաշկինակ չկար:

– Թե մնալու տեղ չունես, մենք քեզ կնայենք, դարդ չանես:

– Հա՛, մենք հոգ կտանենք,– ասաց մյուսն անամոթաբար:

– Ձեզնից օգնություն ուզո՞ղ կա,– սաստեց Փեմբեն. ձայնից ակնհայտ էր, որ իրեն անհանգստացրել են: Հետո, դեպի ափը նայելով, ձայն տվեց.– Էսմա՛, արագ այստե՛ղ արի:

Երեխային տեսնելով, զարմացան, բայց չէին պատրաստվում հեռանալ: Փոխարենը սկսեցին մորն ու աղջկան հետևել:

– Ա՛յ անամոթներ, ռա՛դ եղեք: Ամուսնացած կին եմ, չե՞ք տեսնում:

Մեկը հապաղեց, բայց մյուսը աչքերը չռեց, կարծես ասեր՝ հա, ի՞նչ կա որ:

Եղանակը մշուշոտ էր, շուրջն աստիճանաբար ավելի քիչ մարդ էր երևում: Արագ էին քայլում, փորձում էին հեռու մնալ մութ անկյուններից: Մի քանի կին տեսան՝ ամուսինները կամ ընկերները նրանց հետ էին քայլում՝ պաշտպանված, տեր ունենալու հանգստությամբ սառը հայացքով նայեցին Փեմբեին:

Տասը րոպե անց մի տարեց մարդու ու մի տղայի տեսան: Երևի կնոջ ու դստեր վիճակը գրավել էր նրանց ուշադրությունը, որովհետև շտապեցին մոտենալ:

– Սելամունալեյքում, աղջի՛կս: Լա՞վ եք:

– Մոլորվել ենք, հորեղբա՛յր, տուն չենք կարողանում հասնել,– ասաց Էսման:

թվայնացրել է 1915.info կայքը

– Լավ, իսկ որտե՞ղ է ձեր տունը,– ժպտալով հարցրեց նա:

Փեմբեն շշնջաց իրենց թաղամասի անունը, բայց քաղաքավարությունից դրդված՝ ասաց, որ անհանգստանալու կարիք չկա:

– Էհ, բախտներդ բերել է: Թոռանս հետ մենք էլ ենք այդ կողմ գնում:

– Ո՛չ, չէինք գնում,– ասաց տղան:

Տարեց մարդը թոռան ուսը թեթև կսմթեց:

– Երբեմն ամենակարճ ճանապարհն ընկերոջն ուղեկցելն է:

Հետո, հետևող տղամարդկանց նայելով, հոնքերը այնպես կիտեց, որ ամաչելով հայացքը փախցրին:

Սկսեցին քայլել դեպի տուն Փեմբեն, Էսման, տարեց մարդն ու տղան: Էսման խեցիները դրեց մոր պայուսակի մեջ: Նոր ընկերների հանդեպ երախտագիտությամբ՝ խոր շնչեց ծովից եկող աղի օդը: Երբ հասան փողոց, Փեմբեն տարեց մարդուն շնորհակալություն հայտնեց ու հարցրեց թոռան անունը:

– Յունուս,– հպարտ ասաց մարդը:– Եկող ամիս թլփատումն է լինելու, ինշալլա՛հ:

– Եթե Աստված ինձ մի տղա էլ տա, խոստանում եմ ձեր պատվին նրան Յունուս անվանել, որ ձեզ պես բարեսիրտ լինի,– ասաց Փեմբեն:

* * *

Նկուղային հարկի բնակարանում՝ բարութագույն դատարկությամբ ծածկված պատուհանների տակ նստած մեկը մյուսի հետևից ծխում էր Ադեմը: Հենց լսեց բանալու ձայնը, ոտքի կանգնեց:

– Վայ, էս ո՞ւր եք:

թվայնացրել է 1915.info կայքը

– Քայլելով եկանք այդքան ճանապարհը,– ասաց Փեմբեն:– Էսմա՛, վերարկուդ հանի՛ր ու ուղիղ սենյա՛կդ գնա:

– Բայց մայրիկ... խեցիներս...

– Հենց հիմա ասացի:

Աղջկան դեպի միջանցքը հրելով՝ դուռն այնքան արագ փակեց, որ դուռը հետ գնաց ու նորից բացվեց.

– Մինիբուսին վճարելու գումար չունեի,– ասաց նա:

– Այսի՞նքն՝ գումար չունեի: Ինչքա՞ն վճարեցին:

– Ոչինչ: Էլ այնտեղ չեմ աշխատում:

– Ի՞նչ ես խոսում,– հարցրեց Ադեմը:– Աշխատավարձդ ի՞նչ ես արել: Ես պարտքեր ունեմ, չգիտե՞ս:

– Քո՝ պարտքերը ե՞րբ են վերջ ունեցել, որ,– ասաց Փեմբեն:– Մեզնից վերցնում, խաղատանն ես տալիս:

– Ի՛նձ նայիր: Ինձ մի՛ զայրացրու: Գումարը որտե՞ղ է:

– Չեն տվել:

Երևի մոտ մի րոպե ձայն դուրս չեկավ: Հետո կարծես մղձավանջից արթնացածի պես խոր շունչ քաշեց Ադեմը.

– Լսի՛ր, դու, էս ժամին ես գալիս՝ հերիք չի, ուզում ես, որ ստերիդ հավատա՞մ: Փողն ո՞ւր է, փչացա՛ծ:

Սեղանի վրա մեջքի քորիչ կար: Այծի եղջյուրից էր պատրաստված. մանանեխի գույնի, սառը գործիք էր: Ադեմն արագ վերցրեց ու նետեց: Լսած խոսքերից ապշած Փեմբեն չկարողացավ ժամանակին խույս տալ: Քորիչը պտտվեց ու դիպավ ճակատին:

Էսման հետևում էր վերարկուների հետևից: Մոր ու հոր միջև սիրո բացակայությունը տեսնող ո՛չ առաջին, ո՛չ էլ վերջին երեխան էր: Մեկ օրվա մեջ լսեց՝ ինչպես են մորը «անբարոյական», «փչացած», «քուրիկ» ու «սուրբ» անվանում: Այդ պահին կարծես ինչ-որ բան տակնուվրա եղավ ներսում՝ ուզեց մարմինը լքել՝ երանի, ախ, երանի աղջիկ չծնվեր:

թվայնացրել է 1915.info կայքը

Ո՛չ, Ադեմ Թոփրաքը կնոջը կամ երեխաներին չէր ծեծում: Բայց այդ օրն ու դրան հաջորդող տարիներին միշտ արագ նյարդայնանալու էր, հայհոյելու, չար ու քինոտ խոսքեր էր ասելու, իրերը պատերին էր նետելու ու այդ ամենն անելիս իրեն այդ անկյունը խցկելու համար ամբողջ աշխարհին ատելու էր: Վախենում էր, որ մի օր հոր ստվերին է հանդիպելու և վաղ թե ուշ նրան է նմանվելու:

թվայնացրել է 1915.info կայքը

Քեյթ

21 նոյեմբերի, 1977
Լոնդոն

Քեյթը Իսքենդերի դասընկերուհին էր ու ժամանակի ընթացքում ընկերուհին դարձավ: 1978 թվականի աշնանը նա էլ, իր կամքից անկախ, նրանց ընտանեկան փորձանքի մի մասն էր դառնալու: Նրանց ընկերությունը մի անակնկալ դեպքով սկսվեց: Այդ օրը ճաշարանում, ինչպես միշտ, աղջիկների հետ նստած՝ բամբասանքով էր զբաղված Քեյթը: Աչքի պոչով էլ մյուս սեղանի մոտ նստած տղաներին էր նայում: Իսքենդերը հենց իր դիմաց էր նստած: «Խիյարի մեկն էր: Ալեքս: Ալեքսանդր: Իսքենդեր: Ինչ որ է: Իսկական խիյար: Ինքնահավանի մեկը: Անընդհատ վեզիր-նազիրների հետ է. տեսնողն էլ կկարծի, թե ավազակախմբի առաջնորդ է»,– ինքն իրեն մտածում էր Քեյթը: Բայց ինչ-որ բան հետաքրքրում էր իրեն: Լսել էր՝ բռնցքամարտով է զբաղվում՝ իր բնավորությանը ամենահարմար սպորտն էր երևի:

Հենց այդ պահին աղմուկ բարձրացավ: Իրարանցման պատճառը ճաշարանի կենտրոնում երկու ուսերին ամենօրյա կանացի տակդիրներով կանգնած Ջեյսոն անունով տղան էր: Ակնհայտ է, որ աղջիկներից մեկի պայուսակն էր ձեռքն ընկել ու անամոթաբար բացել էր: Կոնքերը շարժելով՝ ասաց.

թվայնացրել է 1915.info կայքը

– Հե՛յ, ժողովո՛ւրդ: Տեսե՛ք՝ ինչ եմ գտել: Այսօր շատ նյարդային եմ: Երևի օրերս են:

Տղաները քթի տակ ծիծաղեցին: Աղջիկներն ամաչելով ու սարսափած նայում էին, բայց ձայն չէին հանում: Իսկ Քեյթը դառը ժպտաց: Մտածեց՝ այդ պայուսակի տեր աղջիկը, ով որ է, հիմա խայտառակ եղավ: Խեղճը արդեն ամեն տեսակի անշնորհք խոսքի ու կատակի թեմա էր դառնալու: Դեռահաս տղաներն ինչո՞ւ էին այդպես: Այդքան կոպիտ ու աննրբանկատ: Միշտ փորձում էին աղջիկներին անհարմար դրության մեջ դնել:

– Վայ, շատ է. մի միջադիրը չի հերիքում,– ասաց Ջեյսոնն ու ուսապարկը օդ թռցրեց:

Տղաները ծիծաղեցին: Քեյթի դեմքը հանկարծ գունատվեց: Անհանգստացած նայեց աթոռի տակ: Վստահ էր՝ սովորականի պես այնտեղ էր դրել պայուսակը, բայց չկար: Այդ գրողի տարածը ինչպե՞ս կարող էր հայտնվել Ջեյսոնի մոտ: Ձեռքերը թուլացան:

– Ո՞վ է ուզում իմանալ՝ ում պայուսակն է,– հարցրեց Ջեյսոնը. ձայնից ակնհայտ էր, որ ուզում է ինչ-որ մեկին վնասել:

Տղաների մի մասը ուրախացավ.

– Ասա՛, ասա՛:

Երբ Ջեյսոնը սկսեց պայուսակը փորփրել, Քեյթը քիչ էր մնում՝ ուշաթափվի: Հիշեց, որ բնապահպանության ծրագիրը պայուսակի մեջ է, անունն էլ վրան է գրել: Հիմա խայտառակ էր լինելու բոլորի առաջ: Խուճապահար նայում էր: Գլուխը թեքեց, որ չարտասվի: Հենց այդ պահին աչքերը հանդիպեցին Իսքենդերի աչքերին: Բոլորը Ջեյսոնի ծաղրածուություններն էին դիտում, իսկ Իսքենդերի համար միևնույն էր: Բայց նկատել էր՝ Քեյթը վախեցած է ու ուշադիր նրան էր նայում:

թվայնացրել է 1915.info կայքը

Ջեյսոնը պատրաստվում էր պայուսակի տիրոջը հայտարարել, երբ մի տարօրինակ բան կատարվեց. Իսքենդերը աղմուկով աթոռը հետ հրեց ու ոտքի կանգնեց.

– Լսի՛ր, ծաղրածո՛ւ, վե՛րջ տուր հիմարությանը,– բղավեց նա:

Այդպիսի անսպասելի հակադարձումից Ջեյսոնն ապշել էր, բայց ցույց չտվեց:

– Ի՞նչ է եղել, Ալե՛քս: Ինչի՞ց նեղացար որ: Կարո՞ղ է՝ քո միջադիրներն են:

Բոլորը սկսեցին ծիծաղել, բայց Իսքենդերը ուշադրություն չդարձրեց:

– Ո՛չ, քրոջս:

Լռություն տիրեց: Ոչ ոք չէր սպասում:

– Դասերից հետո հանդիպելու ենք. պայուսակը ինձ է տվել: Հասկացա՞ր:

– Ուրեմն քրոջդ ասա՝ զզվելի միջադիրներն այստեղ-այնտեղ չթողնի,– նորից սադրեց Ջեյսոնը:

– Ո՛չ, չեմ ասի,– ասաց Իսքենդերը ծաղրելով:– Դրա փոխարեն կասեմ՝ մեր դպրոցում մի հիմարի մեկը, մի ծաղրածու կա: Այդ ապուշը անշնորհքություն է արել: Եթե ուշքի չգա, քիթ-մռութը կջարդեմ:

Խոսքերը սառույցի պես ընկան ճաշարանի հատակին:

– Դե, լավ, եղբա՛յր, էդքան մի չափազանցրու,– անհանգիստ մռթմռթաց Ջեյսոնը:– Կատակում էի:

– Էշական կատակ էր,– ասաց Իսքենդերը:– Մի անգամ էլ էդպիսի բան անես, ինձնից չես պրծնի, իմացած լինես:

Ջեյսոնը ուսերից հանեց միջադիրներն ու պայուսակը մեկնեց Իսքենդերին: Ակնհայտորեն զղջում էր արածի համար ու հեշտ չէր կարողանալու շոկից ազատվել: Օրվա մնացած մասը լուռ անցկացրեց:

թվայնացրել է 1915.info կայքը

Այդ օրը՝ դասերից հետո, սովորականի պես ընկերուհիների հետ զբոսնելու փոխարեն Քեյթը Իսքենդերին սպասեց: Որոշ ժամանակ անց հայտնվեց Իսքենդերը՝ մեծ պայուսակը ուսին, ընկերների հետ՝ մի խումբ մարոկկացի, ալժիրցի, իրանցի տղաներ:

– Ալե՛քս, մի րոպե կարո՞ղ եմ քեզ հետ խոսել:

– Դուք գնացեք,– ասաց Իսքենդերն ընկերներին: Ես կհասնեմ:

Տղաները բազմանշանակ հայացքներով իրար նայեցին, ժպտալով հեռացան:

– Բանը... ես... այսօրվա համար ուզում էի շնորհակալություն հայտնել,– ասաց Քեյթը:

– Կարևոր չէ: Կարիք էլ չկա ասելու:

– Բայց եթե դու չլինեիր, դպրոցում խայտառակ կլինեի:

– Բանի տեղ մի՛ դիր: Եթե դպրոցում խնդիր ունեցար, ինձ ասա՛:

Եթե ուրիշ ժամանակ լիներ, Քեյթը այդ մեծախոսության վրա կծիծաղեր, բայց ոչ այսօր: Այսօր Իսքենդերը նրա հերոսն էր:

– Բռնցքամարտի՞ ես գնում,– հարցրեց նա՝ պայուսակը ցույց տալով:

– Հըմմ, շաբաթը չորս անգամ գնում եմ: Ձախ բռունցքս եմ զարգացնում:

Երբ Իսքենդերը պայուսակը բացեց, սպորտային իրերը, կապույտ սրբիչն ու դեզոդորանտը տեսավ Քեյթը: Իր ուսապարկն էլ էր այնտեղ: Ուրեմն տաքուկ ու ապահով էր պահել: Սիրտը թրթռաց: Ուսապարկը մի տղայի պայուսակի մեջ տեսնելիս այդքան ուրախանալը հիմարություն էր: Բայց այդպես էր զգում, ի՞նչ աներ:

– Կարո՞ղ եմ քեզ հետ գալ,– ասաց նա:

թվայնացրել է 1915.info կայքը

– Բռնցքամարտի՞ ես ուզում գալ:

– Եթե սովորեցնես, ինչո՞ւ ոչ: Մի քանիսին ուզում եմ դաս տալ:

Այդ օրը միասին քայլեցին: Իսքենդերն աղջկան մինչև տուն ուղեկցեց: Երբ մոտեցան դռանը, Քեյթը մի քիչ հապաղեց: Գիտեր՝ եթե մայրն իրենց պատուհանից տեսներ, սիրտը կկանգներ: Իսքենդերը միգրանտների ընտանիքի տղա էր: Բացի այդ՝ մուսուլման էր: Մայրը երբեք չէր ուզի, որ այդպիսի տղաների հետ ժամանակ անցկացներ: Բայց Քեյթի համար միևնույն էր. ուրախ էր Իսքենդեր Թոփրաքի հետ ժամանակ անցկացնել:

թվայնացրել է 1915.info կայքը

Փեմբե

24 նոյեմբերի, 1977
Լոնդոն

Տղա ունենալու համար ամեն ինչ արած Նազեի յոթերորդ աղջիկը՝ Փեմբեն, համակերպվել էր, որ այս աշխարհին անարդար է: Նախկինում էլ էին իր հետ անարդար վարվել, բայց կյանքում երբեք բացեիբաց թշնամանքի չէր հանդիպել: Մինչև այդ օրը:

Կեսօրին վարսավիրանոցում գործերը վատ էին. միայն մի հաճախորդ ունեին: Փեմբեն տնօրենից գնալու թույլտվություն խնդրեց: Առևտուր էր անելու: Ինչքան ժամանակ է՝ Յունուսը մաստակի բույսով սյութլաչ[1] քաղցրավենիքն էր ուզել:

Այդ երեկո ուզում էր նրան անակնկալ անել:

– Ռիտա՛, կլինի՞ մի ժամով դուրս գամ,– կոտրված անգլերենով ասաց նա:

Ռիտան ոչ միայն տնօրեն էր, այլև լավ ընկեր: Մեծ կրծքերով, իրարից մի քիչ հեռացած դիմացի ատամներով, ուռուցիկ մազերով, բարձրահասակ, սևամորթ կնոջը շատ էր սիրում լսել Փեմբեն: Անգամ չգիտեր՝ որտեղ էր նրա ծննդավայրը՝ Ճամայկան, բայց նրան հոգեհարազատ էր համարում:

---

[1] Բրնձով, կաթով ու շաքարով պատրաստվող քաղցրավենիք:

թվայնացրել է 1915.info կայքը

– Իհարկե, սիրելի՛ս,– ասաց Ռիտան:– Եթե ուրիշ այցելու լինի, ես կնայեմ:

Վարսավիրանոցից դուրս գալիս Փեմբեն և՛ թեթևացած, և՛ հոգնած էր զգում: Թեթևացած, որովհետև իր համար ժամանակ էր գտել: Հոգնած էր, որովհետև վերջերս կյանքն այնքան էլ լավ չէր: Իսքենդերը սկսել էր ուշ գալ տուն. վախենում էր՝ սխալ մարդկանց հետ շփվի: Ինչ վերաբերում է ամուսնուն, տուն չէր գալիս. միակ մխիթարանքը փոքր Յունուսն էր, ու երեկոյան նրա համար ամենալավ յութլաչն էր պատրաստելու:

Չնայած առավոտյան խաբուսիկ արևին՝ եղանակը ցուրտ էր, քամի էր: Փեմբեն հագավ մոխրագույն վերարկուն, որի մեջ տարիքից ավելի մեծ էր երևում, հաշվեց ափի միջի մանրադրամները: «Թեսքո» մտավ ու անհրաժեշտ ապրանքները գնեց: Թխվածքաբլիթների խանութի մոտով էր անցնում, երբ աչքը ցուցափեղկի պրոֆիտրոլին ընկավ: Սովորականի պես շատ, հաստ ու անբնական կրեմով չէին լցրել. իր սիրածի պես էին՝ փոքր ու թարմ:

Շատակեր չէր, բայց այդ անգամ բացառություն արեց: Մտավ խանութ: Դռանը կախված զանգը զնգաց ներս մտնելիս: Հրուշակագործը մանուշակագույն երակներով ծածկված ոտքերով գիրուկ կին էր, ծանոթներից մեկի հետ ոգևորված խոսքի էր բռնվել: Այցելուներով օգնականն էր հետաքրքրվում: Ամենաշատը քսան տարեկան, սափրած գլխով, կապույտ աչքերով, առանց թարթիչների ու խիստ զգայուն մաշկով տղամարդ էր: Ճակատը պզուկներով էր ծածկված, մի շարք դաջվածքներ ուներ, որոնց մեջ նաև սվաստիկա:

Իրենից առաջ ուրիշ հաճախորդ էր կանգնած՝ շքեղ հագնված, տարեց կին էր, դրա համար Փեմբեն սպասեց: Անգլիացիները լավ գիտեին հերթ կանգնել.

թվայնացրել է 1915.info կայքը

չէին նյարդայնանում, չէին փորձում հերթը խախտել: Փեմբեն հարգում էր նրանց սովորությունները: Սպասեց իր հերթին: Մի որպե անց զանգը նորից զնգաց, ու մի միջին տարիքի մարդ ներս մտավ, բայց Փեմբեն չնայեց նրան:

Տարեց հաճախորդը բավական պահանջկոտ էր ու ամեն երկու վայրկյանը մեկ մտափոխվում էր: Խաղողով թխվածքաբլիթներից ուզեց, հետո մտափոխվեց ու կրուասան ուզեց, բայց հետո ելակով տարտի վրա կանգնեցրեց որոշումը: Հետո էլ չէր կարողանում որոշել՝ ինչպիսի փաթեթ է ուզում՝ թղթով փաթեթը թեթև է ու հարմար, բայց կարող էր ճանապարհին պատռվել: Գուցե ամենալավը տուփի մեջ դնելն էր, այդպես ավելի ամուր կլիներ, բայց տուն տանելն էր դժվար:

Սպասեց, սպասեց, բայց հերթը չէր հասնում: Փեմբեի հետևում կանգնած տղամարդը հազաց: Միայն այդ պահին օգնականը նայեց սպասող հաճախորդներին: Հատկապես Փեմբեին նայեց: Իսկ Փեմբեն օգնականի հայացքի դժգոհությունը, սառնությունը չնկատեց:

Վերջապես քիչ անց տարեց կինը, առանց դռան զանգը զնգացնելու, դանդաղ դուրս եկավ խանութից: Հենց իր հերթը հասավ, Փեմբեն գլխով նշան արեց օգնականին, բայց նա ուշադրություն չդարձրեց: Ժամանակ շահելու համար սկսեց ուղղել մետաղական սկուտեղները, տուփերը հանել, նորից հետ դնել:

– Ներեցեք,– ասաց Փեմբեն՝ պրոֆիտերոլը ցույց տալով:– Կարո՞ղ եմ սա վերցնել... երկու հատ, խնդրում եմ:

– Հերթի՛դ սպասիր,– մռթմռթաց նա՝ խմորեղենի բահիկը սրբելով:

Փեմբեն լռեց. այդքան օգնականի ասածից չէր զարմացել, որքան նրա ոճից: Բայց այդ վիճակից իրեն անհարմար զգացած մյուս հաճախորդը միջամտեց.

թվայնացրել է 1915.info կայքը

– Նրա հերթն է հասել:

Կարծես թե ազդեց: Բահիկը դրեց ու Փեմբեի աչքերին նայելով՝ մոտեցավ նրանց.

– Ո՞ւ, ի՞նչ ես ուզում:

Փեմբեն կյանքում երբեք ռասիստի չէր հանդիպել, ու նրա համար խորթ էր, որ մարդ կարող է միայն մաշկի գույնի, կրոնի կամ դասի համար ատել: Իհարկե, անծանոթները երբեմն կոպիտ էին վարվել, բայց միայն վայրկենական զայրույթի, ոչ թե հաստատուն կարծրատիպերի պատճառով: Գիտեր՝ Թոփրաքների ընտանիքը տարբերվում է անգլիացի հարևաններից, բայց եթե այդպես նայես, թուրքերն ու քրդերն էլ են տարբեր, կամ որոշ քրդեր այլ քրդերից են տարբեր: Անգամ գյուղում ամեն ընտանիք մի պատմություն ունի, ու ամեն ընտանիքում ոչ մի երեխա մյուսին նման չէ: Եթե Աստված ուզեր բոլորին նույն կերպ ստեղծել, անպայման կաներ: Փեմբեն ապավինում էր Նրան: Մարդկանց ընդունել այնպես, ինչպես կան, նշանակում էր հարգել Նրան:

Իրականում ի ծնե տարբերությունների հանդեպ բավական հանդուրժող էր: Դրան հաջորդած տարբերություններն էր դժվար ընդունել: Մազերի կեսը խուզած, մնացածը ոզնու փշերի պես բարձրացրած մի փանք, շրթունքին օղ անցկացրած մի դեռահաս, մարմնի բոլոր մասերը դաջվածքներով ծածկած մեկը, դեմքի մաշկը ձգած կինը... այդ ամենը հանդուրժելը դժվար էր իր համար: Նույն կերպ, երբ միասեռականի էր հանդիպում, իրեն միշտ հետաքրքիր էր՝ արդյոք այդպե՞ս է ծնվել, թե՞ ժամանակի ընթացքում է այդպիսին դառել: Եթե դա Աստծու գործն է, ուրեմն ընդունում էր, եթե ոչ՝ մարդու նախընտրությունն էր, հավանություն չէր տալիս: Բայց, ի վերջո, ամեն ինչ միայն ու միայն Աստծու անքննելի

թվայնացրել է 1915.info կայքը

գործն էր, դրա համար ոչ ոքի մասին վատ չէր կարող մտածել:

Հենց այդ պատճառով էր օգնականի վերաբերմունքից զարմացել Փեմբեն: Բայց հանգիստ պատասխանեց.

– Սա եմ ուզում, խնդրեմ:

Օգնականը կարծես Փեմբեին չէր տեսնում, հեռուն էր նայում՝ նրան արհամարհելով:

– Անուններ չունե՞ն,– հարցրեց նա:– Լեզու չգիտե՞ս:

Փեմբեն, կարծելով, որ իրեն չի հասկացել, մոտեցավ ու սկսեց ցույց տալ, բայց չնկատեց՝ ինչպես վերարկուի թևը կպավ ուտելիքներին:

– Մի՛ կպիր, վայ,– բղավեց օգնականը:

Ռուլետներից մեկը վերցրեց ու սկսեց նայել.

– Էլ սրանք վաճառել չի լինի:

– Ի՞նչ:

– Այս թելը չե՞ս տեսնում: Քո վերարկուից եղավ: Պետք է ամբողջ սկուտեղը գնես:

– Թե՞լ:

Փեմբեն շուրթերը սեղմեց՝ կարծես այդ օտար բառը բերանում դառը համ էր թողել:

– Ո՛չ, ո՛չ: Ես սկուտեղը չեմ ուզում:

Երբ ձեռքերն անհանգստացած վեր բարձրացրեց, դիպավ թխվածքաբլիթներով լի զամբյուղի. ամբողջը թափվեց հատակին:

– Վա՛յ, վա՛յ, քայլող փորձանք ես, ա՛յ կին,– բղավեց օգնականը:

Երևի աղմուկը գրավել էր տիրոջ ուշադրությունը, որովհետև արագ մոտեցավ՝ տեսնելու՝ ինչ է կատարվում: Օգնականը անմիջապես սկսեց բողոքել:

– Այս կինը ռուլետները փչացրեց, թխվածքաբլիթները հատակին թափեց: Ասացի, որ ամբողջը պետք է գնի, բայց չի հասկանում:

թվայնացրել է 1915.info կայքը

Փեմբեն ամոթից կարմրեց:

– Չեմ կարծում, թե անգլերեն է խոսում,– ավելացրեց օգնականը:

– Բայց խոսում եմ:

– Ուրեմն հասկացել եք՝ ձեզ ինչ է ասում,– ասաց խանութի տնօրենուհին չափազանց դանդաղ ու բարձր ձայնով:

– Բաց չեմ կարող մի սկուտեղ գնել: Շատ փող,– հակառակվեց Փեմբեն:

Օգնականը ձեռքերը խաչեց կրծքին:

– Ուրեմն ոստիկանություն կանչենք:

– Ոստիկանությո՞ւն, ինչո՞ւ,– ասաց Փեմբեն՝ խուճապի մատնվելով:

Այդ պահին հետևում կանգնած հաճախորդը միջամտեց.

– Կներեք, այսքան ժամանակ է՝ ձեզ եմ հետևում. չեմ կարող՝ առանց մի խոսք ասելու: Եթե ոստիկանություն կանչեք, դեպքի միակ վկան ես եմ լինելու, ինչ էլ անենք:

– Հետո՞,– ասաց օգնականը:

– Ի՞նչ հետո. ես ոստիկանությանը պատմության մյուս կողմը կպատմեմ:

– Ո՞ր մյուս կողմը:

– Հաճախորդին վատ վերաբերվելու ու պատշաճ ծառայություն չմատուցելու մասին: Ձեր կոպտության, չօգնելու, ագրեսիվ լինելու մասին: Ես էլ այդ ամենը կպատմեմ:

– Մի րոպե... մի րոպե,– միջամտեց տիրուհին կեղծ ժպիտով: Զգացել էր՝ իրավիճակը վերահսկողությունից դուրս է գալիս:– Լուն ուղտ չսարքենք: Ի՞նչ կարիք կա ոստիկանություն դիմելու:

– Ես էլ եմ այդպես կարծում,– ասաց տղամարդը:

թվայնացրել է 1915.info կայքը

Հասկանալով, որ փորձանքից պրծել է՝ Փեմբեն շրջվեց ու առաջին անգամ ուշադիր նայեց հաճախորդին: Հագին դարչնագույն թավշե բաճկոն, տակից բեժ, բարձր վզով սվիտեր: Համաչափ դիմագծեր, երկար քիթ ու կողքերից արդեն նոսրացող բաց դարչնագույն մազեր ուներ: Աչքերը մի քիչ հոգնած, բայց գթառատ էին, գույնը փոթորկուն երկնքի պես մոխրագույն էր:

Օգնականն էլ էր դժգոհ դեմքով նայում նրան: Օձի պես ֆշշացնելով՝ ասաց.

– Լավ, ի՞նչ եք ուզում:

– Նախ տիկինը,– ասաց նա:– Նրան դեռ չեք օգնել:

* * *

Քիչ անց միասին դուրս եկան հրուշակեղենի խանութից. երկու անծանոթ, որ պատահականության բերումով էին հանդիպել: Մի քանի րոպե միասին քայլելով՝ խոսեցին պատահարի մասին: Տղամարդը առաջարկեց Փեմբեի տոպրակները տանել: Փեմբեն ոչ մի խնդիր չէր տեսնում, բայց միևնույն է՝ հրաժարվեց: Քայլեցին մինչև մոտակայքի մանկական զբոսայգին: Երևի քամոտ եղանակից էր, որ այգին դատարկ էր: Թափվող տերևները պտտահողմի մեջ ընկածի պես պտտվում էին օդում: Չնայած դրան՝ Անգլիա գալուց ի վեր առաջին անգամ էր սիրում եղանակը Փեմբեն. քամուց, անձրևից, մշուշից անդին աննկատորեն սովորական դարձած միապաղաղություն կար: Սկսեց մտածել:

Տղամարդը աչքի պոչով նրան էր նայում: Տեսավ, որ առանց շպարի էր, փայլուն, շագանակագույն մազերը աննշան կարմիր բծերով էին ալիքվում:

Հաստ շուրթերն ու մի այտի փոսիկը գրավիչ էին նրա համար: Մայր բնության ընտրությունն ի՞նչ տարօրինակ էր: Եթե այդ կինն այլ կերպ հագնվեր ու իրեն մի

թվայնացրել է 1915.info կայքը

քիչ այլ կերպ ներկայացներ, ով գիտի՝ ինչպես կնայեին փողոցում: Բայց գուցե ավելի լավ էր, որ գեղեցկությունը թաքնված էր: Նրան հիշեցնում էր անծանաչ, բացահայտվելու սպասող թանկարժեք քար:

– Այդ տղան խենթ էր,– ասաց դեռ դեպքի մասին մտածող Փեմբեն:

– Խենթ չէր, ռասիստ էր:

Փեմբեն մի պահ լռեց: Ռասիստները սևամորթներին չսիրողներն էին՝ Ռիտայի նմանների դեմ էին:

– Բայց ես սևամորթ չեմ,– ասաց նա:

Տղամարդը ծիծաղեց:

– Պարտադիր չէ սևամորթ լինել, որ ռասիստը քեզ ատի: Հազար տեսակի ռասիզմ կա, բայց եթե ինձ հարցնես՝ մեկը մյուսից չեն տարբերվում:

Տղամարդը հետաքրքիր խոսվածք ուներ: Փեմբեն ուշադիր լսեց նրան:

– Դե, գիտենք՝ սևամորթներին ատող սպիտակամորթներ կան: Հետո՝ ասիացիներին ատող սպիտակամորթներ: Կարծես թե դա հերիք չէ՝ որոշ սևամորթներ՝ ասիացիներին, որոշ ասիացիներ սևամորթներին չեն սիրում: Իհարկե, իրենք իրենց ատող սևամորթներին, ասիացիներին ու սպիտակամորթներին, ինչպես նաև բոլոր ատողներին էլ պետք չի մոռանալ: Հետո էլ՝ լեզվի ազդեցությունն էլ կա: Որոշ մուսուլմաններ՝ բոլոր հրեաներին, որոշ հրեաներ մուսուլմաններին չեն սիրում: Հա, մեկ էլ՝ բոլորին ատող լիքը քրիստոնյաներ կան:

– Բայց ինչո՞ւ պետք է մարդ ատի որ,– հարցրեց Փեմբեն:

Տղամարդը տպավորվել էր հարցի մանկական պարզությունից ու անմեղությունից: Աճող գործազրկություն, աղքատություն, այլատյացություն, ռադիկալիզմ, գաղափարական տարբերություններ, նավթի ճգնաժամ... Այդ

թվայնացրել է 1915.info կայքը

պահին այդ ամենից ոչ մեկը նման պարզ ու ակնհայտ հարցին բավարար պատասխան չէին կարող լինել: Վաղուց ի վեր հոռետես, մարդկության հանդեպ հույսը կորցրած տղամարդն ակամայից կրկնեց.

– Հըմմ, ճիշտ է: Մարդ ինչո՞ւ պետք է ատի որ:

Նստեցին մանկական զբոսայգում: Փեմբեն կոտրված անգլերենով պատմեց, որ վարսավիրանոցում է աշխատում և սութլաչի բաղադրիչներ գնելու համար աշխատանքից թույլտվություն էր խնդրել: Անգամ ասաց, որ Ստամբուլի պնդուկի պես պնդուկ չի գտել, ստիպված է նուշով պատրաստել: Զարմացած էր՝ ինչպես է տղամարդն իրեն ուշադիր լսում: Երբեք չէր մտածի, որ տղամարդն այդքան հետաքրքրված կլիներ ուտելիքի մասին պատմություններով:

– Ուրեմն թո՞ւրք ես,– հարցրեց նա:

Փեմբեն չմտածեց ասել՝ քուրդ եմ: Միշտ ժամանակ էր պահանջվում քուրդ ինքնության մասին խոսելու համար: Գլուխն օրորեց:

– Lokumcu geldi hanım, leblebilerim var[1],– ասաց նա թուրքերեն:

Փեմբեն զարմանքից լայն բացված աչքերով նրան էր նայում: Տղամարդը, նրա զարմանքի վրա ծիծաղելով, ասաց.

– Վախենամ՝ այդքանը: Միայն մի քանի բառ գիտեմ:

– Բայց ինչպե՞ս:

– Տատիկս հույն էր,– ասաց նա:– Ստամբուլցի էր: Ինչքան էր սիրում այդ քաղաքը:

Չպատմեց՝ ինչպես էր տատիկը Օսմանյան կայսրության ժամանակ մի լևանտացի առևտրականի հետ ամուսնացել ու հեռացել Ստամբուլից և մինչև մահվան

[1] Լոքում եմ բերել, հանը՛մ, լեբլեբի ունեմ:

թվայնացրել է 1915.info կայքը

օրը նեղուցի իրենց տունն ու հարևաններին ինչպես էր կարոտում: Փոխարենը փորձեց հիշել թուրքերենի ու հունարենի ընդհանուր բառերը՝ ջաջըք-ցացիկի, ավանակ-ավանակիս, ըսփանաք-սպանակի, չիֆթեթելլի-ցիֆթեթելլի... Փեմբեն ծիծաղում էր՝ փողոցում ծիծաղելուն անսովոր բոլոր կանանց պես բերանը ձեռքով փակելով:

Հանկարծ տղամարդը կանգ առավ.

– Անունդ էլ չգիտեմ դեռ:

Փեմբեն ճակատին ընկած մազերը մի կողմ տարավ ու չնայած հազվադեպ էր մարդկանց երկու անունով ներկայանում, միևնույն է, ասաց.

– Փեմբե Քադեր:

Ի զարմանս իրեն՝ նա ո՛չ զարմացավ, ո՛չ էլ ծիծաղեց: Փոխարենը այնպես նայեց, կարծես անունը աշխարհի ամենատխուր գաղտնիքն էր.

– Անունդ բանաստեղծության նման է:

Փեմբեն ժպտաց: Երկար ժամանակ անց առաջին անգամ ժպտաց: Քիչ անց պրոֆիտերոլները հանեց. մի քիչ նրան հյուրասիրեց, մի քիչ էլ ինքը վերցրեց: Նա էլ չամիչով հացը կիսեց Փեմբեի հետ: Լուռ կերան, հետո «եթե», «գուցե», «վստահ չեմ, բայց...» անվստահ բառեր օգտագործելով՝ ռասիզմի ու սութլաչի մասին խոսակցությունը շարունակեցին:

Անունը Իլիաս էր: Փեմբեի պես նա էլ էր գրեթե ութ տարի առաջ տեղափոխվել Լոնդոն: Սիրում էր քաղաքը ու վատ չէր զգում օտար լինելուց, որովհետև հոգու խորքում ամենուր օտար էր զգում: Նրան լսելիս Փեմբեն բազմիցս մտածեց՝ Երանի ավելի լավ անգլերեն խոսեմ:

Բայց խոսելու համար պարտադիր չէր սահուն իմանալ լեզուն: Ամուսնու հետ կարծես թե նույն լեզվով էին խոսում, բայց հազվադեպ էին մի երկու խոսք փոխանակում:

թվայնացրել է 1915.info կայքը

– Ուրեմն հո՞ւյն ես, – հարցրեց Փեմբեն:

Իհարկե չասաց՝ ինչ էր մտածում իր տեգր Թարըքը հույների մասին:

– Ո՛չ, այնքան էլ չէ: Քառորդ հույն, քառորդ լիբանանցի, քառորդ իրանցի ու քառորդ կանադացի եմ:

Փեմբեն զարմացած նայեց.

– Բայց ինչպե՞ս:

– Տատիկս լիբանանցու հետ է ամուսնացել, մայրս է ծնվել: Հետո մայրս հորս հետ է ծանոթացել: Հորս ծնողները Թեհրանից եկած Կանադայի քաղաքացիներ են: Ես Բեյրութում եմ ծնվել, մեծացել եմ Մոնրեալում: Ու հիմա Լոնդոնում եմ: Հիմա ես ո՞վ եմ:

Ինչքա՜ն շատ ճանապարհորդություն. տեղից պոկվել ու օտար երկրներում զրոյից սկսել: Չի՞ վախեցել անորոշություններից: Փեմբեն ժպտալով հիշեց՝ ինչպես էր մի ժամանակ երազում նավաստի դառնալ ու հեռավոր երկրներ ճամփորդել:

– Որոշ մարդիկ այդպիսին են,– ասաց Իլիասը,– ոմանք աշխարհի քաղաքացի են:

Այդ պահին Փեմբեի ձեռքի ամուսնական մատանին նկատեց: Բայց Փեմբեն չնկատեց նրա մատանու հետքը՝ ուրիշ կնոջ ստվերը:

– Ի՞նչ գործ ես անում,– հարցրեց Փեմբեն:

– Խոհարար եմ:

Փեմբեի դեմքը լուսավորվեց:

– Իսկապե՞ս:

– Այո՛: Գրազ գանք, քեզնից լավ եմ սյութլաչ պատրաստում:

Փեմբեն Իլիասին պատկերացրեց սոխ կտրատելիս կամ թավայի գլխին կանգնած սմբուկ տապակելիս: Իրենից անկախ ծիծաղեց: Իր ճանաչած տղամարդիկ մի բաժակ ջուր վերցնելու համար անգամ խոհանոց չեն

թվայնացրել է 1915.info կայքը

գնում: Գիտեր՝ ինքն էլ տղաներին, հատկապես Իսքենդերին էր այդպես մեծացնում:

– Կնոջդ բախտը բերել է:

– Մենք բաժանվել ենք,– ասաց Իլիասը՝ ձեռքով հացը կիսելու պես նշան անելով:

Փեմբեն փակեց այդ զգայուն թեման:

– Հայրդ ի՞նչ ասաց, երբ ուզեցիր խոհարար դառնալ:

Տարօրինակ հարց էր, բայց միաժամանակ՝ ճիշտ: Հայրը տարիներ շարունակ չէր խոսել Իլիասի հետ: Նա քամահրում էր այդ մասնագիտությունը. սազական չէր իր որդուն:

Փեմբեն գլուխը կախեց: Եթե Յունուսը ուզեր խոհարար դառնալ, Ադեմը կընդունե՞ր:

Իլիասը սկսեց պատմել, որ խոհարարության հանդեպ սերը սկսվել էր այն ժամանակ, երբ ամեն ինչ անում էին փոքր քրոջը ոտքի կանգնեցնելու համար:

– Քույրդ հիվա՞նդ էր:

– Ո՛չ, հիվանդ չէր, հատուկ կարիքներով էր:

Ցավոք սրտի, բակի երեխաները նրանց համար այլ բառեր էին օգտագործում՝ «մտավոր»: Դաունի ծանր սինդրոմով էր ծնվել քույրը՝ և՛ ֆիզիկական, և՛ մտավոր արատով: Իլիասը բարձրակարգ դպրոց էր գնում, իսկ Կլեոն՝ իր պես երեխաների համար կենտրոն: Հիմնականում համառ ու լարված էր լինում, խաղալիքները նետում, մազերն էր գզգզում, հող, ապակի, թուղթ էր ուտում: Երիտասարդ Իլիասը հասկացել էր՝ նրան հանգստացնող միակ բանը ուտելիքն է:

Այդպես կամաց-կամաց սկսեց նրա համար համեղ ուտելիքներ պատրաստել: Այդ բոլոր թեստերը, մասնավոր ուսուցիչները, ալտերնատիվ մեթոդները չէին գործում, մինչդեռ վառարանից նոր հանած խնձորով կարկանդակը տեսնելուն պես Կլեոն ժպտում էր:

թվայնացրել է 1915.info կայքը

Ժամանակի ընթացքում Իլիասը հասկացավ՝ միայն քրոջ համար չի անում, ինքն էլ է խենթանում պատրաստելու համար:

Խմոր հունցելիս հողը երակներդ է լցվում: Միս պատրաստելիս կենդանու հոգին է հետդ խոսում է. պետք է իմանաս հարգել նրան: Ձուկ մաքրելիս ծովի ձայնն ես լսում, որտեղ մի ժամանակ լողում էր, մարինացնում ես՝ ջրի հիշողությունը թեփուկներից մաքրելու համար: Փեմբեն կախարդվածի պես լսեց, մի քանի բառ բաց էր թողնում, բայց իմաստը հասկանում էր:

– Ամա՛ն, Աստվա՛ծ... պետք է գնամ,– ասաց նա՝ ոտքի կանգնելով:

Միայն այդ պահին հասկացավ՝ ինչքան ժամանակ է անցել:

– Օգնե՞մ տոպրակները տանել:

– Ո՛չ, ո՛չ...– ասաց Փեմբեն խիստ ձայնով:

Մտածելով, որ կարող է մեկն իրենց տեսնել ու բամբասել՝ սարսռաց: Կարող էր ընտանիքի ականջին հասնել: Սիրտը կծկվեց, երբ հասկացավ՝ այդ մարդուն այլևս չէր կարող տեսնել: Այդ պահին Իլիասը, Փեմբեի մտքերից անտեղյակ, գրպանից մի քարտ հանեց.

ԻԼԻԱՍ ՍՏԵՖԱՆՈՍ ՌՈԲԵՐՏ ԳՐՈԳԱՐԻ ՇԵՖ

Փեմբեն զարմացած նայեց բառերին: Զարմացել էր, որ այդքան անուն ունի: Քարտի հակառակ կողմում ռեստորանի անունն էր ու հասցեն:

– Եթե երեկոյան գաս, խոհանոցից չեմ կարող դուրս գալ: Ցերեկն ուրիշ հարց: Բայց եթե ժամը չորսին մոտ գաս, կուզեմ քեզ տեղը ցույց տալ ու քեզ համար մի բան պատրաստել:

թվայնացրել է 1915.info կայքը

Փեմբեն դրա դիմաց ոչինչ չտվեց: Ո՛չ թուղթ: Ո՛չ խոսք: Միմյանց ձեռք սեղմեցին: Տարօրինակ անհանգստություն զգացին: Չէին ուզում, բայց բաժանվեցին: Արագ քայլերով տարբեր ճամփաներով գնացին:

թվայնացրել է 1915.info կայքը

ՄԻ ԿԻՆ, ՄԻ ՏՂԱՄԱՐԴ

Քեյթ

24 դեկտեմբերի, 1977
Լոնդոն

Առաջին անգամ էր հանդիպման, եթե իհարկե դա կարելի էր հանդիպում անվանել: Շաբաթ կամ կիրակի օրը հանդիպելու միտքը Քեյթն էր արտահայտել, Իսքենդերն էլ կարծ ասել էր՝ լավ, եղավ:

Շաբաթ առավոտյան ասել էր, որ տանը մորն է օգնելու, հետո ժամը մեկի ու երկուսի միջև բռնցքամարտի պարապմունքի է գնալու: Դրանից հետո ազատ էր, ու եթե Քեյթը շատ էր ուզում, կարող էին հանդիպել:

– Կարո՞ղ եմ գալ, քեզ պարապելիս տեսնել,– հարցրեց Քեյթը:

– Վալլահի, էնտեղ մի տեսակ...

Քեյթը մի պահ կարծեց՝ ասելու է՝ քո տեղը չի, բայց դրա փոխարեն ասաց.

– Աղջիկների տեղ չի:

– «Եթե բռնցքամարտով զբաղվեմ, ի՞նչ կասեն մարդիկ»,– մտածեց Քեյթը:

Գլխին՝ սաղավարտ, ձեռքերին՝ կարմիր ձեռնոցներ, բերանի մեջ՝ պրոթեզ, պատկերացրեց՝ ինչպես է հակառակորդի սևը տալիս: Երևի Իսքենդերը վախից կկարկամեր: Բայց հաստատ ամենամեծ շոկը մայրը կապրեր:

թվայնացրել է 1915.info կայքը

– Ավելի լավ է՝ սրճարանում հանդիպենք,– ասաց Իսքենդերը:– Չեմ ուզում՝ մեր երեխեքը մեզ միասին տեսնեն, հազար ու մի բան կմտածեն:

– Լավ,– դժգոհ ասաց Քեյթը:

Բայց Քեյթը շատ էր ուզում Իսքենդերի հետ մի տեղ երևալ: Այդ լուրը պայթուցիկի պես կընկներ դպրոց: Բոլորը իրենց մասին կխոսեին: Միայն թե մայրը չիմանա, մնացածը խնդիր չէ:

– Սիրած տեղ ունե՞ս,– հարցրեց Իսքենդերը:

– Ո՛չ, դո՛ւ ընտրիր: Ինձ մի նոթ ուղարկիր, հերիք է,– ասաց Քեյթը դասարան մտնելուց առաջ:

Սիրում էր նոթերով շփվել:

* * *

Շաբաթ առավոտյան Քեյթը լարված էր: Զևացնում էր, թե լսում է մոր անկապ պատմությունները, բայց միտքն ուրիշ տեղ էր: Միշտ կոկիկ հագնվող, հյուրասենյակում նստելիս կամ այգում աշխատելիս անգամ կատարյալ հարդարած մազերով, հավասարակշիռ կին էր մայրը: Յասամանների նկարներով զարդարված թեյի հավաքածուն անձեռոցիկներին, անձեռոցիկները սփռոցին, սփռոցը՝ վարագույրներին, ու այդ ամենը միասին կնոջը համահունչ էին:

Օրը միասին անցկացնելու մոր առաջարկը Քեյթը ծաղրական ժպիտով ընդունեց.

– Ի՞նչ ենք անելու: Այգո՞ւմ ենք շրջելու:

Կինը շուրթերը քաղաքավարի մոտեցրեց անձեռոցիկին ու շրթներկի հետքը վրան թողեց:

– Իրականում, շատ լավ բույսերի էքսպո կա այսօր: Մտածում եմ՝ գնանք այնտեղ:

– Օհ, ընկերներիս հետ եմ հանդիպելու, դաս ենք անելու: Չեմ կարող գալ...

թվայնացրել է 1915.info կայքը

– Լավ, սիրելի՛ս: Մի ուրիշ անգամ կգնանք,– ասաց նա ու նորից քաղաքավարի շարունակեց կտրել նրբերշիկը:

Մայրն այդպիսին էր: Կյանքի հանդեպ մեծ ակնկալիքներ չուներ, դրա համար հեշտ չէր նեղանում: Քեյթը նայեց պատից կախված նկարներին: Մանկությունից մնացած պատկերներ, ավազի ամրոցների պես հեշտությամբ փոշիացող հուշեր: Ծովափին շաբաթ-կիրակի օրերի զբոսանքները, սառը սենդվիչները, կրեմով թխվածքաբլիթները, շոկոլադով տորթերն ու լիմոնադը Էնիդ Բլայթոնի «Հիանալի հնգյակ» գրքի տեսարանների նման էին՝ միակ տարբերությամբ, որ իրենց կյանքում արկածներ չկային: Ինչո՞ւ էր հոր նկարը դեռ պատից կախ: Ո՞ր կինը կպահեր իրեն տարիներ առաջ լքած մարդու նկարները: Երբեմն Քեյթն ուզում էր բռնել մոր ուսերից ու մի լավ թափ տալ:

– Ես կշտացա: Կարո՞ղ եմ իմ սենյակ գնալ:

– Իհարկե, սիրելի՛ս: Բայց կեսօրին կարգին բան կուտես, լա՞վ:

Սենյակ գնալիս Քեյթը փորձում էր հասկանալ՝ ինչու է այդքան նյարդայնանում մորից: Մայրը չէր փոխվել, ինքն էր փոխվել: Մինչդեռ ինչ մտերիմ էին մի ժամանակ: Նախկինում հիանում էր նրանով, բայց հետո սրտի մոմը հանգավ, նրան թողեց մթան մեջ: Երբ դեռ պարանով ցատկելու տարիքում ես, հեշտ է հավատալ, թե մայրդ կատարյալ է: Բայց երբ մեծանում ես ու աշխարհից բան հասկանում, իրականությանն ես բախվում: Մեկ առ մեկ նկատում ես մորդ սխալները, թուլությունները, նահապետականությունը: Իսկ երբ հասկանում ես՝ երբեք չի փոխվի, սկսում ես զայրանալ:

Բայց վիճելու, նեղանալու ժամանակը չէր: Շատ ժամանակ չուներ: Հանդիպման ժամը մոտենում էր, ու դեռ չէր որոշել՝ ինչ էր հագնելու: Հաջորդ երկու

թվայնացրել է 1915.info կայքը

ժամը սենյակում՝ հայելու առաջ, մեկը մյուսի հետևից հագուստ փորձելով անցկացրեց Քեյթը: Մոր հետ գնած պաստելային գույների՝ ֆուքսիա, ծիրանագույն, նարնջագույն, զմրուխտագույն անգորայի սվիտերները մեկը մյուսից անճաշակ թվացին: Գոտկատեղից լայնացող շրջազգեստները, երկար զգեստները ու կապիչներով կոշիկներն էլ: Երբ պահարանին Իսքենդերի աչքերով նայեց, սարսափեց. ամեն ինչ սեթևեթող, քաղցրիկ աղջկա ոճի էր:

Իսքենդերը բռնցքամարտով զբաղվող, ըմբոստ, առաջնորդի հատկություններով օժտված, բոլորին պատասխան տվող ու ոչ ոքի առաջ չխոնարհվող տղա էր: Անկասկած ակնկալում էր, որ ընկերուհին իրեն համահունչ է լինելու: Մինչդեռ Քեյթը աչքի զարնող մի զգեստ անգամ չուներ: Լավ է, որ սպորտային ակումբում չէին հանդիպելու: Բռնցքամարտի պարապմունքին ձևավոր, վարդագույն սվիտերով չես գնա: Քեյթը հուսահատ նայեց սենյակի պատի նախշերով պաստառներին, ատլասե բարձերին: Հանկարծ սարսափեց այն մտքից, որ չի կարող Իսքենդերին համապատասխանել:

Ի վերջո, իրեն հավաքեց ու որոշեց մի հանգիստ բան հագնել: Ջինսե տաբատ, ռետինե կոշիկներ, յասամանագույն սպորտային շապիկ: Մազերը կապեց, մի թեթև շպարվեց: Հույս ուներ՝ այդ պարզ ոճը Իսքենդերին դուր կգա:

Ճանապարհին բոլոր ցուցափեղկերին նայելով՝ մտավ սրճարան: Քառասուն րոպե անց Իսքենդերը դեռ չկար: Իրեն ստորացած էր զգում, բայց չիմանալով ինչ անել՝ շարունակեց սպասել: Ոչ ոք նախկինում այդպես չէր վարվել իր հետ: Հիմա պետք է դուրս գար ու այլևս երբեք երես չտար Իսքենդերին:

– Ուրիշ բան կուզե՞ք, օրիո՛րդ:

թվայնացրել է 1915.info կայքը

Մատուցողն էր հարցնում՝ դեմքին բազմանշանակ ժպիտով: Կարծես նրան դուր էր գալիս դիտել բարդ վիճակում հայտնված Քեյթին: Երևի բազմիցս էր ականատես եղել նման տեսարանների: Շատ մարդիկ էին գալիս հանդիպման ու մերժվում: Սովոր էր, որ մարդիկ շքեղ հագուստով, բերանները մինչև ականջները բաց, ուրախ ու զվարթ գալիս, սեղանի մոտ նստում, թեյ, սուրճ, կոկա-կոլա, ջուր, գինի էին պատվիրում, դանդաղ խմում էին, անընդհատ պատի ժամացույցին էին նայում, հանկարծ տխրում էին, ուսերը իջեցնում ու, ի վերջո, վիզը ծուռ դուրս էին գալիս սրճարանից:

Քեյթը հպարտ ժպտաց. չէր պատրաստվում այդքան հեշտ ընդունել իր պարտությունը.

– Կարո՞ղ եմ մի կոկա-կոլա էլ պատվիրել:

Մինչդեռ կոկա-կոլա չէր սիրում: Սկզբում մտածում էր բանանով, ելակով կաթ պատվիրել: Բայց կարծելով, որ դա «աղջկական խմիչք» է՝ մտափոխվեց:

Քեյթը արդեն վերջացնում էր երկրորդ կոլան, համբերությունն էլ էր սպառվում, երբ դուռը բացվեց, ու Իսքենդերը ներս մտավ՝ մաստակը բերանին, սպորտային պայուսակը ուսին: Մազերը թաց էին: Քեյթը տեսնում էր՝ չի էլ շտապել, մազերը խնամքով սանրել է, հանդիպմանը ժամանակին գալու մասին անգամ չի էլ մտածել:

– Ի՞նչ կա, սիրո՛ւն:

Ահա այդ բառը, այդ պարզ, հիմար բառը մարեց զայրույթը, փոքր գնդակի պես պատուհանից դուրս շպրտեց: Քեյթն իրենից անկախ կարմրեց:

– Բան չէ:

– Շա՞տ ես սպասել:

– Չէ, շատ չէ,– ասաց Քեյթը:

Իսքենդերի մուգ, խելացի աչքերը սահեցին Քեյթի վրայով. մազերին, շուրթերին, կրծքերի ձևը թաքցնող

թվայնացրել է 1915.info կայքը

շապիկին նայեցին: «Տեսնես ինչո՞ւ է այսքան պարզ հագնվել,– մտածեց նա:– Մարդ մի քիչ գոնե կզարդարվի»:

– Պարապմունքն ինչպե՞ս անցավ:

– Վատ չէր,– ասաց Իսքենդերը:– Մարզիչս ընտիր դեմք է: Վիետնամում է կռվել, գիտե՞ս: Հետո Ամերիկա է վերադարձել, բայց այնտեղ չի հարմարվել: Ցույցերը, բան դժվար են եղել իր համար: Նա էլ այստեղ է եկել: Ահավոր բաների միջով է անցել:

– Երբևէ զենք օգտագործե՞լ է:

Իսքենդերը ծիծաղեց.

– Ի՞նչ ես խոսում: Առնվազն տասը վիետկոնգցի[1] է սպանել: Հետո գերի է ընկել: Ճկույթը կացնով կտրել են, բայց էլի չի խոսել: Միջատ, կարիճ է կերել: Ողջ-ողջ: Կյանքի ընթացքում է բռնցքամարտ սովորել, ոչ թե փոքր երեխեքի դահլիճներում:

Քեյթը գունատվեց: Ուրախ էր, որ Բարբիի սվիտերներից մեկը չէր հագել: Իսքենդերի աշխարհում նման բաներն ակնհայտորեն տեղ չունեին:

– Հը՞, ի՞նչ ես խմում,– հարցրեց Իսքենդերը՝ ցույց տալով դատարկ բաժակը:

– Երկու կոլա խմեցի: Կուզե՞ս:

– Ո՛չ, զզվում եմ կոլայից,– ասաց Իսքենդերը:– Փորս ուռչում է: Այդ գազավորված գաղտնի ֆորմուլայի մեջ հաստատ մի բան են լցնում: Մրգային կաթ եմ նախընտրում:

Քեյթը առանց իրեն մատնելու նայեց՝ ինչպես Իսքենդերը կանչեց մատուցողին ու երկու խմիչք՝ կոլա ու բանանով ու ելակով կաթ պատվիրեց: Դպրոցից, իրենց չսիրած աշակերտներից, չսիրած ուսուցիչներից

[1] Վիետ Կոնգ՝ Վիետնամի ազգային-ազատագրական միասնական ճակատ:

թվայնացրել է 1915.info կայքը

խոսեցին: Քեյթն Իսքենդերին պատմեց՝ ինչքան վատ է մենակ երեխա լինելը:

– Գոնե ոչ ոք իրերդ չի փորփրում,– մխիթարեց նրան Իսքենդերը:

– Ճիշտ է, բայց անտանելի է: Այնքան մենակ եմ զգում ինձ: Միշտ մորս հետ մենակ ենք՝ ես ու նա:

– Չեմ կարծում՝ մայրդ դժգոհ է: Քեզ հետ ժամանակ անցկացնելը ընտիր բան է:

Քեյթը հաճույքից ծիծաղեց: Բայց հենց սկսել էր զվարճանալ, Իսքենդերը լրջացավ.

– Քե՛յթ, քեզ մի բան եմ հարցնելու. ինձ հետ ի՞նչ գործ ունես:

Աղջիկը աչքերը թարթեց: Կարո՞ղ էր խոստովանել, որ երեկ գիշերն անկողնում, ձայնարկիչին փաթաթված, «Բի Ջիս» խմբի «How Deep Is Your Love»-ը նորից ու նորից լսելով ու նրա մասին մտածելով էր անցկացրել:

– Չգիտեմ... խոսում ենք, էլի...

– Սխալ չհասկանաս, սիրուն աղջիկ ես, իրոք, բայց մենք՝ ես ու դու, իրար համապատասխան չենք: Երևի երկուսս էլ գիտենք: Այսինքն... ես քո համար ճիշտ տիպ չեմ: Իմ կյանքը շատ տարբեր է քո կյանքից,– ասաց Իսքեն-դերը:– Եթե այն օրվա համար պարտավորված ես զգում, մոռացի՛ր: Ես արդեն մոռացել եմ: Ոչինչ պարտական չես:

– Ո՛չ, դե, չէ...– արագ ասաց Քեյթը:

Քիչ էր մնում արտասվեր. կարծես ձեռքից թանկ իր էին խլում: Երբեք այդքան անինքնավստահ չէր եղել: Այդ պահին Իսքենդերը նրա համար կյանքի ամենակարևոր նպատակը դարձավ, որովհետև իրեն բացեիբաց մերժել էր, պնդել, որ անհամապատասխան են ու դրանով իսկ անհասանելի դարձել:

– Չեմ կարծում, թե այդքան տարբեր ենք,– հանգիստ ասաց Քեյթը:

թվայնացրել է 1915.info կայքը

– Լավ, էլի, էն էլ ոնց՝ սար ու ձորի պես:

– Ասենք թե այդպես է, ինչո՞ւ պետք է միշտ ինձ նման-ների հետ ուզեմ հանդիպել: Գուցե կարծում ես՝ միակ նպատակս հարուստ մեկի հետ ամուսնանալն է՝ երկու երեխա, մի մեքենա: Եթե այդպես է, սխալվում ես: Ինձ չես ճանաչում:

– Վա՛յ: Կներես, քեզ չէի ուզում նեղացնել,– ասաց Իսքենդերը, բայց զղջացողի տեսք չուներ:

Ինքնահավան Քեյթ Էվանսին այդպես անինք-նավստահ, նեղացկոտ ու սիրահարված տեսնելն անակնկալ էր:

– Բայց նեղացրիր, որովհետև ինձ շանս չես տալիս: Դեռ ինձ չես ճանաչում, ինչպե՞ս կարող ես ասել, որ անհամապատասխան ենք:

Իսքենդերը խոր շունչ քաշեց.

– Լսի՛ր՝ ինչ եմ ասում. մի քիչ վատ սկսեցինք, հա՞: Արի՛ նորից սկսենք,– ձգվեց ու բռնեց Քեյթի ձեռքը:– Բարև՛: Անունս Իսքենդեր է: Ուզում ես՝ կարող ես Ալեքս ասել:

Քեյթը վերջապես կարողացավ ժպտալ:

– Ես էլ Քեյթն եմ: Ուրախ եմ:

– Ընտիր է:

Իսքենդերի դեմքը շողաց:

Սրճարանից դուրս գալուց առաջ գնաց պետքարան: Աստիճաններով իջնելիս մի սափրագլուխ, կապույտ աչքերով ու պզուկոտ ճակատով նիհար տղայի հանդի-պեց քիթ քթի: Մոտակայքի հրուշակեղենի խանութնե-րից մեկում օգնական աշխատող երիտասարդը ատելու-թյամբ նայեց Իսքենդերին ու գնաց:

Պետքարանում ուրախ սուլելով՝ Իսքենդերն ուղղ-վեց դեպի դատարկ կաբինը: Բայց դուռը փակելուն պես տեսարանից ապշեց: Դռան հետևում հիսուն-վաթսուն սանտիմետր մեծության սվաստիկա էր պատկերված,

թվայնացրել է 1915.info կայքը

ու շուրջը՝ մի շարք ռասիստական կոչեր ու հայհոյանքներ: Տակը գրած էր՝ «Սպիտակների իշխանությունը», «Միգրանտնե՛ր, ռա՛դ եղեք»: Խոսքերի մի մասը մետաղական գործիքով էին փորել, մյուս մասն էլ՝ սփրեյ ներկով: Ներկը թաց էր, ուրեմն ով որ արել էր, նոր էր դուրս եկել այդտեղից:

Նետի պես դուրս ցատկեց պետքարանից: Աստիճանները երկուական մագլցելիս մտածեց՝ երանի մի քանի րոպե առաջ գնացած լիներ, հանցագործին տեղում մի լավ դաս տար: Լավ կռվի առիթ բաց թողեց: Բայց անպայման բռնելու էր այդ ռասիստ հիմարին: Վաղ թե ուշ:

* * *

Իրար հետևից երեք կոլա խմած Քեյթի համար քայլելը լավ էր: Մայր մտնող արևի տակ աննպատակ քայլելով՝ շուկաների, դեղատների ու խաղատների առջևով անցան: Չնայած որ ամպոտ էր, փողոցում լիքը մարդ կար՝ աջ ու ձախ վազվզելով իրենց գործերն էին անում:

Աբնի այգում լճի ափին նստած՝ աղավնիներին նայեցին: Ոտքերի տակի կանաչ խոտերը հաճելի զգացողություն էին հաղորդում՝ թարմ ու հուսառատ: Իսքենդերը թևը անցկացրեց Քեյթի գոտկատեղով, իր կողմը քաշելով՝ համբուրեց: Քեյթը հավանեց նրա հոտը, շուրթերի համը. նրան դուր եկավ, որ ուրիշ տղաների պես չի փորձում շարունակել: Կրքոտ ձայնը, ձեռնոց նետող հայացքն ու հոգու փոթորիկը զգաց:

Ձեռք ձեռքի նստարանին նստած՝ շուրջը նայեցին: Առջևով անցնող բոլորի մասին ինչ-որ կարծիք հայտնեցին: Մեկը տարօրինակ էր: Մյուսը խենթ էր: Մեկը ծերուկ էր: Մյուսը գրպանահատի տեսք ուներ: Սիրահարված զույգին տեսնողները ուրախանում, ժպտալով էին նայում նրանց:

թվայնացրել է 1915.info կայքը

– Սրա՛ն տես,– հանկարծ ասաց Քեյթը:– Գլխին փորձանք է ման գալիս:

Դեպի իրենց քայլող, մուգ մազերով, նիհար, կորամեջք մարդ էր: Իսքենդերը նրան տեսնելուն պես լրջացավ, մեջքը ուղղեց, Քեյթին փաթաթված թևերը թուլացան:

– Ի՞նչ եղավ: Ճանաչո՞ւմ ես սրան:

Իսքենդերը, առանց մի բան ասելու, մեջքը դեպի ճանապարհը դարձրեց ու օձիքը բարձրացրեց՝ կարծես դեմքն ուզեր ծածկել:

– Ի՞նչ է կատարվում: Չե՞ս ուզում տեսնել նրան,– հարցրեց Քեյթը:

– Բան չկա: Ծանոթ է: Չէի ուզում՝ մեզ միասին տեսներ:

Նա բոլորին Հաթիփ անունով հայտնի մարդ էր: Մի երկու վայրկյան անց կողքով անցավ: Առանց նստարանին նստած զույգին նայելու՝ քայլեց: Երբ տեսադաշտից հեռացավ, Իսքենդերը վերադարձավ նախնական վիճակին:

«Դա ի՞նչ էր նշանակում»,– ինքն իրեն ասաց Քեյթը:

Նկատել էր՝ Իսքենդերը ընտանիքի կամ մանկության, կամ հուզական թեմաների մասին չի սիրում խոսել՝ երկաթե թակարդի պես փակվում էր: Բայց դրանից նրա հանդեպ հետաքրքրությունն ավելանում էր: Ինչքան բարդ բնավորություն ուներ:

«Լավ տղա է,– մտածեց նա,– միակ խնդիրն այն է, որ հանկարծակի զայրանում է»: Այդ պահերին Քեյթը չէր իմանում ինչ անել: Հաջորդ հանդիպումների ժամանակ նրան կփորձեր ավելի լավ հասկանալ. վստահ էր՝ նորից են հանդիպելու: Դրանում կասկած չուներ: Ինչպես նաև կասկած չուներ, որ վաղ թե ուշ Իսքենդերին իրեն սիրել է տալու:

թվայնացրել է 1915.info կայքը

Իլիաս

25 դեկտեմբերի, 1977
Լոնդոն

Խոհարարներով ու օգնականներով լցված, լավ լուսավորված լայն խոհանոցում «Պլատոն» ռեստորանի սեփականատեր ու շեֆ խոհարար Իլիասը կանգնած էր ճտճտացող թավաներով օջախի գլխին:

Դանդաղ խառնեց կրեմով սնկի սոուսը: Գրեթե պատրաստ էր: Կրակից վերցնելուց առաջ անպայման մի պտղունց մշկընկույզ էր ավելացնելու: Դա նրա փոքրիկ գաղտնիքն էր: Եվ այսօր պետք է ամեն ինչ կատարյալ լիներ, որովհետև Սուրբ Ծնունդ էր:

Ուղղափառ քրիստոնյա ընտանիքում էր աշխարհ եկել, ժամանակի ընթացքում հեռացել էր կրոնից: Բայց սիրում էր Սուրբ Ծնունդը՝ երգերը, իրար հետ հավաքվելը, նվերներ տալը ու հատկապես հավատն առ այն, որ հրաշքներ լինում են: Երեխա ժամանակ ամենասիրելի սուրբը Կրետացի Անդրեասն էր. նա ոչ թե ավելի սուրբ էր մյուս սրբերից կամ ավելի արդարամիտ, այլ որ նա ինքն իրենով հրաշք էր: Ի ծնե համր էր սուրբ Անդրեասը: Բայց յոթ տարեկանում հանկարծ սկսել էր խոսել ու խոսել իրողությունների մասին, որ իր տարիքից վեր էին:

Իլիասը մանկությունից ի վեր սիրում էր այդ պատմությունը լսել: Եթե մի համր տղա կարողացել է որպես

թվայնացրել է 1915.info կայքը

խոսքաշեն անցնել պատմության գիրկը, ուրեմն կյանքն այնքան էլ դառը չէր, ինչպես թվում էր:

Մշկընկույզ ավելացնելուց հետո սոուսը նորից խառնեց, գազօջախն անջատեց: Օգնական խոհարարն անմիջապես հայտնվեց կողքին ու մինչ հիսունհինգ բաժին միսը վրան կլցներ, դրեց ճենապակե ամանի մեջ, որ սառչի:

Իլիասը թևի ժամացույցին նայելուց հետո անցավ հաջորդ ճաշատեսակին՝ թխկու օշարակով ու ընկույզի սոուսով, տանձով պաստա: Երբեք մետաղական գործիքներ չէր օգտագործում: Դա էլ էր նրա գաղտնիքներից մեկը: Միայն փայտ էր օգտագործում՝ տախտակները, գդալները, հարիչները, շերեփները, խառնիչները, սխտոր ճզմիչները, բոլորը պետք է փայտից լինեին: Մետաղը սառն էր, փայլուն ու կատարյալ: Կապ չէր հաստատում սննդի հետ, միայն իշխում էր: Իսկ փայտը անփույթ իմաստունի էր նման՝ մի քիչ անտաղանդ ու կոպիտ էր, բայց անկեղծ:

Ամանորի ընթրիքին յոթ ժամ էր մնացել: Մինչև 1978 թվականը ընդամենը մի քանի օր էր մնացել: Իլիասը նոր տարվանից շատ մեծ սպասումներ չուներ: Միայն մի հույս ուներ, որ ավարտվող տարվա պես վատը չէր լինի:

1977 թիվը գրեթե հիսուն տարվա իր կյանքի ամենադժվար տասներկու ամիսն էր եղել: Իլիասը տարեսկզբին զարգացող կարիերա, գրավիչ կին ու մեծ տուն ուներ: Ամեն ինչ մի վայրկյանում տակնուվրա էր եղել: Յոթ ամիս անց ամուրի էր, ապրում էր գրեթե առանց կահույքի փոքր բնակարանում ու միայն մի քանի ընկերների էր հանդիպում. անսպասելի ամուսնալուծությունից ուժահատ էր դուրս պրծել: Դեպի բարձունք մագլցելիս նստած մարտկոցով խաղալիք գնացքի էր նմանվել: Ամուսնության վերջին փուլում արդեն իրեն չպատկանող

թվայնացրել է 1915.info կայքը

էներգիայով շարունակում էր փորձել, համառել ու տատանվել, ի վերջո երկաթուղուց դուրս էր թռել: Տգեղ ամուսնալուծություն էր. երկուսն էլ իրենց անսազական կերպով էին պահել: Իլիասը նկատել էր, որ զգացմունքներից ավելի շատ փողի մասին էին խոսում, որոշել էր ամեն ինչ կնոջը թողնել՝ ալիմենտն ու իրենց հուշերը:

Ամառվա վերջին հայրը սրտի կաթվածից մահացավ: Մայրը չէր կարող Կլեոյին միայնակ խնամել. երբ նրան խնամքի տուն տարավ, Իլիասը չկարողացավ հակառակվել: 1977 թվականից անվնաս դուրս եկած միակ բանը կարիերան էր: Գործերը լավ էին գնում՝ մեղմացնելով մյուս բոլոր պարտությունների ցավը: Պլանավորում էր շուտով մի ռեստորան էլ բացել:

Կնոջը սիրել էր ու ինչ-որ չափով դեռ սիրում էր: Նրբակազմ, նեղ ուսերով, գունատ, մաքուր անգլիական խոսվածքով ու խելացի Անաբելը Իլիասի՝ այդ երկիր տեղափոխվելու հիմնական պատճառն էր: Անաբելը, որ, իր կարծիքով, թագուհուց էլ անգլուհի էր, շատ էր կապված ընտանիքի հետ, և քանի որ Իլիասի աշխատանքն իր աշխատանքից ավելի ճկուն էր (Անաբելը փաստաբանական գրասենյակ ուներ), ամենահարմար տարբերակը Իբիցայում կարճատև մեղրամսից հետո Լոնդոն տեղափոխվելն էր:

Իլիասը չէր հակառակվում այդ ծրագրին, բայց նոր երկիր տեղափոխվելը դժվար էր: Յոթանասունականների սկզբին Լոնդոնը գաստրոնոմիայի առումով դժվար թե դրախտային վայր համարվեր: Միայն մի բուռ առաջին կարգի ռեստորաններ կային: Անգլիացիները ոչ միայն բաց չէին փորձարարական համերին, այլև անթաքույց կասկածամիտ էին այլ խոհանոցների հանդեպ: Հնդկական խոհանոցը համեմատաբար տարածում էր գտել, բայց Իլիասն ուզում էր այլ համեր մատուցել:

թվայնացրել է 1915.info կայքը

Անգլիական խոհանոցը ծանր էր ու պարզունակ, հաճախորդները նոր համերի հանդեպ կարծրատիպեր ունեին, բայց ինքը որոշել էր հաղթահարել բոլոր արգելքները:

Աշխատասեր էր: Միշտ կառչում էր աշխատանքից, բայց այս անգամ իր համար անսովոր լավատեսությամբ էր լցված: Ուրիշների գնահատականը ստանալու ցանկության տակ հոր հետ ունեցած խնդիրներն էին թաքնված, գիտեր: Եթե մեկն ասեր՝ այդ օրվանից մինչև այս օրը կյանքիդ ընթացքը պատկերիր՝ երկու հակադարձ պատկեր կստանար՝ մեկը աշխատանքն էր, մյուսը՝ ամուսնությունը: Որքան կարիերան զարգանում էր, այնքան ամուսնական կյանքը ցած էր գլորվում:

Անաբելը խելացի, եռանդուն կին էր, բայց խիստ դատողությունների տեր մարդ էր, ու չէր կարելի ասել, թե ներողամիտ էր: Նրա կյանքի փիլիսոփայությունը աշխատանքային գրասեղանի նման էր՝ կոկիկ, կանոնավոր և ուղղանկյուն:

«Ընդունելի»-ի ու «քննադատելի»-ի հիման վրա կյանքը երկու մասի էր բաժանում՝ արանքում հաստ գծեր անցկացնելով: Իր հավանած մարդկանց պատվանդանի վրա էր դնում, իսկ չսիրածներին արհամարհում էր: Իլիասի պես կյանքը հավերժ մոխրագույն տեսնող մարդու համար դժվար էր ընկալել շախմատի տախտակի պես սև-սպիտակ աշխարհը: Բայց մյուս կողմից սեռական կյանքը հիանալի էր:

Ամեն անգամ զարմանում էր՝ ինչպես կարող էին բոլոր թեմաներում անհամաձայնություններ ունեցող երկու մարդ անկողնում այդքան համահունչ լինել:

Սկզբում երեխա չէին ուզում: Իրենց ստեղծած բոժոժի մեջ երեխայի համար տեղ չկար: Իսկ հետո, երբ պատրաստ էին, բնությունը պատրաստ չէր: Այդպիսով, ամուսնության առաջին կեսը հնարավոր հղիությունից

թվայնացրել է 1915.info կայքը

էին խուսափում, իսկ երկրորդ կեսում, ընդհակառակը, հղիությունը նպատակ դարձրին. երկուսն էլ անհաջող:

Սկզբում մի անգամ Անաբելը հղիացավ, բայց նրանք, ավելի շատ Անաբելը, քան Իլիասը, նախընտրեցին ընդհատել հղիությունը:

Ավելի ուշ, երբ կորան ծնելիության գրաֆիկների, հորմոնալ, հղիության թեստերի մեջ, հոգնեցին պայքարելուց. երկուսն էլ զղջումով էին հիշելու այն ընդհատումը: Իլիասը չէր հասկանում՝ ինչու չեն կարողանում երեխա ունենալ: Բժիշկը ասել էր՝ շատ բաներ կարող են անպտղության պատճառ դառնալ՝ խոլեստերինը, ծխախոտը, սթրեսը: Երկուսին էլ առաջարկել էր մի շարք թեստեր անել, բայց Անաբելը խիստ դեմ էր եղել:

1977 թվականի գարնան վերջին, հուսալով, որ արձակուրդը կօգնի, մի շաբաթով գնացին Սանտորինի. սպիտակ ծեփով տուփերի նման տներ, նեղ փողոցներ, համեղ ուտելիքներ ու անընդհատ փչող ու շոգից փրկող քամի: Մի երեկո ընթրիքին Անաբելը սովորականից շատ էր խմել: Ասել էր, որ Իլիասին պետք է կարևոր բան պատմի, որ երկար ժամանակ իր մեջ էր պահել: Գլուխը հակեց, կարծես քնելու էր, ու ասաց.

– Ուզում եմ այս թույնից ազատվել:

Անաբելն ասել էր, որ շատ է մտածում այն երեխայի մասին, բայց ծննդաբերությունն անհնար էր, որովհետև երեխան նրանը չէր: Դա մի հիմար սխալ էր, ՄԵԾ սխալ: Այդ ժամանակ Իլիասն անընդհատ աշխատում էր, և Անաբելն իրեն անտեսված էր զգում. կարևոր չէր. կարգին չէր էլ ճանաչում այդ մարդուն և, իհարկե, սիրահարված չէր նրան, գործընկեր էր, սկսվելն ու վերջանալը մեկ էր եղել, բացի դրանից՝ շատ ժամանակ էր անցել: Հիմա անդադար տանջվում են, հոգնեցնում իրենց մարմինները, նյարդայնանում, որ մի երեխա ունենան: Դրա

թվայնացրել է 1915.info կայքը

համար Անաբելը չէր ուզում թեստ հանձնել. շատ լավ գիտեր՝ ոչ թե ինքն էր չբեր, այլ Իլիասը:

Իլիասը հարցրեց այդ տղամարդու անունը: Ի՞նչ կարևոր է՝ ասաց Անաբելը: Իլիասը նորից հարցրեց: Անաբելն ասաց, որ դա ամենաքիչն է, որի համար պետք է անհանգստանա:

– Իրական խնդիրը...– շարունակեց նա:

Բայց Իլիասը նույնիսկ չլսեց: Առանց միմյանց ձեռքը բռնելու, աչքերը միմյանցից փախցնելով ման եկան փողոցներում: Թավ լռություն էր մտել նրանց միջև: Կղզին հանկարծակի փոքրացել, նեղացել էր:

Գուցե ուրիշ զույգ կարողանար այդ փորձանքը հաղթահարել:

Ամուսնությունը ավարտվեց այնպես, ինչպես սկսվել էր՝ արագ-արագ, կարծես հրդեհից տան իրերը փորձեին փրկել:

Երբ ստորագրեցին ամուսնալուծության փաստաթղթերը, յոթուկես տարվա միությունից Իլիասին մնացին Մանոլիա անունով ծեր ու ծույլ պարսկական կատուն, նկարներով լի ալբոմներ, որոնց չէր ուզում նայել, ու կոտրված սիրտ: Ամուսնալուծվելուց կարճ ժամանակ անց լսեց, որ Անաբելը նորից է ամուսնացել մի հին գործընկերոջ հետ: Տեսնես նույն մա՞րդն էր. երբեք չէր իմանալու:

Իլիասը սովորել էր կիսատության զգացողությամբ ապրել: Նախ ստամոքսի ջղաձգումների պես սկսվող տխրությունը բարձրանում էր կրծքավանդակ ու այնտեղ տեղավորվելով՝ խանգարում ժպտալ, երբեմն անգամ շնչել: Բժշկի չէր դիմել, չէր էլ փորձել հոգեբանական աջակցության դիմել: Ընկերներն անընդհատ զանգում, ճնշում էին, որ վերադառնա ամուրիների աշխարհ, որտեղ իրենց հայտնի շեֆը մեծ հեղինակություն ուներ:

թվայնացրել է 1915.info կայքը

Երբեմն իրեն պաշտող, երբեմն էլ ատող մի շարք կանանց հետ էին փորձում հանդիպումներ կազմակերպել: Իլիասը հաճախակի էր մենակ մնալու համար պատճառաբանություններ փնտրում: Մենակությունը՝ իրեն ամբողջ կյանքում վախեցնող զգացողությունը, լցվում էր ծակոտիները, չոր սպունգի մեջ ներծծվող ջրի պես մարմնի բոլոր երակներում, ամեն հյուսվածքի մեջ էր լցվում: Տարօրինակ կերպով Իլիասը դրանից վատ չէր զգում: Գոհ էր մենակությունից:

1977 թվականի ամառվա կեսերն էր, երբ Մոնրեալ մեկնելու մի ուղղության տոմս գնեց: Դրանից հետո ամեն տեղ քայլելով կամ հեծանիվով էր գնում, որ կարողանա իր սիրած փողոցներին ու հրապարակներին հրաժեշտ տալ: Իր հանդեպ սիրալիր ու առատաձեռն քաղաքից էր բաժանվում: Բայց թռիչքից մի օր առաջ մորից եկած հեռախոսազանգից իմացավ՝ հայրը սրտի կաթված է ունեցել:

– Ամեն օր քեզնից էր խոսում,– ասաց մայրը:– Հայրդ հարգում էր քեզ: Բայց այնքան հպարտ էր, որ չէր կարող դեմքիդ ասել:

Հեռախոսագծերն այնքան վատ էին, որ Իլիասը վստահ չէր՝ ճիշտ լսեց, թե ոչ.

– Տուն եմ գալիս:

– Ո՛չ, մի՛ արի,– ասաց մայրը:– Հիմա չի լինի: Ե՛վ դու քեզ ուշքի բեր, և՛ Կլեոն ու ես մեզ հավաքենք, հետո կգաս: Այս պահին ի վիճակի չենք միմյանց օգնել: Մնա՛ այնտեղ, ուր կաս, ու արա՛՝ ինչ պետք է անես: Վստահ եմ՝ հայրդ էլ կուզեր, որ այդպես անես:

Այդ օրվանից հետո Իլիասը անընդհատ աշխատելու էր ու տերևները կրծող անհագուրդ որդի պես անցյալն ուտելով, վերջացնելու էր, իր բոժոժի մեջ փակվելով՝ սպասելու էր, որ մի օր մեկն իրեն հանի այդ վիճակից:

թվայնացրել է 1915.info կայքը

Չէր դադարում մտածել հրուշակեղենի խանութում հանդիպած այն կնոջ մասին: Փեմբե Քադեր՝ ինչ հետաքրքիր անուն ուներ, միաժամանակ՝ տխուր: Աչքից չէր վրիպել, որ այնքան տարբեր էր Անաբելից՝ լրիվ տարբեր երկու կին: Եթե նախկին կինը Փեմբեի հետ ծանոթանար, հաստատ կասեր, որ պարզունակ է, ու իմաստալից կժպտար: Հետո կասեր՝ բոլոր տղամարդիկ հենց դա չե՞ն ուզում: Պարզ կին, որ իրենց չի հարցաքննի, գլուխները չի տանի, նրանց չի հակաճառի, չի քննադատի: Բայց, կհավելեր Անաբելը, դա դատարկ ֆանտազիա է, որովհետև իրականում պարզ կանայք գոյություն չունեն: Կանայք երկու մասի են բաժանվում՝ ասում էր նա: Բարդ կանայք, որ պարզ են թվում, և բարդ կանայք, որ առաջին հայացքից բարդ չեն թվում:

Աշխատանքը հանգստացնում էր Իլիասին, ինչպես միշտ: Ի հավելումն առավոտվա ինտենսիվ աշխատանքի՝ երկու խնջույքի էին պատրաստվում: Ամբողջ խումբը ողջ ուժով լծվել էր աշխատանքի: Ոչ ոք անգամ չհարցրեց՝ ինչու էր վերջին պահին մենյուին նոր բան ավելացրել՝ նարնջով, մաստակով սյութլաչ:

Կես ժամ անց օգնականներից մեկը մոտեցավ Իլիասին ու ասաց.

– Շե՛ֆ, այցելու ունես:

Մտասույզ Իլիասը հոնքը բարձրացրեց.

– Հը՞մ:

– Քեզ են հարցնում:

– Հիմա չեմ կարող: Չե՞ս տեսնում՝ պետքարան գնալու ժամանակ էլ չունեմ:

Օգնականը պատրաստվում էր տխուր-տխուր վերադառնալ, երբ Իլիասի մեջ հանկարծ կասկած ընկավ.

թվայնացրել է 1915.info կայքը

– Մի րոպե սպասի՛ր: Կի՞ն է այցելուն: Մազերը դարչ-նագո՞ւյն են:

– Դարչնագույնը ո՞րն է, շե՛ֆ: Բանի նմա՞ն...

– Լավ, կարևոր չէ: Գալիս եմ,– ասաց Իլիասը:

Տարիներ անց անգամ այդ պահը մտաբերելիս միշտ հիշելու էր՝ ինչպես ձեռքերը մաքրելով դուրս եկավ խոհանոցից. միջանցքը անցնելուն պես այնտեղ տեսավ նրան՝ դեմքին մեղքի ու անհանգստության արտահայտությամբ, թևի տակ բորդո պայուսակ:

Փեմբեն շրջազգեստը այս ու այն կողմ էր ձգում, կարծես իրեն անպաշտպան էր զգում: Մի սեղանի մոտ նստեցին: Դեռ ռեստորանը չէր բացվել, դատարկ սեղանների արանքում նստելը տարօրինակ էր, ավելի տարօրինակ էր, որ թիմը այս ու այն կողմ էր վազվզում: Երկու րոպեն մեկ օգնականներից մեկը գալիս, մի բան էր հարցնում, Իլիասն էլ ամեն անգամ կեսհոգնած, կեսհանգիստ պատասխանում էր:

– Լավ կլինի՝ խոհանոց վերադառնաս,– ասաց Փեմբեն որոշ ժամանակ անց:

– Ո՛չ, մի՛ անհանգստացիր: Ես շատ ժամանակ ունեմ,– պատասխանեց Իլիասը:

Փեմբեն համառորեն գլուխն օրորեց:

– Եթե ուզես, ես էլ կարող եմ գալ:

– Հաստա՞տ,– հարցրեց Իլիասը:– Ներսում իսկական խենթանոց է: Ընթրիքին երկու ժամ է մնացել, դրա համար բոլորը վազվում են:

Փեմբեն վստահ ժպտաց: Այդ օրը վարսավիրանոցը փակ էր, ժամանակ ուներ: Կարող էր օգնել:

Փեմբեին խոհանոց ուղեկցելիս դեռ տատանվում էր Իլիասը: Նրան մի գոգնոց տվեց, հետո նրա առաջ պղպեղ, մաղադանոս, կոճապղպեղ դրեց: Առանց խոսելու ու լուռ աշխատեց Փեմբեն:

թվայնացրել է 1915.info կայքը

Երջանիկ էր: Իր սիրած գործն էր անում: Ոչ ոք նրան ոչինչ չասաց: Խոհանոցում նորեկին ոչ ոք ոչ մի անգամ չնայեց:

Ավելի ուշ, երբ պետք է գնար, Իլիասը Փեմբեի հետ խոհանոցից դուրս եկավ: Այդ պահին ներսից ուժեղ ձայթյուն լսեցին: Ծեփի պես ճերմակ մաշկով մերկ կնոջ նկարի՝ Էնգրի «Մեծ Հարճի» վերարտադրության առաջ կանգնեցին: Աչքերը և՛ նկարից, և՛ իրարից փախցրին:

– Այս լավությունդ երբեք չեմ մոռանա,– ասաց Իլիասը:– Շնորհակալ եմ:

– Ես եմ շնորհակալ,– ասաց Փեմփեն:– Դու ինձ օգնեցիր:

Այդ պահին Իլիասը ուզեց նրան համբուրել: Այդ ցանկությունը վախեցրեց նրան: Այնքան էր անհանգստանում սխալ անելուց, նրա սիրտը կոտրելուց, սահմաններն անցնելուց, մշակութային նորմերը խախտելուց, նշանները սխալ հասկանալուց, որ քարացել էր ու հնարավորինս հեռու կանգնել Փեմբեից: Միայն մատների ծայրերին դիպչելով՝ ձեռք սեղմելու համար մեկնեց ձեռքը: Բայց Փեմբեն դանդաղ նրան մոտեցավ ու համբուրեց այտը՝ կարճ, տաքուկ:

Կեսօրից հետո քրոջս քարտը հետ վերցնելու համար գնացի սպա Էնդրյուին տեսնելու: Կես ժամ սպասեցրեց ինձ: Ուրիշ կարևոր գործ չուներ, պարզապես ուզում էր քիթս գետնին քսել, հիշեցնել՝ ով է տերը: Տեսա՝ ուրիշ բանտարկյալ էլ է նրան սպասում սենյակում: Անփորձ մեկն էր, նոր էր այս կողմերում հայտնվել: Ոտքը նյարդային ցնցելով, ձեռքի թղթերը պինդ բռնած՝ սպասում էր.

թվայնացրել է 1915.info կայքը

ակնհայտ է՝ բողոքելու էր եկել: Պարզ երևում էր՝ դեռ երեկվա երեխան է, դեռ կյանք չէր տեսել, դեռ հարված չէր ստացել:

Ուզում եմ ասել. «Հիմարություն մի՛ արա: Ջուր ժամանակդ մի՛ ծախսիր»:

Բանտում նվնվացողներին լավ չեն ընդունում: Ինչքան էլ որ իրավացի լինես, լրտեսությունը լավ միտք չէ, հատկապես երբ բոլորը գիշատիչ թռչնի պես քեզ են հետևում, ու դեռ ոչ ոք չգիտի՝ ով ով է: Քայլեր կան, որ չպետք է անես: Եթե անես, հետևանքների հետ դու ես հաշվի նստելու:

Պատի հայտարարություններին նայեցի՝ օրգանների նվիրատվություն, թմրանյութերից բուժում, զայրույթի կառավարման թերապիա, հեպատիտ B-ի և հեպատիտ C-ի բուժում, «Բանտարկյալներին բարեգործ քաղաքացիների օգնության ծրագրի» հայտարարություններ կային: Եթե դրսում մեկին ցույց տաս, հավանաբար խղճուկ, անգամ սարսափելի կհամարի: Բայց ես այդպես չեմ կարծում: Այստեղ տասներեք տարի անցկացնելուց հետո սարսափեցնողը դրսի աշխարհն է:

Երբ Անգլիա եկանք, առաջին անգամ կարմիր ավտոբուսից թագուհու ժամացույցի աշտարակը տեսանք (Բիգ Բենին այդպես էինք ասում), ես ու Էսման երեխա էինք: Ի տարբերություն մեծերի, հատկապես մորս՝ լեզուն արագ սովորեցինք: Մայրս քերականությունից չէր դժվարանում, բայց ինքնավստահ չէր: Թուրքերեն խոսելիս էլ, կարծում եմ, իրեն հանգիստ չէր զգում: Անգամ իր մայրենի քրդերենով: Հավատում էր, որ բառերը գլխին փորձանք են բերում: Դրանց պատճառով մարդիկ անընդհատ իրար սխալ էին հասկանում: Լեզվին կապված մարդկանց, օրինակ՝ լրագրողներին, իրավաբաններին, գրողներին, չէր վստահում: Սիրում էր այն ամենը, ինչ

թվայնացրել է 1915.info կայքը

բառերը անկարևոր կամ երկրորդական էր դարձնում՝ նկարներ, ձեռագործ աշխատանքներ, օրորոցայիններ, բաղադրատոմսեր:

Տանը մեզ հետ քրդերեն բառերով խառը թուրքերեն էր խոսում: Իսկ մենք անգլերեն էինք պատասխանում, իրար հետ անգլերեն էինք խոսում: Միշտ կասկածում էի, որ մայրս ավելին է հասկանում, քան ցույց է տալիս: Գուցե միգրանտ լինելն այդպիսի բան է: Էլ չեմ ասում՝ արտահայտությունները. դրանք ամենավատն են: Պատկերացրեք՝ «մուկ կշել» արտահայտությունը ինչպես կարելի է հասկանալ: Ասենք թե գիտենք՝ «մուկն» ինչ է, «կշելն» ինչ է, բայց ինչքան էլ փորձեք, եթե լեզուն լավ չգիտեք, իմաստը չեք հասկանա:

Բայց քույրս կարող էր: Էման շատ էր սիրում լեզուներ: Եթե ինչ-որ մեկն իրեն անհայտ արտահայտություն օգտագործեր, հազվադեպ դրամ գտած կոլեկցիոների պես ամեն ինչ անում էր այն ձեռք բերելու համար: Նա տարված էր բառերով: Մայրս անհանգստանում էր, որ կարդալով աչքերը փչացնելու է ու ամուսին չի կարողանալու գտնել: Իսկ ես գրքերի համար ժամանակ չունեի: Մինչև բանտ ընկնելը:

Այս վայրը ինձ փոխեց: Բայց ոչ հանկարծակի, այլ շատ դանդաղ՝ քայլ առ քայլ: Չէր կարելի ասել, որ շատ «վստահելի բանտարկյալ» էի, բայց ուզածս ժամանակ Մարտինը թույլ էր տալիս օգտվել գրադարանից: Այնտեղ էի կարդում, ուսումնասիրում, մտածում:

Գուցե մտածեք՝ ինձ ատում են, բայց այդպես չէ: Տարբեր տեղերից, որոնց անուններն անգամ քարտեզի վրա չեմ կարող գտնել, նամակներ, քարտեր, նվերներ եմ ստանում: Դրսում երիտասարդներ կան, որ կարծում են՝ հերոս եմ: Անգամ եթե պատկերացում չունեն իմ մասին: Ինձ հետ ամուսնանալ ցանկացող կանայք են անգամ եղել: Երևի

թվայնացրել է 1915.info կայքը

կան այդպիսի կանայք՝ մեղավորների հետ ամուսնացողներ ու նրանց իրենց սիրով բուժողներ:

Մեկ էլ ինձ իրենց «պարտականությունը» դարձրած հավատացյալներ: Տարբեր կրոններից, տարբեր հավատքներից: Երբեմն նոր «Նոր սերունդ» սեկտայի զառանցանքներն էլ եմ սպանում: Ինձ բրոշյուրներ, գրքեր, ձայնապնակներ են ուղարկում: «Թո՛ւյլ տուր, մթան մեջ լույս վառելով, ամոքել վիրավոր հոգիդ»: Ինչպիսի՜ վերամբարձ խոսքեր: Չեմ հավատում թունդ հավատացյալներին: Եթե ինձ հարցնեք, ասում են՝ ամբողջ մարդկության համար են, բայց հենց փորձում ես մի քիչ նրանցից տարբեր մտածել, մի վայրկյանում պատրաստ են քեզ օտարել: Բայց մեզ նմանների հետ քաղաքավարի են վարվում: Որովհետև մենք մեղավոր ենք. ուզում են մեզ ճիշտ ուղու վրա դնելով՝ Աստծու աչքը մտնել: Իրականում շատերի խնդիրը լավություն անելը չէ, միայն դրախտ ընկնելու համար հնարավորություն ունենալն է: Մեզ դրա համար են սիրում, մեզ, այսինքն՝ աշխարհի կեղտոտներին, մարդասպաններին, գողերին, մարմնավաճառներին, անբարոյականներին: Մենք սեփ-սև կտոր ենք կարծես թե, իրենք էլ մեր կողքին թանկարժեք քարի պես փայլելու են:

Մի ժամանակ մի լրագրող կին կար, նիհար էր, բայց շքեղ, կարճ շրջազգեստներ էր հագնում, երկար, սեքսուալ ոտքեր ուներ: Մի քանի անգամ եկավ այցելության:

– Խնդրում եմ, հանգի՛ստ եղիր, Ալեքս: Ես միայն ուզում եմ ձեր ընտանիքի պատմությունը հասկանալ ու այդ թեմայի մասին գրելով՝ բարձրացնել հասարակության իրազեկությունը:

Ինչպիսի ազնվություն: Հետո գնաց ու զզվելի հոդված գրեց: Գրել էր, որ ամեն ինչ մորս պատճառով էր եղել, տղա երեխային երես էր տվել: Ասել էր, որ փոքր ժամանակ հոգեբանությունս խեղվել էր: «Միջին Արևելքին

թվայնացրել է 1915.info կայքը

հատուկ հայրիշխանության տիպիկ օրինակ»: Վերևից նայելով: Լրագրողների հետ էլ չեմ խոսում: Մարդիկ նրանց համար թվեր են: Կամ տառեր: «Ի.Թ.-ն երեկ դանակահարեց Փ.Թ.-ին»: Մեզնով հետաքրքրված չէին: Միայն ուզում էին, որ իրենց գլխում եղած կաղապարներին համապատասխանենք:

Իմ մասին աշխատություններ էլ կան. համալսարանում մեկը անգամ թեզ էր գրել: Մի ժամանակ էլ ինձ օգտագործելով՝ բոլոր մուսուլմաններին սևացնելու փորձեր անող քաղաքագետ կար: Ասել էր. «Այդ մարդը կենդանի ապացույց է, որ փախստականները չեն կարող հարմարվել Եվրոպայի քաղաքակրթության հիմնական սկզբունքներին»: Վայ, ապուշի մեկը: Մայրս ճիշտ էր խոսքերի մասին՝ մարդկանց մոտեցնելու փոխարեն, հեռացնում են իրարից: Այդ բոլոր մարդկանց համար ես անտեսանելի եմ: Մայրս էլ: Մենք միայն նրանց նպատակների համար օգտագործվող ենք:

Վերջապես գրասենյակի դուռը բացվում է, ու սպա Էնդրյուն գլուխը դուրս է հանում:

– Վայ, ո՛ւմ եմ տեսնում:

Մի կողմ է քաշվում ու ինձ ներս հրավիրում: Գրասենյակն ինչքան է փոխվել: Մարտինի ժամանակ ուրիշ էր, բայց դե Մարտինն էլ էր ուրիշ: Բոլորս հարգում էինք նրան:

Էնդրյուն գրասեղանի մոտ է նստում ու մի թղթապանակ բացում: Ակնհայտորեն իմ թղթապանակն է:

– Ուրեմն 1963 թվականին ես ծնվել,– ասում է նա:– Տարեկից ենք, նույնիսկ նույն ամսում ենք ծնվել: Այ քեզ բան:

Յունուսը առյուծ է, Էսման՝ խեցգետին, իսկ ես՝ կարիճ: Սպա Էնդրյուն էլ:

– Ասում են՝ երկու տեսակի կարիճ կա, գիտե՞ս,– շարունակում է նա,– ուրիշներին կծողներ ու իրենց կծողներ:

թվայնացրել է 1915.info կայքը

Աչքերը ինձ է հառում՝ կարծես ուզում է կռահել պատասխանս:

– Այստեղ գրված է՝ քեզ մի քանի անգամ առանձին խուց են տարել: Շատ ես կռիվներ արել: Բանուգործդ ժողովրդին հրահրելն է եղել: Տեսնենք՝ մի բանտարկյալի քիթն ես ջարդուփշուր արել, մի պայմանական նշանակված ծառայողի վրա ես հարձակվել: Մի բանտարկյալի մատներն ես կոտրել, հա՞: Այն էլ՝ չորսը միանգամից:

Լռում ու զննում էր ինձ:

– Ո՛ւֆֆ, խեղճ, երևի շատ է ցավել:

Սրամոքս սկսում է ջղաձգվել:

– Ինչպե՞ս ես հաջողացրել, Ալեքս: Մատները կոշտ մակերեսի վրա ես դրել, բոլորը միանգամի՞ց կոտրել, թե՞ մեկ առ մեկ:

Հասկանում էի՝ ինչ էր անում: Ինձ հիշեցնում էր՝ նախկինում ով եմ եղել: Ուզում էր ասել՝ կարող եմ նորից այդպիսին դառնալ: Այստեղ կյանքս երկու շրջանի էր բաժանվում: Սկզբում բոլորի գլխին փորձանք էի: Զայրույթով էի լցված, լրիվ կորցրել էի ինձ:

Իսկ հաջորդ փուլը քիչ թե շատ այս պահին է նման: Դեռ զայրացած խենթ եմ, բայց արդեն զայրույթս իմ դեմ է ուղղված, ոչ թե շրջապատի մարդկանց:

– Բեկոնի բլոկով եմ ճզմել ձեռքը:

– Հըմմ,– ասում է նա՝ գլուխն օրորելով՝ կարծես հավանություն տալով:– Լավ, իսկ ծառայողի հետ ի՞նչ խնդիր ունեիր: Նրա՞ն ինչ էր եղել:

– Փոքր խնդիր էինք ունեցել:

Ինքն էր հրահրել: Ինձ նեղն էր ուզում գցել, ուզում էր տեսնել՝ ինչքան կդիմանամ: Մերկ որոնումների ժամանակ սրիպել էր խոնարհվել, փորձել էր այստեղ-այնտեղս սրուգել, վատ անուններ էր օգտագործել, հրահրել էր: Ես էլ ատամի մածուկի մեջ թաքցրած ածելիով դեմքի կեսը

թվայնացրել է 1915.info կայքը

փրթել էի: Հեկո ուրիշ բանկ էին կեղափոխել դրան: Լսել եմ՝ սպին դեռ մնացել է:

– Այսպեղ ունեցածդ նոպաների մասին է գրված՝ էպիլեպսիա, միգրեն, խուճապի նոպաներ, փսիխոզ ու ինքնասպանության փորձ... հըմմմ..– կանգ առավ. հեկաքրքիր բան էր գրել:– Խոսքի խանգարում: Դա ի՞նչ է նշանակում:

– Կակազում էի,– ասացի ես:– Հեկո անցավ:

Էնդրյուն շարունակում է կարդալ.

– Շատ դեղ ես խմել՝ կրազոդոն, զիմելիդին, լիթիում, պաքսիլ, զոլոֆ, դիազեպամ, զանեքս...

Շատերը չօգնեցին, մի քանիսը կարծես մի շրջան օգնեցին, մի մասն էլ նույնքան բացասական հեկևանք թողեցին, ու ավելի վատացա: Լիթիումից գիրացա, իսկ կրազոդոնը երեք օր տևած կառապալից էրեկցիայի պատճառ դարձավ: Հեկաքրքիր էր՝ այդ ամենը գրա՞ծ էր իմ գործի մեջ:

Ուսերը խաղացնելով՝ քթի տակ ծիծաղում էր:

– Ահ, միս չես ուտում:

Գլուխս օրորեցի: Սպա Էնդրյուն ծիծաղեց.

– Կներես, չեմ կարող ինձ զսպել: Քեզ պես համառը, մայրասպանը, բռնությամբ լի կյանք ունեցող մեկը բուսակեր է. կարոտինակ է:

Չպատասխանեցի. լռություն իջավ սենյակի վրա:

– Կարո՞ղ եմ քարտս վերցնել:

– Իհարկե,– հանկարծ լրջանալով ասում է նա:– Եթե ասես՝ ինչու էիր թույլ տալիս, որ Փախածը քեզ ծեծի, կարող ես վերցնել գրողի տարած քարտդ:

– Խելքը թռցնում էր,– ասում եմ ես:– Կինը ամուսնալուծվում է: Պետք է ինչ-որ մեկին խփեր:

– Ու դու, որպես գթառատ մարդ, կուրծքդ բացեցիր նրա առաջ, չէ՞:

թվայնացրել է 1915.info կայքը

Այդ պահին դարակից Էսմայի քարտն է հանում: Զարմանալի է, բայց առանց խաղեր տալու մեկնում է ինձ:

– Խելառներ կան, որ կարծում են՝ Հուդինին սպամոքսի շրջանում սպացած հարվածներից է մահացել: Պնդում են, որ հարվածից կույրաղիքն է պայթել:

Ոչինչ չեմ ասում: Կարիք չկա ասել, որ ես էլ եմ նրանցից մեկը: Եթե կույրաղիքին շարունակաբար ու նույն ուժգնությամբ հարվածես, հեկևանքը դա է լինելու:

Պեկք է ճիշտ անկյունը գտնել ու պահը բաց չթողնել: Գոնե փորձել: Ի՞նչ ունեմ կորցնելու որ:

– Նոր ինքնասպանության փորձ չես անում, չէ՞: Մեջս կասկած ընկավ,- հանկարծ ասաց նա:– Իհարկե, եթե ինքդ քեզ վնասող կարիճներից ես:

Սպա Էնդրյուն ավելի խորամանկ է, քան կարծում էի: Միևնույն է, ժխտում եմ:

– Ինչի՞ պիտի ուզեմ որ: Մեկուկես տարի անց ազատ մարդ եմ լինելու:

Հենց այդ պահին սպա Էնդրյուն, սեղանի վրայից դեպի ինձ ձգվելով, աչքերը հառում է աչքերիս: Առաջին անգամ բերանից ճիշտ բառ է դուրս գալիս.

– Ալե՛քս, երկուսս էլ գիտենք, որ դու երբեք ազատ մարդ չես լինի: Անգամ եթե ազատ լինես, դրսում, փողոցում, միշտ գործածդ մեղքի մեջ բանտարկված ես մնալու:

Հեստո հենվում է թիկնակին ու ավելացնում.

– Հիշի՛ր՝ Հուդինիի մահը յոթ հարվածի հետ կապ չուներ: Նրա կույրաղիքն արդեն հիվանդ էր:

– Ինչո՞ւ ես ինձ պատմում որ:

– Խելացի նավապետը փոթորիկը նախօրոք է զգում ու մոտենում է նավահանգստին, դրա համար:

– Լավ, իսկ եթե փոթորիկ-մոթորիկ չկա,– ասում եմ ես ոտքի կանգնելիս:– Եթե իզո՞ւր է մոտենում ափին:

թվայնացրել է 1915.info կայքը

Սխալ է, գիտեմ: Չպետք է այդպես խոսեմ, բայց չեմ դիմանում:

– Նստի՛ր տեղդ,– ասում է Էնդրյուն:

Նստում եմ: Լուռ սպասում ենք: Կես րոպե անց.

– Հիմա կարող ես գնալ: Իմացած լինես՝ աչքս վրադ եմ պահում:

Դռանը մոտենալիս լսեցի մռթմռթոցը.

– Որպես ի՞նչ եք գալիս Եվրոպա, դարդներդ էլ հետներդ բերում:

Անգլիայում այլատյացությունը միշտ հանկարծակիի էր բերում ինձ: Մարդկանց դեմքին չեն ասում՝ «կեղտոտ լատինո» կամ «յուղոտ արաբ»: Ռասիզմն այստեղ այլ երկրների պես առօրյայի մի մասը չէ: Բայց «տակից» է արվում, միշտ քաղաքավարի: Խնդիրը մարդու մաշկի գույնը կամ կրոնը չէ: Խնդիրը քաղաքակրթությունն է:

Ճանապարհին մի քանի բանտարկյալի ողջունելով՝ բանտախուցս էի գնում: Այդ հարկի տակ մեծամասնությունը տարածքի անգլիացիներ էին, բայց լատինաամերիկացիներ, ռուսներ, բուլղարացիներ, արաբներ, աֆրիկացիներ էլ կային: Ամեն ազգում էլ կան տականքներ ու հերոսներ: Ոմանց գլուխը թմրանյութերի ազդեցությունից էր թմրել, իմն էլ իհարկե կռիվներից էր փափկել: Որոշ մարդկանց միակ խնդիրն իրար անկողին քարշ տալն էր: Միասեռականներ... նրանց բանը բարդ էր: Երբ առաջին անգամ եկա այստեղ, այդ խմբերից ոչ մեկին չհարմարվեցի. ես էլ որոշեցի իմ սեփական թիմը ստեղծել: Հեշտ չէր, բայց կարողացա: Չգրված, բայց խիստ օրենքներ ունեինք, որոնց պետք է բոլորը հետևեին: Մանկապիղծներին ու բռնաբարողներին ոչ ոք չէր հանդուրժում: Ո՛չ հաբ, ո՛չ թմրանյութ չէի օգտագործում:

Բայց չկարողացա առաջնորդ լինել: Իմ ստեղծած թիմը լքեցի, որովհետև գլխիս մեջ եղած խնդիրները պետք է

թվայնացրել է 1915.info կայքը

լուծեի: Ներսումս մի բան պայթեց: Լիքը հաբեր կվեցին, որ ինձ վնաս չկամ: Ինքնասպանությունից հետո պահելու համար յոթ օր քսանչորս ժամ վերահսկողության տակ էի: Շարունակում էի խորտակվել ու սուզվել:

Հետո մի գիշեր մայրս եկավ: Նրա ուրվականը: Զգացի մազերի բույրը: Այնքան իրական էր: Ամբողջ գիշեր ինձ հետ մնաց: Դեմքը: Աչքերը: Կյանքում այդքան չէի արտասվել, ինչքան այդ օրը: Դրանից հետո սկսեցի դանդաղ փոխվել: Ուրիշ մարդ դարձա: Գուցե ոչ ավելի լավը, բայց նախկինից տարբեր: Սպա Էնդրյուն ինչքան ուզում է, թող նայի թղթերիս, գրող կանի, թե մի բան կգտնի:

Երբ մտա խուց, Փախածը վերմակի մեջ փաթաթված նստած էր անկողնում՝ ծեփի պես գունատ, աչքերը փոս ընկած: Շատ ընկճված էր երևում:

– Ո՞նց անցավ,– հարցրեց նա:

– Ընտի՛ր. իրար չխեղդեցինք:

– Շնորհավո՛ր,– ասաց նա փաթ ընկած լեզվով:

Ինչ սպացել էր բաժանման մասին լուրը, ավելի շատ էր հաբ խմում: Ուզում եմ ասել՝ այդքան ծանր մի՛ տար, բայց գիտեմ՝ ավելի լավ է նրան մենակ թողնել: Գնում, մեկնվում եմ անկողնուս, ընկնում եմ մտքերի գիրկը:

Ուրիշ աշխարհում մի կամուրջ կար՝ մազից բարակ, թրից սուր: Մեծ դատաստանի օրը բոլորը մենակ էին անցնելու այդ կամրջով: Մեղավորների բղավոցներն էին լսելու. նրանց կաշին այրվելու էր, ոսկորները եփվելու էին: Եթե մեղավոր ես, դու էլ ես ընկնելու ներքևի կրակների մեջ: Իսկ եթե լավություն ես արել, Կուրբան բայրամին զոհաբերած կենդանիները կենդանություն են առնելու ու քեզ ողջ-առողջ, իրենց մեջքին դրած անց են կացնելու կամրջով: Այս պատմություններն ումի՞ց եմ լսել: Երևի Թարըք հորեղբորից:

թվայնացրել է 1915.info կայքը

Յոթ կարեկանում դադարեցի միս ուտել: Եթե կենդանի չէինք զոհաբերում, Ասպծուց ներողություն էինք հայցում: Հարևանները մեզ միս էին բերում: Բայց Սրամբուլում անցկացրած վերջին տարին մայրս հորս ստիպեց մատաղացու գնել, այն էլ՝ մի մեծ խոյ: Դե, Անգլիա էինք գնում: Հայրս այնտեղ մի գործարանում աշխատանք էր գտել: Ասպված մեր առաջ նոր դուռ էր բացել, ու պետք էր, ինչպես հարկն է Նրան շնորհակալություն հայտնեինք:

Հայրս անդադար բողոքում էր, թե թանկ է ու անիմաստ: Բայց մի օր այգուց եկող մկկոցներից արթնացա. դրսում արածող խոյն էր: Եղջյուրներին ժապավեններ էին փաթաթել. շքեղ կենդանի էր: Թույլ տվեցին, որ կերակրեմ: Մայրս հինա քսեց վրան: Հաջորդ երկու օրը նրա կողքին անցկացրի: Ունեցածս առաջին ու վերջին կենդանին էր:

– Շատ մի՛ ընտելացիր նրան,– ասաց Թարըք հորեղբայրս:

– Ինչո՞ւ,– հարցրի ես:

Նա տխուր դեմք ընդունեց ու ասաց.

– Քեզ չե՞ն ասել, դմբո՛: Մորթելու ենք մի քանի օրից:

Արտասվելով վազեցի հորս մոտ: Երևում էր՝ տրամադրությունը լավ էր: Ինձ լսեց ու խոստացավ՝ կենդանուն ձեռք չեն տա:

– Զանդ սաղ լինի,– ասաց նա:– Միակ տղաս ես: Քեզ համար խոյն ի՞նչ է, որ չտամ:

Ասպված իմ, ինչքան էի ուրախացել: Հպարտ էի ինձնով, որ տղա եմ, էսմայի նման ամքած աղջիկ չեմ: Հաջորդ օրը ինձ շուկա ուղարկեցին: Երբ հետ եկա, կենդանու ուռած մարմինն արդեն կախված էր ծառից: Չգիտեմ՝ ինչն էր ավելի ցավալի՝ խոյի մա՞հը, թե՞ հորս սուտը: Թե՞ որ իմացա՝ մայրս հանցակից է եղել: Թե՞ որ հասկացա՝ այնքան էլ յուրահատուկ չեմ:

թվայնացրել է 1915.info կայքը

Մայրս կենդանու արյունից վերցրեց ու ճակատիս քսեց, ասաց, որ սուլթանի նման եմ: Ծանր ու կպչուն մսի հոտը տարածվեց տանը: Երբ ուտելիքն իմ առաջ դրեցին, հրաժարվեցի:

– Գիտե՞ս՝ այդ մատաղացուն ինձ վրա ինչքան է նստել,– հարցրեց հայրս:– Գաղափար ունե՞ս, անշնորհակալ լակոտ:

Այդ պահին ինձ ինչ եղավ, չգիտեմ, բայց հասկանում էի: Զայրույթ: Ադրենալին: Միաժամանակ անկման ու բարձրանալու զգացողություն: Ալիքի պես եկավ վրաս: Մի պահ քեզ գագաթին ես զգում, այնտեղից բոլորին կարող ես ձեռնոց նետել՝անգամ հորդ: Ամանը հրեցի. ավելի ուժեղ սպացվեց, քան ուզում էի: Ուտելիքը թափվեց սեղանին: Հայրս, որ տեսածին չէր հավատում, աչքերը կկոցեց: Մորս ու քրոջս առաջ նրա հեղինակության հե՞տ էի մրցակցում: Խենթացավ: Նրան երբեք այդքան զայրացած չէի տեսել:

– Չես ուտում, գրողին ուտես,– ասաց նա:– Ես երեխաներիս վրա ձեռք չեմ բարձրացնում, համբերությանս հետ մի՛ խաղա:

Ուսերս թոթվեցի: Դա վերջին կաթիլն էր: Հայրս տեղից վեր կացավ: Գլուխս բռնեց ու մոտեցրեց ուտելիքին: Այնքան անսպասելի էր, որ ծնոտս դիպավ ամանի հատակին, ռետինի գնդակի նման շարժվեց: Բայց քիթս դեռ յուղոտ մսաջրի մեջ էր խառնվել էր արցունքներիս ու շողիքիս: Ճպպոց լսեցի: Ինձնից էր գալիս: Ներսումս ինչ-որ բան անմիջապես հնազանդվել էր: Այդ համը երբեք չմոռացա. իմ թուլության համն էր: Հայրս, ծոծրակս ամուր բռնած, մատներով շարունակեց հրել: Գլուխս միայն կարողանում էի օդ շնչելու համար ժամանակ առ ժամանակ բարձրացնել: Շարունակեցի ծամել ու ծամել:

Հետևից մորս ձայնն էր գալիս.

թվայնացրել է 1915.info կայքը

– Հերի՛ք է, Ադե՛մ: Թո՛ղ երեխային:

Ի վերջո բաց թողեց: Երբ գլուխս բարձրացրի, տեսա, որ ամաչում է իր արարքից: Այդ խիստ կեցվածքը, այդպիսի արարքը նրա ոճը չէր: Չգիտեմ՝ այդ օրը հորս ինչ էր եղել: Չեմ կարծում, թե ինքը գիտեր:

Մայրս վազելով եկավ դեմքս մաքրելու.

– Քա՛ջս, սուլթա՛նս, լա՞վ ես:

Առանց նրան ուշադրություն դարձնելու՝ խեթ նայեցի հորս: Տխուր էր երևում: Ի՞նչ էինք անում: Ինչո՞ւ էինք ամեն ինչի վրեժը միմյանցից լուծում: Այնպես ու այդ պահին հասկացա՝ թուլությունը օգուտ չի բերում: Եթե ընկճվեմ, բոլորը վրա կհասնեն: Այդ օրվանից հետո ոչ ոքի թույլ չտվեցի ինձ ընկճել: Եվ այլևս երբեք միս չկերա:

Իսքենդեր Թոփրաք
Շրուսբերիի բանտ, 1991

թվայնացրել է 1915.info կայքը

Ադեմ

8 մարտի, 1962
Եփրատի ափին մի գյուղ

Ստամբուլում ծնված-մեծացած Ադեմը տասնութ տարեկան էր, երբ առաջին անգամ քաղաքից դուրս եկավ: Վերցրել էր մի ճամպրուկ՝ մեջը մաքուր սպիտակեղեն, կիտրոնի հոտով ախտահանիչ ու մի տուփ փախլավա, և ավտոբուս էր նստել: Քսան ժամ պետք է տևեր ճանապարհորդությունը. մի քանի վթարների պատճառով մի ամբողջ օր տևած ճանապարհորդությունից հետո հոգնած հասավ իրեն անծանոթ հարավ-արևելյան այդ քաղաք: Այնտեղից մինչև սահմանամերձ գյուղ բեռնատարի թափքում նստած ճանապարհորդեց: Եղբայրը՝ Հալիլը, հինգ ամիս է՝ այնտեղ էր ծառայում:

Հալիլը նիհարել էր. դեմքը ձմեռվա արևից բրոնզագույն էր դարձել, բայց իրականում տարբերությունը պահվածքն էր: Կարծես համազգեստ հագնելուն պես բնավորությունը փոխվել էր, հայացքը մտածկոտ էր, տխուր: Սպիտակեղենն ու ախտահանիչը գոհ ընդունեց, բայց մտածկոտ էր: Ադեմն ուշադիր նրան էր նայում, որովհետև ինքն էլ էր մոտ մի տարուց զինվորական ծառայության գնալու: Դե, համալսարանում սովորելու գումար չունեին: Զինվորական ծառայությունից հետո աշխատանք էր գտնելու ու վեց երեխա էր ունենալու՝

թվայնացրել է 1915.info կայքը

երեք աղջիկ, երեք տղա: Իր ապագան այդպես էր պատկերացնում:

Երբ հանդիպման ժամն ավարտվեց, Ադեմը եղբորը թողեց զորամասում ու էշը թամբելով՝ վերադարձավ մոտակա գյուղը: Աչքերի առաջ ցեխոտ հողն էր տարածվում:

Այստեղի բնությունը խիստ է ու համառ: Տեսարանին նայելիս հանկարծ նկատեց՝ մոռացել է փախլավայի տուփը Հալիլին փոխանցել:

«Ով գիտի,– մտածեց նա,– գուցե ուրիշի բախտն է»:

Գյուղ հասնելուն պես գտավ գյուղապետի տունը: Հաճելի պատահականություն էր, որ հայրը մի ժամանակ այդ մարդու գործընկերն է եղել: Իրար տարիներ է՝ չէին տեսել, բայց ընկերական ու անմիջական խոսեցին: Դրա համար էր Ադեմը ճամփա ընկնելուց առաջ հոր հին ծանոթին նամակ գրել ու ասել, որ գալու է: Բայց, ցավոք սրտի, պատասխան չէր ստացել:

– Նամա՞կ: Ի՞նչ նամակ,– բարձրաձայն ասաց գյուղապետը, երբ Ադեմը թակեց դուռը:– Ինձ նամակ-բան չի եկել:

Թխամաշկ գյուղապետը այնքան երկարահասակ էր, որ դռներից կռանալով էր անցնում: Շուրթերը ծածկող հաստ բեղերի ծայրերը ոլորել էր, սիրելի բեղերը յուղի պես փայլուն քսուքով էր ուղղել:

– Կներեք... Դե, ես գնամ,– ասել էր Ադեմը:

– Սպասի՛ր, էդ ո՞ւր ես գնում:

– Ե՞ս... Ես, բանը...

– Մինչև այսօր այդ դռնից ոչ մի հյուր հետ չի դարձել, իմացած լինես:

Վերջապես Ադեմը հասկացավ՝ գյուղապետն իր վրա զայրացած չէր: Նրա ձայնը ի ծնե բարձր էր ու մի քիչ խեղդված, թուրքերենը լավ չէր, դրա համար թվում էր, թե զայրացած է խոսում:

թվայնացրել է 1915.info կայքը

– Շնորհակալություն: Մի գիշեր եմ մնալու:

– Մի գիշե՞ր: Չեք կարող այդքան շուտ գնալ: Երկու օրից հարսանիք ունենք: Պետք է մնաք հարսանիքին: Թե չէ փեսայի ընտանիքը կնեղանա:

Ադեմն ուզում էր հարցնել՝ ինչպես կարող են անծանոթ մարդիկ իրենից նեղանալ: Բայց համաձայնեց: Բացի դրանից էլ շտապ Ստամբուլ վերադառնալու պատճառ չուներ: Ոչ ոք այնտեղ նրան չէր սպասում:

Չնայած հարսանիքները տխրեցնում էին Ադեմին, որովհետև միշտ մորն էին հիշեցնում: Արդեն Այշեի անունը ոչ ոք չէր հիշում իրենց տանը. նկարներն էլ չկային. կարծես երբեք չէր էլ եղել: Նրա գործած ժանյակները, թաշկինակները, վզնոցները, վերնաշապիկներից մինչև մազակալները, նրան պատկանող ամեն ինչ Հայրը (Հարբածը) այրել էր:

Ադեմն ընդունեց գյուղապետի առաջարկն ու մնաց գյուղում: Նոր կարագ, կաթի սեր ու մեղր կերավ: Գյուղացիների հետ ծանոթանալիս երկու բանի վրա զարմացավ՝ նրանց սակավախոսության ու արագ թեյ խմելու վրա: Ադեմը դեռ երրորդ կումն էլ չէր արել, երբ նրանք մի եռման թեյը վերջացնում ու նորն էին վերցնում: Ադեմին մի քանի իմիջիայլոց հարց տվեցին, հասկացան՝ նա էլ է իրենց պես լռակյաց, ընդունեցին, ինչպես այդ տարածաշրջանի նիստուկացն են ընդունում:

Հաջորդ օրը՝ կեսօրից հետո, գյուղապետը թուլացած ննջում էր, աղջիկներն ու կինը տան պղնձյա իրերն էին կլայեկում, տղաներն էլ սուզվել էին նարդու մրցումների մեջ: Ադեմը այդ առավոտյան նորից գնաց եղբորը տեսնելու: Երկրորդ այցելությունն ավելի կարճ էր, բայց ոչ պակաս զգացմունքային: Նորից մոռացել էր փախլավայի մասին: Նարդու հանդեպ անտարբեր Ադեմն ուրիշ անելիք չուներ ու որոշեց զբոսնելու գնալ:

թվայնացրել է 1915.info կայքը

Մալա Չար Բայան գյուղում զբոսնելով՝ պատմական ավերակներին, ճաքած պատերին, առանց խաղալիքների մեծացող երեխաներին նայելիս զգաց՝ այնտեղ ժամանակը չի անցնում: Տեսարանը անապատային է, տխուր, բայց զարմանալիորեն դյութիչ:

Մի փոքրիկ փողոցում շների ոհմակի հանդիպեց: Նրանցից մեկի աչքերը կարմիր էին, մեծ շուն էր, միանգամից ատամները ցույց տվեց: Մյուսներն էլ, նրան միանալով, սկսեցին գռմռալ: Ադեմը զգաց՝ մանկությունից մնացած վախերը նորից են արթնանում: Իր կյանքում ձայներ կային, որ սարսռեցնում էին. կարծես նորից մոր հետ ջրամբարի եզրին էր՝ պատրաստ ցատկելու:

Գիտեր, որ շները հետևելու են, բայց միևնույն է՝ շրջվեց ու սկսեց վազել:

Շնչակտուր վազեց փոշոտ ճանապարհներով՝ առանց իմանալու՝ ուր է գնում: Ի վերջո մտավ մի աղյուսե տան բակ, որտեղ հավեր էին ման գալիս: Տեսավ՝ այգու պատի տակ մեկը նստած է. մի քիչ էլ ուշադիր նայելով՝ տեսավ՝ մի երիտասարդ աղջիկ էր քթի տակ ծիծաղում: Վազեց նրա կողմն ու առանց թույլտվության՝ մտավ այգին, աղջկան ու նրա ինքնավստահությանն ապավինեց:

Շները մի քանի վայրկյանում հասան այնտեղ ու շրջապատեցին այգին: Նրանցից մեկն արդեն պատրաստվում էր բռնել Ադեմի փողքը, երբ երիտասարդ աղջիկը, ձեռքերը զարկելով, բղավեց:

Կենդանիները կախարդվածի պես պոչը մտցրին ոտքերի արանքն ու մեկ առ մեկ նստեցին:

Ադեմն ամաչեց, որ իրեն աղջիկ է փրկել, բայց հանգիստ շունչ քաշելով՝ նայեց փրկչին: Ձախ այտին փոսիկ ուներ, փայլող, մեծ աչքերը անտակ լճի գույն ունեին: Ագահորեն կարկանդակ ուտելով էր զբաղված: Ադեմը մտածեց՝ երբեք այդպիսի ախորժակով աղջիկ չէր տեսել:

թվայնացրել է 1915.info կայքը

– Վախենո՞ւմ ես շներից,– հարցրեց աղջիկը:

Ադեմը չպատասխանեց:

– Եթե հասկանան՝ վախենում ես, ավելի շատ կընկնեն հետևիցդ: Շները խելացի են: Քույրս նրանց շատ է սիրում:

Հետո մոտեցավ նրան կարծես գաղտնիք էր հայտնելու, ու ասաց.

– Ես չեմ սիրում:

Ակցենտով էր թուրքերեն խոսում: «Անգրագետ քուրդ աղջիկ է, էլի,– մտածեց Ադեմը:– Աստված գիտի՝ երևի ոջիլ էլ ունի»: Գեղեցիկ հյուսված, դարչնագույն մազերին, խոպոպների սաթե շողերին նայեց: Այնքան էր ուզում հյուսքերին ձեռք տալ, որ ձեռքերը հազիվ ետ պահեց:

– Գյուղում շատերը թուրքերեն չգիտեն: Դու որտեղի՞ց գիտես:

– Դպրոց եմ գնացել: Քույրս էլ: Հայրս է բոլորիս ուղարկել:

Ադեմը նայեց տանը՝ պարանին չորացող շրջազգեստներին, հագուստներին, գուլպաներին նայեց.

– Քանի՞ քույր ունես:

– Ես ութերորդ աղջիկն եմ:

– Վա՛յ, շատ է: Տղա չունե՞ք:

Աղջիկը գլուխն օրորեց ու թեման փոխեց.

– Կուտե՞ս: Ես եմ սարքել:

Ադեմը կարկանդակը վերցրեց, կծեց հաստ ու փափուկ խմորը: Ավելի համեղ էր, քան կարծում էր: Շները, պոչերն օրորելով, լեզուները կախ գցեցին: Նրանց նախատող հայացքի ներքո Ադեմն ու աղջիկը լուռ կերան՝ չիմանալով՝ ինչպես շարունակել խոսակցությունը:

– Ստամբուլից եմ եկել,– ասաց Ադեմը, երբ նորից կարողացավ խոսել:

թվայնացրել է 1915.info կայքը

– Իսկապե՞ս: Ասում են՝ շատ սիրուն է, ճի՞շտ է:

– Ճիշտ է,– հպարտ ասաց Ադեմը:

Որոշեց, որ արդեն հավանում է աղջկան: Նրա անկեղծությունն էր հավանել, նրա հանգիստ, խաղաղ խոսքը:

– Մի բան հարցնե՞մ,– հանկարծ ասաց աղջիկը:

– Իհարկե:

– Ստամբուլի ճամփաները իսկապե՞ս ոսկուց են:

«Ինչ զարմանալի աղջիկ է, մտածեց Ադեմը:– Խելառ շների ոհմակին է դեմ դուրս գալիս, ինձ ծաղրում է, բայց այդ հիմարություններին է հավատում»: Տարվել էր աղջկա հմայքով: Եվ այսպես պատասխանեց.

– Այո՛, այդպես է: Եթե ինձ պես մեկի հետ ամուսնանաս, կարող ես գալ, աչքովդ տեսնել:

Աղջիկը կարմրեց:

– Ինչո՞ւ քեզ հետ ամուսնանամ որ:

– Քեզ Ստամբուլ կտանեմ:

– Ի՞նչ գործ ունեմ այնտեղ: Էս տեղը հերիք է, մի բան էլ ավելի:

Ադեմը դեռ չէր որոշել ինչ պատասխանել, երբ ներսից կանացի ձայն կանչեց նրան: Պատից թռավ, Ադեմի առաջ կանգնեց աղջիկը: Հետո շներին նայեց, մատը թափ տալով՝ բղավեց.

– Հանգի՛ստ թողեք նրան. ձեզնից չի վախենում:

Հենց աղջիկն անհետացավ, Ադեմը սկսեց փոքր քայլերով դուրս գալ բակից: Ոհմակի առաջնորդը ուշադիր նրա շարժումներին էր հետևում: Կողքով անցնելիս այնպես գռմռաց, որ ակամայից Ադեմը ցատկեց ու կարկանդակի կեսը ձեռքից գցեց: Տխուր նայեց գետնին ընկած խմորի կտորին:

Ո՛չ, Ստամբուլի ճամփաները ոսկուց չեն: Ոչ մի տեղ ոսկուց չեն: Կյանքում չկան երազանքներ, որոնց հետևից կարելի է գնալ: Դրանք միայն հեքիաթներում են լինում:

թվայնացրել է 1915.info կայքը

Իրական աշխարհն ու իրական մարդիկ նման են գետնին ընկած շաքարաքլորի: Համը լավն է, բայց էլ ուտել չի լինի:

* * *

Հաջորդ օրը Ադեմը մասնակցեց այնպիսի հարսանիքի, որ նախկինում երբեք չէր տեսել: Տղամարդիկ կիսաշրջան էին կազմել բակում: Մի մարդ դհոլ էր զարկում, մյուսը զուռնա էր նվագում, երեխաները վազվում էին, կանայք կիսափակ դեմքերով ու հինայած ձեռքերով կտուրներից նայում էին: Ադեմը նկատեց՝ ամուրի տղամարդիկ փորձում են վերև չնայել. ինքն էլ աչքերը բակին հառեց:

Մուտքի մոտ հարսի ու փեսայի հայրերը, առանց իրար հետ խոսելու, նստած էին կողք կողքի: Բարեկամները ըստ հարգանքի աստիճանի կամ մտերմության աստիճանի երկու կողմում էին շարքով կանգնել: Հարսն ու փեսան մեջտեղում էին նստել, ուր բոլորը կարող էին նրանց ուզածի չափ ուսումնասիրել: Նոր սափրված փեսան, շուրջը նայելով, ժպտում էր:

Անհնար էր հասկանալ՝ ինչ է զգում հարսը դեմքը ծածկող փայլուն կարմիր քողի տակ: Երբեմն մի կին դանդաղ մոտենում էր նրան ու խմելու բաներ բերում: Երկուսով միասին քողը մի քիչ բարձրացնում էին, որ հարսը կարողանա առանց վրան թափելու խմել ու միաժամանակ դեմքը ոչ ոքի ցույց չտա:

Ադեմի նպատակն էր լուռ նստել մի անկյունում, բայց հենց գյուղապետը նրան տեսավ, բղավեց.

– Քաղաքի՛ տղա, արի՛ տեսնեմ:

Ադեմը լսեց նրան: Հաճույքով ու հետաքրքրասիրությամբ նստեց, մինչև որ կողքին նստած մարդը զենքը հանեց ու սկսեց օդ կրակել: Մյուսները հետևեցին նրան:

թվայնացրել է 1915.info կայքը

Փամփուշտներից մեկը մոտակա տներից մեկի տանիքին կպավ ու անցք բացեց: Ճտճտացող տախտակներից անձրևի պես փոշի թափվեց: Ադեմը խուճապահար շուրջը նայեց՝ վախենալով, որ ամեն պահ կարող են իր վրա կրակել: Հանկարծ հարթ տանիքի վրա կանգնած աղջկան տեսավ. շունչը կտրվեց: Երեկ հանդիպած աղջիկը հանգիստ ու ինքնավստահ իրեն էր նայում, կարծես վերահսկողությունից դուրս եկած այս աշխարհի միակ նորմալ մարդը ինքն էր:

Հենց զենքերը լռեցին, Ադեմը զուգարան գնալու համար վեր կացավ, բայց իրականում ուզում էր աղջկա հետ նորից խոսելու հնար գտնել: Բակի դռնից դուրս գալուն պես տեսավ նրան. նստել էր ջրհորի մոտ, հսկայական թասի մեջ թան էր պատրաստում:

«Տեսնես ե՞րբ հասցրեց կտուրից իջնել»,– մտածեց նա:

– Ուրախ եմ, որ նորից հանդիպեցինք,– ասաց նա:

Բայց նա սառը նայեց իր դեմքին.

– Դո՞ւ ով ես:

Ադեմը մի պահ ապշեց, բայց կարծեց, թե աղջիկը դաստիարակության ու նամուսի օրենքները չխախտելու համար ձևացնում է, թե իրեն նախկինում չի տեսել: Որոշեց միանալ խաղին.

– Կներես, առանց զգուշացնելու՝ սկսեցի խոսել: Իհարկե ինձ չես ճանաչում: Անունս Ադեմ է: Իսկ դո՞ւ:

– Ինչի՞ ասեմ որ,– ժպտալով ասաց աղջիկը, որի աջ այտին փոսիկ կար:

Այսօր աչքերն ուրիշ էին, հայացքը և՛ նույնն էր, և՛ տարբեր: Արհամարհական հայացքով նայեց նրան: Խոսելիս վերևի շրթունքը մի քիչ ձգվել էր՝ ի տարբերություն երեկվա: Ադեմը ձանձրացավ ու որոշեց, որ աղջիկը կատակ էր անում: Թույլտվություն խնդրեց ու արագ հեռացավ:

թվայնացրել է 1915.info կայքը

Մի թփի տակ միզելուց ու մի քիչ հանգստանալուց հետո վերադարձավ: Աղջիկը ջրհորի մոտ չէր: Հարսը արդեն, սպիտակ ձիուն նստած, իր նոր տուն էր գնում: Կենդանու բաշը ժապավեններով ու աչքուլունքներով էին զարդարել, պոչը հյուսել էին: Ձիու սանձը տվեցին մի տղա երեխայի ձեռքը, որպեսզի հարսն էլ տղա երեխա ունենա: Մի խումբ տղա ու կին, բարձր բացականչելով, ծափահարելով գնում էին ձիու հետևից, իսկ տղամարդ հյուրերը հարսանիքի արարողության համար իրենց տեղերն էին գրավում: Երիտասարդները հսկայական պղնձյա սկուտեղներ էին ներս տանում:

Ադեմը վերադառնալիս լավաշի ու մսի հոտ զգաց: Բակ մտնելուն պես նորից աղջկան տեսավ: Ձեռքին լացող երեխա՝ ինչ-որ տեղ էր վազում:

– Ինչո՞ւ զայրացար ինձ վրա քիչ առաջ,– ճամփան կտրելով՝ հարցրեց Ադեմը:

– Ի՞նչ: Ինչո՞ւ պիտի զայրանամ,– ծիծաղելով ասաց աղջիկը: Անգամ գրկի երեխան հանկարծ լռեց:

– Ինչո՞ւ այն ժամանակ անունդ չասացիր:

– Բայց դու չհարցրիր,– ժպտալով ասաց նա:– Բայց դե, որ հիմա հարցնում ես, ասեմ՝ Ջեմիլե:

Ադեմը շնորհակալական շարժումով օրորեց գլուխը:

– Լավ, իսկ քո՞ անունը,– հարցրեց աղջիկը:

– Վա՛յ, մի քիչ առաջ ասացի,– շշնջալով ասաց նա:

Աղջիկը չարաճճի ժպտաց.

– Կարող է երկվորյակ քրոջս հետ ես խոսել: Ե՞րբ ես տեսել նրան:

– Երկվորյակ քո՞ւյր ունես: Ինչո՞ւ շուտ չէիր ասում:

Ձենքերը նորից սկսեցին կրակել՝ կարծես այդ հարցին էին սպասում: Երբ երեխան սկսեց լացել, Ջեմիլեն ստիպված նրան դուրս բերեց բակից: Իսկ Ադեմը մնաց այնտեղ կանգնած՝ կարծես և՛ զարմացած էր, և՛ հանգիստ:

թվայնացրել է 1915.info կայքը

Ուրեմն երկվորյակ են: Իհարկե, հիմա ամեն ինչ պարզ է: Խիստ պահվածքը, սառը հայացքը: Այդ աղջիկը Ջեմիլեն չէր: Նա իր Ջեմիլեն չէր:

Երեկոյան, պատուհանի մոտ նստած, Ադեմը նայեց լիալուսնին: Տան լույսերը հեռվից ծխախոտի կրակի էին նման: Կարոտեց Ստամբուլը, ուրախացավ, որ շուտով վերադառնալու է: Լավ, իսկ առանց Ջեմիլեի ի՞նչ է անելու:

Գնաց գյուղապետի մոտ: Գյուղապետը, գիշերազգեստը հագին, նարգիլե էր ծխում: Իր հաճույքներով ապրող, բայց իմաստուն մարդ էր: Անկյունում դրած գազի լամպից պատերին ստվերներ էին ընկնում, աչքերի տակ սև փոսեր էին թողնում:

– Ուզում էի այս փախլավան ձեզ տալ ու ձեր հյուրասիրության համար շնորհակալություն հայտնել ու...

– Վայ, տղա՛ս, չեմ կարող ուտել: Երանի կարողանայի,– ասաց գյուղապետը:– Շաքար ունեմ:

Ադեմը նայեց տուփին. երևի ոչ մեկին բաժին չհասնի:

– Շնորհակալության կարիք չկա,– ասաց գյուղապետը:– Էլի կգաս մեզ այցելության:

Ադեմը հազաց ու խոսեց.

– Այսօր հարսանիքի ժամանակ մի աղջկա եմ տեսել:

– Աղջի՞կ:

– Այո՛, մի գեղեցիկ աղջիկ:

– Ո՞ւ:

– Մտքիցս դուրս չի գալիս:

Գյուղապետը, թեման հասկանալով, հոնքերը բարձրացրեց՝ «Աստվա՛ծ իմ: Խենթ տղան գիտի, թե սիրահարվել է»:

– Պատմի՛ր, տեսնեմ,– ասաց նա:– Ի՞նչ է անունը:

– Ջեմիլե,– ասաց Ադեմը՝ զգալով, որ դեմքը կարմրում է:

– Ջեմիլե, Ջեմիլե... Ո՛չ, չգիտեմ:

թվայնացրել է 1915.info կայքը

– Երկար՝ դարչնագույն մազերով: Մեծ, կանաչ աչքերով: Նարգիլեն ծխելով՝ գյուղապետը գլուխն օրորեց:

– Այդպիսի մարդ չկա:

– Թուրքերեն գիտի:

– Հա... Իմացա՝ ում մասին ես խոսում: Ութ քույր են: Բոլորը դպրոց են գնացել: Եթերի մասին ես խոսում:

– Եթե՞ր:

– Նա ու զույգ քույրը երկու անուն ունեն,– ասաց գյուղապետը:– Փեմբե Քադեր ու Ջեմիլե Եթեր: Լավ աղջիկներ են:

Մինչ Ադեմն իրեն կհավաքեր ու մի բան կասեր, գյուղապետն ավելացրեց.

– Դու դեռ շատ երիտասարդ ես, չես իմանա, բայց տղամարդու սերը նրա բնավորության շարունակությունն է, որդի՛ս: Եթե տղամարդը կռվարար է, նրա սերն էլ է կռիվներով լի լինում: Իր համար միշտ թշնամիներ է գտնում: Իսկ եթե հանգիստ ու քաղաքավարի է, սպեղանու, մեղրի նման է: Եթե իրեն խղճում է ու թույլ է, սերն էլ է ոչուփուչ լինում ու վերանում: Իսկ եթե ուրախ մարդ է, սերը ուրախությամբ է լցվում:

Ադեմը լսեց՝ չհասկանալով՝ ինչ է ուզում ասել:

– Մինչև սիրահարվելը պետք է քեզ մի անգամ հարցնես՝ ինձնից ինչպիսի՞ սիրահար կլինի: Ասա՛ տեսնեմ՝ ինչպիսի մարդ ես դու:

– Լավ մարդ եմ,– ասաց Ադեմը:

– Ես միայն մի լավ մարդ գիտեմ, դա էլ մեր մարգարեն է:

– Բանը, դե, հա...

Գյուղապետը ընդհատեց.

– Այդ ընտանիքում շատ աղջիկ կա: Ըստ ավանդույթի՝ նախ ամենամեծը պետք է ամուսնանա: Հերթով: Ջեմիլեն ամենափոքրն է, պետք է սպասի:

թվայնացրել է 1915.info կայքը

Ադեմը խոր հոգոց հանեց: Ուզում էր ծխել:

– Բայց այդ աղջկա ընտանիքը շատ փորձանքներով է անցել: Նրանց մայրը՝ Նազեն, ծննդաբերության ժամանակ մահացել է: Խեղճ կինը շատ էր ուզում տղա երեխա ունենալ: Բայց դե, որ ճակատիդ գրված չէ, ի՞նչ անես:

– Ջեմիլեն ծնողներ չունի՞:

– Դե, Նազեից հետո Բերզոն նորից ամուսնացավ: Բայց նոր կինը երեխա չունեցավ: Ով գիտի, երևի նրա բախտից էր: Երբ առաջին կինը ողջ էր, պետք էր երկրորդ կին բերել տուն: Ճիշտը դա էր: Հիմա ամեն ինչ տակնուվրա է եղել, այդքան մարդու պետք է կերակրի: Գուցե դրա համար ուզի աղջիկներին արագ ամուսնացնել: Գուցե պետք չի, որ Ջեմիլեն սպասի, ով գիտի:

Ադեմը ուրախացավ: Գոնե մի քիչ հույս կար:

– Մի՛ մոռացիր՝ նրանք աղքատ են,– շշնջաց գյուղապետը:– Հայրդ ու եղբայրներդ գուցե գյուղից եկած քուրդ հարս չուզեն: Պետք է մի լավ մտածես: Բայց... քո ընտանիքի անունն էլ մաքուր չի: Ինչ մայրդ ուրիշ տղամարդու հետ է փախել... Գուցե քեզ համար ամենալավը այստեղից մեկին գտնելն է՝ ինչքան հեռու, այնքան լավ:

Ադեմը կարծես ստամոքսին հարված ստացած լիներ, կոկորդում ինչ-որ բան խրվեց: Չգիտեր՝ գյուղապետը ցանկության դեպքում կարող է ցածր ձայնով խոսել: Ինչպես նաև չգիտեր, որ իր ընտանիքի ամոթալի պատմությունը գիտի: Պարզվում է՝ բառերն էլ են մարդկանց պես շրջում, հեռուներ, շատ հեռուներ են հասնում:

թվայնացրել է 1915.info կայքը

Իլիաս

28 դեկտեմբերի, 1977
Լոնդոն

Այդ չորեքշաբթի Իլիասը մեկի տուն խնջույքի էր հրավիրված: Ճաշակով զարդարված սենյակները նեղ էին, դրա համար հյուրերը առաջին հարկում էին տեղավորվել, մի մասն էլ հետևի այգի էր դուրս եկել ծխելու: Շքեղ հագուստներով մարդիկ, որակյալ գինի, համեղ նախուտեստներ, գունավոր կոնֆետի պես շուրջը տարածվող խոսակցություններ, ծիծաղ: Իլիասը միշտ էր սիրում այդպիսի երեկոները: Ինքնըստինքյան տարվեց այդ խնջույքով: Սիրում էր գինու բաժակը ձեռքին շրջել ու անծանոթների հետ շատախոսել: Խնջույքների ժամանակ խոսակցությունը կարող էր ցանկացած ուղղությամբ գնալ: Մեկ տեսնում ես՝ բավական պարզ թեմաներից ես խոսում, մեկ էլ՝ ամենախոր փիլիսոփայական խնդիրներից:

Ուրիշների հագուստներից մինչև ատոմային ռումբի թեմաներ էին քննարկում: Իլիասը միշտ խնջույքների սպասված հյուրն էր: Տարիներ շարունակ միշտ նման վայրերում էր թուլանում ու մոռանում ամենօրյա պատասխանատվությունների մասին: Տարօրինակ էր, բայց այսօր չէր կարողանում վայելել երեկոն: Մելանխոլիայի փշերն էին խրվել մտքում: Ուղեղը դարձել էր անհանգստացնող մտքերի ապաստան:

թվայնացրել է 1915.info կայքը

Մի պահ տանտիկինը՝ քաղաքավարի ու նրբակազմ մի կին, բռնեց նրա արմունկից ու սիրալիր հարցրեց.

– Իլիա՛ս, տրամադրությունդ լա՞վ է:

– Այո՛, իհարկե,– ասաց Իլիասը՝ լայն ժպիտը դեմքին, բայց ստելուց ավելի նեղսրտեց:

«Գուցե ծերանում եմ»,– մտածեց նա:

Չէր ուզում դժգոհ դեմք ընդունել, ոչ էլ ձևացնել, թե խմիչքի մեջ թույն կա, բայց ո՛չ կարողանում էր տոնի տրամադրությանը հարմարվել, ո՛չ էլ ձևացնել: Մի պահ պետքարան գնալու համար վերևի հարկ գնաց: Դուրս գալիս հասկացավ՝ չի ուզում խնջույքին նորից միանալ: Գոնե որոշ ժամանակ չէր ուզում: Ուրիշ բան չկար անելու, դրա համար սկսեց երկրորդ հարկում աննպատակ քայլել: Մի հեռուստացույց տեսավ, նստեց, միացրեց: Նախկինում մի քանի անգամ տեսել էր այդ ծրագիրը՝ «Ահա ձեր կյանքը»:

Ծրագրի հիանալի մեկնաբանը մի պատրվակով տաղավար հրավիրված հանրահայտ մեկին էր ընդունում: Հաղորդավարը, մեծ, կարմիր տետրը բացելով, հյուրի կյանքի հետ կապված հետաքրքիր մանրամասներ էր կարդում, ինքն էլ, բազկաթոռին հաճույքով, բայց անհանգիստ նստած, հին ծանոթների պաշտոնական վերաբերմունքն էր դիտում իր հանդեպ:

Հաղորդավարը, բերանը մինչև ականջները բաց, ասաց, որ այսօրվա հյուրը Անգլիայի ֆուտբոլի պատմության ամենակարևոր դեմքերից մեկն է: Նա ֆուտբոլի իսկական լեգենդ էր: Հանդիսականները այդ պատվին արժանանալու ոգևորությունից խենթի պես ծափահարեցին: Երաժշտությունն ալիքի պես բարձրացավ, տեսախցիկը կենտրոնացել էր տաղավարի մուտքին, իսկ մարդիկ ոգևորությունից տեղները չէին գտնում: Հանկարծ վարագույրները

թվայնացրել է 1915.info կայքը

բացվեցին, զարմացած ու շփոթված Բոբ Փեյսլին[1] երևաց:

– Բարի՛ երեկո, մարզի՛չ,– բարձրաձայն ասաց հաղորդավարը:

– Բարի՛ երեկո, մարզի՛չ,– կրկնեց Իլիասը:

Թակարդ ընկած հայտնի սպորտսմենը անվարժ շարժում արեց, բայց հաղորդավարը բռնեց նրա թևից ու բերեց դեպի բեմ՝ վստահեցնելով, որ վախենալու բան չկա:

Իլիասն աչքերը փակեց ու հենվեց թիկնակին. փորձեց երազել:

Մի պահ պատկերացրեց, որ տաղավարի հյուրն ինքն է:

– Այսօր մեր հաղորդման հյուրը Անգլիայի ամենահայտնի խոհարարն է,– բղավում էր հաղորդավարը՝ բարձրացրած կզակով ու փայլուն աչքերով:

Ծափերը ամպրոպի նման էին հնչում: Հայտնվում է ամաչկոտ Իլիասը:

– Իհարկե չգիտեիք, որ այս երեկո այստեղ եք լինելու: Իսկ կարո՞ղ եք ենթադրել՝ ով է դռան ետևում,– հարցնում է հաղորդավարը:

– Գաղափար չունեմ:

– Այդ դեպքում հուշենք՝ յուրահատուկ մեկն է:

Իլիասը գլուխն օրորում է. կարո՞ղ է քույրը լինել: Կամ մայրը:

– Լավ, մի հուշում էլ՝ ձեր կյանքի ամենախորհրդավոր կինը:

Հանդիսատեսի զարմացած բացականչությունների ներքո Փեմբեն է ներս մտնում: Կապույտ զգեստով, մինչև ուսերը հասնող մազերով, այտերը ոգևորությունից

[1] Անգլիացի ֆուտբոլիստ և մարզիչ, գրեթե կես դար «Լիվերպուլում» է անցկացրել, բազմակի չեմպիոն է:

թվայնացրել է 1915.info կայքը

կարմրել էին: Իլիասը շունչը պահել էր: Մանկան պես ուրախացել էր:

– Վայ, վայ, վայ,– ասում էր հաղորդավարը:– Վստահ եմ՝ մեր հեռուստադիտողները հետաքրքրված են՝ ինչպես եք դուք հանդիպել:

– Սյութլաչ էի պատրաստելու,– ասում էր Փեմբեն:– Մտա հրուշակեղենի խանութ, բայց օգնականը տարօրինակ պահեց իրեն:

– Տարօրինակ չէր, պարզապես ռասիստ էր,– ասաց Իլիասը:

Այդ պահին հաղորդավարը օդում թափահարում է հայտնի կարմիր տետրը:

– Եթե այդպես է, նրան հարցնենք:

Դուռը բացվում է ու հրուշակագործի օգնականը մտնում է տաղավար: Դեմքը՝ պզուկներով ծածկված, մաշկը՝ կարմիր:

– Ուզում եմ այս խոսակցությանը վերջ դնել,– ասաց նա:– Ինձ սխալ են հասկացել:

– Ինչպե՞ս թե:

– Ես ռասիստ չեմ, պարո՛ն,– ասաց նա:– Պարզապես լավագույնն եմ ուզում երկրիս համար: Դա մե՞ղք է: Այս տգետ միգրանտներն այստեղ են գալիս, բայց ո՛չ մեր բարքերը գիտեն, ո՛չ նիստուկացը: Լեզուն էլ չեն իմանում...

Այդ պահին ուրիշ հյուր է ներս մտնում, ու բոլորը լռում են: Ներս մտնողը հենց ինքը՝ Անաբելն է: Շքեղ հագուստով, մազերը խառը հավաքած. բավական ջանք էր թափել, որ այնպիսին երևա, ասես ջանք չի թափել:

– Լսե՛ք, պատմեմ, Իլիասը սիրուց վախենում է,– ասում է նա:– Դա է խնդիրը: Երևի մանկությունից տրավմա ունի: Կարծում եմ՝ լուրջ թերապիայի կարիք ունի:

Հետո Փեմբեի երեխաները, ամուսինը, հարևաններն ու բարեկամներն են գալիս, բեմը լցվում է: Խառնաշփոթ

թվայնացրել է 1915.info կայքը

է առաջանում: Շուրջը արագ գնում-գալիս են, բայց հանդիսատեսին ու տեսախցիկները տեսնելուն պես լռում են: Հետո Իլիասի բարեկամներն ու ընկերներն են գալիս: Մայրն ու քույրն էլ են այնտեղ: Գերեզմանից դուրս եկած հայրն էլ է այնտեղ, Իլիասի վրա դեռ զայրացած է, որ բժիշկ չի դարձել: Սրտի փոխարեն անցք է: Ասում է՝ տես՝ եթե խոհարար չդառնայիր, բժիշկ դառնայիր, ինձ կփրկեիր: Բայց Իլիասը ոչ ոքի չի լսում: Միայն Փեմբեին է նայում, միայն նրան:

* * *

Երազից արթնացավ ու աչքերը բացեց Իլիասը: Հեռուստացույցն անջատեց ու ներքև իջնելիս զգաց՝ հանգիստ է: Փեմբեի սիրալիր հայացքն էր օգնել իրեն: Հանկարծ աշխարհն այլևս այնքան անհամ չէր, ինչքան առաջ: 1978 թվականին ոգևորությամբ էր սպասում: Ոգևորությամբ ու հույսով:

Գալիք տարին լավ տարի էր լինելու: Հավատում էր:

թվայնացրել է 1915.info կայքը

Ադեմ

1 հունվարի, 1978
Լոնդոն

Առավոտյան հինգն անց քառասուն էր, բայց Ադեմ Թոփրաքը վաղուց էր արթնացել: Վերջին օրերին սկսել էր զարթուցիչը անսովոր ժամերի դնել: Ուզում էր Ռոքսանայի արթնանալուց առաջ մի քիչ իր համար ժամանակ ունենալ: Մեկ էլ սիրում էր քնելիս Ռոքսանային նայել: Դեմքը տարբեր էր այդ ժամանակ, այդքան լարված չէր, զայրացած չէր: Առանց բալագույն, փայլուն շրթներկի բերանն ավելի փոքր էր երևում, սառնությունից հետք անգամ չկար. ծեծած բրդի նման մազերը տարածվել էին բարձի վրա, և դա Ադեմին շատ էր դուր գալիս:

Ռոքսանային սիրահարված լինելը նման էր հեռվից անցնող նավի: Ադեմը ձեռքը դրել էր աչքերին, ժայռի պես անշարժ կանգնած էր ափին: Իսկ նավը աչքի առաջ անդադար շարժվում էր: Ոչ արագ, առանց շտապելու, գրեթե աննկատ դանդաղությամբ ցտեսություն էր ասում, ամեն պահ, ամեն օր:

Ադեմը գիտեր՝ Ռոքսանան լքում է իրեն: Միասնության օրերը հաշված էին. քայլ առ քայլ հեռանում էր իրենից: Ադեմը միայն կարողանում էր այդպես կանգնել, դիտել՝ ինչպես է նա հորիզոնում վերածվում փոքրիկ կետի: Հենց փողը վերջանար, ամեն ինչ կավարտվեր: Շատ լավ գիտեր, որովհետև Ռոքսանան դեռ սկզբից

թվայնացրել է 1915.info կայքը

էր բացահայտ ասել այդ մասին: Ինչպես հաճախակի էր հիշեցնում՝ կանայք իրենց պահանջներն ունեն:

Ռոքսանան միշտ զարմացնում էր, անգամ վիրավորելու չափ անկեղծ էր: Տեսել էր՝ ինչպես էր ինքը տանուլ տվել, բայց հավատում էր, որ մի տեղ պահած փող ունի՝ բանկում հաշիվ, չեկ, որ կարելի էր կանխիկացնել, կամ էլ անշարժ գույք: Անպայման մի բան պետք է ունենար: Երկար ժամանակ էր այդ երկրում: Սպասում էր, որ Ադեմի գաղտնի գանձարանը շուտով դուրս գար:

Անհիմն չէր նրա այդ զգացողությունը: Ադեմն այդպիսի տպավորություն թողնելու համար հնարավոր ամեն բան անում էր: Մինչդեռ իրականում գործարանի աշխատանքը երկու շաբաթ առաջ էր կորցրել: Աշխարհը ցնցվել էր, եղածն էլ արդեն եղել էր: Այդ պահին եկամուտի միակ աղբյուրը ընկերներից արած պարտքն էր, իսկ միակ ունեցվածքը՝ այն տունը, ուր ընտանիքն էր ապրում: Այդ տան համար վեց տարի առաջ բանկից վերցրած վարկի միայն մեկ չորրորդն էր կարողացել վճարել:

Ռոքսանան, խոր շունչ քաշելով, քնի մեջ շրջվեց: Դեմքը ճմռթվեց, ռունգերը բացվեցին:

– Ո՛չ,– անհասկանալի մռթմռթաց նա: Հետո կրկնեց:– Ո՛չ, ո՛չ:

Ադեմը լուռ սպասեց: Հետաքրքիր էր՝ երազում ինչ է տեսնում: Մարմինն այստեղ՝ կողքին էր, բայց հոգին գուցե հեռվում էր՝ ուրիշի հետ: Գուցե դա իր սիրած տղամարդն էր: Երբևէ սիրե՞լ էր: Ո՞րն էր ավելի վատ՝ այն, որ Ռոքսանան երբեք չէր սիրել ու չէր կարողացել սիրտը տղամարդու առաջ բացե՞լ, թե՞ որ իրեն երբեք ոչ ոքի չէր կարող նվիրել:

Ադեմը չէր կարող ասել: Լուռ վեր կացավ անկողնուց: Ծածկոցն ընկավ ու Ռոքսանայի մերկ ազդրն ի ցույց

թվայնացրել է 1915.info կայքը

դրեց: Ամառ-ձմեռ մերկ էր քնում. այդպես ավելի հանգիստ էր:

Ադեմը չէր կարող այդպես. ամեն անգամ սեր անելուց առաջ գիշերազգեստը հանում ու հետո անմիջապես նորից հագնում էր:

– Գուլպաներդ հանի՛ր անկողնում: Մեծ պապի նման ես,– բողոքում էր Ռոքսանան:

Ադեմը հնազանդվել էր, բայց գոհ չէր, որովհետև միշտ մրսում էր: Տունը չէր տաքանում: Խողովակները վերանորոգում էին պահանջում, տեղ-տեղ կաթում էին: Բայց չէր համարձակվում բողոքել:

Մյուս բանը, որ Ռոքսանան չէր սիրում, Ադեմի բեղն էր:

– Անգլիացի տղամարդիկ բեղ չեն պահում: Ե՞րբ ես սափրելու: Ստալինի նման ես:

Ադեմը, մթան մեջ ոտքերը քարշ տալով, գնաց խոհանոց, լույսը վառեց: Արդեն կարծում էր՝ հարմարվել է այդ իրավիճակին, բայց խոհանոցի խառնաշփոթից նորից զարմացավ:

Ռոքսանան ատում էր տնային գործը. հաճախ էր Ադեմին կշտամբում, որ իրեն չի օգնում. «Ես քեզ չեմ կարող ծառայել: Ես քո կինը չեմ»:

Սիրում էր այդպես խոսել. կոտրված ապակե կտորների պես սուր խոսքեր էր ասում: Քինոտ, կշտամբող ձայնը նրա անբաժան մասն էր: Ադեմին ավելի շատ նյարդայնացնում էին նրա ընդհանրացումները, ոչ թե դաժան խոսքերը: Զգում էր՝ Ռոքսանան խոսքերն իրեն հղելիս իր ճանաչած բոլոր տղամարդկանց էր դիմում: Դրանից էր սրտնեղում: Ադեմն իրեն շարքային սիրեկանի պես էր զգում, հավաքածուի մի մաս, Ռոքսանայի համար հատուկ տեղ չուներ: Մինչդեռ ինքն ուզում էր յուրահատուկ լինել: Իրենից առաջ մյուսների գոյությունը

թվայնացրել է 1915.info կայքը

կարևոր չէր: Իրականում կարևոր էր. եթե իմանար՝ յուրահատուկ տեղ ունի, անհանգստությունը գոնե մի քիչ կնվազեր: Աշխարհը սուտ է, ընկե՛րս: Ոչ ոք էլ չի ուզում ստեր լսել: Ամեն անգամ, երբ Ադեմը խոսում էր զգացմունքներից, ինչը երբեք ո՛չ կնոջ, ո՛չ երեխաների մոտ չէր արել, Ռոքսանայի մի ականջից մտնում, մյուսից դուրս էր գալիս:

Ադեմը, փորձելով չնայել բորբոսով ծածկված կեղտոտ ամանների ու բաժակների կույտով լի լվացարանին, բացեց պահարանը: Սուրճ ու ջազվե գտավ. սկսեց թուրքական սուրճ պատրաստել: Թույլ կրակին քլթքլթալով դանդաղ եփվող սուրճը հանգստացնում էր նրան: Խոհանոցում սուր հոտ տարածվեց: Քիչ անց, բաժակը ձեռքին, նստեց սեղանի մոտ ու մի քանի կումով խմեց սուրճը: Բայց դեռ քնատ էր: Գիշերը չէր կարողացել դուրս շպրտել իր ներսից: Մի քանի օր առաջ փոքր տղայի դպրոց էր գնացել, ստվերների արանքում թաքնվել, սպասել էր: Մեղավորի պես՝ մտածել էր նա: Երբ Յունուսն ընկերների հետ դպրոցից դուրս էր եկել, Ադեմի սիրտը լցվել էր կարոտով, բայց տղային ձայն չէր տվել: Նույն կերպ մի քանի անգամ «Ալադինի քարանձավի» մոտերքում էր պտույտ տվել՝ հույս ունենալով, որ Իսքենդերին կտեսնի: Մի անգամ փողոցում նրան նիհար, շիկահեր աղջկա հետ էր տեսել՝ ձեռք ձեռքի տված: Ինչքան էր մեծացել տղան իր բացակայության ընթացքում: Երիտասարդ էր դարձել, գեղեցկադեմ էր: Շատ էր ուզում մոտենալ, խոսել, բայց չէր արել: Մարդիկ նայում էին: Ամենաբարդը դա էր: Ընկերների ու հարևանների աչքերին նայել, դեսից-դենից խոսել, երևակայել, թե չգիտի՝ ինչի մասին են մտածում: Հանուն մի մերկապարուհու ընտանիքը լքած մարդու ամոթը:

թվայնացրել է 1915.info կայքը

Միջանցքը դանդաղ քայլերով անցնելով՝ գնաց բաղնիք, լույսը վառեց ու հայելու մեջ նայեց իրեն: Փոս ընկած աչքերին, այտերի հին պզուկների հետքերին, սպիտակած մազերին նայեց. ինչպես է, որ բեղերը դեռ սեփ-սև էին, իսկ մազերը՝ ճերմակ: Տասնհինգ տարի է՝ ամեն առավոտ մորուքը սափրում էր: Բայց այս անգամ աջ ձեռքն ուրիշ պլաններ ուներ: Հանկարծակի շարժումով վերցրեց ածելին:

* * *

Մարտ, 1962: Կեսօրի էզանը կարդացող մուեզզինի ձայնը տարածվում էր քրդական գյուղում: Ադեմը աչքերը փակ, շունչը պահած սպասում էր: Ժամանակը և՛ տանջալի դանդաղ էր, և՛ արագ էր հոսում: Ստամբուլ գնալը մի քանի օրով հետաձգվել էր, բայց էլ չէր կարող ուշանալ: Գյուղապետի հետ գնաց մզկիթ:

– Ալլա՛հ, գիտեմ՝ բավականաչափ չեմ աղոթում,– շշնջաց նա՝ գորգին նստած:– Վերջին անգամ Ռամադանին պաս չեմ պահել: Բայց ինչ կլինի, օգնի՛ր: Մի բա՛ն արա, որ Ջեմիլեի աչքերը, ինձնից բացի, ոչ ոքի չտեսնեն:

– Լա՞վ ես, տղա՛ս,– հարցրեց գյուղապետը, երբ դուրս եկան: Եղանակը, չնայած արևին, զով էր:

– Պետք է ամուսնանամ նրա հետ:

– Դեռ երիտասարդ ես, ինչո՞ւ ես շտապում:

– Ամուսնանալու տարիքս է:

– Այո՛, բայց մասնագիտություն էլ չունես: Բանակ էլ չես գնացել:

Երբ նախորդ օրը գնաց Հալիլին այցելության, նրա օգնությամբ Ստամբուլ՝ Թարըքին հեռագիր էր ուղարկել.

«Եղբայր, մի աղջկա հետ եմ ծանոթացել: Վերջակետ: Իսկը, ինչ փնտրում էի: Վերջակետ: Գիտեմ՝

թվայնացրել է 1915.info կայքը

երիտասարդ եմ: Վերջակետ: Բայց իմ բախտն է: Վերջակետ: Նա իմ ճակատագիրն է: Ամուսնանալու եմ: Օրինի՛ր ինձ: Վերջակետ: Մի քիչ էլ փող: Վերջակետ»:

Ադեմը դրա մասին ոչինչ չասաց գյուղապետին: Դրա փոխարեն ասաց.

– Ես գտել եմ իմ ուզած աղջկան: Կմեռնեմ, եթե իմը չլինի:

– Ուրեմն պետք է հոր հետ խոսես:

– Ինչպե՞ս: Իսկ եթե ինձ չուզի՞ տեսնել:

– Դու մի՛ մտածիր, ես Բերզոյի հետ կխոսեմ: Քեզ չի ուտի, մի՛ վախեցիր:

– Ինձ շատ օգնեցիր,– ասաց Ադեմը կարճ լռությունից հետո:– Ինչո՞ւ ես օգնում ինձ:

Գյուղապետը քթի տակ ծիծաղեց.

– Որովհետև ինչ-որ մեկը պետք է անի: Կարծես թե մենակ ոչինչ չես կարող գլուխ բերել:

Ջեմիլեի հորը հանդիպելն ավելի հեշտ էր, քան Ադեմը կարծում էր, բայց կարծես անհնար էր խոսքը տեղ հասցնել: Առանց այդ էլ սակավախոս Բերզոն կնոջ մահից հետո լռակյաց էր դարձել: Իրենից երկու անգամ փոքր կնոջ հետ ամուսնանալուց հետո ոչ միայն տղա, անգամ մի երեխա չունենալուց հետո ավելի էր խեղճացել: Դրա համար, երբ Ադեմը գյուղապետի հետ, փախլավայի տուփը թևի տակ, գնաց Ջեմիլեի տուն, կիտած հոնքերով, պաղած հայացքով մռայլ մարդու տեսավ:

– Էֆենդի՛, մեր այցելության նպատակը ձեր աղջկա մասին խոսելն է,– ասաց Ադեմը թեյի ու չոր թզի հյուրասիրությունից հետո:– Ձեր աղջիկը՝ Ջեմիլեն, Ջեմիլե Եթերը:

– Մի՛ տուր այդ անունը,– ասաց մարդը կոտրված թուրքերենով:

թվայնացրել է 1915.info կայքը

– Կնե...րեք,– կմկմաց Ադեմը:

Ջեմիլեի հայրը միմյանց հետևից մի շարք քրդերեն բառեր ասաց, գյուղապետն էլ կարճ թարգմանեց.

– Ասում է՝ միայն հանգուցյալ կինն էր նրան եթեր ասում:

Ադեմը շփոթվեց, քրտնեց, հուսահատվեց: Փա՛ռք Աստծո՝ գյուղապետը միջամտեց:

– Այս երիտասարդը հյուր է մեր գյուղում: Բայց ազնիվ մարդ է, լավ ընտանիքից է: Հորը ճանաչում եմ: Լուրջ նպատակներ ունի: Ուզում է աղջկադ հետ ամուսնանալ:

Բերզոն նորից սկսեց քրդերեն խոսել. նորից կիսատ թարգմանվեցին խոսքերը:

– Այդպե՞ս են աղջիկ ուզում: Հայր ու մայրդ որտե՞ղ են:

– Մայրս մահացել է,– ստեց Ադեմը:– Հայրս էլ հիվանդ է:

Գոնե այդ մասը ճիշտ էր:

– Երկու եղբայր ունեմ: Մեծը հոր պես է ինձ համար: Նրան հեռագիր եմ ուղարկել:

Որոշ ժամանակ ծանր լռությունից հետո թեյը խմեցին, կերան թուզը: Ի վերջո Բերզոն խոսեց.

– Ջեմիլեի հետ չես կարող ամուսնանալ: Նրան խոսկապ են արել:

– Ի՞նչ,– հանկարծ ասաց Ադեմը:

Ինչո՞ւ Ջեմիլեն իրեն չէր ասել: Շրջվեց, նայեց գյուղապետին, բայց գյուղապետն աչքերը փախցրեց:

– Բարեկամի հետ է նշանված: Եկող տարի ամուսնանալու են,– նորից կոտրված թուրքերենով ասաց Բերզոն:

– Բայց...

– Եթե աղջիկներիցս մեկի հետ ես ուզում ամուսնանալ, Փեմբեի՛ն առ: Նույնն են: Եթե մեկին հավանել ես, ուրեմն մյուսին էլ ես հավանել:

թվայնացրել է 1915.info կայքը

Ադեմի աչքերից երևում էր՝ առաջարկությունն ընդունելու մտադրություն չունի: Գլուխն օրորեց.

– Ո՛չ, ես Զեմիլեին եմ ուզում: Փեմբեի՛ն տվեք բարեկամին:

Չափն անցնում էր, բայց չէր կարող ոչինչ անել:

Բերզոն թեյի մնացած մասը մի կում արեց:

– Չի լինի: Թեման փակված է:

Երկուսով միասին դուրս եկան այգի: Ադեմը, ձեռքերը օդ բարձրացնելով, բղավեց գյուղապետի վրա.

– Ի՞նչ է կատարվում: Ի՞նչ ես թաքցնում ինձնից:

Գյուղապետը ծխախոտի քսակը հանեց ու սկսեց փաթաթել:

– Մի տարի առաջ Զեմիլեի քույրը՝ Քամիլեն էր ամուսնանալու: Հարսանիքից առաջ երկու ընտանիքի միջև վեճ ծագեց: Պատճառը չեմ հիշում, բայց տգեղ խնդիր էր: Զեմիլեի հայրը հրաժարվեց հարսանիքից: Փեսայի ընտանիքը դրանից այնքան վիրավորվեց, որ վրեժ լուծելու համար Զեմիլեին փախցրին:

– Ի՞նչ,– ասաց Ադեմը:

– Մի քանի օր աղջկան ինչ-որ տեղ պահեցին: Հետո Բերզոն լուր ուղարկեց, որ Քամիլեն համաձայն է ամուսնանալ: Նրանք էլ դրա դիմաց բաց թողեցին Զեմիլեին:

– Լավ... Աղջկան ձե՞ռք են տվել:

– Հըմմ, ոչ ոք չգիտի: Ասում են՝ ոչ, բայց չես կարող վստահ լինել: Աղջիկն էլ ոչինչ չի ասում: Հայրը քանի անգամ էր ծեծել, ոչ մի բառ դուրս չէր եկել բերանից: Տարել են տատմոր մոտ: Ասում է՝ Զեմիլեն կուսաթաղանթ չունի, բայց որոշ կանայք ի ծնե այդպես են լինում:

Ադեմը դողում էր:

– Ինչևէ, Քամիլեի ամուսնու ընտանիքը համաձայնեց նրան իրենց տարեց բարեկամներից մեկի հետ

թվայնացրել է 1915.info կայքը

ամուսնացնել: Այդ մարդու կինը մահացել էր: Աղջկա նամուսը այդպես փրկեցին:

Ադեմը զայրացավ:

– Սկզբից էլ գիտեի՞ր:

– Գյուղապետը իր գյուղի մասին ամեն ինչ գիտի:

– Ինչո՞ւ չասացիր ինձ:

– Ասացի՝ գուցե բախտդ բերի, աղջկան տան: Եթե չտային էլ, կիմանայիր:

Ադեմը զայրույթից կաս-կարմիր էր, չէր լսում.

– Կարծում էի՝ ընկերս ես: Կարծում էի՝ իմաստուն ես:

– Ոչ ոք իմաստուն չէ,– ասաց գյուղապետը:– Բոլորս կեսմիամիտ ենք, կեսխելացի: Առանց հիմարության՝ խելացի չես լինի:

Բայց Ադեմը վաղուց դուրս էր թռել, արագ քայլում էր՝ կարծես մեկը հետևից էր ընկել: Մինչդեռ շները հետևից չէին վազում: Զեմիլեին գտավ հարևանի տանը. տարբեր տարիքի մի խումբ կանայք գորգ էին գործում: Երբ պատուհանից Ադեմին տեսան, կանայք քրքջացին ու դեմքները փակեցին: Զեմիլեն անմիջապես ոտքի կանգնեց ու դուրս վազեց.

– Ի՞նչ ես անում այստեղ: Ինձ խայտառակ ես անում:

– Խայտառակ, հա՞,– մռթմռթաց Ադեմը:– Իսկը այդ բառն էի ուզում:

– Ի՞նչ ես ուզում:

– Դո՛ւ ասա: Գուցե ուզում ես ինչ-որ բա՞ն պատմել:

Զեմիլեն խիստ հայացքով նայեց: Ինչ-որ մեկը նոր էր հաց թխել, կրակը մարել էր, բայց մոխիրների արանքում դեռ փայտը դանդաղ այրվում էր: Շրջապատի խոտի կույտերը կանաչ գույներով ավետում էին գարնան գալուստը:

– Հայրդ ասաց՝ կույս չես,– ասաց Ադեմը:

Չէր ուզում այդպես ուղիղ հարցնել, բայց բերանից թռցրեց:

թվայնացրել է 1915.info կայքը

– Այդպե՞ս է ասել քեզ,– ասաց Զեմիլեն՝ աչքերը փախցնելով:

Ադեմը կարծում էր՝ կհակառակվի, կասի՝ ինչպես ես համարձակվում, կըմբոստանա, հոնգուր-հոնգուր կարտասվի: Բայց հիմա, գլուխը բարձր, աչքերի մեջ նայող Զեմիլեն տարօրինակորեն հանգիստ էր:

– Լավ, իսկ դո՞ւ,– հարցրեց Զեմիլեն:

– Ես ի՞նչ:

– Դո՞ւ ինչ ասացիր:

Ադեմն այդպիսի հարցի չէր սպասում:

– Ես ուզում եմ ճշմարտությունն իմանալ:

– Ճշմարտությունն այն է, ինչ ուզում ես տեսնել:

Ադեմը սառած կանգնել էր՝ դառնահամը բերանում:

– Հերի՛ք է խաղ խաղաս հետս:

– Ես չեմ խաղում,– ասաց Զեմիլեն, և գեղեցիկ դիմագծերը հոգնած արտահայտություն ստացան:

– Ասում ես՝ սիրում ես ինձ: Այդ դեպքում ինձ կընդունե՞ս այնպիսին, ինչպիսին կամ:

Ադեմը ոչինչ չասաց: Ուզում էր ասել՝ այո՛, բայց բառը շուրթերին չհասավ: Նայեց սարերին: Հեռուներ: Զեմիլեն սպասեց, սպասեց: Հետո ցածրաձայն ասաց.

– Ուրեմն բախտ չի վիճակվի Ստամբուլի ճամփաները տեսնել:

* * *

Լոգարանից դուրս գալիս տեսավ՝ Ռոքսանան նստած էր անկողնում, ամսագրերն էր թերթում: Մի հայացքով հասկացավ՝ անտրամադիր էր, լավ չէր քնել:

– Սուրճ կա՞,– հարցրեց նա՝ առանց գլուխը բարձրացնելու:

– Իհարկե:

թվայնացրել է 1915.info կայքը

Ադեմի ձայնը տարբերվում էր նրա հետ խոսելիս, կարծես իր ձայնի արձագանքը լիներ:

– Նորից վիզս բռնվել է:

– Կմերսեմ:

Ուսերի վրա ու ծոծրակին շրջաններ գծելով՝ շոյեց սիրելիի վիզը: Կարծես մարմինը փրփուրի լոգանքի մեջ թուլանար: Ռոքսանան տնքաց: Աստիճանաբար ավելի շատ սեղմելով՝ մերսեց Ադեմը:

Կնոջ վզին փաթաթված մատները դիպան միմյանց: Մտածում էր՝ մի օր կարող է սպանել նրան: Վախեցավ: Հետ քաշվեց:

– Գնամ սուրճ պատրաստեմ:

– Մի րոպե,– ուշադիր նայեց դեմքին:– Ի՞նչ ես արել դեմքդ:

– Հա, բեղերս,– ասաց Ադեմը:– Հավանեցի՞ր:

Ռոքսանան գլուխն օրորեց: Բայց տարօրինակ տխրություն զգաց: «Երանի ինձ այդքան շատ չսիրեր»,– մտածում էր նա: Ծռված ժպիտով ժպտաց: Ներսն էլ մեղմվեց, հալվեց-գնաց:

* * *

Այդ օրը Մալա Չար Բայան գյուղում օրվա մնացած մասը քայլելով ու ինքն իրեն ուտելով անցկացրեց Ադեմը: Ջեմիլեի տան շուրջն էր պտտվում: Այդտեղից կարողանում էր այգին տեսնել, ուր առաջին անգամ հանդիպել էին: Այդ մոռացված գյուղ գալուց ի վեր ուղիղ հինգ օր էր անցել: Հինգ օրում այնպես էր փոխվել, որ այլևս նախկին վիճակին չէր վերադառնա:

Մի կողմն ուզում էր գնալ Բերզոյի մոտ, ասել, որ իր համար միևնույն է, ամբողջ սրտով էր ուզում այդպես անել: Խենթի պես սիրահարվել էր Ջեմիլեին: Նա էլ իրեն էր սիրում, որքանով որ տեսնում էր: Կարևորը դա էր:

թվայնացրել է 1915.info կայքը

Մնացածը՝ մնացյալ: Հետո էլ ինքը հո կույս չէր, որ Ջեմի-լեից հաշիվ պահանջեր: Ամուսնանալու էր նրա հետ ու խոստացածի պես՝ նրան տանելու էր այդտեղից:

Բայց մյուս կողմն էլ կասկածում էր ու անհանգիստ էր: Ջեմիլեն ո՛չ իրեն էր պաշտպանում, ո՛չ էլ նամուսի վրա երդում տալիս: Իսկ եթե իսկապես կույս չի՞: Այդ-պիսի կասկածով ինչպե՞ս էր ապրելու ամբողջ կյանքը: Եղբայրը՝ Թարըքը, ի՞նչ կասեր, եթե իր համար իրենց մոր պես «անմաքուր» կին ընտրեր:

Թարը՛քը: Ի՞նչ կասեր: Վաղուց պետք է ստացած լիներ հեռագիրը: Եղբոր հետ առերեսվելու մտքից անգամ Ադեմի սիրտը սեղմվում էր: Անհնար էր գնալ Ստամբուլ ու ասել, որ ամեն ինչ սխալ է հասկացել: Չգիտեր ինչ անել և լուծում չէր կարողանում գտնել: Երբ ժամեր անց մտավ գյուղապետի տուն, նա նարգիլե էր ծխում ու իրեն սպասում:

– Համեցի՛ր, քաղաքի՛ տղա: Սրտիդ ուզածով գյուղի աղջիկ չգտար, հա՞:

– Միտքս չեմ փոխել,– վստահ ասաց Ադեմը:– Դեռ ուզում եմ ամուսնանալ:

– Իսկապե՞ս,– ասաց գյուղապետը՝ հավանություն տալով ու փայլող աչքերով:

– Մյուսին եմ առնելու:

– Ի՞նչ:

– Մյուս աղջկան: Նրան եմ առնելու,– ասաց նա:

Զգում էր՝ հոգու խորքում շատ վատ պետք է զգար իրեն: Բայց այդպես չէր: Իրականում ոչինչ չէր զգում: Վարարող գետում օրորվող փայտի կտորը ցավ զգո՞ւմ է: Կամ քամուց քշված փետուրն անհանգստանո՞ւմ է: Ադեմն այդ օրն այդպես էր զգում: Եվ դրա հաջորդող օրերը, տարիները, ամբողջ կյանքը նույնն էր զգալու:

թվայնացրել է 1915.info կայքը

Իլիաս

2 հոկտեմբերի
Լոնդոն

Վաղ կեսօրին «Բյուրեղյա մկրատը» ողողված էր նոր տարվա զարդարանքներով ծածկված ապակու ոսկեգույն լույսով:

Նախորդ օրվա տոնակատարություններից դեռ ուշքի չեկած Ռիտան սուրճ էր խմում, երբ դուռը բացվեց: Մի մարդ մտավ ներս: Ուրախ, շողացող դեմք ուներ, ջերմ ժպիտ, լուռ ինքնավստահություն էր շողարձակում: Ռիտան, մի հոնքը բարձրացնելով, ոտքից գլուխ զննեց անծանոթին: Լավ հագնված ու կարգին մարդու նման էր, բայց այդ օրերում երբեք չես իմանա:

– Բարև՛ Ձեզ, ինչ-որ բա՞ն եք ուզում,– հարցրեց Ռիտան:

– Այո՛, ուզում եմ մազերս կտրել, եթե հնարավոր է:

– Ներեցեք, վարսավիրանոցը դեռ փակ է: Դեռ տասը րոպե ունենք: Բացի դրանից...

– Ես դրսում կսպասեմ: Խնդիր չէ:

– Բացի դրանից՝ սա միայն կանանց վարսավիրանոց է: Եթե ուզում եք, փողոցի վերջում տղամարդկանց վարսավիրանոց կա:

թվայնացրել է 1915.info կայքը

– Ահ, մի անգամ գնացել եմ,– ասաց Իլիասը:– Այդ մարդն ավելի լավ է՝ իրեն վարսավիրի փոխարեն վարսավեր անվանի:

– Հա, հա: Վստահ եմ այս կողմերում ձեզ հարմար մի բան կգտնեք,– ծիծաղելով ասաց Ռիտան:

– Վերջերս,– ասաց Իլիասը՝ ձայնն իջեցնելով,– կանանց մի քանի վարսավիրանոցներ սկսել են տղամարդկանց էլ ծառայություն մատուցել. չգիտեմ՝ դուք ի՞նչ եք մտածում:

– Հըմմ, կարող է պատահել,– անտարբեր ասաց Ռիտան:

– Կարծես թե վարսավիրական գործի ապագան այդ ուղղությամբ է զարգանում:

Հետևի սենյակում դարակները մաքրող Փեմբեն ականջ դրեց: Փորձում էր հասկանալ՝ ում հետ է խոսում Ռիտան: Ձայնը ծանոթ էր: Հուզված, ոտնաթաթերին կանգնած՝ մոտեցավ: Երբ տեսավ՝ ինչպես է Իլիասը իր տնօրենուհու հետ խոսում, չիմացավ ինչ անել. հենվեց պատին ու քարացավ:

Իլիասը Փեմբեին չէր տեսել, շարունակում էր խոսել:

– Քանի տարի է՝ մազերս երկար են: Ասում եմ՝ արդեն փոփոխության ժամանակն է:

– Աստված վկա, լավ միտք է: Միշտ հաճախորդներիս ասում եմ՝ երկար մազը կնոջ համար է: Ձիու պոչով տղա ենք տեսնում, չենք հասկանում՝ աղջիկ է, թե տղա,– ասաց Ռիտան: Հետո չդիմացավ ու հարցրեց.– Ճա՞տ շտապ է պետք կտրել:

– Այն էլ ինչպես: Դե, ես էլ ռեստորանում շեֆ եմ: Ամեն օր մեկը անպայման բողոքում է, թե ապուրից մազ է դուրս եկել:

Ռիտան ծիծաղեց:

թվայնացրել է 1915.info կայքը

– Ուզում եմ օգնել, բայց մի քիչ հետո հաճախորդ է գալու:

Հենց այդ պահին նրանց լսող Փեմբեն միջամտեց.

– Բանը... եթե ուզեք, ես կկտրեմ:

Ռիտան ու Իլիասը միաժամանակ շրջվեցին ու նայեցին: Իսկ նա, փորձելով հնարավորինս հանգիստ լինել, շարունակեց.

– Ես կարող եմ կտրել:

Վարսավիրական կրթություն չէր ստացել, բայց մասնագիտության հիմունքները հասկանալու չափ երկար ժամանակ աշխատել էր Ռիտայի մոտ: Քանի տարի է՝ երեխաների, հատկապես տղաների մազերը կտրելով վարպետացել էր:

– Լավ, ուրեմն խնդիրը լուծվեց,– ասաց Ռիտան:

Նորից մի բան էր ասելու, երբ դուռը մինչև վերջ բացվեց ու սպասված հաճախորդը ներս մտավ:

– Ահ, բարո՛վ եկաք,– ասաց Ռիտան՝ քայլելով դեպի կինը:

Այդ ընթացքում Փեմբեն Իլիասին ուղեկցեց դեպի սրահի ամենածայրի աթոռը: Երբ հասան այնտեղ, լարված հարցրեց.

– Ի՞նչ գործ ունես այստեղ:

– Կներես, ուզում էի քեզ տեսնել:

– Բայց էդպես չի լինի,– շշնջաց Փեմբեն:– Իսկ եթե մեկը տեսնի՞:

Երբ Իլիասը նկատեց՝ Փեմբեի ձեռքերը դողում են, հասկացավ՝ ինչքան է նրան անհանգստացրել: Ուզում էր փաթաթվել ու ներողություն խնդրել: Զղջացել էր արածի համար: Բայց միևնույն է՝ նրա կողքին լինելու ուրախությունն առավել էր, քան մեղքի զգացումը:

Փեմբեն արդեն հաճախորդի վզին գոգնոց էր կապել, մկրատները, սանրերը դասավորել էր սեղանիկին:

թվայնացրել է 1915.info կայքը

Հետո սփրեյով սկսեց թրջել մազերը: Իլիասը օվալաձև հայելուց հետևում էր նրա շարժումներին: Երբ Փեմբեի ձեռքը վզին դիպավ, ինքնըստինքյան փակեց աչքերը: Երբ բացեց, տեսավ՝ Փեմբեն էլ իրեն է նայում հայելու մեջ: Հայացքները մեղմ էին, բայց խոսքերը խիստ հնչեցին:

– Մազերդ կկտրեմ, բայց էլ չգաս:

– Լավ, մի՛ անհանգստացիր: Էլ չեմ գա:

Հանգստացած Փեմբեն առաջին անգամ ժպտաց:

– Լավ, ինչպե՞ս կտրեմ:

– Տես՝ չգիտեմ:

Մի քանի տարի շարունակ մազերը միշտ նույնն էին, ու հիմա էր նկատում, որ պատրաստ չէ փոխել ոճը: Բայց միևնույն է՝ կեսկատակ, կեսլուրջ պատասխանեց.

– Միայն թե սիրուն լինի:

Փեմբեի աչքերը շողացին: Իլիասը առանց այդ էլ գեղեցկադեմ էր, չգիտե՞ր:

Միաժամանակ սրահի մյուս կողմում ծիծաղ լսվեց: Ռիտան ու հաճախորդը իրենց աշխարհում էին խորասուզվել. հաճույքով բամբասում էին:

– Չէի ուզում քեզ անհանգստացնել, տխրեցնել,– ասաց Իլիասը:– Բայց քեզ պետք է մի բան հարցնեմ: Եթե ասես՝ այո՛, մինչև կյանքի վերջ հեռու կմնամ, խոստանում եմ: Եթե ո՛չ, կուզեմ իմանալ:

Փեմբեն անհանգիստ սպասում էր.

– Ո՞րն է հարցը:

– Ամուսնուդ մասին ոչինչ չասացիր: Շատ բաների մասին խոսեցիր, բայց ոչ նրա մասին: Ինձ հետաքրքիր էր՝ սիրո՞ւմ ես նրան:

Փեմբեն գունատվեց, սիրտը կարծես ծանրացավ: Հավերժական սպասումից հետո մռթմռթաց.

– Ո՛չ, երբեք չենք սիրել իրար:

թվայնացրել է 1915.info կայքը

Այդ ժամանակ Իլիասը ձախ ձեռքը՝ այն ձեռքը, որը պատի հետևում էր, որը ոչ ոք չէր կարող տեսնել, բարձրացրեց ու բռնեց Փեմբեի թևը: Հեռավոր կամ պատահական հպումից զատ՝ առաջին անգամ էին դիպչում իրար: Փոթորկոտ ծովում գտած ցանկացած բանից բռնվող փրկվողի պես բռնեց Իլիասը նրա թևը: Փեմբեի սիրտը սկսեց արագ բաբախել: Նա էլ էր նույն բաները զգում՝ ուշացում, անհնարինություն:

Այդպես մնաց, մինչև Փեմբեն ձեռքը քաշեց.

– Ինչպե՞ս կտրեմ:

– Նրա մազերի պես,– ասաց Իլիասը:

Սեղանին դրած ամսագիրը ցույց տվեց: Բաց էջին ձյունաճերմակ ատամներով, սպորտային տեսքով հոլիվուդյան աստղ էր:

Փեմբեն ինքնըստինքյան ծիծաղեց:

– Իրոք: Միշտ ուզել եմ դերասան դառնալ:

Չնայած Փեմբեն գիտեր՝ Իլիասին ընդհանրապես հետաքրքիր չէ իր սանրվածքը. միայն նրան մոտ լինելու համար էր փորձում ժամանակ շահել, բայց միևնույն է՝ ամսագիրը վերցրեց, որ ուսումնասիրի նկարը: Հետո կես ժամ անձայն աշխատեց՝ հոնքերը կիտած, կենտրոնացած: Էլ չխոսեցին: Ամեն անգամ, երբ Ռիտան ուզում էր տեսնել՝ ինչպես են գործերը, Փեմբեին մազերը կտրելիս, տարօրինակ հաճախորդին էլ ամսագրերին նայելիս տեսավ:

Երբ սանրվածքը ավարտվեց, Իլիասը գոգնոցը հանեց, իսկ Փեմբեն նրա ծոծրակին հայելի մոտեցրեց: Իլիասը չէր սիրում կարճ մազեր, բայց փորձեց ժպտալ ու ցույց չտալ, որ չէր հավանում: Պատրաստվում էր վեր կենալ աթոռից, երբ հանկարծ հարցրեց.

– Սիրո՞ւմ ես կինոթատրոն գնալ:

Փեմբեն հիշեց կինոթատրոնը, ուր հոր հետ էին գնում: Աչքերը լցվեցին: Քանի անգամ էր երեխաներից խնդրել,

թվայնացրել է 1915.info կայքը

որ իրեն կինոթատրոն տանեն, քանի անգամ էին ականջի հետև գցել: Գիտեր՝ Անգլիայում լեզվի խնդիր ուներ: Դժվարանալու էր ֆիլմի երկխոսություններին հետևել:

– Սիրում եմ:

– Սփրեյի տակ բան եմ թողել: Նայի՛ր, լա՞վ:

Հետո, ձայնը բարձրացնելով, այնպես ասաց, որ Ռիտան լսի.

– Շնորհակալ եմ կտրվածքի համար: Շա՛տ ապրեք:

Սրահի մյուս կողմից Ռիտան ժպտաց. գոհ էր, որ մի հաճախորդ էլ գոհ մնաց: Երբ Իլիասը վճարում էր Ռիտային, Փեմբեն անհանգիստ մոտեցավ սեղանին: Սփրեյի տակ մի տոմս ու մի կարճ նոթ էր դրած. այդ ուրբաթ՝ ժամը երկուսին, հարավային ափին մի կինոթատրոնում էին հանդիպելու:

Հին ֆիլմ էր: Սև-սպիտակ ու համր, առանց բառերի:

թվայնացրել է 1915.info կայքը

Թարրեք

5 հունվարի, 1978
Լոնդոն

Թարրեք Թոփրաքը մթերային խանութում էր աշխատում: Շաբաթը վեց օր, օրը տասներկու ժամ քաղցրավենիք, ընդեղեն, անձնական հիգիենայի պարագաներ, գազավորված ըմպելիքներ, սառեցրած սնունդ, ծխախոտ ու մանր-մունր բաներ էր վաճառում: Հազար ու մի տեսակի թերթ ու ամսագրով էր լցված սեղանիկը: Բայց ամեն անգամ, երբ նայում էր դրանց էջերին, ջրծաղիկից վնասված դեմքը գունատվում էր: Գարշելի ամսագրեր վաճառելը նրան դուր չէր գալիս: Այս երկրում շատ էին բաց, մերկությունը շատ էր: Չէր հասկանում՝ ինչպես են որոշ տղամարդիկ դրանք կարդալիս հաճույք ստանում, չէր էլ հասկանում՝ ինչպես են որոշ կանայք որպես աշխատանք նկարահանվում դրանց համար: Դրանք ընտանիք՝ հայր, ամուսին, եղբայր, չունեի՞ն:

– Այդ աղջիկները երևի մանկատանն են մեծացել,– ասել էր նա մի անգամ, երբ սուրճի համար գնացել էր այդ ամսագրերից մեկը թերթող հարևանի մոտ:

– Ինչի՞ց ենթադրեցիր,– ծիծաղելով ասաց նա:

– Դե, եթե ընտանիք ունենային, այդ խայտառակությունը թույլ չէին տա,– ասել էր Թարրեքը:

թվայնացրել է 1915.info կայքը

– Ով գիտի, ամեն տեսակի ընտանիք կա: Որոշ տղամարդիկ իրենք են նկարներն ամուսիններին ուղարկում, բա:

Հենց հարևանը գնաց, անպարկեշտ ամսագրերը վերցրեց ու մի անկյունում թաքցրեց Թարըքը՝ թիթեղյա ամանների ու կաթի փոշիների տակի դարակում: Եթե մեկն ուզեր, այնտեղից էլ կգտներ: Գոնե անմեղ հաճախորդների աչքին չէր ընկնի: Այդ օրից ամսագրերի տեղը չփոխեց: Իրականում խանութում տարիներ շարունակ ոչինչ չէր փոխվել: Մի շարք նոր ապրանքներ, մի քանի նոր դարակներ էին ավելացրել, այդքան բան:

Թարքըը զգաց, որ քաղցած է, նայեց ժամացույցին: Տասնմեկն անց տասնհինգ րոպե էր: Կինը՝ Մերալը, ամեն օր մեկ անց կես թասով իր համար ուտելիք էր բերում՝ կոտլետ, մածուն, սմբուկի աղցան, սիսեռով փլավ... Հետևի սենյակում թեյնիկը պատրաստ էր, արդեն եռում էր: Առավոտից մինչև ուշ երեկո օրվա մեջ մոտ երեսուն բաժակ թեյ էր խմում Թարըքը: Թեյի մեջ շաքար չէր գցում, մի կտոր շաքարը հերիք էր: Մենյուն ինչ էլ որ լիներ, կեսօրից հետո՝ ժամը երեքին, սիրում էր չարազ անել՝ չիփս, դարչինով քրեքեր, ինչ որ սիրտը այդ օրը ուզեր:

Մինչ նա ուտում էր, կինը հատակն էր մաքրում, դարակների կամ ապակու փոշին էր մաքրում: «Քարավան Մինի Մարկետ» գրության նեոնե տառերն էր փայլեցնում: Քանի տարի է՝ կամ մոռանում էր «կ» տառը սարքել տալ կամ ականջի հետև էր գցում Թարըքը: Երբ ուտելիքը վերջանում էր, Մերալը կեղտոտ ամանները վերցնում ու տուն էր գնում: Կարող էր ամուսնուն խանութում օգնել, բայց Թարըքը կարիքը չէր զգում: Եթե ֆինանսական աջակցության կարիք չկար, կնոջ համար դրսում աշխատանք գտնելը վայել չէր: Գուցե մի օր

թվայնացրել է 1915.info կայքը

օգնություն խնդրեր Մերալից, բայց Ադեմի պես թույլ չէր տա, որ կինը ուրիշների մոտ աշխատի:

Ի տարբերություն շրջապատի շատ խանութպան-ների՝ Թարըքը կեսօրին մզկիթ չէր գնում: Չնայած երկար մորուքին ու թզբեհին՝ Թարըքը հավատացյալ չէր: Եվ սազում էր դեմքին, և՛ ջրծաղկի հետքերը թաքցնելու համար էր ուզում մորուք պահել: Իսկ թզբեհը սովորության համաձայն էր ձեռքին պահում: Տանը մեծ հավաքածու ուներ՝ սաթե, փիրուզե, մարջանից, նեֆրիտից:

Թարըքը երեք եղբայրների ավագն էր: Արտասահմանում աշխատելու համար Ստամբուլից առաջինը նա էր հեռացել: Սկզբում Գերմանիայում մի գյուղաքաղաքի սարքավորումների մասեր արտադրող գործարանում բանվոր էր դարձել: Բայց գործը բարդ էր, գերմանացի-ները սառն էին, լեզուն էլ անհնար էր իր համար: Եթե գերմանացիները քեզ չեն հավանում, ջանք չեն թափում թաքցնելու: Քեզ հրավիրում են իրենց երկիր, որ աշխատես, ոչ թե ծանոթանաս ու շփվես: Բայց հենց քո կարիքն էլ չեն զգում, սպասում են, որ գնալու ես: Նրանց նիստուկացին հարմարվելը նման է ոզնուն գրկելուն: Ներսում գուցե սիրալիր էին, մեղմ, բայց սուր ասեղներն անցնելն ու այնտեղ հասնելն անհնար էր: Մյուս եկվորները՝ միգրանտները, կարող էին օգնել ոտքի կանգնելու, իրենց մի փոքր ավելի պաշտպանված զգալու, բայց Թարըքը երբեք հմուտ չէր եղել ընկերություն անելու հարցում:

Մի անգամ նույն գործարանում աշխատող մի թունիսցու հետ էր ընկերացել: Մարդը նրան Համբուրգի կարմիր լապտերների թաղամասի Գրոսսե Ֆրայհայթ փողոց էր տարել: Նեոնե ցուցանակներ, բարձր երաժշտություն միացրած ակումբներ, տարբեր լեզուներով խոսող մարդկանց ծիծաղ: Ցուցափեղկերում իրենց մարմինները ցուցադրող կանանց տեսնելուն

թվայնացրել է 1915.info կայքը

պես Թարըքը զարմացել էր: Մարմնավաճառների հպարտ հայացքները, ինքնավստահությունը նրան անհանգստացնում էր: Հին թուրքական ֆիլմերի պես ճակատագրի ապտակ ստացած, մազերը շաղ տված մարմնավաճառ կանանց նման չէին «գերմանացի անբարոյականները»:

Վառվող-հանգչող կարմիր լամպերով զարդարված մուտքը ցույց տալով՝ թունիսցին իրենց ընդհանուր լեզվով՝ սահմանափակ գերմաներենով ասել էր.

– Դե, մտնենք:

– Ներսում ի՞նչ կա:

Մարդը ծաղրանքով ժպտացել էր:

– Կանայք կան, ա՛յ տղա: Շիկահեր կանայք:

Թարըքը, հոնքերը կիտելով, աչքերը հառել էր կեղտոտ կոշիկներին: Պատասխան ուներ, բայց ձայնն այնքան ցածր էր, որ չէր լսվում.

– Վայ, դե ի՞նչ ես կարծում, պոռնո ֆիլմերի կանայք ինչո՞ւ են միշտ գերմաներեն խոսում: Նրանցից լավը չկա, հա՛: Տե՛ս, հետո շնորհակալություն կասես ինձ:

– Չեմ ուզում:

Ընկերը չարաճճի հայացքով նայել էր.

– Դու գիտես: Չես կարող, ուրեմն չես կարող:

Թարըքը մտածեց՝ մի լավ դաս տամ սրան, ցեխոտ կոշիկներով մի աքացի տամ, բայց այդ ցանկությունը որքան արագ եկավ, նույնքան արագ էլ գնաց: Նայեց՝ ինչպես դռնից ներս մտավ: Կիսամութ փողոցի մեջտեղում մենակ էր մնացել, լսում էր՝ ինչպես է մի կին փակ պատուհանի հետևում երգում: Կամ դա իր լսած ամենատխուր երգն էր, կամ նրան էր այդ պահին այդպես թվացել:

Այդ շաբաթ թունիսցին բոլորին պատմել էր՝ ինչպես էր Թարըքը հասարակաց տան առաջ վախեցել:

թվայնացրել է 1915.info կայքը

Գործարանի մյուս աշխատողները ծիծաղում, խոսում էին: Ոմանք անգամ ասել էին՝ այդպես էլ պետք է լիներ:

Թարըքը մտածում էր այդ տարի ամուսնանալ, բայց այդ իրադարձությունից պլաններն արագացան: Երբ Անատոլիայից առած հարսի հետ (հայրական կողմից զարմուհի էր) վերադարձավ Գերմանիա, առաջին ամսվա մեջ ուզում էր, որ Մերալն իրեն ամեն օր այցելի գործարան: Այդպես բոլորը կտեսնեին, որ կին ունի ու կլռեին:

Բայց այդքան տարի անց դեռ մտածում էր. «Տեսնես, եթե այդ օրը թունիսցու հետ հասարակաց տուն մտնեի, ի՞նչ կլիներ»:

* * *

Ժամը տասներկուսն անց քսանհինգին դուռը բացվեց, ու քամուց կարմրած այտերով Մերալը ներս մտավ: Այս օրվա ճաշացանկը՝ ոսպով ապուր, բիբարով տոլմա ու լոքմա քաղցրավենիք էր բերել: Մի քանի րոպե ամուսնուն նայեց Մերալը. այնքան ախորժակով էր ուտում: Հետո հանգիստ ասաց.

– Փեմբեն էր եկել առավոտյան:

– Ի՞նչ էր ուզում:

– Ադեմը դեռ տուն չի վերադարձել: Բան չասաց, բայց երևի փողի կարիք ունեն:

– Փող, փող, փող...– մռթմռթաց Թարըքը:

Գերմանիայում անցկացրած տարիները դժվար էին, բայց կարողացել էր քարից հաց քամել.3 ամեն ամիս եղբայրներին բավականաչափ գումար էր ուղարկել: Գիշերները անկողնում մեկնվելիս սիրում էր պատկերացնել՝ իր ուղարկած գումարով եղբայրները ինչ են անում՝ ֆուտբոլային խաղերի են գնում, աղջիկների հետ են զբոսնում, հագուստ ու դասագիրք են գնում:

թվայնացրել է 1915.info կայքը

Մի անգամ եղբորը աղքատությունից փրկելու համար գանգստեր դարձած մեկի մասին ֆիլմ էր դիտել: Ֆիլմի վերջում ոստիկանության տեսուչ, փոքր եղբայրը, չնայած եղբոր հանդեպ հարգանքին, սիրուն, հիացմունքին, չնայած որ կյանքում ամեն ինչի համար նրան էր պարտական, ձերբակալում է հերոսին: Նա եղբոր կրթության համար կյանքն է զոհաբերում, իսկ սա բանտարկում է նրան: Բայց Թոփրաք ընտանիքի պատմության մեջ ո՛չ այդպիսի մեղավորներ կային, ո՛չ էլ հերոսներ: Ուզում էր հավատալ, որ գումարի օգնությամբ կարող է փոխել եղբայրների ճակատագիրը, բայց Թարըքը հասկանում էր՝ ինքը սահմանափակ մարդ է: Մի ժամանակ Ադեմն ու Հալիլն էլ են անցել իր ճանապարհով՝ եկվոր բանվոր են դարձել, մեկը՝ Ավստրալիայում, մյուսը՝ Անգլիայում: Մի քանի տարի անց Թարըքը թողնում է Գերմանիայի գործն ու գնում Անգլիա, ուր, ինչպես լսել էր, եղանակը վատ է, իսկ մարդիկ քաղաքավարի են:

Ապուրի մեջ հաց թաթախելով՝ հարցրեց.

– Փեմբեն գիտի՞՝ Ադեմը որտեղ է:

– Գաղափար չունի: Բայց...– ասաց Մերալն ու լռեց:

– Բայց ի՞նչ:

– Գիտի, որ ուրիշ կնոջ հետ է ապրում:

– Ու ի՞նչ: Եթե տղամարդուն տանը չի կարողանում պահել...– ասաց Թարըքը՝ կիսատ թողնելով նախադասությունը:

– Նրա մեղքը չէ,– հակաճառեց Մերալը, երբ բյուրեղապակյա բաժակի մեջ եռացող ջուր էր լցնում:

– Եթե կինը չգիտի կանացիությունն ինչ է, տղամարդն ուրիշ տեղ է նայում:

Թարըքը կարծում էր՝ Ադեմը չպետք է ամուսնանար Փեմբեի հետ: Ավելի հարմար աղջիկներ կային, բայց անհասկանալի կերպով այդ կնոջն էր սիրահարվել:

թվայնացրել է 1915.info կայքը

Ինչո՞ւ նա, ու ինչո՞ւ այդքան հանկարծակի. Թարըքը չէր հասկացել: Իհարկե տեսնում էր Փեմբեի գեղեցկությունը: Բայց դա նրա աչքերում Փեմբեին ավելի անվստահելի էր դարձնում: Տղամարդիկ, գրավիչ կանանց սիրահարվելով, սխալ էին անում: Գրավիչ կին նշանակում էր անկայուն կին: Մինչև ամուսնանալը նման կանանց հետ զվարճանալը վնաս չէ, բայց կինը, բացի արտաքինից, պետք է ուրիշ հատկություններ էլ ունենա: Այդ ամուսնությանն ամենասկիզբից դեմ էր Թարըքը: Բայց Ադեմն այդ քրդական գյուղում մենակ էր, երբ Փեմբեին հորից ուզել էր: Մենակ ու անփորձ:

Երբ մայրը փախավ ուրիշ տղամարդու մոտ, Թարըքը տասնվեց, Հալիլը տասներեք, իսկ Ադեմը տասնմեկ տարեկան էր: Ստամբուլի միլիոնավոր տներում մայրերը փորձում են իրենց ընտանիքները միասին պահել ու երեխաներին երջանկացնել, բայց իրենցը, միայն իրենցը թողել-գնացել էր: Այդ օրվանից ընտանիքը չէր ուզում հիշել նրա անունը՝ բացի Ադեմից: Նա միշտ զգայուն էր եղել, միշտ զգացմունքային ամպի մեջ էր ապրել: Բոլորը կարծում էին՝ նա ամենափոքրն է, դրա համար է ազդվել, բայց Թարըքը հավատում էր՝ որպես ավագ երեխա՝ ամենաշատը ինքը վճարեց:

Ոչ բոլորն էին հասկանում, բայց որոշ տղամարդկանց միակ հարստությունն այս աշխարհում իրենց պատիվն էր: Հարուստները կարող էին իրենց համբավը կորցնել, նորից ձեռք բերել, որովհետև նրանց համար հեղինակությունը փողով գնելը նոր մեքենա պատվիրելու կամ կալվածքներում շինարարություն անելու պես սովորական իրադարձություն էր: Մինչդեռ մյուսների համար իրավիճակը տարբեր էր: Մարդկանց հնարավորությունները որքան սահմանափակ էին, պատվի գինը նույնքան բարձր էր:

թվայնացրել է 1915.info կայքը

Եթե մարդու բախտը նամուսի հարցում չէր բերում, ուրեմն նա մեռած մարդ էր համարվում: Մեռածից էլ վատ: Փողոցում չես կարող քայլել՝ աչքերդ մայթերի քարերին հառած: Սրճարան ես գնում՝ նարդի չես կարողանում խաղալ, գարեջրատանը ֆուտբոլ չես կարող դիտել:

Բամբասանքներից մեջքդ կորանում է, այտոսկրերդ, աչքերդ փոս են ընկնում, օրեցօր փոքրանում ես: Խոսելիս ոչ ոք չի լսում. խոսքդ էլ կշիռ չի ունենում: Տվածդ ծխախոտին ոչ ոք ձեռք չի տալիս, խմածդ սուրճը կուլ չի գնում: Վախենալով, որ դժբախտություն ես բերում՝ ո՛չ հարսանիքների են հրավիրում, ո՛չ թլփատման, ո՛չ նշանդրեքի: Քո անկյունում, քո ամոթով վատնում ես կյանքիդ մնացած մասը՝ սմքած մրգի պես ճմռթվելով, չորանալով: Թարըքը դրա մասին իր տեսածով գիտեր, որովհետև հոր հետ այդպես էր պատահել: Հայրը ցիրոզից չէր մահացել: Գուցե ալկոհոլը արագացրել էր նրա վախճանը, բայց հիմնական պատճառը դա չէր: Նրա անվանը գամված հետքն էր սպանել նրան:

Անգլիացիները չէին հասկանում այդ հինավուրց օրենքները: Եթե նրանց կանանց ուրիշ տղամարդ համբուրի, օտարների հետ պարի, ժպտալով նրանց նայի, ծափ կտան: Թարըքը մտածում էր՝ գուցե ալկոհոլից է: Խմիչքը սահմանները վերագծում էր, օրենքները պղտորում:

Թարըքը ոչ մի կաթիլ չէր խմում: Ադեմն էլ: Մարդիկ կարծում էին՝ հավատացյալ են, դրա համար են ալկոհոլից հեռու մնում, բայց իրական պատճառն այն էր, որ իրենց հոր որդիներն էին:

Երբ Մերալը գնաց, Թարըքը մտածելու ժամանակ ունեցավ: Այդքան ժամանակ Ադեմի գլխին եկածն ավելի շատ որպես աղետ էր տեսնում, քան

թվայնացրել է 1915.info կայքը

անբարոյականություն: Խաղամոլությունը հիվանդություն էր, այն էլ վատ հիվանդություն: Բայց ամենավատն այն էր, որ ամբողջ գումարը այդ ամսագրերում նկարահանվող կանանց պես պարուհու վրա էր ծախսում: Ադեմի հետ պետք էր նստել, մի երկու խոսք խոսել, իհարկե, եթե կարողանա գտնել:

Եթե տղամարդը տունն այդքան անուշադրության է մատնում, ընտանիքը կարող է շեղվել ճանապարհից: Թարըքը որոշել էր ոչ մի պահ աչքը Փեմբեից ու երեխաներից չկտրել, որպեսզի նման բան չլինի: Պարտավոր էր: Ինչ էլ լիներ, նույն ազգանունն էին կրում: Եթե նրանցից մեկը խնդրի առաջ կանգնի, որպես Թոփրաք ընտանիքի ամենամեծ՝ ինքն էր պատասխանատվություն կրելու: Նրանց արժանապատվությունը Թարըքի արժանապատվությունն էր նշանակում: Դրանից հետո պետք է ավելի ուշադիր լիներ:

թվայնացրել է 1915.info կայքը

Իլիաս

6 հունվարի
Լոնդոն

Հին էր «Անքա» կինոթատրոնը, 1910 թվականին էր բացվել: Ոսկեշերտ սյուներ, ճեմասրահ տանող մարմարե աստիճաններ, հսկայական ջահեր: Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում գերմանացիների կողմից ռմբակոծվելուց, բախտի քմահաճույքին թողնվելուց առաջ լավ օրեր էր տեսել: Վերջերս մի գործարարի խոշոր ներդրման շնորհիվ վերանորոգվել, վերաբացվել էր: Բայց կենտրոնից հեռու էր, ու հին ֆիլմեր էին ցույց տալիս, դրա համար սրահը գրեթե միշտ դատարկ էր:

Իսկ այսօր միայն չորս հոգի կար՝ երիտասարդ զույգ, որ ավելի շատ համբուրվելով էր հետաքրքրված, քան ֆիլմով, ու ֆիլմից էլ տարեց մի մարդ: Չորրորդը Իլիասն էր՝ մեջտեղում մի տեղ. լարված ու անհանգիստ, մենակ նստած էր: Ֆիլմը մի քանի րոպե է, ինչ սկսվել էր, բայց նա դեռ ժամանակ առ ժամանակ շրջվում, նայում էր մուտքին:

Փեմբեն չէր եկել: Իլիասը բացման տեսարանը սրտնեղելով դիտեց: Էկրանին գրված էր. «Մի քիչ ուրախ, մի քիչ տխուր ֆիլմ»: Երբ Չարլի Չապլինին տեսավ, ակամայից դեմքի մկանները թուլացան: Միշտ սիրել էր Չապլինին՝ նրա տխուր հումորը, անկեղծ մարդկայնությունը,

թվայնացրել է 1915.info կայքը

տխուր, մոխրագույն աչքերը: Լարվածությունն անցավ, կենտրոնացավ «Փոքրիկի» պատմության վրա:

Որոշ ժամանակ անց թիկունքում թեթևակի շարժում զգաց, բայց վախենում էր շրջվել, տեսնել՝ ով է: Մթան մեջ մեկը ստվերի պես լուռ մոտեցավ ու նստեց կողքին: Սիրտը արագ զարկում էր. հազիվ իրեն զսպեց, որ ուրախությունից չճչա: Փեմբեն էր: Առանց մի բառ խոսելու, առանց շշնջալու՝ կենտրոնացան ֆիլմի վրա:

Մեծ բացված աչքերով ու ամեն տեսարանի հետ խորացող հիացմունքով «Փոքրիկին» նայեց Փեմբեն: Հավանեց այն տեսարանը, ուր Չապլինը աղբի մեջ գտած երեխային իր տղայի պես սիրում ու մեծացնում է: Ժպտաց:

Ծիծաղեց, երբ տղան քարով կոտրեց ապակիները, որ ապակի դնող Չապլինը մի քիչ փող վաստակի: Երբ սոցիալական աշխատողները Չապլինին ու տղային իրարից բաժանեցին, աչքերը լցվեցին: Ուրախացավ, երբ վերջապես զույգը նորից միացավ:

Իլիասը հիացմունքով ու նախանձով դիտեց՝ ինչպես էր Փեմբեն կլանված դիտում: Երբեք չէր մտածի, որ մի օր Չարլի Չապլինին կխանդի:

Իլիասը մի պահ հետևեց՝ ինչպես է Փեմբեն խաղում մազափնջի հետ: Զգաց մազերի բույրը՝ հասմիկի ու թերթավոր վարդի խառնուրդը: Ուզում էր մեկնվել ու ձեռքը բռնել, բայց չարեց: Նման էր դեռահասի, որի սիրտը առաջին հանդիպման ժամանակ քիչ էր մնում տեղից դուրս թռչի: Առանց միմյանց դիպչելու, առանց մի բառ ասելու, մթությունից ձուլված երկու արձանի պես անշարժ նստեցին, մինչև որ ֆիլմն ավարտվեց:

Երբ լույսերը վառվեցին, մի քանի րոպե պահանջվեց իրական կյանքին հարմարվելուն: Իլիասը գրպանից

թվայնացրել է 1915.info կայքը

հանեց նոթատետրն ու արագ գրեց քաղաքի մյուս կողմում գտնվող կինոթատրոնի անունը:

– Եկող շաբաթ՝ նույն օրը՝ նույն ժամին, կգա՞ս:

– Չգիտեմ,– ասաց Փեմբեն դողացող ձայնով:

Իլիասը դեռ չէր հասցրել մի բան ասել, երբ Փեմբեն ոտքի կանգնեց ու շարժվեց դեպի դուռը: Իրենց միջև եղած ու չեղած ամեն ինչից փախչում էր: Հաջորդ հանդիպման վայրի անունը ափի մեջ էր. թուղթն այնքան ամուր էր բռնել, կարծես կախարդական աշխարհի բանալի լիներ:

Ահա այդպես սկսվեց ամեն ինչ Փեմբեի ու Իլիասի միջև: Հիմնականում ուրբաթ օրերը նույն ժամին, երբեմն էլ տարբեր օրերի էին հանդիպում: Ամենաշատը «Անքա» կինոթատրոն էին գնում, բայց հիմնականում հեռավոր ու կիսադատարկ, տարբեր կինոթատրոններ էլ էին գնում:

Ֆիլմերը հիմնականում նույնն էին. ուղիղ վեց անգամ «Փոքրիկը» դիտեցին: Նաև «Յոթ եղբորը՝ յոթ հարս», «Արքան ու ես», «Բաղդադի գողը», «Քինգ քոնգ» ու «Ցտեսություն, Հռո՛մ» ֆիլմերն էին դիտել: «Բեն Հուրն» էին տեսել, բայց Իլիասը Փեմբեից ավելի էր հավանել այն: Բացի դրանից՝ «Ժաննա Դ'Արկի տառապանքները», «Վեսթսայդյան պատմությունը», «Փարիզի Աստվածամոր տաճարը» (Փեմբեի ամենասիրելի ֆիլմը) ու «Մեծն Գեթսբին» (Իլիասի ամենասիրածը) էին դիտել:

Փեմբեն ապշել էր Գրետա Գարբոյի մարմնավորած Մատա Հարիից: Կախարդվել էր շրջապատի բոլոր տղամարդկանց սիրտն ու կանանց ատելությունը շահած, և՛ զգայուն, և՛ կոշտ, և՛ անզգացմունքային, կրակի կտորից: Ինչ տարբեր էր Մատա Հարին իր իմացած բոլոր կանանցից ու իրենից:

Այդ բոլոր ֆիլմերը ոչ թե որպես անցյալ դարի պատմություններ, այլ որպես այսօր ապրվող ճակատագրեր

թվայնացրել է 1915.info կայքը

էին դիտում: Ամեն անգամ մի ֆիլմ դիտելիս միշտ նույն բանն էր լինում: Փեմբեն աչքը չէր կտրում էկրանից, Իլիասն էլ՝ Փեմբեից: Հաճույքով էր նայում Փեմբեի դեմքի արտահայտության փոփոխություններին: Նրա մեջ ինչ-որ տեղ բոլորից, անգամ գուցե իրենից թաքցրած տարբեր կերպարներ կային: Երբեմն Փեմբեն էլ նրան էր նույն կերպ նայում, փորձում էր նրա հոգու խորքերը բացահայտել: Ուզում էր իմանալ՝ Փեմբեն իր մեջ ինչ է տեսնում և արդյոք իրեն սիրո արժանի է համարում, բայց երբեք ոչինչ չէր հարցնում:

Ժամանակի ընթացքում սիրած կնոջ մասին ուրիշ բաներ էր պարզելու: Դրանք գլուխկոտրուկի մասեր էին, որ Փեմբեի մահից հետո էին վերականգնվելու: Օրինակ՝ իմացավ, որ իր անվանը հակառակ՝ ամենասիրած գույնը փիրուզագույնն էր[1]: Որ շատ է սիրում քրդերեն երգել, ու ձայնը բավական գեղեցիկ է: Գումարած կրոնական պատճառներով խոզի միս չուտելուն՝ ծովախեցգետին, խխունջ, կաղամար, հավամրգի չէր ուտում, բայց ամբողջ օրը կիտրոնի կտորներ կրծելուց չէր ձանձրանա: Բացի դրանից՝ պարզեց՝ ինչքան երիտասարդ է: Ոճի պատճառով ավելի մեծ էր երևում, բայց Իլիասից ուղիղ տասնվեց տարով փոքր էր Փեմբեն:

Իլիասը կամաց-կամաց սկսում էր հասկանալ: Մինչ այդ օրը վարած կենսակերպին լրիվ օտար այդ կինը անհասկանալի, գրեթե խորհրդավոր կերպով ձգում էր իրեն մանկության հուշի պես, որը սկսել էր վերհիշել: Ինչ-որ անտրամաբանական պատճառ կար, բայց սրտով զգում էր, ուզում էր սիրել, պահել ու պաշտպանել ամբողջ աշխարհից:

---

[1] Փեմբե թուրքերեն նշանակում է վարդագույն:

թվայնացրել է 1915.info կայքը

Նախկինում նման զգացմունքներ միայն երեք կնոջ հանդեպ էր ունեցել՝ քրոջ, մոր ու նախկին կնոջ: Բայց Փեմբեի հանդեպ զգացած սերը նախկիններից տարբերվում էր: Փեմբեն նախշազարդ էր ու սարթ, բայց նա իրական աշխարհի դուռն էր: Արգելված սիրուց ու նրան ամեն վայրկյան կորցնելու վտանգից ավելի էր կապվում այդ կնոջը: Կյանքի կտրտված մասերը ու կորած ժամանակները փոխհատուցող սեր էր դա: Իլիասի կյանքի պակասող օղակն էր Փեմբեն՝ նրան անցյալին, իր պապերին ու արևելյան կողմին կապող օղակ:

Ամեն անգամ, մինչև կինոթատրոնի լույսերի կմիացնեին, հեռանում էին միմյանցից, իրենց ճանապարհով գնում: Այդպես ոչ ոք նրանց միասին չէր կարող տեսնել. կամ իրենք էին այդպես կարծում:

Փեմբեն միշտ առաջինն էր դուրս գալիս: Իսկ Իլիասը մի քիչ մնում էր կինոթատրոնում, մտածում էր ֆիլմի ու Փեմբեի աչքերի լույսի մասին, մյուս կողմից էլ պատերի պաստառներին, հատակին ընկած աղբին, բուֆետի չարազեղենին էր նայում, փորձում էր հարմարվել Փեմբեից հետո մնացած դատարկությանը:

Կեսգիշերին քնից վեր թռա: Միջանցքից ընկնող հիվանդագին դեղին լույսից բացի՝ խուցը մութ էր: Ասում էին՝ այդ լամպերը պետք է որ հանգստացնող ազդեցություն ունենային: Երևի հոգեբանը սև հումոր ունի: Այդ գույնը միայն սրտխառնոց է առաջացնում մեջս:

Անկողինը պինդ էր, նույնն էր, ինչ բեկոնի վրա քնես: Բայց այդ ժամին արթնանալու պատճառը դա չէր: Ինչ-որ

թվայնացրել է 1915.info կայքը

բան այն չէր, զգում էի: Շունչս պահած՝ լսում եմ մոտ խուցերից եկող խռմփոցները, փռոցները, փնքոցները, աջ ու ձախ շրջվելը, ապամների կռճտոցը: Այդ գիշեր, ի տարբերություն սովորական ձայների, փարօրինակ կերպով դպարկ էր թվում այդ տեղը: Կարծես դպարկություն կար: Կամ էլ ես եմ խենթանում:

Մայրս ասում էր՝ կյանքում նշաններ կան: Ասփված մութ անտառում խրատներ է շշնջում: Եթե ականջ չդնենք, Նա մեզ կխրատի: Պետք է ուշադիր լինենք, սխալ մարդկանց հետ չընկերանանք, սխալ դռներ չբացենք, սխալ ճանապարհներով չգնանք: Բայց այդ պահին դա այն չէր, ինչ զգում է. ներքին կանխազգացում էլ չէր: Կարծես եղածվերջացածը նոր էր գիտակցում:

Արմունկներիս վրա ուղղվեցի ու ականջ դրեցի: Նայում էի՝ գուցե մորս ուրվականն էր եկել: Բայց այսօր այստեղ չէր: Մինչդեռ սիրտս բաբախում էր, շփոթված էի: Նոր եկած ձյան պես սպիտակ լույս պետք է լիներ անկյունում: Բայց չկար: Ո՛չ էլ մեքաքսե վարագույրների խշշոց: Ո՛չ էլ հաստիկի ու վարդի հոտ: Ո՛չ էլ սպիտակաձավարի հալվայի հոտ: Երբեք չեմ մոռանա այն պահը, երբ առաջին անգամ տեսա ուրվականը: Վախից, ցավից խելքս թռցրել էի:

Նախկինում ավելի հաճախ էր գալիս: Ասփիճանաբար նվազեց: Վերջերս արդեն չէի տեսնում: Գուցե էլ երբեք չգա: Հիմար միտք է, բայց կարծում էի՝ այցելության ընթացքում կարող էր ինձ ներել: Հույս ունեի:

Սկզբում խենթանում էի: Չէի կարողանում քնել. մտածում էի՝ գալու է ու գիշերն ինձ խեղդի: Որոշ ժամանակ անցավ, մինչև հասկացա՝ ուրվականներն այդպիսի բաներ չեն անում: Մենք կարծում ենք՝ նրանք վրեժ են ուզում լուծել: Մինչդեռ նրանք միայն ուզում են հասկանալ: Դրա համար զարմացած աչքերը մեզ են հառում ու

թվայնացրել է 1915.info կայքը

պարզաբանման սպասում: Նայում են մեր սրտին: Չեն քննադատում:

Հարց չեն տալիս: Մայրս չի հարցնում: Համր ֆիլմի նման է, բայց գունավոր: Այս գիշեր չեկավ: Իմ անհանգստությունը նրա հետ չէր կապված: Ուրեմն ինչի՞ց էր: Շունչս պահում եմ: Լսում եմ, այս անգամ ավելի ուշադիր: Հանկարծ հասկանում եմ: Փախածի հետ մի բան այն չէ: Չի խռմփացնում: Ո՛չ շնչում է, ո՛չ քնի մեջ կռճտացնում ափամները: Վեր եմ կենում ու մոտենում նրան: Դեմքը պատին է դարձրել:

– Փախա՛ծ, այ տղա:

Պատասխան չկա: Չի շարժվում:

– Պատրի՛կ, լա՞վ ես:

Չգիտես ինչու, նրան իսկական անունով եմ ձայն տալիս, մինչդեռ տարիներ է՝ անունով չէի դիմել: Անունը դուրս է թռչում բերանից: Ծածկոցը վերցնում եմ վրայից:

Վատ հոտ է բարձրանում: Տարօրինակ կերպով Փախածը փոքր է երևում աչքիս, կարծես գիշերը քնելիս ցամաքել էր: Ուսերից բռնում ու թափ եմ տալիս: Չի ազդում: Ավելի ուժեղ եմ թափ տալիս: Ոտքերը կոտրված տիկնիկի պես ցնցվում են: Թևերը ծանրանում են, բայց իմ ճանաչած ամենանիհար մարդն էր:

– Փախա՛ծ, հերիք է հոգուս հետ խաղաս: Հերիք է, էլի:

Զարկերակը սղուգելու համար բռնում եմ ձեռքը: Զարկերակ չկա: Վիզը պնդացած է ու սառը: Թևս դնում եմ գլխի տակ ու արհեստական շնչառություն եմ տալիս: Կնոջն ու մի քանի այլ կանանց համբուրած շուրթերը: Անդադար հայհոյող, բայց երբեմն աղոթող շուրթերը: Իր կործանման պատճառ դարձած, բայց միաժամանակ բանաստեղծություն կարդացող բերանը: Ոչ մի շարժում: Սկսում եմ ծիծաղել: Որովհետև ծիծաղելի է: Ազրայիլը կամ կուրացել է, կամ խլացել:

թվայնացրել է 1915.info կայքը

Պեկք է անմիջապես պաշտոնից հեռացնել: Ասված չի՞ տեսնում, որ օգնականը պարտականությունները կարգին չի կատարում: Ինչո՞ւ են միշտ սխալ մարդիկ մահանում: Փախածին բռնցքամարտ էի սովորեցնում: Անպաղանդ ուսանող էր, բան չէր հասկանում: Բայց մի կերպ գլուխ էինք բերում: Միշտ նույն տեղին էր հարվածում՝ որովայնիս:

Մարդու մարմնում ավելի վտանգավոր կետեր կային՝ գլուխը, վիզը, ադամախնձորը, անգամ քթոսկրը: Բայց եթե այդ տեղերին խփեր, գլուխը ցավի տակ կդներ: Մինչդեռ որովայնիս հարվածելու դեպքում կասկածի տեղիք չէի տա: Բոլորն էլ գիտեն՝ հանուն հաճույքի եմ բռնցքամարտով զբաղվում:

Եթե ճիշտ անկյան տակ ու ճիշտ ուժով հարվածեն, որովայնը կարող է մահացու կետ լինել: Միանգամից կարող է ներքին արյունահոսություն սկսվել: Եթե չմիջամտեն, մի քանի ժամում կարող ես ոտքերդ ձգել: Վստահ եմ՝ ինձ համար ոչ մի միջամտություն էլ չեն անի: Փախածն իհարկե այդ ամենը չգիտեր: Ամեն ինչ պատահարի նման էր լինելու:

Անտարբեր տեսուչը կգա ու նոթատետրում ինչ-որ բաներ կխզբզի: Գուցե քարտուղարը զեկույցը մաքրագրի, ու տպեն մամուլում: Դեղին էջերից մեկը կհետաքրքրվի. «Հանուն պատվի սպանություն գործած մարդասպանը մահացել է բանտում»: Սպա Էնդրյուն հոդվածը կկտրի ու կկցի իմ գործին: Մի քանի օր ինձնից կխոսեն: Ոչ ոք չի տխրի, սուգ չի պահի իմ հետևից: Հետո թեման կփակվի: Քաղցած մարդու լպստած ափսեի պես՝ մաս-մաքուր: Փախածը օձիքը կազատի, մահվան համար պատասխանատվություն չի կրի: Ես էլ կգնամ: Վերջապես՝ ազատությո՛ւն:

Հուդինին միայն հիշեցման համար էր: Սպա Էնդրյուն ասում է՝ այդպիսի բան չկա, մարդիկ են արել, ինձ պես

թվայնացրել է 1915.info կայքը

սպահանների պնդումների համաձայն՝ հարվածներից չի մահացել հայրենի աճպարարը: Բայց ինձ հետաքրքիր չէ՝ ինչից է մահացել:

Ամեն անգամ, երբ տեսնում եմ պասպարտը, հիշում եմ՝ բռունցքների հարվածից մահանալը հնարավոր բան է: Իհարկե, Հուդինին ուրիշ բաներ էլ է հիշեցնում: Տխուր բաներ: Հարրի Հուդինիի պատճառով էր Թարըք հորեղբայրս մորս ու նրա սիրեկանին տեսել:

Փախածին մի կողմ եմ հրում ու նստում կողքին: Տակս ինչ-որ բան է ճտճտում: Նայում եմ, որ հասկանամ՝ ինչ է եղել: Շունչս կտրվում է:

– Լավ, էլի, այ տղա, լավ, էլի:

Ներարկիչ էր: Ե՞րբ էր արել: Մեծ դեղաքանա՞կ էր ներարկել: Ինչպե՞ս ոչինչ չեմ նկատել: Թե՞ սպասել է, մինչև քնեմ: Ես շատ խոր եմ քնում: Ձմեռային քուն մտած գեր արջի պես: Զզվում եմ ինձնից:

Սպուգում եմ անկողինը: Սավանը մեզից, թքից ու փսխուքից թրջվել է. մարմինը փորձել է հերոինը դուրս թափել: Տեսնում եմ Փախածի ձախ բռունցքը. այնքան ամուր էր սեղմել ձեռքը, որ մատները ճգվել, սպիտակել էին: Մի կերպ բացում եմ մատները: Մի կտոր թուղթ կար: Միջանցքից եկող լույսի տակ կարդալու համար մոտենում եմ ճաղերին:

«Եղբայրս, Իսքենդե՛ր,
Եթե կարդում ես այս նոթը, լավ է, ուրեմն հաջողեցի:
Կարծում էիր՝ ինձնից շուտ ես այն աշխարհ գնալու, չէ՞: Գիտես՝ ես չե՞մ հասկանում: Իհարկե հասկացել եմ, էլի ես էի քեզ օգնելու:

Հա՛, իրոք կօգնեի: Բայց էլ չդիմացա: Մի՛ ջղայնացիր, է՛: Կսպասեմ քեզ: Վերևում ինչ-որ կա, դրախտ է,

թվայնացրել է 1915.info կայքը

դժոխք է, այնտեղ կսպասեմ: Ես առջևից կգնամ: Էլ ֆոկուսներ չկան: Հուդինի-բան չկա:

Դու լավ ընկեր էիր, եղբայր, միշտ, իրոք: Եթե վերևում մորդ տեսնեմ, նրան էլ կասեմ: Գուցե ներել է քեզ, հաստատ ներել է, ընկե՛ր:

Քո եղբայր՝

Փախած»:

Արցունքներն այդերովս ցած են գլորվում: Ապրակում եմ ինձ: Ոչինչ չի փոխվում: Մազերս էի քաշում: Սկզբում մի ձեռքով, հետո երկուսով: Ավելի արագ: Ավելի ուժեղ: Մաշկս չի դիմանում, մազերս փունջ-փունջ պոկվում են: Տնքում եմ: Ոտքի եմ կանգնում: Գլուխս պտտվում է: Մի ժամանակ ինձ լավ ծանոթ ադրենալինն եմ զգում. զայրույթ: Մինչդեռ կարծում էի՝ անցյալում է մնացել: Երկու տարի առաջ մի պարկի մեջ էի դրել, բերանը պինդ կապել ու լքված շան պես լքել էի իմ զայրույթը: Ինձ խոստացել էի կյանքիս մնացած մասը որպես ավելի մաքուր մարդ ապրել, գոնե փորձել: Բայց շատ հեռուն չգնացի: Նորից գտավ ինձ: Ընկավ հետևիցս ու հոտոտելով գտավ հետքերս: Ահա իմ դիմաց է հին ընկերս՝ Պարոն Զայրույթը: Ինչպես միշտ՝ հավատարիմ:

Հուդինիի պասպառը ներքև եմ ձգում ու պատռում: Սավանս, ծածկոցս ու բարձս նետում եմ: Ոտքերով, բռունցքներով պատերին եմ հարվածում, պատերին մարտահրավեր եմ նետում: Լույսեր: Ոտնաձայներ: Փայլեր: Մեկը խուց է մտնում:

– Հեյ, ի՞նչ է կատարվում:

Ուրիշ մարդիկ են ներս լցվում: Պառկեցնում են գետնին, թափվում վրաս, գլուխս սեղմում: Լույսերը վառվում են: Շատ լամպեր կան: Աչքերս ցավում են: Գլխիս կանգնածը պետք է որ սպա Էնդրյուն լինի: Ի՞նչ գործ ունի այստեղ:

թվայնացրել է 1915.info կայքը

Գիշերվա հերթապահ՞ին է: Գրողի փարածն իր գործն ինչ էլ շատ է սիրում:

Ամեն ինչ փորփրում էին, Փախածի զարկերակն էին սպուգում: Գպան ներարկիչը: Տեսան նոթը: Մեկը բարձր ձայնով սկսեց կարդալ: Գրողը գանի: Հանկարծ դուրս եմ պրծնում նրանց ձեռքերից: Անակնկալի են գալիս: Ոտքի եմ կանգնում: Մինչ նրանք կհասկանային՝ ինչ է կատարվում, ես վերցնում եմ նոթը:

– Այ քեզ բան...– բղավում է երիտասարդ հսկիչը, կարծես խարդախության էի դիմել, ինքն էլ վիրավորվել էր:

Սպա Էնդրյուն մի քայլ առաջ եկավ.

– Ինձ տուր:

– Իմն է: Ինձ է գրել:

– Ոչինչ քոնը չէ, հիմա՛ր: Հենց հիմա ինձ տուր:

Իրար ենք նայում: Ի վերջո գալիս է այդ պահը: Ցույց է տալու՝ ինձ ինչքան է ատում: Ես էլ ցույց եմ տալիս, որ դա փոխադարձ է: Էլ դերասանության կարիք չկա: Էլ ձև չենք անի, թե ավելի լավն ենք, քանի իրականում կանք: Այն ենք, ինչ կանք: Նոթը բերանս եմ գցում:

– Մի՛ արա,– ասում է սպա Էնդրյուն:– Ինձ նայիր, հիմարի մեկը, երևի շատ ես ֆիլմ դիտել:

Սկսում եմ ծամել: Կամաց-կամաց: Կարիք չկա շտապելու: Բոլորն ինձ են նայում:

– Ալեքս, այնպես ես զղջալու: Հեպոյքդ փրկելու համար քեզ վերջին շանսն եմ տալիս: Վերջացրո՛ւ:

Ծամի՛ր, ծամի՛ր, ծամի՛ր: Չգիտեի, որ թղթից կիրի համ է գալիս: Տեսնես Փախածը ինձ տեսնո՞ւմ է: Տեսնես, երբ մահանում ենք, հոգին լքո՞ւմ է մեր մարմինը, թռչող փուչիկի պես միանգամից բարձրանո՞ւմ է երկինք: Թե՞ մի քիչ պտտվում է շուրջը: Մորս հոգին այնտե՞ղ էր, երբ ես, փողոցի մեջտեղում սարսափած, կանգնած էի: Տեսա՞վ՝ ինչպես դանակը խրեցի իր մարմնի մեջ ու հանեցի:

թվայնացրել է 1915.info կայքը

Նոթը կուլ եմ տալիս:

Կրծքավանդակիս բռունցքի երկու հարված եմ սրանում: Լրիվ անսպասելի: Ափամներս զարկվում են իրար: Սպա Էնդրյուն գիտի որտեղին խփել: Խեղճ Փախածի նման չի: Մյուս հսկիչները ուրիշ կողմ են նայում: Ակնհայտորեն տեղի ունեցածը նրանց սրտով չէ: Նրանք կանայք, երեխաներ ունեն: Կարգին քաղաքացիներ են: Երբ գիշերը գլուխները բարձին են դնում, ուզում են հանգիստ քնել: Ոչ ոք չի ուզում ձեռքերը արյան մեջ թաթախել: Բայց չեն էլ փորձում նրան կանգնեցնել:

Ահա այդպես: Ոչ ոք չի սիրում խելառներին, համառներին: Բայց ոչ ոք նրանց չի ասում՝ հերի՛ք է: Ես լավ գիտեմ, որովհետև ես էլ նրանցից մեկն եմ ու դեռ կամ:

* * *

Մայրս սնահավատ կին էր: Մեր տան բոլոր անկյուններում աչքուլունքներ էին կախած: Գրպաններս, ուսապարկս միշտ աչքուլունք էր դնում: Մի անգամ կաշվե բաճկոնիս կարած աչքուլունք գտա: Գիշերը չէր կարելի սուլել, տանը անձրևանոց չէինք բացում ու մայրամուտից հետո եղունգները չէինք կտրում:

Անհաջողություններից պաշտպանվելու համար ներքնազգեստը թարս էինք հագնում: Ճաշի սեղանի մոտ ձեռքից ձեռք դանակ չէինք տալիս: Մայրս ինձ ուրիշներից պաշտպանելու համար հնարավոր ամեն բան անում էր: Բայց մոռացել էր իմ մեջ կուտակվող մաղձը: Մարդուն իր հոգու չարությունից ոչինչ չի կարող պաշտպանել:

Սկամբուլում թլփատումից շաբաթներ անց էր: Վերքս վաղուց էր լավացել, նորից սկսել էի փողոցում խաղալ: Հիշում եմ՝ ծառերը բողբոջել էին, ճանապարհները ցեխոտ էին: Մեր տան մոտերքում մի ջրանցք կար: Այնտեղ չէինք լողում: Ջուրը կեղտոտ էր, վատ հոտ էր գալիս: Մարդիկ

թվայնացրել է 1915.info կայքը

"Ինչ գտնում, այնտեղ էին գցում: Թիթեղյա տուփեր, շշեր, տուփեր, պլաստմասսայե իրեր, կոմունիստական բրոշյուրներ: Մի անգամ ատրճանակ էին գտել: Նկուղային հարկի մեր տուն ոստիկանություն էր եկել: Ասում էին՝ ինձ այնտեղ խաղալիս են տեսել, հարցեր էին տալիս, հիշում եմ՝ ինչպես էի մինչև ականջներս կարմրել: Ինձ հետ կապ չուներ, բայց ինձ այնքան մեղավոր էի զգում:

Այդ օրը, զենքի մասին մտածելով, շրջում էի ջրանցքի ափին: Տեսնես ո՞ւմն էր: Բա՞նկ էին կողոպտել: Թե՞ ահաբեկիչ էր այնտեղ գցել: Ոստիկանությունը կասկածյալին գտե՞լ էր: Երևի մտասուզված էի: Թե չէ կնկատեի նրանց, անպայման ճամփաս կփոխեի: Կամ վերջին րոպեին մի թփի հետևում կթաքնվեի: Բայց փոխարենը ուղիղ նրանց դեմ դուրս եկա: Երեք տղա էին: Ինձնից մի քանի տարով մեծ:

– Տեսե՛ք՝ ով կա այստեղ: Կարմիր գլխարկը զբոսանքի է դուրս եկել:

– Իսքենդե՛ր, մայրդ ո՞ւր է: Հետդ չի՞:

– Քեզ ինչո՞ւ է միշտ սուլթան ասում,– հարցեց մյուսը:– Մեկ էլ՝ անկապ քրդերեն բաներ է խոսում:

– Արվարձանի սուլթան ես, էլի:

Մեջտեղում կանգնած խմբի ավագը ձայն չէր հանում: Ինձ էր նայում: Կարծես անհանգստացել էր ինձ համար, անգամ ամաչում էր ընկերների պահվածքից: Սխալվեցի ու վստահեցի նրան, մի քայլ արեցի դեպի նա: Կարծեցի՝ իմ պահապանն է:

– Ճի՞շտ է, որ թլփատումից փախել ես,– հանկարծ հարցրեց ավագը:– Ծառն ես մագլցել:

Զարմացա: Որտեղի՞ց գիտի: Ո՞վ էր ասել:

– Ժողովրդի բերանը չես փակի,– ասաց նա՝ կարծես մտքերս կարդալով:

– Լավ, բա հետո ի՞նչ եղավ: Թլփատեցի՞ն քեզ, թե՞ չէ:

թվայնացրել է 1915.info կայքը

– Այո՛,– ամաչելով ասացի ես:

– Հա՞,– ասաց ավագը:– Հավատա՞նք որ:

Պառկեցրին գետնին: Տաբատս իջեցրին: Բարձր բղավում էի:

– Էս ի՞նչ է: Ինչ էլ փոքր է: Բամիայի չափ:

– Հա, լավ, հասկացանք ինչու ես փախել: Որ կտրեն, տակը բան չի մնա:

– Մեկ է՝ կարգին չեն թլփատել,– ասաց ավագը սրոր արտահայտությամբ:– Դե, մենք գործն ավարտին կհասցնենք:

Ձեռքին դանա՞կ կար: Թե՞ երևակայությունս էր: Այսօր էլ վստահ չեմ: Միայն հիշում եմ, որ տակս արեցի:

– Վայ, վայ, սուլթանը պետք է լողանա,– ասաց ավագը:

Սկզբում տաբատս հանեցին, հետո ներքնազգեստս, կոշիկներս, գուլպաներս: Բոլորը նետեցին ջրանցքը:

Դե՛, գնա՛ վերցրու իրերդ, թե կարող ես: Կամ էլ այդպես գնա տուն, թող բոլորը տեսնեն քո բամիան:

Գնացին: Բայց ես չէի հավատում, որ իրոք գնացել էին: Ծնկներս կրծքիս հպած, նստած օրորվում էի: Սպասում էի, որ ամեն վայրկյան թփերի արանքից դուրս էին գալու ու հարձակվելու էին: Չգիտեմ՝ քանի ժամ անցավ: Մութն ընկավ: Անձրև սկսվեց: Ես դեռ նստած էի: Հանկարծ մայրս երկու հարևանի հետ երևաց մթան մեջ: Երևի ամենուր ինձ էր փնտրել: Ինչպե՞ս էր իմացել, որ այնտեղ էի: Ջրանցքը միակ տեղն էր, ուր թույլ չէր տալիս, որ մենակ գամ:

Ոչինչ չհարցրեց: Շալը գցեց մարմնիս, ինձ տարավ տուն, լողացրեց, սանրեց մազերս, մաքուր գիշերանոց հագցրեց:

– Ահա,– ասաց նա:– Նորից սուլթան դարձար:

Մի երկու շաբաթում իմ խումբը սպեղծեցի: Խումբն էլ մի մեծ բան չէր: Ընդամենը հինգ հոգի էինք: Բայց ինձ

թվայնացրել է 1915.info կայքը

անսահման հավատարիմ էին: Գնչու տղաներ էին, ոչ ոք չէր խոսում նրանց հետ: Լուրջ դեմքեր էին: Ծխախոտ էին ծխում: Ամեն ինչ հավաքում էին՝ շշի կափարիչներ, սրվա-րաթղթեր, սփրեյի դատարկ տուփեր: Ոչինչ նրանց չէր հետաքրքրում:

Երկուսին մի լավ ծեծեցինք, բայց ավագին ձեռք չտվինք: Ուզում էի, որ վախենա: Մի քիչ մտածի՝ կհարձակվե՞նք, թե՞ չէ: Այդ ընթացքում հորս հետ էլ առաջին լուրջ կռիվն ունեցա: Խոյի հետ կապված: Ինձ խոսք էի տվել՝ էլ երբեք թույլ չեմ լինի, խոսքս պահում էի:

Մի կիրակի օր զանգը տվեցին: Դուռը մայրս բացեց: Դռան մոտ մի կին էր: Ավագի մայրը: Արտասվում էր: Ասաց, որ երեկ դիմակներով երեխաների մի խումբ փողոցի մեջտեղում թակարդ է լարել որդու դեմ: Նրան բռնել ու կեղտոտ ջրանցքն են նետել: Եթե մի տախտակի կտոր չգտներ ու բռներ, կխեղդվեր: Պարզվեց՝ լողալ չգիտի:

Մորս հարցրեց՝ արդյոք ինչ-որ բան լսե՞լ է, թե՞ ոչ: Հնայած որդին ոչ մեկի անունը չի տվել: Հիմա հիվանդանոցում է: Թոքաբորբ ունի:

Մայրս ասաց, որ շատ է ցավում: Նրան ուղեկցեց խոհանոց: Թեյ, թխվածք հյուրասիրեց: Բայց կինը ոչինչ չվերցրեց:

– Երեկ լվացքի օր էր,– ասաց մայրս:– Իսքենդերն օգնում էր, որ վարագույրները հանեմ: Լվացի, արդուկեցի: Հետո նորից տեղը կախեց: Ամբողջ օրն ինձ հետ է եղել: Որդիս կապ չունի:

– Վստա՞հ ես, քույրի՛կ:

– Այո՛:

– Երդվո՞ւմ ես:

– Իհարկե երդվում եմ:

Երբ գնաց, մայրս եկավ հյուրասենյակ: Պատուհանի տակ նստած անցորդների կոշիկներին էի նայում:

թվայնացրել է 1915.info կայքը

Մտածում էի՝ հիմա վերջս գալու է: Մի լավ ծեծ եմ ուտելու: Գոնե ականջս կքաշի: Գիտեր, որ ես եմ արել, հասկաց: Բայց միայն ինձ նայեց: Աչքերի մեջ հպարտության շող տեսա, կամ ինձ այդպես թվաց:

– Ընթրիքին ի՞նչ կուզես, սուլթա՛ն: Ոսկով ապուր պատրաստե՞մ քեզ համար:

Էլ չխոսեցինք այն տղայի մասին, ում դաս էի տվել: Ո՛չ այն ժամանակ, ո՛չ էլ հետո:

Իսքենդեր Թոփրաք
Շրուսբերիի բանտ, 1991

թվայնացրել է 1915.info կայքը

Յունուս

2 մարտի, 1978
Լոնդոն

Յունուսը, դեռ օկուպանտների տուն չհասած, զգում էր՝ մի բան այն չէ: Մոտենալուն պես տեսավ՝ հին շենքի երրորդ հարկի բոլոր պատուհանները անարխիստական խորհրդանշաններով, ստվարաթղթերով, տախտակներով ու ստվարաթղթե տուփերով էին ծածկված: Մի օր առաջ ջերմաստիճանը զրոյից ցածր էր, ու խողովակներից սառույց էր կախվում:

Օդը ծանր էր, լուռ, անհանգիստ: Երբ Տոբիկոյի ծննդյան օրը փանքերը նրան տուն տարան, Յունուսն այնպիսի վիճակում էր, որ մինչև այդ ժամը անհանգստությունից խենթացած ու հիվանդանոցներ զանգած Փեմբեն նրան շաբաթներով թույլ չէր տվել դուրս գալ: Այդ օրվանից Յունուսին ամեն առավոտ ինքն էր դպրոց տանում, կեսօրից հետո նորից գնում-վերցնում էր: Բայց վերջապես մայրը նորից վերադարձել էր «Բյուրեղյա մկրատում» իր սովորական հերթափոխին, ու Յունուսն ազատություն էր ստացել: Չնայած մորը խոստացել էր՝ դպրոցից դուրս գալուն պես գնալ տուն ու երբեք չստել, իրեն լավ հայտնի հասցեով գնաց: Հեծանիվը կայանելուց հետո տուն տանող նեղ ճանապարհով քայլեց: Դուռը կողպած տեսնելով՝ զարմացավ: Այդքան ժամանակ դուռը ոչ միայն կողպած, անգամ փակ չէր տեսել:

թվայնացրել է 1915.info կայքը

Օկուպանտները ասում էին, որ միայն բուրժուաներն են կողպում տան դռները: Եթե սեփական ունեցվածք հասկացություն չկա, ուրեմն դռները կողպելու կարիք էլ չկա:

Զանգ չկար, դրա համար Յունուսը դուռը քաղաքավարի ծեծեց: Բայց տեսավ, որ չի բացվում, սկսեց բռունցքներով ծեծել:

– Մեզ հանգի՛ստ թողեք,– բղավեց մեկը ներսից:

Մի կին միացավ նրան.

– Պատրաստ ենք կռիվ տալ:

Յունուսը սարսափել էր: Տոբիկոյին շատ էր սիրում, բայց մի տուն խելառ օկուպանտների դեմ պատրաստ չէր պայքարել: Ձայնը պայթեց.

– Բայց ես... ես եմ՝ Յունուսը: Կարո՞ղ եմ ներս գալ, խնդրում եմ:

Մի վայրկյան լռությունից հետո ծիծաղ լսվեց: Մի քանի վայրկյան անց դուռը բացվեց: Շեմին երգիչ Իգգի Փոփի նման մի մարդ էր կանգնած՝ առանց շապիկի, անմազ մարմինն էր ի ցույց դրել: Յունուսին տեսնելուն պես ժպտաց:

Հետ նայեց ու ձայն տվեց.

– Կեղծ տագնապ էր, ժողովո՛ւրդ: Պետք չի անհանգստանալ: Մեր ճուտոն է:

Հետո երեխային նայեց:

– Ի՞նչ կա է, Յունո՛ւս:

– Բարև՛,– ասաց Յունուսը:– Անցնում էի, ասացի մտնեմ, տեսնեմ՝ ինչ եք անում:

– Ընտիր ենք, բան չէ: Պատրաստվում ենք դրանց մի լավ դաս տալ,– ասաց նա ոգևորությամբ:

– Ո՞ւմ,– հարցրեց Յունուսը ցածր ձայնով:

– Իշխանություններին, էլ ո՞ւմ:

«Իշխանությունները» այն բառերից էր, որ Յունուսը միշտ լսել էր, բայց երբեք չէր հասկացել: Մի անգամ

թվայնացրել է 1915.info կայքը

Տոբիկոյին հարցրել էր՝ ինչ է նշանակում, նա էլ որպես կատակ ասել էր «Թուրք հայրերը շատ ունեն, իսկ մայրերը ոչ, իսկ քեզ նման երիտասարդներն ընդհանրապես չունեն»:

Յունուսն էլ, աչքերը լայն բացելով, հարցրել էր՝ բե՞ղ:

Դրա համար հիմա նույն բառը լսելուն պես Յունուսը մտածեց, որ օկուպանտները պատրաստվում են հարձակվել բեղավոր մարդկանց վրա: Զարմանքից սառել էր: Տղայի անհանգստություններից անտեղյակ՝ Իգգի Փոփը գլուխը դուրս հանեց, աջ ու ձախ նայեց, որ տեսնի՝ կասկածելի մարդիկ կա՞ն, թե՞ չէ: Հետո Յունուսին բռնեց ու ներս քաշեց, դուռը փակեց՝ մեխերով ու թելերով կապկպած գերանը լայնությամբ հենեց դռանն ու կողպեց:

– Ի՞նչ է կատարվում,– հարցրեց Յունուսը:

Բայց մարդն արդեն վաղուց սկսել էր աստիճանները մագլցել: Երբ հասավ երրորդ հարկ, աչքերին չհավատաց Յունուսը: Բոլոր օկուպանտներն այնտեղ էին հավաքվել: Ոմանք հաստ ռեզիններով պարսատիկ էին սարքում, ոմանք՝ փայտեր, նետեր, ոմանք էլ շենքի ճակատն էին ամրապնդում: Բոլորը ոգևորվել էին, հանուն ընդհանուր նպատակի էին աշխատում: Եղանակը, ծխախոտի ծուխը, թութունի ու մարիխուանայի հոտերը ծանրացել էին: Կոտրված թեյնիկը եփվում էր օջախին ու հոգնած սուլոց հանում:

Կապիտանը կանգնել էր այդ ամբողջ վազվզոցի մեջ, սկաուտների ղեկավարի պես աջ ու ձախ հրամաններ էր տալիս: Դեմքի լրջությունը այդ քաոսի մեջ կարգուկանոնի, խենթության մեջ տրամաբանության միակ նշույլն էր: Այդ պահին Յունուսի մտքով անցնող անհամար մտքերից մեկն էր՝ անմիջապես դուրս գալ ու գնալ, բայց Տոբիկոյին տեսնելու կարիքն ու ցանկությունը գերակշռում էր: Որտե՞ղ էր նա: Եթե ուշադիր էլ նայեր, չէր տեսնի:

թվայնացրել է 1915.info կայքը

Սուր-սուր մազերով, նիհար, հաստ ապակիներով ակնոցով, լայն բիբերով հսկայական ուրուրի պես մի փանք մոտեցավ իրեն: Մարիխուանայով ծխախոտը ուրիշների հետ չէր սիրում կիսել ու անընդհատ շուրթերի արանքում էր դնում. դրա համար Բոգարտ էին ասում նրան:

– Բարև՛, ի՞նչ կա:

– Բարև՛, փոքրի՛կ: Օգնությա՞ն ես եկել:

Յունուսն ուսերը թոթվեց.

– Դե, հա: Ի՞նչ անեմ:

– Տե՛ս, այս հեղուկը շշերի մեջ ես լցնելու, եղա՞վ:

Այդպես պլաստմասսայե ճագարը վերցրեց ու սկսեց գինու շշերի մեջ սկիպիդար լցնել: Չգիտեր, որ այդ պահին մոլոտովյան կոկտեյլ էր պատրաստում:

– Փո՛ւֆ, ինչ վատ հոտ է գալիս,– ասաց Յունուսը որոշ ժամանակ անց:– Ի՞նչ եք անելու սրանց հետ:

– Իշխանությունների վրա ենք նետելու,– հանգիստ ասաց Բոգարտը:

Յունուսը հանկարծ լարվեց, ծնոտը բարձրացրեց.

– Իսկապե՞ս:

– Այո՛,– ասաց Բոգարտը:

Աջ ձեռքը բարձրացրեց, կարծես ռումբ էր բռնել, օդում կիսաշրջան գծեց ու դեպի բազմոցը իջեցնելով՝ ասաց՝ վուուուոու, վաաաաա, ու հետո՝ բու�:

Յունուսն իրեն ստիպեց այլ կողմ նայել: Օկուպանտները որպես ի՞նչ էին այդ զզվելի հոտով շշերը նետելու բեղավոր տղամարդկանց վրա: Հորը փրկելու համար ի՞նչ կարող էր անել:

– Բոլոր իշխանությունների վրա՞ եք հարձակվելու,– հարցրեց Յունուսը:

– Վայ, ո՛չ: Այդքան չենք անի: Այնքան շատ են անիրավները: Ճագարի պես բազմանում են,– ասաց Բոգարտը:

թվայնացրել է 1915.info կայքը

– Բանը... ես հիմա կգամ,– ասաց Յունուսը ոտքի կանգնելիս:

– Լավ,– ասաց Բոգարտը:– Կհանդիպենք, փոքրի՛կ:

Ամեն սենյակում այդպիսի անհանգստության հանդիպեց Յունուսը: Կատակ չէր: Օկուպատնեները պատերազմի էին պատրաստվում: Վերջապես տեսավ Տոբիկոյին: Գորգին մենակ նստած, գլուխը կախած, աչքերը փակ՝ խոր մեդիտացիա էր անում: Յունուսն էլ նստեց կողքին ու պահից օգտվելով՝ երկար նայեց նրա աննման դիմագծերին, մուգ սև մազերին, նախշազարդ դաջվածքներին: Չնայած երիտասարդ էր ու անփորձ, մտածում էր՝ ինչպես Տոբիկոյին փրկել մոտալուտ պատերազմից:

– Եկա՞ր, պնդո՛ւկ,– հարցրեց Տոբիկոն ցածր ձայնով:

Զգաց՝ ինչպես է կարմրում Յունուսը:

– Ինչի՞ց իմացար:

– Աչքերս կիսափակ էին, դմբո՛,– ասաց Տոբիկոն ու շրջվելով նրա կողմը՝ այտը համբուրեց:– Վայ, ինչ էլ լուրջն ես: Ասա՛ տեսնեմ՝ ինչ կա:

– Չեմ հասկանում՝ ինչ է կատարվում:

– Ինչպես միշտ՝ նույնը,– ասաց Տոբիկոն:– Քաղաքապետարանը մեզ ուզում է դուրս հանել: Հրաման են ուղարկել ու դուրս գալու համար մի շաբաթ ժամանակ տվել: Ինը օր է անցել: Այսինքն՝ ամեն պահի կարող են գալ:

– Ձեզ ինչո՞ւ են ուզում դուրս հանել որ:

– Որ շենքն իրենց պես ունևորներին բարձր գնով վաճառեն:

Յունուսը հանգստացավ՝ հասկանալով, որ թեման բեղավոր տղամարդկանց հետ կապ չունի, բայց այդ զգացողությունը երկար չտևեց: Տունը շրջապատած էքսկավատորների, ոստիկանության, շտապօգնության

թվայնացրել է 1915.info կայքը

մեքենաների ձայնը լսելու համար ականջ դրեց: Բայց դրսում միակ բանը քամին էր՝ ուժեղ, ցուրտ քամի: Դանդաղ շնչելով, հարցրեց.

– Իսկ ո՞ւր եք գնալու:

– Ոչ ոք ոչ մի տեղ չի գնում,– ասաց Տոբիկոն:

– Բայց տունը նրա՞նցը չէ:

– Ո՛չ, փոքրի՛կս: Որոշ տներ բոլորինն են: Եթե ինձ հարցնես, բոլորն այդպես պետք է լինեն: Իհարկե, կապիտալիստները թույլ չեն տա: Այսինքն՝ մենք էլ մի քանի ազատագրված տարածք կունենանք: Շա՞տ բան ենք ուզում:

– Չգիտեմ,– ասաց Յունուսը:

Տոբիկոն, մեջքն ուղղելով, հայացքի պես վճռական ձայնով շարունակեց.

– Նրանց նպատակը մեզ փողոց նետելն է: Մեր նպատակն էլ դիմադրելն է: Մի՛ մոռացիր, եթե սիստեմի դեմ դուրս չես գալիս, սիստեմի մի մասն ես դառնում:

– Գուցե մտափոխվեն,– ցածրաձայն ասաց Յունուսը:– Մայրս միշտ ասում է՝ Աստված մեծ է:

Տոբիկոն ծիծաղեց:

– Իմ կարծիքով՝ Աստված մեզ մոռացել է: Մեր երկրագնդի նման երկրագունդ էլ կա: Այնտեղ ինձնից մի հատ կա, քեզնից էլ մի հատ: Մեզ նման են, բայց մենք չենք:

Յունուսն ուշադիր լսում էր՝ բառերը մատների արանքով թափվող ավազի հատիկների նման էին: Նախկինում երբեք չէր լսել, որ Աստծուն կասկածի տակ դնեն: Տխրեց:

– Մայրս ասում է, որ Նա մեզ շատ է սիրում:

– Սե՞ր,– հազալով ասաց Տոբիկոն՝ կարծես բառը կոկորդին էր կանգնել ու փորձում էր փրկվել:– Սերը խաբուսիկ բան է: Լավ, գուցե նախկինում մեզ սիրել է,

թվայնացրել է 1915.info կայքը

բայց արդեն չի սիրում, վստահ եմ: Նրա ամբողջ խնդիրը մյուս մոլորակն է, հասկանո՞ւմ ես: Աստված մեզ վաղուց է մոռացել: Բոլորս պետք է մեր գլխի ճարը տեսնենք:

Տղայի աչքերը լայնացան: Մի պահ նայեց ձեռքերին, հետո մռթմռթաց.

– Մարդ սիրածին չի մոռանում: Օրինակ՝ ես քեզ երբեք չեմ մոռանա:

Հետո մի ամբողջ ժամ Կապիտանը մոտակայքի դպրոցներից գողացած գրատախտակին պատերազմի պլանը գծեց. երբ ոստիկանությունը շենք մտնի, կփախչեն ձեղնահարկ, ուր մի գումարտակի հերիքող ռազմամթերք ունեն: Երկրորդ հարկի անկողիններն ու երրորդ հարկի սեղանները բարիկադ սարքելու համար պետք է կողքի թեքեն:

Հենակետերի հետևից այնպես էին դիմադրելու, որ թղթակիցները գային լուսաբանելու: Հետո միջազգային մամուլում էր հայտնվելու պատմությունը: Երբ գործակալությունները պայքարի նկարները ուղարկեն, աշխարհի չորս կողմում երիտասարդները նրանց օգնության ձեռք կմեկնեն: Ի վերջո, քաղաքապետարանը իր դեմքը փրկելու համար ստիպված կլինի հետ քաշվել, օկուպանտները կհաղթեն կապիտալիստներին:

– Հիանալի բան է: Սա մեր «Փարիզի կոմունան» կդառնա,– ասաց Բոգարտը՝ ծխախոտը բերանին՝ մոլոտովի կոկտեյլների մոտ կանգնած:

– Բայց Կոմունայի վերջն արյունալի էր,– զգուշացրեց Իգգի Փոփը:

Յունուսը փորձում էր ուշադրություն չդարձնել, բայց գիտեր՝ եթե ոստիկանությունն այդ պահին շենք մտնի ու նրան օկուպանտների հետ ձերբակալի, խեղճ մայրը կաթված կստանա: Պետք էր այդտեղից դուրս գալ, որքան հնարավոր է շուտ: Այդ պատերազմը իր

թվայնացրել է 1915.info կայքը

խնդիրը չէ: Իշխանություն կոչվածները ով էլ որ լինեն, նրանց ո՛չ քար, ո՛չ էլ շիշ նետելու նպատակ չուներ: Բայց չնայած այդ շփոթմունքին՝ ոչ մի տեղ չգնաց: Տաք անկյուն փնտրող կատվի ձագի պես մնաց սիրած կնոջ կողքին, օգնեց նոր ճակատների պատրաստմանը, հեղափոխական երգեր լսեց, հաշիշով ադիբուդի կերավ:

Բախումը, որից վախենում էր, այդ օրը չեղավ: Մի քանի օր հետո կատարվեց, երբ Յունուսը դպրոցում էր, իսկ օկուպանտները հոգնել էին: Չնայած բոլոր փորձերին՝ հանկարծակիի եկան, միջամտեցին, բայց մի քանի ժամում բոլորը ձերբակալվեցին:

Խուզարկելուց, անվտանգության միջոցներ ձեռնարկելուց ու մի լավ կշտամբելուց հետո օկուպանտների մեծ մասին մի քանի օրում բաց թողեցին: Այդ ընթացքում քաղաքապետարանը բանվորներ բերեց, ու տան շուրջը փայտե ցանկապատներ դրեցին: Պատերը, դռներն ու հուշերը ավերելու համար հրամանի էին սպասում: Օկուպանտներն արդեն անտուն էին:

թվայնացրել է 1915.info կայքը

Ջեմիլե

15 ապրիլի, 1978
Եփրատի ափին մի գյուղ

Ջեմիլեն սանդի մեջ սուտակի պես կարմիր քրքում էր ծեծում: Վերջին քրքումի թելերն էին դրանք: Ուրիշ նյութեր էլ էին պակասում: Սուսամբար, թարխուն, մատնունի, հազրեվարդ... Սարերում պետք է շրջեր, գուցե մաքսանենգներին հարցներ: Բայց արտակարգ իրավիճակ կամ ծննդաբերություն չկար, չէր ուզում տնից դուրս գալ:

Առավոտյան նկուղում էր աշխատել, մտածել: Փոքր, ցածր առաստաղով նկուղի մութ, խոնավ, անպատուհան սենյակը նրա ապաստանն էր, նրա տաճարը: Ամբողջ սենյակը գետնից մինչև առաստաղ ծածկված էր փայտե դարակներով: Ամեն դարակում տարբեր չափերի տարաներ ու շշեր կային: Վայրի խոտեր, ծառերի կեղևներ, հոտավետ յուղեր, սերմեր, համեմունքներ, հանքաքարեր, օձի կաշի, եղջյուրներ, չորացրած միջատներ... Եթեր ու քսուքներ պատրաստելիս օգտագործած հազար ու մի տեսակի նյութեր: Խլուրդի թունելներ հիշեցնող չորս անցքի շնորհիվ էր տարածքը օդափոխվում: Բայց ծծմբի սուր հոտ էր կախված օդում: Ջեմիլեն արդեն հոտը չէր զգում: Մինչդեռ եթե ուրիշ մեկը մտներ, կարող էր գլխապտույտ զգալ: Բայց այդտեղ, նրանից բացի, ոչ ոք չէր մտել մինչ այդ օրը: Դրանից հետո էլ չէր մտնի:

թվայնացրել է 1915.info կայքը

Վերջին տասնհինգ տարին ամեն օր գոնե օրվա կեսը այդ փոքրիկ սենյակում էր անցկացնում, խառնուրդներ էր պատրաստում, որ ամեն պահի մեկը կարող էր դուռը թակել ու խնդրել:

Նա բժշկող էր: Դեղագործ էր: Թռչունների, սողուններ ի, միջատների լեզուն հասկացող Աղջիկ Տատմերն էր: Սուլեյման մարգարեի թոռներից էր: Գյուղացիներն այդպես էին ասում նրա մասին: Դա էր պատճառը, որ կարողանում էր այդ ամայի վայրում մենակ գոյատևել: Մարդիկ նրա հանդեպ հարգանք, վախ ու արհամարհանք էին զգում:

Այդ պատճառով նրան ձեռք չէին տալիս: Նա կին էր, բայց կին չէր, նա երկու աշխարհի միջև ձգված պարանին քայլող մեկն էր՝ կեսվհուկ, կեսփերի:

Նկուղում Ջեմիլեի համար ժամանակը կանգ էր առնում: Գիշեր էր, թե ցերեկ՝ չգիտեր: Առանց որևէ պատճառի, ժամանակից դուրս, իր գծած շրջանի մեջ էր ապրում: Երբեմն արշալույսից մինչև մայրամուտ հին բաղադրատոմսեր էր պատրաստում, նորերն էր փորձարկում: Երբեք չէր ձանձրանում: Այո՛, հոգնեցնող էր, բայց ոչ երբեք ձանձրալի: Ամեն ծաղկի կամ հանքաքարի մեջ Նրա դրած գաղտնի ուժերը կային: Մարդիկ նշանները չէին նկատում: Սպիտակ ճագոմ բույսը տեսնելիս միայն ծառի բնի մեջ մեծացող մակաբույծ բույսն էին տեսնում. չէին հասկանում, որ դրանից կարելի է արյան շրջանառությանն օգնող քսուք ստանալ:

Վստահություն: Ջեմիլեն դրա վրա էր կենտրոնանում: Երբ մարդիկ մի անգամ վստահում են, գաղտնիքները բացում են քո առաջ, բայց ոչ միանգամից՝ աստիճանաբար: Այդ ժամանակ կիմանաս՝ որ բույսը ինչին է դարման: Երկրագնդի վրա ամեն տեսակի անհրապույր կամ անկարևոր բան ստեղծվել է ի հակադրություն մի ուրիշ

թվայնացրել է 1915.info կայքը

բանի: Ամեն դարդին դարման կա, այն էլ՝ մոտերքում մի տեղ: Խնդիրը տեսնելն էր: Ջեմիլեն կարողանում էր տեսնել:

Անծանոթ վայրեր ճանապարհորդելը, օտարների հետ ծանոթանալը, հորիզոնից անդին մայրցամաքներ բացահայտելը նրան չէր հետաքրքրում: Գիշերները ներքևի փոսերում վառվող-մարող գազի լամպերին նայելը բավական էր: Աստված նրան հանձնարարել էր բացահայտել բնության գաղտնիքներն ու ծառայել մարդկությանը՝ առանց տարբերություն դնելու: Մի քանի հիվանդություն բուժել գիտեր, բայց այնքան առեղծվածներ կային, որ չէր կարողացել պարզել: Երկար թևերով, գույնզգույն հագուստների ու ասեղնագործ ժիլետների տակից անպայման շալվար էր հագնում, որ անհրաժեշտության դեպքում հանգիստ կարողանար ձի նստել: Գիշեր թե ցերեկ, ամեն պահի ամեն բան պետք է պատրաստ լիներ:

Շրջանի ժողովուրդը նրա մասին մի շարք լեգենդներ էր հյուսել: Մարդիկ կային՝ ասում էին՝ դեղերի բաղադրատոմսերը ջիններից է վերցրել: Ոմանք հավատում էին, որ նա թաքուն Քաֆ լեռն է գնում: Ջեմիլեն այդ հիմարությունները լսելիս զարմացած օրորում էր գլուխը: Հերոսների, լեգենդների ու հրաշքների կարոտ աշխարհում նրանից երեքն էլ ակնկալում էին: Բայց Ջեմիլեն գիտեր՝ կլինի այն, ինչ ճակատիդ է գրված, ավելին չես ստանա: Քսուքների գինը սահմանում էր ըստ անձի ֆինանսական վիճակի, բայց հաճախ էլ անվճար էր սպասարկում: Վաստակած մի քիչ գումարով նորից բաղադրիչներ էր գնում:

Ջեմիլեն թույն էլ էր պատրաստում, բայց շատ քիչ մարդկանց հետ էր կիսում: Մյուս նյութերի պես թույնն էլ պետք չէր միանշանակ ընդունել: Ե՛վ փորձանք կարող էր

թվայնացրել է 1915.info կայքը

լինել, և՛ բալասան: Բնությունը լավից ու վատից անդին էր: Դարման անողը մարդուն կարող էր հիվանդացնել: Հիվանդացնողը կարող էր դարմանել: Ամեն արհեստավորի պես նա էլ իր ապրանքի որակի համար էր պատասխանատու, ոչ թե մարդկանց օգտագործման ձևի: Թույնը դաշտամկների, առնետների, միջատների ու օձերի համար էր:

Ճակատը շողում էր լամպի լույսի ներքո, երբ մի տուփ հանեց: Փոքր, օվալաձև, սադափե տուփ: Մեջը մի քար կար: Անգին քար: Պնդուկից մի քիչ մեծ ալմաստ էր՝ սաթի պես դեղնավուն: Մատների արանքն առավ և ուսումնասիրեց: Այդքան յուրահատուկ քար ունենալու համար մարդիկ իրար են սպանում: Հիմարնե՛ր:

Բայց ոչ ոք չի կարող ալմաստին տեր լինել՝ մարդ կարող է միայն նրա պահապանը լինել: Ալմաստի ճանապարհորդության համար նոր տեր ունենալը ընդամենը կարճատև դադար է, ուրիշ ոչինչ: Ջեմիլեն դա հասկացել ու ընդունել էր: Ալմաստն այսօր նրա մոտ էր, բայց վաղը ուրիշ տեղ կարող էր լինել նույն հաջողությամբ: Քանի դեռ հիմա ձեռքի տակ էր, խառնուրդները կատարելագործելու համար էր օգտագործում: Որոշ քարերից տաքություն էր տարածվում: Քսուքի մեջ դնելիս հոգին նրանց էին տալիս, օգնում էին, որ բաղադրիչները խառնվեն: Այդ նպատակին ծառայող թանկարժեք իրեր ուներ, բայց ալմաստը լավագույնն էր:

Նոյի ժամանակներից Միջագետքում տեղացիները ալմաստին «Աստվածների արցունք» էին կոչում: Հավատում էին, որ դրանք երկնքի աստղերից թափվող փոշուց կամ փոթորկուն գիշերներում կայծակներից պոկված փշուրներից են պատրաստված: Ինչպիսի երևակայություն: Երբ մարդիկ մի բանից չեն հասկանում, սկսում են հորինել: Ալմաստի հետ համեմատած՝ մարդու կյանքն

թվայնացրել է 1915.info կայքը

անգամ ամառային անձրևից կարճ է: Ութսուն տարեկանում երբ մարդ այլևս ուժ չունի ու տարեց է, ութսուն տարեկան ալմաստը դեռ երեխա է համարվում: Ջեմիլեի ալմաստը մոտավորապես երեք կամ չորս հարյուր տարեկան էր: Դեռ երիտասարդ էր: Դրանից հետո հազարավոր տարիներ կարող էր ապրել, հավանաբար՝ ավելի շատ:

Ինչ վերաբերում է ալմաստ գողացողին, աղքատի ու հարուստի միջև տարբերություն չի մնում, ագահության վերջն էլ չի երևում: Ալմաստ չունեցողն անպայման ուզում է ունենալ, իսկ ալմաստ ունեցողն ավելին է ուզում: Անամոթություն, ագահություն ու դաժանություն. երիտասարդ տարիքում այդ ամենը տեսել է ալմաստը:

Առևտրականները, ճանապարհորդները, նավաստիները, զինվորները ու լրտեսներն այն ձեռք բերելու համար ինչ ստորությունների են դիմել: Նրա մտած տներում ծառաներն իրենց տիկնանց հարգանքով են ծառայել, կանայք իրենց ամուսիններին շահամոլությամբ են սիրել, ու ամուսիններն իրենց ավելի ուժեղ են զգացել:

Երկիմաստությունները պարզվել են, ֆլիրտը ամուսնությամբ է ավարտվել, ընկերները թշնամիների, թշնամիները ընկերների են վերածվել: Մաքուր ձյան վրա արտացոլվող արևի լույսի պես ոսկեգույն ալմաստն էլ շուրջն ամեն ինչ ավելի փայլուն ու հստակ է դարձրել, բայց իր մթությունն էլ իր հետ է բերել:

Այն նվեր էր մի բեյից: Այդ մարդը սովոր էր, որ իր առաջ բոլորը զգաստանում են, իր հանդեպ հարգանք ու նույնքան վախ էին տածում: Նրա որդին հանկարծակի մի անողոք հիվանդությամբ է հիվանդանում: Երբ բոլոր բժիշկները նահանջում են, Ջեմիլեն է հայտնվում: Լուռ, անձայն, անխոնջ աշխատում է՝ քարից հաց քամողի

թվայնացրել է 1915.info կայքը

պես քայլ առ քայլ երեխային քաշում-հանում է Ազրայիլի ձեռքերից:

Երբ տղան առաջին անգամ աչքերը բացում ու խոսում է, բեյն արտասվում է: Արտասվելու սովորություն չունեցող տղամարդկանց պես՝ տակ-տակ ծալվելով:

Բեյը նրան գումար էր առաջարկել: Ջեմիլեն չէր ընդունել: Ոսկի: Հող: Հողամաս, մեղվի փեթակներ, մետաքսագործություն... Ջեմիլեն մերժել էր բոլոր առաջարկները: Արդեն պատրաստվում էր գնալ, երբ բեյը ալմաստը հանել էր: Նրան Ալմաստ Հարճ էր ասում:

Ջեմիլեն հմայվել էր քարի գեղեցկությամբ: Նրան ոչ թե արժեքը, այլ թաքցրած առեղծվածներն էին գրավում: Գաղտնիքներ ուներ այդ քարը:

– Ասում են՝ անիծված է,– ասաց Բեյը:– Ո՛չ փողով է առնվում, ո՛չ զոռով: Միայն մաքուր սիրով կարելի է փոխանցել՝ որպես նվեր: Ինձ էլ են այդպես տվել: Ես էլ հիմա քեզ եմ տալիս:

Մի պահ Ջեմիլեին թվաց՝ ալմաստի ու իրենց միջև խոր ու խորհրդավոր կապ է ստեղծվել, սակայն մերժեց: Բայց բեյը կյանքում շատ բան էր տեսել: Հասկացել էր՝ Ջեմիլեն հմայվել էր քարով, բայց չէր ուզում վերցնել, որովհետև իրեն ապահով չէր զգա: Չպնդեց: Նույն գիշեր ալմաստը վստահելի սուրհանդակի հետ ուղարկեց նրան: Այդ օրվանից Ջեմիլեն խնամում է Ալմաստ Հարճին:

Մարդկային կյանքը կարճ էր, թրթուրի կամ հարսնյակի կյանքից չէր տարբերվում: Ադամի որդիներն ու Եվայի դուստրերը տարօրինակ արարածներ էին:

Վիրավորվում էին, երբ թրթուրի հետ էին համեմատվում, իսկ հարսնյակին նմանվելիս իրենց լավ էին զգում: Միջատներից զզվում էին, բայց եթե մատներին զատիկ նստեր, կարծում էին՝ հաջողության նշան է: Առնետներից՝

թվայնացրել է 1915.info կայքը

զզվում, բայց խենթանում էին սկյուռիկների համար: Անգղերին վանող, իսկ արծիվներին ազդեցիկ էին համարում: Մոծակներին՝ արհամարհում, լուսատտիկ-ներին՝ սիրում: Պղնձին ու երկաթին կարևորություն չէին տալիս, ոսկուն էին երկրպագում: Ոտքերի տակի քարե-րին էին նայում, իսկ թանկարժեք քարերի համար խեն-թանում էին:

Զեմիլեին այնպես էր թվում, որ մարդիկ ամեն ինչի համար մի քանի աչք են ընտրում, մնացածների արժեքը չեն իմանում: Մինչդեռ կյանքը հավերժական շրջան էր: Չհավանած իրերը առնվազն հավանած իրերի չափ անհրաժեշտ էին: Այս աշխարհում ամեն մի կտոր մյուսին զարմացնելու, լավացնելու, փոխելու համար է ստեղծ-ված: Ո՛չ մոծակներն էին լուսատտիկներից անկարևոր, ո՛չ էլ բրինձը՝ ոսկուց: Արարիչն այդպես էր ծրագրել աշխարհը:

Վերևից եկող ձայներից միտքն ընդհատվեց: Մեկը դուռն էր ծեծում: Ոտքի ելավ ու ալմաստն արագ դրեց տուփի մեջ: Նկուղում աշխատելուց միակ բացասական կողմը դա էր՝ հովտից եկող ձայները չէր լսում, պատ-րաստ չէր լինում: Շնչակտուր բարձրացավ աստիճան-ները:

– Դուռը բա՛ց, Տատմե՛ր Աղջիկ, ո՞ւր ես:

Դեպի հյուրասենյակ բացվող դուռը բարձրացրեց, ձեռքերով երկու կողմ հենվելով՝ մարմինը ձգեց վերևի հարկ: Դեպի նկուղ տանող դուռը գորգով ծածկեց ու փակեց մուտքը: Վերցրեց հրացանը: Երբ վերջապես դու-ռը բացեց, տեսավ այն մաքսանենգին, որի կնոջ ծննդա-բերությանն էր օգնել մի քանի ամիս առաջ. մեկուկես երեխայի հայրն էր: Ուզում էր հարցնել՝ երեխան ինչպես է, երբ հետևում կանգնած մարդուն նկատեց: Մեջքին ինչ-որ մեկին էր բերում: Արյան հետքեր: Ծանր, մուգ:

թվայնացրել է 1915.info կայքը

– Ջեմիլե՛ քույրիկ,– ասաց մաքսանենգների գլխավորը,– պիտի օգնես մեզ:

Ջեմիլեն հասկացել էր՝ Սիրիայի սահմանն էին երևի անցել՝ ապրանք տեղափոխելով: Թեյ, թութուն, մետաքս, գուցե թմրանյութեր էին բերում: Բախտները չի բերել, թակարդն են ընկել: Նրանցից մեկը վիրավորվել էր: Շալակած մինչև իր տուն էին բերել: Շատ էր արյուն կորցրել, հոգին սկսել էր ծորալ ու թափվել:

– Ոչինչ չեմ կարող անել,– ասաց Ջեմիլեն:– Պետք է հիվանդանոց գնաք:

Մաքսանենգների գլխավորը բեղերը կրծեց: Ո՛չ տխուր էր, ո՛չ զայրացած. անհամբեր էր երևում:

– Չենք կարող, դու էլ գիտես:

Հետո, կարծես միմյանց հետ լուռ պայմանավորվելով, վիրավորին ներսի թախտին պառկեցրին ու դուրս եկան:

– Եթե մահանա, հետնաբակում կրա՛կ վառիր: Մենք կգանք կթաղենք,– ասացին նրանք գնալուց առաջ:

Վիրավորը քառակուսի դեմքով, արծվաքիթ էր: Նեղ ուսերով, նիհար, բարձրահասակ: Ջեմիլեն փորձեց գուշակել նրա տարիքը: Գուցե երեսունին մոտ, գուցե քառասունն անց էր: Դեմքն այնքան գունատ էր, որ անհնար էր գուշակել: Հնարավորինս զգույշ բարձրացրեց գլուխը, տակը բարձ դրեց: Խեղդված ու ցածր, կենդանական ձայն հանեց՝ կարծես մի փամփուշտ էլ կոկորդն էր մտել: Քթից արյուն եկավ: Ի՜նչ դժվարություններ էր տեսել Ջեմիլեն մինչ այդ օրը, բայց իր տեսած ոչ մի բան այդպիսի վախ չէր առաջացրել:

Գուցե ամենալավը նրան թունավորելն է: Ոտքը կոտրած ձիու պես առանց ցավի կմահանար: Մի չափաբաժին մոլախինդը բավական էր: Խորհրդավոր մոլախինդ: Եթե բավականաչափ խմեցնի, գույնզգույն քնի աշխարհ կուղարկի՝ անտակ ու անառավոտ երազի գիրկը:

թվայնացրել է 1915.info կայքը

Զեմիլեն ուսերը բարձրացրեց. հիմա երկար-բարակ մտածելու ժամանակը չէր: Պետք է փրկելու համար ամեն ինչ աներ: Նայեց վերքերին: Հագուստը կտրեց, հանեց, լրիվ մերկացրեց նրան: Մարմնի նիհարությունից, կեղտոտությունից, ցցված ոսկորների տեսքից քիչ էր մնում արտասվեր: Երեք մեծ վերք ուներ՝ մեկը՝ ոտքին, մեկը՝ ուսին: Ամենավտանգավորը երրորդն էր՝ ողնաշարի մոտ: Հետևից էին կրակել:

Երբ Զեմիլեն հանում էր փամփուշտները, վիրավորը մի քանի անգամ ցավից ուշաթափվեց: Ի վերջո, Զեմիլեն կարողացավ երկու փամփուշտ հանել նրա մարմնից: Վերջին փամփուշտը աջ ծնկի տակ էր ու մաս-մաս էր եղել: Հանելու կարիք չկա: Եթե այդ դժոխքից կարողանար փրկվել, այդպես էլ կարող էր ապրել: Գիտեր՝ երբեք առաջվանը չի լինելու: Փամփուշտներն էլ են ալմաստի պես մարմիններին իրենց հոգին տալիս:

Երբ մայրամուտի վերջին շողերը քաշվեցին երկնքից, Զեմիլեն ննջում էր աթոռին՝ վիզը թեքած: Նախորդ գիշերվա նման այդ գիշեր էլ վատ զգացողություններ ուներ: Վիրավորը տնքոցներով վեր կացավ, ջրից դուրս եկած ձկան պես բացում-փակում էր բերանը: Թաշկինակը թրջելով մոտեցրեց շուրթերին:

– Մի քիչ էլ, աղաչում եմ:

– Կներես,– սիրով ասաց Զեմիլեն:– Միայն այսքան կարող ես խմել: Հետո էլի կտամ, խոստանում եմ:

Հայհոյեց՝ լեզուն կապ ընկնելով: Տաքություն ուներ: Գիտակցությունը գնում-գալիս էր: Զեմիլեին հետաքրքրեց՝ տեսնես կարգին մա՞րդ էր: Բայց ի՞նչ տարբերություն:

Իսկ եթե ոչ՝ կարծես թե չէ՞ր օգնելու: Հաստատ կին ու երեխաներ ուներ: Եթե մահանա, տեսնես նրան կկարոտե՞ն:

թվայնացրել է 1915.info կայքը

Ամբողջ գիշեր հերթապահեց: Լուսադեմին չդիմացավ, գորգը հետ տարավ, բացեց նկուղ տանող դուռը: Նկուղում գործեր ուներ, մի դեղ էր պատրաստելու՝ այս անգամ իր համար՝ անհանգստությունը գոնե մի քիչ հանդարտեցնող եթեր: Անկողնում պառկած հիվանդին նայեց աչքի պոչով: Ժամեր շարունակ անդադար քնել էր:

Մարմինը ուղղեց դեպի ստորգետնյա անցքն ու աստիճանների վրա հավասարակշռությունը գտնելով՝ դուռը փակեց: Անհնար էր գորգը տեղը դնել, բայց գոնե դուռը փակ կմնար: Եթե հանկարծ մարդն արթնանար, կմտածեր՝ դուրս է եկել փայտ կոտրելու: Բռնակները քաշեց: Դուռը ուժեղ ձայնով փակվեց:

Հենց այդ պահին հիվանդը աչքերը բացեց, պղտորված հայացքով շուրջը նայեց: Նայեց անկյունում լցրած փայտերին ու պատից կախ հրացանին, հետո՝ ստորգետնյա դռանը: Տառապալից քնին վերադառնալուց առաջ դեմքն անհասկանալի արտահայտություն ստացավ: Իմացել էր նկուղի տեղը:

թվայնացրել է 1915.info կայքը

Էսմա

16 ապրիլի, 1978
Լոնդոն

Դուռը փակեց ու խոր շունչ քաշեց: Վերջերս սովորություն էր դարձրել կեսգիշերին առանձնանալը: Երբ բոլորը քնում էին, փակվում էր բաղնիքում: Մոմը վառում էր, նայում՝ ինչպես էր դեմքը ձևափոխվում կրակի լույսի տակ: Հայելու միջի դեռահաս, թմբլիկ աղջկա մասին չէր մտածում: Ուզում էր հասկանալ՝ ինչ կա այդ արտաքինի տակ, ուզում էր դեռ չբացահայտած այդ մյուս անձի հետ շփվել:

Հասակակից անգլիացի աղջիկներն առանձին սենյակ ունեին. երբ ուզում, փակում էին դուռը: Բացի իրենից: Եթե Յունուսի ու իր ընդհանուր սենյակի դուռը փորձեր փակել, մայրը կմտածեր՝ սարսափելի բան է պատահել. իրեն: Դրա համար էր սիրում բաղնիքը՝ միակ տեղն էր, ուր կարող էր ինքն իր հետ մենակ մնալ:

Սվիտերը, շապիկը ու զզվելի, մարմնագույն կրծկալը հանեց: Կրծքերը սուր-սուր էին, կապույտ-փիրուզագույն երակները ցցված էին: Դրանք իր համար երկու բեռ էին, որ ստիպված էր կրել, կարծես թե իր խնդիրները բավական չէին: Դեռ այդ առավոտ դասարանի տղաներից մեկը, ձևացնելով, թե հետևի նստարանից գիրք է վերցնում, փորձել էր կրծքերին հպվել: Բայց ինքը հասկացել էր նրա նպատակն ու կարողացել էր վերջին պահին

թվայնացրել է 1915.info կայքը

խուսափել: Լսել էր՝ ինչպես են մի խումբ տղաներ քթի տակ ծիծաղել: Ուրեմն միասին էին պլանավորել: Խոսել էին այդ մասին: Ամոթից կարմրել էր: Ատում էր իրեն, որ աղջիկ է ծնվել: Երանի ոչ թե որպես Էսմա, այլ որպես Իսքենդեր գար աշխարհ:

Նորից սկսեց մտածել. «Եթե տղա լինեի, ինչպիսի՞ն կլինեի»:

Դարչնագույն մատիտով հոնքերը հաստացնելով՝ կենտրոնում միացրեց: Հետո շուրթերի վերևում բեղ նկարեց: Եղբայրը, եթե նրան տեսներ, գլուխը կօրորեր, կասեր. «Ա՛յ աղջիկ, դու խելառ ես»:

Իսքենդերը միշտ կեսկատակ, կեսլուրջ ասում էր, որ Էսման տարօրինակ է: Իրականում Էսման էլ էր իրեն տարբեր համարում. կարծես մի տեղ մի բան խառնվել էր, ու պատահաբար այդ ընտանիք էր ընկել: Նա այդ-տեղ փորձում էր Թոփրաք ընտանիքի անդամ դառնալ, բայց գուցե իրականում ճակատագիրը մի այլ տեղ իրեն էր սպասում:

– Քույրս է: Միայն պարտվողներին է սիրում,– ասում էր Իսքենդերը, երբ նրան ծանոթացնում էր ինչ-որ մեկի, հատկապես տղայի հետ:

Դա լսելուց հետո տղաները երբեք չէին մոտենում իրեն: Չնայած Էսմայի համար մեկ էր: Գուցե տարօրի-նակ թվա, բայց ինչ-որ տեղ նա իրավացի էր: Սիրում էր ճնշվածներին, խեղճերին: Ֆուտբոլ դիտելիս անգամ միշտ պարտվող կողմին էր պաշտպանում:

– Դու միշտ խխունջներին ես պաշտպանում, ա՛յ խելառ աղջիկ,– ասում էր մայրը:

Փեմբեն ժամանակին մի դեպքի էր ականատես եղել. մի խումբ երեխաներ մեծ գորտին մեջքի վրա էին շրջել ու բանտարկել մի մեծ թասի մեջ: Հետո տղաներից մեկը մի խխունջ էր գտել ու գցել այնտեղ: Գորտն անմիջապես

թվայնացրել է 1915.info կայքը

հոտն առել ու կենտրոնացել էր որսի վրա: Խխունջը՝ վտանգից անտեղյակ, դանդաղ շարժվել էր ու փորձել դուրս գալու ճամփա փնտրել: Բարձր բղավող տասնյակ երեխաների աչքերի առաջ գորտը կերել էր խխունջին՝ որսի կպչուն, սոնձի պես լորձը բերանից կաթեցնելով:

– Այդ օրը բոլորը գորտի կողմն էին, բայց եթե դու այնտեղ լինեիր, խխունջի կողմից կլինեիր: Երբեմն անհանգստանում եմ քեզ համար,– ասաց Փեմբեն:

Դպրոցը մի աշխարհ էր: Մի կողմից՝ Էմայի պես՝ երբեմն տգեղ, երբեմն միջակ, ավարտական քննություններին պատրաստվող և ուսուցիչներից բացի՝ ոչ ոքի հետաքրքրությանը չարժանացող գիրք կրծողներ: Մյուս կողմից՝ թիթեռներն էին: Դասերին ուշադրություն չէին դարձնում, այնքան անհամբեր էին կյանքի գիրկը նետվելու համար, որ ուսմանը մի որպե էլ չէին նվիրում: Ամենագեղեցիկներին Էման «Բարբի» էր ասում:

Բարբիները միայն տղաներից էին խոսում: Մանրամասն տեղեկություններ էին իրար հաղորդում, թե որ տղան որ աղջկան է հավանում, ով ում ընկերն է կամ ընկերուհին, դրա մասին նոթեր էին պահում, հարցնում էին՝ տեսնես այն բանն անո՞ւմ են, թե՞ չէ, գցում-բռնում էին, թե ինչ-որ մեկի ստամոքսի ուռածությունը հղիությունից է, թե ոչ: Միշտ ահավոր սիրահարվում էին ինչ-որ մեկին: Եթե մի բան լավ է, ասում էին՝ սո՛ւպեր, հակառակ դեպքում՝ վայ, ինչ զզվելի է: Այդ արտահայտությունները նույնն էին ուտելիքի, հագուստի, ուսուցիչների, ծնողների, անգամ երկրների ու աշխարհի իրադարձությունների մասին:

Բարբիներն իրենց մայրերի հետ անգամ իրենց դաշտանը, իրենց սեռականությունն էին քննարկում: Էմայի ու Փեմբեի միջև ապակե պատ էր: Մայր ու աղջիկ մարմնի հետ կապված ոչինչ չէին խոսում, այնպես էին

թվայնացրել է 1915.info կայքը

իրենց պահում, ասես չկար: Եթե Էսման իրենց թաղամասի դպրոց գնար, վիճակը ա՞յլ կլիներ: Եթե դասընկերների անունները ոչ թե Թրեյսի, Դեբի կամ Քլեր լինեին, այլ Այշե, Ֆերահ կամ Զեյնեփ, ավելի ներդաշնա՞կ կլիներ: Այդպես չէր կարծում: Գերադասում էր գիրք կարդալ, քան տարեկիցների հետ ժամանակ անցկացնել: Տղաներից ձանձրանում էր, աղջիկներն էլ դատարկ էին:

Տարիներ առաջ գնացել էին Էսմայի տարրական դասարանների ուսուցչուհու տուն:

– Այսքան տարիների փորձ ունեմ և կարող եմ ասել՝ երեխան փայլուն է, թե ոչ: Ըստ իմ պրոֆեսիոնալ մոտեցման՝ պարո՛ն և տիկի՛ն Թոփրաք, ձեր աղջիկը շատ խելացի է: Ափսոս է նրա տաղանդը վատնելը: Պետք է ավելի լավ դպրոց գնա:

Տիկին Փոուելը ընտանիքին համոզելուց հետո նոր դպրոցի տնօրինության հետ էլ էր խոսել. ինչ ասել էր, լավ էր ազդել նրանց վրա: Էսմա Թոփրաքը խխունջների կողմնակիցն էր, բայց գորտի ցատկ էր կատարել:

Էսման ուզում էր գրող դառնալ, բայց ոչ կին գրող: Անգամ իր համար կեղծանուն էր ընտրել՝ Ջոն Բլեյք Օնո՝ իր ամենասիրելի երեք մարդկանց անուններից ստեղծած խառնուրդ՝ Ջոն Քիթս, Ուիլյամ Բլեյք ու Յոկո Օնո:

Ինչո՞ւ էին կանանց անուններն այդքան տարբեր տղամարդկանց անուններից: Կանանց ինչո՞ւ էին այնպես նայում, ասես երևակայության արդյունք էին, ու ինչո՞ւ էին նրանց երազային անուններ տալիս: Տղամարդկանց անունները միշտ քաջություն, ուժ և ունակություններ էին նշանակում, օրինակ՝ Մուզաֆֆեր, Ֆարուք կամ Հյուսամեթթին[1]: Մինչդեռ կանանց անունները փխրուն գեղեցկությունից էին արտացոլում՝

[1] Հաղթող, արդար, կտրող թուր:

թվայնացրել է 1915.info կայքը

բյուրեղապակյա ծաղկամանի պես: Նիլուֆեր, Գյուլ-սերեն կամ Բիննազ[1] անունների պես անուն ունեցող կանայք կարծես աշխարհի զարդանախշերը լինեին:

Մինչդեռ նա ուզում էր Ջոն Բ. Օնո լինել: Քաջ, խիստ ու տղամարդկային: Անուն, որ կրծկալի կարիք չուներ:

Բեղ նկարեց, հետո կլոր մորուք ու նայեց դեմքին: Ոչ մի օգուտ: Եթե տղամարդու կերպարանք էլ ստանար, միևնույն է, գրավիչ չէր: Երանի հոր նուրբ դիմագծերը ժառանգած լիներ, մեկ էլ մոր աչքերը՝ կանաչ, մեծ, նշաձև: Բայց դրա փոխարեն հոր ու մոր ճիշտ հակասական դիմագծերն էր ժառանգել: Քիթը կարտոֆիլի նման էր, իսկ մազերն այնքան գանգուր էին, որ անհնար էր սանրել, ճակատը չափից դուրս լայն էր: Կզակին մսագնդի նման մի բան կար՝ տհաճ, բարութագույն գոյացություն: Մորը քանի անգամ էր խնդրել իրեն բժշկի տանել, որ հեռացնեն, բայց նա չէր հետաքրքրվել:

Փեմբեն գեղեցիկ կին էր. բոլորն այդպես էին ասում: Եղբայրներն էլ էին գեղեցկադեմ: Գեղեցկության գենը երկու տղաների արանքում արձակուրդ էր գնացել, Էսմայի կողքով էր անցել:

Յունուսը հրեշտակի դեմք ուներ: Իսքենդերն էլ էր գեղեցկադեմ, բայց ուրիշ գեղեցկություն էր: Նրանը այրող, գոռոզ գրավչություն էր՝ «կեղտոտ» գեղեցկություն էր, ինչպես Բարբիներն են ասում:

Էսման գիտեր՝ դասընկերուհիներից ոմանք սիրահարվել էին եղբորը ու միայն դրա համար էին իր հետ ընկերություն անում: Իսքենդերը երբեմն գալիս էր իրեն դպրոցից վերցնելու և միշտ խիստ ու սառը հայացքով շուրջն էր նայում, դա էլ, չգիտես ինչու, միշտ ազդում էր մարդկանց վրա:

---

[1] Ջրաշուշան, վարդ բաժանող, նազանի:

թվայնացրել է 1915.info կայքը

– Երանի ինձ ուզեր, հաստատ ոչ չէի ասի,– փսփսում էին աղջիկները իրար հետ:

– Ճիշտ «Կնքահոր» Կառլեոնեն է: Միայն ատրճանակն է պակասում:

– Վայ, եղբորս մասի՞ն եք խոսում,– միջամտում էր Էման:

Իսքենդերի ու Ալ Պաչինոյի միջև ոչ մի նմանություն չէր տեսնում: Ձայնի մեջ ծաղր էին լսում, բայց ուշադրություն չէին դարձնում: Իսքենդերին ծայրաստիճան տղամարդկային, սեքսի էին համարում: Բայց նրա համար մեկ էր: Աղջիկներով ընդհանրապես չէր հետաքրքրվում: Ինչքան չէր հետաքրքրվում, այնքան նրանք ավելի էին կառչում իրենից:

Ինչ հայրը տնից տեղափոխվել էր, Իսքենդերը շատ էր փոխվել՝ կոպիտ, համառ, կռվարար էր դարձել: Ժամանակը ընկերների հետ էր անցկացնում, մեկ էլ՝ ընկերուհի համարվող այն աղջկա հետ: Առավոտից երեկո տանձիկին էր հարվածում՝ կարծես աշխարհը լի էր անտեսանելի թշնամիներով: Եթե դեռահասների դեպրեսիան սա էր, Էման չէր ուզում մեծանալ:

Մինչև վերջերս մոր հետ հարաբերությունները լավ էին: Հենց կուրծքը սկսեց մեծանալ, ամեն ինչ փոխվեց: Կուսությունը Փեմբեի համար ամենակարևոր թեման էր դարձել: Էմային անընդհատ խրատում էր՝ ինչ պետք չէ անել: Արդեն չէին կարողանում խոսել, որովհետև խոսակցությունը միայն կանոններին ու արգելքներին էր նվիրված: Ասում էր, որ տղաները միայն մի նպատակ են հետապնդում, մի խրատին մյուսն էր հետևում: Մինչդեռ Փեմբեն որդիներին նույն արգելքներով չէր մեծացնում: Դե, ասենք թե Յունուսը դեռ փոքր էր, բայց Իսքենդերի հանդեպ լրիվ ուրիշ վերաբերմունք ուներ: Իսքենդերի

թվայնացրել է 1915.info կայքը

ամեն շարժումը չէր ստուգում: Կարող էր վարվել, ինչպես ուզում էր: Հնարավորինս ազատ էր:

Մինչդեռ Փեմբեն զուր էր անհանգստանում: Էսման հակառակ սեռի հանդեպ ոչ մի հետաքրքրություն չուներ: Նրանց ձանձրալի ու մակերեսային էր համարում: Խխունջները և՛ էգ էին, և՛ որձ: Մարդիկ ինչո՞ւ չեն կարողանում այդպես լինել: Ըստ Էսմայի՝ եթե Աստված բոլորիս խխունջի նման ստեղծած լիներ, մարդիկ ավելի քիչ կտանջվեին ու կտառապեին:

թվայնացրել է 1915.info կայքը

Ջեմիլե

21 ապրիլի, 1978
Եփրատի ափին մի գյուղ

Հիվանդը դեռ ջերմում էր: Ջեմիլեն շուրթերը մոտեցրեց ճակատին: Բռնեց դաստակը: Զարկերակը և՛ թույլ էր, և՛ արագ: Հեռվից լսվող դիոլների պես էին սրտի զարկերը: Պատերազմի ձայների պես:

Մարդու մարմինը առեղծված էր: Պայքարում էր: Մարդիկ չեն գիտակցում, բայց մարմինը ռազմիկ է, ավելի դիմացկուն է, քան հոգին: Բայց բոլոր խիզախ մարտիկների պես նա էլ թուլություններ ունի: Վախենում է անհայտից:

Դիմադրելու, հարձակվելու, տապալելու և հողին հավասարեցնելու համար նախ պետք էր թշնամուն ճանաչել: Եթե չիմանաս՝ ինչի դեմ ես պայքարում, չես կարող հաղթել: Ջեմիլեի դերը այդ պահից էր սկսվում: Հնուց ի վեր նրա նման բժշկողի հիմնական գործը օգնելն էր, որ հիվանդը ուժ հավաքի: Ջեմիլեն նրանց չէր բուժում, միայն մարմիններին էր օգնում, որ կարողանային հաղթահարել հիվանդությունը:

Քացախով թրջած սրբիչը մաքսանենգի ճակատին դնելիս սկսեց մտածել՝ ինչպիսի մարդու է օգնում: Ոչ մի կասկած չուներ՝ բոլորը կյանքի իրավունք ունեին, բայց բոլո՞րն էին արժանի մահից դառնալուն: Երբեմն մտածում էր այդ երկընտրանքի մասին, որը հստակ լուծում

թվայնացրել է 1915.info կայքը

չուներ. մարդիկ ի ծնե լա՞վն էին լինում, աշխա՞րհն էր նրանց փչացնում: Թե՞ դեռ մոր արգանդում վատության սերմով էին մեծանում: Ղուրանն ասում է՝ բոլորս արյան թանձրուկից ենք ստեղծվել: Ջեմիլեն ուզում էր իմանալ՝ մեր ներկայի բնավորությունը արդյոք կա՞ր այդ փոքր կաթիլի մեջ: Մարգարիտը որքան էլ պարզ ու կատարյալ լինի, ոստրեի կաղապարից ներս ընկած փոշուց է առաջանում: Այսինքն՝ այդ աննշան մարմինը կարող է հիանալի արարածի վերածվել:

Գիրկն առած ամեն նորածին երեխայի փոքրիկ ոտքերի մատներին, վարդի պես շուրթերին, կոճակ քթին նայելիս մտածում էր, որ այդ կատարյալ արարածը միայն լավը կարող է լինել: Մյուս կողմից հասկանում էր՝ երեխաների մի մասը, ում ինքն է օգնել լույս աշխարհ գալ, մեծանալու էին ու խաբեբա, սուտասան, ավազակ, բռնաբարող, անգամ մարդասպան էին դառնալու: Եթե իմանար՝ որ երեխան ինչ է դառնալու, չէ՞ր օգնի նրանցից ոմանց ծնունդին: Իբրահիմ մարգարեի պատմությունը հիշեց:

Մի օր Բերզոն ութ աղջիկներին վերցրել, Ուրֆայի Բալըքլը լիճն էր տարել: Նազեն արդեն բավական մեծ էր, բայց նորից հղի էր, նրանք էլ ընտանիքով գնացել էին աղոթելու, որ գոնե այդ անգամ տղա ունենան: Մարդիկ շատ էին՝ աղոթողներ, արտասվողներ: Տեսարանից զարմացած աղջիկները մոտեցել էին իրար, վախեցած էին ու ոգևորված: Ձկներին ուտելիք էին նետում: Պատին՝ շրջանակի մեջ, Քաբեի նկարն էր կախած: Գիշերը Ջեմիլեն կլանված նայում էր՝ ինչպես են ձկները դեպի Քաբե լողում: Վերադարձի ճանապարհին հայրը այդ սուրբ լճի հետ կապված լեգենդն էր պատմել:

Նեմրութ արքան շատ խիստ էր: Օրերից մի օր նրա գլխավոր գուշակը ասում է՝ Իբրահիմ անունով մի

թվայնացրել է 1915.info կայքը

երեխա է ծնվելու, ու նրա արքայության վերջը գալու է: Նեմրութը, որ մտադրություն չուներ գահից հրաժարվելու, հրամայում է թագավորությունում ծնված բոլոր տղա երեխաներին սպանել: Առանց հարուստ-աղքատ տարբերակելու: Այդպիսով, տատմերերը գործի են անցնում: Նախ օգնում են ծննդկանին, հետո տղա երեխաներին խեղդում են: Բայց Իբրահիմի մայրը կարողանում է փախչել այդ սարսափից: Մի քարանձավում միայնակ է ծննդաբերում:

Իբրահիմը մեծանում և ապստամբում է անխիղճ Նեմրութի դեմ: Արքան զայրույթից խենթանում է: Երիտասարդներին հրամայում է փայտ հավաքել, որ մի քանի օր շարունակ կրակ վառեն: Հետո հրամայում է Իբրահիմին կրակը նետել: Երբ կրակը չորս կողմից պատում է մարգարեին, նրա հետևորդները ընկնում են գետնին, արտասվում, բղավում: Բայց միայն Իբրահիմի ճերմակած մի փունջ մազն է այրվում, ուրիշ ոչինչ. քայլելով դուրս է գալիս կրակի միջից: Աստված կրակը՝ ջրի, այրվող կտորները ձկների է վերածում: Ուրֆայի սուրբ լիճն ու ձկներն այդպես էին առաջացել:

Բերզոն այդ ամենը պատմելիս ուրիշ մարդ էր՝ կարծես հայացքը խիստ չէր, ժպիտն էլ՝ անկեղծ: Ամեն ինչի կործանվելուց առաջ էր: Ամեն ինչի՝ մեկ առ մեկ կործանվելուց առաջ:

Բայց Ջեմիլեն կյանքից չէր բողոքում: Ի սկզբանե գիտեր՝ քույրերի պես ամուսնանալ, երեխաներ ունենալն իր համար չէր: Փեմբեի ու Ադեմի գնալուց հետո հորը համոզեց իրեն չամուսնացնել, այլ շրջակայքի տատմերերի մոտ ուղարկել՝ որպես օգնական:

Բերզոն, մտածելով, որ դա ժամանակավոր ցանկություն է, համաձայնել էր: Բայց Ջեմիլեի համար հստակ որոշում էր: Այսօր միայն տխրում էր, որ չէր կարող բժիշկ

թվայնացրել է 1915.info կայքը

դառնալ: Ուզում էր հիվանդանոցում աշխատել, կրծքին «Բժշկուհի Զեմիլե Եթեր» գրությամբ ճեպ-ճերմակ խալաթ հագնել:

Երկու սոխ օղակներով կտրեց, քաթանի կտորներով կապեց հիվանդի ներբաններին: Ճակատին դրած թաց սրբիչներն ամբողջ գիշեր շարունակեց հաճախակի փոխել:

Առավոտյան սրտի բաբախոցով արթնացավ: Ստուգեց մաքսանենգի ջերմությունը: Գրեթե իջել էր. ուրեմն փրկվեց:

Արդեն լուսաբաց էր. խաղաղ առավոտ էր սկսվել: Ցավող տեղերը մերսելով՝ վեր կացավ ու մի բաժակ սառը ջուր խմեց Զեմիլեն: Լուռ վառեց վառարանը, սկսեց նախաճաշ պատրաստել: Մի կտոր կարագ տաքացրեց, երեք ձու կոտրեց, մի քիչ աղ ու բիբար ավելացրեց: Այնքան էլ լավ չէր եփում: Հիմնականում պարզ ուտելիքներով էր բավարարվում: Ոչ մեկի համար չէր պատրաստում, դրա համար չէր զարգացնում հմտությունները:

– Ի՜նչ լավ հոտ է: Ի՞նչ ես սարքում:

Զեմիլեն վեր թռավ: Մաքսանենգը նստել էր անկողնում, մազերը խառն էին, դեղնադարչնագույն մորուքը երկարել էր:

– Բան չէ, ձու:

Մարդը այնպիսի ձայն հանեց, որ նշանակում էր՝ հավանում է:

– Դո՞ւ ով ես:

– Զեմիլեն եմ՝ տատմեր:

– Ծննդաբերելո՞ւ եմ, հա՞,– ծիծաղելով ասաց նա, բայց անմիջապես դեմքի արտահայտությունը փոխվեց:– Ի՞նչ գործ ունեմ այստեղ,– ասաց նա մեղադրողի պես:

– Կրակել են վրադ: Հրաշքով ես փրկվել: Մի շաբաթ է՝ այստեղ ես: Ա՛ռ, մի քիչ թե՛յ խմիր:

թվայնացրել է 1915.info կայքը

Մի կում խմելն ու թքելը մեկ եղավ:

– Էս ի՞նչ է, տո՛: Ձիու մեզի նման է:

– Բուժիչ է,– ասաց Ջեմիլեն՝ փորձելով իրեն հանգիստ պահել:– Եթե խմես, լավ կլինի: Ու էլ չթքես իմ տանը:

– Կներես,– խռխռոցով ասաց նա:– Ուրեմն կյանքս փրկել ես: Դե ասա՝ պարտական ենք քեզ:

– Աստծուն պարտական եղիր: Նա է փրկում կյանքերը:

Այդ մտքից մարդը դեմքը ծամածռեց: Որոշ ժամանակ լռեց.

– Լսի՛ր, տատմե՛ր կին, ծխախոտ ունե՞ս:

– Ծխախո՞տ,– հարցրեց Ջեմիլեն:– Ձես կարող ծխել:

– Դե լավ, մի ֆըրթ:

Ջեմիլեն մի պահ հապաղելուց հետո հանեց թութունի քսակն ու ծխախոտի թուղթը: Մինչ նա փաթաթում էր, տղամարդը կնոջ ձեռքերին էր նայում կոշտ, չոր ու կարմիր էին, մաշկը պլոկվել էր, ափերը փայտ կոտրելուց կոշտուկներով էին ծածկվել:

– Տարօրինակ կին ես,– ասաց նա:

– Այդպես են ասում:

– Ինչպե՞ս ես մենակ ապրում: Քեզ պաշտպանող տղամարդ է պետք:

– Կնոջդ կողքին հիմա պաշտպանող տղամարդ կա՞: Հաստատ ինձ պես նա էլ է մենակ: Կան կանայք՝ ամուսնացած են, բայց մենակ են: Ոմանք էլ ինձ պես՝ չամուսնացած ու մենակ:

Մաքսանենգը կեսկատակ հայացքով ժպտաց:

– Ես կամուսնանամ հետդ: Կինս ձայն չի հանի: Ընկեր կլինեք իրար:

Ջեմիլեն ծխախոտը վառեց ու մի հատ ծխեց, ծուխը դուրս փչեց: Ձուզելով մեկնեց նրան՝ ուշադրություն չդարձնելով, որ նրա մատների ծայրին դիպավ:

թվայնացրել է 1915.info կայքը

– Շնորհակալ եմ, շատ սիրալիր ես, բայց ես գոհ եմ իմ կյանքից:

Տղամարդը զննեց նրան, ոչինչ չասաց: Հետո, երբ ծուխը դուրս էր գալիս քթից, խոսեց.

– Սահմանն անցնելուց չորս հոգի էինք: Ասե՞լ են՝ մյուսին ի՞նչ է եղել:

Ջեմիլեն գլուխն օրորեց՝ վստահ չէր, որ ուզում էր իմանալ:

– Ականի վրա է կանգնել: Ամենավատ բանն է, հա՛: Ո՛չ փամփուշտից, ո՛չ էլ բանտից այդքան չեմ վախենում, ինչքան ականից: Բայց ինձ բան չի լինի: Մի կտոր եմ լինելու գերեզման մտնելիս: Բոլոր օրգաններս ամբողջական են լինելու ու սարքին:

Ջեմիլեն չիմացավ ինչ ասել ու թեման փոխեց.

– Երեխաներ ունե՞ս:

– Երեք տղա: Մեկն էլ ճանապարհին է: Նա էլ տղա կլինի, ինշալլա՛հ:

– Աղջիկ չկա՞:

– Կա: Չորսը,– ասաց նա՝ հազալով ու դեմքը ծամածռելով:– Պետք է գնամ, անհանգստացած կլինեն:

– Նրանց ուժեղ ու առողջ ես պետք, ոչ թե վիրավոր: Մի քիչ հանգստացի՛ր, կգնաս:

– Հիշեցի,– ասաց մարդը:– Լսել էի, որ քո մասին են խոսում:

Ջեմիլեն պահարանից կլոր պղնձե սկուտեղ հանեց: Բազլաման[1], թեյը ու ճտճտացող ձվով թավան դրեց սկուտեղի վրա: Դանդաղ տարավ տղամարդու մոտ:

– Ջիների ցեղից ամուսին ունես, անլուսին գիշերներին քեզ այցի է գալիս: Այս գաղտնի բաղադրատոմսերը նա է տալիս քեզ:

---

[1] Լոշիկի նման հացի տեսակ:

թվայնացրել է 1915.info կայքը

– Ջիների ցեղից ամուսի՞ն:

Ջեմիլեն ակամայից ծիծաղեց:

– Վախենամ՝ բոլորի պես ես էլ եմ մարդ: Իմ կյանքն ավելի ձանձրալի է, քան պատկերացնում ես:

Այդ բառերն ասելուն պես զղջաց: Ավելի լավ կլիներ, որ այդ մարդը մտածեր՝ ինքը արտասովոր էակ է: Պետք չէ ցույց տալ, որ մարդկային ես, մահկանացու ես, փխրուն ես: Ո՛չ նրա, ո՛չ էլ ուրիշ մեկի առաջ:

Եթե իմանային՝ սիրտը ապակուց է, հաստատ կկոտրեին:

թվայնացրել է 1915.info կայքը

Յունուս

5 մայիսի, 1978
Լոնդոն

Երբ օկուպատներին ձերբակալեցին, ոստիկանությունը Տոբիկոյին բաժին տարավ: Ազատ արձակվելուց հետո երկար ժամանակ լուր չկար: Ոչ ոք չգիտեր՝ ուր է գնացել: Անհանգստացած Յունուսը թակել էր նրանց հարևանի դուռը: Մի տարեց մարդ դուռը բացել, նայել էր շղթայի հետևից:

– Կներեք, պարո՞ն: Ընկերոջս եմ փնտրում: Սև մազերով, դաջվածքներով աղջիկ է: Այստեղի տանն էր ապրում:

– Խելառների տա՞նը:

– Ը՛ը... բանը...– Յունուսը չիմացավ ինչ ասել:

– Սև մազերով, դաջվածքներով աղջիկ չեմ տեսել: Չեմ էլ ուզում տեսնել: Հուսամ՝ էլ ոչ ոք չի գա,– ասաց նա:– Ռադ եղան, գնացին, մենք էլ ազատվեցինք:

Դուռը ուժեղ փակեց:

Յունուսը, հասկանալով, որ իրեն ոչ ոք չի օգնելու, որոշեց ինքը փնտրել Տոբիկոյին: Հեծանիվով փողոց-փողոց շրջելով՝ Տոբիկոյին հիշեցնող կանանց հետևից գնալով՝ շուկաներ, խանութներ, լվացքատներ գնաց:

Այդ օրը, երբ մտացրիվ շրջվեց դեպի «Ռիո» կինոթատրոն, անկյուն, հույս ուներ Տոբիկոյին գտնել: Բայց քնատ աչքերը ծաղկավաճառի խանութի առաջ մեջքն իրեն դարձրած մի զույգի նկատեցին:

թվայնացրել է 1915.info կայքը

Չգիտեր՝ ինչն է իրեն ստիպում նայել, բայց հայացքը չէր կարողանում կտրել: Տղամարդը ձգվեց ու հպվեց կնոջ դաստակին սիրով, թեթևակի: Կնոջ նուրբ մարմինը թեքվել էր տղամարդու կողմը, կարծես ամեն պահ ուզում էր գլուխը նրա ուսին դնել: Յունուսը հանկարծ ստամոքսի ցավ զգաց, ականջների մեջ զնգոց էր լսվում: Կնոջ դարչնագույն մազերը, կարճաթև, դեղին կոճակներով, կանաչ զգեստը, իրանի, թևի հաճելի ու քաղաքավարի շարժումը... Ամենը որքան ծանոթ էր: Սրտի զարկերն արագացան: Գունատվեց: Շուրթերը ձգվել էին:

Տղամարդը կնոջ ականջին ինչ-որ բան շշնջաց: Կարծես պատահական, չուզելով, ամաչեցնող այդ կարճ, արագ հպմանն ի պատասխան՝ մի քիչ թեքվեց ու ժպտաց կինը: Աջ այտի փոսիկը երևաց: Մայրն էր:

Յունուսը հեծանիվը հակառակ ուղղությամբ շրջեց ու սեղմեց ոտնակներին: Շոկի ու խուճապի շերտերի ներքո՝ ուղեղը կրծող հարցեր կային, բայց մորը նախկինում երբեք այդքան ուրախ, այդքան երիտասարդ չէր տեսել: Քիչ առաջ տեսած կինը մայրն էր, բայց այնքան տարբեր էր նրանից: Կարծես երջանկության լուսապսակի տակ էր ու իր գնած երիցուկների պես փայլում էր:

Այդ երեկո, երբ գնաց տուն, Յունուսը կարծես մեղրամոմից լիներ՝ գունատ էր ու հոգնած: Իսքենդերն ու Էսման նրան նմանեցրին մադամ Տյուսոյի արձաններին ու ծաղրեցին: Փեմբեն, անհանգստանալով, որ ստամոքսը վատացել է, անանուխի ու կիտրոնի թեյ փորձեց խմեցնել: Բայց Յունուսը, մերժելով նրանց բոլոր փորձերը, շուտ գնաց քնելու:

Երբ առավոտյան արթնացավ, տեսավ՝ նորից տակն է արել:

թվայնացրել է 1915.info կայքը

ՆԱ ՔՈ ԵՂԲԱՅՐՆ Է

Էսմա

12 մայիսի, 1978
Լոնդոն

Երեկոյան Թարըք հորեղբայրն ու Մերալ հորեղբորկինը երեխաների հետ հյուր էին եկել: Ընթրիքից հետո միասին սերիալ դիտեցին, միրգ կերան: Մերալ հորեղբորկնոջ՝ դերասանների մասին անիմաստ մեկնաբանությունները չհաշված՝ գրեթե ոչ ոք չէր խոսում:

Հոր բացակայությունն այդ պահերին ավելի էր զգացվում: Նրա մասին խոսելն էլ էր տարօրինակ, չխոսելն էլ:

Ուշ ժամի, երբ հյուրերը գնացին, տնեցիները պառկեցին քնելու, Էսման նորից փակվեց բաղնիքում: Նոր էր կանգնել հայելու առաջ, իրեն էր նայում, երբ դուռը թակեցին:

– Զբաղված է,– ասաց նա:

Ամաչկոտ, բայց համառ թակոցը նորից լսվեց: Բացեց, նայեց, Յունուսն էր գծավոր գիշերազգեստով:

– Ի՞նչ ես անում այստեղ այս ժամին:

– Չիշիկ ունեմ:

Էսման տեսավ թևատակին դրած սավանը:

– Էլի թրջե՞լ ես տակդ:

Յունուսն աչքերը փախցրեց: Կարճ լռություն տիրեց:

– Լավ, ավելի լավ է, սավանը թող: Ես մի բան կանեմ:

թվայնացրել է 1915.info կայքը

Մի պահ վարանելուց հետո ամաչկոտ, շնորհակալ Յունուսը իր մեղքի վկայությունը մեկնեց նրան: Էման կարծեց՝ սենյակ է վերադառնալու, բայց կիսաբաց դռան մոտ կանգնած՝ նայում էր:

– Ինչո՞ւ ես տակդ անում,– հոգնած ասաց Էման:

Խոշոր, անմեղ աչքերին, մեծ ականջներին նայեց ու ժպտաց:

– Չե՞ս ջղայնանում, չէ՞, պուճո՛ւր: Չէի ուզում նեղացնել քեզ:

– Չեմ ջղայնանում: Մի քիչ տխուր եմ:

– Վայ, ինչո՞ւ:

– Չեմ կարող ասել,– անհանգիստ ասաց Յունուսը:– Գաղտնիք է:

– Ի՛նձ նայիր, գաղտնիք պահելը դժվար գործ է: Միդաս արքային գիտե՞ս:

– Ո՛չ, ո՞վ է:

Էման պատմեց մեծ ականջները թաքցնելու համար միշտ գլխարկ կրող արքայի պատմությունը: Միայն նրա վարսավիրը գիտեր դրա մասին, նա էլ խոստացել էր ոչ ոքի չպատմել: Բայց գնացել ու լճի ափին եղեգնուտին էր պատմել: Այդ ժամանակ մեկը եղեգնից շվի էր պատրաստում: Երբ շվիները սկսեցին նվագել, բոլորը իմացան, որ արքայի ականջները էշի ականջների չափ երկար են:

– Այսինքն՝ գաղտնիքը ոչ ոքի չպատմեք, հա՞,– ասաց Յունուսը, երբ պատմությունն ավարտեց:

– Եթե կարևոր խնդիր է, ավելի լավ կլինի՝ քեզ պահես: Ոչ ոքի մի՛ վստահիր:

Տղան տխուր նայեց քրոջը: Շրջվեց ու կորավ միջանցքում:

Հետևից նայելիս Էմայի սիրտը կասկած ընկավ: Երևի իր քթի տակ ինչ-որ բան էր տեղի ունենում, իսկ ինքն անտեղյակ էր:

թվայնացրել է 1915.info կայքը

Տարիներ անց նորից ու նորից մտածելու էր այդ պահի մասին: Երանի հնարավոր լիներ ժամանակը վերադարձնել: Գոնե շրջադարձային պահերը: Եթե այդ գիշեր այլ կերպ պահեր իրեն, Յունուսին լռեցնելու փոխարեն ուշադիր լսեր, գուցե սթափվեր, մինչև փորձանքը մորը զգուշացներ, կարողանար ընտանիքը պաշտպանել: Այդ ժամանակ ոչ ոք չէր մահանա, ոչ էլ Իսքենդերը բանտ կընկներ:

թվայնացրել է 1915.info կայքը

Ջեմիլե

22 մայիսի, 1978
Եփրատի ափին մի գյուղ

Երեկոյին մոտ փայտ հավաքելու համար Ջեմիլեն տնից դուրս եկավ: Վերադարձի ճանապարհին ժայռին նստեց, հանեց գոտու մեջ թաքցրած նամակը: Նորից կարդաց.

«Ջեմիլե՛ս, սիրելի՛ քույրս

Քանի տարի է՝ քեզ նամակ եմ գրում: Լավ-վատ, ամեն ինչ կիսում եմ հեպդ: Բայց այս անգամ ուրիշ է: Չեմ կարող ասել՝ ինչ դժվարությամբ եմ գրում: Բայց քեզ միշտ ճիշտն եմ ասել: Հիմա էլ եմ ճիշտը ասելու:

Մեկի հետ եմ ծանոթացել: Ի՞նչ կլինի, միանգամից հոնքերդ մի՛ կիտիր: Խնդրում եմ, մի՛ ջղայնացիր, ամոթանք մի՛ տուր: Ես ամեն օր, ամեն րոպե ինձ ուտում եմ, հավատա՛: Սիրտս կտոր-կտոր է լինում: Քեզնից բացի՝ ոչ ոքի չեմ պատմել, չեմ կարող պատմել: Մերոնք չգիտեն: Վախից, մտածմունքից խենթանում եմ: Բայց մյուս կողմից էլ սիրով ու հույսով լի եմ: Ինչ տարօրինակ է, չէ՞:

Ինչքան ժամանակ է, որ սիրտս չորացել է: Արևի տակ թողած մաշկի կտորի նման է: Ասել եմ՝ քեզնից ու երեխաներից բացի՝ ոչ ոքի չեմ կարող սիրել, վստահ եմ: Հատկապես տղամարդու՝ երբեք: Բայց սխալ մի՛ հասկացիր: Այդպես չի, ինչպես կարծում ես: Նա ինձ անգամ մատով

թվայնացրել է 1915.info կայքը

չի դիպել: Ընկեր է եղել ինձ համար, օրար երկրում ընկեր: Այնքան մենակ եմ այստեղ, միայն իմանաս:

Գիտե՞ս, խոհարար է: Քեզ նման՝ խոտերի, համեմունքների լեզուն է հասկանում: Լոնդոնի փողոցներում մարդիկ ցույց են անում: Բոլորը բոլորի վրա զայրացած են: Բացի նրանից: Ասում է՝ ուտելիք պատրաստելը համբերել իմացողների բանն է: Շատ է ճանապարհորդել: Կրիայի նման տունը մեջքին է կրում: Նա էլ է ինձ պես օրարական:

Գիտեմ՝ զայրացար ինձ վրա, նեղացար: Գիտեմ՝ եթե լսեն, որ այս մարդուն եմ հանդիպում, հեգևից ինչեր կասեն: Հոս եմ հիշում, որ ասում էր. «Եթե աղջիկներից մեկը մեր անունը սևացնի, ավելի լավ է՝ մարմինը եփրատում լող տա»: Երբ Հեդիյեն փախավ, այդպես էր ասել, հիշո՞ւմ ես:

Ասա՛ ինձ, իմ Ջեմիլե, ի՞նչ վատ բան կա դրանում: Ո՞ւմ է վնաս տալիս: Ու ինչպե՞ս կարող է մարդ սրտին խոսք հասկացնել: Այդքան ժամանակ է՝ կույր էի, աչքերս բացվել են, իսկ հիմա լույսից եմ վախենում: Եթե ուզում ես մի բա՛ն ասա, քո նախատինքն ինձ համար վարդ է, կշտամբանքդ՝ մանուշակ: Զայրացի՛ր ինձ վրա, կընդունեմ, միայն թե սիրի՛ր: Մի՛շտ սիրիր: Հավիտյան...

Քո քույր, քեզ համար միշտ աղոթող՝

Փեմբե»:

Նամակը ծալելիս Ջեմիլեն մտածեց՝ ո՞վ է այդ մարդը: Որտեղի՞ց: Ճիշտ չէ, որ ամուսնացած կինը տղամարդու հետ հանդիպի, անգամ պարզ նպատակով, ընկերության համար: Գուցե Ադեմի համար միևնույն էր, բայց Փեմբեի հետևից խոսելու առիթ փնտրողները վաղուց կազմ ու պատրաստ էին: Հանկարծ Ջեմիլեի սիրտը կասկած ընկավ. իսկ եթե Փեմբեն սիրահարվե՞լ է: Կանե՞ր նման

թվայնացրել է 1915.info կայքը

մեծ սխալ: Ասենք թե Ադեմը թողել-գնացել է, խոհարարը կամուսնանա՞ր նրա հետ: Անհայրենիք մարդուն վստահել կլինե՞ր: Այն էլ՝ օտարին:

Մտածելիս ոտուձեռքը սառեց: Քույրն ասում էր՝ մեր միջև ոչինչ չկա, օտար երկրում ընկեր է, մարդիկ, միևնույն է, բամբասելու էին: Պետք է Փեմբեին մոտալուտ վտանգից պաշտպաներ:

Այդ մասին մտածելով՝ հասավ տուն, մեծ կապով չոր ճյուղերը մեջքին՝ ներս մտավ: Բեռը դրեց վառարանի կողքին: Աչքի պոչով նայելիս նկատեց՝ հիվանդը չկար: Ժպտաց ու շուրջը նայեց: Հանկարծ տեսավ նրան՝ հրացանը ձեռքին:

– Ջեմիլե՛ հաթուն, արի՛, է... Կարծես թե գաղտնիքներդ շատ են,– ասաց տղամարդը՝ զենքը ուղղելով նրան:– Տեսնենք՝ ինչ ես թաքցնում:

– Ի՞նչ պետք է թաքցնեմ: Ես տատմեր եմ: Փողն ինձ որտեղի՞ց:

– Դե, տեսնենք: Ինձ նկուղ իջեցրո՛ւ, տեսնեմ:

– Ո՞ւո՛ւուր,– կմկմաց Ջեմիլեն. որտեղի՞ց գիտեր նկուղի մասին:– Ոչինչ չկա: Մանր-մունր բաներ են:

– Մանր-մունրը լավ է,– ասաց նա:– Դե, ցո՛ւյց տուր:

Հրամաններ ստանալուն անսովոր Ջեմիլեի մարմինը լարվեց, դիմադրեց:

– Քայլի՛ր, թե չէ գլուխդ կթռցնեմ, կգցեմ շներին,– ֆսսացրեց մարդը:

Ջեմիլեն ստիպված գորգը մի կողմ հրեց, դուռը բացեց, մի քայլ հետ գնաց, որ կարողանա ներս նայել:

– Ո՛չ,– ասաց նա:– Միասին ենք իջնելու: Առա՛ջ ընկիր:

Ջեմիլեն առջևից, տղամարդը հետևից՝ աստիճաններով ներքև իջան:

– Ֆու, սա ի՞նչ է,– ասաց տղամարդը առաջին աստիճաններն իջնելիս:

թվայնացրել է 1915.info կայքը

Տարիներ է՝ առաջին անգամ էր Ջեմիլեն զգում հոտը. սուր, համեմունքներով, շշմեցնող հոտը ներծծվել էր ամբողջ սենյակում: Տղամարդը կասկածով զննում էր սենյակը:

– Վայ, ինչ տարօրինակ բաներ կան,– մռթմռթաց նա:– Այդպես էլ գիտեի: Ասում էի՝ վհուկի մեկն ես: Ասա՛ տեսնեմ՝ գանձը որտե՞ղ ես թաքցնում:

– Միայն խոտեր ու դեղեր են: Սպեղանի, քսուքներ: Քեզ ես եմ ոտքի կանգնեցրել, մոռացա՞ր:

– Բա ասում եք՝ միայն Աստված կարող է բուժել,– ընդդիմացավ մարդը: Հետո հանկարծ հրացանի պոչով հրեց Ջեմիլեին:– Իսկապես ոչ մի տղամարդ քեզ չի՞ դիպել: Ի՜նչ ափսոս: Էս գործը վերջացնենք, մի հատ համիդ նայենք, հա՞, Աղջի՛կ Տատմեր:

Անամոթաբար սկսեց իրերը խառնել: Շշերը դատարկում, տարաները բացում, ամեն ինչ կոտրում-թափում էր: Ջեմիլեի սիրտը արագ զարկում էր: Ալմաստ Հարճն այնտեղ՝ դարակի վրա, տուփի մեջ քնած էր: Մարդն արդեն մոտեցել էր Ալմաստին, երբ Ջեմիլեն մի քայլ արեց:

– Արի՛ վերև գնանք:

– Ի՞նչ կա վերևում:

– Ուտելիք կարքեմ քեզ համար, ոտքերդ կլվանամ:

Խոսքերը դանակի պես կտրեցին-անցան օդը: Մաքսանենգը կանգ առավ:

– Կարծում ես՝ հիմա՞ր եմ:

Ջեմիլեն խուճապի մատնվեց:

– Ո՛չ, իհարկե ոչ: Դու խելացի մարդ ես:

– Որպես ի՞նչ ես հիմա լավ վերաբերվում ինձ: Ի՞նչ եղավ հանկարծ:

Ջեմիլեն զգաց իր սխալը: Ակամայից աչքերը սահեցին դարակի կողմը: Հայացքին հետևող մաքսանենգի համար երկար չտևեց ալմաստը գտնելը:

թվայնացրել է 1915.info կայքը

– Վա՛յ, քո ինչն եմ ասել, հիմա՛ր կին: Դրա՞ն տես: Սա գանձ է: Որտեղի՞ց ես գողացել:

– Նվեր է,– կոտրված ասաց Ջեմիլեն:

– Հեքիաթ մի՛ պատմիր,– ասաց նա ալմաստը գրպանը գցելիս:– Շարժվի՛ր, տեսնեմ: Վերև ենք բարձրանում: Դու առջևի՛ց գնա: Եթե փորձես մի բան անել, կզղջաս:

Ջեմիլեն մի քայլ էր արել դեպի աստիճանը, երբ հրացանի պոչով մարդը հարվածեց գլխին: Ընկնելիս ճակատը հարվածեց երկաթե աստիճանին ու ուշաթափվեց: Բայց ժամեր անց ուշքի եկավ: Գլուխը պտտվում էր, սիրտը խառնում էր: Քունքերի ցավն այնքան ուժեղ էր, որ չէր համարձակվում աչքերը բացել: Հիվանդ կատվի ձագի պես սողաց գետնին: Որոշ ժամանակ անց ոտքի կանգնեց, սպասեց, որ աչքերը սովորեն մթությանը: Նկուղն այնպես էր տակնուվրա եղել, ասես սովածծարավ բանակի հարձակմանն էր ենթարկվել: Տեսավ շրջված սադափե տուփը: Ժամանակ չէր եղել մաքսանենգին ալմաստի լեգենդը պատմելու: Չգիտեր, որ այն անիծված է: Ոչ ոք չէր կարող այն յուրացնել, ոչ ոք ուժով չէր կարող վերցնել:

Ամեն քայլի հետ դեմքը ցավով ծամածռելով՝ մագլցեց վերև: Երբ հասավ վերևի հարկ, տեսավ, որ դուռը բաց է: Հովտից ո՛չ ճռճռոց, ո՛չ քամու ձայն չէր գալիս: Այս լռության մեջ հանկարծ ամեն ինչ սպառնալից թվաց նրան: Այդքան տարի իրեն սնած հողը հիմա լի էր թակարդներով՝ կարիճներով, միջատներով, գողերով... Սկսեց արտասվել: Օրվա մնացած մասը սպանող դանդաղությամբ անցավ: Դուրս չեկավ: Նամազ չարեց: Ոչինչ չկերավ: Մի բաժակ ջուրը ձեռքին՝ նստեց թախտին, նստած մնաց: Դրսում արևը սկսեց մայր մտնել:

Երկար ժամանակ անց ձայներ լսվեցին: Տղամարդիկ, ձիեր, շներ: Ափերով սրբեց արցունքները, մատների

թվայնացրել է 1915.info կայքը

կոշտուկների կոպտությունը զգաց: Փնտրեց հրացանը, բայց չգտավ: Տղամարդը հրացանն էլ էր վերցրել: Մի ճյուղ վերցրեց, բայց ձեռքերը դողում էին, ուժահատ էր: Ճյուղը թողնելով՝ ուղղվեց դեպի դուռը. պատրաստ էր ընդունել իր ճակատագիրը:

Աղջամուղջի միջից չորս ձիավոր երևաց: Նրանցից մեկը, ձիուց իջնելով, մոտեցավ Ջեմիլեին: Մաքսանենգների գլխավորն էր. անմիջապես ճանաչեց նրան: Այն մարդն էր, ում մեկուկես երեխայի ծնունդին էր օգնել: Վիրավորին էլ էր նա բերել:

– Ջեմիլե՛... Քույրի՛կ: Կարո՞ղ եմ ներս գալ:

Առանց մի բան ասելու՝ մի կողմ քաշվեց Ջեմիլեն ու նրան ներս թողեց: Տղամարդը նայեց նրա ճակատի կապտուկին, ուռած աչքերին:

– Երկար չենք մնալու: Շատ նեղություն տվեցինք: Եկել եմ ներողություն խնդրելու: Նա քո գթությանն արժանի չէր:

– Հիմա որտե՞ղ է:

– Էլ քեզ չի վնասի, չանհանգստանաս:

– Անունն ի՞նչ էր: Անունն էլ չգիտեմ:

– Հարուն,– ասաց նա:– Գերեզմանին այդպես կգրեն:

Մի քանի վայրկյան տևեց, մինչև հասկացավ: Շունչը կտրվեց:

– Ի՞նչ:

Բայց մարդը պատասխանելու փոխարեն շալվարի գրպանից երկու մետաքսե քսակ հանեց՝ մեկը՝ կարմիր, մյուսը՝ սև: Խնդրեց, որ Ջեմիլեն ձեռքերը մեկնի, որոշ ժամանակ նայեց աչքերի մեջ: Հետո կարմիր քսակը դրեց ձախ ափի մեջ, սևը՝ աջ ափի մեջ:

– Քեզ համար եմ բերել,– ասաց նա:– Ինձնից նվեր է:

Եվ առանց Ջեմիլեի պատասխանին սպասելու՝ գնաց:

Ջեմիլեն վախով բացեց կարմիր քսակը: Ալմաստ Հարճն էր: Հետո մյուս քսակը բացեց: Մեջը մի զույգ

թվայնացրել է 1915.info կայքը

ականջ էր: Խեղճ, տխուր, արյունոտ: Միայն այդ ժամանակ հասկացավ՝ երկու քսակը նույն կտորից էին: Մյուսի գույնն արյունից էր: Ու դրանք մաքսանենգ Հարունի ականջներն էին: Մարմինը կարողացել էր ականից փրկել, բայց բոլոր օրգանները տեղը չէր հանձնվելու հողին:

Ջեմիլեն հանկարծ դուրս թռավ: Մի պահ վախեցավ, որ մաքսանենգների գլխավորը գնացել է: Բայց հետո արահետի վրա տեսավ նրան ու նրա մարդկանց:

– Սպասի՛ր, սպասի՛ր,– բղավեց Ջեմիլեն խեղդված ձայնով:

Գլխավորը քաշեց ձիու սանձերը: Նրա մարդիկ էլ: Նրանց հասնելուն պես Ջեմիլեն կանգնեց, չիմացավ ինչ ասել: Մազերն ականջի հետևը գցեց ու գլխաշորն ուղղեց:

– Քո օգնության կարիքն ունեմ,– ասաց նա:

– Ասա՛ տեսնեմ:

– Անգլիա՝ քրոջս մոտ եմ ուզում գնալ: Իմ կարիքն ունի:

Մարդիկ իրար նայեցին:

– Ո՛չ անձնագիր ունեմ, ո՛չ փող: Ուրիշ ճանապարհով պետք է լուծել, ձեր ձևերով:

Ջեմիլեն ափը բացեց:

– Ալմաստ Հարճին սրտիս ուզածով ուրիշին տալու իրավունք ունեմ: Ում որ սիրտս է ընտրել: Ես քեզ եմ ընտրում: Հարուստ կլինես՝ դժբախտություն չի բերում, երդումս քեզ:

– Քեզ արտասահման տանելու համար ալմա՞ստ ես առաջարկում:

– Այո՛:

Գլխավորը հոնքերը կիտեց, թավ բեղերի ծայրերը քաշքշելով՝ մի պահ մտածեց:

թվայնացրել է 1915.info կայքը

– Հեշտ չի: Սիրիա գնալու պես չի:

– Բայց հիմա այդ գործերն անողներ կան: Ահմեդի տղային հիշո՞ւմ ես: Նա չգնա՞ց: Ո՞ր երկիրն էր: Շվեյցարիա՞: Բեռնատարի մեջ էր թաքնվել, չէ՞: Մի ձևով ստացվել էր:

Բառերն իրար հետևից թափվում էին բերանից: Անհայտ ու անսանձ շտապողականությամբ, հոգու խորքերից եկող շտապողականությամբ էր խոսում: Գլխավորն առանց շարժվելու լսեց: Ջեմիլեն նրա փոս ընկած աչքերում խառը բաներ տեսավ՝ հիացմունք, գութ ու գաղտնի սեր:

– Հնարավոր ամեն ինչ կանեմ,– ասաց նա:– Եթե ճակատագիր է, ուրեմն կստացվի:

– Վերցրո՛ւ: Աստված քեզ հետ,– ասաց Ջեմիլեն՝ ալմաստը նրան մեկնելով:

Այդ պահին մարդը գլուխը մյուս կողմ թեքեց, կարծես ոչ թե Ջեմիլեի, այլ քամու հետ էր խոսում: Խեղդված ձայնով ասաց.

– Թող քեզ մոտ մնա: Քոնը՝ քեզ:

Գլուխը թեքելով՝ կրունկով թեթև հարվածեց ձիու կողքին: Նրա մարդիկ հետևեցին նրան:

Ջեմիլեն նայեց նրանց հետևից. պայտերի բարձրացրած փոշու ամպը տխուր հուշի պես տարածվեց չորս կողմը:

թվայնացրել է 1915.info կայքը

Իսքենդեր

17 հունիսի, 1978
Լոնդոն

Այդ շաբաթ օրը Իսքենդերը բռնցքամարտի դասի չգնաց: Քեյթին չհանդիպեց: Ուրիշ պլաններ ուներ: Առավոտյան ժամը ինն անց տասին դուրս եկավ տնից: Գոլ քամին շոյում էր դեմքը: Բաճկոնի օձիքը բարձրացրեց ու տեմպով քայլեց: Հավատում էր՝ տղամարդու քայլվածքը նրա մասին շատ բան է ասում. քայլերից կարելի էր հասկանալ թերությունները, խելքը, քաջությունը: Միշտ գլուխը դեպի առաջ էր քայլում, ուսերն ուղիղ ու ծնոտը բարձր՝ կարծես անցորդներին էր ծանրութեթև անում:

Տղաները «Ալադինի անձավում» էին սպասում: Հետևում՝ մի պլաստմասսայե սեղանի շուրջն էին հավաքվել: Մոտենալիս Իսքենդերը գլխով բարևեց: Նրանք էլ նույն ձևով պատասխանեցին: Նկատեց նրանց հարգանքը. նման հարգանք հորը ոչ ոք, անգամ իր նման թղթախաղի ընկերները չէին ցույց տվել:

– Սելամ,– ասաց Իսքենդերը բոլորին:– Արշադը որտե՞ղ է:

– Դեռ չի եկել,– ասաց Ֆերիթը՝ կարճահասակ, ժպտադեմ մարոկկացին:

– Գուցե վախեցել է,– ասաց Ազիզը իրարից հեռու ատամները ի ցույց դնող ժպիտով:– Անցած շաբաթ եղածից հետո իրավունք ունի:

թվայնացրել է 1915.info կայքը

Ամառը լարված էր անցնում: Ամեն օր վատ լուրեր էին ստանում: Միգրանտ տղաներին փողոցում սպառնում էին, կանանց՝ վիրավորում, երեխաների վրա էին թքում: Գիշերները անծանոթ ձեռքերը քարեր էին նետում տների վրա, պարանին չորացող լվացքն էին կեղտոտում, փոստարկղերի մեջ ցեխ էին գցում: Բայց ամենավատը վեց օր առաջվա դեպքն էր:

Հունիսի տասնմեկին առավոտյան վաղ ժամերին «National Front»[1] գրությամբ շապիկներով ու կրծքանշաններով սափրագլուխները սկսեցին հավաքվել Բրիք Լեյնի[2] մոտ: Կեսօրին մոտ թիվն աճեց: Քայլելով, հեծանիվներով, մեքենաներով, մինիբուսներով եկան: Ոմանք՝ շրջակա թաղամասերից, ոմանք՝ հեռվից: Հետո ուժի ցուցադրությունը սկսվեց: Տարօրինակն այն էր, որ շուրջը ոստիկանություն չկար: Ցուցարարները գոռգոռոցներով հարձակվեցին միգրանտների խանութների վրա, ապակին, շրջանակը կոտրելիս, մասնավոր գույքին վնասելիս անգամ ոստիկանությունը չեկավ:

Այդ ամենի մասին մտածելիս Իսքենդերը գլուխն օրորեց:

– Գործերը լավ չեն,– ասաց նա:

Սրճարանի տեր Ալադինը մոտեցավ, ու խոսակցությունն ընդհատվեց: Հիսուն տարեկանին մոտ, նիհար մարդ էր: Ժպտալով մոտեցավ տղաներին, բայց միայն Իսքենդերի ձեռքը սեղմեց: Հարցրեց դասերից, մորից, այդ դժվարին օրերին հորեղբոր գործերից: Իսքենդերը կարճ պատասխանեց բոլոր հարցերին:

---

[1] Անգլիայում 1967 թվականին հիմնված ծայրահեղ աջ, ռասիստական կուսակցություն:

[2] Լոնդոնի արևելյան ափին գտնվող, հիմնականում մուսուլմաններով, հատկապես բանգլադեշցիներով բնակեցված փողոց:

թվայնացրել է 1915.info կայքը

– Է՛, իսկ ի՞նչ ես ուտելու,– հարցրեց Ալադինը:– Ընկերներդ քեզ էին սպասում պատվերի համար:

Իսքենդերին դուր եկավ այդ խոսքը:

– Մի հյուրի ենք սպասում: Նա էլ գա, կպատվիրենք:

Նայեցին՝ ինչպես Ալադինը կաղալով հեռացավ: Մեծ սիրտ ուներ, անձնվեր մարդ էր: Աջ ոտքը ձախից կարճ էր: Ասում էր՝ երեխա ժամանակ հիվանդացել է, կարծես պարտավոր էր բացատրություն տալ: Մայրը շատ է տանջվել, բայց դեղ չի եղել, ի՞նչ աներ: Էլի, փառք Աստծո, ասում էր նա, կարող էր ավելի վատ լինել:

– Սափրագլուխներն էլ ի՞նչ ղալաթներ են արել,– հարցրեց Իսքենդերը Ազիզին:

– Երեկ մի բանգլադեշցի տղայի են ծեծել: Արշադի տնից քիչ հեռու արնաշաղախ վիճակում են գտել: Վերջին մի քանի ամսում չորրորդ դեպքն է:

Իսքենդերը կրծեց շրթունքը:

– Գիտե՞ք, ամենաշատն ինչի՞ց եմ խենթանում,– ավելացրեց Ազիզը:– Երբ էս ռասիստները վերցնում ու ասում են, թե ռասիստ չեն: Ասում են՝ ռեալիստ ենք: Ստի ինչն եմ ասել...

– Բոլոր ռասիստներն էլ սուտ են խոսում...– ասաց Սոնին:

– Ինչպե՞ս թե:

– Էլ ուրիշ ինչպե՞ս պետք է հավատան, որ իրենք բոլորից առավել են,– ասաց Սոնին:

Նրա անունը Սալվատորե էր, բայց հայրը ներառյալ՝ բոլորը նրան Սոննի էին ասում: Ընտանիքը Սիցիլիայի գյուղերից էր եկել: Այնքան արագ ու ակցենտով էր անգլերեն խոսում, որ ոչինչ չէր հասկացվում:

– Դե, ե՞րբ է գալու էդ մարդը: Հայտնի չեչենը:

Չիկոն էր հարցնում: Հայրը մարոկկացի էր, մայրը՝ իսպանուհի:

թվայնացրել է 1915.info կայքը

– Այդպես մի՛ ասա,– հանդիմանեց Ազիզը:– Դու էլ բոլորի պես Հաթիփ ասա նրան:

– Հաթիփ, Չեչեն՝ ի՞նչ տարբերություն: Գիտես էդ խոսքը՝ հիմարները խոսում են, խելոքները՝ լռում: Այդ մարդը անընդհատ խոսում է:

Այդ խոսքերը լսող Իսքենդերը, դեմքը ծամածռելով, հենվեց թիկնակին ու այդ շարժումով մի վայրկյանում վերջ դրեց աշխույժ շատախոսությանը: Բոլորը լրջացան:

– Կես ժամից Հաթիփն այստեղ է լինելու: Մտածեցի՝ եթե մենք շուտ հավաքվենք ու խոսենք, լավ կլինի: Հիմա շատախոսության ժամանակը չէ,– ասաց նա:

Չիկոն գլուխը կախեց: Մյուսներն էլ լռեցին ու լրջացան:

– Սափրագլուխների նպատակը մեզ երկրից վռնդելն է,– ասաց Իսքենդերը:– Արաբներ, թուրքեր, իտալացիներ, ճամայկացիներ, լիբանանցիներ, պակիստանցիներ... Նրանց աչքում բոլորս թշնամի ենք: Լավ, պետք է նստենք ու սպասե՞նք: Զոհաբերության գառների նման: Մեր հայրերն այդպես են արել: Բայց մենք գառ չենք:

– Իհարկե չենք,– ասաց Չիկոն:

– Տեսնենք՝ Հաթիփն ինչ է ասում: Թող գա, պատմի: Չենք հավանի, չենք հավանի: Բայց իմացեք՝ բոլորը նրա մասին շատ լավ են խոսում: Նրան ոչ ոք չի կարող գառ անվանել, դա հաստատ:

Հենց այդ պահին դուռը բացվեց: Արշադը ներս մտավ՝ ձեռքերը գրպաններում: Նրա հետևից մտնողին տեսնելուն պես Իսքենդերը գունատվեց:

– Սա ի՞նչ գործ ունի այստեղ:

– Ինձ վրա մի՛ զայրացիր: Ես ասացի՝ մի՛ արի, բայց չկարողացա համոզել,– ասաց Արշադը:

Իսքենդերը խենթ հայացքով նայեց քրոջը:

– Հենց հիմա տուն ես գնում:

թվայնացրել է 1915.info կայքը

– Ո՛չ, չեմ գնում, ես էլ եմ ուզում լսել,– ասաց Էսման:

Տղաները զգուշավոր ժպիտով էին հետևում խոսակցությանը:

– Զզվել եմ արդեն էշի համառությունից դ,– ասաց Իսքենդերը:– Չեմ պատրաստվում վիճել:

– Լավ, ուրեմն մի՛ վիճիր:

– Նայի՛ր, հա, ինձ մի՛ զայրացրու: Էստեղ գործ չունես: Աղջիկների տեղ չի:

Էսման համառեց:

– Ինչո՞ւ: Կարծում ես փողոցներում սափրագլուխները միայն տղամարդկա՞նց վրա են հարձակվում: Սխալվում ես: Կանանց վրա էլ են հարձակվում: Իմ տարիքի աղջիկների էլ: Եթե մենք էլ ենք հարվածի տակ ընկնում, ինչո՞ւ չպաշտպանվենք:

– Վայ, ճիշտ է ասում,– ասաց Ազիզը:

Էսման, աջակցությունից երես առնելով, ասաց.

– Դե՛ լավ, եղբա՛յր, ի՞նչ կլինի:

– Լավ, բայց ձայն չես հանելու: Ոչ մի բառ չեմ ուզում լսել,– նահանջեց Իսքենդերը:

– Լավ, այստեղ մումիայի պես կնստեմ,– ասաց նա՝ փորձելով թաքցնել ուրախությունը:– Մի հարց՝ Իսքենդերից բացի՝ ո՞վ գիտի՝ այդ մարդն ինչ տեսք ունի:

– Ոչ ոք,– խոստովանեց Արշադը,– բայց հենց տեսնենք, կճանաչենք, վստահ եմ:

Բայց այդ ենթադրությունը սխալ էր լինելու: Երբ Հաթիփը մտավ սրճարան, չճանաչեցին նրան: Նրան կեսավանդական, կեսէկզոտիկ հագուստներով, բարձրահասակ, գրավիչ, անհասկանալի տարիքի մարդ էին պատկերացրել՝ խառը մազերով, խելացի աչքերով: Այդ պատճառով ներս մտած սովորական արտաքինով, գունաթափ ջինսե տաբատով նիհար երիտասարդին անգամ չնայեցին էլ, մինչև որ նա սեղանին մոտեցավ ու ողջունեց:

թվայնացրել է 1915.info կայքը

– Համեցե՛ք, նստե՛ք,– ասաց Իսքենդերը:

Բացի քրոջից՝ բոլորին կարճ ծանոթացրեց:

Ուտելիք պատվիրեցին՝ հումուս, բաբա գանուշ, քյաբաբ, ֆալաֆել... Իսքենդերը հյուրի ամանը լիքը լցրեց, բայց նա շատ քիչ էր ուտում: Նրա ախորժակը բոլորի վրա ազդեց, անգամ շատակեր Սոնիի:

Երբ հերթը հասավ թեյ խմելուն, Հաթիփը սկսեց խոսել: Ձայնը հաստ չէր, բայց ալիքներով բարձրանում էր՝ կարծես բրոշյուրից տեքստ կարդար: Արանքում ընդմիջումներ անելով՝ նորից էր սկսում: Քթոսկրի վրայով ձգվող սպին նրան ավելի հետաքրքիր էր դարձնում, ցույց էր տալիս, որ նա պատմություն ունի:

Հաթիփը խոսեց ուշ շրջանի կապիտալիզմի, մոտալուտ Դատաստանի օրվա մասին:

Բոլորս միասին անդունդից ներքև ենք նայում: Այս խենթ կարգերի տապալմանն ենք ականատես լինելու:

Երիտասարդներին թմրեցնում էին, որ սիստեմի առաջ հարցեր չդնեն: Թմրանյութի առքուվաճառքը մութ կենտրոնների ձեռքին էր: Բոլոր գաղափարախոսությունները՝ սոցիալիզմը, նիհիլիզմը, ֆեմինիզմը, անարխիզմը, բնապահպանությունը, երիտասարդներին շփոթեցնելու ու պասիվացնելու համար ստեղծված զուր գործիքներ էին: Կեղծ «իզմ»-երը մասսաների քնաբերն էին:

– Իմ մորաքույրն էլ է ֆեմինիստ,– ասաց Սոնին. լարված էր, որ ուզածի չափ չի կարողացել ուտել:– Մազերն իմ մազերից կարճ են: Միշտ տաբատ է հագնում:

– Մեզ համար ֆեմինիզմը անիմաստ էներգիայի վատնում է: Կասես՝ ինչո՞ւ,– ասաց Հաթիփը:

– Կանայք տգեղանում են, դրա համար: Թող մազոտ ոտքերով ման չգան:

Տղաները ծիծաղում էին, իսկ Էսման հոնքերը կիտեց: Այդ ընթացքում միայն Իսքենդերն էր հայացքը հառել

թվայնացրել է 1915.info կայքը

Հաթիփին: Այդ երեխայական բաները հաղթահարած երկու մեծի պես իրար հասկանալով՝ նայեցին միմյանց:

– Իրավացի է ձեր ընկերը, ֆեմինիզմը կանանց անբնական է դարձնում,– ասաց Հաթիփը:– Բայց դա հետևանք է, ոչ թե պատճառ: Մինչդեռ ես հարցնում եմ՝ ինչո՞ւ այս դատարկ գաղափարախոսությունը մեզ չի հետաքրքրում:

– Որովհետև դա իրենց խնդիրն է,– պատասխանեց Իսքենդերը:

Հաթիփը աչքերում գնահատող հայացքով գլուխն օրորեց:

– Կբացատրե՞ս:

– Դա արևմուտքցիների խնդիրն է,– ասաց Իսքենդերը:– Նրանց է հետաքրքրում:

Լիքը բաժակներով մոտեցող Ալադդինը լսել էր խոսակցությունն ու այդ կասկածանքով հոնքերը բարձրացրել: Հաթիփի խոսքերն էր լսել: Նրա նմանները միայն պառակտություն են մտցնում: Որպես ի՞նչ էր եկել, խառնում էր երեխաների մտքերը: Իսկ Հաթիփը, կարծես զգալով Ալադդինի դժգոհությունը, լռեց ու թեյերը բաժանելուց հետո ոչինչ չասաց, մինչև մենակ մնացին:

– Ֆեմինիզմը սեփական խնդիրների համար գտած իրենց պատասխանն է,– շարունակեց Հաթիփը:– Բացի դրանից՝ կեղծ լուծում է: Հսկայական լիճը սպունգով չորացնել կլինի՞: Ֆեմինիստների ազդեցությունն այդպիսի բան է: Եթե արևմուտքցիները ընտանեկան արժեքներ, կանանց հանդեպ հարգանք չունեն, փողոցներում կոկորդ պատռելով բղավող մի բուռ ֆեմինիստներն ի՞նչ կարող են անել:

Այդ բացատրությունից դժգոհ Էսման ծաղրական ձայն հանեց: Իսքենդերը աչքի պոչով սառը ու սպառնացող հայացք նետեց քրոջ կողմը, նա էլ անմիջապես լռեց: Հաթիփը ձևացրեց, թե չի նկատել այդ լարվածությունը:

թվայնացրել է 1915.info կայքը

– Արևմուտքում մարդիկ շփոթված են: Երջանկությունը ազատության, ազատությունը անբարոյականության հետ են շփոթում: Բայց մենք մեր մայրերին, մեր կանանց, քույրերին հարգանք ենք ցուցաբերում: Չենք կարող նրանց ստիպել Բարբի տիկնիկների պես հագնվել: Չենք կարող նրանց օբյեկտի նման նայել: Սարսափելի դաշտ ենք մտնում՝ շպար, նորաձևություն, կոշիկների ձևավորում: Անորեքսիայի մասին լսե՞լ եք:

Տղաները գլուխները շարժեցին: Էման անշարժ նստած էր:

– Նշանակում է անընդհատ քաշի մասին մտածել: Նման կանայք միշտ դիետա են պահում: Կերածը ործկում են: Եվրոպայում ու Ամերիկայում ամեն տարի դրա պատճառով տասնյակ կանայք հիվանդանոց են ընկնում: Մի մասը մահանում է: Սիրտը չի դիմանում: Բայց դեռ իրենց գեր են կարծում: Իսկ Ասիայում, Աֆրիկայում ու Միջին Արևելքում ինչքան երեխաներ են սովից մահանում, մի՛ մոռացեք դրա մասին: Կրծելու հաց էլ չեն գտնում: Չգիտեն՝ քաղցրն ինչ է: Մինչ Արևմուտքի կանայք շքեղ ռեստորաններում կերած լիկյորով թխվածքը հետ են տալիս, երրորդ աշխարհի երեխաները սովից մահանում են: Արևմուտքի երկու ամենակարևոր արդյունաբերական թևերն են պատերազմը և գեղեցկության ոլորտը: Վերջինս առաջինին ոչնչով չի զիջում: Այդ բոլոր փայլփլուն զգեստները, նորաձևության ամսագրերը, կոտրատվող տղամարդիկ, տղամարդկային կանայք... ձեր ուղեղն են լվանում:

Սեղանի շուրջ լարվածություն տիրեց: Էման ուզում էր, որ Իսքենդերը մթնոլորտը ցրող մի բան անի: Մեջքի՛ն հարվածիր, կատա՛կ արա, ասա՝ թեթև՛ տար, բոլորին ուրախացրո՛ւ: Եթե ուզեր կաներ: Նա խելառ

թվայնացրել է 1915.info կայքը

խիզախներից էր: Բայց երբ գլուխը բարձրացրեց, եղբոր դեմքի արտահայտությունն այլ էր:

– Ալե՛քս, երևի թե՞յ պատվիրենք,– հարցրեց Էման:– Այսքան չոր խոսքից ծարավեցինք:

Հաթիփը նայեց ժամացույցին:

– Օ՜օ, գնալուս ժամանակն է: Ուրախ էի ձեզ հետ ծանոթանալ:

Վեր կենալիս Իսքենդերին նայեց.

– Քեզ ինչո՞ւ են Ալեքս ասում:

– Բանի տեղ մի՛ դիր, քույրս է: Ընկերներս այդպես են անվանում ինձ, Իսքենդերի կարճ տարբերակն է:

– Ո՛չ, Ալեքսը Իսքենդերի կարճը չէ,– հակաճառեց Հաթիփը:– Մտածեք՝ պետք է մեր անունները փոխենք, որ անգլիացիները հե՞շտ ասեն: Է՞լ ինչից պետք է հրաժարվենք: Մինչդեռ պետք է հակառակը լինի: Բոլորը պետք է անունդ իմանան, հարգանքով օգտագործեն:

Հետո գնաց՝ իր հետևից ճնշող լռություն թողնելով: Իսքենդերը նյարդային ոտքի կանգնեց.

– Էմային տուն տանեմ, գամ:

– Հե՛յ, ես դեռ չեմ ուզում գնալ:

Բայց Իսքենդերն արդեն հասել էր դռանը.

– Էմա՛, արա՛գ: Հե՛նց հիմա:

Էման մռթմռթալով ենթարկվեց: Երբ փողոց դուրս եկան, անմիջապես բողոքեց.

– Այս անկապ մարդուն հեչ չսիրեցի: Անիմաստ խոսում է, պարոն Գոռոզությունը:

– Սիրես-չսիրես, նա իսկական զինվոր է:

– Շատ կոպիտ է:

– Եթե աշխարհը չարացած է, դու էլ պետք է այդպես լինես,– հակաճառեց Իսքենդերը:

– Լավ էլի, մաչոյի մեկն է: Դեմքիս էլ չնայեց:

թվայնացրել է 1915.info կայքը

– Հարգանքից չէր նայում, դմբո՛: Ուզում ես՝ էստեղ-էնտեղդ նայի՞, ոտքերի՞դ նայի:

– Քեզ ի՞նչ է եղել,– ասաց Էման՝ ձեռքերը օդ բարձրացնելով:– Հանգստացի՛ր: Երևի հիմարությունները շատ են ազդել վրադ:

– Բերանդ հավաքի՛ր, Էմա՛:

Էման համառեց:

– Վա՛յ, շատ վախեցա: Վախից տակս կանեմ:

Չէր նկատել՝ ինչպես եղբոր ձայնը փոխվեց, բռունցքները սեղմվեցին:

– Էլ չես գալու մեր հավաքներին: Ես քո ժամանակը չունեմ:

– Ես իմ գլխի ճարը կտեսնեմ, մի՛ անհանգստացիր: Մորս մեղքով է ամեն ինչ: Մալա մին, բերիա մին[1]: Քեզ իրոք սուլթանի տեղ ես դրել:

– Ձայնդ կտրի՛ր:

– Ես ու դու մի թիմ էինք: Իրար հետ ուրախանում էինք: Քե՛զ նայիր, էլ չես ծիծաղում: Ինչ լուրջ ես ընդունում քեզ:

Իսքենդերը Էմայի ուսերից բռնեց ու հրեց պատին:

– Ի՛նձ նայիր, փողոցում մարդկանց են ծեծում: Դեռ անցած շաբաթ մի տարեց մարդու քարերով ծեծել էին, ուշագնաց էր եղել: Ի՞նչ ուրախությունից ես խոսում:

– Ի՞նչ ես անելու, գլխներիս հերո՞ս ես դառնալու:

Ապտակ: Այնքան անսպասելի էր եղբոր՝ իր վրա ձեռք բարձրացնելը, որ Էման չհասկացավ՝ ինչ կատարվեց: Այտը բռնեց: Զարմանքից չէր կարողանում շարժվել:

– Էլ երբեք իմ գործերին չխառնվես,– ասաց Իսքենդերը:– Տե՛ս, զգուշացնում եմ:

Զայրացած շրջվեց ու արագ քայլերով ուղղվեց դեպի սրճարան: Էման զարմացած նայեց նրա հետևից:

---

[1] Քրդերեն՝ Տղաս, երեխաս:

թվայնացրել է 1915.info կայքը

Մի ժամանակ կարծում էր՝ նրան հինգ մատի պես գիտի, բայց արդեն ոչ: Նախկինում եղբայրը պաշտպանում էր նրան, բայց հիմա առաջին անգամ զգաց՝ պետք է իրեն նրանից պաշտպաներ:

թվայնացրել է 1915.info կայքը

Յունուս

12 հուլիսի, 1978
Լոնդոն

Շաբաթներ շարունակ անհույս փնտրելուց հետո Յունուսը վերջապես գտավ Տոբիկոյին: Բայց ավելի շատ անհանգստություն զգաց, քան ուրախություն: Սիրելիին նորից կորցնելու անհանգստություն: Ոստրեի կաղապարի պես ամուր կպավ նրան:

Տոբիկոն փոխվել էր, մի քիչ գիրացել էր: Անձրևից սևացած գլաքարի նման մուգ ու փայլուն մազերը դեռ երկար էին, բայց ծայրերը կանաչ էր ներկել:

Ներքևի շրթունքի արծաթե օղի փոխարեն նորն էր դրել: Երկու ականջի բլթակներին արյան կաթիլների պես վեց սրտիկներ էին:

Յունուսը նորից նկատեց՝ որքան փոքր ու սիրուն էին նրա ականջները: Շատ չէր խոսում: Չբացատրեց՝ այդքան ժամանակ որտեղ էր եղել կամ ինչու լուր չէր տվել: «Այսուայնտեղ էի: Օդափոխություն էր պետք»: Հիմա ժամանակավոր Կապիտանի ու նրա մոր հետ էր մնում: Այնտեղ ուրիշ օկուպանտներ էլ կային: Յունուսը տխրեց դա լսելիս:

Կապիտանի մայրը՝ տիկին Փոուելը, թոշակառու ուսուցչուհի էր, այրի էր: Իրականում համբերություն չուներ իր հարկի տակ ծվարած այդ խենթերի հետ, բայց միակ որդու հետ գոնե մի քիչ մտերմանալու համար

թվայնացրել է 1915.info կայքը

նրանց թույլ էր տվել ժամանակավորապես այնտեղ մնալ: Հեռուստացույցն ու ջեռակը վերցրել, վերևի հարկի ննջարանն է գնացել, տան մնացած մասը թողել էր փանքերին: Սենյակից հազվադեպ էր դուրս գալիս, ուտում էր անկողնում, ներքևից եկող աղմուկին ու մարիխուանայի հոտին ուշադրություն չէր դարձնում:

Նրանց առաջին անգամ այցելելիս Յունուսը Տոբիկոյի կողքին՝ բազմոցին նստեց:

– Սա ժամանակավոր լուծում է, երեխա՛,– բացատրեց Կապիտանը:– Մինչև մեր հին տուն կվերադառնանք: Բոլորին կհավաքենք նորից:

– Արդեն մեզ ոչ ոք դուրս չի հանի: Մեզ լավ դաս եղավ,– ասաց Բոգարտը՝ շուրթերի արանքում մի ծխախոտ ու ձեռքին կիթառ, որի երկու լարն էր մնացել:– Նրանց մի լավ դաս կտանք:

Նոր մարդ էր միացել նրանց՝ կատարի նարնջագույն մազափնջից բացի՝ լրիվ անմազ երիտասարդ: Կեղծանունը Ցրող էր, որովհետև հավատում էր՝ կյանքում ոչ մի բանի՝ գրքերի, ձայնապնակների, ուտելիքի, ներքնազգեստի համար պետք չէ վճարել. եթե մի բանի կարիք էր ունենում, «ցրում էր»: Մի անգամ բաճկոնի երկու թևքի մեջ մեկական երկարաճիտ կոշիկ էր դրել ու գողացել:

– Կատուների նման եք, ա՛յ մարդ,– ասաց Ցրողը:– Ձեր վերքերն եք լիզում:

Յունուսը նրանց զառանցանքները լսելիս տարօրինակ տխրություն զգաց ու միաժամանակ նորից կյանք մտնելու երջանկություն: Դա նկատած Բոգարտն ասաց.

– Պուճուրն էլ է կատվի նման, տեսե՛ք: Աղջկա կողքը նստեց ու էլի երազում է:

Տոբիկոն ուզում էր ծիծաղել, բայց իրեն զսպեց, որ Յունուսը չնեղանա: Թեման փոխելու համար Բոգարտին ասաց.

թվայնացրել է 1915.info կայքը

– Մի քիչ առաջ ի՞նչ էիր նվագում:

– Իմ ստեղծագործությունն է: Ասում եմ՝ տան վրա հարձակումը մեր Արյունոտ կիրակին է[1]: Ինչ-որ առումով: Այս երգն եմ գրել,– ասաց Բոգարտն ու սկսեց երգել:

Երաժշտությունը վատն էր ու անռիթմ, խոսքերն ավելի վատն էին.

«Գործ չունեմ, փող չունեմ, անփող-ծակ կոշիկ-
ազատուանկախ,
Գլորվող քար եմ,
Իշխանությունը չի խղճա, գլուխս կես կանի:
Արյունոտ կիրակի, ամենավատ օրը,
Դիմադրում եմ համակարգին, ուրեմն կամ:
Լա, լա, լաաա...»

Աֆղանական ժիլետ, տակից՝ կարճ, կիպ շապիկ հագած Իգգի Փոփը ականջները փակեց:

– Վա՛յ, փակի՛ր գրողի տարած բերանդ:

– Ի՞նչ,– ասաց երգը կիսատ թողած Բոգարտը:

– Ինչ ահավոր բան է, եղբա՛յր,– ասաց Իգգի Փոփը:

– Համ էլ՝ հարձակումը կիրակի օրը չի եղել,– ասաց Տոբիկոն:– Երկուշաբթի էր:

Բոգարտը տխրեց:

– Ո՞վ է ասել:

– Այդպես է:

Երբ արդեն տրամադրությունները լավ էր լինում, երեխայի պես վիճում էին, կատակից միանգամից անցնում կռվի, մի րոպեում դռները զարկում, բղավում, հայհոյում:

---

[1] 1972 թվականի հոկտեմբերի 30-ին Հյուսիսային Իռլանդիայի Դերի քաղաքում բրիտանական բանակի զինվորները կրակ են բացել քսանվեց անզեն ցուցարարների վրա, տասնինը քաղաքացի է սպանվել:

թվայնացրել է 1915.info կայքը

Յունուսը գիտեր՝ ինչ է լինելու, մի քիչ անհանգստանում էր, բայց հաճույքով էր լսում:

– Որովհետև հիմար եք, որտեղից իմանաք,– նեղացավ Բոգարտը ու հոնքերը կիտելով՝ նայեց Տոբիկոյին:– Ա՛յ աղջիկ, դու ճկան հիշողություն ունես: Որ հարցնեմ՝ նախաճաշին ինչ ես կերել, չես հիշի: Ուղեղդ էլ թթու դրած վարունգ է,– ասաց նա Իգգի Փոփին:– Չգիտես էլ՝ հիմա որ տարին է:

Իգգի Փոփը սեղանից մի ամսագիր վերցրեց ու նետեց Բոգարտի վրա: Ամսագիրը օդում պտույտ գործեց ու խփվեց կիթառին, հետո ընկավ Յունուսի կողքին: Յունուսը լուռ վերցրեց ամսագիրն ու բացեց: Հին «Վոգ» էր: Շաբաթ օրվա համարը: Կազմին փայլուն շեկ մազերին օղագոտի կապած գրավիչ կին էր: Կողքին գրած էր. «Ձե՛զ տեսեք արևի լույսի ներքո»: Երևի Կապիտանի մոր հավաքած ամսագրերից էր:

– Յունուսին հարցնենք,– ասաց Տոբիկոն:– Նա անկողմնակալ է:

– Հաստատ անկողմնակալ է,– հակառակվեց Կապիտանը:– Այնպես է սիրահարվել քեզ, որ եթե ասես՝ մածունը սև է, կհամաձայնի:

Յունուսը կարմրեց, ամսագիրը դրեց սեղանին: Հասկանում էր՝ պետք է այնպիսի արտասովոր բան ասեր, որ բոլորի ուշադրությունը գրավեր:

– Ես էլ եմ դաջվածք ուզում,– հանկարծ ասաց նա:

– Իսկապե՞ս,– ասաց Տոբիկոն:

– Վա՛յ, ինչ դեմք ես, երեխա՛,– քթի տակ ծիծաղելով՝ ասաց Ցրողը:

– Կանենք, պուճո՛ւր,– ասաց Իգգի Փոփը:– Խնդիր չէ: Քո առաջ քաղաքի ամենահմուտ դաջվածքի վարպետն է նստած:

– Մայրդ չի՞ զայրանա,– սիրալիր հարցրեց Տոբիկոն:

թվայնացրել է 1915.info կայքը

Յունուսը մտածել էր դրա մասին:

– Եթե տեսնի, իհարկե կզայրանա: Բայց եթե մեջքիս, մի թաքուն տեղ անեք, չի իմանա:

– Խելացի պուճուր,– ասաց Բոգարտը:

– Եղա՛վ,– ասաց Իգգի Փոփը՝ ձեռքերը շփելով:– Գնամ, սարքերս բերեմ:

– Մենք էլ գանք, էլի:

Ճաշասենյակում միայն Յունուսն ու Տոբիկոն էին: Լռություն տիրեց:

– Կարո՞ղ եմ մի բան հարցնել,– հանկարծ ասաց Յունուսը: Հապաղում էր:

– Իհարկե, փո՛քր ջան:

– Գաղտնիքների մասին... Քույրս ասել է՝ ոչ ոքի չասես:

Տոբիկոն անհանգիստ նայեց նրա դեմքին:

– Չհասկացա...

– Ասենք թե սիրելի մեկն ունես: Նա էլ շատ կարևոր գաղտնիք ունի, բայց ոչ ոք չգիտի: Դու իմացել ես: Պե՞տք է ասես նրան, թե՞ ոչ:

– Վայ, դժվար հարց է: Իմ կարծիքով՝ գաղտնիքներն աղբ են: Թափանցիկությունն է ճիշտ:

Տոբիկոն գլուխը հենեց երեխայի ուսին: Յունուսի սիրտը արագ բաբախեց: Ուզում էր՝ այդ պահը հավերժ տևի: Բայց քիչ անց Կապիտանն ու մյուսները մի տուփ ասեղներով ու դաջվածքի օրինակներով վերադարձան:

– Ահա՛, դե, տեսնենք, գործի անցնենք,– ասաց Բոգարտը:

– Բայց կարող է մի քիչ ցավել: Դեռ ուզո՞ւմ ես,– հարցրեց Ցրողը:

Յունուսը գլուխն օրորեց՝ և՛ անհանգիստ էր, և՛ լավատես:

– Լավ, ի՞նչ դաջվածք ես ուզում: Բա՞ռ: Թե՞ սիմվոլ:

թվայնացրել է 1915.info կայքը

– Կետ կարո՞ղ եք անել,– հարցրեց Յունուսը:– Դե, այն ձուկը, որ մարգարեին էր կուլ տվել:

Բայց վերջում դաջվածքը ոչ թե կետի, այլ մեծ, դարչ-նագույն կարմրախայտի էր նմանվել. այն ձկանը, որին Նազե տատիկն էր ուզում վերածվել տարիներ առաջ մի ուրիշ կյանքում, վաղուց մոռացված անցյալում:

թվայնացրել է 1915.info կայքը

Իսքենդեր

16 սեպտեմբերի, 1978
Լոնդոն

Հաթիփի հետ Իսքենդերի չորրորդ հանդիպումը տարբերվում էր նախորդներից: Այս անգամ նրան միայնակ էր ուզել տեսնել: «Վիկտորիա» զբոսայգում էին որոշել հանդիպել:

Իսքենդերը հաստատուն քայլերով ուղղվեց դեպի հանդիպման վայրը: Մի շագանակենու հենված, ձեռքերը գրպաններում դրած Հաթիփին տեսնելուն պես դանդաղեց: Դեմքից անհնար էր հասկանալ՝ ինչ է մտածում: Բարակ շրջանակով ակնոց էր դրել: Անճաշակ էր հագնված՝ մանանեխագույն սուրքիթ կոշիկներ, գունաթափ, լայն բաճկոն, ջինսե տաբատ, որ միայն մայրը կարող էր որդու համար գնել:

– Ի՞նչ կա,– ասաց Իսքենդերը՝ բարևելու փոխարեն ձեռքը բարձրացնելով:

Հաթիփը թեթև ժպտաց, բայց ոչինչ չասաց: Իսքենդերը զգաց՝ ինչ-որ տեղ սխալ է թույլ տվել: Կարծես անընդհատ սխալներն էր հաշվում ու գրի առնում: Կարծես միանգամից երկու լեզվով խոսեր՝ մեկը՝ պարզ, մյուսը՝ գաղտնագրված: Եվ որքան էլ որ լավ տիրապետեր լեզվին, բոլորից տարբերվում էր ոչ թե ասածներով, այլ նրանով, ինչ լուռ էր հասկացնում:

– Արի՛, մի քիչ քայլենք:

թվայնացրել է 1915.info կայքը

Չնայած քայլելու տրամադրություն չուներ, Իսքենդերը համաձայնեց:

– Շատ լավ:

Ի տարբերություն առավոտյան եղանակի կանխատեսման՝ երկինքը անամպ էր: Քիչ այն կողմ լիճ էր. կապտականաչ գորգի պես փռվել էր դիմացի ափին՝ կախված գունատ մառախուղի շերտի տակ: Բադերին հաց նետող երեխաներ, հանգստացող ծնողներ կային:

Խոտերին մեկնված մի զույգ, առանց շրջապատին ուշադրություն դարձնելու, կրքոտ համբուրվում էր: Իսքենդերը նկատեց՝ ինչպես է Հաթիփը հայացքը փախցնում ու հոնքերը կիտում: Վերջապես հոգնեցին քայլելուց, մի նստարան գտան, ուր կարող էին հանգիստ խոսել:

– Կարգին ընկերներ ունես,– ասաց Հաթիփը:

– Այո՛: Լավն են մեր տղաները,– ասաց Իսքենդերը:

– Դու էլ առաջնորդն ես, չէ՞:

Իսքենդերը վարանեց. իր մասին երբեք այդպես չէր խոսել:

– Հասկանում եմ,– ասաց Հաթիփը՝ կարծես կարդալով նրա մտքերը:– Դու ես ղեկավարում, բայց ցույց չես տալիս: Ազնիվ է:

– Ծնորհակալ եմ,– ասաց Իսքենդերը: Նախկինում ոչ ոք իր մասին այդպես չէր խոսել: Հպարտացավ:

– Ընկերներդ կարգին դեմքեր են, բայց դեռ երեխա են: Դեռ շատ հաց ու պանիր պիտի ուտեն: Բայց դու ուրիշ ես: Դու հասուն ես:

– Երևի հորս բացակայությունից է,– ասաց Իսքենդերը:– Երբ գնաց, ստիպված եղա արագ մեծանալ:

Հաթիփը գլուխն օրորեց.

– Հը՛մմ, հիմա հասկացա:

Հավանության նշաններից Իսքենդերը շնորհակալության զգացում ունեցավ: Նախկինում այդ մասին

թվայնացրել է 1915.info կայքը

չէր մտածել, բայց իսկապես արագ էր մեծացել: Նրա տարիքի տղաները դեռ երեխաների համար գծված արահետներով էին անցնում, իսկ նա կարճ ճանապարհով տղամարդ էր դարձել:

– Ինձնից փոքր քույր ու եղբայր ունեմ:

– Քրոջդ հիշում եմ,– լարված ձայնով ասաց Հաթիփը:

– Հա, կներես, այդ հանդիպման ժամանակ կոպիտ էր...

– Ոչ մի խնդիր: Պետք չէ զայրանալ: Դեռ երիտասարդ է: Գլուխը խառն է: Մյուս աղջիկներից, կարդացած ամսագրերից բաներ է սովորում: Մեկ էլ հեռուստացույցից՝ պրոպագանդայի ռմբակոծիչից:

Իսքենդերը, շուրթերը կրծելով, լսում էր.

– Կանանց համար ավելի դժվար է ճիշտ ուղին գտնել: Այնքան թակարդ կա, որ ուղեղը լվանում, աչքերը փակում է: Նորաձևության աշխարհը, գեղեցկության մրցույթները, հարուստ ամուսնու երազանքը, թանկ կահույքի հաճույքը... Դրանք վերջ չունեն:

– Այո՛,– ասաց Իսքենդերը:

– Ամոթ չլինի հարցնել՝ հայրդ ինչո՞ւ չկա:

Իսքենդերը ծնոտը լուռ շարժեց՝ կարծես փորձելով միտքը եկած առաջին պատասխանը կուլ տալ: Իրեն խոշորացույցի տակ զգաց. անհանգիստ էր:

– Ուրիշ կյանք է ստեղծել, այդքան բան,– ասաց նա՝ առանց երկարացնելու:

– Հասկանում եմ:

– Դու քո մասին ոչինչ չես պատմում. ինչպե՞ս ես սպասում, որ բոլորը քեզ հետ կիսվեն:

Հաթիփը ծիծաղեց, ցինիկ մի փայլ անցավ աչքերով:

– Այ դրա համար եմ հավանում քեզ: Անվախ ես: Եթե դիմացինին չես հավանում, մտքիդ եկածն ասում ես: Չես վախենում ռիսկի դիմել: Քեզ ոչ ոք չի կարող ծնկի բերել:

թվայնացրել է 1915.info կայքը

– Ճիշտ է,– ասաց Իսքենդերը:– Հիմարությունների ժամանակ չունեմ:

– Հարգում եմ: Ես էլ քեզ պես չեմ սիրում իմ մասին շատ խոսել: Բայց որ հարցրիր, պատմեմ:

Իսքենդերը խաղաղվեց: Ամաչեց իր հանկարծակի կոպտությունից:

– Հայրս՝ Բադշահը, 1951 թվականին է եկել Բանգլադեշից: Գիշերային հերթափոխների ժամանակ ինքնուրույն անգլերեն է սովորել: Եթե չաշխատես, ոչինչ ես: Ամենամեծ վախը դա էր, գիտե՞ս: Ոչինչ լինելը: Ժամանակի ընթացքում հագուստը, ուտելիքները, սովորությունները փոխել էր, բայց խոսվածքը միշտ նույնն էր մնացել: Անգլուհու հետ էր ամուսնացել, ես եմ լույս աշխարհ եկել: Իրենք իրենց աշխարհում են ապրում: Սխալ չհասկանաս, բայց այնքան են տարված այս աշխարհով, որ մյուս աշխարհի մասին մոռացել են: Հավատ չունեն: Տխրում եմ նրանց համար:

Չմուշկ քշող, մանուշակագույն շորտ հագած մի կին անցավ նրանց կողքով: Իսքենդերը նայեց նրա ոտքերին:

– Այո՛, բայց, ի վերջո, քո ծնողներն են:

– Ես էլ եմ սիրում նրանց, բայց դա չի նշանակում, որ հարգում եմ: Դրանք տարբեր բաներ են. սերը ուրիշ է, հարգանքը՝ ուրիշ: Եթե ծնողները սխալ են անում, պետք է նրանց դեմ լինես:

– Հայրս...– սկսեց խոսել Իսքենդերը, բայց վստահ չէր՝ ինչ է ասելու:– Երբ մեծանում էինք, ներկա չէր: Միշտ ուրիշ տեղ էր: Ի վերջո լքեց մեզ: Հանկարծակի:

Ուզում էր ցույց տալ, որ թեման իր համար անկարևոր է, բայց ձայնի դողը անկառավարելի էր:

Հաթիփը, ակնոցը հետ հրելով, ուշադիր Իսքենդերին նայեց:

թվայնացրել է 1915.info կայքը

– Ուրեմն դու ես ընտանիքի գլխավորը: Դժվար գործ է: Պետք է ուժեղ լինես: Լավ է, որ բռնցքամարտի ես գնում: Բայց ներսից էլ պետք է ուժեղ լինես:

– Հասկանում եմ,– ասաց Իսքենդերը, բայց այնքան էլ վստահ չէր, որ հասկանում է:

Հաթիփը պայուսակը բացեց ու երկու բրոշյուր հանեց.

– Վերցրո՛ւ սրանք: Երբ կարդաս, նորից կխոսենք: Ինձ կասես՝ որ մասն է դուրդ եկել: Իհարկե, քեզ դուր չեկածներն էլ:

– Էսման գրքերի սիրահար է: Ես այնքան էլ լավ ընթերցող չեմ:

– Սխալ է: Մեքենան բենզինի կարիք ունի, իսկ մարդու ուղեղը՝ մտքերի: Մտքերն էլ գրքերում են,– ասաց Հաթիփը: Հանկարծ մի բան էլ հիշեց ու ավելացրեց.– Հա, բայց այդ բրոշյուրները ոչ ոքի ցույց չտաս, լա՞վ:

– Ինձ կարող ես վստահել,– ասաց Իսքենդերը: Աչքերը հառեց ժամացույցին:– Պետք է գնամ:

Հաթիփը տխրեց:

– Աղջկա խնդի՞ր է:

– Ըհը:

– Ինչո՞ւ, մերոնքական չի:

Իսքենդերն այդպիսի հարց չէր սպասում: Քեյթի ու իր միջև եղած տարբերությունները միշտ բնավորություններին էր վերագրում: Հետո էլ՝ Հաթիփն էլ էր անգլիացի: Երբ նորից սկսեց խոսել, ձայնից ակնհայտ էր, որ թեման տհաճ է:

– Ինչ իմանամ, էդպես ստացվեց:

– Գոնե կարգի՞ն աղջիկ է:

– Կարգին է,– ասաց Իսքենդերը՝ առանց հասկանալու՝ դա ինչ է նշանակում:

– Դե, գնա՛, մի՛ սպասեցրու: Ես մի քիչ էլ կմնամ, կաղոթեմ, որ Ալլահը քեզ ճիշտ ճանապարհ ցույց տա:

թվայնացրել է 1915.info կայքը

Թարրը

30 սեպտեմբերի, 1978
Լոնդոն

Շաբաթ օրը, օձիքը բարձրացրած կաշվե բաճկոնը հագին, Իսքենդերը եկավ խանութ: Թարրքը հպարտ ժպիտով ոտքի կանգնեց՝ նրան դիմավորելու: Մի տարվա մեջ որքան էր փոխվել տղան, հորից բարձրահասակ էր արդեն: Վերևի շրթունքին բարակ բեղ էր բուսնել, աչքերը երիտասարդական կրակով այրվում էին:

– Վա՛յ, վա՛յ, ում եմ տեսնում: Ամենասիրելի զարմիկս: Իսքենդերը թեթևակի ժպտաց.

– Ի՞նչ կա, հորեղբա՛յր:

– Փառք Աստծու, ամեն ինչ լավ է,– ասաց Թարրքը:– Ասա՛ տեսնեմ, ո՞ր քամին է քեզ մեր կողմեր բերել:

– Էս կողմերում ընկերներիս էի հանդիպելու, ասացի՝ մտնեմ:

Քոքնի[1] խոսվածքով ու խառը թուրքերենով էր խոսում: Իրականում լավ էր խոսում, բայց բառապաշարն այնքան սահմանափակ էր, որ անընդհատ նույն բառերն էր օգտագործում: Նրա խոսքը լսելիս Թարրքը մտածեց նրան որոշ ժամանակով կամ գուցե հիմնավոր ուղարկել Ստամբուլ: Կամ որ ավելի լավ էր՝ Փեմբեի հետ խոսել

[1] Քոքնին Լոնդոնի արևելյան ափին հիմնականում աշխատավորներով բնակեցված շրջան է ու այնտեղին հատուկ խոսվածք:

թվայնացրել է 1915.info կայքը

ու Անատոլիայից նամուսով գյուղի աղջկա հետ նշանել տղային:

– Դպրոցում ի՞նչ կա: Դասերը լա՞վ են: Ուսուցիչներն ինչպե՞ս են:

– Դպրոցը լավ է, հորեղբա՛յր,– պատասխանեց Իսքենդերն՝ առանց մտածելու:

– Բռնցքամարտից ի՞նչ կա:

– Մարտ ունեմ շուտով,– ասաց Իսքենդերը:– Բայց մայրս վախենում է:

– Իրավացի է: Անհանգստանում է, որ մի տեղդ կվնասեն, բա ի՞նչ անի:

Իսքենդերը որոշ ժամանակ լսեց թզբեհի հատիկների տկտկոցը:

– Հորեղբա՛յր, բանը... մի ընկեր ունեմ, խնդիրներ ունի:

– Խորհրդի համար քեզ մոտ է եկել, հա՞:

– Հա: Որովհետև ես էդ երեխեքի մեծ եղբոր նման եմ: Ինձ հարգում են, հասկանո՞ւմ ես: Դրա համար, երբ խնդիր են ունենում, ինձ մոտ են գալիս:

– Լավ, իսկ ի՞նչ խնդիր ունի ընկերդ:

– Փողի կարիք ունի:

– Ինչքա՞ն,– զգուշավոր ասաց Թարըքը:

Երբ Իսքենդերը ասաց գումարը, Թարըքը մորուքը շոյեց:

– Երիտասարդը ի՞նչ գործ ունի այդքան գումարի հետ:

Իսքենդերի դեմքով ստվեր անցավ, բայց խոսելիս սառնասիրտ էր:

– Երևի ընկերուհին է հղիացել: Բժշկի համար է:

– Իսկ աղջիկը անգլուհի՞ է,– ծամածռելով դեմքը՝ հարցրեց Թարըքը:

– Իհարկե, իհարկե,– ասաց Իսքենդերը:

Թարըքը խոր շունչ քաշեց: Լավ էր, որ աղջիկը թաղամասից կամ միգրանտների համայնքից չէր:

թվայնացրել է 1915.info կայքը

Ուրեմն ընտանիքները գործին չէին խառնվի, հայրեր կամ եղբայրներ չէին ընկնի հետևից վրեժի համար: Ոտքի կանգնեց ու ուղղվեց դեպի խանութի հետևի կողմի դրամարկղը: Երբ վերադարձավ, ձեռքին մի կապոց փող կար:

– Ընկերոջդ ասա՛, այս անգամ կարող եմ օգնել նրան,– ասաց Թարըքը:

– Շնորհակալ եմ, հորեղբա՛յր:

– Բայց ասա՛, որ էլ իր հետևից հավաքելու մտադրություն չունեմ: Թող իրեն տիրապետի: Թե չէ գլխին շատ մեծ փորձանք կգա: Ինձնից էլ դմբոյին բարևիր:

– Մի՛ անհանգստացիր: Կփոխանցեմ,– ասաց Իսքենդերը՝ փողը գրպանը դնելով ու դեպի դուռն ուղղվելով:

Մի պահ կանգնեց ու ասաց.

– Հորեղբա՛յր:

– Հըմմ, էլի բա՞ն ունես ասելու:

– Ո՛չ, ուղղակի ինձ համար հոր նման ես, դա էի ուզում ասել:

Թարըքի դիմագծերը փափկեցին:

– Երբ որ խորհրդի կարիք ունենաս, այստեղ եմ, տղա՛ս:

Իսքենդերը, գլուխը մի քիչ կախելով, ասաց.

– Կտեսնես, մի օր պարտքդ կվերադարձնեմ:

Մենախցից վերադառնալիս ահավոր զայրացած էի: Նայեցի՝ Փախածի կեղն ուրիշն էր եկել: Ինչպիսի արագություն: Այս որջում ասեղ գցելու կեղ չկա: Գնացողի կեղը միանգամից ուրիշին են տալիս: Բանտը հորս աշխատած գործարանն էր հիշեցնում: Դապապարտյալները հաստոցի վրա թխվածքաբլիթների պես բաժիններով էին

թվայնացրել է 1915.info կայքը

գալիս: Իսկ հսկիչները նրանց խմբավորում ու փուփերի մեջ էին դնում: Ծայրեծայր լիքն էր այդ տեղը: Ոչ մեկի համար սգալու տեղ չկար:

Վատը չէր երևում նոր բանտակիցը. անվնաս դեմքերից էր երևի: Չեմ հարցնում՝ ինչու է բանտում: Այդ թեման հենց այնպես չեն բացում: Երբ կիմանաս՝ կիմանաս: Նիհար մարդ է՝ ճակատը, լայն, դունչը՝ սուր, մազերը՝ ցանցառ, մուգ: Հեռավոր Արևելքից էր կարծես թե, կարճահասակ էր: Ամենաշատը հայացքից էի զարմացել: Այնքան ծիծաղելի հայացք ուներ, որ ապշում էի:

– Անունս Զիշան է,– մի քիչ թեքվելով՝ ասաց նա:

Կարծես սպասելով, որ ես էլ ինձ ներկայացնեմ՝ լռեց: Խեթ-խեթ նայեցի:

– Լավ է, ապրես:

– Ուրախ եմ,– շարունակեց նա:

Ինչ հիմար խոսք է: Ինչ փարոքինակ խոսվածք է: Ահավոր անգլերենով է խոսում: Երևի քառասուն տարեկան կլինի: Ուզում է մտերմանալ, բայց նպատակ չունեմ խոսելու: Նրան երես չեմ տալիս: Ամենալավն ի սկզբանե սահմանները գծելն է: Նրա փոխարեն եթե ուրիշ մեկը լիներ, միանգամից կվախենար: Իմ մասին լսած սուր խոսքերի ճշմարտացիության մասին կմտածեր, կլարվեր: Բայց Զիշանը հանգիստ էր երևում:

– Այդտեղ որ նստած ես, այդ անկողնու տերը մահացել է,– ասում եմ ես:

– Հա, լսել եմ,– ասում է Զիշանը:– Քո լավ ընկերն է եղել: Շատ ցավում եմ: Ներողություն եմ խնդրում:

– Երևի ուզում էիր ասել՝ ցավակցում եմ:

– Այո՛, հենց այդպես:

Մի պահ չեմ իմանում ինչ ասել: Գթասրտությունից միշտ անակնկալի եմ գալիս: Սովոր չեմ: Երբեք չեմ իմանում ինչ ասել:

թվայնացրել է 1915.info կայքը

– Ինձ նայիր. ինձ համար մեկ է՝ ով ես, ինչեր ես արել, որ արածներիդ համար ես այստեղ ընկել,– ասացի ես:– Իմ խցում իմ օրենքներն են, կապիշ: Ինչքան արագ սովորես, այնքան ավելի լավ կլինի քեզ համար: Կանոն համար մեկ՝ իմ տարածքը զբաղեցնել չկա: Կանոն երկու՝ թույլ տեղերիս կպնել չկա: Կանոն երեք՝ նյարդերիս ազդել չկա: Եղա՞վ:

Զարմացած աչքերն էր թարթում:

– Հասկացա,– ասաց նա:

– Ապրե՛ս:

Քիչ անց աղմուկ լսվեց: Հեղեղի նման էին մոտենում ձայները: Առավոտվա հաշվառում, բացվող կողպեքների ձայներ: Երկու կողմից բացվում էին խցերի դռները: Լուռ կանգնած սպասում ենք, երբ են մեզ այս ու այն կողմ հրելու, այս ու այն կողմը սպուգելու:

Սպա Էնդրյուն է գալիս: Հախ թևը վիրակապի մեջ է: Խեթ հայացքով իրար ենք նայում: Չի ներում, որ բոլորի առաջ Փախածի նամակը կուլ եմ տվել: Ես էլ չեմ ներում, որ ինձ հարվածել է: Նա էլ չի ներում, որ ականջն եմ կծել: Ես էլ չեմ ներում, որ ինձ մենախուց է ուղարկել: Այսինքն՝ «քվիտ ենք»:

– Հեյ, Ալե՛քս, իմացած լինես, աչքս վրադ եմ պահում,– ասաց սպա Էնդրյուն:– Եթե մի սխալ բռնեմ, կզղջաս, որ լույս աշխարհ ես եկել:

Լեզուս կծում եմ, ոչինչ չեմ ասում: Այնքան մոտ է կանգնել ինձ սպորը, որ քթի մազերն եմ կարողանում տեսնել: Լավ հեռավորություն է: Մի հատ գլխով հարվածեմ, քիթը կհարթվի: Ընտիր անկյան տակ եմ կանգնած: Ափսոս, մտափոխվում եմ:

Երբ նորից մենակ մնացինք, Զիշանն անհանգիստ հայացքով նայում էր.

– Այս մարդը զայրացած է քեզ վրա, ինչո՞ւ:

թվայնացրել է 1915.info կայքը

– Մարդ չէ, մարդու մարմնում ապրող առնետ է:

Զիշանն այնպես ծիծաղեց, ասես կյանքում լսած ամենածիծաղելի կատակն էր.

– Առնետ-մարդ:

Հեկտո հանկարծ լրջանում է ու ասում.

– Այս աշխարհում ձուկ-մարդիկ, թռչուն-մարդիկ, օձ-մարդիկ, փիղ-մարդիկ կան: Մարդ-մարդիկ շատ քիչ են:

Առանց հասկանալու՝ նայում եմ: Տարօրինակ դեմք է, բայց չեմ հասկանում՝ ինչն է տարօրինակ: Հենց ուզում եմ ասել, որ էլ չժպտա, սկսում է խոսել.

– Միշտ զայրացած լինելը դժվար չէ՞:

– Ի՞նչ,– ասում եմ ես:– Անընդհատ կռվելը դժվար չէ, դա՞ ես հարցնում ինձ:

– Այո՛, այո՛: Քեզ եմ հարցնում: Կռիվ, կռիվ, կռիվ... Չե՞ս հոգնել:

Զարմացած նայում եմ դեմքին: Կամ մի կատակը պակաս է, կամ իսկապես հեգնաքրքրվում է:

– Լսի՛ր, ո՞րտեղից ես դու,– հարցնում եմ ես:

– Հըմմմ...– կարծես անհնար հանելուկ եմ հարցրել:– Առաջին ծննդավայրս Բրունեյն է: Նախ այնտեղ եմ ծնվել:

– Դա՞ որտեղ է:

Կարծես վիրավորված՝ խոր հոգոց է հանում:

– Բրունեյ դրախտավայրը: Բոռնեո կղզին: Անգլիայի գաղութ է: Բայց հեկտո Բրունեյն անկախացել է:

– Երևի թագուհու ծառայողները ձեզ լավ անգլերեն չեն սովորեցրել:

– Անգլերեն եմ սովորում,– ասում է Զիշանը՝ իմ սուր խոսքն անուշադրության մատնելով:– Ես ամեն օր նոր բան եմ սովորում: Զիշանը լավ ուսանող է:

– Առաջին անգամ Բրունեյում եմ ծնվել՝ ի՞նչ է նշանակում,– հարցնում եմ ես:

թվայնացրել է 1915.info կայքը

Ուրախ ժպտում է փոքր, նեղ ու վայրի բրնձի հատիկների նման ատամներով:

– Առաջին անգամ Բրունեյում եմ ծնվել,– կրկնում է նա:– Երկրորդ անգամ՝ անհասցե: Ամեն տեղ իմ երկիրն է: Աշխարհն իմ տունն է: Բոլոր մարդիկ իմ քույրերն ու եղբայրներն են:

Հաստատ խելքը թռցրել է: Հանկարծ հասկանում եմ.

– Հա՛, լսի՛ր, հոգևորական ֆանատիկներից ես հաստատ:

– Ֆանատիկ,– լրջանում է նա:– Ֆանատիկն ասում է՝ բոլորը սխալ են, ես ճիշտ եմ: Զիշանն ասում է՝ բոլորն իրավացի են այս աշխարհում, ես եմ սխալ: Ինձ նմանն ինչպե՞ս կարող է ֆանատիկ լինել:

– Լավ, եղավ: Բայց երբեք չեմ տեսել, որ մեկն իրեն աշխարհի մարդ անվանի:

– Ականջը լսում է այն, ինչ ուզում է լսել,– ասաց նա:– Բնության մեջ շատ ձայն կա, մենք չենք լսում:

– Դու ո՞վ ես, է: Աջ ես, ձա՞խ ես: Ո՞ւմ ես հարում:

– Վայ, վայ, վայ,– ասում է նա՝ կարծես ոտքին եմ կանգնել:– Սա ես, նա ես, ի՞նչ ես անընդհատ հարցնում,– հարվածում է կրծքին:– Մինչդեռ ամբողջ աշխարհը մարդու ներսում է:

– Լո՞ւրջ: Այդ մարդն էլ դո՞ւ ես,– ծաղրելով ծիծաղում եմ:

– Այդ մարդը դու ես,– լուրջ ասում է նա:

Հերի՛ք է: Շատ ուրախացանք: Նյարդերիս վրա է ազդում այս տիպը: Ամեն ինչի պատասխան ունեցող գիտունիկների չեմ սիրում:

– Աշխարհ, հա՞: Լսի՛ր, ասեմ քեզ՝ այնտեղ ինչ կա: Կռիվ, ծեծկռտուք, սարսափ, պատերազմ, ահաբեկչություն, սպանություն: Քո պատմած աշխարհը փորձանքներով լի է:

– Հմմմ,– ասում է Զիշանը տխուր, կարծես նախկինում դրանց մասին չէր լսել:

թվայնացրել է 1915.info կայքը

Աչքերը փակում է: Մի պահ կարծում եմ՝ քնելու է: Բայց հեպո նորից սկսում է խոսել:

– Նայենք բնությանը: Կենդանիները կենդանիների են սպանում: Մեծը փոքրին է ուտում: Գայլը գառան հեպևից է ընկնում: Ձկները միասին են լողում: Թռչունները երամներով են թռչում:

– Դե, դա սիրուց դրդված չեն անում,– ասում եմ ես:– Իրենց շահի համար են անում: Եթե միասին լինես, գոյապևելու շանսդ ավելանում է: Եթե վագր ընկնի հեպևիցդ, քեզ չէ, հարևանիդ կուպի:

– Բնության մեջ ներդաշնակություն կա:

– Ներդաշնակություն, չէ մի չէ,– ասում եմ ես:– Զառանցում ես:

– Ձիշանը չի զառանցում:

– Ինձ լսիր, խղճո՛ւկ, դու բնությունը թող, գլխիդ ճարը կես: Այսպեղ փափուկ դեմքերին չեն սիրում, իմացած լինես:

Առաջ գալով՝ աչքերը կկոցում է, կարծես ուզի ներսս կարդալ:

– Բանկ, հոգեբուժարան, կապ չունի: Եթե ներդաշնակություն կա, ամենավատ տեղն էլ քեզ համար օազիս է դառնում: Եթե չկա ներդաշնակություն, դրախտում էլ լինես, հանգիստ չես ունենա:

Հիմա՛ր: Որոշում եմ կարճ կապել:

– Եթե վատն ու լավը իրար հակակշռում են, ուրեմն բոլորը կարող են սրտի ուզածն անել:

– Ո՛չ, ճիշտ չես ասում: Չես կարող սրտիդ ուզածն անել: Դու կարող ես միայն մի բան անել նրանից, ինչ Արարիչն է քո մեջ դրել: Օրինակ՝ ես տարրեր ունեմ: Դու տարրեր ունես: Ձիշանի մեծ մասը ջուր է: Դու երևի կրակ ես: Այո՛, կրակ: Դա է խնդիրը՝ քեզ տրված յուրահատկություններն ինչպե՞ս ես գնահատելու: Եթե ներսում

թվայնացրել է 1915.info կայքը

հավասարակշռություն չկա, մարդ միշտ լարված է լինում: Միշտ պայթելու պատրաստ պայթուցիկի նման, ի՞նչ ափսոս: Ասում ես՝ այս տեղը դժոխք է: Գուցե: Բայց ես դժոխքի մեջ իմ պարտեզը կսարքեմ:

– Գժվե՞լ ես, հա՞: Ի՞նչ պարտեզ:

– Սիրելի՛ Իսքենդեր,– ասում է Զիշանը, կարծես թե ինձ նամակ է գրում:– Զայրույթը վագրի նման է: Վագրին տես-նելիս ասում ենք՝ վա՛յ, ինչ շքեղ կենդանի է, երանի իմը լինի: Բայց նրան չես կարող ընտելացնել: Ոչ ոք չի կարող: Վագրն է քեզ ղեկավարում: Զիշանն ասում է՝ թո՛ղ զայ-րույթը, վատը, ատելությունը: Վագրերը քեզ վնասում են, իսկ մարդկանցից սովորում ես: Ուրիշներից: Տարբերվող-ներից ենք սովորում, ոչ թե նույներից: Զիշանն ասում է՝ էգոն անգղի նման է: Վայրի թռչուն: Քեզ մաս-մաս կանի: Քեզնից կառնի, ինքը կուտի: Եթե ուժեղ է, դու ես թույլ: Եթե թույլ է, դու ես ուժեղ:

Դանդաղ, բայց ինքնավստահ էր խոսում: Ապակե ծաղիկների պես էր վերաբերվում բառերին, ուշադրու-թյուն էր դարձնում:

– Ինձ միայն մի բան է հետաքրքրում...– ասում եմ:

– Ի՞նչ:

– Քեզ ինչո՞ւ խենթերի հետ մի տեղ չեն դրել:

Բարձր ծիծաղում է:

– Այո՛, այո՛, ճիշտ ես: Բոլորն ասում են՝ Զիշանը մի քիչ ծալը պակաս է:

* * *

Դեկտեմբեր, 1978: Երբ ոստիկանությունը եկավ Քեյ-թի տուն, հետնաբակով դուրս վազեցի: Բախտս բերեց: Մի հեծանիվ գողացա ու հեռացա՝ որքան հնարավոր էր, հետո մեքենա կանգնեցրի: Երկու ֆրանսիացի ուսանող ինձ վերցրին: Նախկինում երբեք միասեռական զույգի չէի

թվայնացրել է 1915.info կայքը

տեսել: Չէի սիրում դրանց նմաններն, բայց ոչ ոքի քննադատելու վիճակում չէի: Զգացին, որ խնդիրներ ունեմ: Ինձ լավ վերաբերվեցին: Լանչի հրավիրեցին, ծխախոտ տվեցին: Հեպո ճանապարհը շարունակեցին, ես մնացի: Մենակ:

Երկու օր անց ձերբակալվեցի. այգում քնած գտան: Քաղցից գալարվում էի: Այնքան հոգնած էի, որ քիչ էր մնում՝ ուրախանայի ձերբակալությունից: Հարցաքննության ժամանակ հանգիստ էի: Ի՞նչ պիկի լիներ. մի քիչ կքաշքշեին, հեպո բաց կթողնեին, կարծում էի: Մայրս հո չէ՞ր բողոքելու: Չգիտեի, որ մահացել է: Սկզբում որոշ ժամանակ չասացին: Վստահ էի՝ լուրջ վնասվածք չի ստացել: Աջ ուսին դանակի մի հարված: Ինչքա՞ն վատ կարող էր լինել: Հեպո մի տեսուչ եկավ: Ասաց. «Լսի՛ր, էյ, գիտե՞ս, որ սպանել ես նրան»:

Շունչս կտրվեց: Կարկամեցի: Ի՞նչ՝ հարցրի ես երկար ժամանակ անց:

– Սեփական մորդ ես սպանել, հոգեկա՛ն հիվանդ: Տեսնենք՝ ինչպես ես ազատվելու:

Դեռ չէի հավատում: Մտածում էի՝ ինձ խոսեցնելու համար սուտ են ասում, ուզում են ինձ վախեցնել: Բայց առաջս մի թերթ դրեցին: Սպա Էնդրյուի պահած թերթի նման: Այդ ժամանակ իմացա, որ մայրս մահացել է:

Դատարանում կարծես թմրած լինեի: Առանց զգացմունքների: Ինչպես թլփատմանս օրը՝ ծառի կատարին: Լրագրողներ: Լուսանկարիչներ: Դատարանից դուրս պաստառներով իմ դեմ ցույց անողներ կային, մարդիկ, ում չեմ ճանաչում: Ինձ սատարողներ էլ կային, էլի չէի ճանաչում:

Բազմության մեջ Էսմայի դեմքը տեսա՝ գունատ էր: Հեպո Յունուսին տեսա: Աչքերը մեծ էին, հայացքը՝ վիրավոր: Այդ պահին շունչս կտրվեց: Օդը թոքերովս չէր անցնում: Թթվածնային դիմակը հանած մարդու պես ընկա

թվայնացրել է 1915.info կայքը

գեկնին: Մկրածեցին՝ ասթմա է: Բժիշկը քաղաքավարի մարդ էր: Ինձ զննեց, բայց ոչինչ չկար: Հեկո խելառների բժիշկը եկավ: Դպրարկ մարդ էր. հում մսից էլ անփորձ: Հիմար հարցեր կվեց: Մոխրամանը վրան շպրտեցի: Ափսոս, լավ չէի նշան բռնել:

Բանտում առաջին գիշերը անկողնուն փռվեցի ու աչքերս հառեցի առաստաղին: Ուղիղ մի ժամ: Գուցե խենթերի բժիշկը իրավացի է, ինձ հեկրաքրքիր էր: Իսկապես գլխումս խնդի՞ր կար: Խենթանո՞ւմ էի: Դպրավորն ասել էր. «Անմեղսունակ չէ: Այս երիտասարդը լրիվ պատժի է արժանի»:

Հաջորդ գիշեր նորից աչք չփակեցի: Ժամանակն անցավ: Առաջին տարիներն անավարտ մղձավանջի նման էին: Շատ էի կռվում: Փորձանք էի: Այդքան ժամանակ անց մի օր՝ կեսգիշերին, հստակ հիշում եմ՝ անձրև էր գալիս, ահավոր փոթորիկ, ամպրոպ, կայծակ: Հանկարծ անձրևը դադարեց, ու լռությունն ավելի անտանելի դարձավ: Հենց այդ պահին մի տարօրինակ զգացում ունեցա: Կարծես մայրս կողքիս լիներ: Ո՛չ զայրացած էր, ո՛չ նեղացած: Հանգիստ էր երևում: Սկսեցի արտասվել: Հեկեկում էի, սիրտս փուքսի նման իջնում-բարձրանում էր: Կյանքիս ընթացքում այդքան արցունք չէի թափել, ինչքան այդ գիշեր՝ հեղեղի նման եկավ, թափվեց:

* * *

Զիշանի հետ երկու շաբաթ անցկացնելուց հետո, իմ կանոններից մեկը խախտելով, հարցրի.

– Ինձ նայիր, դու ինչո՞ւ ես այստեղ հայտնվել: Քեզ նմանն ի՞նչ կարող է անել որ:

– Ա՛հ, Զիշանը սարսափելի մեղք է գործել՝ ասում են,– ասաց նա տխուր:– Ապացույց չկա: Բայց մի պարոն կա: Դպրարանը նրան լսեց, որովհետև հայտնի

թվայնացրել է 1915.info կայքը

ազգանունից է: Ասում է՝ ես եմ վերցրել պայուսակը, փարեց կնոջը վիրավորել: Խեղճ կինը հիվանդանոցում է, կոմայի մեջ:

– Տարեց կնոջ վրա՞ ես հարձակվել: Գողություն... մարմնական վնասվածք... վայ, կեղտոտի մեկն ես:

– Զիշանը չի արել այդպիսի վատ բան,– ասաց նա:– Այդ կինը, երբ աչքերը բացի, ճշմարտությունը կասի: Սպասում եմ: Աղոթում եմ: Համբերում եմ:

– Հիը, ըհը, դեռ շատ բան ունես անելու,– ասում եմ ես:– Հիմա ասում ես՝ քո մեղքի համար չես այստեղ ընկել, հա՞: Անգամ եթե այդպես է, անցած լինի: Բանդ բուրդ է:

Ուշադիր դեմքիս է նայում:

– Այն օրից, ինչ ոստիկանությունը մեր տուն եկավ, մտածում եմ՝ ինչու է եղել: Աշխարհում ոչինչ առանց պատճառի չի լինում: Նա հաստատ մի բան գիտի, բայց ի՞նչ: Չեմ հասկանում: Ոստիկանության բաժին, դատարան, բանտ... Պատասխանի եմ սպասում: Մինչև որ քեզ հետ նույն խուցն ընկա:

– Ի՞նչ հիմարություններ ես դուրս տալիս նորից:

– Լսի՛ր, Զիշանը այստեղ եկավ ու ամեն ինչ հասկացավ: Քո շնորհիվ եմ այստեղ:

– Այ մարդ, ի՞նչ հիմարություն ես խոսում:

Լռում է ու խոր շունչ քաշում:

– Իհարկե, եթե ինձ մոտ գայիր, ավելի հեշտ կլիներ: Բայց ո՛չ, դու չեկար: Դե, ստիպված ես եկա: Ահա այդպես բանտարկյալ դարձավ Զիշանը, բանտ ընկավ: Քեզ գտնելու համար:

– Ուզում ես ասել՝ ոչ մի մեղք չես գործել, բայց ինչ-որ տիեզերական ուժ քեզ այստե՞ղ է գցել:

– Այո՛, ճիշտ է,– ոգևորված ասում է նա:

Դեմքը շողում է փուչիկ գտած երեխայի նման: Այս մարդը լրիվ խելառ է: Ամեն օր մի նոր սուտ է հորինում:

թվայնացրել է 1915.info կայքը

Հանկարծ սկսում եմ կասկածել. ծոծրակից բռնում, հենում եմ պատին:

– Ինձ նայիր, կարո՞ղ է քեզ սպա Էնդրյուն է ուղարկել: Ինձ խենթացնելու համա՞ր է քեզ օգտագործում: Դա՞ է ձեր պլանը:

– Ես քեզ ասում եմ՝ ինձ Ասպված է ուղարկել,– դեմքը ծամածռելով՝ ասաց նա:– Իսկ դու ասում ես՝ Էնդրյու: Քո Էնդրյուն փոքր է, Ասպված՝ մեծ:

Թողնում եմ նրան, քունքերս եմ շփում, գլուխս ցավում է:

– Քանի՞ տարեկան ես,– հանկարծ հարցնում եմ ես:

– Վաթսունյոթ,– գլուխը կախելով՝ կարծես ամաչելով՝ ասում է նա:

– Ի՞նչ: Դե լավ, էլ մի՛:

– Ճիշտ եմ ասում:

– Վաթսունյոթի տեսք չունես:

– Շնորհակալ եմ,– ասում է նա:– Զիշանն իրեն լավ է նայում:

Նորից սկսում է անկապ բաներ խոսել:

– Քեզ մոտ եմ եկել,– ասում է նա:– Վերջերս բանի պետք չէի, Ասպված ինձ այստեղ ուղարկեց, որովհետև ծուլություն չի սիրում: Բոլորս պետք է շատ աշխատենք:

– Ի՞նչ աշխատենք:

– Նրանք, ովքեր սրտով են զգում, ասում են, որ...

– Դա՞ ինչ է:

– Սրտով զգացողները մարդուն են նայում, ոչ թե դեմքին: Իսկությունն են տեսնում, ոչ թե կազմը: Տարբերություն չեն դնում, վատ չեն նայում, չեն վատաբանում: Մարդը պատվավոր էակ է: Տարբերությունները միայն դրսում են՝ հագուստ, անձնագրեր, բայց սիրտը նույնն է: Ամենուր:

– Նորից սկսվեց: Նորից մի պարկ զառանցանք:

Զիշանը ժպտում էր կամ «զառանցանք» բառի իմաստը չգիտեր, կամ ինձ բանի տեղ չէր դնում: Ասում էր.

թվայնացրել է 1915.info կայքը

– Երբ բոլորս մահանալուց հետո արթնանանք, Նա մեզ չորս հարց է տալու. Ժամանակդ ինչպե՞ս ես անցկացրել: Գումարդ որտեղի՞ց ես վաստակել: Երիտասարդությունդ ինչի՞ վրա ես վատնել: Ու չորրորդ հարցը, որ շատ կարևոր է՝ Քեզ տված գիտելիքն ի՞նչ ես արել,– հետո լռում ու ինձ է նայում:– Հասկացա՞ր՝ ինչ էի ուզում ասել:

– Ոչինչ չհասկացա:

– Ասում եմ՝ ես գիտելիք ունեմ: Ես ուսուցիչ եմ...

– Բա ասում էիր՝ աշակերտ եմ:

– Ամեն ուսուցիչ միաժամանակ աշակերտ է,– ասում է նա:– Ես ուսուցիչ եմ, գիտելիքի տեր եմ, քեզ հետ կիսվելու եմ եկել: Նա դրա համար է ինձ այստեղ ուղարկել:

Բանտում ամեն տեսակ մարդու հետ եմ ծանոթացել: Եվ հսկիչների, և՛ բանտարկյալների: Խելագար, մի քիչ խենթ, ցնդած, խեղճ, թույլ, դաժան... Բայց Շրուսբերի բանտ Զիշանի նման ոչ ոք չէր եկել, ո՛չ էլ նրանից հետո էր գալու: Զիշանի ծննդավայրը Բրունեյն էր, հայրենիքը՝ աշխարհը:

Այդ մարդը կամ ծաղրածու է, կամ իսկապես իմաստուն: Չգիտեմ՝ ինչ է փնտրում իմ խցում: Ի՞նչ եմ անելու նրա հետ:

Իսքենդեր Թոփրաք
Շրուսբերի բանտ, 1991

թվայնացրել է 1915.info կայքը

Թարրեք

6 հոկտեմբերի, 1978
Լոնդոն

Ուրբաթ օրը ինչպես միշտ նույն ժամին խանութ եկած Մերալը լսեց՝ ինչպես էր ամուսինը հեռախոսով բորբոքված խոսում: Թարրեքի ծնոտն առաջ էր եկել, ինչպես միշտ լինում էր զայրացած պահերին, մորուքն էր քաշքշում: «Բայց»-երով ու «այո՛, բայց...»-երով շաղախված կարճ ու խիստ նախադասություններով էր խոսում: Գծի հակառակ կողմում ով որ էր՝ նա էր վարում խոսակցության մեծ մասը: Մերալը լուռ մտավ ու անցավ սեղանիկի հակառակ կողմը: Կապոցը բացեց ու սկսեց ամուսնու ճաշը պատրաստել: Մանթի էր բերել այսօր, կարագով սոուսին սովորականից շատ էր կծու բիբար լցրել, դրա համար անհանգիստ էր, որ Թարրեքը չի հավանելու:

Սեղանը գցելուց հետո մի կտոր վերցրեց ու սկսեց դարակների փոշին մաքրել: Ամեն շարժումից ոսկե թևնոցները զնգում էին: Պատրաստի մակարոններին, կոնսերվացված մսին, սոյայի սոուսին, թխկու օշարակին, չորացրած սոխի տարաներին նայեց. երբեք դրանցից ոչինչ չէր փորձել:

– Սրանք ո՞վ կգնի որ,– հարցրել էր մի անգամ նա:

– Ժամանակակից կանայք,– պատասխանել էր Թարրեքը:– Խոհանոցի համար ժամանակ չունեն: Երեկոյան անցնելիս մտնում, երկու տուփ թունա են գնում:

թվայնացրել է 1915.info կայքը

Տանը լցնում են աղցանի վրա, անունն էլ դնում են ընթրիք:

Մերալը զարմանում էր՝ նրանք ինչպիսի՞ կանայք են: Ինչպիսի՞ ընտանիքներից էին դուրս եկել: Տղամարդկանց ամսագրերի նիհար կանայք անգամ նրան այնքան չէին զարմացնում, որքան ամուսիններին անուշադրության մատնող ժամանակակից կանայք: Ինչ-որ մեկը երևի խաբում էր ամսագրերի աղջիկներին, որ մորեմերկ նկարվեն: Նրանք արդեն «ընկած» կանայք էին: Բայց ժամանակակից կանայք ուրիշ էին: Գումար էին վաստակում, մեքենա էին վարում, շքեղ հագնվում էին. կային կանայք, որ երեխա էլ չունեին, բայց ամուսինների համար մի բիբարով տոլմա էլ չէին կարող պատրաստել:

Կասկածում էր, որ տագերակինն էլ էր նրանցից մեկը: Փեմբեն ինքնագլուխ մի բան ուներ, որին դժվարանում էր անգամ անուն տալ՝ խաղաղ ծովի հատակի պես մի բան: Փեմբեի ամուսինն էլ էր ապերախտի մեկը: Այդքան ժամանակ է՝ տուն չէր գալիս: Մինչ այդ էլ չէր երևում: Իր ամուսինն այդպես չէր: Ամեն պահի իրենց գլխին կանգնած էր, փառք Աստծո:

– Հանը՛մ,– ձայն տվեց Թարըքը՝ լսափողը դեռ ձեռքին էր:

– Ի՞նչ կա:

Գլուխը կողք թեքելով՝ դուռն էր ցույց տալիս Թարըքը: Երեք հաճախորդ եկան: Երկուսը տղա, մի աղջիկ: «Ինչ երիտասարդ են»,- մտածեց Մերալը: Տղաներից մեկի հոնքերին՝ արծաթե օղ, գլխին էկզոտիկ թռչնի բույն հիշեցնող նարնջագույն մազափունջ էր: Մյուս տղան նիհար ու երկարահասակ էր, աֆղանական ժիլետի տակից ոչինչ չէր հագել, անմազ կուրծքն էր ի ցույց դնում: Իսկ աղջիկը մուգ սև մազեր, թղթի

թվայնացրել է 1915.info կայքը

պես գունատ մաշկ, պատռված գուլպաներ ու լիքը դաջվածքներ ուներ:

Մերալը չէր ուզում նրանց տեսնել, աչքերը փակել էր:

– Գրազ գամ, մեզ չի սիրում,– ասաց Ցրողը:

– Վայ, վայ: Քեզ վախեցրի՞նք, հանը՛մ մորաքույր,– ասաց Իգգի Փոփը՝ սեղանիկին հենվելով:

Ձայնը կեսմեղադրական, կեսծաղրական էր:

Երիտասարդից եկող գարեջրի ու ծխախոտի հոտը հասավ Մերալի քթին: Իրենից անկախ հետ քաշվեց: Աչքի պոչով նայեց ամուսնուն: Թարրքը դեռ խոսում էր: Կարծես չէր պատրաստվում խոսափողը վայր դնել:

– Այո՛, ի՞նչ էիք ուզում,– հանգիստ հարցրեց Մերալը:

– Կոճապղպեղով գարեջուր կա՞,– հարցրեց Յուրութեչը:

– Չկա կոճապղպեղով գարեջուր,– ձայնը դողում էր ու անվստահ էր:

Գաղափար չուներ՝ ինչ էին ուզում, դրա համար որոշել էր հենց սկզբից ոչինչ չասել: Բայց այդ ընթացքում Իգգի Փոփն արդեն գազավորված ու ալկոհոլային ըմպելիքների սառնարանը գտել էր:

– Հե՛յ, տիկի՛ն, լիքը գարեջուր է: Ինչո՞ւ ես ասում՝ չկա:

– Երևի իրեն է պահելու,– ասաց Ցրողը՝ քիթը փորելով:

– Հիմարություններ ես դուրս տալիս,– միջամտեց Տոբիկոն:

Խակի գլխաշորով ու խենթ հայացքով, մուգ աչքերով Յունուսին հիշեց: Ինչքան մտածկոտ էր փոքրիկը վերջերս: Տոբիկոն մտածեց՝ տեսնես ի՞նչ էր նրա գաղտնիքը, ու զղջաց, որ ավելի շատ հարց չէր տվել:

թվայնացրել է 1915.info կայքը

Գուցե ավելի լավ էր, որ երեխան գաղտնիքներն իրեն չէր պատմել: Իրականում մտածում էր՝ Յունուսի համար ավելի լավ կլիներ, որ էլ չհանդիպեն:

– Մի տուփ պնդուկով վաֆլի, խնդրում եմ,– ասաց Տոբիկոն՝ սեղանիկի հետևի դարակները ցույց տալով:

Մինչ Մերալը Տոբիկոյի, հետո էլ Իգգի Փոփի ուզածն էր տալիս, Ցրողն արդեն երկու նուգայով սալիկ, մի ատամի խոզանակ ու մի տուփ կոշիկի ներկ ցրեց: Բացի դրանից՝ մի տուփ սառեցրած նրբերշիկ էլ էր խցկել բաճկոնի մեջ, բայց երբ սառույցը հալվեց, ու ջուրը սկսեց կաթալ, զղջաց արածի համար:

– Հե՛տ դիր,– շշնջաց Տոբիկոն:

– Խե՞նթ ես, ա՛յ աղջիկ,– հակաճառեց Ցրողը:

– Չեմ ուզում, որ այս մարդկանց թալանես: Յունուսի նման են:

– Վայ, հիմարություններ ես դուրս տալիս:

– Ասացի՝ ո՛չ:

Թարրքի թավ ձայնով կռիվն ընդհատվեց: Ձեռքերը մեջքին ծալած, թզբեհը համրելով՝ մոտեցավ նրանց:

– Համեցե՛ք, համեցե՛ք,– ասաց նա ու կնոջը ծայրաստիճան քաղաքավարի անգլերենով հարցրեց.– Այո՛, տեսնենք՝ ի՞նչ ունենք:

– Պնդուկով վաֆլի,– բացատրեց Մերալը՝ փաթեթը արագ թողնելով սեղանին:

– Լավ, ես կնայեմ,– ասաց Թարրքը՝ գլուխն օրորելով:

Մերալը դժկամորեն վերադարձավ փոշի մաքրելու գործին: Չհասկացավ՝ ինչու էր թերթերի կողքին նուգայի երկու սալիկ, ատամի խոզանակ, կոշիկի ներկ ու մի տուփ նրբերշիկ դրած: Դրանք տեղը դնելիս այցելուների հետ հաճույքով զրույցի բռնված ամուսնուն էր նայում: Կոճապղպեղով գարեջրին ու պնդուկով

թվայնացրել է 1915.info կայքը

վաֆլիին ի հավելումն մի տուփ ծխախոտ, լուցկի ու քրեքեր գնեցին փանքերը: Դուրս գալիս ձեռքով արեցին: Մերալն էլ ակամայից ձեռքով արեց.

– Սրա՛նց նայիր,– մռթմռթաց Մերալը նրանց հետևից:– Ինչ հագուստ է:

Թարըքը ուսերը թոթվեց:

– Երիտասարդ են: Արյունը եռում է, ինչ անես:

«Երիտասարդ ու անգլիացի»,– մտածեց Մերալը: Եթե իր երեխաներից մեկն այդպես հագնվեր, ամուսինը կխենթանար: Մերալը կայուն մարդ էր. թե՛ տանը, թե՛ խանութում միշտ նույնն էր: Նրա համար անհնար էր հասկանալ՝ ինչու պետք է մարդ իր մարմնի մեջ օղեր մտցնի, քորոցներով միացրած, ծվատված հագուստներով շրջի:

Թարըքը, անտեղյակ կնոջ մտքերից, ոտքի վրա կանգնած կերավ:

– Օֆ, շատ կծու է:

– Նստի՛ր, հանգիստ կե՛ր:

– Ժամանակ չունեմ: Պետք է խանութը մի քանի ժամով քեզ թողնեմ:

– Ինչպե՞ս թե: Ես այստեղ չեմ կարող մնալ: Գազին ուտելիք եմ թողել:

– Աղջիկները տանը չե՞ն: Թող նայեն,– ասաց Թարըքը:– Կարևոր գործ է, հանը՛մ: Մատակարարողների հետ խնդիր է եղել: Եթե այսօր խնդիրը չլուծեմ, վաղը վաճառելու բան չեմ ունենա: Ո՛չ կաթ կգա, ո՛ր կարագ, ո՛չ ձու, հասկանո՞ւմ ես:

– Լավ, հիմա ո՞ւր ես գնում,– հարցրեց Մերալը:

– Լոնդոնի մյուս ծայրը,– դժգոհ ասաց Թարըքը:

թվայնացրել է 1915.info կայքը

* * *

Մետրո չէր սիրում Թարըքը, դրա համար ավտոբուս նստեց: Մտածում էր՝ միևնույն է, մի օր գետնի տակ ենք հայտնվելու, գետնի տակ շրջելն ի՞նչ իմաստ ունի:

Քաղաքի այդ շրջանին ծանոթ չէր: Ճանապարհը երկար էր, ավտոբուսը դանդաղ էր գնում, բայց գոնե վարորդները գործադուլ չէին անում: Մի թյուրիմացություն հարթելու համար այդքան ճանապարհ կտրելուց էր դժգոհ:

Գլխում խոսակցությունն էր պլանավորում: Զանգի ընթացքում տնօրենն արդեն պնդել էր, որ նրանց հետ այլևս համաձայնության չեն գա: Հիմա՛ր: Թարըքը գրպանից ծալված թուղթ հանեց ու ստուգեց: Երբ պայմանագիրը աչքը մտցնի, ամոթից գետինն է մտնելու: Ով գիտի, գուցե նրան սիրաշահելու համար հատուկ զեղչ առաջարկեն: Ինչ էլ որ լինի, այդ տարաձայնությունը պետք էր հնարավորինս շուտ լուծել: Եղունգներով փորելով էր հասել այնտեղ. չէր կարող թույլ տալ, որ տարիների քրտինքն ու աչքի լույսը մի անխիղճ աշխատակցի պատճառով ջուրն ընկներ:

Երկու ավտոբուս փոխելուց հետո հասավ Ռիչմոնդ թաղամաս: Եղանակը հով էր, բայց անսպասելիորեն արև էր դուրս եկել: Մայրուղու վրա մի քանի մարդ հազվագյուտ արևն էին վայելում: Թարըքը նայեց փոքրիկ, կարմիր քթերով, գունատ մաշկով ու միշտ իրեն շատ բարակ թվացող հագուստներով անգլիացի երեխաներին: Թուրք մայրերը երեխաներին փողոց հանելուց առաջ մի քանի շերտ հագուստ էին հագցնում, մի հատ էլ վերմակով էին ծածկում: Մինչդեռ անգլիացի մայրերի համար մի շորտ, վրայից մի բարակ բաճկոն հագցնելն ավելի քան բավական էր: Երբեմն երեխաների հագին գուլպա էլ չէր լինում: Ինչպե՞ս էր լինում,

թվայնացրել է 1915.info կայքը

որ չէին մրսում: Ցրտադիմացկունությո՞ւնն էլ էր մշակութային յուրահատկություն: Թարրըքը դա ոչ մի կերպ չէր հասկանում:

Լավ կլիներ՝ հիմա մի սրճարանում թեյ խմեր, բայց չէր ուզում գումար ծախսել: Իրենց տոհմում միակ մարդն էր, որ սև օրերի համար գումար հավաքելու կամք էր ցուցաբերում: Հալիլն իր խնդիրներով էր ապրում: Ավստրալիայում իր կյանքն էր ստեղծել, չէր զանգում, հարցնում՝ ինչ-որ բանի կարիք կա, թե չէ: Իսկ Ադեմը... նրանից վաղուց էր հույսը կտրել: Թղթախաղով էր տարվել, վաստակած գումարը ռուս պարուհու վրա էր ծախսում:

Զայրացած քայլելով՝ անցավ իրար կողք կողքի շարված տների մոտով: Ի տարբերություն մայրուղու՝ այդտեղ անցորդներ չկային. լքված էր երևում: Զառիթափի ներքևի կինոթատրոնն անգամ կարծես նախորդ դարից մնացած լիներ:

Այս քաղաքը շատ հին էր, շատ հին: Անցյալի հետքերն ամենուր էին: Մի անգամ հետնաբակի ծաղիկները, թփերը էտելիս ռումբի կտորներ էր գտել Թարրըքը:

Մտածում էր՝ Մերալը ինչ է անում խանութում: Եթե ամուսնուն օգնելու լիներ, պետք է անգլերենը զարգացներ: Գուցե նրա համար գրպանի բառարա՞ն գներ, ամեն օր հինգ-տասը բառ անգիր անե՞լ տար: Այդքան տարի է՝ իր փոքր աշխարհում միայն թուրքերեն էր խոսում կինը: Բայց արդեն պետք է ավելին աներ: Թարրըքը մեծանում էր, բացի դրանից՝ մեկի փոխարեն երկու ընտանիքի մասին էր հոգ տանում:

Արևը կորչում էր խիտ, մոխրագույն ամպերի տակ: Թարրըքը, հոնքերը կիտելով, երկնքին նայեց ու նկատեց՝ փոթորիկ էր մոտենում: Քայլերն արագացրեց:

թվայնացրել է 1915.info կայքը

* * *

Ժողովը լարված անցավ: Թույլ չտվեցին տնօրենին տեսնել: Հիասթափված Թարըքը ստիպված եղավ համաձայնագիրը տնօրենի օգնականին ցույց տալ: Նրանք էլ ցույց տվեցին ընկերության՝ պայմանագիրը միակողմանիորեն չեղյալ հայտարարելու մասին կետը: Թարըքը սպառնաց, որ ուրիշ մատակարարող կգտնի, նրանք էլ ասացին՝ ինչպես կուզեք:

Քսան րոպե անց շենքից դուրս գալիս նյարդայնացած էր: Պետք էր հարցուփորձ անել, ուրիշ խանութների տերերի հետ խորհրդակցել ու նոր ընկերություն գտնել: Փողոցի մյուս ծայրին գտնվող կինոթատրոնին մոտեցավ: Աֆիշին նայելու համար դանդաղեց: Հարրի Հուդինիի մասին մի ֆիլմ էր՝ սև-սպիտակ:

Յոթերորդ արվեստով այնքան էլ հետաքրքրված չէր, բայց սիրում էր այդ հայտնի ածպարարին: Ինչպե՞ս կարող էր հետաքրքրված չլինել նրանով. ձեռքերն ու ոտքերը շղթայված իջեցրել էին ջրով լի ավազանի մեջ, որտեղից կարողացել էր ողջ-առողջ դուրս գալ:

Ներս մտավ ու շուրջը նայեց: Ցուցատախտակին մի քանի նկար, քննադատական հոդված էր փակցված: Կարդալիս հասկացավ, որ համր ֆիլմ է, ու հիասթափվեց: Այդ հին բաներն ո՞վ էր նայում որ: Հենց այդ պահին թատրոնի մուտքի վարագույրը, կարծես իր հարցին պատասխանելով, բացվեց, ու մի անգլիացի զույգ դուրս եկավ: Ֆիլմն ավարտվել էր: Ներսից մի քանի դիտորդ էր դուրս գալիս: Զույգի թիկունքում Թարըքը մի կնոջ նկատեց: Աչքերը հառել էր հատակին, արագ քայլում էր դեպի ելքը: Անհնար էր հավատալ, բայց եղբոր կինն էր:

Թարըքն ինքնըստինքյան մի քայլ արեց Փեմբեի կողմը: Արդեն ուզում էր ձայն տալ, հարցնել՝ ինչ

թվայնացրել է 1915.info կայքը

ես անում այստեղ մենակ, երբ մի տղամարդու նկատեց: Միջին տարիքի, երկարահասակ: Տեսավ՝ ինչպես մոտեցավ Փեմբեին: Ինչ-որ բան շշնջաց ու նրան մի թուղթ մեկնեց: Փեմբեն էլ ժպտաց, վերցրեց ու դրեց գրպանը:

Թարըքը երկար նայեց նրանց հետևից՝ զարմացած ու լուռ: Ո՞վ էր այդ մարդը: Թուրք չէր, քուրդ էլ չէր, դա հաստատ: Ո՛չ թաղամասից էր, ո՛չ էլ բարեկամներից: Անգլիացու էր կարծես նման: Հաստատ օտար էր: Ի՞նչ էր կատարվում, ա՛յ մարդ:

Երբ հասավ դռան մոտ, տեսավ՝ Փեմբեն՝ աջ, իսկ օտարը ձախ էր գնում: Շփոթված կանգնել էր: Ափիշին գրված էր. «Աշխարհում ոչինչ չի կարող Հուդինիին ծնկի բերել»:

թվայնացրել է 1915.info կայքը

Իսքենդեր

7 հոկտեմբերի, 1978
Լոնդոն

Շաբաթ առավոտյան Իսքենդերը պետք է Քեյթին մի սրճարանում հանդիպեր, բայց դռան դիմաց մորուքը քաշքշելով այս ու այն կողմ անող Թարըքին տեսնելով՝ զարմացավ:

– Հորեղբա՛յր, այստեղ ի՞նչ գործ ունես:

– Քեզ եմ սպասում, գնացի «Ալադինի անձավ», ընկերներդ ասացին՝ այստեղ ես:

Թարըք հորեղբայրն աշխատանքի ժամին խանութը թողած իրե՞ն էր փնտրում: Ստամոքսում ցավ զգաց:

– Այ քեզ բան: Ի՞նչ է եղել:

Թարըքը չգիտեր ինչ անել՝ խոսե՞լ, թե՞ ոչ:

– Պետք է խոսենք, զարմի՛կ: Տղամարդը տղամարդու հետ:

– Բայց հանդիպում ունեմ:

– Հիմա հանդիպումը կարևոր չէ,– հակաճառեց Թարըքը:

Իսքենդերը միայն այդ ժամանակ նկատեց՝ որքան լարված էր հորեղբայրը, այնպես էր քրտնում, կարծես եղանակը տաք էր: Ճնշող լռության մեջ նստեցին այգու պատի մոտ:

– Տղա՛ս,– ասաց Թարըքը:– Քեզ համար վատ լուր ունեմ:

թվայնացրել է 1915.info կայքը

– Ենթադրում էի:

Թարրքը դողալով ծխեց, հետո ծուխը ոլորվելով դուրս եկավ ռունգերից: Հետո ցածր ձայնով ասաց.

– Մորդ հետ է կապված: Ասածներս դուրդ չեն գալու:

* * *

Երբ տասը րոպե անց Իսքենդերը մտավ սրճարան, շուրթերը սեղմվել էին, գույնը գցել էր: Քայլեց դեպի Քեյթը. թխվածքաբլիթը գրեթե վերջացրել էր, բանանով ու ելակով կաթի կեսն էր խմել:

– Նորից ուշացար,– ասաց Քեյթը՝ խոր շունչ քաշելով:

– Կներես:

– Արդեն սովորել եմ: Բայց այսօր կարծում էի՝ չէիր ուշանա: Կարծում էի՝ գոնե մի անգամ, քեզնից բացի, ուրիշների մասին կմտածես:

Իսքենդերը ձեռքը բռնեց, համբուրեց մատների ծայրերը:

– Տրամադրությունդ վա՞տ է:

– Վա՞տ: Կարծես թե չգիտես՝ ինչու,– Քեյթը լռեց, կարծես մի բան էլ էր ուզում ասել, բայց արտասվեց:

Իսքենդերը գրպանից մի կապ փող հանեց ու դրեց աղջկա ձեռքը:

– Տե՛ս, սրանից հաստատ կուրախանաս:

Երբ Քեյթը չպատասխանեց, ավելացրեց.

– Մի շաբաթ առաջ եմ վերցրել հորեղբորիցս: Բայց չէի կարողանում քեզ տալ, չէիր ուզում ինձ հանդիպել:

– Պետք է մտածեի: Մենակ:

– Ո՞ւ:

– Ի՞նչ ու, այդ գումարը գրպա՛նդ դիր,– հակաճառեց Քեյթն ու ձեռքն արագ քաշեց:

– Սա ի՞նչ է նշանակում:

թվայնացրել է 1915.info կայքը

– Մտափոխվել եմ, Ալե՛քս:

– Ի՞նչ:

– Այդպես մի՛ նայիր: Ես այդ զզվելի վայրը չեմ գալու քեզ հետ: Ունենալու եմ երեխային:

– Գժվե՞լ ես, ի՞նչ է,– ասաց Իսքենդերը, հետո ձայնը մի քիչ իջեցրեց:– Տասնհինգ տարեկան ես: Ես տասնհինգ տարեկան եմ: Մայրդ կաթված կստանա:

– Բան չի լինի: Արդեն գիտի:

Իսքենդերը սառեց:

– Ահա, հիմա հասկացա: Նա՞ է ուղեղդ լվացել:

– Ո՛չ, ընդհանրապես: Հետո էլ ինչո՞ւ ես զայրանում, որ մորս պատմել եմ:

– Խոսել էինք դրա մասին: Որոշել էինք: Գնացել եմ հորեղբորս մոտ, փող եմ վերցրել: Բժիշկ եմ գտել: Պայմանավորվել եմ: Երկու անգամ: Անընդհատ հետաձգում ես: Արդեն որոշել էինք, հիմա արքայադուստրը նորից մտափոխվել է:

Քեյթը նորից սկսեց արտասվել: Մի կաթիլ արցունք ընկավ մրգային կաթի վրա. աղի կաթիլը սահեց վարդագույն մակերեսին:

– Սա սիրո պտուղ է: Իրավունք ունի ծնվելու:

– Զառանցում ես:

– Ո՛չ, չեմ զառանցում,– համառեց Քեյթը:– Մեկ է, արդեն շատ ուշ է: Երեք ամիսն անցել է:

– Ի՞նչ: Ինչո՞ւ ինձ չես ասել:

– Ես էլ չգիտեի,– զայրացած ասաց նա:– Ի՞նչ տարբերություն, մեկ է, երբ երեխան ծնվի, ուզում եմ, որ իմ ու մորս հետ ապրես:

– Լրիվ ցնդել ես,– հոնքերը բարձրացնելով՝ ասաց Իսքենդերը:

Քեյթը աթոռը աղմուկով հրեց ու վեր կացավ: Սուր, նեղացած, գրեթե անճանաչելի ձայնով ասաց.

թվայնացրել է 1915.info կայքը

– Թույլ չեմ տալու, որ այդպես խոսես ինձ հետ: Գնում եմ:

– Ո՞ւր:

– Տուն: Գնալու եմ, պառկեմ: Մայրս ասում է՝ չպետք է շատ հոգնեմ:

Իսքենդերը հարվածեց սեղանին. ձայնն այնքան հանկարծակի ու բարձր էր, որ մի քանի այցելու իրենց նայեցին: Բայց Քեյթի վրա չազդեց: Գնալուց առաջ էլ ավելացրեց.

– Լսի՛ր՝ ինչ եմ ասում: Ավելի լավ կլինի՝ մի քիչ հանգստանաս ու անուն մտածես, եղա՞վ: Մի քանի աղջկա, մի քանի տղայի անո՛ւն մտածիր, թող պատրաստ լինի:

Իսքենդերը խոր շունչ քաշեց: Գլուխն առավ ափերի մեջ, սրտխառնոց զգաց: Գլուխը չբարձրացրեց: Այդ պահին ո՛չ ընկերներին էր ուզում տեսնել, ո՛չ էլ տուն գնալ: Կծեց Քեյթի թխվածքաբլիթից մնացած մի կտորը, թափ տվեց փշուրները: Երանի Թարըք հորեղբոր ասած այդ սարսափելի բանն էլ կարողանար այդպես թափ տալ: Սրտնեղած շուրջը նայեց: Հաթիփի բրոշյուրներից մեկը հանեց գրպանից, որ մինչ այդ օրը չէր կարդացել: Մատուցողին լիքը ուտելիք պատվիրեց, որը չէր կարողանալու ուտել: Ինչ էլ որ լինի, լիքը փող ուներ: Սկսեց կարդալ:

թվայնացրել է 1915.info կայքը

Յունուս

15 հոկտեմբերի, 1978
Լոնդոն

Յունուսը հեծանիվ էր նստել ու գնում էր Տոբիկոյին տեսնելու: Օսլայած, սպիտակ օձիքն այնքան պինդ էր կոճկել, որ վիզը կարմրել էր: Չնայած դրան՝ չէր պատրաստվում ոչ մի կոճակ քանդել, որովհետև կարծում էր՝ այդպես ավելի սիրուն է: Բացի դրանից՝ կաշվե բաճկոն էր հագել, որը մի քանի չափ մեծ էր: Կյանքում հագած ամենասիրուն բանն էր: Երբ մտածում էր՝ ինչպես է ձեռք բերել այդ ավարը, այտերը կարմրում էին:

Այդ առավոտ վաղ էր արթնացել: Միջանցքի թույլ լույսի տակ գնացել էր եղբոր սենյակ: Իսքենդերը նախորդ գիշեր բռնցքամարտել էր ուշ ժամի, շատ հոգնած էր եկել տուն: Գլուխը՝ բարձի տակ, ոտքերը՝ որովայնին հպած, մի քիչ խռռացնելով քնած էր: Բաճկոնը, որ մայրն էր նախորդ տարի ծննդյան առթիվ գնել, նետել էր աթոռին. փայլում էր՝ իսկական սև սառույցի պես:

Պատերը ծածկված էին պաստառներով: «Աստղային պատերազմներ», Մուհամմեդ Ալի, Բրյուս Լի - Վիշապ, Մանհեթենի երկնքում թռչող Սուպերմեն, մոտոցիկլի վրա նստած Ջեյմս Դին, «Արսենալ» - «Նոթինգհեմ Ֆորեսթ» ֆուտբոլային հանդիպումից նկար: Իսքենդերն իր համար աշխարհ էր ստեղծել այնտեղ: Ոչ ոք չէր խառնվում: Իր ուզած ժամին գալիս, ուզած ժամին գնում էր,

թվայնացրել է 1915.info կայքը

ոչ ոքի բացատրություն չպետք է տար: Դա անարդար էր, ու Յունուսը գիտեր՝ միայն ինքը չի այդպես մտածում:

Երբ ձեռքերը դրեց կաշվի բաճկոնի գրպանները, և՛ անհարմարություն, և՛ ոգևորություն էր զգում: Անհարմար, որովհետև եղբորը պատկանող բան էր վերցրել: Անգամ եթե երեկոյան վերադարձներ, միևնույն է, դա գողություն էր: Բայց ոգևորվում էր՝ մտածելով՝ Տոբիկոն որքան էր հավանելու: Անգամ հինգ-տասը սանտիմետր բարձրահասակ էր զգում իրեն: Բաճկոնը շքեղ էր, վերջին նորաձևության համաձայն: Համառ էր: Վստահ էր՝ Տոբիկոն հավանելու էր:

Իսքենդերն արթնացավ, գլուխը հանեց բարձի տակից: Յունուսը շունչը պահեց: Քարացավ ու չշարժվեց, մինչև համոզվեր, որ եղբայրը խոր քնի մեջ է: Հիշեց՝ ինչպես էր հայրը ամեն փոքր սխալի համար Իսքենդերին կշտամբում, պատժում, հազար անգամ նախատում, բայց դա անցյալում էր: Իսքենդերն արդեն ինքն էր իր գլխի տերը, միշտ զայրացած էր ու անհասանելի: Երանի մայրը նրան թափ տար, ասեր, որ ինքն է սահմանում կանոնները, բայց նա էլ էր անտարբեր ու հեռու:

Գաղտնիքը: Յունուսը շատ էր ուզում, բայց չէր կարողանում ատել այն մարդուն, ով մոր կողքին էր: Տեսնես ո՞վ է: Ինչպե՞ս էր կարողացել ծիծաղեցնել մորը, որին այլևս ոչ ոք չի կարողանում ուրախացնել: Տեսնես կհամարձակվե՞ր նրան վերցնել ու տանել: Յունուսը չէր կարողանում հարցնել այդ ամենի մասին: Չէր կարողանում ասել: Ոչ ոքի:

Հեծանիվի ոտնակները պտտելիս Յունուսը որոշեց՝ երբեք չի ամուսնանալու: Այդ գործերը շատ բարդ են ու տանջալի: Ինչո՞ւ էին բոլորն ամուսնանում, երբ շատ քչերն էին իսկապես հաջողացնում ամուսնացած մնալ: Յունուսին դուր էր եկել կոմունայի կյանքը: Միակ բանը,

թվայնացրել է 1915.info կայքը

որ չէր հավանում, թափթփվածությունն ու կեղտոտությունն էր: Դրանից բացի՝ հավատում էր՝ օկուպացիայի մոդելը մարդկանց ավելի երջանիկ էր դարձնում: Երբ մեծանա, տուն ստեղծելու փոխարեն Տոբիկոյի հետ մի շենք կգրավի ու կոմունա կստեղծի: Լիքը ընկերներ, սառնարանում լիքը ուտելիք կլինի, ու եթե երեխա ունենան, միասին կմեծացնեն: Իսկ բացակայող ու միշտ դժբախտ մոր փոխարեն քսան մայր ու տասնհինգ հայր կունենա երեխան, ինչն ավելի լավ էր:

Հեծանիվը շղթայեց և ուղղվեց դեպի Կապիտանի մոր երկհարկանի աղյուսե տունը: Դուռը բաց էր: Առաջին հարկի սենյակներում, խոհանոցում ու բաղնիքում ոչ ոք չկար: Փանքերը չկային: Գուցե խանութներից մի բան ուտելու կամ աղբամանից իրեր հավաքելու էին գնացել: Կաթող ծորակից ու աղմկող խողովակներից բացի՝ ոչ մի ձայն չկար տանը: Յունուսը հյուրասենյակում նստեց ու ֆանզինները, ամսագրերը աչքի անցկացրեց: Մեկի վրա գրված խոսքերը գրավեցին նրա ուշադրությունը: «Պետության գաղափարախոսական լծակները»: Յունուսը դրա իմաստը չգիտեր, բայց գաղափար ուներ՝ ինչ է նշանակում «պետություն». պետությունը մեծ կրծքով, կոս հավաքած, գրավիչ կին էր: Ամեն անգամ, երբ մայրը գովաբանում էր այդ կնոջ ուժն ու կարողությունը, ասում էր՝ «Պետության նման կին է, վա՛յ»: Յունուսը չէր հասկանում՝ փանքներն այդպիսի կանանց ու նրանց լծակների հետ ինչ ունեն քննարկելու: Երեխան դեռ այդ մասին էր մտածում, երբ հանկարծակի երաժշտություն լսեց ու տեղից վեր թռավ:

Այն փոփ երգերից էր, որն օկուպատներն ատում էին: Վերևից էր գալիս: Փանքերն այդպիսի երաժշտություն չէին լսի: Անհնար էր, որ այդպիսի ուրախ, աշխույժ երգեր լսեին:

թվայնացրել է 1915.info կայքը

Հետաքրքրությամբ բարձրացավ աստիճանները: Մոտենալուն պես երգին ձայնակցող մի քիչ անռիթմ կնոջ ձայն լսվեց: Ննջարանի դռան առաջ կանգնեց ու ծեծեց դուռը: Սպասեց, նորից թակեց: Երբ պատասխան չեկավ, դուռը բացեց ու ներս նայեց:

Մեկը, սենյակի մեջտեղում աչքերը կիսափակ, երկու ձեռքով միկրոֆոնի փոխարեն սանրը ամուր բռնած, կոտրատվելով, խենթի պես պարում էր: Տոբիկոն էր: Կահույքը այս ու այն կողմ էր հրել ու տեղ էր բացել իր համար: Ամուր փակած շերտավարագույրներից օրվա լույսը միայն բարակ գծերի տեսքով էր ընկնում սենյակ: Այդ կիսամութ սենյակում նիհար, բարձրահասակ ու անսովոր էր Տոբիկոն:

Հենց երաժշտությունն ավարտվեց, զգաց՝ սենյակում մեկն էլ կա, ու աչքերը բացեց.

– Ա՛հ, վախեցա:

– Կներես,– մռթմռթաց Յունուսը:– Չէի ուզում վախեցնել:

Տոբիկոն կարծես ամաչում էր: Սանրը դրեց հարդարանքի սեղանի վրա ու ձայնարկիչն անջատեց, բացեց շերտավարագույրը:

– Ի՞նչ գործ ունես այստեղ:

– Քեզ տեսնելու եմ եկել: Դուռը բաց էր,– ասաց Յունուսը:– Ի՞նչ էիր լսում:

– Հա՞, բանը... դե, որպես ժամանց... Տիկին Փոուելի ձայներիզներն են:

– Իսկ նա որտե՞ղ է:

– Բժշկի է գնացել: Պետք է երեքին մոտ գա,– ասաց Տոբիկոն ու շշնջալով ավելացրեց.– կարծում եմ՝ հոգեբանի է այցելում:

– Իսկապե՞ս,– ասաց Յունուսը՝ մտածկոտ, բայց անմիջապես հետո մի բան հիշեց:– «ԱԲԲԱ»-ի երգերից էր, չէ՞:

թվայնացրել է 1915.info կայքը

– Որտեղի՞ց գիտես:

– Մայրս է սիրում,– ասաց Յունուսը ժպտալով:

– Իմ ոճը չէ: Մի մեծ բան չէ:

Յունուսը հիացած նայեց Տոբիկոյին: Նրա ներսի փոքր աղջկան առաջին անգամ էր տեսնում: Ու հասկացավ՝ ինքը միակը չէ, ով փորձում է սովորականից ավելի մեծ ու խիզախ երևալ:

– Բաճկոնդ սիրուն է,– ասաց Տոբիկոն:

– Շնորհակալ եմ,– ասաց Յունուսը, բայց չէր պատրաստվում թեման փակել:– Կարո՞ղ ենք նորից լսել այդ երգը:

Տոբիկոն չարաճճի ժպտաց:

– Ի՛նձ նայիր, ուզում ես ինձ հետ պարե՞լ: Դե լավ, բայց եթե այսքան ջանք ես թափել, գոնե ես էլ սիրուն շորեր հագնեմ:

Միասին բացեցին պահարանը: Հագուստներով, աքսեսուարներով, կոշիկներով ու գլխարկներով ծայրեծայր լցված պահարանը տեսնելուն պես զարմացան:

– Այս կինը երևի ամբողջ գումարը հագուստին է տալիս,– ասաց Տոբիկոն:

– Ոչ մի սև հագուստ չունի,– ասաց Յունուսը:

Տոբիկոն միայն պատռված ջինսե տաբատներ էր հագնում, դրա համար գրավիչ հագուստներով այնքան էլ հետաքրքրված չէր: Նայեց երկնագույն շարֆերին, դդմագույն շիֆոնե շրջազգեստին, յասամանագույն բլուզին: Փայլերով զարդարված գինեգույն երեկոյան զգեստ, աղվեսի մորթուց օձիքով վերարկու, մինչև սրունքները երկարող, փափուկ մորթե վերարկու գտավ:

– Այդպես էլ գիտեի,– մռթմռթաց նա:– Կենդանասպա՛ն: Պետք է սփրեյով ներկել մորթիները:

Դրա փոխարեն երկնագույն ատլասից ու տաֆտայից զգեստին ձգվեց: Կիպ գրկում էր գոտկատեղը,

թվայնացրել է 1915.info կայքը

հարյուրավոր քարերով զարդարված, բարակ կախիչներ ուներ:

– Քեզ շատ կսազի,– ասաց Յունուսը՝ մինչև մեծ ականջները կարմրելով:

– Կարո՞ղ ես ինձ մի քիչ մենակ թողնել: Մինչև չկանչեմ, չգաս, լա՞վ:

Յունուսի համար միջանցքում սպասումը հավերժության պես երկար տևեց: Երբ վերադարձավ սենյակ, իր առաջ լրիվ ուրիշ կին էր կանգնած: Տոբիկոն մազերը բաց էր թողել, դեմքը լվացել էր: Սև շրթներկի փոխարեն վարդագույն էր քսել: Աչքերի ծխագույն ներկն էլ էր մաքրել:

Պատռված, ցանցավոր զուգագուլպաները հանել, մարմնագույն նեյլոնե զուգագուլպաներ էր հագել, հագին հարթ, կտորե կոշիկներն էին: Երկար ականջօղեր էր կախել, ամաչկոտ ժպիտն ու օդում տարածված հոտը կախարդող էր: Յունուսը սուլեց. Իսքենդերից էր սովորել:

– Վայ, պետության նման կին ես, հա՛:

Տոբիկոն բարձր ծիծաղեց: Հետո երկու սանր վերցրեց, մեկը՝ իր, մյուսը՝ Յունուսի համար: Սեղմեց ձայնարկիչի կոճակն ու հենց երաժշտությունը սկսվեց, իրար ձեռք բռնած մտան բեմ: Այդ գիշեր հազարավոր մարդիկ էին եկել իրենց լսելու: Բոլոր տոմսերը շաբաթներ առաջ էին վաճառվել, նույնքան մարդ էլ դռան առաջ էր կանգնած: Կաշվե բաճկոնով, շքեղ տեսքով Յունուսը դաշնամուր, կիթառ, սաքսոֆոն ու թմբուկ էր նվագում: Իսկ Տոբիկոն երգում էր, օդում թռչող փեշերով պարում էր: Ամեն կրկներգի ժամանակ մեջք մեջքի էին հենվում: Հանդիսատեսը հիացած ծափահարում էր:

Երբ երաժշտությունն ավարտվեց, երկուսն էլ շնչակտուր էին: Երազն ավարտվել էր: Տոբիկոն փաթաթվեց Յունուսին:

թվայնացրել է 1915.info կայքը

– Վերջերս քո գաղտնիքներից էիր պատմում: ԱԲԲԱ-ն էլ մեր գաղտնիքն է: Ոչ ոքի չասենք, լա՞վ:

– Ինչո՞ւ:

– Մեզ վրա կծիծաղեն: Իրենց համար շատ պարզունակ է:

Տոբիկոն իսկական ապստամբի տեսք ուներ: Զարմանալի էր, որ համակարգին դիմադրելու մասին խոսող այդ աղջիկը ուրիշների հայացքների գերին էր: Այդ օրվանից հետո Յունուսը Տոբիկոյի մասին շատ նոր բաներ իմացավ:

– Ինձ ատում եմ, փոքրի՛կ: Ինձ թվում է՝ կյանքս զուր եմ վատնել:

Խոստովանեց, որ նախկին ընկերոջը՝ Տոբիին չի լքել: Իրականում ճիշտ հակառակն է եղել: Նա է իրեն թողել-գնացել, Տոբին նրա սիրտը կոտրել է: Հետո ծանոթացել է Կապիտանի հետ, բայց նրան չի սիրահարվել: Չէր սիրում, բայց չէր կարողանում լքել: Նախկինում ավելի խիզախ էր, բայց ամեն օր կախվածությունը խորանում էր, կպնում իրեն: Մինչդեռ տղամարդիկ այդպիսի կանանց չէին սիրում: Ասում էին՝ խեղդում են իրենց:

– Ինձ կարող ես կպչել,– ասաց Յունուսը:

– Այ, ի՜նչ լավն ես...

Հետո Յունուսի հետ իր բանաստեղծական փորձերով կիսվեց: Բայց նոր էր սկսել կարդալ, երբ ներքևից ոտնաձայներ լսվեցին: Տիկին Փոուելն էր եկել: Տոբիկոն խուճապի մատնվեց:

– Գրողը տանի, բռնվեցինք:

– Մի՛ անհանգստացիր,– ասաց Յունուսը:– Դու փոխվի՛ր, ես գնամ նրան զբաղեցնեմ:

Բանաստեղծությունը դրեց բաճկոնի գրպանն ու արագ ներքև իջավ:

թվայնացրել է 1915.info կայքը

* * *

Երեկոյան ընթրիքի ժամանակ Իսքենդերը խեթ էր նայում Յունուսին, բայց չհարցրեց՝ ամբողջ օրը բաճկոնը որտեղ է եղել: Մտածկոտ էր: Լուռ էր: Ասաց, որ մի քիչ քայլելու է, ու վեր կացավ սեղանի մոտից: Տղաներին էր հանդիպելու, բիլիարդ էր խաղալու: Պետք է մտքերը հավաքեր: Մոր խրատներին ականջ չդրեց ու դուրս եկավ: Թարրոք հորեղբոր հետ խոսելուց ի վեր Փեմբեի հետ սառն էր, բայց այդ թեմայով դեռ չէր առերեսվել նրա հետ:

Օդը սառն էր: Իսքենդերը բաճկոնի օձիքը բարձրացրեց ու ձեռքերը գրպանները դրեց: Ձախ գրպանում մի բան կար՝ թուղթ, որ չգիտեր՝ ինչ է: Դուրս հանեց ու հաջորդ լապտերի տակ կարդաց: Հետո ճմռթեց ու գցեց աղբը: Մեկն իր հետ խա՞ղ էր խաղում: Ինչ-որ բա՞ն էին ուզում ասել: Ամբողջ գիշեր մտածեց՝ ով կարող է արած լինել, բայց չկարողացավ հասկանալ:

Չգիտեր, որ այդ գաղտնի հաղորդագրությունն իրականում Տոբիկոյի խզբզոցն էր: Ինչքան էլ փորձեր մոռանալ, առաջին տողը մտքից դուրս չէր գալիս.

«Դեռ ինչքա՞ն ես դիմանալու մորդ ստերին»:

թվայնացրել է 1915.info կայքը

ԴԱՏԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՍՐՏՈՒՄ

Իսքենդեր

17 հոկտեմբերի, 1978
Լոնդոն

Հաթիփին գտնելն ավելի դժվար էր, քան Իսքենդերը կարծում էր: Որոշ ժամանակով մտավ սրճարան, զանգեց, բայց զուր: Այդ պահին գիտակցեց՝ ինչքան քիչ էր ճանաչում նրան: Այդքան ժամանակ միայն Հաթիփն էր լուր տալիս ու կազմակերպում իրենց հանդիպումները: Ո՛չ գիտեր՝ որտեղ է ապրում, ո՛չ՝ ազատ ժամանակ ինչ է անում: Քաղաքի մի համալսարանում ուսանող էր. միայն դա էր հիշում, բայց ամեն ինչի պես այդ տեղեկությունն էլ էր առեղծված:

Ի վերջո, մի ընկերոջ ընկերոջ միջոցով Հեռավոր Արևելքի մարտարվեստների սպորտային կենտրոնում կարողացավ գտնել նրան: Վեց երիտասարդ տղաներով շրջապատված՝ նստած էր Հաթիփը: Երիտասարդներից ոմանց կրծքին քրտինքի հետքեր էին, ու վզի շուրջը՝ սրբիչներ: Պարտադիր մարզումն ավարտվել էր, ու լոգանքից առաջ կարծես թե կարևոր թեմա էին քննարկում: Երբ տեսան Իսքենդերին, լռեցին, անթաքույց անվստահությամբ ուշադիր զննեցին նրան:

– Խնդիր չկա,– ասաց Հաթիփը՝ նրանց աչքով անելով:– Ճանաչում եմ մեր ընկերոջը:

Իսքենդերին ո՛չ աչքով անելը, ո՛չ էլ Հաթիփի ձայնը դուր չեկավ: Բայց ոչինչ չասաց:

թվայնացրել է 1915.info կայքը

– Սելա՛մ, ի՞նչ կա:

Հաթիփն արագ ոտքի կանգնեց ու աջ ձեռքը կրծքին դնելով ասաց.

– Ալեյքումսելամ: Կուզե՞ս մեզ միանալ:

– Ո՛չ, ապրես: Ուշանում եմ: Եկա ձայներիզներդ վերադարձնեմ:

Ընկերներին անհասկանալի բաներ շշնջալուց հետո Հաթիփը Իսքենդերին մոտեցավ: Առանց վերարկուի, սվիտերի՝ փոքրամարմին էր երևում: Ուսերը՝ նեղ, թևերը՝ ոսկրոտ, ոտքերը մի քիչ ծուռ էին:

– Դրա համար կարիք չկար այսքան հեռու գալ,– ասաց նա:

– Խնդիր չէ,– ասաց Իսքենդերը: Ինքն էլ վստահ չէր՝ ինչու էր այնտեղ:

– Ուզո՞ւմ ես խոսել:

– Կարող ենք: Մի քանի րոպե:

Սպորտային սրահի մի անկյունում նստեցին հատակին: Դիմացը տարբեր տեսակի, տարբեր ծանրության սարքեր կային: Երկաթե քարեր, ծանրաձողեր, սարքավորումներ: Նայեցին մկանները ձգող, ծանրության տակ տնքացող նիհար մարդուն:

Իսքենդերն աչքի պոչով նայեց Հաթիփին:

– Չգիտեի, որ սպորտ ես սիրում:

– Թեքվանդոյով եմ զբաղվում: Ինձնից բռնցքամարտիկ չի լինի: Ես մտքի մարդ եմ:

– Ուրեմն ինչո՞ւ ես այստեղ գալիս:

– Որովհետև մեզ նմանները պետք է իմանան իրենց պաշտպանել,– ասաց Հաթիփը:

– Հյուսիսային ափին կատարվածների մասին լսե՞լ ես: Չորս սափրագլուխ մի բանգլադեշցի խանութպանի վրա են հարձակվել: Չորսը՝ մեկի դեմ:

– Չեմ իմացել:

թվայնացրել է 1915.info կայքը

– Պառկեցրել են գետնին, մազերը սափրել: Իրենց հիմար խորհրդանշաններից են պատկերել գլխին: Խեղճը վախից հիվանդացել է: Կինն անդադար արտասվում է:

– Ի՞նչ ես ասում:

– Դու իհարկե գիտես քեզ պաշտպանել,– հանկարծ ասաց Հաթիփը:

Իսքենդերը գլուխն օրորեց, բայց վստահ չէր, որ բռնցքամարտ սկսելու պատճառը դա էր: Փողոցում իրեն պաշտպանելու համար չէր սկսել բռնցքամարտով զբաղվել: Սիրում էր ռինգում լինել՝ մարտն էր սիրում, ադրենալինը: Ի տարբերություն կազմակերպված ու կեղծ մի շարք սպորտաձևերի՝ բռնցքամարտն իսկական էր: Կարելի է ասել՝ կյանքի արտացոլանքն էր: Ռինգում մեն-մենակ ես: Խմբային աշխատանք, բան չկար: Ո՛չ էլ անկյունում սպասող պահեստայիններ: Բոլորը պետք է տեսնեին իրենց գլխի ճարը: Լավ թե վատ, ազնվական թե աղքատ՝ բոլորն այնտեղ էին: Մարդու իրական պատկերը տեսնելու համար պետք էր նրան բռնցքամարտում տեսնել:

– Շատ լավ բռնցքամարտիկ ես,– ասաց Հաթիփը:– Ի ծնե տաղանդավոր ես, պարզ է:

– Որտեղի՞ց գիտես: Ինձ չես տեսել:

– Իրականում տեսել եմ: Երկու անգամ: Ռիսկային հարվածներից չես խուսափում, ձախ բռունցքդ բավական ուժեղ է: Կարծես գիտես՝ հաջորդ հարվածը որտեղից է գալիս: Քիչ մարդու տրված տաղանդ է դա,– խոր շունչ քաշելով ու առանց աչքերը Իսքենդերից կտրելու՝ ավելացրեց.– Վաղուց էի ուզում հարցնել՝ մերոնց բռնցքամարտ կսովորեցնե՞ս: Ընկերները քեզնից շատ բան կարող են սովորել:

Մի պահ լռելուց հետո Իսքենդերն ասաց.

– Ես մենակ եմ սիրում պարապել:

թվայնացրել է 1915.info կայքը

Հաթիփը տխրեց:

– Այո՛, երևում է, որ ինքնագլուխ ես: Միայնակ գայլի պես: Չես սիրում, երբ քեզ կապում են: Բայց մի՛ մոռացիր, մեծ մարտիկները և՛ մտքով, և՛ ֆիզիկապես են ուժեղ: Եթե բարոյական արժեքներդ ավելի ուժեղ լինեն, անպարտելի կդառնաս:

– Ես չեմ ուզում անպարտելի լինել:

– Իսկ ի՞նչ ես ուզում,– հարցրեց Հաթիփը ակնհայտորեն հրահրող ձայնով:– Ուրեմն ինչո՞ւ ես եկել ինձ տեսնելու: Որովհետև հասկանում ես ամեն ինչ: Ինչ-որ մի տեղի պետք է պատկանես: Գիտեմ՝ քեզ թվում է՝ քարոզ եմ կարդում, բայց դա չէ նպատակս: Որպես եղբայր եմ մտածում քո մասին: Դու պետք է կյանքում նպատակ, ուղղություն ունենաս: Արի՛, միացի՛ր մեզ:

Իսքենդերը փորձեց ինչ-որ բան ասել, բայց չկարողացավ: Բաճկոնի գրպանից ձայներիզները հանեց:

– Լսեցի՞ր գոնե,– հարցրեց Հաթիփը:

– Կարելի է այդպես ասել:

Այդ պատասխանից Հաթիփն ավելի շատ տխրեց:

– Քեզ տված բրոշյուրներն էլ չես կարդացել: Ոչ մեկը: Ձայներիզներն էլ չես լսել:

– Քույրս ու եղբայրս հերթ չեն տալիս: Ձայնարկիչը միշտ նրանց մոտ է: Յունուսը սկսել է փանք երաժշտություն լսել, բայց մաս-մաս լսել եմ: Մի քանի մասը հավանել եմ: Օրինակ՝ իրար պաշտպանելու ու թևութիկունք լինելու մասին հատվածը լավն էր: Մի ճյուղը կոտրվում է, բայց ճյուղերից ստեղծված փնջին բան չի լինի:

– Դե լավ է, միացի՛ր մեզ:

– Դե... չգիտեմ: Գլուխս շատ խառն է: Քույրս խնդիրներ ունի: Մեկ էլ... մմմ, մի քանի ընտանեկան հարցեր պետք է լուծեմ:

թվայնացրել է 1915.info կայքը

Հաթիփը ոչինչ չասաց: Գիտեր՝ Իսքենդերն այն մարդկանցից է, ում ինչքան քիչ հարց տաս, այնքան շատ կպատմի:

– Վերջերս մի բան էիր ասել, որ տպավորվել էր,– ասաց Իսքենդերը:– Եթե մայրդ ու հայրդ սխալ ճանապարհին են, պետք է կարողանաս նրանց դեմ դուրս գալ:

Հաթիփը հոնքերը բարձրացրեց:

– Այո՛, բայց պետք չէ դեպքերը իրար խառնել: Ուզում էի ասել՝ եթե ծնողներդ անհավատ են, դու ոչ թե նրանց, այլ Ալլահի կողմից պետք է լինես: Որովհետև Նա ավելի մեծ է, քան մայրն ու հայրը: Բայց ուշադի՛ր: Եթե դու անհավատ ես ու հորդ ու մորդ դեմ գլուխ ես բարձրացնում, բռնվելու ճյուղ չես ունենա: Երբ սկզբունքներ չես ունենում, հողը փախչում է ոտքիդ տակից: Ահա դրա համար քո կարիքն ունենք:

– Լավ, ասենք ընտանիքիցս մեկը...– ասաց Իսքենդերը:– Ասենք՝ մեկը մեղք է գործում: Ուզում եմ հասկանալ՝ իմ պարտականությունը որն է այստեղ...

– Օրինակ՝ ո՞վ:

– Ասենք՝ մայրս:

Ճնշող լռությունից հետո խոսեց Հաթիփը:

– Հո՛րդ հետ խոսիր: Դա ավելի շատ նրա գործն է, քան քո: Բայց եթե նա չխառնվի, ուրեմն քեզ է մնում: Եթե ես լինեմ, մորս, քրոջս կամ կնոջս, ոչ ոքի թույլ չեմ տա իմ պատվի հետ խաղալ:

– Ի՞նչ կարող եմ անել,– հարցրեց Իսքենդերը:

– Ես գիտեմ պատասխանը, բայց չեմ կարող ասել: Ինչպե՞ս վստահեմ մեկին, ով ինձ չի վստահում: Արի՛, միացի՛ր մեզ, ավելի մեծ բանի մի մասնի՛կը դարձիր: Դա է ճիշտը:

– Հըմմ, կմտածեմ:

թվայնացրել է 1915.info կայքը

– Լավ, գնա՛, մի քիչ մտածի՛ր իմ առաջարկության մասին: Բայց շատ մի՛ սպասեցրու: Մինչ դու մտածում ես, կյանքը շարունակվում է:

* * *

Նույն երեկո Իսքենդերը կանգնած էր գիշերային ակումբի առաջ, ուր երբեք չէր եղել: Բայց այդ տեսարանը մտքում այնքան էր պատկերացրել, որ իրեն սովորական էր թվում, ու դրանից իրեն հանգիստ էր զգում: Ոտքը ներս դնելն ու խոշորամարմին հսկիչին հանդիպելը մեկ եղավ: Մոխրագույն կոստյումով, արևային ակնոցով, սափրագլուխ, կարճ ու հաստ մեկն էր:

– Քանի՞ տարեկան ես, տղա՛,– մռթմռթաց նա:

– Ինչքան որ պետք է,– ասաց Իսքենդերը:

– Իմ գրքում էդպիսի պատասխան չկա:

– Գիրքդ չգիտեմ, բայց պիտի ներս մտնեմ:

Հսկիչը զարմանքից ակնոցը հանեց: Աչքերը, դեմքի հետ համեմատած, փոքր էին, միմյանց շատ մոտիկ: Անհնար էր կարդալ դրանց արտահայտությունը:

– Համբերությո՞ւնս ես փորձում, հա՞: Իմացած լինես՝ վաղուց է հատել:

Իսքենդերը կարմրեց: Հասկանում էր՝ հսկիչը կարող էր նրան մի լավ դաս տալ, բայց մտածեց՝ մարդն այնքան վտանգավոր չէ, ինչքան երևում է: Դա միայն զգացողություն էր, բայց փողոցային կռիվների ժամանակ վստահում էր իր զգացողություններին:

– Լսի՛ր, հորս եմ փնտրում, եղա՞վ:

– Հայրդ այստե՞ղ է աշխատում,– հետաքրքրասեր հայացքով նայեց նրա դեմքին հերթապահը:

– Դե, ո՛չ: Բայց այստեղ աշխատող մի կնոջ հետ է:

– Դու էլ եկել ես այստեղ սկանդալ սարքելու,– խոր հոգոց հանելով՝ ասաց նա:

թվայնացրել է 1915.info կայքը

– Դե, ո՛չ: Ինչո՞ւ պետք է անեմ որ:

– Ուրեմն ինչո՞ւ ես փնտրում: Ինչ-որ բան չե՞ք կիսել:

– Ի՞նչ կապ ունի: Միայն ուզում եմ հորս հետ մի երկու բառ խոսել: Այդքան բան:

Հսկիչը նորից ակնոցը դրեց:

– Երեք րոպե ունես: Ոչ մի վայրկյան ավելի: Մտնում ես ներս, հորդ գտնում, դուրս ես կանչում: Եթե երեք րոպեում այստեղ չլինես, ոտքերդ կկոտրեմ: Հասկացա՞ր:

– Լավ, եղբա՛յր, հենց էդպես: Ապրե՛ս:

Իսքենդերը մեջքն ուղղեց ու ներս մտավ: Ստրիպթիզ ակումբի միջանցքով առաջ շարժվելիս ստուգեց գրպանի ապակե շիշը: Բախտը բերել էր, որ հսկիչը գրպանները չէր ստուգել: Ազոտական թթու կար մոտը: Պրակտիկ էր ու արագ էր ազդում: Միայն պետք է կնոջ դեմքին շպրտեր: Այլևս երբեք հայրը չէր ուզի նրան տեսնել: Գեղեցկությունը պատմության գիրկը կանցներ ու արդեն ոչ մի տղամարդու չէր գայթակղի, ուրիշի տներ չէր քանդի:

Քանի անգամ էր պատկերացրել այդ տեսարանը... Աղմկոտ, ծխոտ, բազմամարդ ու խեղդող էր լինելու այդ վայրը: Ուղիղ բարի մոտ է գնալու ու խմիչք պատվիրելու: Հավանաբար վիսկի: Մաքուր, սառույցով: Խմիչքը երկու կումով խմելու էր: Մինչ կոկորդն այրվում էր, վեր էր կենալու ու մտներ կուլիսներ: Քրտինքի, ծխախոտի ու օծանելիքի հոտով լցված նեղ միջանցքներով էր քայլելու: Կնոջ սենյակը գտնելը դժվար չէր լինի: Թակելու էր դուռը, որին գրված էր՝ Ռոքսանա, բայց առանց պատասխանի սպասելու՝ ներս էր մտնելու:

– Դո՞ւ ով ես,– ասելու էր Ռոքսանան խուճապահար: Դեմքին՝ հաստ շպար, շրթունքները՝ ալ կարմիր:

– Նրա որդին եմ, ում կտրել ես ընտանիքից:

թվայնացրել է 1915.info կայքը

Տեսարանի մասին ամեն անգամ մտածելիս նախադասությունը փոխվում էր.

– Դու ինձ չես ճանաչում, բայց ես քեզ լավ գիտեմ,– ասում էր երբեմն նա, կամ.– Ես պետք է այդ հարցը տամ: Քեզ ո՞ւմ տեղն ես դրել, որ մեր ընտանիքը քանդում ես:

Կնոջ ռեակցիան ըստ նախադասության փոխվում էր: Հիմնականում ամաչելով՝ ներողություն էր խնդրում: Բայց երբեմն նյարդայնանում, աղմկում էր: Բարձրակրունկ կոշիկը նետում էր պատին: Շամպայնի բաժակն էր կոտրում: Իսքենդերը տարբեր իրավիճակներ էր պատկերացրել: Եթե կինը ափերից դուրս գար, գրպանից շիշը կհաներ: Եթե զղջար, հանգիստ կլիներ, նրան մի շանս էլ կտար: Երբեմն պատկերացնում էր՝ ինչպես էր կինը արցունքն աչքերին, հատակին/բազկաթոռին/բազմոցին նետվելու: Այդ բոլոր հնարավոր սցենարների մեջ Իսքենդերն ամենաշատը սա էր սիրում.

– Ա՛հ, չգիտեի, որ ամուսնացած է,– հեծկլտալով ասելու էր նա:– Չգիտեի, որ ընտանիք ունի: Ինձ չի ասել:

Այդ դեպքում Իսքենդերը շիշը չէր հանելու: Ընդհակառակը՝ կնոջը մխիթարելու էր: Թյուրիմացություն էր: Երկու ընկերոջ պես իրար հրաժեշտ էին տալու: Ռոքսանան խոստանալու էր Ադեմին այլևս երբեք չհանդիպել ու մինչև մահ պահելու էր խոսքը:

Մտածելով քայլում ու շուրջն էր նայում Իսքենդերը: Ներսում քիչ մարդ կար: Մատուցողներ, աշխատողներ: Այցելուների համար դեռ ժամը շուտ էր: Մոտեցավ բարին: Նեոնե լույսերով զարդարված, մեծ, օվալաձև հայելի էր դրված, դիմացը՝ փայտե սեղան: Մատները սահեցրեց հաստ մակերեսին փորագրված տառերի ու խորհրդանիշերի վրայով: Ով գիտի՝ ո՛ր այցելուների որ ելույթներից հետո մնացած հետքերն էին դրանք:

թվայնացրել է 1915.info կայքը

Բարմենը՝ մազերը ամուր հյուսած կարիբցի սևամորթ տղամարդը, բաժակներն էր չորացնում:

– Քանի՞ տարեկան ես:

– Ինչքան որ պետք է,– նորից ասաց Իսքենդերը:

– Կարո՞ղ եմ անձնագիր տեսնել՝ «Պարոն Ինչքան որ Պետք է»:

– Տե՛ս, եթե մտել եմ, ուրեմն այստեղ լինելու տարիքի եմ: Թե չէ դռան մոտի հաստաբեստը ինձ կյանքում ներս չէր թողնի, չէ՞:

– Լավ փորձ էր,– ասաց բարմենը:– Դրա դիմաց քեզ մի բաժակ ջուր կտամ: Լավ, գազավորված ջուր: Ավելին չես կարող ստանալ, իմացած լինես:

Իսքենդերը ջուրը խմեց ու կանգնեց բեմի առաջ: Երկու կողմ քաշված վարագույրներին նայեց: Ռոքսանան դրանց հետևո՞ւմ էր: Պետք է գնար, գտնե՞ր նրան: Գրպանի շիշը նորից ստուգեց: Դեռ պլանավորում էր հաջորդ քայլը, երբ քիչ այն կողմ հսկիչին տեսավ. իրեն էր փնտրում: Առանց ժպտալու, առանց զիջման՝ մատով ժամացույցին հարվածեց: Իսքենդերը ջուրը խմեց, բարմենին շնորհակալություն հայտնեց ու դժգոհ դուրս եկավ: Ոչինչ իր պլանավորածի նման չէր:

Նստեց մայթին: Հավերժ ձգվող սպասումից հետո դեպի իր կողմը եկող մութ ստվերը տեսավ: Մազերը խառն էին, գլուխը կախ էր: Այնպես էր դողում, կարծես վախենում էր, որ ծնկների կապը կկտրվի:

Կողքով անցնելիս անգամ չնկատեց երիտասարդին:

– Հայրի՛կ...

Ադեմը կանգնեց, շրջվեց: Դեմքը անկեղծ ժպիտով լուսավորվեց, բայց անմիջապես անհանգստացավ:

– Իսքենդե՛ր... Քրոջդ, եղբորդ ինչ-որ բա՞ն է պատահել:

– Ո՛չ: Լավ են:

թվայնացրել է 1915.info կայքը

Մի պահ կարծես հանգստացավ: Բայց դրան կասկած, կասկածին էլ նյարդայնություն հետևեց:

– Ի՞նչ ես փնտրում այստեղ: Սա քո տեղը չէ:

– Քո տե՞ղն է,– հակառակվեց Իսքենդերը:

Ադեմի բերանը բացվեց, աչքերը զայրույթից այրվում էին.

– Ի՛նձ նայիր: Լեզուդ կկտրեմ:

– Ուզում եմ, որ տուն գաս, հայրի՛կ,– ասաց նա՝ շեշտը վերջին բառի վրա դնելով:

Կշտամբանքը չվրիպեց Ադեմի ուշադրությունից:

– Մորդ մո՛տ գնա, քանի ոսկորներդ չեմ կոտրել:

– Ի՞նչ են ուզում այսօր ոսկորներիցս: Բոլորը փորձում են կոտրել:

Որոշ ժամանակ լուռ կանգնեցին դեմ դիմաց հայր ու որդի՝ աչքերը իրար հառած: Երկուսն էլ իրար էին սպասում. տեսնես ո՞վ առաջինը կխոսի: Այդ պահին կարծես հայելուն նայեր, կարծես դիմացը ոչ թե որդին էր, այլ իր երիտասարդությունը: Իսքենդերը և՛ նման էր իրեն, և՛ ծայրաստիճան տարբեր էր: Վախի, պարտության նշույլ չկար որդու մեջ: Կյանքին մարտահրավեր էր նետում:

– Երբ ժամանակը գա, կվերադառնամ,– ասաց Ադեմը, ի վերջո:

– Ե՞րբ: Երբ այդ փչացածից հոգնե՞ս:

Ապտա՛կ: Հանկարծակի: Իսքենդերն ավելի շատ իր խոսքերից էր զարմացել, քան հոր ապտակից: Չէր հավատում, որ այդպես էր խոսել:

Ապտակին ականատես եղած հսկիչը արագ մոտեցավ նրանց:

– Հե՛յ, երկուսդ էլ հանգստացեք, թե չէ ոստիկանություն կկանչեմ:

– Լա... ավ, լավ,– մռթմռթաց Իսքենդերը՝ կարծես ինքն իր հետ խոսելով:

թվայնացրել է 1915.info կայքը

Անհասկանալի հայացք էր տեսնում աչքերում, անծանոթ փայլ: Նայեց հորը, հանգիստ ու սառը խոսեց.

– Եթե ինձ նորից հարվածես, ես էլ քեզ կհարվածեմ: Իմ բռունցքը քոնինից ուժեղ է, իմացած լինես:

Ադեմը գունատվեց: Սրտում այնպիսի սուր ցավ զգաց, որ մի պահ չկարողացավ շունչ քաշել: Միայն անծանոթների մոտ որդու կողմից ստորացվելու շոկ, տխրություն ու ամոթ չէր զգում: Ավելի խոր, ավելի տառապալից մի բան էր այրում սիրտը: Ուշացած գիտակցում: Երբ հայրը (Հարբածը) իրեն ծեծում էր, ոչ մի անգամ չէր ընդդիմանում, ներում, ընդունում էր: Որդու և իր միջև եղած բնավորության տարբերությունն իր ընկճվածությունն էր ի հայտ բերում: Չդիմացավ: Ջայրացավ: Իսքենդերի կողմը մի քայլ արեց ու մի ապտակ էլ հասցրեց: Այս անգամ ավելի ուժեղ:

Այդ պահին մի անսպասելի բան եղավ: Իսքենդերը, վիրավոր կենդանու պես մռնչալով, մի քայլ արեց հոր կողմը: Բայց նրան հարվածելու փոխարեն ակումբի պատին հարվածեց: Մի անգամ, երկու անգամ, երեք անգամ: Թրխկ, թրխկ, թրխկ: Ադեմը փորձեց նրան բռնել, բայց զուր:

– Ձեռք չտաս ինձ,– մռնչաց Իսքենդերը:

Իրեն չէր տիրապետում: Հսկիչը հազիվ բռնեց, պատից հեռացրեց նրան:

Բայց Իսքենդերը ծարավ էր բռնության: Ատամները խրեց հսկիչի ուսի մեջ ու այնքան կծեց, մինչև արյուն եկավ: Մարդը կորցրեց սառնասրտությունը, դեմքը կարմրեց ու սկսեց Իսքենդերին բռունցքով հարվածել:

– Ո՛չ, կանգնի՛ր,– ասաց Ադեմը՝ փորձելով մտնել նրանց մեջ:– Մի՛ արա, որդիս է:

Շուրջը մարդիկ էին հավաքվել: Հաճախորդներ, մատուցողներ, պարողներ, անցորդներ: Ռոքսանան էլ էր

թվայնացրել է 1915.info կայքը

հանդիսատեսների խմբում լայն բացված աչքերով ու կծկված սրտով նրանց էր նայում: Վերջապես երբ կարողացավ նրանց բաժանել, հսկիչն այնքան նյարդային էր, որ ձայնը դողաց.

– Երկուսիդ էլ չտեսնեմ: Հասկացա՞ք: Եթե էս կողմերում նորից տեսնեմ, կզղջաք:

– Վե՛ր կաց, գնանք:

Ադեմը հանգիստ, բայց վստահ շարժումով բռնեց ու քաշեց որդուն: Լուռ քայլեցին: Երբ բավականաչափ հեռացել էին ակումբից, մի լապտերի տակ նստեցին: Իսքենդերը արյունոտ բերանով դանդաղ շնչում էր:

– Չպետք է այստեղ գայիր,– հոգնած ասաց Ադեմը:

– Մայրս մեկի հետ է հանդիպում:

– Ի՞նչ:

– Լսեցիր՝ ինչ ասացի,– ասաց Իսքենդերը:– Պետք է տուն վերադառնաս:

Ադեմը մի ծխախոտ վառեց: Մեկնեց որդուն: Իսքենդերի զարմացած դեմքը տեսնելուն պես հոգնած ձայնով ասաց.

– Դե՛, վերցրո՛ւ: Գիտեմ, որ ծխում ես,– ծխախոտը վառելով՝ ասաց:– Գոնե լա՞վ մարդ է:

– Ի՞նչ ես ասում, հայրի՛կ,– ասաց Իսքենդերը՝ ականջներին չհավատալով:

– Լսի՛ր, տղա՛ս,– ասաց Ադեմը՝ ձեռքը Իսքենդերի ծնկին դնելով:– Գիտեմ՝ չես հասկանում: Եթե տասը տարի առաջ լսեի, զայրույթից կխենթանայի: Այդ գործի դեմն առնելու համար ամեն ինչ կանեի: Բայց արդեն այն տարիքում եմ, որ գիտեմ՝ զոռով ոչ մեկին սիրել չեմ կարող: Չեմ էլ կարող ստիպել, որ ինձ սիրեն: Մայրդ քանի անգամ էր ուզում բաժանվել: Ականջ չդրեցի, բայց նա իրավացի էր:

թվայնացրել է 1915.info կայքը

Իսքենդերը հորից «սեր» բառը լսեց ու զարմացավ: Ճիշտ է, նախկինում հետաքրքրվել էր՝ մայրն ու հայրն ինչպես են ամուսնացել, բայց հիմա իրենց ընտանիքի նամուսի մասին էին խոսում: Հայրը՝ Ադեմը, ընտանիքի գլուխն էր: Ռոմանտիկ դեռահաս չէր:

– Բայց հայրի՛կ...– ասաց նա:

– Ի՞նձ լսիր: Մի գյուղապետի էի ճանաչում, ինձ պատմում էր, որ տղամարդու սերը իր բնավորության հայելին է: Այն ժամանակ չէի հասկանում, բայց հիմա արդեն գիտեմ,– ասաց նա՝ ծխախոտը ծխելով:– Կարծում ես՝ մորդ վրա զայրացած չե՞մ: Բայց ավելի շատ ինձ վրա եմ զայրանում: Մեր ամուսնությունը սխալ է: Իմ սխալն է: Բայց չեմ զղջում, որովհետև դու ես լույս աշխարհ եկել, Էսման ու Յունուսը:

Հենց այդ ժամանակ մի բան եղավ, որին Ադեմը ուշադրություն չդարձրեց, բայց տարիներ անց անգամ ցավով էր հիշելու: Իսքենդերը մատների ծայրով ծխախոտը գցեց մթության մեջ ու ատամների արանքից ասաց.

– Եթե դու չլուծես այս խնդիրը, ես կանեմ:

թվայնացրել է 1915.info կայքը

Փեմբե

20 հոկտեմբերի, 1978
Լոնդոն

Անհանգիստ, արագ քայլելով՝ արդեն իրեն ծանոթ կինոթատրոնին մոտեցավ Փեմբեն: Ցածր կրունկները մայթին տկտկում էին: Հայացքը գետնից չէր կտրում, շուրջը չէր նայում: Կարծես նորից փոքր աղջիկ էր դարձել, ու դա խաղ էր իր համար: Կարծես եթե այդ աշխարհին չնայեր, աշխարհն էլ իրեն չէր տեսնելու:

Ամեն անգամ դիտավորյալ էր ուշանում, ֆիլմի սկսվելուց հինգ-տասը րոպե անց էր հասնում կինոթատրոն: Այդպես ավելի ապահով էր: Միասին երևալու հավանականությունը նվազում էր: Բայց վերջերս նախկինի պես ուշադիր չէր: Փողոցում միասին էին քայլել. մի անգամ միասին ծաղիկ էին գնել: Դեռ անհանգիստ էր, բայց ներսից ինչ-որ ուժ, ձայն կար, որ ուզում էր դուրս գալ ու իրեն լսել տալ: Նախկինում այդպիսի զգացողություն չէր ունեցել, դրա համար չգիտեր ինչպես պայքարել դրա դեմ:

Դրամարկղի մոտ նստած նիհար կնոջը աչքի պոչով նայելով՝ մտավ պատմական շենքի մուտքից ներս: Վերարկուի մորթուց մի կտոր ընկավ դռների արանքը: Հեռուն թռչող, տեղ չգտած սերմերի պես ցրվեց օդում: Շենք մտնելուն պես խոր շնչեց ծանոթ պատկերներն ու բույրերը: Պատռված գորգերի պարուրաձև նախշերով,

թվայնացրել է 1915.info կայքը

կեղտոտ մետաղական մոխրամաններով, ադիբուդիի, չարազի ու տարբեր համերով մաստակի բույրերով էր լծված բուֆետը: Տարօրինակ հանգստություն էր տիրում ամենուր: Հենց մտավ լոբբի բար, խաղաղվեց: Կարծես աշխարհը հանկարծ կանգ առավ՝ անհանգստության, մտածմունքի կարիք չկար: Ապագայի համար ընդհանրապես չէր անհանգստանալու Փեմբեն. իրեն թույլ տվեց վայելել այդ պահը:

Մուտքի մոտ երիտասարդ աշխատողը տոմսը ստուգեց ու վարագույրը հետ տարավ: Ֆիլմը սկսվել էր: Չնայած լուսավոր տեսարաններին՝ վարագույրից ընկնող արծաթագույն լույսին՝ բավական մութ էր: Փեմբեն լապտերի լույսին հետևելիս շուրջը նայեց: Մոտ տասներկու հոգի կար, սովորականից ավելի շատ: Հանկարծ լարվածություն զգաց, անհանգստություն:

Իլիասը միշտ նույն տեղում էր նստում: Մեջտեղի շարքում՝ մեջտեղի նստարանին: Մի անգամ ուրիշն էր նստել նրա տեղում: Փեմբեն գնացել ու սխալմամբ օտար մարդու կողքին էր նստել: Նա էլ ժպտացել ու ասել էր՝ Բարև՛, քա՛ղցր: Սարսափած Փեմբեն արագ վեր էր թռել ու դիմացի շարքն անցել: Սարսափելի էր:

Փորձելով չսայթաքել՝ դատարկ շարքերով էր հիմա անցնում Փեմբեն: Տարիներ առաջ տեսած ֆիլմով տարված, կարծես անցած երկար տարիները հիշելով՝ ձեռք ձեռքի տված մի տարեց զույգ էր նստած: Փորձեց պատկերացնել՝ ինչպես են Իլիասն ու ինքը մեծացել, արդեն հոգնած էին, բայց դեռ կինոթատրոն էին գնում: Բայց չկարողացավ: Անգամ երազելն էր դժվար: Մտացրիվ քայլելիս հետևի նստարանին նստած մարդուն չնկատեց: Նստարանի մեջ ներսուզված՝ թաքնվել էր: Միայն ստվերն էր երևում: Այնտեղ՝ մթության մեջ նստած սպասում էր: Նայում էր. ոչ թե ֆիլմը, այլ իրենց:

թվայնացրել է 1915.info կայքը

G շարքին հասնելուն պես ձեռքի լապտերն անջատվեց: Այնտեղ՝ շարքի մեջտեղում էր նստած Իլիասը: Աշխատողին շնորհակալություն հայտնեց ու շնչակտուր առաջ գնաց Փեմբեն: Իլիասը ժպտալով շրջվեց: Մեկնվեց ու ցուցամատն անցկացրեց կնոջ դաստակով, հպվելով ճանաչող կույրի պես: Սիրով սեղմեց Փեմբեի ձեռքը: Նա էլ նույն կերպ պատասխանեց: Ամիսների ընթացքում մի քանի ժեստից ու սահմանափակ բառերից կազմված լեզու էին ստեղծել: Փեմբեի սիրտը խենթի պես զարկում էր: Դեռ չէր կարողանում նայել Իլիասին: Դա էլ էր խաղի նման: Եթե չնայեր, Իլիասը անտեսանելի կդառնար: Գուցե, եթե անտեսանելի լիներ, երբեք չգնար, երբեք չկորչեր:

«Լավը, Վատը, Չարը» դիտեցին միասին: Փեմբեն չէր տեսել այդ ֆիլմը: Առաջին ձայնային ֆիլմն էր, որ միասին էին դիտում: «Աստղ» կինոթատրոնը համր ֆիլմի շարքը ավարտել ու դասական կովբոյական ֆիլմերին էր անցել անցած շաբաթ: Որոշել էին այդտեղ հանդիպել ու սիրում էին այդ տեղը, դրա համար պլանները փոխելու կարիք չէին զգացել: Իլիասը կարծում էր՝ Փեմբեն առանց դժվարության կդիտի լավ հերոսներով ու կարճ երկխոսություններով հայտնի ֆիլմը: Միակ խնդիրը մի երկու շաբաթ իրար հետևից նույն կինոթատրոն գնալն էր: Բայց տեղը բավականաչափ հեռու ու ապահով էր երևում: Գուցե այդ ժամանակ արդեն անզգույշ էին:

Փեմբեն անմիջապես տարվեց ֆիլմով: Հերոսները մի շարք դժվարություններ էին հաղթահարում, իսկ ինքը մեկ այս կողմին էր աջակցում, մեկ մյուս կողմին: Վերջերս սկսել էր մտածել՝ որն է լավ, որը վատ: Քրոջ նամակի մասին էր անընդհատ մտածում: Ջեմիլեն միշտ հարգալից էր ողջախոհ էր, մաքուր, հանգիստ: Փեմբեն չէր կարողանում նրա նման լինել: Ամեն ինչ որքան արագ

թվայնացրել է 1915.info կայքը

էր փոխվել: Ոչինչ մնայուն չէր, հավերժական ծափահարությունների ներքո կյանքը գլորվում ու փոխվում էր:

Երբ Տուկոն, օձառած պարանը վզին, էշին թամբած, սպասում էր կախվելուն, Փեմբեն հանկարծ դեմքը շրջեց: Չէր ուզում դիտել այդ տեսարանը: Մի պահ թվաց՝ հետևի շարքերից մեկն իրեն է նայում: Երբ նորից նայեց, կատարյալ մթություն էր: Լսեց՝ ինչպես էր Տգեղն ասում՝ Մի՛ անհանգստացիր, ամեն մեկը չէ, որ վզին պարան ունի և կախվում է:

Փեմբեն աչքերը փակեց: Այդ պահին ուրիշ տեղ էր, ուրիշ ժամանակում:

– Լա՞վ ես: Ի՞նչ ես մտածում,– ասաց Իլիասը նրա ականջին, հետո կատակով ասաց.– Սա ֆիլմ է, իրականություն չէ:

Փեմբեն գլուխն օրորեց: Միայն ֆիլմ էր, գիտեր: Որովհետև իրական կյանքում վզին պարան ունեցողին կախում են:

* * *

Ութ քույր էին՝ իններից քսան տարեկան: Ամենամեծը Հեդիյեն էր: Առաջին երեխան, Աստծո նվերը: Նույնիսկ աղջիկն էր նվեր, եթե առաջնեկն էր: Սրտաձև դեմք, բարձր, կլոր քիթ, փոթորկոտ ամպեր հիշեցնող մոխրագույն, մեծ, նշաձև աչքեր: Աղքատ ընտանիքում այդքան քրոջ ավագը լինելը նշանակում էր տիկնիկների փոխարեն իսկական երեխաների հետ խաղալ:

Հեդիյեն մաքրում էր, ուտելիք էր պատրաստում, հատակն էր մաքրում, լվացք էր անում, փոքրերին էր քնեցնում: Անընդհատ աշխատում էր: Ձեռքի ափերը հինայով էր ներկում, թևնոցներ էր դնում, ականջներին՝ մետաքսից ականջօղեր: Զարդերը ոսկուց չէին, բայց նրա վրա ոչինչ կեղծ չէր երևում: Բոլորն ամեն պահի

թվայնացրել է 1915.info կայքը

նվնվում էին, բայց Հեիդյեն երբեք չէր բողոքում: Նա ընդունում էր իր խաչը. հավերժական պարտականություններից արագ էր մեծացել, առանց երիտասարդություն ապրելու՝ ծերացող աղջիկ-կին էր: Երբ Նազեն մահացավ, բոլորին նա էր նայում, հատկապես փոքր զույգ աղջիկներին: Երբ Բերզոն նորից ամուսնացավ, աղջիկները իրենց խորթ մորը միայն որպես իրենց հոր կին էին տեսնում, որովհետև մայրն արդեն Հեդիյեն էր իրենց համար:

– Ես չեմ ամուսնանալու,– հաճախ ասում էր նա:– Մինչև կյանքիս վերջ քույրերիս եմ նայելու: Հետո էլ՝ տարիքս արդեն անցած կլինի, ծեր կույսի պես կմահանամ:

Բայց, ի վերջո, այդ խոսքերն էլ սխալ դուրս եկան: 1955 թվականի ձմռանը Հեդիյեն սկսեց մեկին հանդիպել: Նա հիվանդանոցում էր աշխատում, տուբերկուլյոզի պատվաստում անելու համար էր պետությունը նրան ուղարկել: Նրան գյուղացիները չէին վստահում, իսկ երեխաները սարսափում էին: Փեմբեն երբեք չէր իմացել՝ ինչպես էր ամեն ինչ սկսվել, ինչպես էին հանդիպել, հատկապես՝ ինչպես էր եղել, որ սկսել էին խոսել:

Գուցե սերը հիվանդություն է, փորձանք, անգամ եթե կյանքը է տալիս, եթե ուրախացնում է: Հեդիյեն հանկարծ փոխվել էր, միշտ համեստ աղջիկը հանկարծ սկսել էր ըմբոստանալ: Խորթ մայրն անգամ սկսել էր քաշվել նրանից, անհանգիստ էր նրա ներկայությամբ: Հեդիյեն հաստատակամ էր: Շտապում էր: Երիտասարդությունից ուշացել էր: Մինչև այդ օրը իր համար մի րոպե անգամ չէր ունեցել, բայց մտադրված էր կորցրած ժամանակը վերականգնել: Մի պարզկա գիշեր, երբ լուսինը երկնքում ոսկե մանգաղի պես շողում էր, փախավ իրեն ոչ

թվայնացրել է 1915.info կայքը

այնքան ծանոթ մարդու հետ: Հաջորդ օրը պատվաստում անող չկար: Գյուղի երեխաների համար տոն էր: Գյուղացիները մնացած պատվաստանյութերը նետեցին, իրենց կյանքին միջամտող, իրենց ցավեցնող, իրենցից մեկին գողացած անկոչ օտարից մնացած բոլոր հետքերը վերացրին: Հանկարծ դատարկված ու կարծրացած տան վրա թառող տխրությունն էր հիշում Փեմբեն: Կարծես բոլորը սուգ պահեին:

Հեդիյեն հանգուցյալից էլ վատ էր: Ոչ ոք չէր հարցնում նրա մասին, նրա անունը սարսափելի հայհոյանքի նման էր: Հատկապես խորթ մայրը քինով էր լցված: Կարծես ամենուր Հեդիյեի ուրվականն էր տեսնում ու ասում. «Կրակներում վառվես, հա՛»: Ներսում կուտակված, քացախ դարձած սրտնեղությունները, նրա հետ միայն տղա ունենալու համար ամուսնացած մարդուն երեխա չպարգևելու ամոթը, տառապանքը և ուրիշ կնոջ ութ երեխաներին նայելու բեռը միմյանց էին խառնվել, Հեդիյեի դեմ ուղղված ակնհայտ ատելության էին վերածվել:

Իսկ հայրը՝ Բերզոն, թաղվել էր լռության մեջ: Աչքերը փոս էին ընկել, անփայլ էին, անընդհատ մտասուզվում էր՝ իրենից անկախ: Էլ սրճարան չէր գնում: Ամբողջ օրը գլուխը կախ՝ ծխում էր, մոխիրը մնում էր ծխախոտի եզրին:

Այդ տարի ձմեռը խստաշունչ էր, բոլոր ճանապարհները փակ էին: Չորս ամիս անցավ: Հեդիյեն գարնան սկզբին մի օր երեկոյան վերադարձավ: Լավ կլիներ՝ լուր ուղարկեր, իմանար՝ հայրը իրեն պատրա՞ստ է ընդունել, թե՞ ոչ, բայց չէր արել: Մի ավտոբուս էր նստել ու հանկարծ եկել էր: Բուժաշխատողը վախկոտի մեկն էր դուրս եկել: Չնայած խոստացել էր ամուսնանալ նրա հետ, հենց ընտանիքը հակաճառել էր, անմիջապես

թվայնացրել է 1915.info կայքը

մտափոխվել, մեծ քաղաքի մեջտեղում մենակ էր թողել խեղճ աղջկան:

Հեդիյեն զղջացել էր: Վախենում էր: Բայց իր իմացած միակ տունն էր դա: Գնալու տեղ չուներ: Երբ վերադարձել էր, դուռը բաց էր, կարծես ստվեր էր ընկել տան մեջ: Ո՛չ Բերզոն էր տանը, ո՛չ կինը: Բայց զույգերն այնտեղ էին: Անհանգիստ էր, փակ: Ծնկները ծալած, թախտի անկյունում անհանգիստ նստած՝ աչքերը հառել էր հատակին: Հյուրի նման էր իր տանը՝ վախենալով, որ լավ չեն ընդունի:

Որոշ ժամանակ անց խորթ մայրը եկավ՝ մեջքին բրդից կծիկներ: Բեռան տակ կորացել, այտերը կարմրել էին: Սկզբում Հեդիյեին չնկատեց: Բայց սենյակի ճնշող լռությունն ու զույգերի անհանգստությունն անմիջապես զգաց:

– Ի՞նչ է եղել: Լեզունե՞րդ եք կուլ տվել:

Նախադասությունն ավարտել էր, երբ անկյունում նստած աղջկան տեսավ: Ուրեմն վերադարձել էր անառակ որդին: Կանգնեց Հեդիյեի առաջ, գրեթե սառել էր: Հետո առաջ մի քայլ արեց ու զայրացած թքեց հատակին: Հեդիյեն գունատվեց:

Երեկոյան քույրերն իրար կողք շարվեցին, ժպտացին Հեդիյեին, բայց խորթ մորը զայրացնելու վախից ոչ ոք չէր համարձակվում հարցնել նրա որպիսությունը: Ո՛չ թեյ առաջարկեցին, ո՛չ ուտելիք: Աղջիկներն էլ շատ բան չկերան: Այդպես անհանգիստ անցած մի քանի ժամից հետո Բերզոն երևաց դռան մոտ: Երբ ներս մտան, արդեն գիտեին, որ գիտեր: Լուրն առել էր, նստել, մարդկանց ասածներն էր լսել: Երանի ականջ չդներ: Մարդիկ ուրիշների ընտանիքների մասին խոսելիս խիստ են լինում, դաժան:

Հեդիյեն ոտքի կանգնեց, վազեց հոր ձեռքը համբուրելու, բայց Բերզոն անտարբեր էր:

թվայնացրել է 1915.info կայքը

– Ալլահն ինձ որդի չտվեց,– ասաց այնպիսի ձայնով, որ բոլորը լսեին:– Գոնե մի որդի: Երբեք չհասկացա՝ ինչու: Մինչև այսօր:

Աղջիկները, շունչները պահած, լսում էին: Հեդիյեն խեղճացած կանգնել էր:

– Հիմա գիտեմ,– ասաց Բերզոն:– Եթե որդի ունենայի, կմաքրեր մեր ընտանիքի անունը: Եղբայրդ քո պատճառով բանտ կընկներ: Կփտեր չորս պատի արանքում:

Հեդիյեն ո՛չ արտասվեց, ո՛չ բղավեց, ո՛չ ներողություն խնդրեց: Աչքերը հառելով պատուհանի սարդոստայնին՝ նստեց, անձայն, անշարժ:

Նորից Բերզոն ընդհատեց լռությունը:

– Երբեք չէի պատկերացնում, որ կասեմ, բայց լավ է, որ տղա չունեցա:

Երեկոյան, երբ աղջիկները հատակին էին փռում անկողինը, լսում էին՝ ինչպես է հայրը կողքի սենյակում վիճում կնոջ հետ, բայց չէին հասկանում՝ ինչ են ասում: Քանդված կապերով, անհանգիստ աչքերով, հաստ բամբակից, երկար թևերով գիշերանոցները հագին՝ նայեցին իրար ու դեռ թախտի անկյունում նստած Հեդիյեին: Հանկարծ Փեմբեն լուռ ոտքի կանգնեց:

– Ո՞ւր ես գնում,– շշնջաց Զեմիլեն:

– Սոված է, մեղք է:

– Խենթացե՞լ ես: Հայրս ու խորթ մայրը դեռ չեն քնել:

Փեմբեն ուսերը թոթվեց: Մատների ծայրերին անցավ սենյակով ու գնաց խոհանոց: Զեռքին պանիր, հաց ու ջուր՝ հետ եկավ:

Քույրերի զարմացած հայացքների ներքո Հեդիյեին մոտեցրեց, բայց նա միայն ջուր խմեց: Հաջորդ օրն առավոտյան սովորականից ավելի ուշ նախաճաշեց Բերզոն: Մինչ նա թեյ էր խմում, աղջիկները անկյունում նախաճաշում էին: Վերջապես, առանց որևէ մեկին նայելու, ասաց.

թվայնացրել է 1915.info կայքը

– Ես սրճարան եմ գնում:

Լսելուն պես Փեմբեի սիրտը բաբախեց: Հեդիյեի փախչելու օրից ի վեր սրճարան չէր գնացել: Հիմա ի՞նչ էր փոխվել, որ գնում էր:

– Ես ի՞նչ եմ անելու սրա հետ,– ասաց խորթ մայրը:

– Գիտես՝ ինչ ես անելու,– միայն ասաց Բերզոն:

Քիչ անց կինը լայն դեմքին անհասկանալի արտահայտությամբ բոլորին ասաց, որ պատրաստվեն: Շատ գործ ուներ, պետք է գորգ գործեին: Երբ քույրերը կոշիկներն էին հագնում, ներսը կրծող անհանգստությամբ Փեմբեն ձգձգում էր: Ինչ-որ բան էր կատարվում, բայց չէր հասկանում՝ ինչ: Տնից դուրս գալուց առաջ տեսավ՝ խորթ մայրը բրնձի սկուտեղը ներս էր տանում: Սփռոցը գցեց հատակին, տախտակի տակդիրը վրան դրեց: Փեմբեն մի պահ մտածեց՝ Հեդիյեին ուտելիք է տալու: Բայց դա տարօրինակ ուտելիք էր: Ո՛չ ափսե կար, ո՛չ ջուր, ո՛չ հաց: Հեդիյեն չէր շարժվում: Կարծես աղե արձան լիներ:

Վերջին բանը, որ տեսավ Փեմբեն՝ ներս տարվող կաթսան էր: Հետաքրքիր էր՝ կաթսայի մեջ ինչ կա, դրա համար մի սուտ հնարեց:

– Ինձ լավ չեմ զգում: Կոկորդս է ցավում: Տանը մնա՞մ:

Խորթ մայրը գլուխն օրորեց:

– Ձեր հոր հրամանն է: Ոչ ոք չի մնալու:

Գնացին հարևանի մոտ, ամբողջ օրը գորգ գործեցին: Նախշերն անգիր գիտեին: Սաֆրանի դեղին, նորածիլ կանաչ, ընկույզագույն, մուգ կանաչ, դարչնագույն: Փեմբեն շատ էր սիրում ներկել: Լրջաբույսից կապույտ, ուրցից մոխրագույն, սոխի կեղևներից դարչնագույն էին ստանում: Մի փունջ բուրդը կապտականաչ ներկի պնակի մեջ թաթախելիս կիսվեց երկվորյակ քրոջ հետ.

– Ի՞նչ է նշանակում՝ դատարկ կաթսա դրեց դիմացը,– հարցրեց Ջեմիլեն:

թվայնացրել է 1915.info կայքը

– Վալլահի, դրեց,– շշնջաց Փեմբեն:– Գուցե դատարկ չէր: Բայց տարօրինակ էր: Եթե մեջը ճաշ լիներ, գոլորշի դուրս կգար, չէ՞: Կամ հոտ կգար:

– Դե լավ, գործի՛դ նայիր,– ասաց Ջեմիլեն, որովհետև չգիտեր ինչ ասել:

Կեսօրից հետո տեղերը փոխեցին. Փեմբեն գործում էր, Ջեմիլեն՝ ներկը պատրաստում: Հոգնել էին: Աչքերը, մատների ծայրերը ցավում էին: Մարմնի այնպիսի տեղերն էին ցավում, որոնց գոյության մասին չգիտեին:

Սովորական նախշերից դուրս Փեմբեն թաքուն մի փոքրիկ մոտիվ ավելացրեց: Եթե խորթ մայրը նկատեր, կզայրանար: Բայց չէր կարող չանել: Մի փոքրիկ «Հ» տառ հյուսեց՝ քրոջ անվան սկզբնատառը: Ավարտելուց հետո գորգը մի վաճառական էր գնելու ու ավելի մեծ գումարով վաճառելու: Այնտեղից Ստամբուլ՝ Փակ Շուկայի շքեղ խանութներից մեկն էր գնալու: Հետո մի քանի օրով քաղաք եկած զբոսաշրջիկ զույգը ցուցափեղկում տեսնելու էր և գնելու: Հետո այդ զույգի քաղաք՝ Փարիզ, Նյու Յորք կամ Ամստերդամ էին ուղարկելու գորգը, և «Հ» տառը հավերժ ապրելու էր:

Երեկոյան, երբ մութն ընկնում էր, ընտանիքը տուն վերադարձավ: Այգուն մոտենալիս Փեմբեին անհանգստություն տիրեց: Սկսեց վազել: Մութ զգացողություն ուներ ներսում՝ սարսափ ու զայրույթ, ոչ թե ուրիշի, այլ իր հանդեպ: Ինչո՞ւ ավելի շուտ չէր գնացել տուն: Որպես ի՞նչ էր քրոջը մենակ թողել:

Նա էր գտել Հեդիյեին: Առաստաղից, նախկինում երեխաների օրորոցները կախելու համար օգտագործվող ճենապակյա օղակից կախված, ճոճվում էր: Մարմինը կտորից տիկնիկի նման էր, վիզը կոտրվել էր: Խորթ մոր բերած, կաթսայի մեջ դրած պարանով էր կախվել:

թվայնացրել է 1915.info կայքը

* * *

Չնայած վզին փաթաթված պարանին՝ կովբոյը փորձեց ժպտալ:

– Երևի կատակում ես,– ասաց նա բարձր ձայնով:– Ինձ հետ... այսպիսի խաղ չես կարող խաղալ:

Շիկահեր դերասանը աչքերը կկոցեց.

– Սա կատակ չէ, պարան է:

Շուրթերը կրծոտող Փեմբեն հասկացավ՝ էլ չի կարող դիտել այդ տեսարանը: Ուղղվեց:

– Ես գնամ:

– Ի՞նչ: Բայց ինչո՞ւ,– հարցրեց Իլիասը:– Ինչո՞ւ ես շուտ դուրս գալիս:

Երբ պատասխան չստացավ, պնդեց:

– Ֆիլմի պատճառո՞վ: Դուրդ չեկա՞վ:

– Ո՛չ... Այո՛... Կներես:

– Գա՞մ քեզ հետ:

– Ո՛չ, դու մնա՛, խնդրում եմ:

Փեմբեն անմիջապես ոտքի կանգնեց, առանց բացատրություն տալու՝ նրան այնտեղ թողեց: Արագ ուղղվելով դեպի ելքը՝ չնկատեց՝ ինչպես էր վերջին նստարաններին նստած ստվերը դեմքը թաքցրել:

* * *

Ֆիլմն ավարտվել էր, երբ լույսերը վառվեցին, բոլորի հետ Իլիասը ուղղվեց դեպի դուռը: Չէր հասկանում՝ ինչու Փեմբեն հանկարծակի դուրս եկավ: Ընկճված գնաց դեպի լոբբի բար: Մեկը թեթևակի հարվածեց ուսին:

– Կներեք, կրակ ունե՞ս:

Երիտասարդ տղա էր, դեռահաս: Ծխախոտ ծխելու համար շատ երիտասարդ էր:

– Ցավոք սրտի, չեմ ծխում,– ասաց Իլիասը:

– Իսկապե՞ս: Զարմանալի է:

թվայնացրել է 1915.info կայքը

Երիտասարդի հայացքում սպառնալիք էր երևում: Խոսելու ոճն այնքան տարօրինակ էր, որ Իլիասը ցնցվեց: Բայց չէր հասցրել մի բան ասել, երբ տղան գլխով նշան արեց ու ասաց.

– Լավ, բարի օր եմ մաղթում:

– Շնորհակալ եմ: Քեզ էլ:

Դեռ իր հետևից խեթ-խեթ նայող Իսքենդերին հետևում թողնելով՝ Իլիասը դուրս եկավ: Փեմբեի՝ ընդամենը մի քանի ժամ առաջ այնտեղ թողած վերարկուի մոխրագույն մորթու ծվենը փաթաթվեց մազերին: Ոչ պատահական բազմաթիվ պատահականություններից մեկն էր:

թվայնացրել է 1915.info կայքը

Ադեմ

8 նոյեմբերի, 1978
Աբու Դաբի

Ակումբի դիմաց կռվից մի շաբաթ հետո Ռոքսանան Ադեմին լքեց ուրիշ տղամարդու համար: Հին կոշիկի պես ազատվեց նրանից: Լավ տարբերակ էր հայտնվել՝ Արաբական ծոցում ներդրումներ անող ավստրալիացի գործարար էր նոր սիրեցյալը: Ռոքսանային առաջարկել էր այդ տարածաշրջանում ճանապարհորդությունների համար ուղեկցել իրեն, նա էլ անկասկած համաձայնել էր: Բայց երբ հերթը հասավ այդ մասին Ադեմին պատմելուն, դժվարացավ: Երևի հարմարվել էր նրան, անգամ մի քիչ սիրել էր: Մի գիշեր, երբ նա քնած էր, նստեց ու նամակ գրեց: Դրեց սուրճի տարայի մեջ. առավոտյան սուրճ էր խմելու, իր գնալուց հետո կնայեր: Մի կողմից տխուր էր՝ չէր համարձակվում հրաժեշտ տալ: Մյուս կողմից՝ վախենում էր Ադեմի պատասխանից: Նրա ագրեսիվ կողմը չէր տեսել, բայց անհայտ էր՝ ինչի էին ընդունակ տղամարդիկ, երբ իրենց լքում են: Մեծ մասը փոխվում էր. Ռոքսանան այդ մասին շատ լավ գիտեր:

Նամակում գրեց, որ այդ անխուսափելի բաժանման մասին երկուսն էլ գիտեին: Իրեն ահավոր է զգում, որ այդպես է վերջ տալիս, բայց Ադեմի համար ավելի լավ կլինի, այդպես էր կարծում: Ադեմը պետք է ընտանիքի

թվայնացրել է 1915.info կայքը

մոտ վերադառնա, նրանց սիրաշահի, արժանավայել, կարգին կյանք ապրի: Պետք է իրեն մոռանա: Հնարավորինս մեղմ էր գրել և ուշադիր գրի առել: Բայց սխալվել էր: Վերջին տողերում գրել էր՝ ուր է գնում՝ Աբու Դաբի:

Ռոքսանային կորցնելով՝ Ադեմը հալվեց: Ուրվականներով լի հովտի վրա իջած գիշերվա պես անշարժացավ: Չնայած ամեն ինչին՝ տուն չվերադարձավ: Ռոքսանայի հետ ապրած ու նրա պայմանագրով վարձած տանն այլևս չէր կարող ապրել: Եղբոր՝ Թարըքի մոտ էլ չէր կարող գնալ: Ընկերոջ՝ Բիլալի մոտ ապաստան գտավ:

Օրերը անտանելի դանդաղ էին անցնում: Կարծես ստամոքսը սեղմող երկաթե ձուլակտոր էր կուլ տվել: Ստամոքսը ցավում էր: Ախորժակ չուներ: Մինչև շունչը կտրվելը հազում էր, բայց օրվա մեջ երեք, երբեմն չորս տուփ ծխախոտ էր ծխում:

Մանկական ասթման վերսկսվել էր, նախկինից էլ վատ: Երբ բոլորը հասկացան՝ այդպես չի կարող շարունակվել, Բիլալը սկսեց նրան համոզել, որ տուն վերադառնա:

– Չեմ կարող,– ասաց Ադեմը:– Դեռ ոչ: Եթե հիմա վերադառնամ, վաղը նորից դուրս եմ գալու:

– Ինչո՞ւ ես փախչում ընտանիքիցդ:

«Ինչո՞ւ». այդ հարցը ո՛չ իրեն՝ Ադեմին էր պետք ուղղել, ո՛չ էլ ուրիշներին: Գիտեր «Ինչպե՞ս» (թխվածքաբլիթներն ինչպես են տեղավորվում տուփերի մեջ, սարքերն ինչպես են աշխատում) և «Ի՞նչ» (ռուլետի սեղանի առաջ ինչ են անում, գումարն ինչպես են դնում) հարցերի դեմ պայքարել, բայց «Ինչո՞ւ» հարցը շատ վերացական ու աննպատակ էր նրա համար:

թվայնացրել է 1915.info կայքը

Ոստիկանության մոտեցող ազդանշաններից մտքերն ընդհատվեցին: Երբ նորից սկսեց խոսել, Ադեմի ձայնը լուրջ էր, մեջքը կորացել էր:

– Լսի՛ր, ես ծայրեծայր մտածել եմ այս խնդրի մասին: Չինացիներն ինձ հանգիստ չեն թողնի: Պարտքս ոչ մի կերպ չի նվազում: Պետք է այստեղից գնամ: Այս քաղաքն ինձ կսպանի:

– Ո՞ւր ես գնալու որ,– զարմացած հարցրեց Բիլալը:

– Աբու Դաբիի մասին եմ մտածում իրականում:

– Իսկապե՞ս,– ասաց Բիլալը՝ անտեղյակ, որ Ռոքսանան այնտեղ է:– Այդ շեյխերը շատ գումար ունեն, գետերը նավթով են լցված, վալլա՛հի:

– Սա լավ հնարավորություն է,– ասաց Ադեմը՝ վերջին բառը շեշտելով:– Լսել եմ՝ նոր քաղաք են կառուցել: Պլազաներ, բնակարաններ, առևտրի կենտրոններ... Էհ, դա էլ նշանակում է՝ բանվորների կարիք կա: Հազարավորներ: Այն էլ մի քանի տարով չէ՝ երկար ժամանակով:

– Այդ վայրերը անապատ չե՞ն: Ինչպե՞ս են երկնաքերները կանգնեցնելու փափուկ ավազի վրա:

– Եթե ավազը չպահի, փողերը կպահեն, մի՛ անհանգստացիր:

Միասին մի լավ մտածեցին, բոլոր մանրամասները քննարկեցին: Ամսվա մեջ ինչքան էր վաստակելու, մեղրագույն, փայլուն Մերսեդեսը երբ էր գնելու, երեխաների համար գնած նվերներով, որպես հաջողակ մարդ էր վերադառնալու Անգլիա: Ի՜նչ լավ կլիներ: Այնքան գունավոր ու գրավիչ էին երազում, որ Բիլալն էլ քիչ էր մնում նախանձեր:

– Երանի ընտանիքս, գործս Լոնդոնում չլիներ, ես էլ գայի քո այդ կողմերը:

– Հետո կգաս: Քեզ կգրեմ, հասցեն կտամ:

թվայնացրել է 1915.info կայքը

– Տե՛ս, արաբներն ուրիշ են: Այնտեղ երկրորդ դաս չես լինի, քեզ ձեռքի վրա ման կտան,– ասաց Բիլալը:– Նրանք էլ են մուսուլման, մենք էլ:

Կյանքը ժպտալու էր իրեն: Ադեմը այդ մտքից անգամ լավ էր զգում: Ութ տարի առաջ էր եկել Լոնդոն, բայց անգլիացիների վստահությանը չէր արժանացել, ավելին՝ դեռ օտար էր այնտեղ, դեռ ավելորդ էր: Իր ճանաչած բոլոր միգրանտները իրենից ավելի երջանիկ էին: Նրանք ինչպե՞ս էին կարողացել ներդաշնակություն ստեղծել ու պահպանել: Ինքը ինչո՞ւ չէր հաջողացրել: Լրիվ նոր սերունդ էր մեծանում, գիտեր: Անգամ եթե չիմանային՝ որքան հաջողակ են, միգրանտների երեխաները բավական կրթված են, տաղանդավոր: Բայց եթե այստեղ անգամ փայլուն ապագա ունենար, Ադեմը իրեն այդ ամենի մասը չէր զգա: Շարունակեց երազել: Ո՛չ արաբներն էին անգլիացիների նման լինելու, ո՛չ էլ Աբու Դաբին՝ Լոնդոնի: Այնտեղ անձրևը դույլերով չէր թափվի, խոզի մսով նրբերշիկներ չէին վաճառի, փոքրիկ խոհանոցներով տխուր տներ, անհամ լոլիկներ, մազերը մանուշակագույն ներկած, փողոցներում երգող հարբած երիտասարդներ չէին լինի: Անգլիացիները միշտ քաղաքավարի էին: Անգամ երբ զայրանում, քննադատում էին, այնքան քաղաքավարի էին անում դա: Մի անգլիացի պարոնի հետ բռնցքամարտի բռնվելն անհնար էր, որովհետև ծեծելու փոխարեն բազմանշանակ կգովաբանեին: Կարող էին բառերով վիրավորել: Տարիներ էին պահանջվել հասկանալու համար, թե անգլիացիները երբ են գնահատում ու երբ են վատաբանում մարդուն: Արաբների հետ այդ ամենն ավելի ուղիղ կլիներ: Որոշ ժամանակ անց կարող էր երեխաներին էլ մոտը տանել:

Արևոտ Աբու Դաբիում նոր կյանքի վարդագույն երազանքների մասին մտածելիս անգամ Ադեմը հասկանում

թվայնացրել է 1915.info կայքը

էր՝ երեխաներին իր հետ չի կարող տանել: Էսման արդեն լոնդոնցի էր՝ սիրում էր քաղաքը, քաղաքակրթությունը: Յունուսը արտասովոր երեխա էր, բայց փանքերի հետ էր ժամանակ անցկացնում: Փեմբեն նրա մասին ասում էր՝ մեծացած-փոքրացած: Յունուսը Թոփրաք ընտանիքի ամենախելացին էր, բայց շուտ էր սիրահարվում: Եվ Իսքենդերը... Իրենց կռիվը հիշելիս ամաչում էր: Ծանր էր, որ մեծ որդու սպասելիքները չէր արդարացնում:

Երբ մարդ առաջին անգամ հայր է դառնում, ուզում է, որ երեխան իր պատկերը լինի: Լավատեսություն, անգամ թաքնված գոռոզություն ես զգում, մինչև որ հասկանում ես՝ երեխադ քեզնից անջատ էակ է: Ինչքան էլ որ ուզես՝ քեզ հետևի, ինչքան փորձես, անգամ ստիպես, նա, ի վերջո, իր ճանապարհն է գտնելու: Այդ ճշմարտությունը պարզելու պահին ակամայից հիասթափվում ես, եթե դեռահաս ժամանակ ինքդ այդպես չես վարվել: Հորդ լսել, հարգալից, հնազանդ ես եղել: Եթե իմանայիր, որ թևեր ունես, կարող ես ազատ լինել, գուցե դու էլ թռչեիր, բայց արդեն շատ ուշ էր: Այն ազատությունը, որ հորից դ չէիր կարողացել պոկել, հիմա քո երեխան քեզանից է պահանջում ու պոկելով տանում է:

Լոնդոնում Ադեմն այլևս անելիք չուներ: Երեխաներին թողնելուց սիրտն այրվում էր, բայց միևնույն է՝ ուզում էր գնալ, գոնե որոշ ժամանակով հեռանալ: Աբու Դաբին նոր սկիզբ էր նշանակում նրա համար: Իրեն կարգի կբերեր: Ռոքսանային կգտներ, նա էլ իր սխալը կհասկանար ու կվերադառնար: Միակ խնդիրն այն էր, որ ճանապարհորդության համար գումար չուներ: Ինչ տարօրինակ է՝ գումար վաստակելուց առաջ գումարի կարիք ուներ:

Բիլալի առաջարկով Մամութ Բաբա անունով համայնքի ղեկավարին տեսնելու գնաց: Փետուրի պես այծամորուքով, ձգված այտոսկրերի վերևում շողացող

թվայնացրել է 1915.info կայքը

մուգ, շեղ աչքերով ու սուր դիմագծերով, ուժեղ երևացող մարդկանցից էր: Բուխարայում էր ծնվել-մեծացել, ռուսներից փախել, տարիներով Եվրոպայի տարբեր վայրերում ճամփորդելուց հետո Լոնդոն էր գնացել: Մի քանի լեզու գիտեր. ուզբեկներին, իրանցիներին, արաբներին, թուրքերին, չինացիներին, մեքսիկացիներին, պորտուգալացիներին էր օգնում: Ասում էին՝ եթե մեկին հավանում էր, մինչև վերջ օգնում էր: Իր խոսքի տերն էր: Գործազուրկ երիտասարդները, փախած աղջիկների հայրերը, պատվի սպանություն ունեցած ընտանիքները, խանութում պարտք ունեցող առևտրականները կյանքից ակնկալած օգնության համար Մամութ Բաբայի մոտ էին գնում:

Հատակին՝ գորգի վրա նստած, ցածրաձայն զրուցող տարբեր տարիքի տղամարդկանցով լի էր սենյակը: Կենտրոնում, նրբագործ, մանանեխի գույնի թիկնոցը հագին, մեջքը պատին հենած, նստած էր Մահմութ Բաբան: Ամեն մեկի հետ մեկ առ մեկ խոսում էր: Ինը տարեկան որդին՝ մուգ հոնքերով, նիհար մի տղա, Մահմութ Բաբայի կողքին էր նստել, աչքերը էլեկտրոնային խաղին էր հառել, մատներով այս ու այն կոճակն էր սեղմում: Ժամանակ առ ժամանակ հաղթելիս շուրթերը լուռ սեղմում էր, որ ուրախությունից չճչա:

– Սրա՛ն տեսեք,– ասաց Մամութ Բաբան:– Այս տարիքում ինձնից ավելի լավ է տեխնոլոգիայից հասկանում: Տանը հենց մի բան է փչանում, մայրը իմ փոխարեն արդեն նրանից է օգնություն խնդրում:

Սենյակի տղամարդիկ հարգանքով լսում էին:

– Այդպես էլ պետք է լինի: Ամեն սերունդ իր ժամանակի տեխնոլոգիային պետք է համահունչ քայլի: Ոչ թե Արևմուտքի արժեքները, այլ գիտելիքը պետք է վերցնենք: Չպետք է մեր դարաշրջանից հետ մնանք:

թվայնացրել է 1915.info կայքը

– Բայց...– ասաց Ադեմը: Հետո միանգամից լռեց:

Վարպետի խոսքի ընդհատվելուց ակնհայտորեն նյարդայնացած նիհար, մորուքով մի մարդ խեթ նայեց Ադեմին: Այդ մարդն արդեն մի քանի ամիս Իսքենդերի հետ հանդիպող Հաթիփն էր:

Մամութ Բաբան փորձում էր հասկանալ՝ աջ ու ձախ նայելով՝ խոսողն ով է:

– Ի՞նչ էր: Չլսեցի:

Ադեմը ստիպված էր խոսել. հազալով ասաց.

– Բանը, կներե՛ք, չէի ուզում ընդհատել:

– Ոչ մի խնդիր: Շարունակի՛ր,– ասաց Մամութ Բաբան քաղաքավարի ձայնով:– Ասա՛ ինչ կա մտքիդ:

– Բանը, ես քանի տարի է՝ թխվածքաբլիթների գործարանում եմ աշխատել: Հաստոցի վրա միմյանց հետևից գալիս են, պետք է անդադար աշխատել,– ասաց Ադեմը՝ իրենից անկախ Հաթիփին նայելով ու նրանից քաջալերող նշան սպասելով:– Հաստոցի գլխին կանգնում, նույն բանն ես անում նորից ու նորից: Ուղեղը թմրում է: Մեր երեխաների խաղերին նայելիս մտածում եմ՝ արդյոք կրկնությունը լա՞վ է նրանց համար:

Մամութ Բաբան դեմքի քաղաքավարի ու հանդուրժող արտահայտությամբ նայեց Ադեմին: Հետո գիտության ու տեխնոլոգիայի կարևորության մասին երկար խոսեց: Ադեմը էլ չէր կարողանում լսել, խոսակցության մեծ մասը բաց թողեց:

Բայց մի ժամ հետո, երբ պատրաստվում էր բոլորի հետ դուրս գալ, Մամութ Բաբան նրան ու մի քանի հոգու, որոնց մեջ նաև Հաթիփն էր, ընթրիքի հրավիրեց: Ընդունեցին: Հինգ մարդ գորգի վրա հավաքվեցին ու սպասեցին ուտելիքին: Միայն այդ ժամանակ Ադեմը կարողացավ բացել թեման:

թվայնացրել է 1915.info կայքը

– Աբու Դաբի գնալու համար վարկի կարիք ունեմ,– ասաց նա:– Այնտեղ փող կաշխատեմ, կվերադառնամ, պարտքս կփակեմ: Իմ բացակայության ընթացքում մեծ որդիս՝ Իսքենդերը, տանը կնայի: Արդեն մեծ մարդ է:

Իսքենդերի անունը լսած Հաթիփը հետաքրքրությամբ նայեց Ադեմին: Ուրեմն նա էր կորած հայրը: Հենց այդ պահին դուռը բացվեց, ու ձեռքին ուտելիքով լի սկուտեղով մի կին մտավ ներս: Միայն ձեռքերն ու գլխանոցի փոքրիկ անցքից երևացող աչքերը ցուցադրող դարչնագույն չարշաֆով էր փաթաթվել: Սիսեռով ապուրը թասերի մեջ լցնելուց հետո փլավն ու գառան միսը դրեց մեջտեղում, ուտելիքները բաժանեց, ջրի բաժակները լցրեց ու անհետացավ:

– Կինդ ծածկվում է, չէ՞,– հարցրեց Մամութ Բաբան՝ մի կտոր հաց պոկելով:

Ադեմը լարվեց: Ինչ Իսքենդերն ասել էր, որ Փեմբեն մեկին է հանդիպում, կնոջ մասին ոչ մի բառ չէր ուզում լսել:

– Ո՛չ, չի ծածկվում:

Մամութ Բաբան կզակը բարձրացրեց:

– Միշտ ասում եմ,– ասաց նա:– Եթե բաց կնոջ հետ ես ամուսնանում, հետո պահանջում, որ փակվի, կարող է ամբողջ կյանքում նեղացած մնալ: Քանի տղամարդ է այդ սխալը անում: Ամենալավը միանգամից ծածկվածի հետ ամուսնանալն է:

– Վալլա, Լոնդոնի այդ կողմում ավելի շատ ծածկված կին եմ տեսնում, քան Ստամբուլում,– ասաց Ադեմը:– Մեր ընտանիքում այդպիսի սովորություն չկա:

– Եթե Ալլահը քեզ մի ամուսնության հնարավորություն էլ տա, փակ, հնազանդ կի՛ն առ: Նրանք հավատարիմ են: Աչքը միայն իրենց տունն է տեսնում:

Ադեմի ստամոքսը կծկվեց: Փորձեց խոր շնչել, չստացվեց: Ինչ-որ բա՞ն էր փորձում հասկացնել: Գուցե

թվայնացրել է 1915.info կայքը

Փեմբեին սիրահարված չէր, բայց սիրում էր կնոջը: Չէր ուզի, որ նրա մասին վատ խոսեին: Աչքերը փակեց:

– Սխալ մի՛ հասկացիր,– ասաց Մամութ Բաբան՝ զգալով Ադեմի անհանգստությունը:– Քեզ համար եմ ասում:

Ադեմը, որը ոչ ոքի դեմ երբեք ոչինչ չէր արել, հանկարծ ոտքի կանգնեց:

– Ես գնամ: Շնորհակալ եմ ապուրի համար:

Արագ, առանց անգամ հրաժեշտ տալու, թույլ չտալով, որ ժամանակ ունենան իրեն կանգնեցնելու՝ դուրս եկավ սենյակից: Խոհանոցի կողքով անցավ: Մամութ Բաբայի կինն ու որդին այնտեղ՝ մի փոքր սեղանի մոտ ընթրում էին: Տղայի մի ձեռքին պատառաքաղ էր, մյուսին՝ խաղը. նոր ռեկորդ էր սահմանում: Իսկ կինը լուռ նայում էր ափսեին:

* * *

Տարիներ անց «Միջին Արևելքի մարգարիտ» էին անվանելու: Բայց երբ Ադեմը 1978 թվականին հասավ Աբու Դաբի, քաղաքը մարգարտի հետ ոչ մի կապ չուներ: Անցումային շրջանում էր երկիրը, հարթ տարածքի այս ու այն կողմում երկնաքերներ էին նշմարվում: Քամին գետնից կտրեց Ադեմի ոտքը: Քամին ամենուր էր անապատում: Ծիծաղում, լացում, անիծում էր:

Շինարար դարձավ Ադեմը: Միացավ օտարերկրացի բանվորների բանակին, որոնց թիվն ամեն օր աճում էր: Փոխվելու ու առաջ գնալու համար ամեն ինչ անող քաղաքում անցյալ ունեցող միակ մարդն ինքն էր:

Աբու Դաբիում առաջին շաբաթները դժվար էին: Ոչ միայն գործն էր դժվար, այլև սպասելիքներից էր ստիպված մեկ առ մեկ հրաժարվել: Բիլալի հետ ստեղծած երազանքները գոլորշիացան: Միակ ճշմարտությունը մաշկը բովող արևն էր: Երեկոյան, հոգնած ու փոշով ծածկված,

թվայնացրել է 1915.info կայքը

վերադառնում էր յոթ բանվորի հետ կիսած կացարանը: Տարբեր արմատներով, նմանատիպ տխրություններով մարդիկ էին բոլորը: Երբեմն, երբ ազատ ժամանակ էր գտնում, պատահական վայրերում Ռոքսանային էր փնտրում, առևտրի կենտրոնների, ռեստորանների ու բուտիկների առաջ էր շրջում:

Մի քանի շաբաթ անց մի վայր գտավ: Անապատում օազիսի պես: Մի ինքնաշեն վայր, որ մարդիկ հեշտ գումար վաստակելու, իրենց կյանքին գույն հաղորդելու համար էին ստեղծել: Քառասուն-հիսուն տղամարդ այդ անօդ բարաքում հավաքվում, բղավում, անդադար ծխում ու հայհոյելով աքլորակռիվ էին դիտում: Երբեմն սարդերի ու մորեխների մրցույթ էլ էին կազմակերպում: Բայց հիմնական խաղադրույքները տախտակ կոտրելու վրա էին անում: Ադեմը միշտ այնտեղ էր գնում:

Ադեմի հեռանալուց հետո Մամութ Բաբան առաքիչի հետ նրան գումար էր ուղարկել: Ադեմը կարող էր ծրարը հետ ուղարկել, բայց չարեց: Վաղուց էր կորցրել հպարտությունը: Լոնդոնից հեռանալու ցանկությունը նրան պարտության մատնեց: Հիմա աշխատավարձը երեխաներին ուղարկելու համար մի կողմ էր դնում, Մամութ Բաբայի փողով զառ էր խաղում: Անխտիր ամեն օր թղթախաղ էր խաղում: Բոլորը զգուշորեն էին անում քայլերը, բայց ոչ ինքը: Հիմնականում բոլորը սիրողական էին խաղում: Վախենում էին, որ ոստիկանությունը կբռնի, իրենց հետ կուղարկեն: Իսկ Ադեմը սովորականից ավելի ռիսկային, ավելի խիզախ խաղադրույքներ էր անում: Երբ փողն ավարտվեց, սկսեց աշխատավարձից մի քիչ վերցնել: Շատ չանցած՝ մի շաբաթվա աշխատածը մի գիշերում ծախսեց:

Իր համար կեղծ «Ռոլեքս» գնեց: Քայլվածքը փոխվել էր, կարծես կաղում էր: Կամ արևից, կամ իր ներսի

թվայնացրել է 1915.info կայքը

անհավասարակշռությունից, ցավից դեմքի կնճիռնե-րին նորերն էին ավելացել: Կրծքից եկող խռխռոցն ամեն պահ ավելի էր վատանում: Ամեն անցնող օր ավելի շատ ցավազրկող էր խմում: Սարդերի ու աքլորների պես նա էլ էր արյունոտ կռվի մեջ մտել, բայց ոչ թե ուրիշների, այլ հենց իր հետ:

Տեսարանը նրան հրապուրում էր: Պարզել էր, որ անապատը չոր տեղ չէ, հակառակը՝ թաքնված գեղեց-կություններով է լի: Երբեմն քայլելու էր դուրս գալիս, սիրում էր հոսող ավազի մեջ խրվող ոտքերի զգացո-ղությունը, գրպանները քարեր էր լցնում: Բնության այդ սովորական հրաշքները գրավում էին նրան: Ադեմը այդ աշխարհում մի ավազաքար էր, մի հարվածով փոշիա-նում էր:

Իմացել էր, որ անապատը մի ժամանակ ծով էր եղել: Անգամ ջուրը կարող էր պինդ հողի վերածվել, ինչի՞ց էր, որ մարդը այդքան դիմադրում էր փոփոխություններ-ին: Սակայն ի տարբերություն ֆիլմերում ու վեպերում ասվածների՝ աշխարհում ուր էլ որ գնաս, որոշ կաղա-պարներ, որոշ ճակատագրեր չէին փոխվում: Հաղթող-ները շարունակում էին հաղթել, իսկ պարտվողները ոչ մի կերպ չէին կարողանում ոտքի կանգնել: Ի վերջո, կյանքն էլ էր թղթախաղ: Ու Ադեմ Թոփրաքն արագ պարտվում էր:

թվայնացրել է 1915.info կայքը

Էսմա

10 նոյեմբերի, 1978
Լոնդոն

Սպանությունից մի քանի շաբաթ առաջ էր, հանգիստ երեկո էր: Փեմբեն սեղանը դրել էր: Երեք ափսե, երեք պատառաքաղ, երեք բաժակ: Վերջերս ընթրիքներին սակավախոս էին: Ամուսնու բացակայությանը սովորել էր Փեմբեն, բայց Իսքենդերի հաճախակի բացակայությունները չէր կարողանում ընդունել: Առաջին անգամ այդ երեկո դժգոհեց, որ հազիվ է ծայրը ծայրին հասցնում: Երեխաներին ինքն էր մեծացրել, տան խնամքն էլ էր իր վրա, բայց վերջերս ուզում էր, որ ինչ-որ մեկն իրեն խնամի:

– Եղբայրդ որտե՞ղ է,– հարցրեց Փեմբեն՝ հացի զամբյուղը բերելով:

– Ո՞ր մեկը,– մռթմռթաց Էսման:– Եթե մեծի մասին ես հարցնում, Աստված գիտի՝ որտեղ է: Իսկ Յունուսը սենյակս զբաղեցնելով է զբաղված, վստահ եմ:

– Նրա սենյակն էլ է:

– Բայց մայրիկ, էհ, բոլոր ընկերներս իրենց սենյակներն ունեն:

– Դու անգլիացի աղջիկ չես,– ասաց Փեմբեն՝ մի հոնքը բարձրացնելով:

– Մեր հարևանները թուրք են, հարավսլավացի, պորտուգալացի: Աղջիկներն առանձին սենյակներ ունեն:

– Մենք մեր հարևանները չենք:

թվայնացրել է 1915.info կայքը

– Դա արդարացի չէ: Իսքենդերն ինչո՞ւ սեփական սենյակ ունի: Տղա է, դրա համա՞ր է արտոնյալ: Արդեն զզվել եմ, է:

– Հերի՛ք է: Էլ չեմ ուզում այդ թեմայից խոսել: Առանց այդ էլ հոգնած եմ:

Այդ ընթացքում երաժշտություն լսեցին, լռեցին: Փեմբեն գնաց միջանցք: Էսման էլ հետևից: Մայր կարապի հետևից ընկած անճոռնի ճուտիկի նման զգաց իրեն:

Դուռը բացեցին ու տեսան՝ Յունուսը սարսափելի բարձր երաժշտություն է լսում:

– Ի՞նչ ես անում,– հարցրեց Փեմբեն:

Յունուսը գլուխը չբարձրացրեց ու չնայեց: Կարծես վախենում էր, որ դեմքը կարող էր իրեն մատնել: Փեմբեն հետաքրքրությամբ նայեց հատակին դրված ալբոմին: Կազմին ձիուն նստած մի սև ստվեր կար, դժբախտություն բերող մի կերպար, գետնին մի մարդ էր ընկած. անգղերն էին հոշոտում նրան: Վերևում էլ կարմիր՝ մեծ տառերով գրված էր՝ «THE CLASH»: Տակն էլ մի նախադասություն՝ «Give'em Enough Rope»[1].

– Սա ի՞նչ է:

– Խումբ է, էլի,– ասաց Յունուսը:– Երաժշտություն է:

– Սա երաժշտություն չէ,– հակաճառեց Փեմբեն:– Բում-բում-բում:

Յունուսը նեղացած նայեց: Էսման էլ որպես աջակցություն եղբորը խեթ նայեց:

– Սա ի՞նչ է նշանակում,– հարցրեց Փեմբեն վերնագրի մասին:

– Եթե մեկը անհույս է, կյանքից հոգնել է, նրան պարա՛ն տուր, թող իրեն կախի:

Փեմբեն գունատվեց:

---

[1] «Նրանց երկար պարա՛ն տվեք»: Անգլիական փանք ռոք խումբ «The Clash»-ի 1978 թվականի ալբոմն է:

թվայնացրել է 1915.info կայքը

– Այդպիսի բա՞ն կլինի: Ժամանակդ սրա վրա՞ ես վատնում: Ուղեղդ ես սպանում:

Յունուսը նվնվաց.

– Վայ, դե, մայրի՛կ, լուրջ ես ընդունում...

– Իհարկե լուրջ: Ոչ ոք ոչ ոքի պարան թող չտա: Չեմ ուզում, որ երեխաներս այսպիսի հիմարություններ լսեն:

Նրան երբեք այդպես չէր տեսել: Այդքան անհանգիստ ու նյարդային:

– Մայրի՛կ,– հանգիստ ասաց Էման:– Դրանք փանք խումբ են: Նրանց ոճն է: Վատ բան չկա, հավատա՛:

Փեմբեն չլսեց: Զարմացած հայացքների ներքո գնաց ու անջատեց հոսանքից: Հետո Յունուսին կզակից բռնեց ու ստիպեց, որ իրեն նայի.

– Վատ բաներ մի՛ լսիր: Հետո էլ՝ ինչո՞ւ ես ինձնից փախչում: Դո՞ւ էլ ես Իսքենդերի նման փոխվելու:

– Ես չեմ փոխվել,– դեմքը ծամածռելով՝ ասաց Յունուսը:

Միանգամից մեղմացած Փեմբեն Յունուսին սեղմեց կրծքին, տաք, ամուր գրկախառնվեցին: Որդու գլուխը համբուրեց, մանկական հոտը շնչեց: Հենց այդ պահին անսպասելի բան եղավ՝ տղայի վզի ու վերնաշապիկի արանքից հայացքը դեպի մեջքը սահեց:

– Սա ի՞նչ հետք է:

Յունուսը հանկարծ մեջքն ուղղեց: Խուճապի մատնվեց: Բայց շատ ուշ էր: Հետո էլ նա չէր կարողանում ստել:

– Դաջվածք եմ արել:

– Ի՞նչ ես արել: Ի՞նչ ես արել:

Էման որոշ ժամանակ գիտեր եղբոր դաջվածքի մասին: Անմիջապես միջամտեց:

– Մի՛ անհանգստացիր, մայրի՛կ, բոլորն էլ անում են:

Փեմբեն չլսեց նրան ու Յունուսին բռնած՝ տարավ բաղնիք: Ժակետը, վերնաշապիկն ու տաբատը հանեց,

թվայնացրել է 1915.info կայքը

մինչև որ միայն վարտիքով մնաց: Գլուխը մտցրեց ցնցուղի տակ: Սկսեց մեջքը մերսել, նախ ձեռքերով, հետո սպունգով:

– Վա՛յ, հերիք է,– բղավում էր Յունուսը:– Ցավում է:

Էսման նետվեց հետևից.

– Մայրի՛կ, դաջվածք է: Լվանալով չի անցնի:

Փեմբեն խենթի պես շարունակեց տրորել:

– Ինչքա՞ն ժամանակ է,– զայրացած հարցրեց նա:

Յունուսի փոխարեն Էսման պատասխանեց.

– Մի քանի ամիս է,– ասաց նա զայրույթով, որի գոյության մասին ինքն էլ չգիտեր:– Եթե մեզնով ավելի շատ հետաքրքրվեիր, շուտ կիմանայիր:

– Ի՞նչ ես ասում:

– Միտքդ ուրիշ տեղ, է,– բղավեց Էսման:– Գլխումդ այնքան շատ են մտքերը, որ մեզ համար տեղ չկա: Արդեն չենք կարողանում հանգիստ նստել, խոսել: Միայն ինձ ասում ես՝ սա մի՛ արա, նա մի՛ արա: Ուրիշ ոչինչ:

– Ո՛չ, ճիշտ չէ,– ասաց Փեմբեն:

Հավանաբար պարտությունն ընդունել էր, որովհետև սպունգը հատակին գցեց:

– Այս հետքի՞ն նայիր:

– Ես հետք չունեմ,– հանկարծ ասաց Յունուսը: Արտասվելիս թաց, փոքր առնետի նման էր:– Դու ես: Քեզ փողոցում մեկի հետ եմ տեսել: Դու ես քո վրա հետք դրել:

Ասելուն պես Յունուսը ձեռքերով բերանը փակեց: Զղջումը աչքերից կարդացվում էր: Ինչպե՞ս էր բերանից թռցրել: Էսման սարսափած նայում էր եղբորը: Ուրեմն այդ գաղտնիքի մասին էր խոսում: Հիմա հասկանում էր: Ամաչելով նայեց մորը: Փեմբեի դեմքի այդ արտահայտությունը երբեք չէր տեսել: Աչքերը երկու սառած ապակու նման էին: Արտասվում էր: Լռություն տիրեց: Սուր լռության մեջ

թվայնացրել է 1915.info կայքը

դեռ բարակ կաթող ջրի ձայնը լսեցին: Այդ գիշեր իրենց սենյակում Յունուսից ամբողջ պատմությունը լսելուց հետո Էսման պտտվեց անկողնում. շփոթված էր: Պատուհանից ընկնող լուսնի լույսը չհաշված՝ սենյակը մութ էր: Որոշ ժամանակ անց Յունուսի շշնջոցը լսեց.

– Քույրի՛կ, քնա՞ծ ես:

– Ո՛չ, ջանի՛կ:

– Հայրիկը գնացել է, մայրիկն է՞լ է գնալու:

– Ո՛չ, դմբո՛, մի՛ անհանգստացիր, ոչ մի տեղ չի գնում:

Տարօրինակ է, արդեն մոր վրա չէր զայրանում: Նրան այլ բաների համար էր մեղադրում, բայց իրեն պատկանող աշխարհի էր փորձում ստեղծել, ինչը Էսմայի մոտ լրիվ ուրիշ զգացողություններ առաջացրեց: Ուզում էր մորը պաշտպանել՝ խխունջին պաշտպանել գորտերից:

– Յունո՛ւս ջան,– հանգիստ ասաց նա:– Իսքենդերը չպետք է իմանա այդ մասին, հասկացա՞ր: Հանկարծ նրան բան չպատմենք:

Նորից դանդաղ, վատ օր: Ժամանակը կարծես չէր անցնում: Մինչև ժամը 12:30 լվացքատանը աշխատել: Ուտելիքի փոխարեն շիլայի նման մի բան ուտել գդալով: Կեսօրից հետո գիրք կարդա, բակում այս ու այն կողմ քայլիր, Զիշանի զառանցանքները լսիր: Ժամը հինգին երեկոյան հաշվառումն է: Կես ժամ անց սպա Էնդրյուն է գալիս:

– Մոտ օրերս այցելու ես ունենալու,– ասում է նա:

– Ո՞վ է:

– Կգա, կտեսնես:

Փաստացի բանտարկյալն իրավունք ուներ այցելուներին մերժել, բայց սպա Էնդրյուն իրեն պարտավորված չէր

թվայնացրել է 1915.info կայքը

զգում կանոններին հետևել: Առանց այդ էլ ինձ սադրելու առիթ էր փնտրում: Էսմայից բացի՝ վերջերս ուրիշ այցելու չեմ հիշում: Այս տարի նա էլ չի գալիս: Ինձ զարմացնում է այն, որ Էնդրյու չեղածը դրան հավանություն էր տալիս: Մինչդեռ իր պահվածքի համար կարող էր անմիջապես մերժել: Երեկոյի մնացած մասը ասեղների վրա եմ անցկացնում: Ի վերջո հասկանում եմ. այցելուն ով որ է՝ գիտի, որ ինձ հավասարակշռությունից հանելու է: Պաշտպանական կեղև ունեմ, որն անցնելը հեշտ չէր, բայց ինձ տակնուվրա անող մարդիկ կային: Միայն մի քանի մարդ: Նրանք ուրվականների պես են անցնում դռներով, կարող են իմ վահանն էլ ճեղքել:

– Անհանգիստ ես երևում,– ասաց Զիշանը:

Դա հա՞ց էր, թե՞ գնահատական: Ինչ որ էր՝ չեմ ժխտում:

– Չգիտեմ՝ այցելուն ով է, դրանից եմ լարվում:

– Չենք կարող իմանալ՝ վաղը ինչ կբերի, բայց ամեն նոր օրը հույսով ենք սկսում:

Այդ զառանցանքները լսելու տրամադրություն չունեի: Մեկնվեցի ու տրվեցի արտաքին աշխարհին: Մի ահավոր օր էլ էր ինձ սպասում: Կյանքիս ընթացքում դրանց մեծ մասը հաղթահարել էի: Բայց մեկը կար, որ ամենավատն էր՝ հաջորդ օրը:

Սարսափելի մեղք գործելու հաջորդ օրը անտակ մթությունից է արթնանում մարդ: Ուղեղում ինչ-որ մի տեղ զարթուցիչ է զանգում, կարմիր լույս է վառվում-մարում: Փորձում ես անտեսել: Դե, ամեն ինչ կարող է երազ կամ մղձավանջ լինել: Ընկնելիս առաջին տեսած պարանից բռնվող մարդու պես կախվում ես հնարավորությունից: Մի տոպե է անցնում: Գուցե մի ժամ: Չեմ կարող ժամանակը չափել, իրական աշխարհի չափումների վերածել: Մինչև որ ճշմարտությունն ամբողջ

թվայնացրել է 1915.info կայքը

ծանրությամբ ի հայտ գա: Պարանը չի կարողանում պահել, ընկնում եմ:

Լավենդեր փողոցում եմ, դանակը ձեռքիս: Բղավոցներ եմ լսում: Բարձր, սուր: Մեկը բղավում էր: Տարօրինակ է՝ մորս ձայնի նման էր: Բայց չէր կարող նա լինել, որովհետև գետնին էր, արյան մեջ: Ձայնը արձագանքում էր մտքումս: Նայեցի ձախ ձեռքիս: Ավելի ուժեղ ձեռքիս: Կարծես հանկարծ թուլացել, ուրիշ մարմնի էր ժամանակավորապես կցվել: Եթե կարողանայի, թևս կպոկեի, կգցեի:

Սկսեցի վազել: Բաճկոնս արյունոտ էր: Ինչպես եղավ, ոչ ոք ինձ չփորձեց կանգնեցնել, չգիտեմ: Նեղ փողոցներից, հետնաբակերից անցա՝ չիմանալով՝ուր գնալ: Պողոտաներն անցա, երևի բախվել էի մի քանի անցորդի: Աղոտ եմ հիշում: Հաջորդ երկու ժամն էլ էր աղոտ: Բայց հիշում եմ՝ վճարովի հեռախոս գտա:

Թարրեք հորեղբորը զանգեցի: Խոստովանեցի արածս: Ծանր լռություն տիրեց: Մտածեցի՝ ինձ չի լսել: Կրկնեցի: Ասացի՝ մորս իրեն արժանի պատիժն եմ տվել: Այլևս երբեք այդպիսի աննամուսություն չի անի: Վերքը ծանր չէ, բայց որոշ ժամանակ կտևի լավանալը: Կրծքի աջ կողմից մի անգամ հարվածել եմ, դանակով, ասացի: Այդքանը բավական էր դեպքի լրջությունը նրան փոխանցելու համար: Լավանալիս իր սխալը կհասկանար, կզղջար: Այդ ընթացքում էլ նրա հանդիպած մարդը վախից կփախչեր: Դրանից հետո էլ չէր մոտենա մեզ: Մեր ընտանիքի պատիվը մաքրված էր:

– Ի՞նչ արեցիր, տղա՛ս,– ասաց հորեղբայրը. ձայնը խեղդված էր լսվում:– Փորձանք է:

Զարմացա: Սկսեցի կակազել:

– Բա...յց... մ...մենք... խո... խո... խոս... ել... էինք:

– Սխալ ես հասկացել,– ասաց հորեղբայրս:– Ինձ հետ այդպիսի բան չես խոսել:

թվայնացրել է 1915.info կայքը

Կարծես ինքը չէր ինձ պատմել, որ մայրս մի գողամարդու է հանդիպում, պետք է շրապ մի բան անեմ, կարծես ինքը չէր ինձ ներշնչել, ընտանիքի նամուսի մասին ելույթներ ունեցել: Սառել-մնացել էի:

– Իսքենդե՛ր, որդի՛ս, պետք է գնաս, հանձնվես: Եթե ոստիկանությունն ինձ հարցնի, ասելու եմ՝ քեզ հենց այսպես եմ ասել: Ես օրենքներին ենթարկվող քաղաքացի եմ:

Հանկարծ կասկած ընկավ մեջս: Կարծես Թարրը հորեղբայրն այդ պահը մի քանի անգամ փորձել էր: Սպասել էր: Բառերը պատրաստ էին՝ հեռախոսով ասածները, ոստիկանությանը պատմելիքը, եթե դատարանում վկայության կարիք լինի, ասելիքը... Ամեն ինչ լավ մտածված էր: Ինձ գործիքի պես զգացի. ինձ օգտագործել էր:

– Լսո՞ւմ ես, տղա՛ս: Ասա՞ որտեղ ես:

Հեռախոսն անջատեցի: Բաճկոնս հանեցի, նետեցի աղբամանը: Հետո գնացի Քեյթի տուն: Նրա հետ մի քանի անգամ քայլել էի մինչև դուռը, բայց երբեք ներս չէի մտել: Զանգը տվեցի: Լավ էր, որ Քեյթը բացեց:

– Ալե՛քս, ինչպիսի անակնկալ,– ասաց նա լայն ժպիտով լուսավորվող դեմքով:– Ա՛հ, սիրելի՛ս, գիտեի, որ գալու ես:

Ինձ ներս հրավիրեց: Ասաց՝ որքան ուրախ է, որ համաձայնել եմ երեխային միասին մեծացնելու համար նրանց հետ ապրել: Երբ փաթաթվեց ինձ, զգացի կլոր ու պինդ որովայնը: Հինգ ամսական հղիի նման էր: Կարծես գնդակ կուլ տված լիներ:

Խնդրեցի, որ բաղնիքի տեղը ցույց տա: Ձեռքերս լվացի: Հայելու մեջ դեմքս նույնն էր, ինչ ուրիշ օրերին: Բայց կարծում էի՝ աչքերումս արտասվորը կտեսնեմ. չտեսա: Ձեռքերս նորից լվացի շփելով: Օճառը վարդի հոտով էր: Պահարանը բացեցի, ժավել գտա: Ճեպ-ճերմակ ատամներով, մազերը կոկիկ սանրած մի կնոջ նկար էր շշին: Ժավելը ձեռքերիս լցրեցի: Ափերիս կտրվածքներն ավելի

թվայնացրել է 1915.info կայքը

շապկ մռմռացին, ցավեցին: Շարունակեցի շփել: Եղունգների տակ ինչ-որ բան կար՝ կեղտ, ներկ, արյուն: Ոչ մի կերպ չէր մաքրվում:

Քիչ անց Քեյթը ներս մտավ՝ տեսնելու՝ արդյոք ամեն ինչ լավ է: Փաթաթվեց ինձ, հայելու մեջ նայեց երկուսիս: Ժպիտով նայեց այդ զույգին: Ժավելի սպիրտի նկարի կնոջ պես՝ հպարտությամբ: Կարծես հաղթանակած: Ձուրը փակեց:

– Հերիք է լվացվես: Մաքուր ես, սեր՛ս:

Գնացինք հյուրասենյակ: Քեյթի մայրը պապուհանի կողքի բազմոցին նստած սպասում էր: Զգեստ էր հագել: Հեռուստացույցի կանանց պես: Պիսպակի կանաչ: Կրծքերը երևում էին: Կրծքավանդակը պեպենոտ էր: Մազերը նոր էր սանրել: Շուրթերն ալ կարմիր էր ներկել: Դժվարությամբ կենտրոնացա դեմքին: Փորձեցի գլխից ներքև չնայել: Ճենապակյա բաժակով թեյ հյուրասիրեց ու մրգային թխվածք: Լուռ կերանք: Պատին՝ շրջանակի մեջ, նկարներ կային: Տասնյակ նկարներ: Հետևում էր իմ ամեն շարժումին: Կարծես եղունգներիս տակն էր սպուգում, ինձ այդպես թվաց: Ձեռքերս թաքցրի:

– Քեյթս ասում է՝ եթե աղջիկ լինի, անունը Մեգգի, իսկ եթե տղա, Թոմ է դնելու:

Նայեցի Քեյթին: Այդպիսի որոշում չէինք կայացրել: Աչքերը փախցրեց:

– Այո՛, կլինի,– ասացի ես:

Հարցրեց՝ կարող եմ պապասխանապտու հայր լինել:

– Չգիտեմ,– ասացի ես:– Հնարավոր ամեն բան կանեմ:

– Բայց երբեմն հնարավոր ամեն բանը բավական չի լինում,– ասաց նա:

Գուցե այդ խոսքերը հեռուստացույցից էր լսել: Կամ մի անգամ ինչ-որ մեկն էր ասել: Մեզ օգնելու էր, մինչև ոտքի կանգնենք. դա ժամանակավոր աջակցություն էր լինելու:

թվայնացրել է 1915.info կայքը

երեխայի համար էր անելու: Առաջին թոռն էր: Գիշերը Քեյթը ասաց, որ պետք է երկու տարբեր սենյակներում մնանք: Ես հյուրասենյակի բազմոցին էի քնելու: Առայժմ: Շուտով ամուսնանալու էինք ու նույն անկողնում էինք քնելու: Այդպես ասաց ու հավելեց.

– Հավե՛րժ:

Մաքուր սավան ու բարձի երես բերեց: Դանդաղ հանեց սվիտերը: Կոծքերը ուռել էին, պտուկների շուրջ մգացել էր: Երակներն էին երևում՝ կապույտ, ուռած: Ուզեց, որ ականջս դնեմ որովայնին: Որոշ ժամանակ ոչինչ չլսեցի: Հետո մի շարժում զգացի. մեկը լարվելով կարծես խոր քնից էր արթնանում: Երեխան հարվածում էր: Մեկ, երկու, չորս անգամ: Մայրս հղի ժամանակ հորս խնդրո՞ւմ էր, որ լսեր ինձ, հետաքրքիր էր: Մայրս... Տեսնես ինչպե՞ս էր: Հիվանդանոցո՞ւմ էր:

Քեյթին ինձնից հեռացրի ու ասացի.

– Կներես, պետք է քնեմ:

– Իհարկե, սիրելի՛ս:

Մենակ մնալով՝ շուրջս նայեցի: Ժանեկավոր վարագույրներ, ծաղկավոր բարձեր, պատի պաստառներ, վառարանի վրա դեկորատիվ ծաղկման, կկուով ժամացույց:

Կարծում էի, չեմ կարողանալու քնել, բայց գլուխս բարձին դնելուն պես քնել էի: Առավոտյան քնից վեր թռա: Քեյթը կողքիս էր: Գունատ էր, աչքերը լայն բացած:

– Ալե՛քս,– ասաց նա:– Դռան մոտ երկու ոստիկան կա:

Ոտքի կանգնեցի, գլուխս առա ափերիս մեջ: Համբուրեցի նրան: Բերանը աղի էր: Խուճապի համն էր:

– Քեզ են ուզում տեսնել, սիրելի՛ս:

Դուրս եկա միջանցք: Քեյթի մայրը գիշերազգեստով կանգնած էր: Դեմքին կրեմի հաստ շերտ: Ներքևի շուրթը դողում էր: Աղջկան վերցրեց ու իր կողմը քաշեց, կարծես

թվայնացրել է 1915.info կայքը

վարակիչ հիվանդություն ունեի: Հեպևից ոսպիկանության մեքենայի լույսերը տեսա: Ինձ դեռ չէին տեսել: Քեյթին խնդրեցի, որ նրանց ասի՝ հագնվում եմ: Փախչելու միտքը միանգամից եկավ: Առանց մտածելու, առանց պլանավորելու: Գնացի խոհանոց, դուռը բացեցի, դուրս եկա այգի, թռա հարևանի այգին, այնտեղից էլ՝ մյուսի այգին: Մինչ Քեյթը խոսում էր ոսպիկանության հետ, ես արդեն կողքի փողոցում էի:

* * *

1978 թվականի նոյեմբերի վերջին օրն էր: Պատրաստվում էի մտափոխվել, երբ տեսա՝ ինչպես է փողոցի անկյունից թեքվում: Խանութից էր գալիս, ձեռքերը լիքն էին: Առանց շտապելու, ծանր-ծանր քայլում էր: Նորից զայրույթը վրա հասավ. ես արգելել էի, որ տնից դուրս գա: Բայց ակնհայտ է, որ հրամաններս անտեսում էր:

Քայլերը դանդաղեցրեց, փողոցում նվագող մի երաժշտի ականջ դրեց՝ մեջքով դեպի ինձ: Կողքից նայեցի դեմքին: Ժպտում էր: Զայրույթի ալիք բարձրացավ ներսումս: Չէի՞ ասել՝ փողոց դուրս չգաս: Ոտքերն ի ցույց դնող, ծնկից վեր զգեստ հագնելը չէի՞ արգելել: Իմ կանոնները բանի տեղ չի դնում, ակնհայտորեն ծաղրում է ինձ:

Սկսեցի հետևել: Նայեց ցուցափեղկերին. չէր շտապում տուն գնալ: Գուցե այդ մարդու հետ հանդիպելու համար էր ձգձգում՝ մտածեցի ես, բայց այդպիսի բան չկար: Մեր փողոցին մոտենալիս, մի քիչ օրորվեց ու պայուսակը գցեց: Գունավոր, հին պայուսակ էր, որը նախկինում չէի տեսել: Գետնից վերցնելիս ինձ նկատեց:

– Իսքենդե՛ր...– շշնջաց նա անունս՝ կարծես գաղտնիք էր:

Իսքենդեր Թոփրաք
Շրուսբերի բանտ, 1991

թվայնացրել է 1915.info կայքը

Փեմբե

11 նոյեմբերի, 1978
Լոնդոն

Երեկոյան յոթն անց կես էր: Երկար օրվա ավարտը: Անուշադիր հավաքել էր մազերն, ու մեջքը մի փոքր ցավում էր: Չնայած լուսաբացից ոտքի վրա էր, Փեմբեն հոգնած չէր զգում: Ռիտային ասել էր, որ կմնա ու մաքրություն կանի:

– Դու հրեշտակ ես,– ասել էր Ռիտան՝ նրա երկու այտը համբուրելով:– Առանց քեզ ի՞նչ էի անելու:

Փեմբեն նրան դեռ չէր ասել: Ոչ մի կերպ չէր կարողանում տնօրենին ասել, որ աշխատանքից դուրս է գալու: Վաղը «Բյուրեղյա Մկրատ» չէր գալու: Ոչ էլ հաջորդ օրը: Նոթ կգրեր Ռիտային: Այդպես ավելի հեշտ էր: Կասեր՝ իրեն լավ չի զգում, մի քիչ ժամանակի կարիք ունի: Իհարկե, ճիշտ չէր: Բայց չէր կարողանում խոստովանել, որ մեծ որդին արդեն թույլ չէր տալիս աշխատել: Ամաչում էր: Ամեն ինչից շատ էր սիրում Իսքենդերին, բայց նա անհասանելի էր: Տղան արագ էր զայրանում: Իրավացի էր: Շատ էին բամբասում իր հետևից, փակ դռների հետևում, մթերային խանութում, սրճարանում, քեբաբ պատրաստողի, ձուկ պատրաստողի, չոր քիմմաքրման կետերում, բոլորը իր մասին էին խոսում: Մետաքսե կտորին ընկած թանաքի կաթիլի պես արագ էր տարածվում վատ խոսքը՝ մուգ, թանձր: Կյանքի ընթացքում կեղտ ու

թվայնացրել է 1915.info կայքը

ժանգ էր մաքրել Փեմբեն, բայց այդպիսի հետք մաքրելու համար ոչ մի միջոց չուներ:

Տարօրինակ զգացողություն էր մեղավորությունը: Ոջլի չափ փոքր սերմից էր սկսվում: Մարդու մաշկի տակ էր մտնում, ծծում էր արյունը, ամեն տեղ ձու դնում: Դեռ չհասկացած՝ ինչ է եղել՝ արդեն գլուխդ գրավել էին: Տանը, աշխատանքի վայրում ուտելիք պատրաստելիս, առևտուր անելիս, անգամ քնի մեջ էր հոգին պատել այդ զգացողությունը:

Երեխա ժամանակ մի քանի անգամ ոջլոտել էր: Ինքը միշտ պնդում էր, որ Ջեմիլեից է վերցրել, Ջեմիլեն էլ՝ իրենից: Առաջին անգամն ամենաահավորն էր: Մայրը երկուսին տաք ջրով լի տաշտի մեջ էր դրել, ժամերով բուժակից գնած տհաճ հոտով հեղուկով էր շփել նրանց: Ի վերջո կարողացել էր ոջիլներից ազատվել ու միանգամից վերացնել, բայց քիչ էր մնում՝ աղջիկներին էլ վերացներ: Այդ օրերը հիշելով՝ Փեմբեն խոր հոգոց հանեց:

Մի ժամից ավելի էր, ինչ բոլորը դուրս էին եկել: Ռիտան մտածում էր նոր աշխատող վերցնել, «մազերի դիզայներ»՝ անգլիացիները վարսավիրին այդպես էին ասում: Այստեղ մարդիկ ձևավոր խոսքեր շատ էին սիրում: Ուտելիքներին տված անուններն ավելի էին զարմացնում Փեմբեին: «Համեմունքով, համեղ կուսկուսի վրա «գինովցած» հավ»: Մի ռեստորանի մենյուում էր տեսել, ուր Իլիասն էր իրեն տարել:

Դա նրանց առաջին ու միակ ժամադրությունն էր: Կյանքում իրեն այդքան անհանգիստ չէր զգացել: Հանգիստ, լուռ տեղ էր փորձել փնտրել Իլիասը, բայց կինոթատրոնից բացի՝ ուրիշ ոչ մի տեղ իրենց հանգիստ չէին զգում: Այնտեղ էլ բառերի համար տեղ չկար:

Ընթրելիս Փեմբեն Իլիասին իր հայրենիքի մասին էր պատմում, ասում էր, որ եթե հատուկ հյուրի առաջ

թվայնացրել է 1915.info կայքը

կուսկուս դնեն, բոլորը կծիծաղեն: Կուսկուսը աղքատի ուտելիք էր: Տարօրինակ էր, որ այդպիսի շքեղ ռեստորաններում են մատուցում: Փեմբեն նրան ծիծաղեցնելու համար էր պատմել: Մինչդեռ Իլիասը նորից այնպիսի տխրությամբ ու կիսակարոտ նայեց իր դեմքին: Ինչքան ժամանակ է՝ ընկերություն էր անում, բայց ոչինչ չէր պահանջում այդ տարօրինակ մարդը:

– Այսինքն, եթե ինձ քո տուն կանչես, կուսկուս չե՞ս սարքի, հա՞,– հարցրել էր նա:

– Իհարկե ոչ,– ասաց Փեմբեն:

Նրա առաջ մեծ սեղան կգցեր: Նախ տաք ապուր կպատրաստեր: Երբ ստամոքսը տաքանում էր, ավելի համեղ բաներ են մատուցում: Անանուխով ու թարխունով, ցորենով մածնապուր, նռան սոուսով աղցան, խորոված՝ կարմիր բիբարով, համեմունքներով հումուս, ոսպով քյուֆթա, հյունքյարբեենդի[1] ու սերուցքով տնական փախլավա կմատուցեր:

– Քեզ հետ նույն խոհանոցում եփելն ինչ հաճելի կլիներ,– ասաց Իլիասը:

Միասին ապագայի մասին երազելու եզակի պահերից էր:

* * *

Փեմբեն վերջին անգամ նայեց վարսավիրանոցին: Այդտեղ միայն մազ կտրելու, հարդարելու համար չէին գալիս. դա զրույցի վայր էր: Որոշ կանայք ավելի շատ ոչ թե մազերի ձևը փոխելու համար էին գալիս, այլ որովհետև կարոտ էին խոսելու, մի քանի քաղցր խոսքի:

[1] Խորոված, կաթի հետ խառնած, ճզմած սմբուկով, կարագով ու բոված ալյուրով խառնուրդ, որի վրա գառան տապակած մսի կտորներ են լցնում:

թվայնացրել է 1915.info կայքը

Փեմբեն շատախոս չէր: Բայց հիանալի լսող էր: Բազմամարդ ընտանիքում մեծանալով՝ սովորել էր միշտ ուրիշներին զիջել: Այցելուների ամուսինների, երեխաների, տնօրենների, տնային կենդանիների, անգամ զզվեցնող հարևանների մասին շատ բան գիտեր: Լսում էր նրանց, հասկանում էր: Եվ այդ ամենը անում էր իր սահմանափակ բառապաշարով: Երբեմն որոշ բառեր բաց էր թողնում, բայց էությունը՝ երբեք:

Երեկոյան արևը վաղուց էր մայր մտել, փողոցը սկսել էր փոխվել: Ճանապարհի երկու կողմի խանութները փակվել էին: Հնդկական սարիներ վաճառող խանութը, լիբանանյան սրճարանը, հալալ միս վաճառող մսավաճառը, հիպիների անուշահոտ խանութը... Աշխատողներն ու այցելուներն արդեն տուն էին գնացել: Որոշ ժամանակ անց նրանց տեղն ուրիշներն էին գալու: Գիշերը մնացողները:

Առավոտյան այդ թաղամասը ցերեկվա մարդկանցով էր լցվում՝ մանկասայլակների մեջ երեխաներ, առևտրի սայլակներով մայրեր, փոստատուն գնացող տարեցներ, ավտոբուսի կանգառում կանգնած երիտասարդներ: Բոլորը ինչ-որ տեղ էին վազում: Գիշերվա մարդիկ տարբեր էին: Ավելի ծանր, ավելի հանգիստ էին, ավելի շատ օծանելիք, շպար, քաջություն էին կրում: Լցվում էին ռեստորանները, բարերն ու ակումբները: Միշտ ինչ-որ բան էին փնտրում: Ծիծաղում էին ոչ թե քաղաքավարի ու վերահսկելի, այլ անկեղծ, ուրախ ծիծաղով:

Փեմբեն նախանձով էր նայում գիշերը մնացողներին: Անտակ լճի էր նմանեցնում նրանց: Չէր տեսնում նրանց հոգիները: Իլիասն էլ էր նրանցից մեկը: Ուզում էր ցույց տալ, որ այդպես չէ, բայց զուր: Որոշ տեսանկյունից ամուսինն էլ էր այդպիսին: Բայց Ադեմն ուրիշ տեսակ էր: Գուցե գիշերը մարդկանց երկու տեսակի էր

թվայնացրել է 1915.info կայքը

բաժանում՝ բուեր ու խլուրդներ: Բուերը սիրում էին ուտել, խմել, զվարճանալ ու աշխարհը փոխող մեծ մտքեր ասել: Աղմկոտ, կրակոտ, պահանջկոտ, կրքոտ էին:

Իսկ խլուրդները մութը ոչ թե շփվելու, այլ թաքնվելու համար էին օգտագործում: Բուերը սիրում էին պարզաբանել: Իսկ խլուրդները՝ գիշերվա ստվերներում թաքնվել: Ամուսինը խլուրդ էր: Քաղաքի տակ իր համար ճամփաներ էր բացում: Թղթախաղի սիրահարների պես ծակում-անցնում էր գետինը կույր համառությամբ:

Ժամը ութն անց կես Փեմբեն արդեն հատակը մաքրել, խոզանակները լվացել էր: Ձեռքերն այնքան սովոր էին շփելուն, սրբելուն, որ անդադար աշխատում էր: Երբ ուրիշ բան չէր մնացել անելու, վերարկուն ու պայուսակը վերցրեց ու վերջին անգամ նայեց:

– Բարո՛վ մնաք հարդարիչներ,– մռթմռթաց նա:– Բարո՛վ մնաք սարքեր, մկրատներ, ներկեր...

Իրեն խոստացել էր, որ չի արտասվելու: Այտերը ներսից կծեց ու դուռը բացեց, դուրս եկավ փողոց: Գինովցած միջին տարիքի մի անգլիացի զույգ օրորվելով անցավ իր կողքով: Համբուրվեցին: Փեմբեն փորձեց չնայել նրանց, բայց չկարողացավ: Վաղուց էր եկել այդ երկիր, բայց դեռ չէր սովորել, որ մարդիկ կարող են բոլորի առաջ իրար համբուրել:

Փեմբեն արագ փակեց դուռը ու բանալին գցեց Ռիտայի փոստարկղի մեջ: Հիշեց՝ մոռացել է նրան նոթ գրել, բայց գուցե այդպես ավելի լավ էր: Եթե անգամ փորձեր բացատրել, վստահ էր՝ չէր կարողանալու:

Հիմա պետք է Իլիասին գտներ ու նրան ասեր, որ այլևս այդպես դրսում չէին կարող հանդիպել, պետք է նրան հրաժեշտ տար:

թվայնացրել է 1915.info կայքը

Իսքենդեր

14 նոյեմբերի, 1978
Լոնդոն

Այդ երեքշաբթի օրը՝ դպրոցում կեսօրի ընդմիջման ժամանակ, Իսքենդերն իրեն սովորականի պես էր պահում: Ամեն ինչ ծաղրում էր, կատակում: Ճաշելիս շրջապատի շատախոսներին ականջ դրեց: Երեխաները հաջորդ օրվա ֆուտբոլային հանդիպումից էին խոսում: «Զելսին» «Դինամո-Մոսկվայի» դեմ: Քիչ անց Արշադը Իսքենդերին նայեց ու ժպտաց:

– Ալե՛քս, այդ քաղցրավենիքն ի՞նձ տուր:

– Կ... կյ...ան...քում: Դե՛, խնդ... խնդ... րիր..., կ... կտամ...

Խոսակցությունը կանգնեց, կարծես դանակով կտրեին: Բոլորը Իսքենդերին նայեցին: Նախկինում երբեք չէին լսել, որ կակազի: Կամ էլ՝ որ կարմրի: Հետո բոլորը վերադարձան իրենց շատախոսություններին, բայց Իսքենդերի տրամադրությունն ընկել էր:

Դիմացը նստած աշակերտի ծոծրակին անթարթ նայելով՝ նստեց: Մինչև ճմռթված թղթի կտորը չընկավ սեղանին, տեղից չշարժվեց: Վերցրեց, բացեց:

Քեյթն էր:

«Մեգի, Քրիսթին, Հիլարի, եթե տղա լինի՝ Թոմ»:

Գլուխը սկսեց ցավել: Մի քանի րոպե անց մի թուղթ էլ եկավ: Հարցնում էր՝ ինչ է պատահել: Իսքենդերը միայն

թվայնացրել է 1915.info կայքը

Քեյթին հանգստացնելու համար կարճ նամակ խզբզեց ու հետ ուղարկեց. «Հետո կասեմ»:

Բայց հենց դասն ավարտվեց, ուսապարկը վերցրեց ու դուրս թռավ, չնայած գիտեր՝ առանց թույլտվության գնալու համար խնդիրներ է ունենալու: Որոշ ժամանակ աննպատակ թափառեց: Չէր ուզում դասերի ժամերին համազգեստով շրջել, դրա համար որոշեց արագ գնալ տուն: Մետրոյի կանգառի խոնավության հոտը ասեղի պես մխրճվեց մաշկի մեջ:

Երբ գնացքը եկավ, առանց շրջապատին ուշադրություն դարձնելու՝ նստեց: Սկզբում բավական մարդաշատ էր թվում: Ինչ տարօրինակ է՝ մեջտեղում այդքան նստելու տեղ կա, բայց մարդիկ դռների մոտ են հավաքվել, ոտքի վրա են կանգնել: Անմիջապես հասկացավ պատճառը: Այնտեղ մենակ նստած, ինքն իր հետ խոսող մի թափառական խենթ կար: Դեմքը, հագուստն ու մազերը կեղտոտ էին, կոշիկները հանել, խնամքով մերսում էր կեղտոտ, կոշտուկավոր ոտքերը՝ կարծես աշխարհի ամենամեծ հարստությունը լինեին: Շոգին օրեր շարունակ մնացած աղբ հիշեցնող խեղդող հոտ էր ամենուր տարածվել:

Հանկարծակի ներքին մղումով Իսքենդերը գնաց ու նստեց նրա կողքին: Թափառականը նայեց նրան՝ կարծես ուզում էր հասկանալ՝ ինչ խնդիր ունի: Իսքենդերը նկատեց, որ մյուսներն էլ են նրան նայում: Բայց իր համար մեկ էր: Արդեն սկսել էր կակազել, ուրեմն ինքն էլ էր հասարակության դուրս մնացածներից մեկը:

Գնացքի ապակու մեջ իր արտացոլանքին նայեց: Թունելի մթությունից դեմքը գունատ էր: Տասնհինգ տարեկանից մեծ էր երևում: Ժամանակին կարդացած պատկերավոր վեպը հիշեց: Մի դետեկտիվ տասը տարի անց իր հետ էր ծանոթանում, նրանից օգնություն

թվայնացրել է 1915.info կայքը

հայցում: Գուցե Իսքենդերը հիմա դա էր տեսնում՝ ապագայի իրեն:

Կակազելու մասին էր մտածում: Վիրո՞ւս է, ի՞նչ է, մտածում էր նա: Մայրը գիտեր ինչ անել՝ բուսական թեյ կպատրաստեր, կոկորդը կփափկեր, լեզուն կբացվեր: Եթե ինքն էլ չիմանա, Ջեմիլե մորաքրոջը կգրի, կհարցնի: Միշտ ասում էր, որ երկվորյակ քույրը տարածաշրջանի ամենահմուտ տատմերն էր, բույսերի լեզուն էր հասկանում: Վերջապես հանգստացավ ու հենվեց թիկնակին Իսքենդերը: Մոր հանդեպ զգացած սերը կենդանացավ սրտում: Թարրոք հորեղբոր ասածները զառանցանք էին: Երանի ժամանակի մեքենա լիներ, կարողանար մանկություն վերադառնալ: Մինչև Էսմայի ծնունդը: Յունուսի ծնունդից առաջ: Երբ միայն ինքն ու մայրն էին՝ շրջապատված սիրով: Երբ գնացքը հասավ այն կանգառին, ուր պետք է իջներ, Իսքենդերն այդ ամենի մասին էր մտածում:

– Երևի ինչ-որ մեկը շտապում է,– ասաց թափառականը:

Իսքենդերը նայեց նրան, գլխով բարևեց:

– Դե՛, վազի՛ր: Մայրիկիդ մի՛ սպասեցրու...

Այդ խոսքը լսելուն պես կարծես մեջքով սառը քրտինք հոսեց: Կանգառից դուրս գալիս դեռ նրա ծիծաղն էր զնգում ականջներում: Լավենդեր փողոցի տուն հասնելու և զանգը տալու պահին ժամը երեքն անց կես էր: Դուռը չբացվեց: Մի անգամ էլ զանգեց, հետո բանալին հանեց, փորձեց բացել, բայց ներսից կողպված էր: Հանկարծ ոտնաձայներ լսվեցին միջանցքից: Ու շշնջոցներ... Այդ պահին ամեն ինչ փլվեց:

թվայնացրել է 1915.info կայքը

Իլիաս

1 դեկտեմբերի, 1978
Լոնդոն

Երբ Իլիասը իմացավ սպանության մասին, տան օդային բույսը լվանալով էր զբաղված: Օդային բույսերը տարօրինակ արարածներ էին՝ արտասովոր մարդկանց նման:

Տերևների ծակոտիներով էին խոնավություն ստանում, արմատների կարիք չունեին: Մյուս բույսերի պես հողին կապվելու փոխարեն՝ ցանկացած օբյեկտի են կպնում, օդում են ապրում: Նրանք թափառական էակներ էին: Իլիասը իր ծաղիկը խոհանոցի սեղանի վրա՝ մեծ ծովախեցու մեջ էր մեծացնում: Գարնանը բավական էր միայն ցնցուղի տակ լողացնելը, բայց ձմռանը տաքացուցիչներից տան օդը չորանում էր, պետք էր տասը օրը մեկ դնել ջրի մեջ, լողացնել:

Այնքան էր տարվել այդ գործով, որ դռան թակոցը չէր լսել: Վերջին անգամ էլեկտրականության ընդհատումից հետո զանգը լավ չէր աշխատում, ժամանակ չէր ունեցել վերանորոգելու: Մի քանի վայրկյանում դուռը նորից թակեցին, ավելի ուժեղ:

Մտածելով՝ տեսնես ով է այդ ժամին՝ ձեռքերը չորացրեց: Աչքն ընկավ սեղանին դրած նվերին: Գուցե Փեմբեն էր: Մի պահ մտածեց՝ գուցե թաքցնի նվերը: Չնայած առանց զգուշացման գալու սովորություն չուներ,

թվայնացրել է 1915.info կայքը

բայց գուցե ազատ ժամանակ էր ունեցել, ուզել էր իրեն անակնկալ անել, ով գիտի: Փեմբեի ծնունդն էր:

Երբ էլ չէին կարողանում գնալ կինոթատրոն, սկսեցին այդ բնակարանում հանդիպել: Չորս անգամ էր գնացել այնտեղ Փեմբեն. թռչելու ուժ հավաքելու համար ճյուղին նստած թռչնի պես ամաչկոտ ու անհանգիստ էր: Կատուն գրկին՝ նստել էր թախտին ու լուռ շուրջն էր նայում: Նայում էր՝ ինչպես է Իլիասը բաց խոհանոցում աշխատում, լսում էր նրա խոսակցությունը: Աչքերի անհանգստության չափ իրական էր նրա ժպիտը:

Ի սկզբանե Իլիասի համար Փեմբեն հակասությունների կույտ էր: Որքան ամաչկոտ, անգամ փխրուն էր, բայց տակը թաքնված, համառող շերտ կար: Կինոթատրոնում, միմյանց ձեռք բռնած, «Փոքրիկը» միասին առաջին անգամ դիտելու օրից ի վեր ուզում էր նրան համբուրել, բայց չէր կարողանում: Փեմբեի հետ անհանգստության ու մեղքի զգացում էր ունենում: Նրա հետ լինելու մասին էր մտածում, երազում, ուզում: Բայց հենց միայնակ էին մնում, իրեն պահում էր, կամք էր ցուցաբերում:

Փեմբեն առեղծված էր, առեղծված, որ ոչ մի կերպ չէր կարողանում բացահայտել: Իլիասի միակ ցանկությունը նրան երջանկացնելն էր: Գուցե ուրիշին անհասկանալի լինի, բայց գիտակցում էր, որ դա եսասիրական ցանկություն է: Ուզում էր սերը կախարդական փայտիկով իր ուզածին վերածել, գեղեցկացնել: Եթե Փեմբեին ի սրտե սիրեր, կարծես նրան կարող էր Մոխրոտից շլացնող արքայադստեր վերածել: Իլիասի միտքը դրանով էր զբաղված՝ Փեմբեին նորից ստեղծելու երազանքով:

Փեմբեն երբեմն երիտասարդ աղջկա նման էր վարվում: Գլուխը հենում էր Իլիասի կրծքին. սիրում էր զգալ նրա մարմնի տաքությունը, բայց դրանից այն կողմ չէր անցնում: Իլիասը մտածում էր, որ սահմանն անցնելու

թվայնացրել է 1915.info կայքը

համար արած ամեն քայլ կարող էր անհանգստացնել Փեմբեին, ու հասկացել էր, որ նրան մղում էր դեպի տևական մեղքի զգացողություն: Որպես ամուսնացած ու երեխաների տեր կին՝ իրենից տարիքով մեծ մարդու հետ թաքուն հանդիպելուց էր ամաչում: Մի քանի անգամ ամուսնուց բաժանվելու ցանկություն ունենալու մասին էր խոստովանել: Բացի դրանից՝ հավանաբար, ամուսինն էլ էր ուզում, բայց երեխաներին, հատկապես փոքրին՝ Յունուսին, տխրեցնելուց էր վախենում: Նրա ֆիզիկական անհասանելիությունը Իլիասին ավելի էր մոտեցնում նրան:

Փեմբեին ընդունել էր այնպես, ինչպես կա: Կյանքում առաջին անգամ սիրում էր մեկին՝ առանց պահանջելու:

Չնայած ամենին՝ սրտի խորքում Իլիասը վստահ էր՝ մի օր, մի կերպ, մատների ծայրերը հանդիպելու էին իրար: Հենց այդ ժամանակ լրիվ նոր շրջան է սկսվելու իրենց կյանքում: Արդեն անհանգստություն չէր լինի: Մեղավորություն չէր լինի: Սերը կբավականացներ իրենց: Մնացածն ինքնըստինքյան կհարթվեր: Փեմբեն կգար իր մոտ թեթև ու ազատ: Իլիասը կօգներ մեծացնել երեխաներին, միշտ նրանց կողքին կլիներ: Կսիրեր, կսիրվեր, սրտի դատարկությունը վերջապես կլցվեր, այդ վերքը կփակվեր:

Հիմա միջանցքում քայլելիս, իրենից անկախ ոգևորված, այդ ամենի մասին էր մտածում, բայց դուռը բացելուն պես անծանոթի տեսավ ու հիասթափվեց: Դեռահաս աղջիկ էր: Լայն փողքերով ջինսե տաբատ էր հագել, լայն թևերով կարմրադարչնագույն վերնաշապիկ, վզին՝ մետաքսե շարֆ: Խոշոր ալիքավոր մազերը մեջտեղից էր բացել, ճակատը լայն էր, ծնոտը՝ ընդգծված:

– Իլիասին եմ փնտրում,– ասաց Էսման:

– Համեցե՛ք, ես եմ,– ասաց Իլիասը՝ հանգիստ ժպտալով:

թվայնացրել է 1915.info կայքը

– Ուրեմն դո՞ւ ես:

Ապշեց: Անսպասելի հարց էր ու նույնքան սպառնալից:

– Մայրս...– ասաց Էսման:

– Ի՞նչ...

Էսման գլուխը բարձրացրեց, բայց չկարողացավ նայել նրա աչքերին:

– Մայրս մահացել է:

Շրջվեց, որ գնա: Իլիասը մեկնվեց ու բռնեց նրա թևը: Աչքերը լի էին սարսափով ու ցավով:

– Ի՞նչ ես խոսում: Ո՞վ ես,– հարցրեց նա:– Մայրդ ո՞վ է:

– Չհասկացա՞ք՝ ում մասին եմ խոսում,– մեղադրելով ասաց Էսման:

– Չեմ հասկանում: Բայց ինչպե՞ս... ինչպե՞ս եղավ,– զարմացած հարցրեց նա:

– Եղբայրս է դանակահարել: Ձեր հարաբերության պատճառով:

Իլիասի աչքերը մեծացան, ու դեմքը աստիճանաբար գունատվեց: Այդ սարսափը հասկանալու համար պետք էր սիրտը մի քանի անգամ էլ լուռ զարկեր: Հենվեց պատին: Էսման տարօրինակ կերպով կարծես հաճույք ստացավ այդ մարդու տառապանքից: Ինքն էր գուժաբերը:

– Մեզ միայն ամոթ բերեցիք,– ասաց Էսման:– Հուսամ՝ գոհ եք:

Իլիասը արդյոք տեսա՞վ, որ իր առաջ դաժան ու քինոտ աղջիկ էր: Հասկացա՞վ՝ մորը որքան սիրում, նույնքան էլ խանդում էր և չէր պատրաստվում որևէ մեկի հետ կիսել:

– Մենք չենք ուզում ձեզ տեսնել,– ասաց Էսման:– Հուղարկավորությանը չգաք, մեր ընտանիքի գործերին մի՛ խառնվեք: Մեզ հանգի՛ստ թողեք: Հասկացա՞ք:

թվայնացրել է 1915.info կայքը

Դա այնքան վիրավորող հարց էր, որ անհնար էր անպատասխան թողնել: Իլիասը գլուխն օրորեց:

– Այո՛,– ասաց նա: Հետո հանգիստ կրկնեց.– Այո՛:

Նայեց՝ ինչպես երիտասարդ աղջիկը, առանց հետ նայելու, վազելով իջավ աստիճաններով: Մի կողմից՝ դեռ չէր ուզում լսածներին հավատալ. գուցե ծնողների ամուսնությունը փրկելու համար էր սարսափելի սուտ հնարել: Երեխաներն անում էին այդպիսի բաներ: Կարիք չկար խուճապի: Ամեն ինչ մի երկու ժամում կպարզվեր:

Այդ օրը կեսօրից հետո Իլիասը պատճառաբանություն հնարեց ու չգնաց աշխատանքի: Տանը նստեց ու սպասեց Փեմբեին: Շատ խմեց, մի պահ քնով անցավ, բերանում ժանգի համով վեր կացավ: Առավոտյան առաջին գործը թերթերը կարդալն էր: Այնտեղ էր: Առաջին էջին: Երիտասարդը հանուն «նամուսի» սպանել է մորը: Աչքերը կկոցելով՝ նայեց բառերին. բոլորը տեսնում էր, ճանաչում, բայց չէր ուզում հասկանալ նրանց միասնական իմաստը:

* * *

Իլիասը իրեն հետևող երիտասարդին առաջին անգամ հնդկական շուկայում էր նկատել: Համեմված թթուներ էր գնում: Տարբեր ուտելիքների հետ էր մատուցում: Ձեռքը մեկնեց մի տարայի, երբ զգաց՝ մեկն իրեն է նայում: Ակամայից գլուխը թեքեց՝ այնտեղ էր տղան, դրսում, կանգնել էր պատուհանի առաջ, ցուցափեղկի ու թիթեղյա տուփերի վրայից իրեն էր նայում: Թշնամանքով էր նայում: Աչքերը այրվող փայտից ցատկող կայծերի պես էին փայլում:

Հենց առևտուրը վերջացավ, խանութից դուրս գալով՝ աջ ու ձախ նայեց: Եթե երիտասարդը դեռ այնտեղ լիներ, կխոսեր նրա հետ: Բայց անհետացել էր: Երևի ուրիշին

թվայնացրել է 1915.info կայքը

էր նայում՝ մտածեց նա: Կարիք չկար խուճապի: Մինչդեռ հիշել էր՝ այդ նույն տղան էր կինոթատրոնի մոտ իրենից կրակայրիչ ուզել, և Փեմբեի ու նրա արտաքինի նմանությունն էլ ուշադրությունից չէր վրիպել: Երկու օր անց նորից տեսավ Իսքենդերին: Այդ անգամ «Պլատոն» ռեստորանի առաջ կանգնած ծխախոտ էր ծխում: Ուշ ժամի դուրս գալիս ամենավատ սցենարին էր նախապատրաստվել Իլիասը, բայց հետևողը նորից անհետացել էր:

Այդպես շարունակվեց: Հաջորդող շաբաթներում Իսքենդերը, ճամփան կորցրած ուրվականի պես երևալով ու անհետանալով, օրվա տարբեր ժամերի հետևում էր Իլիասին: Չէր փորձում թաքնվել, բայց ուզած պահին անհետանալու հնարավորություն ընձեռող հեռավորության վրա էր կանգնում:

Իլիասը մեծ սխալ էր գործել. Փեմբեին ոչինչ չէր ասել: Իրականում Իսքենդերի պահվածքի համար մասամբ իրեն էր պատասխանատու զգում: Այդ հետապնդումները Լավենդեր փողոց գնալու օրվանից էին հաճախացել:

– Ուզում եմ իմանալ՝ որտեղ ես ապրում,– ասել էր Իլիասը՝ իմանալով, որ հատում է սահմանները:

– Ի՞նչ: Ինչո՞ւ:

– Դու գիտես՝ որտեղ եմ ապրում, իմ տունը, աշխատանքս, անցյալս գիտես: Մինչդեռ ես քո մասին ոչինչ չգիտեմ: Ինձ համար դեռ առեղծված ես:

Ի՞նչ կարող էր ասել Փեմբեն: Իրավացի էր:

– Ժամանակի մեծ մասը միմյանցից առանձին ենք անցկացնում,– շարունակեց Իլիասը:– Տանը, երբ ինձնից հեռու ես, ուզում եմ պատկերացնել՝ ինչ ես անում: Ուզում եմ պատկերացնել՝ ինչպես ես ուտելիք պատրաստում: Քո փողոցը, թաղամասի խանութը: Քեզ մոտ զգալու համար գլխիս մեջ պետք է բոլոր պատկերներն ունենամ:

թվայնացրել է 1915.info կայքը

– Պատկե՞ր:

– Տե՛ս, միայն մի պահ գամ ու նայեմ, հինգ րոպեն հերիք է: Ուրիշ բան չեմ ուզում: Կատվի պես գալ, կատվի պես գնալ: Առանց ինչ-որ մեկին երևալու: Միայն մի անգամ: Կլինի՞:

– Բայց միայն հինգ րոպե,– անհանգիստ ասել էր Փեմբեն,– հետո գնալու ես:

– Խոստանում եմ:

Նույն շաբաթ, մի հանգիստ կեսօրի, երբ երեխաները դպրոցում էին, Իլիասը առաջին անգամ մտավ Լավենդեր փողոցի տուն: Շեմն անցնելուն պես զղջաց: Ակնհայտ էր, որ Փեմբեն չէր ուզում: Միայն իրեն գոհացնելու համար էր ընդունել առաջարկը: Ոչ միայն այդ պահին այնտեղ լինելու, Փեմբեի կյանք մտնելու ու այդքան խնդիրներ ստեղծելու համար էր իրեն մեղավոր զգում Իլիասը: Ուզում էր, որ այդ սերը հրաշքներ գործի, բայց գուցե միակ գործը խնդիր ստեղծելն էր: Նրան ավելի շատ չանհանգստացնելու համար անգամ վերարկուն չհանեց. պատրաստ էր ամենափոքր նշանով դուրս թռնել:

Մյուս կողմից էլ՝ այդ բնակարանը իր սիրելի մարդու այնքան շատ հետքեր էր կրում: Փեմբեի վախեցած, ամաչկոտ վիճակի պատճառն այն էր, որ ժամանակի մեծ մասն այդ կիսամութ վայրում էր անցկացնում: Սեղանների, դարակների ու բազմոցների վրայի ժանեկավոր ծածկոցներին, Փեմբեի արած ասեղնագործ իրերին, պատուհանի առաջ պարանին շարած, չորացող բիբարներին ու սմբուկներին, փումփուլիկով հողաթափերին նայեց: Փորձեց անգիր անել դետալները: Միմյանց հետ մրցող հոտերի մեջ էր ընկղմվել՝ տանը պատրաստած խմորային ուտելիքներ, նոր լվացած հագուստ, դարչին ու վարդաջուր: Այդ ամենը ծայրաստիճան օտար էր

թվայնացրել է 1915.info կայքը

Իլիասին, բայց մյուս կողմից էլ՝ ընտանիքի՝ Լիբանանում թողած կյանքն էր հիշեցնում. աչքերը լցվեցին:

Փոքր ժամանակ ամառային արձակուրդներից մեկը տատիկի մոտ՝ Բեյրութում էր անցկացրել՝ ծովի ափին, տաք ու առատաձեռն ավազի մեջ էր թափառել: Մի անգամ փոթորկից հետո ափ նետված ծովային կենդանիների էր տեսել: Տնից-տեղից պոկված, անպաշտպան ու տարօրինակ կենդանիները զարմացրել էին նրանց: Տարիներ անց, երբ աշխատեց արևմտյան քաղաքներում, առաջին սերնդի միգրանտների վիճակն իրեն այդ տեսարանն էր հիշեցնելու: Նրանք էլ էին մեծ ալիքով ծովափ նետվել. ո՛չ պատրաստ էին դրան, ո՛չ էլ կարող էին անուշադրության մատնել. հանկարծակի հեռացել էին իրենց բնական միջավայրից: Անհանգիստ ու փխրուն էին նոր միջավայրում: Իլիասը շատ լավ էր հասկանում այդ զգացողությունը, որովհետև նա էլ ուրիշ մշակույթների ափերին ապրող մեկն էր եղել: Բայց մի հիմնական կետում տարբերվում էր այդ միգրանտներից: Ոչ մի հողի հանդեպ կապվածություն չուներ. կարող էր ամենուր ապրել: Գուցե աննկատ օդային բույսի էր վերածվել: Ուներ արմատներ, բայց ավելի շատ օդի հետ էր կապված, քան հողի:

Դեպի դուռն ուղղվելիս Փեմբեին շնորհակալություն հայտնեց իրեն ընդունելու և ներողություն խնդրեց նեղություն պատճառելու համար: Նրա հեռանալուց Փեմբեն և՛ հանգիստ էր զգում, և՛ տխրում էր:

– Մնա՛,– ցածր ձայնով ասաց նա:– Թե՛յ խմիր: Հետո կգնաս:

– Վստա՞հ ես:

Ժպտալով գլուխն օրորեց:

Բրոնզագույն ինքնաեռ կար սեղանին: Փեմբեի ձեռքերը դողում էին բաժակները լցնելիս, եռացող թեյը թափվեց բլուզին:

թվայնացրել է 1915.info կայքը

– Աստվա՛ծ իմ,– ասաց Իլիասը:– Վառվեցի՞ր:

Գլուխն օրորելիս մի կողմից էլ փորձում էր բլուզը մաշկից հեռու պահել:

– Խնդիր չէ: Դու խմի՛ր: Ես գնամ, փոխվեմ:

Երբ դռան մոտ ոտնաձայներ լսեցին, Իլիասը միայնակ նստած էր կիսաբաց դռներով հյուրասենյակում: Մեկը զանգը տվեց, սկզբում կարճ, հետո երկար, համառորեն: Իլիասը զգաց՝ ինչպես լարվեցին ծոծրակի մկանները: Սխալ կոճկած սպիտակ բլուզով ննջարանից դուրս թռած Փեմբեն սարսափով նայեց Իլիասին: Երեխաներից ոչ ոք երկուսն անց կեսից շուտ տուն չէր գալիս: Հարևանները աշխատում էին, բացի դրանից՝ ոչ ոք անսպասելի չէր գա: Մի վայրկյան հետո բանալու ձայնը լսեցին: Դրսում ով որ էր՝ փորձում էր ներս մտնել: Փեմբեն գունատվել էր, աչքերը սառել էին: Հասկացել էր՝ ով էր դռան մոտ: Միայն մի հոգի ուներ սեփական բանալի՝ Իսքենդերը:

Իլիասը հասկացրեց, որ պետք է թաքնվել, բայց գաղափար չուներ՝ ինչ կարելի է անել: Լարված շշնջոցից հետո մտավ սեղանի տակ, կարծես մղձավանջի մեջ լիներ:

Փեմբեն մոտեցավ դռանն ու հարցրեց.

– Ո՞վ է,– կարծես թե չգիտեր:

Րոպեներ անց, երբ տղան մտավ սենյակ ու դուռը փակեց, Իլիասը թաքստոցից դուրս եկավ ու ներսը կրծող մեղավորությամբ տնից դուրս եկավ: Հաջորդ օրերին այդ սարսափելի պահը նորից ու նորից էր հիշելու: Փեմբեն հույս ուներ, որ որդին ոչինչ չէր կասկածել: Բայց երբ Իսքենդերը սկսեց իրեն հետևել, հասկացավ՝ ամեն ինչ հասկացել է, ու վախեցավ:

թվայնացրել է 1915.info կայքը

* * *

Մահվան լուրը ստանալուց հետո Իլիասը որոշեց գնալ Փեմբեի տանն ամենամոտ հիվանդանոց կամ մորգ, բայց չէր ուզում բարեկամներին կամ հարևաններին հանդիպել, խնդիրներ ստեղծել: Ոչինչ չարեց: Ուզում էր նորից խոսել Էսմայի հետ, բայց եթե անգամ կարողանար ճիշտ բառերը գտնել, վստահ չէր, որ իրեն կընդունեին: Մտածեց գնալ ոստիկանություն, բայց նրանց ասելու ոչինչ չուներ:

Հաջորդ օրերը հիմնականում խոհանոցում անցկացրեց. ո՛չ հագուստն էր փոխում, ո՛չ դեմքն էր լվանում: Համեմունքներով սոուսներ, թանձր ապուրներ էր պատրաստում, որոնք ոչ ոք չէր ուտելու: Իր ներսի զղջման ու ցավի խառնուրդներն էր եփում: Նրա մեղքով էր ամեն ինչ: Ինչպե՞ս չէր կարողացել ժամանակին տեսնել: Ինչպե՞ս կարող էր այդքան անզգույշ լինել:

Թերթերը գրում էին, որ համար առաջին կասկածյալ Իսքենդեր Թոփրաքին դեռ չեն բռնել: Իլիասը սպասում էր, որ ամեն պահի դուռը թակելու է. պատրաստ էր առերեսման: Դա քաջության ցուցադրություն չէր: Միշտ արագ էր ապրել, միշտ առաջ էր նայել, իսկ այժմ առաջին անգամ կանգնել, իր ճակատագրին էր հնարավորություն տալիս իրեն հասնելու: Բայց Իսքենդերի փոխարեն ոստիկանությունը եկավ: Մի քանի հարց տվեցին: Տանը նկարներ արեցին, իր մասնագիտության հետ կապված տեղեկություններ հարցրին, անավարտ հարցեր տվեցին հանգուցյալի հետ հարաբերության մասին:

Երբ վերջապես գնացին, վարագույրներն ու դռները փակեց, ինչպես Փեմբեի հետ էին անում, մոմ վառեց ու նայեց՝ ինչպես է մինչև վերջ այրվում: Ֆեյրուզի ձայնապնակներից մեկը դրեց: Այդ հիասքանչ կնոջ երգի թավ ձայնը լցվում էր տան բոլոր արանքները, քամու պես

թվայնացրել է 1915.info կայքը

փչում, փոխում էր եղանակը: Երբ սկսվեց «Գիշերվա անտեսանելի դանակը» երգը, Իլիասը էլ չդիմացավ, սկսեց երգել.

«Գիշերը լուռ է,

Միայն վարագույրն է թաքցնում է մեր երազանքները»...

Այդ բոլոր տարիների ընթացքում Իլիասը իրեն հավատացրել էր, որ առանց աշխատանքի՝ ոչ մի օր չի կարող ապրել. երբ աշխատելուց հոգնում էր, ավելի շատ էր աշխատում: Բայց հաջորդ երեք շաբաթը փակվեց տանը: Աշխատողները, որ չգիտեին՝ ինչ է կատարվում, անընդհատ զանգում էին, հարցնում՝ երբ է վերադառնալու: Պատճառը չգիտեին, բայց հասկանում էին նրա տառապանքի խորությունը: Մի ամիս անց Իլիասը օգնական շեֆին փոխանցեց իր աշխատանքն ու նրան ռեստորանի գլխավոր շեֆ նշանակեց: Իրեն ազատեց պարտականություններից, ընկղմվեց երազների աշխարհում, ուր չկային անհետաձգելի գործեր:

1979 թվականի սկզբում՝ դատարանում ցուցմունք տալուց հետո, երբ էլ խոստովանելու ոչ մի բառ չմնաց, անսպասելի բան արեց. երկու ճամպրուկ լիքը լցրեց, մնացած բոլոր իրերը բաժանեց աշխատողներին: Աստիճանաբար ծերացող պարսկական կատվին տվեց Անաբելին: Փեմբեի ծննդյան օրվա նվերը՝ սրտի տեսքով կանաչ քարով արծաթե վզնոցը, Էսմային ուղարկեց: Հետո, ճիշտ ինչպես տարիներ առաջ էր արել, միակողմանի տոմս գնեց: Կոտրված ու փշրված՝ վերադարձավ Կանադա:

թվայնացրել է 1915.info կայքը

Ադեմ

5 մարտի, 1982
Աբու Դաբի

Մի օր լուսաբացին Ադեմը արթնացավ ու գնաց շինհրապարակ: Գիշերային պահակը՝ մեծ, սև աչքերով պակիստանցին, նրան տեսնելուն պես զարմացավ ու միաժամանակ ուրախացավ, որ կարող է մեկի հետ զրուցել:

– Շուտ ես եկել:

– Աչքս չէր կպնում:

Պահակը հասկանալով ժպտաց.

– Երևի կնոջդ ես կարոտել: Փո՛ղ ուղարկիր: Երբ ուրախանա, դու էլ քեզ լավ կզգաս:

Բայց Փեմբեն արդեն չկար: Նրա մասին մտածելուց ավելի տխրեց Ադեմը: Աչքերը լցվեցին: Միայն կարողացավ գլուխը կախել: Գրպանից «Մարլբորոյի» մի տուփ հանեց, շրթունքների արանքում մի ծխախոտ դրեց: Մեկն էլ պահակին հյուրասիրեց: Ադեմը հիշեց՝ ինչպես էր Ստամբուլում երիտասարդ ժամանակ փողոցից գլանակներ հավաքում: Մի անգամ շրթներկի հետքերով, կիսով չափ ծխած ծխախոտ գտավ: Այդ հայտնագործությունը նրան երկակի զարմանք էր պատճառել՝ չէր հավատում, որ մարդիկ կարող են դեռ չավարտված ծխախոտը դեն նետել, մյուս կողմից էլ, որ կինը կարող էր փողոցում ծխել:

թվայնացրել է 1915.info կայքը

Լոնդոն տեղափոխվելուց հետո սովորել էր մոլի ծխող կանանց: Իսկ երբ Ռոքսանան նրան առաջին անգամ ծխախոտ հյուրասիրեց, ուրախությունից գլուխը պտտվել էր:

– Վերցրո՛ւ քեզ,– ասաց նա՝ գրեթե լիքը տուփը նրան մեկնելով:

– Ի՞նձ ես տալիս,– հարցրեց պահակը:

– Այո՛, նվեր լինի եղբորս:

Տաք երկրներ չվող թռչունների երամը, հանկարծ թևերը միահամուռ զարկելով, անցավ գլխավերևով: Գուցե Ստամբուլից էին եկել: Կամ էլ Լոնդոնից էին գալիս ու այնտեղ Ադեմի երեխաներից մեկին էին տեսել՝ թևի տակ նոր գրքերով գրախանութից դուրս եկող Էմային կամ փանք ընկերների հետ պատերին գրաֆիտի գծող Յունուսին, կամ բանտի պատուհանից դուրս նայող, անձրևին հետևող Իսքենդերին... Բայց ո՛չ, չէր ուզում մտածել որդու ու այդ սարսափելի վայրի մասին: Ինքն իրեն մեղադրում էր Ադեմը: Իրեն պատասխանատու էր համարում չարածների համար: Ամբողջ կյանքում ամեն ինչից փախել, վախկոտի պես էր ապրել՝ իր կարիքը զգացող մարդկանց կողքին չէր եղել, դա նոր էր հասկանում:

Պակիստանցին, նրա հայացքները բռնելով, տխուր ժպտաց: Եզակի անմեղություն կար պահակի դեմքին: Ադեմը կարծես մտերմություն զգաց նրա հանդեպ. կարծես կյանքում նմանատիպ կորուստներ էին ունեցել: Եթե այլ պայմաններում հանդիպած լինեին, կուզեր լսել նրա պատմությունը, տեսնել ընտանեկան նկարները:

Գուցե այդ պահակին ցույց տար երեխաների նկարները. Փորիկ Յունուսը Իսքենդերի ու Էմայի գրկին՝ ուրախ ու զարմացած հայացքներով: Նոր էին Անգլիա գնացել: Մեկ էլ Փեմբեի նկարը կար Ադեմի մոտ:

թվայնացրել է 1915.info կայքը

Ստամբուլից հեռանալու օրն էին նկարվել՝ ոչ ոքի թույլ չէր տալիս նայել այդ նկարին:

Ոտքի կանգնեց ու շինհրապարակին նայելով՝ ասաց.

– Եթե դեմ չես, կուզեմ այստեղ մի քիչ նստել ու մտածել:

Գիշերային պահակը, ուսերը թոթվելով, ասաց.

– Լավ, բայց շատ մի՛ մտածիր:

Քարերով պատած արահետով դանդաղ քայլեց Ադեմը: Լուսաբացի կարմրավուն լույսերում ուրվականի նմանվող շենքին էր հասնում, երբ պահակը, ձեռքին դեղին մի բան թափահարելով, հասավ հետևից:

– Սպասի՛ր: Սաղավարտդ ես մոռացել:

– Վա՛յ: Շնորհակալ եմ, եղբա՛յր:

Սաղավարտը գլխին դրեց ու կատակով ողջունելով՝ ներս մտավ:

* * *

Երբ Ադեմը յոթ տարեկան էր կամ ութ՝ վստահ չէր, մայրը նրան տարել էր զբոսնելու՝ միայն երկուսով: Իրեն յուրահատուկ էր զգում: Երթուղայինով գնացել էին կայարան: Ձեռք ձեռքի տված էին քայլել: Մի սյան հետևում կիսով չափ թաքնված մի մարդ էր սպասում: Մուգ մազերը ժելեով հետ էր սանրել՝ ճակատը լայն էր, հոնքերը՝ հաստ: Որքա՞ն ժամանակ էր այնտեղ կանգնած: Անունն ի՞նչ էր: Մորը որտեղի՞ց էր ճանաչում: Ադեմը երբեք պատասխանները չէր իմանալու: Երբ տեսավ՝ կինը գալիս է, ինքնավստահ ժպիտ տարածվեց մարդու դեմքին մինչև երեխային նկատելը:

– Երեխան...– ասաց նա:

– Նրան չեմ կարող թողնել,– ասաց մայրը:– Խնդրում եմ:

– Խոսել ենք այդ մասին, Այշե՛: Քեզ ասել եմ:

թվայնացրել է 1915.info կայքը

Կարծես տխրել էր: Ակնհայտորեն շտապում էր: Աչքերը մեկ կնոջը, մեկ գնացքին էին նայում:

– Ամենափոքրն է,– ասաց կինը:– Մոր կարիք ունի:

Մարդը ծխախոտը գետնին գցեց, ոտքով ճզմեց՝ միջատի նման: Հետո գլուխը բարձրացրեց, նայեց կնոջ աչքերի մեջ ու ասաց.

– Քեզ ասացի՝ ուրիշի երեխային չեմ նայի: Հո՛րը թող: Այդպես բոլորի համար ավելի լավ կլինի:

– Գնա՛, մեկին հարցրո՛ւ՝ ժամը քանիսն է,– ասաց Այշեն՝ ձեռքը տղայի ուսին դնելով:

– Ի՞նչ: Բայց...

– Գնա՛ հարցրու, ասացի,– կրկնեց Այշեն:

Երբ հարցրեց ու եկավ (ժամը տասնմեկն անց քսան էր), տեսավ, որ այդ մարդը մորն ինչ-որ բան է ասում, մայրն էլ լուռ գետնին էր նայում:

– Այդ գնացքը չենք նստելու,– ասաց մարդը:– Երեքին մեկն էլ կա: Այդ ժամին արի՛: Մենակ:

Գնալիս նորից իրար ձեռք բռնեցին Ադեմն ու մայրը: Երբ կայարանից դուրս եկան, անձրև էր սկսվել: Մոտակայքի սիմիթ վաճառողից երկու սիմիթ վերցրին ու նստեցին աստիճաններին: Մոր նայող, բայց չտեսնող աչքերի առաջ երեխան սիմիթի կեսը տվեց աղավնիներին:

– Ո՞վ էր այդ մարդը, մայրի՛կ:

– Ընկեր էր:

– Չսիրեցի նրան,– ասաց Ադեմը դողացող շուրթերով: Դեռ չէր որոշել՝ արտասվելու է, թե ոչ:

Այշեն նրան իր կողմը քաշեց ու խառնեց մազերը:

– Ես էլ չեմ սիրում:

Դա լսելուն պես հանգստացավ, բայց հասկանում էր՝ մի բան այն չէ: Մայրը նույնիսկ չզայրացավ, որ վազում էր աղավնիների հետևից, ցեխոտ ջրերի մեջ էր ցատկում, որ քրտնել էր:

թվայնացրել է 1915.info կայքը

– Եթե գնաս, ինձ էլ տար, լա՞վ:
Այշեն հանկարծ լրջացավ:
– Լա՛վ, իմ փոքրի՛կ սիրելի:
– Ո՛չ,– ուղղեց նրան տղան:– Մեծ սիրելի:

* * *

Ադեմը, բեռնատար վերելակ մտնելով, սեղմեց ամենավերևի կոճակը՝ քսաներկու: Հետո պետք է աստիճաններով մինչև քսանյոթերորդ հարկ բարձրանար, որովհետև երկաթե ձողերից կազմված կմախքից բացի՝ ուրիշ բան դեռ չկար: Երբ ավարտվեր, Աբու Դաբիի ամենամեծ շենքն էր լինելու:

Երբ հասավ վերջին հարկ, ցեմենտի պարկերից մեկը մի կողմ քաշեց ու նստեց: Բերանը չորացել էր: Ձեռքերը դողում էին. վերջերս սովորական բան էր դարձել: Բայց տեսարանը հիանալի էր, դեռ արևը լրիվ դուրս չէր եկել: Հարուստների տանիքի բնակարանների կամ գրասենյակների տեսարաններից էլ գեղեցիկ էր: Հենց խաչմերուկին մի հայտնի հյուրանոց կար՝ շքեղ պատշգամբներով ու շքեղ ճակատով: Մի պահ այնպես թվաց, կարծես մեկն իրեն հետևում է, հետո այդ զգացողությունն արագ անցավ:

Այնտեղ նստած, ոտքերը ճոճելով՝ նայում էր ամպերի շարժին ու մտածում՝ առաջին անգամ հոր (Հարբած) ու մոր մասին բամբասանքը երբ և ումից էր լսել: Ո՞ր հարևանից: Թաղամասի մսավաճառի՞ց: Թե՞ սրճարանի մոտ նստած, ընկեր ձևացող, բայց միայն բամբասանքներ տարածող մեկից: Ասում էին՝ քեզ պես էֆենդի մարդուն էդպիսի բա՞ն կանեին: Մխիթարող էին ձևանում, բայց ուրիշների դժբախտությամբ էին սնվում:

Տարեցտարի, սերնդեսերունդ կարծես կրկնվում էր պատմությունը:

թվայնացրել է 1915.info կայքը

Վերջերս Իսքենդերի հանցագործությունից ու դրա պատճառներից տեղեկացած մի թուրք գործարար էր եկել Աբու Դաբի: Եթե մարդ շատախոս է, ուրեմն բամբասանքն արագ է տարածվելու: Գործընկերների աչքում նորից այդ չարաբաստիկ շողն էր տեսնելու՝ խղճի, ծաղրի, հետաքրքրության շողը: Բայց դա կարևոր չէր: Այդ պահից սկսած՝ արդեն ոչինչ կարևոր չէր: Ինքը միայն իր ստվերն էր՝ ինչպես առաջ, ուրիշ ոչինչ: Եվ ստվերին ոչ ոք չէր կարող վնասել:

Հեռվում կարմիր-նարնջագույն գծերով էր ծածկվել հորիզոնը՝ այնքան գրավիչ, այնքան գեղեցիկ էր: Այդ շողերի ներքո տարօրինակ հանգստության ու իմաստության մեջ էր թաղվել ամբողջ աշխարհը: Այնտեղ նստած, հիացած հետևեց արևածագին: Հանգիստ տեսարանի մեջտեղում շենքերը կարծես կրակի կտորներ լինեին: Կարծես երկինքը երկու կես էր եղել, ուրիշ աշխարհ էր ի հայտ եկել՝ բոլորն ու ամեն ինչ Աստծո սուրբ վրձնով էին ներկվել:

* * *

Այդ օրը կեսօրից հետո՝ ժամը երեքին, Ադեմի մայրը կայարան չգնաց: Դրա փոխարեն որդու ձեռքից բռնեց ու միասին քաղաքից դուրս գնացին: Ամբողջ ճանապարհին իրենց դեմ դուրս եկած ու «Մուտք չկա» գրությամբ ցուցատախտակին ուշադրություն չդարձնելով, քամուն ընդառաջ քայլելով՝ մագլցեցին բլուրը: Զրամբարին այդքան մոտենալն արգելված էր, բայց ուշադրություն չդարձրին: Ոչ ոք ո՛չ տեսավ, ո՛չ էլ կանգնեցրին: Նստեցին պատնեշի վրա. ջուրը կախարդական փայլով ձգվում էր ոտքերի տակ:

– Տե՛ս, ես քեզ չեմ լքում,– ասաց Այշեն:– Ուրա՞խ ես:

Երեխան ասաց, որ ուրախ է, բայց ատամները զարկում էր իրար, շրթունքները կապտել էին: Մինչդեռ

թվայնացրել է 1915.info կայքը

եղանակն այնքան էլ ցուրտ չէր: Ձեռքին մի թաշկինակ կար, որն անընդհատ ծալծլում էր: Այնպես էր քարկապ գցել, որ ուզեր էլ՝ չէր կարողանա բացել:

– Տուն վերադառնանք,– աղաչեց նա:– Ուզում եմ գնալ:

– Ի՞նչ կա տանը,– հակադարձեց մայրը: Ձայնը կարծես օտար լիներ: Հետո երևի ամաչեց իրենից ու մատները շուրթերին մոտեցնելով՝ ասաց.– Լո՛ւռ մնա:

Ամեն ինչ միանգամից լռեց: Դաշտերում լուսատտիկները, ճանապարհով անցնող բեռնատարները ու հատկապես անդադար բզզացող ու աղմկող Ստամբուլը... Աշխարհը կանգնել էր: Բոլորն ու ամեն ինչ համակերպվել էին նրա ցանկությանը:

– Մայրի՛կ...

– Հը՞մ:

– Ո՞ւր ենք գնում:

– Խոսել ենք, չէ՞, արդեն, սիրելի՛ս;

– Մոռացել եմ:

– Մի հիանալի վայր ենք գնում: Միասին:

– Այնտեղ շաքարապատ խնձոր կա՞:

– Հա, հա: Շաքարապատ խնձոր, շոկոլադ, սերուցքով պաղպաղակ...

– Բայց ատամներս կփչանան:

– Մի՛ անհանգստացիր: Ինչքան ուզես, կարող ես ուտել:

Ուզում էր ուրախության նշաններ ցույց տալ, բայց չկարողացավ: Մոր պահվածքը իրեն դուր չեկավ: Մայրերը պետք է երեխաներին զգուշացնեն, որ շատ քաղցրավենիք չուտեն: Դա էր ճիշտը: Կարծես թե վերջերս ոչ ոք իր պարտականությունը չէր կատարում:

Որդու անհանգստությունը զգալով՝ Այշեն ժպտաց.

– Այնտեղ, ուր գնում ենք, ոչ ոք չի հիվանդանում: Ատամներն ամբողջական կմնան, գլուխս էլ չի ցավի:

թվայնացրել է 1915.info կայքը

Ուրեմն ինչո՞ւ ես արտասվում՝ ուզում էր հարցնել նա, բայց չկարողացավ: Մոր շնչի՝ մշտական քաղցր հոտի տակ թթված հոտ էր թաքնված: Կնոջ աջ այտի տակ՝ աչքի տակի կապտուկի վրայով անցկացրեց մատները: Տնից դուրս գալուց հետո շպարը մաքրվել էր, ու տգեղ կապտուկը ի հայտ էր եկել:

Ադեմը այնպիսի վախ ապրեց, որը նախկինում չէր զգացել: Մոր շուրթերն անընդհատ շարժվում էին: Աղոթում էր՝ հասկացել էր Ադեմը: Մոտեցան անկյունին: Կինը մարմինն առաջ նետեց ու Ադեմին էլ էր իր հետ տանում, երբ երեխան մի կողմ ընկավ: Ցուղոտ իրի պես երեխայի ձեռքը դուրս պրծավ մոր ձեռքից: Այդ հանկարծակի շարժումը ամեն ինչ իրար խառնեց: Այշեն հավասարակշռությունը կորցրեց: Ընկավ, բայց ջուրն ընկնելու փոխարեն, բլրից ցած գլորվեց:

– Մայրի՛կ, լա՞վ ես,– ձայն տվեց Ադեմը վերևից:

Փշերն ու քարերը քերծել էին մոր դեմքը՝ վերևի շրթունքը վերքոտել էր: Տուն վերադարձան, ոչ ոքի ոչինչ չպատմեցին: Չորս տարի անց, տան ծեծին, խմիչքին այլևս չդիմանալով, Այշեն լքեց նրանց: Մի առավոտ վեր կացան, տեսան՝ գնացել է: Վերարկուն ու պայուսակը և անկողնու տակի հին ճամպրուկը չկային:

Ադեմը չէր ուզում հավատալ, որ մայրն առանց իրեն է գնացել: Համոզվելու համար օրը մի քանի անգամ բացում էր դարակներն ու նայում մոր օժիտից մնացած արծաթե հայելուն ու սանրին: Եթե դրանք այնտեղ էին, ուրեմն Այշեն վերադառնալու էր: Ոչ ոքի, հատկապես հորը (Հարբած) երբեք չպատմեց, որ մայրն ուզում էր ինքնասպան լինել ու իրեն էլ հետը տանել: Ո՛չ էլ կայարանում տեսած մարդու մասին պատմեց: Այն մարդու մասին, ում հետ մայրը փախել էր:

թվայնացրել է 1915.info կայքը

* * *

Նախորդ գիշերը նորից անապատի եզրին՝ մութ բարաքում, թղթախաղ էր խաղացել Ադեմը ու նորից տարվել էր: Քանի անգամ էլ հերթափոխով աշխատեր, չէր կարողանա այդ մեծ պարտքը վերադարձնել: Հիմա աչքերը սրբելիս զարմացած նայեց ձեռքը թրջող արցունքներին: Քիթը քաշեց: Չէր նկատել, որ արտասվում է: Իրականում տխրություն չէր զգում: Ոչ էլ պարտություն: Խոր անտարբերություն էր զգում, հանձնվել էր ուզում այն ամենի առաջ, ինչը չէր կարող փոխել, ներառյալ իր թուլությունները: Ժամացույցը խնամքով հանեց ու մի կողմ դրեց, որ չկոտրվի: Եթե իսկական «Ռոլեքս» լիներ, տղաներից մեկին, հավանաբար Յունուսին կուղարկեր: Բայց երեխաներին կեղծ նվեր չէր ուզում անել:

Վերջին ցանկությունն այն էր, որ ժամացույցը քաղցրալեզու գիշերային պահակը գտներ:

թվայնացրել է 1915.info կայքը

Ռոքսանա

5 մարտի, 1982
Աբու Դաբի

Մազերի ծայրերին մարգարտի հատիկներ հիշեցնող ջրի կաթիլներ, աչքերի գույնին համահունչ կապույտ խալաթի մեջ փաթաթված՝ բաղնիքից դուրս եկավ Ռոքսանան: Իր սիրած լոսյոնն էր քսել: Մաշկը սաթի պես փայլում էր, թուրինջի հոտ էր գալիս: Վարագույրից ներս ընկնող թույլ լույսի տակ գեղեցիկ էր ու գրավիչ և գիտեր դրա մասին: Գլուխը թեթև կողք թեքած՝ օրորվելով գնաց ննջարան՝ չարաճճի ժպտալով: Մի ձեռքով գոտին էր թուլացնում, մյուսով դուռն էր բացում: Բայց տղամարդը նրան սպասելիս քնել էր: Ե՛վ հիասթափվեց, և՛ հանգիստ շունչ քաշեց: Մի պահ կանգ առավ, նայեց սիրելիին՝ բերանը մի քիչ բաց, ցածր տոնով, կանոնավոր խռմփացնում էր: Փորիկն էր երևում, որ ցերեկները թանկ հագուստի տակ էր ծածկում, առնանդամը հոգնած էր:

Նախանձեց, որ կարողանում էր այդքան խոր քնել: Վերջերս դժվարանում էր քնել: Հաբերն էլ արդեն չէին օգնում: Ինչքան շատ էր ընդունում, այնքան ավելի քիչ էին ազդում: Որոշելով, որ այդ պահին քնելու փորձերն անիմաստ են՝ դուռը փակեց: Անկողնում պտտվելու փոխարեն գերադասում էր գիշերն արթուն անցկացնել: Առավոտյան աչքերի տակ տոպրակներ էին

թվայնացրել է 1915.info կայքը

լինելու, հոգնածությունը արտացոլվելու էր դեմքին, բայց իր համար մեկ էր: Միայնակ էր ու ազատ այդ պահին: Ժամանակավոր հյուրանոցում ժամանակավոր սիրուհի չէր, իր ճակատագրի տերն էր, անգամ եթե մի քանի ժամով:

Սեղանի վրայի սկուտեղի մեջ տարբեր տեսակի թեյեր ու սուրճեր ու մի տուփ գուրմե շոկոլադ կար: Բերանը մի շոկոլադ գցեց ու իր համար ֆիլտրած սուրճ պատրաստեց: Մուգ ու թունդ: Ադեմի շնորհիվ էր ծանոթացել թուրքական սուրճին ու շատ էր հավանել: Ադեմի սուրճը, անգամ նրան էր կարոտել: Տարօրինակ էր, որ դեռ մտածում էր նրա մասին: Սովորաբար երբ տղամարդիկ դուրս էին գալիս իր կյանքից, մտքից էլ էին դուրս գալիս: Իր թողած հրաժեշտի նամակը կարդալուց հետո տեսնես ի՞նչ էր արել: Իրեն վատ էր զգում. հուշերն ավելի էին կրծում խիղճը:

Բայց Ադեմի նման մարդը Ռոքսանային ոչինչ չէր կարող տալ: Կարող էր դաժան, անգամ սառնասիրտ թվալ, բայց ուրիշ կերպ ինչպե՞ս կարող էր գոյատևել: Աշխարհն էր դաժան, ոչ թե ինքը:

Բաժակը ձեռքին, լեզվին՝ հալվող երկրորդ շոկոլադը՝ քայլում էր սենյակում, նայում էր շուրջը՝ շքեղ կահույք, մարմարե վառարան, գեղեցիկ ծաղկամանների մեջ տարաշխարհիկ ծաղիկներ: Կարծես սիրուն փայլաթղթի վրա տպված ամսագրի էջերին ապրեր: Այդ մտքից իրեն ավելի լավ զգաց: Դուրս եկավ պատշգամբ, քաղաքի հեռուներում շողացող քամին շոյեց դեմքը: Քսանհինգերորդ հարկում էին: Գետնից այդքան բարձր հարկերում որոշ մարդկանց գլուխը կարող էր պտտվել, բայց Ռոքսանան նրանցից չէր: Այնպիսի բարձունքների էր հասել, որոնց մասին հայրն անգամ չէր կարող երազել: Տատկոն նրան անուշադրության էր մատնել: Ամբողջ աշխարհն

թվայնացրել է 1915.info կայքը

էր նրան անուշադրության մատնել: Բայց որտեղից ուր էր հասել: Բուլղարիայի մի փոքր գյուղից մինչև Լոնդոնի փայլուն գիշերային ակումբներ, այնտեղից էլ Աբու Դաբիի վերնախավ: Արդեն ոստրե էր ուտում, շամպայն էր խմում, հայտնի դիզայներների հագուստն էր կրում: Արդեն սովորել էր, որ մատուցողները հարգանքով իրեն ասում են՝ տիկին, խոնարհվում իր առաջ: Նրանք էլ անշուշտ գիտեին, որ այդ մարդու կինը չէ, սիրուհին է, բայց ուշադրություն չէին դարձնում: Իր կյանքն այնքան յուրահատուկ էր, բայց այնքան անսովոր իր համար, որ ամեն անգամ քնելիս վախենում էր՝ վաղը կարող է լրիվ ուրիշ իրականության մեջ արթնանալ՝ ուրիշի երազից արթնանալու պես: Գուցե այդ պատճառով չէր կարողանում քնել:

Աբու Դաբի գալուց ի վեր գրեթե չորս տարի էր անցել: Այդ կողմերում գործարարներին հանդիպումների ժամանակ ուղեկցող աղջիկները, երիտասարդ մրցակցուհիները շատ էին: Ինքնաթիռից իջնելու պահից ի վեր Ռոքսանան շատ էր տպավորվել: Քաղաքից: Աստիճանաբար աճող շքեղությունը չէր գրավել նրա սիրտը. նրան հմայել էր ոչնչից այդպիսի շքեղ կյանք ստեղծելու հնարավորությունը: Այդ քաղաքի գաղափարն էր սիրում. չնայած հռչակավոր անցյալ չուներ, որի վրա հենվեր, շլացնող ապագայի հասնելու համառություն ուներ:

Հիմա էլ էր մերկապարուհի, բայց միայն մի տղամարդու համար: Ավստրալացին, որը հաճախակի էր գնում Լոնդոն, այնտեղի բնակարանում՝ ննջարանի մեջտեղում, մերկապարի ձող ուներ: Միայն մեկ դիտողի համար պարելն ավելի լավ էր: Ո՛չ կրկնակի հերթափոխ կար, ո՛չ ուշացած աշխատավարձ, ո՛չ էլ անշնորհք տղամարդիկ: Բայց այդ նոր կարգավիճակը որքան վստահելի, նույնքան էլ ռիսկային էր:

թվայնացրել է 1915.info կայքը

Եկամուտը ստաբիլ էր այնքան ժամանակ, որքան կարող էր նրան գոհացնել: Բայց հենց չկարողանար, նրան դուրս կաներ: Այդ դեպքում մեծ կորուստ կունենար: Դրա համար Ռոքսանան հնարավոր ամեն ինչ անում էր, որ սիրելին, իրենից բացի, ոչ ոքի չտեսնի:

Դեռ երեկ գիշերը ռեստորանում ծովամթերք էին կերել, գործարարը նրան մի քանի ընկերոջ հետ էր ծանոթացրել: Սեղանի շուրջը դեղագործական գրասենյակի տնօրեն մի գերմանացի էլ կար՝ մոտ վաթսուն տարեկան էր, բարձրահասակ, սպորտային արտաքին ուներ և ակնհայտորեն հավանել էր Ռոքսանային: Խոսեցին ռուսական գրականության մասին ու անմիջապես հասկացան իրար: Դեռ հիմնական ուտեստը չէր վերջացել, բայց Ռոքսանան շլացնող ժպիտով, հիանալի էներգիայով ու խելացի մեկնաբանություններով բոլորին գրավել էր: Դեսերտի ժամանակ գերմանացին, մոտենալով ավստրալացուն, Ռոքսանային լսելի ձայնով ասել էր.

– Այսպիսի մարմնում այսպիսի խելք: Նման թանկարժեք քար չես գնի: Ինչ հաջողակն ես:

Սիրելին թեթև ժպիտով գլուխն օրորել էր, բայց Ռոքսանան տեսավ, որ նրան դուր չէր եկել, անգամ խանդել էր:

Շպարը թարմացնելու համար սովորականից ավելի շատ ժամանակ անցկացրեց զուգարանում: Հայելու մեջ ինքն իրեն աչքով արեց: Մինչ այդ օրը ստացած ամենահաճելի հաճոյախոսություններ էր, և այն ամբողջ երեկո կրծքին մեդալի նման կրեց:

Այժմ այդ պահը հիշելով՝ հպարտացավ: Նայեց պատշգամբին: Այնտեղ երկու շեզլոնգի արանքում մի հեռադիտակ կար: Սիրելին մինչև իրենց ժամանումն էր պատվիրել: Հիանալի անապատային երկինքը

թվայնացրել է 1915.info կայքը

դիտելու համար: Բայց Ռոքսանան, ինչպես և հյուրանոցի տնօրենը, գիտեր՝ նա իրականում ոչ թե Հարդագողի Ճամփան, այլ ավելի աշխարհիկ տեսարաններ էր փնտրում: Վատ սովորություն էր ու ակնհայտորեն նոր բան չէր: Ռոքսանային հետաքրքիր էր՝ կինը գիտի դրա մասին: Արդյոք գիտե՞ր՝ ամուսինը Շանհայում, Փարիզում, Դելիում, Մոսկվայում երեք բանից իրեն չէր զրկում՝ հեռադիտակից, ծխախոտից ու սեքսից:

Հեռադիտակով տանը, իր անձնական տարածքում հագուստը փոխող կնոջը նայելու չափ նրան գրգռող բան չկար: Ամբողջ օրը գործնական ժողովներ ու պաշտոնական հանդիպումներ անցկացնելուց հետո հյուրանոցի սենյակ էր գալիս, որը միշտ վերջին հարկում էր, մի բաժակ վիսկի էր լցնում, պատշգամբում կամ պատուհանի առաջ նստում, քաղաքն էր աչք ածում, գոնե մի ժամ: Հազվադեպ էր շոկային տեսարանի հանդիպում, բայց միշտ տեսնելու արժանի բան էր գտնում՝ կիսափակ վարագույրների հետևում սեր անող զույգ, լողանալիս լոգարանի պատուհանը բաց թողած կին. ուրիշի անձնական տարածք ներխուժած աչք էր նա:

Անկողնում արագ էր, խիստ ու պահանջկոտ: Սեր անելիս սիրում էր ընդմիջել, սիգար ծխել. եթե կինը լիներ, երբեք թույլ չէր տա: Տարօրինակ մարդ էր, բայց Ռոքսանան գիտեր ինչպես սիրալիր լինել նրա հետ, ինչպես համահունչ լինել նրա տրամադրությանը:

– Տեսնենք անկողնու ընկերս ինչպե՞ս է,– ասում էր նա՝ աշխատանքից վերադառնալուն պես նրա ազդրերը շոյելով:

Ատում էր, երբ իրեն այդպես էր դիմում, բայց ամեն անգամ ծիծաղում էր Ռոքսանան՝ կարծես ամենասիրելի կատակն էր: Փոքր տղայի նման հումորներ էր սիրում այդ մարդը՝ անգամ եթե ակնհայտորեն անտրամադիր էր:

թվայնացրել է 1915.info կայքը

Շատ էր սիրում Ռոքսանայի գլխին հումորներ սարքել, երբեմն էլ չափն անցնում էր:

Օրինակ՝ մի անգամ Ռոքսանային ձեռնաշղթաներով կապել էր բազմոցին, հետո ասել՝ պետքարան է գնալու ու պաշտոնական հանդիպման գնացել: Երեքուկես ժամ անց եկել էր. Ռոքսանան այդ ընթացքում մորեմերկ, անհանգիստ նրան էր սպասել: Մտածել էր ձայնը գցել, օգնության կանչել, բայց չէր համարձակվել: Ուզել էր գնալ զուգարան, հետո ստիպված տակն էր արել:

Սուրճը վերջացրած Ռոքսանան թեքվեց ու հեռադիտակով նայեց Աբու Դաբիի սրտին: Միմյանց հետևից բարձրացող շենքերը, վառվող-հանգող նեոնե լույսերը, գովազդային վահանակները տեսավ, բայց քաղաքը դեռ քնած էր: Մի շենքում սեղանի մոտ աշխատող ճաղատ մարդու տեսավ, մոտակա մի հյուրանոցում հարկի պատասխանատուն, ձեռքին լիքը սրբիչներ, աստիճաններով բարձրանում էր: Հեռադիտակը աջ ու ձախ տանելով՝ որոշ ժամանակ ուսումնասիրեց:

Երբ սենյակ վերադարձավ, ուշադրությունը գրավեց սիրելիի՝ բազմոցին նետած հագուստը: Հանկարծակի մղումով վերցրեց նրա տաբատը, դրամապանակը վերցրեց ու բացեց: Լիքը քարտեր կային՝ «Ամերիքան Էքսպրես», «Մաստեր Քարտ», ակումբների անդամագրության տոմսեր, օդանավակայանի սպասասրահների քարտեր, դժվար արտասանվող անուններով այցեքարտեր ու երեխաների նկարը՝ թևերը միմյանց ուսերին գցած երեք անուշիկ աղջիկ: Նայեց նրանց հագուստներին՝ կապույտ, բեժ ժապավեններով ծղոտե գլխարկներ, ժանեկավոր օձիքով, գործած ժակետներ, մինչև ծնկները հասնող ձյունաճերմակ գուլպաներ ու լաքապատ կոշիկներ էին հագել: Փորձեց գուշակել՝ մայրն ինչպիսին է: Բայց գուցե դայակն էր նրանց այդպես հագցրել, այդ դեպքում

թվայնացրել է 1915.info կայքը

ենթադրությունները սխալ կլինեին: Բայց գուցե մայրն էր գնել այդ սիրունիկ ու միանման հագուստները: Եթե մի օր երեխա ունենար Ռոքսանան, նրանց երբեք այդպես՝ տիկինիկի նման չէր հագցնի:

Դրամապանակի մյուս մասն էլ բացեց: Այնտեղ իր համար անսպասելի նկար տեսավ: Տեսնելուն պես ճանաչեց նրա կնոջը: Ավելի գեղեցիկ էր, քան նկարագրում էր: Նախանձեց. երբեք այդպիսի կյանք չէր ունենա: Սակայն Ռոքսանային հենց ինքը՝ կինն էր զարմացրել:

Նրան միշտ տիպիկ վերնախավի տանտիկին էր պատկերացրել՝ երես առած, կամակոր ու եսասեր: Ամեն օր պեդիկյուր անող, կատալոգների մոդելների պես կոկետ, պճնվող մեկը: Բայց նկարի կինը պարզ ու միամիտ էր երևում՝ կարծես մեկը, որը նկրտումներ չունի: Մեղմ ժպիտ ուներ, որից կարելի էր ենթադրել՝ ամաչկոտ է: Խենթ խնջույքներ կազմակերպող, վերնախավի ամսագրերում հայտնվելու մեծ ցանկություն ունեցողի նման չէր: Ընդհակառակը՝ կարծես թե մենակություն էր սիրում՝ գիրք կարդալ, քայլել, այգում բույսեր աճեցնել, որոնց կարևորությունը ոչ ոք չգիտեր, ու դրանով երջանկանալ: Ռոքսանայի մոր նման էր:

Անհնար էր նման մեկին մրցակից համարել: Ռոքսանան տխրեց: Նրա նման մեկին խաբելը, մեջքից հարվածելը ի՞նչ հաճույք կարող էր պարգևել: Նմանատիպ կանայք միայն մեղքի զգացում էին առաջացնում մարդու մեջ:

– Նայեցի՞ր, դե հիմա տե՛ղը դիր նկարը,– լսվեց ձայնը հետևից:

Ռոքսանան վեր թռավ. քիչ էր մնում դրամապանակը գցեր ձեռքից: Գործարարը արթնացել էր ու անթաքույց զայրույթով նրան էր նայում:

– Կ... կներես,– կմկմաց Ռոքսանան դողալով:

թվայնացրել է 1915.info կայքը

Նրան ոտքից գլուխ զննեց՝ կրծքերին, երկար ոտքերին, գեղեցկությանը, կեղծավորությանը նայեց:

– Ինչո՞ւ արեցիր,– հարցրեց նա:

– Կներես... Չգիտեմ ինչպես...– սկսեց բացատրել Ռոքսանան, բայց տղամարդը նրան ընդհատեց:

– Մի՛ երկարացրու: Չեմ հարցրել՝ տխո՞ւր ես, թե՞ ոչ: Ասում եմ՝ ինչու ես արել:

Հայացքը գորգին հառելով՝ ցածր ձայնով ասաց.

– Ինձ քո կյանքն էր հետաքրքիր:

– Ինչո՞ւ:

Ռոքսանայի զղջումը փոխարինվեց զայրույթով:

– Իսկ դու ինչո՞ւ հեռադիտակ ունես պատշգամբում,– ասաց նա՝ իմացած ամբողջ անգլերենը գործի դնելով:– Ինչո՞ւ ես ուրիշներին նայում: Նույն բանն է: Ի՛նչ դու, ի՛նչ ես... Ի՞նչ տարբերություն: Հերի՛ք է ինձ դաս տաս: Կարծում ես՝ փող ունես, ուրեմն ինձնից ավելի լավն ես, բայց սխալվում ես:

Ապտակեց Ռոքսանային: Ռոքսանան էլ նրան ապտակեց: Ռոքսանային հրեց: Ռոքսանան էլ նրան: Հետո անզուսպ ծիծաղեց ու համբուրեց նրան: Համբուրելիս ներքևի շրթունքը կծեց: Երեկ գիշեր խմած վիսկիի ու սիգարի համն էր գալիս:

– Անհանգստանալու բան չկա,– ասաց նա:– Կին-երեխաներ-տուն: Կլիշե, մի բան էլ ավելի: Կարևորը տղամարդն է, որին դիպչում ես: Չե՞ս վախենում նրանից:

– Ինչո՞ւ պիտի վախենամ,– լարված ասաց Ռոքսանան. նյարդայնացել էր, որ իր մասին երրորդ դեմքով էր խոսում:

– Որովհետև իմ միջի սատանային ես հրահրում,– ասաց նա:

Ուրիշ օր այդ խոսքը դուր կգար Ռոքսանային, բայց այդ օրը երկիմաստ ու սպառնալից էր հնչում: Մարդը,

թվայնացրել է 1915.info կայքը

մատը Ռոքսանայի պտուկների վրայով անցկացնելով, գոտկատեղից ներքև իջավ: Ռոքսանային պառկեցրեց գորգին, խալաթը հանեց ու դեն նետեց: Կրակոտ, զայրացած էին երկուսն էլ: Ծոծրակին միմյանց շնչառությունը զգալով՝ առանց ուշադրություն դարձնելու, որ իրենց կլսեն, աղմուկով, շնչակտուր սեր արեցին: Դրանից հետո մարդը մի կողմ շրջվեց: Փոխվել էր՝ քիչ առաջվա վայրենին գնացել, փոխարենը քաղաքավարի մեկն էր եկել:

– Առավոտյան գրասենյակում ժողով ունեմ, հետո լանչ,– ասաց նա:– Երբ վերադառնամ, քեզ այստեղ չեմ ուզում տեսնել:

– Ի՞նչ:

– Նպատակ չունեմ թիկունքումս գործեր անող կնոջ ծախսերը հոգալ: Սխալվեցիր, բեյբի՛: Այսօր գնում ես:

– Բայց...

Ռոքսանան լռեց: Կամաց-կամաց հասկանում էր՝ հասել է այս ճանապարհորդության ավարտին:

– Կեղտոտի՛ մեկը,– բղավեց նա ու սեղանի շոկոլադի տուփը վերցնելով՝ պատին նետեց: Տուփը հարվածեց պատին ու հետ ընկավ, շոկոլադները թափվեցին հատակին:

– Ուշքի՛ արի,– ասաց մարդը:

Ռոքսանան սկսեց արտասվել:

– Գնալու տեղ չունեմ,– ասաց նա:– Այս քաղաքում ոչ ոքի չեմ ճանաչում: Գոնե Լոնդոն վերադարձի փո՛ղը տուր:

Կիսատ մնացած քունը ավարտին հասցնելու համար դեպի անկողին ուղղված մարդը պատասխանեց.

– Հաստատ մի ձև կգտնես, քա՛ղցրս: Դե, եթե այդ մարմնում այդ խելքն ունես...

թվայնացրել է 1915.info կայքը

* * *

Լուսաբացից առաջ արտասվելով լողացավ: Փորձեց իրեն հավաքել: Երեկ երեկոյան իրեն գովաբանող գերմանացի գործարարի ազգանունը տեսնես ի՞նչ էր: Ասել էր՝ որտե՞ղ է մնում: Եթե զանգեր նրա ընկերություն, իրեն կօգնեի՞ն: Ի՞նչ էր անելու: Խուճապի էր մատնվել, խղճում էր իրեն: Տասը րոպե անց բաղնիքից դուրս եկած կինն ընդամենը երկու ժամ առաջ այնտեղ կանգնած կնոջ հետ ոչ մի կապ չուներ: Կապույտ խալաթը, մարմնի լոսյոնն էլ նույնն էին, բայց ամբողջ աշխարհը տակնուվրա էր եղել:

Երբ Բուլղարիայում դեռ Ելենա անունով աղջիկ էր, ամենասիրած խաղերից մեկը սև թավշի վրա ձյան հատիկներ բռնելն էր: Ամեն անգամ վազելով գնում էր տուն՝ իր հարստությունը մորը ցույց տալու, բայց երբ կտորը բացում էր, հատիկները հալված էին լինում՝ միայն թաց հետքեր թողնելով:

Երբ մեծացավ ու մի քանի հնարավորություն ձեռքից բաց թողեց, որոշել էր՝ բոլոր գեղեցիկ բաները անցողիկ են: Երբ մարդիկ հաճելի կին են տեսնում, չեն մտածում, որ ժամանակի ընթացքում մազերը կսպիտակեն, կամ մաշկը կկախվի, չնայած որ գիտեն այդ մասին: Դրա փոխարեն այդ պահի գրավչությունն են վերցնում ու իրենց մտքում հավերժացնում: Ոչ ոք չէր ուզում տեսնել, որ գեղեցկությունը ձյան հատիկ է՝ դատապարտված ժամանակի սև թավշի մեջ հալվելուն:

Սենյակում ձանձրանալուց հետո նորից պատշգամբ դուրս եկավ: Երկնքում շարք-շարք նարնջագույն, կարմիր ներկեր գծելով՝ բացվում էր օրը: Շեզլոնգին նստեց ու նայեց հեռադիտակից: Ճաղատ մարդն արդեն սեղանի մոտ չէր, սրբիչներ տանող հարկի պատասխանատուն էլ չկար: Առանց մտածելու հեռադիտակը շարժեց: Սկսեց մոտակայքի շինհրապարակին նայել: Տգեղ էր՝ երկաթից,

թվայնացրել է 1915.info կայքը

պողպատից ու ցեմենտից կազմված մի հսկայական կառույց էր:

Շինհրապարակները չէր սիրում Ռոքսանան: Տարօրինակ էր, բայց նրան ծերություն ու մահ էին հիշեցնում: Դրանց չէր նայում որպես ապագա շքեղ շենքերի հիմքեր, ընդհակառակը՝ որպես չոր ու տգեղ ոսկորներից կազմված կմախք էր տեսնում: Դրա համար հեռադիտակը արագ մի կողմ քաշեց: Եթե այդ պահին ստվարաթղթի նման սառած կանգնած մի ստվեր աչքով չընկներ, հեռադիտակը կթողներ: Երբ հեռադիտակը ուղղեց, տեսավ, որ ամենավերևի հարկում մի մարդ է նստած՝ գլուխը ափերի արանքում, ոտքերը թափահարում է դատարկության մեջ:

Ռոքսանան չէր տեսնում նրա դեմքը, բայց ուղեղի մի հեռավոր անկյունում կարմիր լույս էր վառվում-անջատվում: Զարմանքից մի պահ հեռադիտակը փախավ ձեռքից, ֆոկուսը բաց թողեց: Երբ նորից նայեց, մարդը, հանգիստ նստած, հորիզոնին էր նայում:

Բաճկոնը հանեց, կողք դրեց, աջ ձեռքով շփեց դաստակը: Ո՛չ, չէր շփում: Ժամացույցն էր հանում: Հետո ոտքի կանգնեց, ասես ուզելով գրկել այդ գեղեցիկ լուսաբացը՝ թևերը լայն բացեց: Ռոքսանան միայն ցատկից վայրկյաններ առաջ հասկացավ՝ ով էր:

Առավոտյան վաղ ինձ արթնացնում էր Զիշանը: Մեդիտացիա էինք անում:

– Չի՞ լինի հեպո անենք,– մռթմռթում եմ ես:

– Ծագող արևի հեպ արած աղոթքը, մեդիտացիան ընդունելի է,– ասում է նա:

թվայնացրել է 1915.info կայքը

Ի տարբերություն այլ օրերի՝ չեմ բողոքում: Ծալապատիկ նստում ենք դեմ դիմաց: Ուրախ ժպտում է: Հեպաքրքիր է՝ այդքան էներգիա որտեղից է գտնում:

– Դատարկի՛ր միտքդ,– ասում է նա՝ ինչպես միշտ:– Օդի աղտոտվածությունը լավ չէ քաղաքների համար: Մտքի աղտոտվածությունն էլ՝ մարդկանց համար:

Տասը րոպե շարունակ լուռ նստում ենք: Այդ վարժությունն ինձ անցյալ ամիս էր սովորեցրել: Պետք է ոչ մի բանի մասին չմտածեմ, բայց չի ստացվում: Միտքս անմիջապես սկսում է եռալ: Շատ չանցած՝ կախարդի կաթսայի պես եռում է ներսս: Օրինակ՝ ինձ հեպաքրքիր է՝ ով է իմ խորհրդավոր այցելուն: Հարավոր թեկնածուներին եմ մտածում՝ Թարըք հորեղբայր, Հաթիփ, հին ընկերս՝ Արշադը... Ոչ մեկին չեմ ուզում տեսնել: Բոլորին պատասխանատու եմ համարում այստեղ լինելուս համար: Նրանք ազատ են, կյանքն են վայելում, իսկ ես այստեղ ողջ-ողջ այրվում եմ:

Այդպես է անցնում մեդիտացիան: Միշտ նույն բաներն են լինում: Բայց Զիշանը նեղացած չի երևում:

– Իսքենդե՛ր, մեղադրի՛ր ուրիշներին, երբ զայրանում ես, էներգիան նրանց է գնում: Քեզ բան չի մնում:

Զիշանի աշխարհում մարդկանց, իրադարձություններն ու վայրերը միմյանց կապող անտեսանելի ցանցային համակարգ կար: Նրանց միջոցով միմյանց անընդհատ ինչ-որ բաներ ենք ուղարկում: Կարծես խելառ գիտաֆանտաստիկ ֆիլմում ապրի այս մարդը:

– Մարդու սիրտը վառարանի նման է: Տաքություն է արտադրում, էներգիան տարածում ենք: Բայց երբ ուրիշներին ենք մեղադրում, նրանց ենք սևացնում, բամբասում, վատն ենք խոսում, էներգիան կորչում է: Մեր սիրտը սառչում է:

թվայնացրել է 1915.info կայքը

Զիշանն ասում է. Ամենավսրահելի ճանապարհը միշտ քո ներսը նայելն է: Հերիք է ուրիշներով զբաղվես: Զայրույթը, խարազանումը ծանր պայուսակ է: Ինչո՞ւ կրես: Նետի՛ր: Կյանքը փաք օդապարիկի նման է: Վերև՞ ես ուզում գնալ, թե՞ ներքև: Թո՛ղ զայրույթը, վրեժը, մրցակցությունը: Ազատվի՛ր փոպրակներից:

Զիշանն ասում է. Մոլորակը կլոր է, շրջանի մեջ երկու աղեղ կա: Մեկը՝ բարձրացող, մյուսը՝ բացվող: Մարդ անընդհատ շարժման մեջ է: Ոմանք իջնում են, ոմանք՝ բաձրանում: Եթե ուզում ես բարձրանալ, ամենաշատը քեզ քննադատիր: Իր սխալները չտեսնողը երբեք չի լավանա:

Ինչ Զիշանին իմ խուց էին բերել, մի քանի անգամ ուզել եմ բռունցքով հարվածել դեմքին կամ ասել, որ ձայնը կտրի: Տարօրինակ է, բայց չեմ կարողանում: Այդ մարդու հանդեպ ծայրաստիճան հանդուրժող եմ: Լսում եմ նրա հավերժական զառանցանքները, երբեմն զվարճանում, երբեմն գրեթե համոզվում եմ:

– Երբ այցելուդ գա, Զիշանին խո՛սք տուր՝ այծերդ չեն գալու:

– Աաա-յծեե-րը,– ծիծաղելով ասում եմ ես:

– Այո՛, այո՛: Ոչ ոքի չես ափելու, քեզ չես խղճալու: Դու հիմա վերանորոգման մեջ գտնվող ապակեպատ պալատ ես, մի՛ մոռացիր: Շենքեր կառուցելիս ցուցատախտակներ են դնում: Շրջապատին տված մեր ժամանակավոր անհանգստության համար ներողություն ենք խնդրում: Դու էլ քո սիրտն ես կառուցում:

Ինձ շփոթեցնում է այս մարդը: Մի շնչում ինձ թե՛ օդապարիկ սարքեց, թե՛ վառարան, բրավո՛: Բայց ես նորից հակաճառում եմ.

– Ես պալատ-մալատ չեմ: Ես քեզնից առաջ մեղք եմ գործել, սարսափելի մեղք:

թվայնացրել է 1915.info կայքը

Զիշանն աչքերը փակում է: Հոս ասթմայի նոպաները հիշեցնող երկար, խռխռոտ ձայն է հանում: Երբ նորից ինձ է նայում, տեսնում եմ, որ արտասվում է: Չեմ հավատում այս մարդուն: Ո՞վ կարտասվի ուրիշի ցավի վրա:

– Այս աշխարհում այնքան մարդ է ընկնում,– ասաց նա:– Բայց շատ քչերն են կյանքի հատակը տեսնում: Իջնող աղեղից ներքև ի՞նչ կա, գիտե՞ս:

– Ո՛չ:

– Դժոխք,– ասում է նա:– Դու այնտեղ ես գնացել: Ա՛խ, սիրտդ այրվում է: Բայց այդպես էլ պետք է լինի: Որովհետև մի բան ես արել: Պետք է այրվես: Հետո սկսելու ես վեր բարձրանալ: Աղեղը բարձրանալու է: Նրանից վերև ի՞նչ կա, գիտե՞ս:

– Դրա՞խտ,– հարցնում եմ ես:

– Այո՛, երբ սիրում ու սիրվում ենք, մեկին ուրախացնում, մյուսի օրինանք ենք սպանում, մի քայլ էլ ենք մոտենում դրախտին: Ամեն օր մի փոքր քայլ: Չեմ կարող խոստանալ, որ կհաջողացնես: Բայց փորձելու ենք: Աշխատելու ենք:

Վերջապես այդ շաբաթ, չիմանալով՝ ում եմ հանդիպելու, գնում եմ այցելությունների սրահ: Սպա Էնդրյուն էլ է այնտեղ: Ինձ չի նայում, բայց ենթադրում եմ՝ եթե դրամատիկ պահ լինի, չի ուզի բաց թողնել:

Հանկարծ տեսնում եմ նրան: Յունուսն է: Եղբայրս, որին տարիներով չեմ տեսել: Բանտ ընկնելու օրից ի վեր միայն երկու անգամ էր եկել: Առաջինը՝ դատից անմիջապես հետո: Ոչինչ չէինք խոսել: Աչքերը ձեռքերին հառած՝ նստել էր: Մի տարի անց նորից եկավ: Նորից լուռ էր: Դրանից հետո էլ չեկավ: Մեծ մարդ էր դարձել: Միջահասակ, նրբակազմ, բավական գեղեցկադեմ: Բայց ինչքան էլ փոխվեր, հայացքը միշտ նույնն էր: Մեղմ, քաղաքավարի, երկար թարթիչներով:

թվայնացրել է 1915.info կայքը

– Բարև՛, փոքրի՛կ:

– Բարև՛, եղբայր,– ասում է նա:

Միմյանց ենք նայում: Նախ ես եմ փախցնում հայացքս: Էսմայի հետ դեմ առ դեմ գնալն ավելի հեշտ էր ինձ համար: Քույրս ինձ ապում է: Պարզ ու հստակ: Երբեմն այսպես քենը թափելու էր գալիս: Բայց միևնույն է՝ նույնիսկ նրա առաջ այդքան մեղավոր չեմ զգում, որքան հիմա: Յունուսի աչքերի մեջ մի բան կա, որին չեմ դիմանում՝ հասկանալու ցանկություն: Դեռ բացատրություն է փնտրում: Դեռ հավատում էր՝ մարդիկ հիմնականում լավն են ուզում, ինքն էլ փորձում էր հաս-կա-նալ՝ ինչպես եմ ես այդպիսի սարսափելի բան արել:

– Երաժշտության գործե՞ն ինչպես են:

– Ընտիր,– ոգևորված ասում է նա:– Նոր ալբոմս է դուրս եկել: Քեզ մեկը բերեցի, ձեռքիցս առան: Ասացին՝ հետո քեզ կտան:

– Իհարկե, մի՛ անհանգստացիր,– ասում եմ ես: Գիտեմ՝ այդ ալբոմը երբեք ինձ չի հասնելու:

– Ի՞նչ է եղել, Յունո՛ւս, ինչո՞ւ ես եկել: Սխալ չհասկանաս, ուրախ եմ քեզ տեսնել: Միայն... մի քիչ զարմացած եմ:

Լռում է, հետո փխուր ասում.

– Շուտով դուրս ես գալու: Ուզում եմ իմանալ՝ ինչ պլաններ ունես:

Ինչ հիմար հարց է: Ինչ պարզունակ: Վերջացած կյանքով մարդը ի՞նչ պլան կարող է ունենալ: Բայց իմ առաջ փոքր եղբայրս է: Չեմ ուզում սիրտը կոտրել: Բացի այդ էլ՝ խոսք եմ տվել Զիշանին՝ բարձունքի եմ հասնելու, չնայած չգիտեմ՝ ինչ է նշանակում:

– Կարգին գործ գտնել: Հանգիստ կյանքով ապրել: Եթե Քեյթը համաձայնի, որդուս հետ բաց թողած տարիները լրացնել,– մի պահ լռում ու ավելացնում եմ:– Քո ու Էսմայի հետ ժամանակ անցկացնել: Իհարկե, եթե ուզեք:

թվայնացրել է 1915.info կայքը

Յունուսը մեջքն ուղղեց ու նայեց աչքերիս մեջ:

– Շատ մտածեցի՝ասել քեզ, թե ոչ: Ի վերջո որոշեցի ոչինչ չասել: Քանի տարի է՝ չեմ ասել: Էսման էլ: Այդպես էինք պայմանավորվել: Բայց արդեն դուրս ես գալիս բանտից, ես էլ չեմ ուզում այս գործը բախտի քմահաճույքին թողնել:

– Գաղտնաբառերով ես խոսում,– ժպտալով ասում եմ ես:

– Երբ մորս սպանեցիր, ես երեխա էի,– խոժոռված ասում է նա:– Քեզ չկանգնեցրի: Բայց եթե փորձես նրան նորից վնասել, այս անգամ այլ կլինի: Ես կդիմադրեմ:

– Ի՞նչ ես խոսում, փոքրի՛կ:

– Ասում եմ՝ մորս սիրում եմ ու էլ չեմ թողնի, որ նրան նորից վնասես:

– Յունո՛ւս, մեր մայրը...

– Ո՛չ, դեռ չեմ վերջացրել,– բարձրաձայն միջամտում է նա:

Սպա Էնդրյուն շողացող աչքերով մեզ է նայում: Յունուսը ձայնն իջեցնում է, շշնջոցն այնքան խեղդված է հնչում, որ վստահ չեմ՝ լսում եմ, թե ոչ, չնայած գիտեմ՝ լսում եմ:

– Իսքենդե՛ր, լսի՛ր ինձ,– ասում է նա:– Քեզնից մի բան ենք թաքցրել: Մայրս... մեր մայրը չի մահացել: Նա ողջ է:

Իսքենդեր Թոփրաք
Շրուսբերի բանտ, 1991

թվայնացրել է 1915.info կայքը

Յունուս

30 նոյեմբերի, 1978
Լոնդոն

Յունուսը գլուխը բարձրացրեց նախաճաշի սեղանից ու բազմոցին նստած երկու կնոջը նայելով՝ ժպտաց: Հրաշք էր կատարվել. Ջեմիլե մորաքույրն էր Լոնդոն եկել: Վերջին անգամ երեք տարի առաջ էր նրան տեսել երեխան: Նախկինում ամեն տարի այցելում էին նրանց: Հանդիպումներն այնքան կարճ ու զգացմունքային էին լինում, որ քիչ էր մնում՝ գլուխը պտտվի: Բայց վերջերս արձակուրդ գնալու ուժ չունեին, էլ չէին ճանապարհորդում: Փոխադարձ կարոտից ու տանջալ նամակներից հետո նորից նույն տանիքի տակ էին քույրերը՝ Փեմբե Քադերն ու Ջեմիլե Եթերը:

Յունուսը հենվեց թիկնակին, առաջին հայացքից միանման զույգերին էր նայում՝ «Գտի՛ր տարբերությունը» խաղի նման: Փեմբեն ձախլիկ էր, Ջեմիլեն՝ ոչ: Փեմբեի փոսիկը աջ այտին էր, Ջեմիլեինը՝ ձախ: Փեմբեի ծննդանշանը ճակատի աջ կողմում էր, Ջեմիլեինը՝ մյուս կողմում: Մազերը հակառակ կողմից էր բացում: Ջեմիլեն երկու սանտիմ բարձրահասակ էր՝ թևերը, ոտքերը մի քիչ ավելի երկար էին, մատները ավելի ոսկրոտ:

– Ուրիշ ի՞նչ կա, մայրի՛կ:

– Մի բան էլ կա: Ամենակարևորն ես մոռացել:

– Իսկապե՞ս, ի՞նչ,– անմիջապես հարցրեց Յունուսը:

թվայնացրել է 1915.info կայքը

– Մեր սրտերը հակառակ կողմում են զարկում,– պատասխանեց Ջեմիլեն:

– Ինչպե՞ս թե:

Ջույգերին հանդիպող հազվադեպ բան էր: Փեմբեի սիրտը ձախ կողմում էր, իսկ Ջեմիլեինը՝ աջ:

– Վա՛յ,– բղավեց Յունուսը:

Նրա ոգևորությունը տեսնելով՝ Փեմբեն ծիծաղեց: Երկար ժամանակ այդքան աշխույժ ու լավ չէր զգացել իրեն:

Ջեմիլեն ընտանիքի մյուս երկու անդամներին դեռ չէր տեսել: Մեկն արդեն Լոնդոնում չէր, Աբու Դաբիից քարտեր ուղարկող Ադեմն էր, իսկ մյուսը՝ երեկ գիշերը, երբ բոլորը քնած էին, տուն եկած ու առավոտյան վաղ գնացած Իսքենդերն էր: Փեմբեն չէր հասցրել նրան ասել, որ մորաքույրն է եկել: Այդ երեկո անակնկալ էր լինելու:

Մորաքրոջ ոտքերի մոտ նստած Յունուսը տանը մնալու համար սկսեց պատճառաբանություն փնտրել: Ասաց, որ իրեն լավ չի զգում, կոկորդը ցավում է, հոգնած է: Փեմբեն վստահ էր՝ չափազանցնում է, նույնիսկ եթե որոշ բաներ ճիշտ էին ասածի մեջ, բայց քրոջ պատվին թույլ տվեց, որ որդին դպրոց չգնա: Միայն մի օր:

Պատուհանի մոտ թեյ խմելիս քույրերը սկսեցին քրդերեն խոսել: Փեմբեն Ջեմիլեին պատմեց, որ խնդիրներ ունի: Իլիասի հետ կինոթատրոն գնալու համը դուրս էր եկել: Բոլորը, մեկին հազարն ավելացնելով, բամբասում, բանսարկում էին: Հաստատ այդ բամբասանքները Իսքենդերի ականջին էին հասել:

– Էլ դեմքիս էլ չի նայում,– շշնջաց Փեմբեն:

Իսքենդերը նրան արգելել էր աշխատանքի գնալ, կարծես դա բավական չէր թույլ չէր տալիս, որ տնից դուրս գա: Այդ ամենի մասին պատմելիս իրեն մի կերպ

թվայնացրել է 1915.info կայքը

էր զսպում՝ անհանգստությունը Յունուսին ցույց չտալու համար ու հազիվ ժպտում էր:

– Կհաշտվեք հաստատ, Աստծո կամոք: Ես խոսեմ զարմիկիս հետ, կտեսնես,– ասաց նա և ուրախ ավելացրեց:– Լսի՛ր՝ ինչ եմ ասում, ես անեմ այսօրվա առևտուրը, հը՞:

Գիտեր՝ ամենաթարմ բանջարեղենը, ամենահամով հացը, ամենաընտիր կանաչին կընտրեր: Անգլերեն չգիտեր, բայց եթե Յունուսը օգներ, խնդիր չէր լինի:

Յունուսն անմիջապես վրա եկավ՝ մորաքրոջ հետ ժամանակ անցկացնելու մտքից շատ էր ուրախացել:

– Այո՛, այո՛: Ինչ կլինի՝ գնամ, մայրի՛կ:

– Բա ասում էիր՝ հիվանդ ես,– չարաճճի ասաց Փեմբեն, հետո չդիմացավ ու համաձայնեց.– Բայց չուշանաք, լա՞վ:

Մյուս օրերի պես սովորական օր էր: Նոյեմբերի 30, հինգշաբթի: Ջեմիլեն ու Յունուսը կոշիկներն էին հագնում, երբ Փեմբեն նրանց կանգնեցրեց:

– Մի րոպե սպասե՛ք:

Պայուսակից մի շրթներկ հանեց ու քրոջ՝ տարիներով արևից ու ցրտից չորացած շուրթերը ներկեց: Հետո երկվորյակ քրոջ գլխաշորը հանեց: Ջեմիլեի փարթամ մազերը կարմրադարչնագույն ջրվեժի պես թափվեցին ուսերին:

– Այսպես ավելի սիրուն է:

Ջեմիլեն մի պահ հապաղեց: Միջանցքի հայելու մեջ իրեն նայեց: Այդ նոր զգեստը, նոր մազերը, նոր Ջեմիլեն մի տեսակ անհանգստացրին նրան: Բայց Յունուսն անհամբեր էր:

– Դե, մորաքո՛ւյր, գնանք: Շատ սիրուն ես:

Ջեմիլեն հանձնվեց: Լսեց իր սիրելիներին.

– Էհ, եթե այդպես եք ասում...

թվայնացրել է 1915.info կայքը

Ժպտաց ու քրոջը գումար տվեց Փեմբեն, Յունուսին էլ մի բուռ մանրադրամ: Երկուսի այտերն էլ համբուրեց:

– Չմոռանաք հիլ գնել: Երեկոյան միս ենք ուտելու: Հիլը սուրճի համար է:

Յունուսն ու Ջեմիլեն դուրս եկան տնից՝ ուրախ, որ ճամփի ընկեր են դարձել: Ջեմիլեն փորձեց Յունուսի հետ թուրքերեն խոսել, բայց տեսավ, որ նա ոչինչ չի հասկանում: Երկուսի թուրքերենն էլ կաղում էր, դրա համար մի կերպ խոսելով, ձեռք ձեռքի տված՝ քայլեցին Լոնդոնի փողոցներով: Ուղիղ երկուսուկես ժամ ասել-խոսելով առևտուր արեցին: Պատրաստվում էին տուն վերադառնալ, երբ ճանապարհին հանկարծ Տոբիկոյին հանդիպեցին:

– Ի՞նչ կա, փոքրի՛կ,– ասաց Տոբիկոն:– Այսօր մեծ օր է, գիտե՞ս:

Ասաց, որ ամբողջ խումբը հավաքվել է, ուզում են հին տունը նորից օկուպացնել: Վերջապես այդ պահը եկել էր: Երկար ժամանակ սպասվող հակահարվածը կեսգիշերին իրականություն էր դառնալու: Քաղաքապետարանի՝ տան շուրջը դրած տախտակի պատնեշը կոտրելու համար անվադողերի լծակներ էին օգտագործելու, քնապարկերով ներս էին մտնելու: Մյուս օրը առավոտյան, երբ թաղամասի բնակչությունն արթնանար, արդեն ուշ էր լինելու: Եթե քաղաքապետարանը նորից փորձի իրենց դեմ մարդ ուղարկել, քարերով ու շշերով քշելու են նրանց:

Տոբիկոյի ոգևորությունը տեսած Յունուսը հանկարծ շրջվեց ու մորաքրոջից թույլտվություն խնդրեց ընկերների հետ ժամանակ անցկացնելու: Գրեթե տուն էին հասել, ցուցակում գրած ամեն ինչ գնել էին:

– Լսի՛ր, վստա՞հ ես, որ մայրդ չի զայրանա,– հարցրեց Ջեմիլեն:

թվայնացրել է 1915.info կայքը

– Երկար չեմ մնալու,– ասաց Յունուսը:– Մի քիչ հետո գալու եմ, մի՛ մտածիր:

Այդպես Ջեմիլեն նրանց այնտեղ թողեց: Մենակ վերցրեց տոպրակները, դանդաղ քայլեց Յունուսի ցույց տված ուղղությամբ: Ճանապարհին մի քանի անգամ կանգնեց: Նախ փողոցի երաժշտին ականջ դրեց, մի փողոցի նկարչի նայեց, ցուցափեղկերին նայեց: Այս քաղաքը ինչ նման էր երազում տեսած այն տարօրինակ վայրին, ուր իր հետևից մարդիկ էին ընկել: Այնքան էր մտածում այդ երազի մասին, որ չնկատեց՝ հետևից մեկը գալիս էր:

թվայնացրել է 1915.info կայքը

Փեմբե

30 նոյեմբերի, 1978
Լոնդոն

Սպանությունից ընդամենը երկու ժամ առաջ խոհանոցում «Սյուզան Սյուզի» երգն էր երգում Փեմբեն: Երգը տխուր էր, բայց իրեն վատ չէր զգում: Անհանգստություններից չէր ազատվել, բայց քրոջ այցելությունը կյանքին նոր հավատ, նոր հույս էր տվել: Որոշ ժամանակ առաջ Ադեմին նամակ էր գրել, ասել, որ պետք է իրենց ճամփաները արդեն պաշտոնապես անջատվեն: Դեռ չէր պատասխանել: Եթե պետք լիներ, Փեմբեն փաստաբան կվարձեր: Ամուսնալուծության համար դատարան կդիմեր: Դա ո՛չ Իլիասի, ո՛չ էլ ուրիշ տղամարդու համար չէր անի: Մարդ մի անգամ է աշխարհ գալիս: Արդեն տխուր տուն չէր ուզում ունենալ, ուզում էր լիաթոք ապրել, շիտակ ու անկեղծ: Ադեմը գուցե տխրեր այդ որոշումից, բայց չէր զարմանա: Անգամ իրեն լավ կզգար, որ այդ դժվար քայլը ոչ թե ինքն է անում, այլ Փեմբեն: Իսքենդերին համոզելը անկասկած դժվար կլիներ, բայց եթե անկեղծ պատմի, հավատում էր՝ որդին կհասկանա: Չէր ստի, միայն ճշմարտությունը կասեր: Ամեն ինչ փոխվելու էր: Ամբողջ սրտով հավատում էր:

Ընթրիքի համար Իլիասի սովորեցրածի պես մի տարտ էր պատրաստում՝ տակը խմոր՝ ալյուր, կարագ, ձու ու շաքարավազ: Վրան կիտրոնով կրեմ՝ հինգ ձվի

թվայնացրել է 1915.info կայքը

դեղնուց, մարգարին, շաքարափոշի, եգիպտացորենի ալյուր: Ջեմիլեի համար էր անակնկալ պատրաստում: Փոքր ժամանակ շատ էր սիրում աղով կիտրոն ուտել, անգամ շուտասելուկ ունեին՝ թթուին աղ լցրու, կեր, այնքան համով է որ: Քույրը՝ Հեդիյեն, չէր ուտում, ամեն անգամ փորձելիս դեմքը ծամածռում էր:

Չնայած երևի Ջեմիլեն էլ անցյալի պես ախորժակ չուներ: Լոնդոն գալուց ի վեր ո՛չ կարգին մի բան էր կերել, ո՛չ էլ իրենից խոսել: Փոխվել էր քույրը: Աչքերի մուգ շրջանները ստվերում էին դեմքը, վախեցած էր ժպտում: Փոքր փոփոխություններ, որոնք միայն Փեմբեն կարող էր նկատել: Երեխաները ոչինչ չէին հասկանում: Նրանք դեռ զարմանում էին, որ մորաքույրն ու մայրը այդքան նման էին իրար: Հատկապես երբ Ջեմիլեն հագուստը փոխեց, Փեմբեի զգեստներից մեկը հագավ ու մազերը նույն ձևով սանրեց, նրանց տարբերելը անհնար դարձավ:

Զուն հարեց շաքարավազի հետ ու ձյան պես սպիտակեցնելուց հետո վառարանը միացրեց: Հիշեց՝ Իլիասը խորհուրդ էր տվել լիքը քերած կիտրոնի կեղև լցնել: Կիտրոնն ու նարինջը պատշգամբում՝ զամբյուղի մեջ էր պահում: Մի անգամ որոշել էր կիտրոնի ծառ աճեցնել, բայց Լոնդոնի ցրտից բոլորը սառել էին: Նույն երգը երգելով՝ գնաց պատշգամբ, հայացքը սահեց փողոց: Տեսավ՝ ինչպես էր քույրը, տոպրակները ձեռքին, մտնում Լավենդեր փողոց: Ճաղերի վրայով ձգվելով՝ ձեռքով արեց:

– Ջեմիլե՛... վերև՛ նայիր: Այստե՛ղ:

Հենց քույրը վերև նայեց, Փեմբեի դեմքը շողաց: Նրա շարժումներում մանկական միամտություն կար, մշուշի շերտի պես բարակ անմեղություն, մեծ սեր, մի քիչ էլ նախանձ: Վերջինը միշտ էր եղել: Միշտ նախանձել էր Ջեմիլեին: Միմյանց որքան էլ որ նման լինեին, նույնը

թվայնացրել է 1915.info կայքը

չէին: Ջեմիլեն բնական գրավչություն ուներ՝ մարդկանց առանց մեծ ջանքի էր գրավում, ինչպես ծաղիկը մեղվին: Ի տարբերություն Փեմբեի՝ և՛ կենսալից էր, և՛ համառ ու սառնարյուն էր:

– Քեզ համար քաղցրավենիք եմ թխում:

– Ի՞նչ ես անում,– հարցրեց Ջեմիլեն. կողքով անցնող մեքենայի պատճառով չէր հասկացել:

– Ասում եմ...– Փեմբեն հանկարծ լռեց:

Այդ պահին նկատեց Իսքենդերին: Նայեց՝ ինչպես էր մեծ որդին քայլում քրոջ հետևից: Իսքենդերն աչքերը կկոցում էր, պողպատե կեռիկների էին նմանվել, հայացքը կարծրացել էր, ծնոտը լարվել, շուրթերը կարծես իրենք իրենց հետ կռվելով շարժվում էին, անհասկանալի բաներ էին խոսում:

Փեմբեն չէր հասկանում: Անգամ երբ տեսավ՝ ինչպես է Իսքենդերը Ջեմիլեին մոտենում, տեսավ ձեռքի դանակը, չհասկացավ՝ ինչ էր կատարվում: Բայց աչքերի առաջ կախված վարագույրը վերջապես բարձրացավ ու հանկարծ հասկացավ դրությունը, մոտեցող վտանգը: Զգաց, որ շունչը կտրվում է: Կիտրոնները դեռ ձեռքին՝ դուրս թռավ պատշգամբից, անցավ հյուրասենյակով, շնչկատուր իջավ աստիճաններով:

Վազեց Փեմբեն: Երբ որդին դանակահարեց քրոջը, ընդամենը երկուսուկես մետր էր հեռու: Իսքենդերը իմիջիայլոց ու արագ շարժեց դանակը. կարծես ուզում էր այդ գործը հնարավորինս շուտ ավարտին հասցնել: Պողպատը օդում կիսաշրջան գծեց ու Ջեմիլեի կրծքավանդակի աջ կողմին դիպավ: Փեմբեն խեղդված ձայն հանեց: Հանկարծ հասկացավ, զգաց իր ներսում՝ դանակը քրոջ սիրտն էր մտել:

Իսքենդերը հետ քայլ արեց, հոնքերը կիտելով՝ նայեց ձեռքի մետաղին: Չգիտեր ինչ անել: Մինչ այդ պահը

թվայնացրել է 1915.info կայքը

կարծես թելերից կախված տիկնիկ լիներ, բայց այդ պահին քնից արթնացել էր: Իրեն թափ տալով՝ դանակը մի կողմ նետեց ու սկսեց հակառակ ուղղությամբ վազել:

Փեմբեն լսում էր՝ ինչպես է ինչ-որ մեկը բղավում: Քամու մեջ արձագանքելով՝ հեռուներից եկող ոռնոց էր՝ սրտակոտոր, ցավով լի բղավոց: Որոշ ժամանակ անց հասկացավ, որ իր ձայնն էր: Չէր կարողանում շարժվել, մարմին չուներ: Մարմինը չէր զգում: Միայն բղավոց էր: Իր կամքից անկախ, պարուրաձև միմյանց հետևից բարձրացող, հոգում անդադար պտտվող հավերժական արձագանքի մեջ հալվող բղավոցներով հոդս էր ցնդել գոյությունը:

Աչքերը լայն բացած, կոկորդը լցված՝ նետվեց դեպի քույրը: Տոպրակի մթերքները թափվել էին փողոցով մեկ: Հացերը, պանիրները, սիրուն խնձորները, մի կապ ռեհանը, տուփով հիլը...

Քրոջը փաթաթվելիս լուսնոտի նման էր: Ջեմիլեին համբուրեց՝ ճակատը, վիզը, այտոսկրերը: Ստուգեց զարկերակը, զարկը լռել էր՝ մարմինը թուլացել էր, սկսել էր կորցնել տաքությունը: Դեմքը գունատվել էր՝ միայն կրծքի վերքն ու նույն գույնի շրթներկն էին մնացել: Փեմբեն սկսեց դողալ, կաթիլ-կաթիլ նվազող հոգին կարծես իրենը լիներ: Լուռ արտասվելով՝ գուցե հարյուր անգամ քրոջը ցնցեց թևերի մեջ՝ անտեսանելի օրորոց դարձավ՝ հետ ու առաջ գնաց: Գետնին տարածված արյան լիճը մգանում էր: Ոտնաձայներ, սարսափահար շշնջոցներ լսեց: Մոտեցող շտապօգնության մեքենայի ազդանշանը լսվեց որոշ ժամանակ անց:

Մեքենայի դռներ, ոստիկանության ռացիաներ... Կարծես ամենը ջրի տակից էր լսում: Մեկը կամ ինչ-որ բան դիպավ իրեն, ձեռքից բռնեց, ոտքի կանգնեցրեց: Կույր մարդու պես թևերը երկարացնելով՝ քայլեց. ասֆալտը

թվայնացրել է 1915.info կայքը

պինդ էր փումփուլիկով հողաթափերի տակ: Աչքերին արցունքներ՝ ինչ-որ մեկի ուղեկցությամբ հեռացավ քրոջից:

Ասացին, որ վկայություն տալու համար ոստիկանության մեքենայի մոտ սպասի: Բայց Փեմբեն չհասկացավ, եթե հասկանար էլ, երևի չէր լսի: Կարծես փորձելով վատ երազից դուրս գալ՝ սկսեց քայլել: Այդ ընթացքում ականատեսները խոսում էին՝ մեկը՝ ոստիկանության, ոմանք՝ միմյանց, ոմանք՝ լրիվ անծանոթների հետ: Իրարանցումը նոր նկատած մի տարեց կին՝ մի բարեսիրտ ալբանուհի, փողոցի մյուս կողմից մոտեցավ: Զարմանքով ու սարսափով վազեց դեպի գետնին պառկած մարմինը: Բղավելով, ճչալով ընկավ ծնկների վրա:

– Ա՛խ, իմ խեղճ Փեմբե: Ի՞նչ է եղել քեզ: Վա՛խ, հարևա՛նս:

Այդ ընթացքում փողոցի մյուս կողմը հասած Փեմբեն ոտքից գլուխ փշաքաղվեց: Ինչ տարօրինակ էր լսել՝ ինչպես են ողբում մահդ: Փշաքաղվեց, բայց սառած էր զգում իրեն: Ոտքերը քարացել, լեզուն համրացել էր: Տխրությունն այնքան ծանր էր, որ հոգին պաղել էր: Ո՛չ կանգնեց, ո՛չ էլ հետ նայեց: Ձեռքերը կրծքին խաչելով՝ կարծես ուժգին քամու դեմ քայլելով՝ գլուխը կախեց ու տարրալուծվեց բազմության մեջ:

Փեմբեն այդ օրը փողոցներում ապաստան գտավ, այնպիսի տեղեր գնաց, ուր երբեք չէր եղել: Քանի դեռ Իսքենդերը ազատ շրջում էր, ո՛չ տուն, ո՛չ էլ Իլիասի մոտ չէր կարող գնալ: Որդին կարող էր ամեն վայրկյան հասկանալ իր սխալն ու ընկնել իր հետևից: Սուգն այնքան խոր էր, որ իր մասին չէր կարողանում մտածել, վախն այնքան սրված էր, որ քրոջ կորուստը չէր կարողանում սգալ: Հաճախակի կանգ առնելով, խոր շունչ քաշելով՝ իրեն հանգստացրեց: «Բյուրեղյա Մկրատի» շուրջը

թվայնացրել է 1915.info կայքը

պտտվեց, ի վերջո կանգնեց մուտքի մոտ: Մի մեքենայի հետևում թաքնվելով՝ նայեց պատուհանից երևացող Ռիտային: Երկու այցելու կար. մեկը հավանաբար նոր աշակերտն էր, մյուսը՝ սմբուկագույն մազերով երիտասարդ կին:

Փեմբեն պտտվեց վարսավիրանոցի հետևում, որ մտնի հետնաբակ, ուր սրբիչներ ու գոգնոցներ էին չորացնում: Եթե բախտը բերեր, այնտեղ հագնելու մի բան կգտներ: Շապիկին քսված արյունը մինչ այդ ձեռքերով էր կարողացել ծածկել: Զարմանալի է՝ մարդիկ չէին նկատել: Գուցե ուշադրություն չէին դարձրել: Բակի դուռը բացելը, մտնելն ու կանգ առնելը մեկ եղավ:

Մեծ մաստակը բերանին՝ ներսից լսվող երաժշտության տակ ճոճվելով՝ նոր աշակերտը սրբիչներն էր հավաքում: Փեմբեի համար արդեն ուշ էր հետ քայլ անել, թաքնվելու տեղ էլ չկար: Միմյանց տեսան: Կանգնեցին ու զարմացած նայեցին իրար:

– Կներեք,– ասաց Փեմբեն կարմրելով:

Մի ցատկ արեց, գոգնոցներից մեկը վերցրեց ու վազելով հեռացավ:

– Հե՛յ, ի՞նչ ես անում,– բղավեց աշակերտը:– Գո՛ղ:

Բայց Փեմբեն արդեն գնացել էր: Հաջորդ մի քանի ժամում, ձմեռվա արևի անխիղճ հպումները ծոծրակին զգալով, շրջեց փողոցներում: Գնալու տեղ չուներ: Եթե ոստիկանությանը հանձնվեր, կհարցաքննեին: Նրանց լեզուն չէր կարողանում հասկանալ, հարցերին չէր կարողանում պատասխանել: Ի վերջո, գուցե ինքը մեղավոր դուրս գար: Բացի դրանից՝ եթե անգամ լավ վարվեին իր հետ, պատմության սենսացիոն մանրամասները մեդիային փոխանցելուց հետ չէին կանգնի:

Հարևանների մոտ չէր կարող մնալ: Ո՞վ այդպիսի ռիսկի կդիմեր: Վստահ չէր, որ Իսքենդերը ինքն իր խելքով

թվայնացրել է 1915.info կայքը

է շարժվել՝ մեկը կարող էր նրան ուղղորդած լինել: Եթե այդպես է, էլ ո՞վ էր ներառված այդ գործի մեջ: Թարը՞քը: Իսկ ամուսի՞նը: Գուցե երկու եղբայր միացել, Իսքենդերին համոզել էին սպանել մորը: Գլուխը ցավում էր:

Իլիասից բացի՝ ոչ ոքի չէր վստահում: Բայց նրա մասին մտածելուց անգամ սարսռում էր: Այդքանն էր: Այլևս չէին հանդիպելու: Եթե Փեմբեն նրանից հեռու մնար, նա ապահով կլիներ: Ավելի լավ էր մտածեր, որ ինքը մահացել է:

Մեղավորությունը՝ այդքան ամիս կրծքին տաքացրած այդ խորամանկ օձը, արդեն ի հայտ էր եկել ու սկսել էր կրծել հոգին: Իրեն էր մեղադրում: Իրենց գլխին այդ փորձանքը Իլիասի հետ հարաբերությունն էր բերել: Իրականում այդ պահին անգամ Իսքենդերին էր արդարացնում, իրեն մեղադրում: Մյուս երկու երեխային էր ուզում տեսնել: Ի՞նչ էին անելու, երբ իմանային, որ մորաքույրը մահացել է, մայրն էլ կորել: Ոստիկանությունն ի՞նչ էր պատմելու, ու նրանք ի՞նչ էին ասելու ոստիկանությանը:

Երբ մութն ընկավ, չնայած գիտեր վտանգը՝ վերադարձավ իր թաղամաս: Հնարավորինս թաքնվելով, այգիներով, հետնաբակերով ու կայանատեղիներով անցնելով՝ փշերից քերծված կրունկներով Լավենդեր փողոց հասավ:

Այնտեղ, ուր Ջեմիլեն էր ընկել ժամեր առաջ, նրա մարմնի կավճե ուրվագիծն էր: Դեպքի վայրը ժապավենապատ էր. մոտերքում մի տեղ երկու-երեք հոգի ծխելով խոսում էին: Տան դուռը կրկնի վրա բաց էր: Ցավակցության համար եկած մեկը մտնում, մյուսը դուրս էր գալիս, ուտելիքով լի սկուտեղներն էին տանում-բերում: Լաց, տնքոցներ լսեց, բայց բառերը չհասկացավ: Չհամարձակվեց ավելի շատ մոտենալ, ստիպված հեռացավ:

թվայնացրել է 1915.info կայքը

Ամբողջ կյանքում մաքրության սիրահար Փեմբեն այդ օրը մի բանկի մասնաճյուղի առաջ՝ աղբով լի անկյունում գալարվեց: Մոտակայքի հասարակական զուգարանը գնաց, մի ճաշարանից ջուր ու ուտելիք խնդրեց, արտասվելով քնեց:

– Արթնացի՛ր: Վե՛ր կաց, ստո՛ր:

Մի անտուն մարդ էր նայում իրեն: Երկարահասակ, գարեջրից ուռած-կախված փոր ու հաստ հոնքեր ուներ:

– Գրողը քեզ տանի, իմ տեղում ի՞նչ գործ ունես:

Փեմբեն խուճապահար վեր թռավ, շուրթերը դողում էին:

– Կ... կներեք:

Մարդը ճոճվելով մոտեցավ նրան: Հոտը զարկեց Փեմբեի դեմքին՝ գինու, թութունի, նաֆթալինի ու մեզի խառնուրդ: Ցատկեց ու իրեն դուրս նետեց:

– Ո՞ւր ես գնում, քա՛ղցրս: Ինչո՞ւ վախեցար:

Փեմբեն անկյունից շրջվեց, մարդն էլ նայեց նրա հետևից, մինչև տեսադաշտից կորավ: Հետո, կարծես միայն իր իմացած կատակի վրա ծիծաղելով, տեղավորվեց դեռ տաք անկյունում, խոր շունչ քաշեց, հանեց կոշիկներն ու սկսեց ոտքերը շփել: Ճիշտ այնպես, ինչպես այն օրը մետրոյում:

թվայնացրել է 1915.info կայքը

Էսմա

1 դեկտեմբերի, 1978
Լոնդոն

Խոհանոցում այնքան ուտելիք կար, որ եթե շաբաթներով ուտեին, չէր վերջանա: Բերնեբերան լիքը կաթսայի ու թավայի ուտելիքներից ծանր ու սուր հոտեր էին գալիս, սեղանը, անգամ հատակը ծածկված էր կարկանդակների ու քաղցրավենիքի ամաններով: Էսման չգիտեր՝ այդքանն ով էր ուտելու. տանը միայն ինքն ու Յունուսն էին: Բայց ցավակցության եկածների վերջը չէր երևում, ու ամեն եկող իր հետ նոր սկուտեղ էր բերում: Հյուրասենյակում տարբեր տարիքի կանայք էին իրար կողքի նստած: Ոմանք հին հարևան էին, ոմանց հետ միայն բարև էին տալիս-առնում, ոմանց առաջին անգամ էին տեսնում: Մերալ հարսիկը եկողներին դիմավորելու համար ամեն անգամ ոտքի էր կանգնում, ամեն այցելուի հետ մի անգամ էլ էր տանջվում: Յունուսն ու Էսման մի անկյունում էին նստել՝ և՛ այնտեղ էին, և՛ կարծես այնտեղ չէին՝ կարծես դատարկված ակվարիումում երկու ձուկ լինեին:

Եկողները նրանց էին նայում, տխրում նրանց համար: Իսկ երեխաները տեսնում էին հյուրերին ու սառած աչքերով էին նայում շուրջը: Բայց նրանց միտքը միայն իրենց հայտնի առեղծվածով էր զբաղված: Շտապօգնության մեքենան Ջեմիլե մորաքրոջն էր

թվայնացրել է 1915.info կայքը

տարել, ոչ թե իրենց մորը: Դրա մասին ոչ ոքի չէին պատմել:

– Իմ պատճառով եղավ,– փխրուն ձայնով ասաց Յունուսը:

– Ի՞նչ ես ուզում ասել:

– Մորաքրոջս մենակ թողեցի...

Էսման փաթաթվեց նրան ու ձեռքը բռնեց:

– Իսքենդերն է մեղավոր, ոչ թե դու:

– Լավ, իսկ մայրս որտե՞ղ է:

– Ես էլ եմ ուզում իմանալ:

Մի ժամ չանցած՝ իմանալու էին պատասխանը: Կեսօրին մոտ դուռը մի անգամ էլ բացվեց ու ոտքից գլուխ կանաչ հագած մեկը ներս մտավ. գլխարկն անգամ նույն գույնն ուներ: Մյուս հյուրերը բերանները բաց նայեցին նրա փայլուն աքսեսուարներին, ներկած եղունգներին ու տարօրինակ ոճին: Բայց Էսման ուրախացել էր:

– Ահ, Ռիտա՛...– ասաց նա՝ արցունքն աչքերին նրա մոտ վազելով:

Նստեցին խոհանոցի սեղանի մոտ՝ անհանգիստ հայացքը հեռուներ հառած:

– Մայրս չի մահացել,– շշնջաց Էսման:

Ռիտան գլուխն օրորեց:

– Քեզ հե՞տ է,– ասաց Էսման:

Ռիտան նորից գլուխն օրորեց:

Այդ օրը առավոտյան աշխատանքի գնալիս հին աշխատողին դռան մոտ քնած էր տեսել: Փորձել էր հարցնել՝ ինչ է պատահել, բայց ոչինչ չէր հասկացել: Հետո Փեմբեին հետնամասի էպիլյացիայի սրահում թեյ էր հյուրասիրել, վարագույրները փակել էր ու ազատ օր հայտարարել: Հետո օգնել էր, որ լվացվի, շորերը մաքրի, նայել էր՝ ինչպես է նա ուզածի չափ լալիս:

թվայնացրել է 1915.info կայքը

– Կարո՞ղ է որոշ ժամանակ քեզ մոտ մնալ, մինչև որոշենք ինչ անել,– հարցրեց Էման:

Այս անգամ Ռիտան գլուխը բացասական օրորեց: Ընկերը կյանքում չէր համաձայնի, որ Փեմբեն իրենց հետ մնա, հետո էլ Ռիտան չէր հավատում, որ կարող էր գաղտնիք պահել:

– Մի բան էլ,– ասաց Ռիտան:– Փեմբեն խնդրել է, որ այս հասցեով գնաս,– ու մի թուղթ մեկնեց նրան, ուր Իլիասի անունն ու հասցեն էր գրած:

– Բայց ի՞նչ եմ ասելու:

– Չի ուզում՝ իմանա, որ ողջ է: Այդպես ավելի լավ կլինի:

Ուրիշ բան չխոսեցինք: Քիչ անց Էման նրան ուղեկցեց մինչև դուռը: Ռիտան իր դերը հիասքանչ կատարեց՝ հեռանալիս արտասվելով փաթաթվեց երիտասարդ աղջկան:

– Ցավակցում եմ, սիրելի՛ս: Մորդ շատ էի սիրում:

Մայրամուտից հետո Յունուսի հետ մի պատճառ գտան ու դուրս եկան տնից: Ձեռք ձեռքի տված՝ «Բյուրեղյա Մկրատի» հետևի դռնով ներս մտան: Ե՛վ արտասվելով, և՛ ծիծաղելով մոր մոտ վազելու պահը մինչև կյանքի վերջ չէին մոռանալու: Փեմբեն ցնցված էր երևում, տխուր, աչքերի տակ կապտավուն հետքեր կային:

Յունուսը գլուխը հենեց Փեմբեի կրծքին.

– Բոլորը կարծում են, թե մահացել ես:

– Այո՞:

– Իմ պատճառով եղավ,– ասաց Յունուսը:– Մորաքրոջս մենակ թողեցի: Ընկերներիս հետ մնացի, տուն մենակ եկա:

Փեմբեն նրան համբուրեց: Հետո Էմային: Աղջկան կամաց փաթաթվելով ասաց.

– Խոսեցի՞ր նրա հետ,– շշնջաց Փեմբեն նրա ականջին:

թվայնացրել է 1915.info կայքը

Էսման պատմեց Իլիասի հետ հանդիպումից: Կարծես կիսով չափ երազում, կիսով չափ արթուն լիներ Փեմբեն: Կորացած էր, այտերը՝ փոս ընկած:

– Քո մասին վատ բաներ են ասում,– միջամտեց Յունուսը:

Փեմբեն այդպես իմացավ, որ ամբողջ թաղամասը ցնցվում է բամբասանքներից: Ոմանք ասում էին, որ նա ընտանիքի պատիվը գցել է, իրեն էին մեղադրում, որ որդին այդպիսի մութ ճամփաներով է գնացել:

Էսման խեթ նայեց եղբորը:

– Հուղարկավորությունը վաղն է: Մերալ հարսիկն է ամեն ինչ կազմակերպում:

Հենց այդ պահին Յունուսը պինդ գրկեց մորը՝ կամ վաղուց էր պլանավորում, կամ վատ էր զգում, որ իրեն չէր կարողացել զսպել:

– Մի՛ անհանգստացիր: Գիտեմ՝ քեզ ուր եմ տանելու,– ասաց նա:– Ապահով տեղ կա: Այնտեղ քեզ ոչ ոք ոստիկանությանը չի հանձնի:

Տեսնելով, որ զարմացած իրեն են նայում՝ ինքնավստահ ասաց.

– Գործն ի՛նձ թողեք, լա՞վ:

Հենց այդպես նույն օրվա ավարտին երեսուներկու տարեկան ու պաշտոնական աղբյուրների համաձայն՝ հանգուցյալ Փեմբե Թոփրաքը հայտնվեց մի խենթ երիտասարդ խմբի գրաված կիսաքանդ տանը:

թվայնացրել է 1915.info կայքը

Փեմբե

5 դեկտեմբերի, 1978
Լոնդոն

Անկողնում նստած Փեմբեի դեմքը հոգնած դիմակի էր նման: Թևերը փաթաթել էր ծնկների շուրջը, մատները՝ միմյանց շղթայել: Կարծես մի անտեսանելի ձեռք սեղմում էր ողերը, աստիճանաբար աճող ցավ էր զգում կրծքավանդակում: Դժվարանում էր շնչել: Թուքը կուլ տալիս ցավ էր զգում: Տխրությունը ամպի պես պատել էր շուրջբոլորը: Եվ մեղքի զգացումը: Մեղավոր էր զգում մի մեղքի համար, որը չէր գործել:

Մթության մեջ թաղված կիսաքանդ տան ձայներին ականջ դրեց: Օդի մեջ ծծմբանման հոտ կար: Փոշի, քրտինք, հին կահույք, բորբոսնած սավաններ, կեղտոտ սպիտակեղեն, դատարկ շշեր, լիքը մոխրամաններ: Երբ տեսավ՝ ինչպես են մի խումբ մարդիկ հատակին նույն սենյակում քնում, մանկության հուշերն արթնացան: Քանի ծածկոց էլ որ ունենար, անպայման կեսգիշերին մրսելուց արթնանում էր, տեսնում, որ վերմակն ընկել է: Ամենամոտ ծածկոցը վերցնում, քաշում էր վրան, փաթաթվում. երբեմն պատահաբար քրոջ վերմակն էր վերցրած լինում:

Այժմ, նախկինում իրեն անծանոթ հոգնածությանը հանձնվելով, նայեց քնած երիտասարդներից այն կողմ՝ պատուհանից դուրս չարագուշակ դատարկությանը:

թվայնացրել է 1915.info կայքը

Մի ժամ անցավ: Գուցե ավելի շատ: Անհնար էր հաշվել: Որոշ ժամանակ արևի առաջին շողերը երևացին հորիզոնում: Նետի պես սուր կարմիր շողեր: Քաղաքի վրա բացվում էր առավոտը: Ցավոտ հոգնածությունը պատեց սիրտը: Քիչ անց բոլորը արթնանալու էին: Նախաճաշելու էին, կատակելու էին միմյանց հետ: Փեմբեին ընդունել էին օկուպացված տանը և նրան չանհանգստացնելու համար ամեն ինչ անում էին, բայց նրանց հետաքրքիր էր՝ ով է, ինչ է անում. չէին կարողանում հարցեր չտալ: Թերթ չէին կարդում, դրա համար ոչինչ չգիտեին: Նրանք միայն ակնկալում էին, որ հյուրերը իրենց պետք է հարմարվեն: Չգիտեին, որ երկվորյակ քրոջը կորցնելուց ի վեր Փեմբեն նույնն է, ինչ հանգուցյալը:

* * *

Օկուպանտների մեծ մասը սիրում էր մինչև ցերեկ քնել, բայց քաղաքապետարանի հետ ունեցած տարաձայնությունների պատճառով պետք է ուշադիր լինեին. արդեն առաջվա հանգիստ օրերը չէին: Դրա համար առավոտյան ութին բոլորը ոտքի վրա էին, նախորդ օրվա հագուստներն էին հագնում, օրվա առաջին ծխախոտն էին ծխում կամ ճաքած լվացարանի վրա կաթացող ջրի համար միմյանց էին հրմշտում: Անգամ համար մեկ ծույլ Ցրողն էր արթնացել:

Տոբիկոն խոհանոցում էր, նայում էր մի բանակի հերիք անող կրեպ պատրաստող Փեմբեին:

– Օ՜ֆֆ, ինչ էլ լավ հոտ է գալիս,– գնահատանքով ասաց նա:

Փեմբեն մի քիչ ժպտաց: Կենտրոնացել էր իր գործի վրա, արագ էր աշխատում, բայց միտքը կիլոմետրերով հեռու էր: Մի քանի րոպե անց միմյանց վրա շարած կրեպները մեկնեց Տոբիկոյին:

թվայնացրել է 1915.info կայքը

– Գնացեք... Կերե՛ք, դե...– ասաց նա:

Տոբիկոն կանգնեց:

– Իսկ դո՞ւ: Այսինքն՝ Դո՞ւք:

– Ես հետո կուտեմ:

– Մենք քո տղային շատ ենք սիրում,– հանկարծ ասաց Տոբիկոն:– Նա մեր թալիսմանն է: Ու բանը... Չգիտեմ՝ քեզ ինչ է եղել, բայց Յունուսն ասաց, որ խնդիր կա, որոշ ժամանակ պետք է այստեղ թաքնվես: Ինչքան ուզես, կարող ես մեզ հետ մնալ, իրոք: Իհարկե, եթե քաղաքապետարանը մեզ խմբովի փողոց չնետի: Բայց այդ դեպքում էլ ուրիշ տեղ կգտնենք, մի՛ անհանգստացիր:

Այդ պահին Փեմբեն այնքան փխրուն էր, Տոբիկոյի հանդեպ այնպիսի ուժեղ ու մայրական սեր զգաց, որ աչքերը լցվեցին: Փաթաթվեց երիտասարդ աղջկան: Նա էլ այդ անսպասելի սիրո արտահայտությանը նույն կերպ պատասխանեց: Պահի կախարդանքը հյուրասենյակից ձայնը գլուխը գցած ցրողը ընդհատեց:

– Հե՛յ, սովից մեռանք, վա՛յ: Ժողովուրդը սնունդ է պահանջում:

Տոբիկոն ծիծաղելով վերցրեց ափսեն ու ներս գնաց:

Երբ խոհանոցում մենակ մնաց, քրքրված ավելով սկսեց ավլել Փեմբեն: Վախենում էր՝ եթե իր սովորական գործերով չզբաղվի, կարող է խելքը թռցնել: Այդպես ժամեր շարունակ երիտասարդների զարմացած հայացքների ներքո օկուպացված տան բոլոր անկյունները մաքրեց, սրբեց, լվաց, փայլեցրեց: Այնպիսի ոգևորությամբ էր սրբում, որ ոչ ոք ո՛չ կարողացավ ծաղրել, ո՛չ էլ ասել, որ դադար տա: Հավանաբար նրա ջանքը վարակիչ էր, որովհետև շատ չանցած՝ մյուսներն էլ, մի քանի լաթ ու մի կերպ կպցրած ավելները ձեռքներին, միացան խենթությանը:

թվայնացրել է 1915.info կայքը

Երեկոյան Փեմբեն դեռ ոգևորված աշխատում էր, իսկ երիտասարդները ուրիշ մշակույթից, ուրիշ լեզվից, ուրիշ պատմությունից եկած այդ կնոջ շուրջը ոտնաթաթերի վրա էին քայլում, անզոր նայում էին՝ ինչպես է նա անընդհատ արտասվելով մաքրություն անում:

Երբ բանտից դուրս գալուն երեք ամիս էր մնացել, մոտակա հիվանդանոցներից մեկի վերակենդանացման բաժնում մի տարեց կին բացեց աչքերը: Բողոքեց մեջքի ցավից: Դրանից բացի՝ վիճակը լավ էր: Բժիշկներն ասում էին՝ հրաշք է: Երբ պապրասպ էր խոսել, նրանից վկայություն վերցրին, հարցրին՝ ինչ էր հիշում ցուրտ ցերեկը նրա պայուսակը գողացած ու կոտրված շշով նրա վրա հարձակված մարդու մասին: Նա նկարագրեց մարդուն: Հիշողությունը փայլուն էր: Նկարագրությունը Զիշանի հետ ընդհանրապես ոչ մի կապ չուներ: Բայց չհամոզվեցին ու նկարը նրան ցույց տվեցին:

– Նա չէր,– ասաց կինը:

Զիշանին բերեցին ու ապակուց այն կողմ ցույց տվեցին:

– Ո՛չ, նա չէր,– կրկին ասաց կինը:

Դատարանը որոշեց գործը վերաբացել:

– Երևի ուրախությունից յոթերորդ երկնքում եմ,– ասացի ես:– Մոտ օրերս ազատ մարդ ես լինելու:

– Զիշանը այսպես թե այնպես ազատ է,– ասաց նա:– Պետք չէ երկինքներում թռչել:

– Քեզ կկարոտեմ:

Տխրեց, խոր շունչ քաշեց:

– Դու իմ լավ աշակերտն էիր:

թվայնացրել է 1915.info կայքը

– Դու էլ վատ ուսուցիչ չես:

Ուսերը ցնցելով ծիծաղեց.

– Չմոռանաս հանձնարարություններդ անել:

– Ի՞նչ հանձնարարություն,– հարցրի ես:

Պատմեց: Լսեցի:

Զիշանի գնալու օրը վերջին անգամ նստեցինք ու մեդիտացիա արեցինք: Ի տարբերություն մյուս օրերի՝ չկատակեցի, չտրտնջացի: Կոշտ հատակին ծալապատիկ նստելով՝ նայեցի իմ ներսը, իմ սիրտը, իմ մեջ թաքնված ինձ: Ու առաջին անգամ մի պահ կարողացա կենտրոնանալ ու լռեցնել միտքս:

Այդ երեկո՝ Զիշանի ազատ արձակվելուց հետո, անկողնուս վրա մեկնվելով, մտածեցի: Դժվար էր նրա բացակայությունը: Վերջին անգամ Փախածի մահից հետո էի այդպես զգացել: Հիշեցի նրա ասածը: Նրա հանձնարարությունը: Փորձեցի: Մինչև այդ օրը արածս ամենադժվար բանն էր: Զիշանը խնդրել էր, որ մոտս մի նամակ գրեմ, որ դուրս գալուն պես նրան իմ ձեռքով տամ:

Գրիչը ձեռքիս շարունակ խզբզեցի: Որոշ նամակներ վատ չէին, բայց մեծ մասը չհավանեցի: Կիսատ մնացած շատ բան կար: Ամեն անգամ պատռում-գցում էի, նորից սկսում, բայց ոչինչ չէր ստացվում: Ինչպես խոստացել էի Զիշանին, ամեն օր մի բան գրեցի, թեկուզ մի քիչ: Մի քիչ մեդիտացիա արեցի: Սպա Էնդրյուն գալիս-գնում էր: Դեռ չէինք սիրում իրար, բայց էլ իրար կոկորդ չէինք կրծում:

Հետո մի օր մի բան գրեցի, որ նախորդներից ավելի լավն էր: Ու որոշեցի թաքցնել: Նամակը ավարտին հասցնելուն պես, ինչպես Զիշանն էր ասել, սկզբից մինչև վերջ այնքան կարդացի, մինչև անգիր արեցի: Ամեն օր նոր էջի վրա էի գրում, մաքրագրում.

թվայնացրել է 1915.info կայքը

«Սիրելի՛ մայրիկ,

Այս նամակը փոստատուն չեմ տանելու: Իմ ձեռքով եմ բերելու, ինշալլա՛հ: Այս տարի աչքերս բացվեցին: Մի խենթ բանտակից ունեի: Եթե ծանոթանայիր, կսիրեիր: Անունը Զիշան է: Ինձ շատ է օգնել: Նրա գնալուց հետո հասկացա դա: Ափսոս, որ մեր ունեցածի արժեքը հասկանում ենք միայն այն կորցնելուց հետո:

Եթե ժամանակի մեքենա լիներ, նորից տասնհինգ տարեկան լինեի, այդպես չէի վարվի: Արդեն գիտեմ հետևանքները:

Ոչ ոքի այդքան չէի ցավեցնի՝ քեզ, քրոջս, եղբորս, հանգուցյալ մորաքրոջս: Բայց անցյալը չեմ կարող փոխել: Ոչ մի վայրկյանը: Զիշանն ասում է՝ այսօրը կարող ես շտկել: Դրանում էլ վստահ չեմ: Բայց փորձում եմ: Իսկապես: Ու հույս ունեմ, որ ինձ նորից կընդունես քո կյանք, կներես: Ձեռքդ համբուրելու կգամ, մայրի՛կ ջան: Օրհնանքդ ինձնից անպակա՛ս պահիր»:

Իսքենդեր Թոփրաք
Շրուսբերի բանտ, 1992

թվայնացրել է 1915.info կայքը

Հետո...

3 հոկտեմբերի, 1992
Լոնդոն

Շաբաթ առավոտյան նախաճաշ եմ պատրաստում: Նոր էինք վերանորոգել խոհանոցը: Շատ թանկ էր նստել մեզ վրա, մեր ուժերից վեր: Բայց ամուսինս պնդել էր:

– Ամեն ինչի ամենալավը թող լինի,– ասել էր նա:

Ամուսնության հոբելյանի նվերն էր: Թութունագույն պահարաններ, թխկենուց հատակ, պահարանների տակ՝ լույսեր, վերջին մոդելի սառնարան, ընտիր հյութքամիչ: Նուրբ էր, հանգիստ ու շքեղ: Ինչպես որ բրոշյուրում էր ասվում՝ «Խոսքերի աղցան»:

Զուն շրջեցի, նայեցի՝ ինչպես են եփած մասերը վեր բարձրանում՝ մարդու անցյալի պես՝ մաս-մաս էին ի հայտ գալիս: Տաղանդավոր խոհարար չեմ, անտաղանդ եմ: Գուցե ժամանակի հետ եմ մրցում: Ո՛չ անցյալից եմ կարողանում հրաժարվել, ո՛չ էլ վաղվա վրա կենտրոնանալ: Բարդ մտքեր ու շողշողուն բառեր ունեցող աղջկանից շատ բան չի մնացել: Նախկինում իմ մասին մտածելիս ինձ ակամայից դավաճանված եմ զգում: Բայց ես էի դավաճանողը, գիտեմ:

Աղջիկներս նստած են սեղանի մոտ, իրենց ամենասիրելի մուլտֆիլմի մասին են վիճում: Ինչպես միշտ՝ հակասական հայացքներ ունեն: Նրանց եմ լսում, բայց միտքս, օդապարուկի պես քամու բերան ընկած, պտտվում է:

թվայնացրել է 1915.info կայքը

Պարանն ինչքան էլ պինդ բռնեմ, մեկ է, հանգիստ չի մնում:

– Մայրի՛կ, այս մյուս աղջկադ ասա՛, թող բերանը փակի,– ասաց Լեյլան:

– Հը, լավ, ջանի՛կ, կասեմ,– ասում եմ ու թավան կրակից վերցնում:

– Բայց մայրի՛կ,– բղավում է Զեմիլեն:

– Կներես, ի՞նչ ասացիր,– հարցնում եմ, բայց արդեն շատ ուշ է:

Երբ շրջվում եմ, տեսնում եմ, որ մեկը, բերանը մինչև ականջները բաց, ծիծաղում է, մյուսն էլ նեղացել է ինձնից: Լավ է, որ ամուսինս հասնում է օգնության.

– Ձեր մորը հանգի՛ստ թողեք: Զբաղված է:

– Ինչո՞ւ,– հարցնում է Լեյլան:

– Արդեն խոսել ենք, չէ՞, սիրելի՛ս,– ասում է Նադիրը սիրալիր:– Ձեր մեծ մորեղբայրն է գալիս: Ձեր մայրիկը եղբորը վաղուց չի տեսել: Դրա համար ոգևորված է:

– Հաաա,– ասում է Լեյլան, բայց ընդհանրապես զարմացած չէ:

Տեսնում եմ՝ ինչպես է Զեմիլեն ուշադիր նայում հորը, մուգ նշաձև աչքերում մարտահրավեր նետող փայլ եմ տեսնում. ընդհանրապես նման չէ այն կնոջ աչքերին, ում անունը կրում է: Հանկարծ հարցնում է.

– Դուք երկուսով մեզ սո՞ւտ եք ասում:

Ձուն ափսեների մեջ դնող ձեռքս մնում է օդում: Լռությունն եմ լսում, ուզում եմ խոսել:

– Ծնողների հետ այդպես չեն խոսում,– ինչպես միշտ՝ հանգիստ ասում է Նադիրը:

– Կներեեեե՛ք,– երկարացնելով ասում է Զեմիլեն:

– Լավ, տեսնենք՝ ի՞նչ էիր ուզում ասել:

Զեմիլեն՝ ուշադրություն գրավելուց գոհ, սեղմում է շուրթերը:

թվայնացրել է 1915.info կայքը

– Իսքենդեր մորեղբայրը իսկապե՞ս Ալյասկայում է աշխատում: Չեմ հավատում: Իմ կարծիքով...– աչքերը վազում են սեղանի վրայով՝ կարծես հուշում փնտրելու համար:– Նա ռուսական մաֆիայի անդամ է:

– Դու էդպե՛ս մտածիր,– միջամտում է Լեյլան:

– Ճիշտ եմ ասում: Սառցաբեկորներ է պայթեցնում:

– Ո՛չ, դա էր մնում պակաս:

– Այո՛, հենց այդպես:

Ափսեների մեջ մի քանի կտոր լոլիկ ու մեկական տերև ռեհան դրած՝ սեղանի մոտ տանելիս ակամայից մտածեցի՝ եթե եղբայրս ռուսների համար աշխատող գործակալ լիներ, մեր կյանքն ավելի հե՞շտ կլիներ:

Հետո, երբ աղջիկները ծննդյան տոնի խնջույքին պատրաստվելու համար գնացին իրենց սենյակ, Նադիրն ինձ գրկեց: Գլուխս թեքել, նրան եմ նայում՝ սիրալիր աչքերին, այտերի գծերին, ճակատի փոքրիկ կնճիռներին: Հաստ ու փարթամ մազերը, ձգողականության օրենքին մարտահրավեր նետելով, դեպի վեր էին աճում՝ հրաժարվելով ծածկել նրա ականջները: Քունքերի սպիտակած մազերը մատնում էին տարիքը:

Ինձնից տասնվեց տարով էր մեծ: Գրեթե Իլիասի ու մորս միջև եղած տարիքային տարբերությունը: Պատահականություն է, այդպես եմ ասում ինքս ինձ:

Նադիրին սիրում եմ, բայց չի կարելի ասել, թե կրքոտ միություն է: Սկզբում էլ նրան խենթի պես սիրահարված չէի. երկուսս էլ գիտեինք: Հոգուս խորքում բազմազան զգացմունքներից մի խառնուրդ պատրաստեցի նրա համար՝ հարգանք, կապվածություն, հիացմունք ու երախտագիտություն: Շնորհակալ եմ, որ ինձ հորձանուտից դուրս հանեց: Ոմանք իրենց ամուսինների մասին խոսելիս ասում են՝ նրանց սերն իրենց ավելի լավն է

թվայնացրել է 1915.info կայքը

դարձնել: Լսում ենք, բայց չենք հավատում, մինչև որ մեզ հետ է պատահում:

1978 թվականի նոյեմբերին արևի տակ մնացած ձնեմարդու պես մեր ընտանիքը հալվեց-գնաց: Մեր հին կյանքից մնաց միայն ցեխոտված ձյան կույտ: Մի ժամանակ կարգին ու մնայուն ինչ կար, ծվատվեց: Յունուսն ու ես որոշ ժամանակ Թարըք հորեղբոր ու Մերալ հարսիկի մոտ ապրեցինք: Մեզ հետ և՛ քաղաքավարի էին, և՛ շռայլ, բայց այնտեղ անցկացրածս ամեն վայրկյանն ատում էի: Երբեք չներեցի, որ սպանությանը նախորդող շաբաթներին մորս մասին թունավոր բամբասանքներ էին տարածում: Անգամ երբ ապրում էի նրանց հարկի տակ, ուտում նրանց ուտելիքը, նրանց գնած հագուստը հագնում, ատելի մարդկանց առաջին շարքերում էին:

Հայրս մեզ Աբու Դաբիից փոստքարտեր, նվերներ ու փող էր ուղարկում, բայց այդ շփումները տարիների ընթացքում նվազեցին: Հետո դադարեցինք ընդհանրապես լուր ստանալ: Հորեղբայրս ու հարսիկը հնարավորինս երկար թաքցրին նրա ինքնասպանության լուրը: Իրականությունը թաքցնում, փոխում էին: Շատ լավ գիտեմ, որովհետև հիմա նույնը ես եմ երեխաներիս հետ անում: Ճշմարտությունը շղարշների մեջ փաթաթելը, թաքցնելը, անհասանելի կամ անհասկանալի դարձնելը երևի մեր ընտանեկան ավանդույթն է:

Այդ տարիների հուշերը լի են ցավով: Հուսահատության ճահիճ գլորվելու պահերին ինձ վեր հանող ու գոյատևումս ապահովող միակ խարիսխը զայրույթն էր: Ամեն ինչի վրա զայրանում էի, ամենաշատը՝ Իսքենդերի: Վարչապետ Թեթչերի կառավարման առաջին տարիներն էին, մեծ փոփոխություններ էին կատարվում: Խոր ձմեռային քնից արթնացող դևի պես Անգլիան աստիճանաբար դադարում էր մեզ ծանոթ հայրենիքը լինելուց:

թվայնացրել է 1915.info կայքը

Դպրոցում գնահատականներս ինչպես միշտ բարձր էին: Կրթության նախարարությունը մեր դրությանը հատուկ ուշադրություն դարձրեց, ու կարճ ժամանակ անց ես ու Յունուսը տեղափոխվեցինք գիշերօթիկ դպրոց:

Հեռանալը մի քիչ օգնեց, բայց դեռ պատրաստ չէի հրաժարվել զայրույթից: Հասկանում էի՝ ինձ ոչ մի տեղ չի հասցնի, բայց դեռ ամուր բռնվում էի: Նեղսրտությունից խեղդվում էի: Հետո Նադիրին հանդիպեցի: Նա իսկական գիտնական էր, համաշխարհային փաստերին ու օբյեկտիվ ճշմարտություններին հավատացող ակադեմիկոս: Գազայում ծնված, Պաղեստինի փախստականների ճամբարում մեծացած, քսան տարեկանում կրթությունն իր վրա վերցրած մի առատաձեռն բարեկամի շնորհիվ հայրենիքից հեռացել, եկել էր Անգլիա: Բիթլզի «Yellow Submarine» ալբոմի դուրս գալուց, Նիքսոնի նախագահությունից ու Արաֆաթի՝ ՊԱԿ-ի նախագահ դառնալուց հետո հասել էր Մանչեստեր: Լռակյաց ու ամաչկոտ էր, բայց հավատով լի: Քաղաքականությունից հնարավորինս հեռու մասնագիտություն էր ընտրել՝ մոլեկուլային կենսաբանություն:

Մինչ աշխարհն աստիճանաբար աճող արագությամբ մտնում էր հակամարտությունների հորձանուտ, Նադիրը իր կոկիկ ու ստերիլ լաբորատորիայում բջջային կազմաբանություն էր ուսումնասիրում: Բարեկամները դեռ Գազայում էին: Շատ եմ հանդիպել նրանց: Մեծ ընտանիք է: Ջերմ, սիրալիր, հետաքրքրասեր ու շատախոս են: Մորաքույրներ, հորեղբայրներ, պապիկներ, տատիկներ, մեծ մորաքույրներ, զարմիկներ: Ամուսնուս եմ նայում, երբ նրանց հետ է, քաղաքավարի ու հանգիստ պահվածքի տակ կասկածով մի բաց, բնավորության փոփոխություն եմ փնտրում: Բայց Նադիրն ամենուր ու բոլորի հանդեպ նույն քաղաքավարի մարդն էր:

թվայնացրել է 1915.info կայքը

Երբեք հանկարծակի զայրույթով չէր շարժվում: Սիրում էր մտածել, կշռադատել: Երբեք չէր շտապում, ոչ ոքի սիրտը չէր կոտրում: Չեմ զարմանում, որ Յունուսի հետ հեշտ են լեզու գտնում:

– Լա՞վ ես,– հարցնում է նա:

Գլուխս օրորում եմ: Մենակ մնալ: Այդ պահին միայն դա էի ուզում: Առանց որևէ բանի ձեռք տալու, ամանների մնացորդները, սեղանի ծածկոցների փշուրները, բաժակների հետքերն ու անցյալի կտորները ուզում էի հենց այդպես թողնել, վերարկուս վերցնել ու տնից դուրս գալ, հեռանալ:

– Երկար օր է լինելու,– ասում եմ:

– Մեզ համար մի՛ անհանգստացիր,– ասում է նա: Չարաճճիներին ես կվերցնեմ խնջույքից: Դու պետք է եղբորդ հետ դեմ առ դեմ ժամանակ անցկացնես:

Ականջ եմ դնում ամուսնուս խոսվածքին: Կոկորդային ձայներին, արաբական հնչյուններին:

– Ինձ իրականում վախեցնում է նրա հետ մենակ մնալը:

Այտերս ափերի մեջ առնելով՝ շուրթերս համբուրում է, ասում.

– Մի՛ անհանգստացիր, ամեն ինչ լավ է լինելու:

Մի պահ մտածում եմ՝ երանի այսքան հասկացող ու սիրալիր չլիներ: Անգամ երբ Նադիրը ֆիզիկական կամ խոսքային կոպտության էր հանդիպում, ներողամիտ էր լինում, կռիվ չանելու համար հնարավոր ամեն բան անում էր: Երբ մեկը նրա հետ վատ էր վարվում (օրինակ՝ գործընկերներից մեկը մի անգամ անիրավ էր վարվել), վիճակն անմիջապես հասկացել, անգամ ինքն իրեն էր պատասխանատու համարել: Հանկարծ հասկանում եմ, որ գիտակցաբար թե ոչ՝ եղբորս ճիշտ հակապատկերի հետ եմ ամուսնացել:

թվայնացրել է 1915.info կայքը

– Չգիտեմ,– ասում եմ ես:– Չգնա՞մ: Թող հորեղբայրս գնա կամ ուրիշ մեկը:

Հոնքերը բարձրացնում է: Գիտի, որ լարված եմ. խոսքերն ուշադիր է ընտրում:

– Բայց պետք է գնաս ու տեսնես: Եթե գոնե մի քիչ չի փոխվել, դեռ հին կոշտ մարդն է, պարտավոր չես հանդիպել: Բայց անպայման պետք է գնաս, տեսնես, վստահ լինես,– ասում է նա ու ավելացնում խոսքերը, որ ամբողջ օրը հնչելու են ականջներում.– Մի՛ մոռացիր, նա քո եղբայրն է:

– Լավ, իսկ աղջիկներին ի՞նչ եմ ասելու: Բարև՛ ձեզ, սա էլ ձեր մորեղբայրն է, ում երբեք չեք տեսել: Ինչո՞ւ չեք տեսել, որովհետև բանտում էր: Ինչո՞ւ: Որովհետև ձեր տատիկին է սպանել...

– Դե, գիտեն, որ արտասահմանում է: Պարզաբանումների կարիք չկա: Գոնե առայժմ:

Աչքերս լցվում են, խոսելիս ձայնս հազիվ է լսվում:

– Դու և Յունուսը ուզում եք, որ ամեն ինչ պարզ, հեշտ լինի: Բայց աշխարհն այդպես չէ: Ամեն ինչ խառն է:

Շուրթերը սեղմելով՝ սիրով կրկնօրինակում է ինձ.

– Աշխարհն ինչի՞դ է պետք: «Այսօր մենք ենք քեֆի նստել մարգերի մեջ այս նորածիլ, Վաղը ո՞վ է հարբելու մեր հոդից ծլած կանաչներում[1]»:

– Նորից Խայա՞մ,– ինձնից անկախ ծիծաղելով՝ ասում եմ ես:

– Իհարկե, Օմար Խայամ:

Այս մարդը գթառատ խոսքերի ու գեղեցիկ բանաստեղծությունների մարդ է: Երբեմն ինձ խենթացնելու չափ ուղղախոս, վստահելի ու բարոյական: Մարդ, որը հավատում է՝ նամուս ասվածը ոչ թե մարդկանց

[1] Պարսկերենից թարգմանությունը՝ Ազատ Մաթյանի:

թվայնացրել է 1915.info կայքը

ննջասենյակների, այլ սրտերի հետ է կապված: Չգիտեմ՝ իմ մեջ ինչ է գտել, ինչպե՞ս է ինձ դեռ սիրում:

– Լավ, գնամ պատրաստվեմ,– հանգիստ ասում եմ ես:

– Լավ, սիրելի՛ս:

Մի ժամանակ հավատում էի, որ կարևոր գործերի համար եմ ստեղծվել՝ մեծ պայքարներ, մեծ իդեալներ: Ուզում էի, որ աշխարհն իմ շուրջը պտտվի: Կարող էի գրող դառնալ կամ մարդու իրավունքների պաշտպան: Կարող էի աշխարհով մեկ ճնշվածների ու զոհերի իրավունքների համար քայլարշավներ կազմակերպել: Ջ.Բ. Օնո՝ նա, ով վեպեր է գրում, ուր սիրո մասին խոսք չկա...

Հիմա հիշելն անգամ դժվար է, բայց երբ ավարտական քննություններս հանձնեցի, որոշ ժամանակ գրում էի: Համալսարանում գնահատականներս բարձր էին, իսկ պատմվածքներս՝ ստեղծագործ: Մարդիկ կային, որ հավատում էին ուժերիս, բայց ինչ-որ բան փոխվել էր: Իմ հանդեպ ունեցած հավատս էի կորցրել: Խանութում ընտիր տեսքով, բայց տուն գալուն պես անհասկանալի կերպով թոշնող բույսի նման՝ ինձ ծանոթ շրջապատից դուրս գալուն պես գրողական կիրքս էլ էր մարել:

Հետո տարիներ շարունակ ոչինչ չգրեցի: Նամակներից բացի՝ իհարկե, այն էլ ինչքան նամակներ: Կանոնավոր կերպով բանտ էի նամակներ ուղարկում, իսկ երբ առանձին էինք՝ նաև Յունուսին: Իլիասին (ես էի կապ հաստատել նրա հետ) ու Ռոքսանային (նա էր ինձ հետ կապ հաստատել) էլ էի նամակներ գրում: Երկուսն էլ օգնեցին հանելուկի պակասող մասերը ամբողջացնելուն: Եվ ուղիղ տասներկու տարի շաբաթվա մեջ երկու անգամ անընդհատ մորս գրեցի:

թվայնացրել է 1915.info կայքը

Հետո, անցյալ տարի, նրա մահից հետո, նստեցի ու նրա կյանքի պատմությունը սկսեցի գրել: Վախենալով, որ եթե մի պահ անգամ կանգ առնեմ, մտքիս թելը կկտրվի, ու ամեն ինչ կչքվի, գիշեր-ցերեկ աշխատեցի: Գրածներս այնքան անձնական էին, որ այդ ամենը բացահայտելուց սիրտս ցավում էր: Բայց երբ սևագիրը վերջացավ, օտարության զգացողությունը պատեց ինձ: Այդ պատմությունն իմը չէր:

Անցյալը ձեղնահարկում պահած սադափե սնդուկ է: Մեջը արժեքավոր իրեր էլ կան, անպետք իրեր էլ: Եթե ինձ մնա, միշտ փակ կպահեմ, բայց ամենաթեթև քամուց բացվում է կափարիչը, միջի եղածը դուրս է թափվում: Մեկ առ մեկ հետ եմ դնում: Մեկ առ մեկ: Լավ ու վատ՝ բոլոր հուշերը հավաքում եմ, մինչև որ սնդուկը անսպասելիորեն նորից կբացվի:

Երբ իմացա՝ հղի եմ, միաժամանակ զարմանք, անհանգստություն ու ոգևորություն ապրեցի: Ժամերով լաց եղա: Իսկ երբ իմացա՝ զույգ աղջիկ եմ ունենալու, ինչ էլ անեի՝ զգում էի, որ երկար պատմությունների շղթայում ընդամենը մի օղակ եմ: Այդ ինը ամիսների ընթացքում մարմինս կավի պես վերաձևավորվեց: Հիմա աղջիկներս յոթ տարեկան են: Գիշերվա սև սաթի պես մազերով Լեյլան ու հանգուցյալ մեծ մորաքրոջս անունը կրող Ջեմիլեն:

Վերևում՝ ննջասենյակից լսում եմ հեռախոսազանգը: Ամուսինս է պատասխանում: Ներսից մի ձայն ասում է՝ Յունուսն է՝ ամենաանսիրտ մարգարեի անունը կրող տղան: Վերջերս եղբայրս ու ամուսինս ամեն օր զանգում էին իրար: Գիտեմ՝ իմ մասին են խոսում: Նրանց հետ համեմատած՝ ես անընդհատ տկտկացող ժամացույցով պայթուցիկ եմ՝ ամեն պահի պատրաստ պայթելու: Փորձում են ինձ չեզոքացնելու ձև գտնել իրենց ծանոթ խոհեմ ձևերով:

թվայնացրել է 1915.info կայքը

– Սիրելի՛ս, Յունուսն ուզում է քեզ հետ խոսել,– ձայն է տալիս Նադիրը:

Հեռախոսը միացնում եմ, սպասում, որ ամուսինս զուգահեռ հեռախոսն անջատի: Հետո հնարավորինս անհոգ ձայնով խոսում եմ.

– Բարև՛, ջանի՛կ:

– Էսմա՛ ջան, ինչպե՞ս ես:

– Շատ լավ,– ասում եմ ես:– Քեզանից ի՞նչ կա: Եղանակն ինչպե՞ս է:

– Ե՞րբ ես գնում բերելու,– առանց պատասխանելու՝ անցնում է բուն թեմային:

Փորձ անող խմբի ձայներն են լսվում: Դաշնամուր, կիթառներ, շվի: Եղբայրս այս երեկո Ամստերդամում համերգ է տալու: Շքեղ մշակութային միջոցառում է: Թագավորությունից էլ են այցելուներ գալու:

– Մի ժամից դուրս եմ գալու:

– Տե՛ս, բանը... Գիտեմ՝ դժվար է: Կներես, որ քեզ մենակ թողեցի: Երանի այդտեղ լինեի:

– Ոչինչ, գործեր ունես:

Ձայնիս մեջ նեղացածություն եմ զգում: Չգիտեմ՝ Յունուսը նկատել էր, թե ոչ, բայց ոչինչ չի ասում:

– Այս առավոտ ինչ մտածեցի՝ գիտես, այն օրը, երբ այցելության էի գնացել, երբ ասացի՝ մայրս ողջ է, ինչպես էր ուրախացել: Հուզվել էր: Ափսոս, որ չի կարող նրան տեսնել, ներողություն խնդրել:

– Վայ, հա, ինչ մեղք է...– ծաղրով ասում եմ ես:

– Կարող էր...– ասում է նա:– Լավ կլիներ՝ ձեռքը համբուրեր, օրհնություն ստանար:

Ծանր լռություն է տիրում, կարծում էի՝ կապն է ընդհատվել, երբ Յունուս ասաց.

– Կարծում եմ՝ արդեն շատ է տառապել Իսքենդերը:

Զգում եմ՝ արյունը եռում է երակներումս:

թվայնացրել է 1915.info կայքը

– Ի՞նչ ես ասում: Այդպիսի բան չկա: Պետք է ավելի շատ սողա: Ավելի վա՛տ լինի: Մեր մորաքրոջը սպանեց, միշտ եսասեր էր, եսասեր էլ կմեռնի:

– Նա երեխա էր:

– Երեխա չէր, տարիքի հետ կապ չունի: Դու էիր երեխա: Նրա արածը չարեցիր: Իսքենդերի բնավորությունն էր այդպիսին:

– Բայց նա էր մեր ամենամեծը,– ասաց Յունուսը:– Դու միշտ բողոքում էիր, որ որպես աղջիկ՝ քեզ այլ կերպ են վերաբերվել: Ես էլ դժգոհ էի, որ փոքրն եմ: Բայց երբևէ մտածե՞լ ես՝ գուցե Իսքենդերի համար էլ էր դժվար այդ օրերին: Նրա վրա շատ ճնշում կար:

– Ահա, սուլթան լինելը երևի շատ դժվար է:

– Քույրի՛կ, լսի՛ր,– հոգոց հանելով՝ ասում է նա:– Պետք է գնամ: Հավատա՛՝ եթե կարողանայի, այդտեղ կլինեի: Երբ գամ, կխոսենք: Մի ճանապարհ կգտնենք: Միասին: Ինչպես միշտ: Լա՞վ:

Վստահ չէի ձայնիս վրա, դրա համար գլուխս օրորեցի՝ կածես թե Յունուսը տեսնում էր ինձ: Հեռախոսն անջատելուց հետո գնացի բաղնիք, դեմքս լվացի, շպարվեցի: Յունուսի վրա զայրանում էի, որ չէր մոռացել, բայց կարողացել էր ներել, իսկ Իսքենդերի վրա՝ որ մեզ զրկեց մարդկային մանկությունից: Մարդ կյանքի վարար ջրերը նետվելուց առաջ պետք է ընտանիքում սեր, կայունություն ու վստահություն տեսնի: Իսկ մեր ընտանեկան կյանքը դրսի կյանքից ավելի փոթորկոտ էր:

* * *

Խնամված խոտածածկին նայելով՝ մեքենայով դեպի բանտ եմ գնում: Ժամանակը դանդաղում է: Նորից Յունուսի մասին եմ մտածում: Հուսամ՝ համերգը հաջող կանցնի: Աստիճանաբար հայտնի է դառնում փոքր

թվայնացրել է 1915.info կայքը

եղբայրս: Նադիրն ասում է՝ իր ուսանողները լսում ու սիրում են Յունուսի երաժշտությունը: Նրանով հպարտանում եմ: Ու իմ հանդեպ անկեղծ պահերին անգամ նախանձում եմ: Իբրև թե ստեղծարար երեխան՝ ես, ի վերջո, այսպիսի միջակ ու տնային կյանք ընտրեցի, իսկ միշտ հանգիստ ու խելամիտ երևացող Յունուսը, իր երազանքների հետևից ընկած, աշխարհն է շրջում: Աստծո խաղերից մե՞կն էր տեսնես: Երևի քույր-եղբայրների միջև նախանձը հավերժական բան է: Անգամ ծնողների բացակայության դեպքում նրանց գնահատանքին արժանանալու համար մրցակցությունը չի ավարտվում:

Երբ հասա բանտին, զարմացած տեսա՝ ինձնից բացի՝ ոչ ոք չի սպասում շենքի մոտ: Ո՛չ Թարրոք հորեղբայրը, ո՛չ Մերալ հարսիկը: Ո՛չ հարևանները, ընկերները, բարեկամները: Ո՞ւր էին: Իսքենդերի հին ընկերներն էլ չէին եկել:

Մի ժամ է անցնում: Բոլոր ձայները ճնշող և մարդու մարմին սողոսկող սառնություն կար օդում, մի քիչ էլ ծարավել էի, բայց ոչ մի տեղ չէի գնում: Եթե շենք մտնեմ, աշխատողները մի բաժակ ջուր, անգամ գուցե թեյ հյուրասիրեն: Նրանց հարցեր կտամ, Իսքենդերի մասին մի երկու բան կիմանամ: Բայց հետո, երբ Իսքենդերը գա, բոլորի առաջ պետք է փաթաթվենք կամ ողջագուրվենք: Ավելի լավ է՝ այստեղ մենակ սպասեմ:

Վերջապես բացվում է երկփեղկ դուռը: Այդ լույսի տակ՝ հագին ջինսե տաբատ ու բեժ, թավշյա բաճկոն, որքան էր տարբերվում վերջին անգամ նրան տեսնելու օրվանից: Իրեն լավ էր նայել, ատլետիկ էր: Քայլվածքն էր փոխվել: Նախկինի պես ուսերը հետ, վիզն առաջ չէր: Մի քանի քայլ անելուց հետո կանգնում, նայում է սառն ու ամպոտ երկնքին:

թվայնացրել է 1915.info կայքը

Հետո ինձ է նկատում՝ մեջքս՝ պատին հենած, դեմքս՝ սառը: Դանդաղ քայլում է, կարծես ժամանակ է տալիս ինձ, որ թողնեմ-գնամ: Երբ մոտենում է, նրա կողմը մի քայլ եմ անում: Ձեռքերս՝ գրպաններումս:

– Բարև՛, Էսմա՛,– ասում է նա:

Զայրացած էի Նադիրի ու Յունուսի վրա, որ համոզել էին ինձ այստեղ գալ: Բայց փորձում եմ մութ մտքերը հեռացնել ինձնից:

– Քեզ էլ բարև՛, եղբա՛յր:

– Չէի կարծում, որ կգաս:

– Հա, ես էլ չէի կարծում, որ կգամ:

– Ուրախացա,– ասաց նա:

Մեքենայի մեջ մեր միջև եղած դատարկությունը լցնելու համար ինչ-որ բան ասելու ցանկություն եմ զգում:

– Կարծում էի՝ Թարըք հորեղբայրն այստեղ է լինելու:

– Գալու էր, բայց ես չուզեցի:

– Իսկապե՞ս,– ղեկը սեղմելով՝ ասում եմ ես:

Իսքենդերն առանց մեկնաբանելու հենվում է թիկնակին:

– Աղջիկներդ ինչպե՞ս են: Նադի՞րն ինչպես է:

Ասում եմ, որ այս կիսամյակում աղջիկները դպրոցի երաժշտական մյուզիքլում դեր են ստացել: Լեյլան երգող ձկներից մեկն է լինելու: Հավանաբար թրաձուկ, բայց եթե նրան մնար՝ կետ կուզեր լինել: Իսկ փոքր աղջկաս ձկնորսի կնոջ դերն է հասել՝ կռվարար ու ժլատ կերպար է, բայց կարևոր դեր է: Այսինքն՝ տանը վերջերս մրցակցություն է գնում. երգող թրաձուկը ձկնորսի կնոջ դեմ: Այդ ամենը պատմում եմ՝ առանց Ջեմիլեի անունը տալու, մինչդեռ հաստատ գիտի՝ աղջկաս ինչ անուն եմ տվել:

– Երկուսն էլ շատ ոգևորված են,– եզրափակում եմ ես:

– Հիանալի երեխաներ են,– ժպտալով ասում է նա:

թվայնացրել է 1915.info կայքը

Անհարմար լռություն է տիրում: Հետս բերած ԱԲԲԱ-ի ձայներիզն եմ դնում, բայց չգիտես ինչու՝ ձեռքս չի գնում միացնել:

– Ծխել կուզե՞ս:

– Վաղուց եմ թողել,– գլուխն օրորելով՝ ասում է Իսքենդերը:

– Իսկապե՞ս,– ասում եմ՝ աչքի պոչով նրան նայելով:– Ամոթ է հարցնելը, բայց հիմա ի՞նչ ես անելու:

– Հնարավորինս շուտ ուզում եմ որդուս տեսնել:

Չեմ ասում, որ Քեյթն էր մի քանի օր առաջ զանգել: Մի գուշակի հետ է ամուսնացել: Այդ մարդը պնդում է, որ կարող է, մարդկանց ափին նայելով, գուշակել նրանց ապագան: Տեսնես գուշակե՞լ էր, որ խնդրահարույց նախկին ընկերը շուտով բանտից ազատվելու է. կասկածում եմ:

Կարծես մտքերս կարդալով՝ հարցնում է.

– Քեյթն ի՞նչ է անում:

– Լավ ամուսին ունի:

Անգամ եթե վատ զգաց, ցույց չտվեց Իսքենդերը:

– Ուրախ եմ նրա համար:

Իսկապես այդպե՞ս էր զգում:

– Շնորհակալ եմ, որ եկար ինձ վերցնելու,– ասում է նա:– Երկար չեմ մնա: Մի տեղ կգտնեմ: Մեկ էլ՝ աշխատանք: Ինձ նմաններին օգնող բարեգործական կազմակերպություններ կան: Հետո էլ...– լռեց նա ու ասաց:– Ուզում եմ մորս տեսնել:

Խոսքերին հետևած սպասումը մորս սարքած կարկանդակներից բարձրացող գոլորշու պես կանգնեց օդում: Արագությունը փոխելով՝ գազին եմ սեղմում ու խեղդված ձայնով ասում եմ.

– Մայրս մահացել է:

– Բայց... Բայց Յունուսը ասաց, որ...– սառած հայացքով նայեց նա:

թվայնացրել է 1915.info կայքը

– Գիտեմ՝ Յունուսն ինչ է ասել: Ճիշտ է ասել,– աչքերս սրբելով՝ ասացի ես:– Մի տարի առաջ է մահացել:

– Մենա՞կ:

– Մենակ:

Չեմ պատմում՝ ինչպես է եղել: Հետո...

– Ձեռքը... ձեռքն էի համ...բուրելու,– ասաց նա. թեթևակի կակազոց եմ լսում խոսքի մեջ:– Հույս ունեի՝ կուզի ինձ տեսնել:

– Վստահ եմ՝ կուզեր,– ասում եմ ես, որովհետև դա է ճիշտը:– Նամակները պահել եմ: Կկարդաս, կտեսնես՝ ինչպես էր միշտ քո մասին հարցնում:

Հանկարծ չեմ կարողանում կառավարել թույնս ու ասում եմ.

– Դու միշտ նրա սիրելի զավակն ես եղել:

Իսքենդերը, գլուխը կախած, նայում է դաստակներին՝ կարծես թե դեռ շղթայված են: Հետո պատուհանին նայեց, ապակին գոլորշապատելով՝ շնչեց: Գլուխը դուրս էր հանել, խոր շնչում էր: Հանկարծ գրպանից մի թուղթ է հանում: Նամակ է: Անթել օդապարուկի պես բաց է թողնում օդում:

– Մի բան էլ,– ասում եմ ես:– Նադիրը... Ամուսինս չգիտի:

– Ինչպե՞ս թե:

– Միայն ես ու Յունուսը: Ու մեկ էլ դու: Ընտանիքում ուրիշ ոչ ոք չգիտեր, որ մայրս ողջ է:

Մեր երդումն էր՝ իմ ու Յունուսի: Երբ հասկացանք՝ բոլորը Ջեմիլե մորաքրոջը մորս հետ էին շփոթել, Ղուրանի վրա երդվել էինք, որ ոչ ոքի ճշմարտությունը չենք պատմի: Ո՛չ հորս: Ո՛չ Թարըք հորեղբորը: Ո՛չ Մերալ հարսիկին: Ո՛չ Իլիասին: Ո՛չ էլ մեր զուգընկերներին, եթե մի օր ունենայինք: Այդ գաղտնիքը միայն մեր երկուսինն էր լինելու:

թվայնացրել է 1915.info կայքը

– Ուրեմն ինչո՞ւ ասացիք ինձ:

– Յունուսի միտքն էր: Մտածեց՝ եկել է իմանալու ժամանակը: Հույս ուներ, որ երբ ազատ արձակվես, երկուսդ կհաշտվեք: Ուզում էր քեզ պատրաստել:

Ծառերով շրջապատված տներով ու փոքր խանութներով մի հանգիստ գյուղի միջով էինք անցնում: Ոչ մի շնչավոր չկար: Երեկոյան կարծես աշխարհին ամբողջական էր դարձել ու ինքնագոհ: Կարմիր լույսի տակ շրջվելով՝ աչքերիս մեջ է նայում եղբայրս.

– Շատ գաղտնիքներ ունես, Էսմա՛:

– Գաղտնի՞ք...– ասում եմ ես ու բացում մեքենայի պահատուփը. – Սա կվերցնե՞ս:

Դանդաղ հանում է այն իրը, որը ցույց եմ տալիս: Գիրք է: Ալյասկայի մասին:

– Ալյասկայի մասին մի քանի բան սովորելու համար մեկուկես ժամ ունես: Աղջիկներիս այսքան ժամանակ ասել եմ, որ այնտեղ ես աշխատում:

Տխուր ժպտում է ու սկսում գիրքն ուսումնասիրել: Ձնոտ լեռներ, բևեռային արջեր, ցուրտ ջրերում ցատկոտող սաղմոններ: Այնքան էլ վատ տեղ չի թվում, անգամ կարող է լավ լինել: Ալյասկա:

թվայնացրել է 1915.info կայքը

Վերջաբան

6 մայիսի, 1991
Եփրատի ափին մի գյուղ

Սնդուկը բացեց, գորգը հանեց, կանգնեց ու ականջ դրեց հովտի ձայներին: Այստեղ ապրելու գեղեցկություններից մեկն էր դա: Հարավից եկող քամին ներքևի գյուղերից էզանի ձայնն էր բերում, բայց հենց քամու ուղղությունը փոխվում էր, անհնար էր լսել: Լոնդոնից բերած ժամացույցն էլ արդեն չէր աշխատում՝ հին, հոգնած արձանիկի պես դրված էր մի անկյունում: Բայց պետք էր ժամանակին հետևել նամազի համար: Արդեն շատ խոսք ուներ ասելու Աստծուն: Այնքան ուրվական, այնքան հանգուցյալ կար, ում սուգն էր պետք պահել ու աղոթել հոգիների համար...

Ամեն օր աղոթում էր, որ քույրը դրախտում խաղաղություն գտնի: Աղոթքի մեջ Հեդիյեին էլ էր հիշում. ոչ թե առաստաղից կախ, ճոճվող, ուռած, կապտած մարմինը, այլ ուրախ-զվարթ երիտասարդ աղջկան՝ քույրմորը: Ամուսնու հոգու համար էլ էր աղոթում, միմյանց տված ու իրարից պահած ամեն ինչը հիշում էր: Վաղուց հեռացած մոր ու հոր համար աղոթելուց հետո, վերջերս իրար հետևից մահացած գյուղի երեք տարեցներին էլ չէր մոռանում:

Հանգուցյալների հանդեպ իր պարտականությունները կատարելուց հետո հերթը հասնում էր ողջերին:

թվայնացրել է 1915.info կայքը

Անձրևոտ Լոնդոնում ապրող ու միայն նկարներով ճանաչած զույգ թոռներից էր սկսում: Ասում էր՝ Համառ աղջկաս ու նրա երախտապարտ ամուսնուն միշտ ճիշտ ուղին ցույց տուր: Դրան հետևում էր Յունուսի (երաժշտական խմբի) համար աղոթքը՝ նրա փառքի, հաջողության համար: Հետո Իլիասի համար էր աղաչում, խնդրում էր, որ առողջ լինի ու լավ, ու եթե դեռ չի գտել, շուտափույթ սիրելիի հանդիպի: Ամենաերկար աղոթքը վերջինն էր՝ Իսքենդերի աղոթքը: Սուլթա՛նս, քա՛ջս, աչքերիս լույսը...

Չգիտեր՝ այդտեղ վերադառնալը ճիշտ էր, թե սխալ: Բայց ամեն օր լուսաբացին նրան շալի պես փաթաթվող հանգստությունը համոզիչ էր: Այդքան մենակ ու առանձնացած ապրելու և խենթանալու միջև միայն մի քայլ կար:

Իրեն նվիրած ու խլած ամեն ինչի համար Նրան փառք էր տալիս, փորձում էր չխենթանալ: Չգիտեր՝ շնորհակալ լինելն ու խենթանալն ավելի դժվար էր:

Անգլիայի առաջին օրերը հիմա այնքան հեռու էին թվում, կարծես երազ էին: Գոլորշապատ պատուհաններից թագուհու նստավայրն ու մուգ դարչնագույն ձիերը տեսնելու ոգևորությունը չէր մոռանում: Անձրևից թրջված փողոցներով, միմյանց կիպ աղյուսե տներով ու շատ քիչ այգիներով Հյուսիսային Լոնդոն գալուն պես մենակությունը պատել էր նրան: Ամուսնու գտած տունն անխնամ էր՝ ներկի, վերանորոգման կարիք ուներ, բայց կտուրի տակ թաքնվող ծիծեռնակի պես փոքր վայրերում բույն հյուսելուն հարմարվել էր, դրա համար խնդիր չէր եղել նրա համար: Միակ բանը, ինչին չէր հարմարվել, եղանակն էր: Անձրևը: Տխրությունը: Մոխրագույն ամպերը: Եփրատի ափերին մեծանալը նրան կոփել էր ընդդեմ սառը ձմեռների ու այրող ամառների, բայց հավերժ փակ երկնքով առավոտներն արթնանալը հեշտ չէր: Զախակողմյան երթևեկությունը կամ էլ

թվայնացրել է 1915.info կայքը

վարորդների՝ հակառակ կողմում նստելու նման տարօրինակությունները լոնդոնցիների պահվածքի չափ չէին զարմացրել նրան: Տարեց կանանց շքեղ հագուստը, երիտասարդների անտարբերությունը, տնային տնտեսուհիների հանգստությունը, ինքնավստահությունը, որ երբեք չէր ունեցել ու չէր էլ կարծում, թե կունենա: Կուրծքն ի ցույց դնող շապիկներն ու արևի տակ պտտվող, փայլուն մազերով կանանց նայելով՝ հիանում էր՝ ինչպես են կարողանում իրենց կանացիությունը այդքան հանգիստ՝ հագուստի պես կրել: Փողոցում համբուրվող, ծխող, խմող, վիճող զույգերը... Կյանքը բոլորի աչքերի առաջ ապրելուն սովոր մարդկանց նախկինում չէր տեսել: Իր մանկության գյուղացիները երբեք շատախոս չէին եղել, դրա համար ինքն էլ միշտ սակավախոս էր եղել: Իսկ Անգլիան խոսքերի հայրենիք էր՝ թաքուն իմաստներ ընկալելու, հումորներ ու երգիծանք հասկանալու համար շատ ջանք էր թափել: Բայց Լոնդոնի ու Ստամբուլի նման քաղաքներում նրան երևի ամենաշատը թռչուններն էին զարմացնում՝ բնակարանների տանիքների տակ ծվարած, մի բուռ կերի համար հավաքվող, միմյանց հրմշտող, բացի մահանալով մայթերին ընկնելու ժամանակից՝ սովորաբար անտեսանելի թռչունները: Եփրատի ափերին այդպես չէր: Գուցե Լոնդոնի Կենդանաբանական այգում եղածի չափ տարբեր տեսակներ չկային այնտեղ, բայց ազատ էին:

Լոնդոնում պատուհանների առաջ ոզնու փշերի պես սուր ասեղներ էին դնում, որ թռչունները չնստեն ու չկեղտոտեն: Դա տեսնելիս տխրում էր Փեմբեն: Դրանք նման էին Ստամբուլում այգիների պատերին դրած կոտրած ապակու կտորներին: Անգամ դրա միտքն էր սարսռեցնող: Այդ շքեղ տներում ապրողները միայն ուզում էին գողերին կանգնեցնել, բայց միաժամանակ՝ նաև ձեռք ու

թվայնացրել է 1915.info կայքը

ոտքերը կտրել: Ո՛չ ասեղավոր պատուհանագոգերը, ո՛չ էլ կոտրված ապակու կտորներով պատերը չէր սիրում: Քաղաքի կյանքը չէր կարողացել սիրել:

* * *

Կանոնավոր կերպով գրում էր: Ինչ տարօրինակ է, որ նամակներում իր հետ կապված լիքը բաներ պատմեց, որ դեմքիս չէր կարող ասել: Նրանից ամեն շաբաթ եկող կապույտ ծրարները կյանքիս մի մասը դարձան, իմ կյանքի ամենաթանկ սովորությունը՝ մորս տողերը կարդալը: Երջանիկ, որ ողջ ու առողջ է, թեյ էի պատրաստում ինձ համար, նստում խոհանոցի սեղանի մոտ ու կարդում:

Սպանությունից հետո մի տարուց ավելի մայրս օկուպանտների մոտ մնաց: Յունուսն ու ես հերթով այցելում էինք նրան: Միշտ ուշադիր, զգոն էինք, որ Թարըք հորեղբայրն ու Մերալ հարսիկը ոչինչ չիմանան:

Իսքենդերը բանտ էր ընկել, բայց չէինք կարողանում կողմնորոշվել՝ մայրս պետք է դուրս գա, թե ոչ: Վախենում էինք, որ օկուպանտները կարող են իմանալ նրա թաքնվելու պատճառը, բայց մեզ համար ձեռնտու էր, որ թերթ չեն կարդում կամ թաղամասի բամբասանքին ականջ չեն դնում: Կարծում էին՝ միգրացիայի օրենքների հետ կապված խնդիր ուներ: Նրանք ցանկացած թղթաբանության դեմ էին, դրա համար ուրախ էին նրան թաքցնելու համար: Յունուսը փանքերին խնդրեց, որ մորս արտաքինը փոխեն, նրանք էլ սիրով օգտվեցին առիթից: Մազերը կտրեցին, գեղեցիկ կարմիր ներկեցին: Երբ մեծ, կլոր ակնոց էր դրել ու ջինսե տաբատ հագել, անգամ մենք չճանաչեցինք նրան:

Չնայած ամենին՝ եթե երկվորյակ քրոջ օգնությունը չլիներ, մայրս այդ օրերի մթությունից չէր կարողանա դուրս

թվայնացրել է 1915.info կայքը

գալ: Մի օր կեսգիշերին օկուպանտների փանը հոգնած, նստած, միայն իր ընտրած դատարկությանը նայելիս այգում ուրվագիծ տեսավ: Ջեմիլեն էր: Ո՛չ մոտեցավ, ո՛չ խոսեց, բայց տեսնելն անգամ բավական էր, որ մոռս սիրտը հալվի: Ջրի մեջ թանաքի կաթիլի նման օդում ցրվեց ուրվականը: Բայց այդ դեպքը մոռս համոզեց, որ քույրը չի փանջվում ու այնքան էլ վատ տեղ չի գնացել: Այդ օրվանից հետո ուրվականը ժամանակ առ ժամանակ երևալու էր՝ և՛ մոռս, և՛ եղբոր՝ բանտում:

Տեղի ունեցածներից մի տարի անց Յունուսին ու ինձ ուղարկեցին գիշերօթիկ դպրոց: Մայրս այդ ընթացքում որոշեց վերադառնալ գյուղ: Հանկարծ զգաց, որ Անգլիայում իր ժամանակն արդեն լրացել է: Եփրատ էր վերադառնալու՝ իր ծննդավայր, որովհետև, ի տարբերություն Իլիասի, ինքը օդային բույս չէր, արմատները պետք է գտներ: Յունուսն ու ես աջակցեցինք նրան՝ պայմանով, որ շուտով վերադառնալու է, ու մենք էլ ամռանը նրան ենք այցելելու:

Մորաքրոջս՝ կոշիկի կրունկի մեջ թաքցրած, հետը բերած Ալմասպ Հարձը դեռ մեզ մոտ էր: Ո՛չ արժեքի, ո՛չ էլ վաճառելու մասին գաղափար չունեինք: Ի վերջո Կապիտանի մայրը մեզ օգնեց: Ալմասպը լավ գնով վաճառվեց, մոռս ճանապարհորդությունը կազմակերպվեց: Յունուսի ու իմ կրթության համար էլ բավական գումար բանկում դրեցինք: Մնացածով փանքերն այնպիսի խենթ խնջույքներ արեցին, որ ամիսներով քաղաքը նրանց մասին էր խոսում: Բայց չգիտեինք, որ ալմասպը կարելի է միայն նվիրել, երբեք չի կարելի վաճառել: Ոչինչ չգիտեինք անեծքի մասին: Միայն տարիներ անց, երբ գյուղ էի գնացել, իմանալու էի այդ կարևոր տեղեկությունը: Մորաքույրս ժամանակ չէր ունեցել մեզ ասելու:

թվայնացրել է 1915.info կայքը

Քրոջ կան կիսավեր վիճակը մորս վրա չէր ազդել: Ժամանակն ու անպարբերությունը քանդել էին Զեմի-լեի խաղաղ ապաստանը: Շատ էր փանջվել մայրս: Մեզ խոստացել էր, որ ժամանակավոր է փեղափոխվում, լրիվ կերպարանափոխված է գալու Լոնդոն, բայց երբ քրոջ կուն ոտք դրեց, ամեն ինչ կարգի բերեց, հասկացավ՝ մինչև կյանքի վերջն այդտեղ է մնալու:

Գյուղացիներն այդպես էլ չհասկացան՝ ինչու էլ ծնունդ չի ընդունում, բայց ուրախացան, որ Աղջիկ Տատմերը վերադարձել էր: Օգնեցին կունը մաքրելուն, սարքելուն: Տարածաշրջանը վկանգավոր գոտու էր վերածվել: Պեկության դեմ ապստամբներ ու գիշեր-ցերեկ հերթապահող զինվորներ էին շուրջը: Քրոջ կեղը զբաղեցնելուն պես այդ լարվածության մեջտեղում էր հայտնվել քաղաքականությունից ոչինչ չհասկացող մայրս: Երբեմն լինում էր՝ վկանգից մի կերպ էր խույս տալիս, բայց այդ մասին մեզ չէր ասում: Միշտ միայն լավ բաներ էր գրում.

«Սիրելի՛ աղջիկս, աչքերիս լույսը

Միշտ ձեր մասին եմ մտածում: Խնդրում եմ, չդադարես եղբորդ այցելել: Ների՛ր, Էսմա: Փորձի՛ր ներել: Գիտեմ, որ դժվար է, բայց պետք է անես: Իսքենդերը պետք է իմանա, որ մենակ չէ: Երբեք մենակ չենք: Ալլահին աղոթում եմ, որ սիրո լեզվով խոսող մեկին նրա մոտ ուղարկի: Որ մեկին Իսքենդերին ճամփընկեր դարձնի:

Հոնքերդ մի՛ կիտիր, ջա՛նս: Մի՛ ասա, որ նորից նրան եմ պաշտպանում: Ինչպե՞ս կարող ես մի մարդը մյուսից գերադասել: Մայրերի համար էլ է այդպես: Մայրերը չեն կարող տարբերություն դնել երեխաների միջև: Իսքենդերին, Յունուսին ու քեզ հավասար ու անչափ եմ սիրում:

Վերջերս նամակներ գրելը բարդացել է: Գուցե որոշ ժամանակ նամակ չուղարկեմ, չանհանգստանաս,

թվայնացրել է 1915.info կայքը

աղջի՛կս, եղնի՛կս: Երեկ գիշեր մի լավ երազ տեսա: Ես այստեղ էի, և՛ թագուհու հայրենիքում: Ես այս տանն էի, և՛ պալատում: Արթնացա ու հասկացա՝ ճիշտն էլ դա է: Ես միշտ այնտեղ եմ, ուր դուք եք:

Քեզ սիրող մայրդ՝ Փեմբե»:

Նրա ուղարկած վերջին նամակն էր: Այնքան եմ կարդացել, որ թղթի ծայրերը պատռվել են, ամեն տողը հետքերով է ծածկվել՝ կտրտվող ու բաժանվող պատմությունների պես՝ իրար վրա, իրար մեջ էին իմ ու մորս մատնահետքերը:

Հետո, երբ Թուրքիա գնացի, գյուղացիները մանրամասն պատմեցին՝ ինչ էր եղել: Ինձ համոզեցին, որ նա ցավ չի տարել: Վիրուս է եղել: Վզի ու թևերի շրջանում մաշկային թեփոտումից է սկսվում: Առաջին հայացքից անհանգստացնող չի երևում: Բայց շատ չանցած՝ հիվանդը սկսում է դողալ, քրտնել ու եթե այդ փուլում բուժում չի ստանում, ջերմում է ու կոմայի վիճակում թոքերը դադարում են աշխատելուց: 1991 թվականի գարնանն էր ի հայտ եկել, կենդանիներից անցել էր մարդկանց ու մի ամսվա մեջ տասնյակ գյուղացու կյանք խլել: Հետո ինքն իրեն անհետացել էր. ինչպես եկել, այնպես էլ գնացել էր: Մայրս հավանաբար մթերք վերցնելու համար Չորս քամու տուն գնալու ժամանակ էր վարակվել:

Միայն երբ նամակները դադարեցին, հասկացա, որ մահացել է՝ երկրորդ ու վերջին անգամ:

թվայնացրել է 1915.info կայքը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սկզբում... ..... *7*

ԺԱՄԱՆՈՒՄ 12
ԱՅՐԵԼ ԿԱՄՈՒՐՋՆԵՐԸ 107
ՄԻ ԿԻՆ, ՄԻ ՏՂԱՄԱՐԴ 175
ՆԱ ՔՈ ԵՂԲԱՅՐՆ Է 301
ԴԱՏԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՍՐՏՈՒՄ 369

թվայնացրել է 1915.info կայքը

ԷԼԻՖ ՇԱՖԱՔ
ՊԱՏԻՎ

ELIF ŞAFAK
İSKENDER

Խմբագիր՝ Լեռնիկ Դալլաքյան
Թարգմանիչ՝ Արփի Աթաբեկյան

Հրատ. բաժնի ղեկավար՝ Հռիփսիմե Մադոյան
Հրատ. խմբագիր՝ Արքմենիկ Նիկողոսյան
Տեխն. խմբագիր՝ Արարատ Թովմասյան
Էջադրող՝ Արմինե Պապանյան
Սրբագրիչներ՝ Շողեր Ղազարյան
Լուսինե Գասպարյան
Շապիկը՝ Սարգիս Անտոնյանի
Կազմի ձևավորումը՝ Սոնա Հովհաննիսյանի

թվայնացրել է 1915.info կայքը

«Անտարես» հրատարակչատուն
ՀՀ, Երևան-0009, Մաշտոցի պ. 50ա/1
Հեռ.՝ (+374 10) 58 10 59
antares@antares.am
www.antares.am

թվայնացրել է 1915.info կայքը

Մատենաշարով լույս են տեսել

Միգել դե Ունամունո «ՄԱՌԱԽՈՒՂԸ»
Ահմեդ Համդի Տանպինար «ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ»
Ալբերտո Մուսսա «ՁԱԽ ԿՈՂՄԻ ՎԱՐՊԵՏԸ»
Ժան Ժիոնո «ՀՈՒՍԱՐԸ ՏԱՆԻՔԻ ՎՐԱ»
Պատրիկ Զյուսքինդ «ՕԾԱՆԵԼԻՔ»
Պաուլու Կոելյու «ԱԼՔԻՄԻԿՈՍԸ»
Պաուլու Կոելյու «ԱՔՐԱՅՈՒՄ ԳՏՆՎԱԾ ՁԵՌԱԳԻՐԸ»
Ջերոմ Սելինջեր «ՓՐԿԻՉԸ ՏԱՐԵԿԱՆԻ ԱՐՏՈՒՄ»
Յուլյա Ֆրանկ «ՄԻՋՕՐԵԻ ՏԻԿԻՆԸ»
Ումբերտո Էկո «ՎԱՐԴԻ ԱՆՈՒՆԸ»
Մարկ Լևի «ՊԱՐՈՆ ԴԱԼԴՐԻԻ ՏԱՐՕՐԻՆԱԿ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ»
Էռնեստո Սաբատո «ԹՈՒՆԵԼԸ»
Իրակլի Սամսոնաձե «ԱԿԱՆՋԱԲԱՐՁ»
Դաթո Տուրաշվիլի «ՋԻՆՍԻ ՍԵՐՈՒՆԴԸ»
Խուլիո Կորտասար «ԱՅՍՏԵՂ ԵՎ ՀԻՄԱ»
Ահմեդ Ումիթ «ՍՏԱՄԲՈՒԼԻ ՀՈՒՇԸ»
Լյուբկո Դերեշ «ԽԱՂԱՂԱՐԱՐԸ»
Պաուլու Կոելյու «ԱՆՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ»
Միլան Կունդերա «ԿԵՑՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՆԵԼԻ ԹԵԹԵՎՈՒԹՅՈՒՆԸ»
Լուի-Ֆերդինանդ Սելին «ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԳԻՇԵՐԻՑ ԱՆԴԻՆ»
Օթար Ճիլաձե «ՔԹՈՑԸ»
Օթար Ճիլաձե «ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ԳՆՈՒՄ ԷՐ ՄԻ ՄԱՐԴ»
Պետեր Հանդկե «ԴԱՆԴԱՂ ՎԵՐԱԴԱՐՁ ՏՈՒՆ»
Ժան-Քրիստոֆ Ռյուֆեն «ԿԱՐՄԻՐ ԺԱՊԱՎԵՆԸ»
Բլաժե Մինևակի «ՆՇԱՆ»

թվայնացրել է 1915.info կայքը

օտար գիր

Ռեյ Բրեդբըրի «ՄԱՐՍՅԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ»
Ռեյ Բրեդբըրի «ԽԱՏՈՒՏԻԿԻ ԳԻՆԻ»
Վլադիմիր Վոյնովիչ «ՏԻՐՈՒՀԻՆ»
Խորխե Լուիս Բորխես «ԲԱԲԵԼՈՆՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ»
Կառլոս Ֆուենտես «ԱՈՒՐԱ»
Ադոլֆո Բիոյ Կասարես «ՄՈՐԵԼԻ ԳՅՈՒՏԸ»
Դավիդ Ֆոենկինոս «ՇԱՐԼՈԹ»
Ռեյմոն Քընո «ԶԱԶԻՆ ՄԵՏՐՈՅՈՒՄ»
Զախար Պրիլեպին «ՍԵՎ ԿԱՊԻԿԸ»
Խավիեր Մարիաս «ԱՅՆՔԱՆ ՍՊԻՏԱԿ ՍԻՐՏԸ»
Պաուլու Կոելյու «ՎԵՐՈՆԻԿԱՆ ՈՐՈՇՈՒՄ Է ՄԵՌՆԵԼ»
Պաուլու Կոելյու «ԼՐՏԵՍԸ»
Գուրամ Օդիշարիա «ՊՐԵԶԻԴԵՆՏԻ ԿԱՏՈՒՆ»
Միշել Ուելբեք «ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ»
Դեյան Տրայկոսկի «ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆ»
Դենիել Քիզ «ԾԱՂԻԿՆԵՐ ԷԼՋԵՐՆՈՆԻ ՀԱՄԱՐ»
Նիկոս Կազանձակիս «ՀՈՒՅՆ ԶՈՌԲԱՆ»
Լեոնիդ Ցիպկին «ԱՄԱՌԸ ԲԱԴԵՆՈՒՄ»
Իտալո Կալվինո «ԾԱՌԱԲՆԱԿ ԲԱՐՈՆԸ»
Աննի Էռնո «ՏԵՂԸ»
Էրջյումենթ Զենգիզ «ԿԼԱՌՆԵՏԱՀԱՐԸ»
Ֆերդինանդ Բորդևայք «ԽԱՌՆՎԱԾՔ»
Լութց Զայլեր «ԿՐՈՒԶՈ»
Ժորժի Ամադու «ԴՈՆԱ ՖԼՈՐԸ ԵՎ ԻՐ ԵՐԿՈՒ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԸ»
Վլադիմիր Նաբոկով «ԼՈԼԻՏԱ»
Ֆրեդերիկ Բեգբեդեր «99 ՖՐԱՆԿ»
Բիրգյուլ Օղուզ «ՀԱ՛Հ»
Օրհան Փամուք «ԿԱՐՄՐԱՀԵՐ ԿԻՆԸ»
Պաուլու Կոելյու «ԴԵՎԸ ԵՎ ՕՐԻՈՐԴ ՊՐԻՄԸ»

թվայնացրել է 1915.info կայքը

Հերման Հեսսե «ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՎԵԼՔ»
Ռիչարդ Բախ «ՋՈՆԱԹԱՆ ԼԻՎԻՆԳՍԹՈՆ ՃԱՅԸ»
Մաքս Ֆրիշ «HOMO ՖԱԲԵՐ»
Մաքս Ֆրիշ «ՄՈՆԹՈԿ: ԿԱՊՏԱՄՈՐՈՒՍԸ»
Ռոբերտ Վալզեր «ԶԲՈՍԱՆՔ»
Կուրթ Վոնեգութ «ԿԱՏՎԻ ՃՈՃՔ»
Խուլիո Կորտասար «ՑԱՏԿԱԽԱՂ»
Զախար Պրիլեպին «ՄԵՆԱՍՏԱՆ»
Ալաա ալ-Ասուանի «ՅԱԿՈՒԲՅԱՆ ՇԵՆՔԸ»
Պաուլու Կոելյու «ՀԻՊԻ»
Պաուլու Կոելյու «ՊԻԵԴՐԱ ԳԵՏԻ ԱՓԻՆ ՆՍՏԵՑԻ
ՈՒ ԼԱՑ ԵՂԱ»
Ուիլյամ Սարոյան «ՀԱՅՐԻԿ, ԴՈՒ ԽԵՆԹ ԵՍ»
Ուիլյամ Սարոյան «ՄԱՅՐԻԿ, ԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ ՔԵԶ»
Ուիլյամ Սարոյան «ԱՆՈՒՆՍ ԱՐԱՄ Է»
Ռեյ Բրեդբըրի «ԼԻՃԸ ԵՎ ՈՒՐԻՇ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ»
Միլոռադ Պավիչ «ՎԵՐՋԻՆ ՍԵՐԸ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՒՄ»
Կուրթ Վոնեգութ «ՍՊԱՆԴԱՆՈՑ ՀԱՄԱՐ ՀԻՆԳ»
Էջե Թեմելքուրան «ԴԱՐՁ»
Քրիստոֆ Ռանսմայր «ՎԵՐՋԻՆ ԱՇԽԱՐՀԸ»
Լեոնիդ Անդրեև «ՀՈՒԴԱ ԻՍԿԱՐԻՈՎՏԱՑԻ»
Իման Հումայդան Յունես «ՎԱՅՐԻ ԹՈՒԹԸ»
Իման Հումայդան Յունես «Բ՝ ՈՐՊԵՍ ԲՆՕՐՐԱՆ...
ՈՐՊԵՍ ԲԵՅՐՈՒԹ»
Գաբրիել Գարսիա Մարկես «ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԻՄ ՏԽՈՒՐ ՊՈՌՆԻԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
Դավիդ Ունգեր «ՄՏԱՀՂԱՑՈՂԸ»
Սալար Աբդոհ «ԹԵՀՐԱՆԸ ՎԵՐՋԱԼՈՒՅՍԻՆ»
Ամոս Օզ «ՀՈՒԴԱ»
Դաթո Տուրաշվիլի «ԱՅԼ ԱՄՍՏԵՐԴԱՄ»

թվայնացրել է 1915.info կայքը

ԱՄՈՐ ◆◆◆ ՀԻՊ

Հերման Հեսսե «ՆԱՐՑԻՍԸ ԵՎ ՈՍԿԵԲԵՐԱՆԸ»
Միլան Կունդերա «ԴԱՆԴԱՂՈՒԹՅՈՒՆ»
Խավիեր Մարիաս «ՍԻՐԱՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»
Հարուկի Մուրակամի «ՆՈՐՎԵԳԱԿԱՆ ԱՆՏԱՌ»
Ալեսսանդրո Բարիկկո «ՄԵՏԱՔՍ»
Մաքս Ֆրիշ «ԵՆԹԱԴՐԵՆՔ ԱՆՈՒՆՍ ԳԱՆԹԵՆԲԱՅՆ Է»
Էլիֆ Շաֆաք «ԵՎԱՅԻ ԵՐԵՔ ԴՈՒՍՏՐԵՐԸ»
Սալման Ռուշդի «ԱՄՈԹ»
Եվգենի Զամյատին «ՋՀԱՆԴԱՄՈՒՄ: ՀԵՂԵՂ»
Գոլի Թարաղի «ՎԵՐԱԴԱՐՁ»
Սայակա Մուրատա «ԿՈՆԲԻՆԻԻ ՄԱՐԴԸ»